

Handwritten text in a Gothic script, likely a title or decorative element. The text is arranged in two lines: the first line contains the characters 'G', 'L', 'n', 'n', 'g', and the second line contains 'Q', 'a', 'n', 'l'. The letters are highly stylized with characteristic Gothic features such as sharp points and elongated forms.





SEVAN Printing House
Beirut - Lebanon

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԱԼՊՈՄՆ»


Ա Ի Օ

Գ Է Ո Ր Գ

ՉԱԿՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

ՊԵՂԱԿ, 1972



ՀՈՒԿԱՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
(Գրքիս մեկեմասը)



ՏԻՐՈՒՀԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
(Մեկենասի մայրը)

ՏԻՐՈՒՇԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Տիրուհի Կարապետեանը ծնուել է պատմական Հեր գաւառի Խոյ քաղաքի արուարձան «Էջլաջի» կոչուած հայկական քաղում, 1885 թուին:

Յիշեալ թուականներում խոյում կրթութիւնը այնքան էլ տարածուած չէր, այդ իսկ պատճառով նա չափահաս տարիքում հազիւ կարողանում է տարրական կրթութիւն ձեռք բերել:

Տիրուհու հայրը յայտնի հիւսն Պետրոսը՝ անուանի մէկն էր Խոյ քաղաքում: Նրանց տոհմը սերում էր Սարգսեան գերդաստանից, որ Խոյում քանաչուած էին իբրեւ բարեկիրք ընտանիք: Նրանց տոհմից էր անուանի Դոկտ. Եղիազար Սարգիսը: Տիրուհու եղբայրն էր Սարգիս Պետրոսի Սարգսեանը: Իսկ Պետրոսի քրոջ ամուսինն էր կրթեալ քահանայ Տէր Սարգիսը եւ այլն, որոնք բոլորն էլ օգտակար էին դարձել հայութեան, զանազան ասպարէզներում:

Տիրուհին 1903 թուին ամուսնանում է հարեւան քաղամասի «Փոս» կոչուած հայկական քաղի վանառական եւ անուանի մեծահարուստ Հնչակեան Կարապետ(*) Մարգարեանի հետ:

Հարսանիքը տեղի է ունենում Խոյի հայկական վառ գիւղի Ս. Գեորգ եկեղեցում: Ամուսնութեան քաւորն է լինում յայտնի յեղափոխական գործիչ՝ Հնչակեան Փարամազը:

Հարսանեաց հանդէսը տեւում է եօթ օր: Ինչպէս սովորութիւն էր հին ժամանակներում հարսանիքները մինչեւ եօթ օր էին տեւում, այդ ժամանակամիջոցում լինում էր կերուխում, խրախնամք, գուարնալի պատմութիւններ ու խաղեր:

Նրանք ունենում են վեց գաւակներ, չորս աղջիկ եւ երկու

(*) Տիրուհին, ամուսնու անունը դորձածում է աղգանունի տեղ:

մանչ, որոնցից երկու ազգիկները եւ մէկ տղան Կարապետի հետ գոհ եմ գնում հոյի կոտորածին, 1918 թուին:

Կոտորածից յետոյ Տիրուհին կարողանում է իր մնացած երեք ուղբացած գաւակներին՝ Ղուկաս, Սիրանուշ եւ Վարդանուշ, ստոյգ մահից ազատել եւ տեղափոխել Թաւրիզ:

Թաւրիզում Ամերիկեան նպաստամատոյց Կամիտէի կողմից իւրաքանչիւր անձին տրւում էր օրական 2 դրան նպաստ (այդ օրերում Թաւրիզ էր գտնւում 8-10 հազար հայ գաղթականութիւն): Այդ նպաստը ինքն ըստ ինքեան մի չնչին գումար էր օրուան ապրուստի համար: Ուստի Տիրուհին շնորհիւ իր աշխատունակութեան՝ տփնաջա՛ն ջանֆերին, կարողանում է իր գաւակներին տալ բաւարար կըրքութիւն:

1900ական թուականից սկսած հայ ժողովուրդի ծոցից ծնուած հայկական յեղափոխութեան մի յոյլ նուիրեալ ֆետայիներ^(*) կէտ նպատակ էին հետապնդում, ազատագրելու Թրքահայաստանը թրքական բռնակալ լծից: Նրանք մեծաւ մասամբ հոյով էին անցնում, մասնաւորապէս իջեւանում էին «Էյվաշի» եւ «Փոս» քաղերում:

Տիրուհոնց դուռը բաց էր բոլոր եկող գնացողների առջեւ, մասնաւորապէս հայդուկ ֆետայիների, որոնք մի քանի օրով հիւրընկալւում էին այդ յարկի տակ: Այդ էլ պիտի ասել, որ «Փոս» քաղը գտնւում էր Կոքուր եւ Վան տանող անմիջական խնդրու վրայ:

Եոյը մի տեսակ կամուրջ էր դէպի երկիր անցնող ֆետայիներին, նրանք գալիս էին խմբերով ուշ գիշերով, գաղտնի եւ բռնաւորուած գէնֆերով. ազօտ նրագի լոյսի տակ այդ գէնֆերը կարգի էին բերում եւ շատ անգամներ էլ գիշերով նանապարհւում:

Այդ խմբերին, ինչ որ անհրաժեշտ էր հնարաւորին չափ տրամադրւում էր՝ վերմակ, Կարպետ եւ մի քանի օրուան համար ուտեստեղէն եւ թեթեւ իրեղէններ, ինչքան որ հնարաւոր էր նամբորդութեան համար, հետները վերցնելու, հոգալով նաեւ նրանց հագուստ կապուստի նորոգութիւնը:

Երբ հոյը շէն էր Մելիք Թանգեան Սրբազանը իւր թեմերին այցելութիւն տալու նպատակով՝ իջեւանում եւ հիւրընկալւում էր Կարապետեանց տունը:

Կարապետեանց տունը 1914 թուականին յարմարութեան տեսակէտից Զօր. Անդրանիկի կամաւորական գնդերի պատերազմական գանազան պիտոյժների զինապահեստն էր:

Ռուսական վերջին նահանջի գործերից վանում մնացած տասն եւ երկու ռուս կոզակների հետ պայմանաւորուած էր մինչեւ պարս-

(*) Այն ժամանակներում ֆետայիներին ազգասէրներ էին անուանում:

կական Զուլֆա հասցնել նրանց եւ ունեցած գէնֆերը առնել յանձնել ուղեկցող հայ ֆետայիներին: Գրանց ապահովութիւնը յանձն էր առած Մոկացի Գրիգորը իւր տասնեակ զինակիցներով:

Զուլֆայից վերադարձին հանգստութեան համար խումբը իջեւանում է Տիրուհոնց տունը: Ճաշկերոյքի ժամանակ Մոկացի Գրիգորը մօտաւորապէս ասում է հետեւեալը: «Պատուական Տիկին, այն ինչ որ կ'ընէ՛ք մեզ համար չէ, այլ ազգի համար կ'ընէ՛ք»: Ապա աւելացնելով նաեւ: «Մենք ներկայիս վաճում կառավարութիւն ենք հիմնած, բնդանօթ կը ձուլենք, այնպէս որ երբ ըսեն թէ վանը ընկաւ երբեք չհաւատաք: Ահա այդ իսկ առումով էլ այսուհետեւ **ոնէ** թշնամի եթէ մեզի մօտենայ գլուխը կը ջախջախենք»:

Հայ ժողովուրդի ազատագրական պայքարի ճանապարհին քիչ չէ եղել այն կանանց թիւը, որ գէնֆը ձեռին կռուել են հասարակաց թշնամու դէմ, միաժամանակ եղել են նաեւ հայ կանայք, որոնք օժանդակ դեր են ունեցել իրենց բարոյական գործունէութեամբ, հայութեան ազատութեան գործի մէջ: Այդ **թւում է նաեւ հանգուցեալ** Տիրուհին, որ ամենայն սիրով, իբրեւ հայ կին իր համեստ մասնակցութիւնն էր բերում այդ սրբազան գործին, շխնայելով նոյնիսկ իր անձնական հանգիստը:

Անէծք եւ նողկանք ունէր դէպի թշնամին: Իր միակ փափաքն ու իղձն էր, որ Հայութիւնը լինէր երջանիկ եւ ուրախ...

Անցեալից շատ յուշեր ունէր, սրամիտ էր եւ լաւ խօսակից: Նաեւ տիպար հայ մայր: Իր կեանքի արկածները պատմում էր մեծ հետաքրքրութեամբ:

Այսօր միայն յիշատակեցինք իր կեանքի գործունէութեան մասին, սակայն նա ունեցել էր բեղուն մի կեանք, ինչպէս որ բնութեան մէջ ամէն մի էակ եւ ամէն մի անհատ, թողնում է մի յուշ եւ անցեալ եւ հեռանում է այս անցաւոր աշխարհից:

Իր բարի եւ հեզ բնաւորութեամբ յարգուած էր բոլորի կողմից: Յիշատակդ անթառամ սիրելի հայ մայր:

Ա.Ւ.ԱՐԱՅՐՅԻ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Շուրջ մէկ դար առաջ, հայաշխարհին մէջ կը ծնէր սերունդ մը, որ մարտական թէ մտաւորական դէմքերու փաղանգ մը կու տար: Հերոսածին սերունդ մը:

Անզուգական սերունդ մը, որուն մէջէն Մասիսի նըման իրենց գլուխները կը ցցեն անզուգական բացառիկ դէմքեր, որոնցմէ է Գէորգ Չաւուշը:

Բառին իսկական առումով հերոս մը, որ խիզախութեան ու անձնագոհութեան մարմնացումն իսկ է: Ծնած ժողովուրդի ծոցէն, գործեց ժողովուրդին մէջ, իր գործունէութեան բնաբան ընտրելով ժողովուրդին հետ, ժողովուրդին համար սկզբունքը: Յատկանշական դրուագ մըն է Աղթամարի մէջ գումարուած ժողովը, ուր հաւաքուած էին Սասնոյ եւ Վասպուրականի գրեթէ բոլոր յեղափոխական դէմքերը եւ ուր հարց կը դառնար, թէ ո՞վ պիտի վերադառնայ Սասուն, երթալ դէպի ստոյգ մահ: Լուռ են բոլորը: Իւրաքանչիւրը ինք իր անձին հետ խորհրդածութեան մէջ խորասուզուած: Յանկարծ հանդարտ այլ վճռական ձայն մը կը բարձրանայ. — Ես կը վերադառնամ: Գէւորգն էր ան: Ու կը վերադառնայ, ընկերակցութեամբ խումբ մը Ֆետայիներու, որոնք իր հետ ըլլալու հաճոյքն ունէին:

Ու հայրենի լեռներուն վրայ իր մարտնչումները, խիզախումները հանդիսացան առասպելական սխրագործութիւններ, որոնք դար մը ետք թուին առասպելներ, Սասունցի Դաւիթի օրինակով:

Առիթներ ունեցաւ անցնելու արտասահման, ուր պիտի կարենար հանգիստ առնել ու իր փառապատկով փառք ու պատիւ վայելել, ինչպէս եղաւ ուրիշներու հա-

մար, անշուշտ արդարօրէ՛ն: Սակայն միշտ ալ իր սրտին չխօսեցաւ իր ժողովուրդէն հեռանալը, ինչ որ աղիտարեր հանդիսացաւ իրեն համար, դժբախտաբար: Արդարեւ, զգուշութիւն բառը կարծէք իմաստ չունէր իրեն համար. ա՛յդ իսկ իրօղութիւնը արդէն պատճառ հանդիսացաւ իր եղերական մահուան, անհաւասար կռիւի մը մէջ. —

Նայեց բոլորտիք, ա՛լ չկար ընկեր,
ինկած կռուի դաշտ՝ տառապէր անտէր,
Համբուրեց հոգը քաղցր հայրենեաց,
Փակեց աչքերը ներքեւն աստեղաց:

Նման հերոսի մը համար, բարեբախտ զուգադիպութեամբ մը, իր մահուընէ տասնըմէկ տարի ետք, մահուան տարելիցին, հայ ազգը կը յայտարարէր իր անկախութիւնը եւ կը ստանար ազատութիւնը, որուն համար Գէորգ Չաւուշ զոհեց իր երիտասարդ կեանքը: Զուգադիպութի՞ւն: Անշո՛ւշտ: Եւ սակայն զուգադիպութիւններու բախտաւորագո՛յնը: Յամենայնդէպս, լաւագոյն զոհունակութիւ մը կարելի չէ երեւակայել իրեն նման հերոսի մը համար:



Հոս մեր շնորհակալութեան անկեղծ խօսքը ունինք թեհրանէն Ղուկաս Կարապետեանին (Խոյեցի), որ իր մօր յիշատակին, սրտաբուխ նուիրատուութեամբ մը կարելի դարձուց հրատարակութիւնը այս հատորին, որ անհրաժեշտութիւն մըն է, անմահացնելու համար յիշատակը այն առասպելական հերոսին, որ Գէորգ Չաւուշն է:

ԳԷՈՐԳ ԶԱԻՈՒՇ

(ԳԷՈՐԳ Ա.ԳԱՄԵԱՆ)

1870 — 1907



Մ Ա Ն Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ե Ի

Պ Ա Տ Ա Ն Ե Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

«Յեղափոխութիւն, պատրաստ եմ անձս անգամ գոհել գերագոյն նպատակիդ համար: Թող մարիմ աչքերս, միայն թէ, թող ծագի Հայաստանի անկախութեան արեւը:

ԳԷՈՐԳ ԶԱԻՈՒՇ

Գէորգ Զաւուչ ծնած է 1870-ին, Սասունի Փսանաց դատարի Մկթինք գիւղը, որ գուտ հայկական էր: Գիւղին մէջ կ'ապրէին մօտ 25 ընտանիք՝ մօտաւորապէս 277 շունչով: Գիւղը ունէր եկեղեցի մը՝ Ս. Աստուածածին անունով:

Փսանաց գաւառը կ'իյնայ Մարաթուկ լեռան արեւմտեան կողմը եւ Ծովասարի հարաւը: Փսանաց գաւառը ունէր երեսունվեց մեծ ու փոքր գիւղեր: Տալւորիկի կռիւներուն ընթացքին, Փսանաց գաւառի Սասունցիները իրենց օգնութեամբ սատարեցին եւ որոշ ժամանակ միասնաբար մասնակցեցան չրջանի բոլոր կռիւներուն:

Գէորգի հայրը՝ Ադամ, ունէր երկու եղբայրներ. մէկը աշխարհական՝ Աւէ, իսկ միւսը՝ քահանայ, որ կը մնար իրենց գիւղը: Ադամ ունէր երեք որդիներ՝ Ղզրօ, Գէորգ եւ Օհան: Իսկ ինք շատ լաւ որսորդ էր. գրեթէ այդ չրջանին մէջ ոչ ոք կը հասնէր իրեն: Ժամանակ մը ետք սակայն աչքերը կուրցան:

Գէորգ նախնական ուսումը կը ստանայ ծննդավայրին մէջ, իր քահանայ հօրեղբօրմէն: Դպրոցին մէջ Գէորգ ըմբոստ էր, թէպէտ իր ընկերները շատ կը սիրէին զինք: Գիւղական դպրոցը աւարտելէ ետք, հօրը հրացանը առած, կը շրջէր մացառներու ետին, ապառաժներուն վրայ եւ կ'որսար ինչ որ կը հանդիպէր: Այսպէս, մինչեւ երեկոյ բաւական որս ըրած, գիւղ կը դառնար: Ահա՛ այս ձեւով կ'ընթանար անոր կեանքը:

Գէորգի հայրն ու քահանայ հօրեղբայրը ա՛յս տեսնելով, կ'որոշեն, որ Գէորգ շարունակէ իր ուսումը:

1886-ի Մայիս 14-ին Մկթինք գիւղէն հայր եւ որդի ճամբայ կ'ելլեն դէպի Առաքելոց վանքը: Կ'անցնին սարեր ու ձորեր: Պատանի Գէորգ կը քայլէ պայծառ ու լուսաւոր ճակատով ու կրակոտ եւ համարձակ աչքերով:

Կը հասնին Առաքելոց վանքը, որուն վանահայրն էր Յովհաննէս վարդապետ Մուրատեան:

Գէորգի հայրը Ադամ, կը մօտենայ Հայր Սուրբին, աջը կ'առնէ ու կ'ըսէ.

— Մեռնիմ քեզիք, Հայր Սուրբ, էտա գիմ լաճ քերեր եմ վանք կարդալ սորվելու. միս քեզի՛ք, կաշին ու ոսկոր ինձի՛ք:

— Ո՛ր տեղացիք էք, — կը հարցնէ Հայր Սուրբը:

— Մկթինք գիւղացի:

Երբ հարց կու տայ Հայր Սուրբը Գէորգին, թէ «Ի՞նչ բան գիտես», պատանի Գէորգ դառնալով անոր կ'ըսէ.

— Լաւ նշանառու եմ. մեր գիւղի ու մօտիկ գիւղերու թիւրք ու քիւրտ լամուկներուն գլուխները կրնամ կոտրել: Գիւղին մէջ ինձմէ տարեցներէն աւելի լաւ նշանառու եմ:

Մինչ այդ Գէորգ տեսնելով Հայր Սուրբին ձեռքը եղող համրիչը, անմիջապէս կ'աւելցնէ.

— Եթէ ձեր ձեռքի համրիչին հատիկները կապարէ ըլլային, անոնցմով պիտի կարենայի շատ վրէժներ լուծել: Դուք պարապ տեղը այս հատիկները կը մաշեցնէք:

Այս խօսքերէն հետեւցնելով վանահայրը Ադամին կ'ըսէ.

— Ձեր տղան լա՛ւ Փետայի կ'ըլլայ, բայց ո՛չ քահանայ: Ան ծնած է ո՛չ թէ խունկ ծխելու, այլ՝ վառող: Ես գաւակդ սիրայօժար կ'ընդունիմ, բայց չեմ կարծեր, որ անոր անզուսպ հոգին կարենայ տոկալ դպրոցական սեղմ կեանքին:

Ապա Գէորգին դառնալով կը շարունակէ.

— Տղա՛ս, ինձի համար կեանքդ արժէքաւոր է, քեզ հոս դպրոցը կը պահեմ, գիւղ չեմ ղրկեր:

Երբ Ադամ պիտի հրաժեշտ առնէր դաւկէն գիւղ երթալու համար, Գէորգ իր հօրը դառնալով կ'ըսէ.

— Երթա՛ս բարով, սիրելի՛ հայրիկ, բայց հրացանը չմոռնաս:

Շարաթ մը ետք Գէորգ արդէն սկսած էր դործի: Պարսատիկով ծառերուն վրայի թռչուններն ու ագռաւները եւ որոշ ժամանակներ ալ վանքին հաւերը կը սպաննէր:

Օրին մէկը, Սելիմ աղայի մարդոցմէն երեք հոգի, վանքի ոչ խարներուն մէկ մասը կ'ուզեն տանիլ: Վախէն սահմուկած, հովիւը կը հարկադրուի տեղի տալ: Ապա փութով կու գայ եւ կ'իմացնէ եղելութիւնը:

Գէորգ երբ կը լսէ այս պատահարը, անմիջապէս կը հասկնայ



Առաքելոց վանքի վանահայր
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՈՒՐԱՏԵԱՆ

անոնց ուղղութիւնը ու առանց զէնքի ամբողջ ուժովը կը վազէ անոնց ետեւէն :

Կողոպտիչները ծառի մը տակ նստած կը վիճարանին աւարի բաժանումի առընչութեամբ : Մինչ այդ Գէորգ անակնկալօրէն կը յարձակի անոնցմէ մէկուն վրայ, գետին կը տապալէ զայն եւ զէնքը անոր ձեռքէն կ'առնէ : Ընկերները երբ ասիկա կը տեսնեն, կը փախչին ըսելով .

— Փախչի՛նք, Արարոն կու գայ, Արարոն :

Ժամ մը ետք Գէորգ ոչխարները առջեւը խառնած, հրացանը ուսին կը մտնէ վանք :

Վանքին վանահայրը՝ Յովհաննէս վարդապետ այս բանը

տեսնելով շատ կ'ուրախանայ: Ու անմիջապէս Գէորգին ճակատը համբուրելով կ'ըսէ.

— Շատ ապրիս, տղա՛ս, Աստուած երկար կեանք տայ քեզի պէս հայ քաջերուն: Թող ձեր արձակած զնդակները անվրէպ ըլլան: Դո՛ւք Հայաստանի անկախութեան վաղուան ծագող արշալոյսը պիտի ըլլաք: Դո՛ւք՝ Սասունցի Դաւիթնե՛ր, օրհնուա՛ծ ըլլաք...:

Քանի մը շարաթէն Գէորգ իր ըմբոստութեամբ աշակերտներուն մէջ եւս աչքի կը զարնէ: Ան առաջին անգամ քիւրտերէն կը լսէ Արաբոյի անունը: Նոր դրդիւ մը կը նեղէ զինք, իր սլառանի զգացումները հետզհետէ անտանելի կը դարձնեն իրեն համար վանքն ալ, դպրոցն ալ...: Հոն է որ կ'իմանայ Գէորգ, թէ Հայութիւն կայ, թէ Թիւրքեր ու Քիւրտեր կը նեղեն Հայերը, կը կողոպտեն, կը թալանեն եւ կը գրաւեն ամէն ինչ: Այդ օրերուն էր, որ Գէորգ կ'որոշէ տեսնել հայ Փետայիները, որոնք դադտնի վանք կը մըտնէին: Ան կամաց-կամաց մօտենալով անոնց, կը ծանօթանայ իրենց հետ: Միջոց մըն ալ դադտնաբար անոնց կերակուր կը տանի վանքէն դէպի լեռները, ուր կ'ապաստանէին:


Արաբոյի անունը շուտով կը տարածուի Սասնոյ բոլոր կողմերը: Ան իր շուրջը կը հաւաքէ ուրիշ ընկերներ եւս ու կը սկսին պաշտպան կանգնիլ հայ գիւղացիներուն: Այսպէս, ամբողջ շրջանի Հայերը եւ մասամբ ալ Քիւրտերը կը միանան իրեն: Սկիզբները ան կը վարուի Հայերու եւ Քիւրտերու հետ ճիշդ այնպէս, ինչպէս քիւրտ թոռուն մը իր հպատակներուն հետ կը պաշտպանէ իր շրջանի մարդիկը: Ան իր շուրջ հաւաքած էր զոլամներ, որոնք ինչպէս քիւրտ թոռունի մօտ, իր հաւատարիմ զինուորներն ու ծառաներն էին:

Քիւրտ աշիրէթներն ու Թիւրքերը այդ միջոցին սկսած էին նեղել Սասունի ժողովուրդը, բռնութիւններ բանեցնելով եւ կառավարութեան տուած ծրագիրները իրագործելով:

Ուստի Արաբոն, Յակէն, Յակոբ Խալիֆան, Ալիունացի Լեւոնը եւ ուրիշներ, երբ կը լսեն ասիկա, կ'որոշեն քիւրտ ու թիւրք բռնակալութիւն գործողները պատժել: Անոնք քրտական հագուստներ հագած կը շրջին գիւղէ գիւղ, կը գրաւեն գէնքեր թիւրք զինուորներէն ու այս կերպով իրենց խումբերը կը զինեն: Նոյն օրերուն, Տերգե-վանքի Միսօ Շահէնը, երբ կ'իմանայ Արաբոյի գործունէութեան մասին, անմիջապէս կու գայ եւ կը միանայ իրենց: Արաբոյի խումբը ահ ու սարսափի կը մատնէ շրջակայքը: Անոնք իրենց հետքերը կորսնցնելու նպատակով լոյսը չբացուած կը մեկնին դէպի Առաքելոց վանքի դիմացի լեռը, Ծիրինկատարի ուղղութեամբ, Կումկում ըսուած քարքարոտ վայրը, զոր հետագային կոչեցին Արաբոյի քարերը:

Գէորգ այս լուրը իմանալէ ետք, գրեթէ չի հետեւիր իր դասերուն: Արդէն վանահօր միջոցաւ ծանօթացած էր Արաբոյի(*) հետ,

(*) Տես «Յեղափոխական Ալպում»ի Ա. հատոր էջ 34:



Ա Ր Ա Ր Օ

Հայկական Յեղափոխութեան ռահվիրաներէն: 1885-էն սկսած իբրեւ «աւագակապետ» կը գործէր Մշոյ շրջանը եւ մեծ ազդեցութիւն ձեռք բերած էր ժողովուրդին մէջ: 1889—1890 թուականներուն արդէն կը գործէր որպէս յեղափոխական՝ կռուելով կառավարական հարստահարութիւններու եւ քրտական թալաններու դէմ: Կը բանտարկուի, բայց կը փախչի Կովկաս, ուր կը մտնէ Հ. Յ. Դաշնակցութեան շարքերը: 1893-ին 16 հոգիեաց խումբով կը վերադառնայ Սասուն. ճանապարհին կռուի մը մէջ կը նահատակուի չորս ընկերներու հետ:

ու ամէն օր վանքէն հաց ու թացան կը տանէր իրենց: Արարոն տեսնելով Գէորգի արագաշարժութիւնը, քանի մը անգամ իր հետ կը տանի զայն մօտակայ շրջանները: Օր մըն ալ կ'երթան Մշոյ դաշտը: Արարօ զէնք մըն ալ կու տայ Գէորգին: Հո'ն Գէորգ եւս կը մասնակցի քանի մը ահարեկումներու եւ Մուշը իր առաջին փորձադաշտը կ'ըլ-

լայ : Այդ օրէն Գէորգի մէջ եռանդ մը առաջ կու գայ, կարծես թէ ան կ'ապրի երազային աշխարհ մը :

Սասունի եւ Մշոյ դաշտին մէջ, Քիւրտերը միացած թիւրքերուն, դեռ բռնութիւններ կը գործէին, բայց այս անգամ աւելի մեղմ, սարսափելիով Արարոյէն : Ան սկսած էր այլեւս մտածել թիւրքի պէս եւ իր նշանարանն էր . «թուրքի մալն ուտելը, թալանելն ու սպաննելը հալալ է» : Եւ այս նոր գործունէութեան շրջանին, Արարոն կը դեկավարուի նաեւ այլ գաղափարներով . «Հայը, խեղճը, ռայան պաշտպանելը լաւ է» : «Ռայա հայը աշիր դարձնելը նոյնպէս լաւ է» : «Հայը այնքան պէտք է ուժեղացնել, որ անոր աստղը պայծառանայ եւ ոյժ ունենայ մինչեւ Շամ քշելու այս եկուոր անօրէնները» :

Արարոյի այս գաղափարը արդեւք կ'ըլլայ թշնամիին՝ իր ծրագիրները իրագործելու :

Սասունի եւ Մշոյ ժողովուրդը կ'երգէր հետեւեալ երգը, նուիրուած Արարոյին .

Գրող տանի ֆիւրտ Արոյիս,
Սպաննել է ջոջ Ափոյիս .
Իլլան մացիր Արարոյիս,
Զարթի՛ր, Լաօ, մեռնիմ քըգի :

Զուդ ե՛ր մնամ էլու դոներ,
Երթամ գտնեմ զիմ խեղն գառներ .
Սուքեմ զիմ բաղչայի ծառներ,
Զարթի՛ր, Լաօ՛, մեռնիմ քըգի :

Դէն երիշկէ գալողն ո՞րն է,
Քաջ Արաբօ բախտաւորն է .
Կարմիր երիցանց զինուորն է,
Զարթի՛ր, Լաօ, մեռնիմ քըգի :

Խեղն Մշեցիս մնաց լալով,
Հեռու երկիրներ ման գալով .
Մեռաւ թիւրքի պարտքը տալով,
Զարթի՛ր, Լաօ, մեռնիմ քըգի :

Ոտքի կայնէք, կտրիճ Խերան,
Զօրով զնա՛ առաջ ուրան,
Սալաթ մէյրու բաժին դուրպան,
Զարթի՛ր, Լաօ, մեռնիմ քըգի :

Սէֆիլ-շիւար մացած հայեր,
Եղած անտէր, բնաւեր հաւքեր .
Տէ՛ր, դու փրկէ՛, պահէ՛ արթուն,
Զարթի՛ր, Լաօ, օգնէ հայուն :



Կ Ի Ի Լ Ի Զ Ա Ր

Այն օրերուն տեղի կ'ունենան Կիւլիզարի(*) ողբերգական դէպքը եւ Մուսա պէկի խժոժութիւնները, որոնք կը ցնցեն Սասունի եւ Տարօնի ժողովուրդը:

Պատանի Գէորգ կը լսէ այս գէշ լուրերը ու կը յուզուի: Կը լսէ նաեւ Արարոյի ու Լեւոնի ընկերութեան գործով զբաղուիլը, որուն նպատակը հայ ազգի թշնամիներուն դէմ պայքարիլ եւ ժողովուրդը գերութենէ ազատել էր: Ուստի անմիջապէս կը կապուի անոնց հետ կը դառնայ իրենց հաւատարիմ սուրհանդակն ու օժանդակը:

«Մնացի այնտեղ(**) 2 տարի, — կ'ըսէ Գէորգ Զաւուշ, — սակայն այնտեղ կ'իմանայի եւ կը զգայի Հայութիւն կայ, նամանաւանդ Արարոն եւ Լեւոն կային, երբեմն կը հանդիպէին վանքը. իրենց համար ծառայութիւն կ'ընէի և այն տեղէն գինովցայ: 1888 Մայիս ամսոյ

(*) Տես Կիւլիզար, Փարիզ 1946:

(**) Առաքելոց վանք:

7-ին հրատարակեցայ վանքէն, զնացի տունս, բայց գործ ունէի զէնքի հետ շարունակ: Տանս մէջ ունէի երկու հօրեղբայր, 1 աշխարհական, 1 քահանայ: Այդ երկու աշխարհականներ բոլոր գերդաստանով կը սիրէին զիս, որովհետեւ այբուբեն գիտէի, իսկ տէրտէրը շատ կը բարկանար եւ կը նախատէր զիս. կ'ըսէր թէ զէնքի հետը գործ չունիս, փորձէ Աւետարան, Մաշտոց եւ շարական կարդալ. բայց ես չէի լսեր, ոչ ոքի ալ չէի հնազանդեր: Օր մը Երեւոց Պաղրանցի քիւրտ աշխրաթներէն 2 քիւրտ եկան գիւղս, զնացին եկեղեցի, ընկոյզի ծառերու տակ սկսան քարով ու փայտով ընկզները վար թափել. ես չհամբերեցի. արձակուայ իրենց վրայ. սկսեցինք զիրար ծեծել. սակայն լաւ մը ծեծեցին զիս, որովհետեւ իրենք էին 2, ես միայն. ինձ համար չեղաւ օգնող ոչ ոք գիւղիս հայերէն, որ թափուած էին չորս կողմ, կը դիտէին վրանիս. ճարահատեալ մնալով թողի ու հեռացայ գիւղէս, կրկին վերադարձայ Առաքելոց վանք, որպէսզի ընկերանամ Արաբոյին եւ Լեւոնին:

«Երբ որ ես մօտեցայ Բերդակ գիւղին, տեսայ որ Արաբոն եւ Բերդակցի ուրիշ հայ մը՝ Գոպօ անունով, ձերբակալուած են եւ գունդ մը ոստիկաններով Մուշ քաղաք կը տարուին: Ի՛նչ ընեմ, Լեւոնին ալ չգտայ, յոյսս մարաւ, բոլորովին ճարահատ կրկին գիւղ վերադարձայ»:

Տունը արդէն ծուռ աչքով կը նային Գէորգի անհանգիստ շարժումներուն վրայ: «Ընկերութիւն» բառը մոզական ազդեցութիւն մը դործած էր անոր մտքին եւ կը մղէր զինքը իր շուրջը խմբելու երիտասարդ ընկերներ ու պատրաստելու զանոնք:

Եւ մանուկ «ընկերութիւն»ը պատանի այդ ըմբոստներուն, յափշտակուած Արաբոյի, Լեւոնի քաջագործութիւններով, անդադար կռուի մէջ էր քիւրտ լաճերու հետ, առաջնորդ ունենալով Գէորգ Զաւուշը:

Այսպէս հազիւ տարի մը ազատ կեանք կը վարէ Գէորգ: Նոյն ատեն իր սիրած որսորդութենէն ալ ետ չի մնար: Հօրեղբայրը սակայն կ'ուզէ, որ ամէն զնով ետ վանք դառնայ ու քահանայ ձեռնադրուի. իսկ հայրը կը զայրանայ իր ընթացքէն:

Իրիկուն մը դարձին, հայրը կը բարկանայ իրեն, կը խրատէ որ որսորդութիւնը ձգէ եւ այլեւս հրացանը ձեռքը չառնէ:

«Վա՛յ, այդպէ՞ս, հա՛, — կ'ըսէ Գէորգ, — թո՛ղ այս օճախը ինձի հարամ ըլլայ, մինչեւ որ ես ինձի հրացան մը չգտնեմ»:

Գեղեցիկ հրացան մը ամբողջ հարստութիւն մը, թաղաւորութիւն մը կ'արժէր Սասնոյ լեռներուն վրայ: Ո՞ւր գտնել:

1889-ի Սեպտեմբերի կիսուն Գէորգ վար կ'իջնէ սարէն ու ջորեպանի մը հետ կը մեկնի Հալէպ դրամ վաստկելու, որպէսզի կարենայ հրացան մը գնել:

Գէորգ Հալէպի մէջ կը ծանօթանայ իր հայրենակիցներուն, կը պարզէ իր գալուն նպատակը: Անոնք ուրախութեամբ կ'ընդունին եւ

Պապ էլ ձնէյն, հայրենակից փռապանի մը քով գործի կը դնեն զինք : Այդ օրերուն հոն էր նաեւ Միհրան Տամատեան : Գէորդ իր հայրենակիցներուն միջոցաւ կը ծանօթանայ Միհրանի հետ ու անոր կ'իմացնէ իր գալուն նպատակը : Նոյն շաբթուն Միհրան Տամատեան կ'անցնի Սասուն :

1890-ի Ապրիլին Հալէպ կու գայ Ս . Դ . Հ . կուսակցութեան հերոս Մուրատ Պոյաճեանը : Երբ այս լուրը կ'իմանայ, Գէորդ անմիջապէս կը փութայ անոր քով, կը ծանօթացնէ ինքզինք ու կը պարզէ իր Հալէպ գալուն դրդապատճառը :

Պատանի Գէորդ Տամատեանէն ետք Մուրատէն եւս կը տեղեկանայ իրենց Հալէպ գալուն ու անկէ Սասուն անցնելու մտադրութիւնն ու նպատակը : Ոգեւորուած անոնցմէ, խօսք կու տայ շուտով միանալ իրենց :

Մուրատ(*) երկու շաբաթ Հալէպ մնալէ ետք ինք եւս կը փութայ Սասուն :

Գէորդ երբ բաւականաչափ գումար մը կ'ունենայ, Սասունցի հայրենակիցներ իրեն հրացան մը կը դնեն ու զինք ճամբայ կը դնեն դէպի իր ծննդավայրը :

Երբ կը հասնի հօրենական տունը, դռնէն ներս մտնելուն կը տեսնէ հայրը, ծալլապատիկ նստած գորգին վրայ : Ուսէն վար առնելով «Պռահիմ-փաշա» չախմախլի հրացանը, կը դնէ հօր առջին ըսելով .

— Վատ դրացին մարդս գործիքի տէր կ'ընէ . . . :

ՄՈՒՐԱՏԻ ԵՒ ՏԱՄԱՏԵԱՆԻ ՀԵՏ

Երկրորդ օրը Գէորդ իր շուրջը հաւաքելով իր զիւղացի ընկերները, անոնց կը սորվեցնէ, թէ ի'նչպէս պէտք է թշնամիին վրայ յարձակիլ :

Քանի մը օր ետք, երբ այս փորձերը կը կատարէր, յանկարծ զիւղացի մը գալով լուր կու տայ, թէ քիւրտ աւազակներ եկած, ոչխար ու տաւար յափշտակելով մեկնած են :

Գիւղացին դեռ բառերը չվերջացուցած, Գէորդ հովի պէս կը սուրայ դէպքին վայրը . կը կռուի թշնամիներուն դէմ, պարտութեան եւ փախուստի կը մատնէ զանոնք, ոչխարներն ալ անոնց ձեռքէն առած կը բերէ զիւղ եւ կը յանձնէ հովիւին :

Գէորդ հազիւ երկու շաբաթ կը մնայ հօրենական յարկին տակ, ու կ'որոշէ երթալ ու միանալ Մուրատ Պոյաճեանին եւ Տամատեանին, որոնց խօսք էր տուած Հալէպ գտնուած միջոցին :

(*) Տես «Յեղափոխական Ալպում»ի 3-րդ հատոր էջ 148 :

Ան իր հրացանը հետը առած կ'ուղղուի Առաքելոց վանքի կողմը: Անցնելով կելիեկուզան, Տաղվրնիկ, Գամոյի մօտերը կը տեսնէ Մուրատ Պոյաճեանը, որուն մէկ յանձնարարականով քանի մը ընկերներով կ'երթայ Առաքելոց վանքը, ուր իր պարտականութիւնը կատարելէ յետոյ, կրկին Մուրատի քով վերադառնալու նպատակով ճամբայ կ'ելլէ:

«Միրինկատար հասնելու պէս, — կ'ըսէ Գէորգ, — չորս հատ ոստիկաններ հանդիպեցան, որոնք զմեզի անմիջապէս ձերբակալեցին, սակայն ես 10 բոպէ չսպասեցի ձեռքերնին, փախայ ու անվնաս ազատուայ. ոստիկաններ բաւական մը ետեւէս վազեցին, բայց չկարողացան ոչինչ ընել. ես այդ ատեն առանց զէնքի էի: Երբ եկայ Պրն. Մուրատին հասայ, դացինք Ս. Օհաննու վանքին կողմը, դտանք Տամատեանին. միասին առինք եւ եկանք Տալուրիկ ժողովքի. ժողովքէն ետք զիս և զՔոլոս Յովհաննէս(*) զրկեցին Փսանայ դաւառ: Բաւական օրեր այդ կողմեր մնացինք, յետոյ կրկին վերադարձանք Մուրատի եւ Միհրանի քով: Ճամբան Աղբիկ գիւղի կամուրջի վրայ 2 սասունցի Քիւրտեր, անմիջապէս զիմ ընկեր Քոլոս Յովհաննէսին բռնեցին, քովի նամակները առին. բայց մեր հետ այդ կողմերէն Գրիգոր անունով տղայ մըն ալ կար. մենք ալ երկուքով յարձակուանք նրանց վրայ եւ ձեռքերնուն հրացաններ առինք: Ուղեցինք նրանց տեղն ու տեղը սպաննել, բայց Յովհաննէս չթողուց. յետոյ մեր ետեւէն հասան Աղբեցի ուրիշ Քիւրտեր. մեզմէ առած նամակներ նորէն վերադարձուցին զմեզի, մենք ալ իրենց հրացաններ ետ տուինք ու թողուցինք որ անցնին երթան:

«Մեր ընկերներէն մէկը դտանք Աղբրիկի մէջ, անկէ անցանք Ալվառինջ գիւղը. հոն դտանք Տամատեանին եւ Մուրատին: Երկար ատեն մնացինք այն կողմեր: Լեւոն ալ եկաւ Ռուսաստանէն ու վերջապէս մեր թիւ հասաւ 12-ի: Տամատեան մի ընկերոջ հետ կրկին անցաւ Սասուն, իսկ մենք մնացինք դաշտի կողմեր: Այդ ժամանակ այդ տեղեր, Բերդակ, Գոմեր, մեզ պաշտպանող Հայութիւն չկար»:

Գէորգ կ'ընկերանայ Արարոյի խումբին, որուն միացած էին նաեւ Շէնիկի Ռէս Գրգոն, Բերդակի գիւղացիները, Սէյտօ Պօղոսը, Վարդանը, Սողոն, Մկրագոմցի Քոլոզ Յովհաննէսը, Մշեցի Հաճի Նազիկը, Ներսոն, Արթինը ու իր եղբայրը Մանուկը, Գառնինու Մկրտիչը, Ալիգոնացի Լեւոնը, Մուրատը եւ ուրիշներ:

Խումբին կեդրոնն էր Բերդակ, ուր հիմը դրուեցաւ «Ազգային Միութիւն» անունով կազմակերպութեան, որ կրցաւ պաշտպանել հայուն շահերը եւ ընդդիմանալ աշիրէթական թէ կառավարական բռնութիւններուն:

Խումբը, ղեկավարութեամբ Արարոյի երբ գիւղերը կ'անցնի,

(*) Տես «Յեղափոխական Ալպուս», 8-րդ հատոր, էջ 315:



ՄԵՕ ՇԱՀԻՆ

Ծնած է՝ 1866-ին Մշոյ Տերգեվանք գիւղը: Գործակցած է Մարգար վարժապետի, Արաբոյի, Լեւոնի եւ ուրիշներու: Կը թանտարկուի եւ բանտի մէջ կը ծանօթանայ Ճանկիւլեանի հետ ապա կը դառնայ Հնչակեան: 1890-ին կը փախչի բանտէն. կրկին Սասուն, ապա Կ'անցնի Կովկաս, ուր կը սպաննուի 1903-ին:

Կռիւի կը բռնուի Վարդենիսի եւ Մուշեղաշէնի քիւրտ ու թիւրք զօրքերուն հետ, որոնք պարտուած կը նահանջեն:

Պետութիւնը սկզբնական շրջանին Արաբոյի, Շէնիկի Ռէս Գըրդոյի եւ միւս զինակիցներու կատարած ահաբեկումներն ու սպանութիւնները կը համարէր սովորական աւազակութիւն. բայց երբ տեսաւ Վարդենիսի, Մուշեղաշէնի մէջ մղուած կռիւները, հասկցաւ թէ այս շարժումը լուրջ եւ ազգային բնոյթ ունի: Հետեւաբար կառավարութիւնը որոշում տուաւ՝ ամէն դնով առաջքը առնելու այդ ըմբոստութիւններուն:

1892-ի Ապրիլին Արաբօ կ'որոշէ վերադառնալ Բերդակ գիւղը: Սումբը կը բաժնէ քանի մը մասերու, որպէսզի գիւղերը երթան ու կատարեն իրենց վրայ դրուած պարտականութիւնները: Կ'որոշուի որ Գէորգ քանի մը ընկերներով անցնի դէպի Տերգեվանքի սարին կողմը, իսկ Արաբոն եւ Մխոն ուղեւորուին դէպի Բերդակ գիւղը:

Խուճբը անվտանգ կը հասնի Բերդակ : Եւ ահա Ալիզոնացի դաւաճան Ռէս Կրպոն շուտով լուր կու տայ կառավարութեան, թէ Արարոն իր ընկերներով եկած է Բերդակ գիւղը եւ կը գտնուի Գասպարի մարազը : Թրքական զօրքը շուտով կը հասնի Բերդակ գիւղը եւ չորս կողմէն կը պաշարէ թշնամին : Բաւական զոհ տալէ ետք հազիւ կը կարենան ձերբակալել Արարոն եւ Միսո Շահէնը : Անոնց ձերբակալութենէն ետք խուճբը կը ղեկավարէ Ալիզոնացի Լեւոնը :

Տերզեվանքի սարերը քանի մը օր մնալէ յետոյ, Քէորգ իր ընկերներով կը մեկնի Սասուն, Տաղվրնիկ Թամոյի տունը, ուր կը լսէ Արարոյի եւ Միսոյի ձերբակալման լուրը, Ռէս Կրպոյի մատնութեամբ : Առանց ժամանակ կորսնցնելու, Քէորգ իր հետ առնելով Լեւոնն ու Գեալչոյի Մանուկը, կը մեկնի դէպի Ալիզոնա գիւղ, Կրպոյի տունը, ուր ան իր փառքի աթոռին վրայ նստած էր, շուրջը հաւաքուած իր զոլամներով : Քէորգ ներս մտնելով, դաշոյնի հարուածներով կը սպաննէ Կրպոն : Խօսքը տանք Քէորգին :

«Սեպտեմբեր ամսի տաս էր, մենք ալ անցանք Ս. Կարապետ հոն գտանք Պրն. Մուրատին, բայց թիւրք կառավարութիւն շուտով իր աչքեր մեր վրայ դարձուց, չորս կողմ սկսաւ խուզարկութիւններ ընել, բայց բան մըն ալ չգտաւ, միայն Բերդակ գիւղի մէջ շատ նեղութիւններ տուեց Գաթոյեան Յարութիւնին, բայց ոչ մէկ բան իմացան. Բերդակցիք գիտէին որ մենք դացեր էինք Կրպոն սպաննելու համար : Շարաթ մը Ս. Կարապետ մնացինք. հոն էր Խարախանեան Ներսէս վարդապետն ալ, որ շարունակ Պրն. Մուրատի հետ կը խորհրդակցէր. ի՞նչ խորհուրդներ կ'ընէին, ես չգիտէի, որովհետեւ ես գինուոր էի : Անկէ անցանք Ս. Օհաննու վանք, յետոյ գացինք Սասուն, գտանք Տամատեանին, մնացինք 10 օր : Պրն. Մուրատ ու Լեւոն անցան Ռուսաստան : Բայց Մայիս ամիս երբ հասնէր, գործի պիտի սկսուէր : Մենք ժամանակ մըն ալ այդ կողմեր մնացինք : Ես գնացի դէպի մեր կողմեր, մնացի մինչեւ Մեծ Պահոց օրեր : Տիգրանակերտի կողմերէն նամակներ ստացայ եւ առի տարի Ղըզըլաղաճ, Տամատեանին : Այն տեղէն վերադարձայ Սասուն, ուրտեղ ընդհանուր ժողովք մը ըրինք. որոշուեցաւ որ ես մնամ Աղբիկ գիւղ, իսկ Տամատեան վերադարձաւ դաշտ եւ յետոյ ընկերոջ մը հետ գնաց Առաքելոց վանք : Այդ տեղէն վերադարձին իրենց դէմ կ'ելլեն երկու քիւրտ եւ մէկ ոստիկան, որոնց հետ կը կռուին մի քիչ եւ յետոյ կ'անցնին Սեմալ գիւղ ազատուելու համար, բայց ի՞նչ օգուտ, հասած չհասած, Սեմալցիներու կողմէ կը ձերբակալուին եւ կը յանձնուին ոստիկաններուն եւ քիւրտերուն, որոնք Մուշ քաղաք կը տանին Յունիս 1-ին» :

Այդ օրերուն կը բացուէր հայկական յեղափոխութեան արիւնոտ շրջանը : Տակաւին յեղափոխական առաջին քարոզիչները Սասնոյ լանջերուն վրայ չերեւցած, Քէորգ արդէն, ինքնաբերաբար, իրերու բերումով, բռնութեան եւ շրջապատող պայմաններուն դէմ ըմբոստ,

կը հրաւիրէր գիւղացի երիտասարդութիւնը եւ կը հրահանգէր «ոչ խարձ, ո՛չ ալ խարաձ տալ կառավարութեան» :

Եւ երբոր Միհրան Տամատեան ոտք կը կոխէ Սասնոյ հողին վրայ, Գէորգ կ'ըլլայ անոր առաջին ընկերը, անոր վստահելի ու ամենէն անխոնջ գործակիցը, ինչպէս նաեւ տեղւոյն պայմաններուն աւելի ծանօթ ու իրազեկ ըլլալով, կը դառնայ անոր ուղեցոյցը :

Տարուան մը կազմակերպչական աշխատանք հաղիւ տարուած, վրայ կը հասնի Տալուորիկի 1892 թուականի մեծ կռիւը : Քիւրտ աշիրէթներ ահագին ոյժով քալեցին Տալուորիկի վրայ՝ գիւղը գրաւելու համար :

Սոյն կռիւին կը մասնակցէր նաեւ Հրայրը : Գէորգ, հակառակ իր փոքր տարիքին ու հասակին, ցոյց կու տայ այնպիսի քաջութիւն, այնպիսի արտակարգ յանդիմութիւն, որ Տալուորիկի ամենէն փորձառու եւ տարեց ռազմագէտներուն հիացումին ու դովեստին կ'արժանանայ : Կռիւր բռնն ու օրհասական էր : Թշնամին նոր ոյժեր ստացած, երեք կողմէն կը յարձակին գիւղին վրայ : Տալուորիկցիներ կը պատրաստուին նահանջի դէպի Փրո-Փրո քար : Այս միջոցին խուճապ մը ո՛չ միայն ամօթով պիտի ձգէր ամբողջ Տալուորիկը, այլեւ աղիտայի ջարդի մը պատճառ պիտի ըլլար 6—700 ընտանիքներու : Գէորգ՝ Փրրխըւայ Տէր Գաբրիէլ քահանայի հետ, կոնակ կոնակի տուած, հերոսաբար կը դիմադրէ թշնամիի յարձակումներուն ու կը կասեցնէ զանոնք : Այս լուրը շուտով կը տարածուի մերձաւոր գիւղերուն եւ ահա՛ Սասունցիներ կը փութան օգնութեան : Այս անգամ թշնամին ձգելով ճակատը կը հեռանայ :

Սասո՛ւն փրկուած էր եւ յաղթական . . . :

Գէորգ իր 22 տարեկան հասակին մէջ կը շահէր առաջին դափնին ու իր անունը կը դառնար ժողովրդական եւ սիրելի բոլորին :

Խումբը կը մնայ գիւղ, մինչեւ Մուրատի գալը : «Յունիս 16-ին Տալուորիկի մէջ տեղի ունեցաւ մի մեծ կռիւ, — կ'ըսէ Գէորգ Չաւուշ, — ինձ հետ հոն էին նաեւ Արմենակ, Աղամ, Պօղոս եւ Յովհաննէս . կանոնաւոր զէնք չունէինք . մէկ հատ մարթին իմ ձեռք կար, իսկ միւսներուն չախմախլի էր : Հոն մենք կորսնցուցինք հինգ հատ աղամարդ ընկերներ եւ կին մը, իսկ քիւրտերէն սպանուան երեսուն հոգի : Տեղացի խեղճ Հայեր բաւական վնասուան, որովհետեւ Քիւրտեր թալան ըրին . մենք ալ անպաշտպան մնացած էինք, ոչ մի տեղէ օգնութիւն չկար . Մուրատն ալ ուշացաւ : Մինչեւ առուն մենք մնացինք այդ անորոշ վիճակի մէջ, Արմենակ ալ թողուց զմեզ եւ դնաց Խնուս, ուր կը գտնուէր նաեւ Մուրատ : Մենք այդպէս երեսի վրայ մնացինք, մինչեւ որ Պրն . Մուրատ եկաւ : Այնուհետեւ սկսանք կազմակերպել Սասնոյ ժողովուրդ . քիւրտեր շարունակ կ'աշխատէին նրա ունեցած չունեցած թալանել տանիլ :

«Յունիսի վերջեր չորս ընկերներով միասին դացինք Քիւրտերէն ետ առնելու թալանուած ոչխարները : Հովիւր մեզ տեսնելուն

պէս թողուց ոչխարներ եւ վագեց գիւղ որ Քիւրտերին լուր տայ: Մեր ընկերներէն երկուքը անմիջապէս ոչխարներուն խումբը քշեցին դէպի մեր եղած տեղ: Արդէն 100-է աւելի քիւրտեր եկած էին մեր վրայ. մինչեւ երեկոյ 6 ժամ շարունակ կռիւ ըրինք նրանց հետ, մինչեւ որ վերջապէս մեր ոչխարներու խումբին հետ կրցանք անվնաս մտնել գիւղ: Գացինք անմիջապէս Պրն. Մուրատին քով. ոչխարներու թիւն էր 65: Յիսուն հատը գիւղացիներուն բաժնուաւ, մնացեալն ալ խումբին մնաց եւ կերանք: Յուլիս 27-ին նորէն գացինք ոչխար բերելու. այս անգամ ալ Քիւրտերու հետ ունեցանք մի մեծ կռիւ, մինչեւ որ յաջողանք խլել մեր ոչխարներ եւ անվնաս ազատուելով վերադարձանք գիւղ»:

Այս դէպքերը անախորժ կը թուին կառավարութեան, որ լըրտեսներուն միջոցաւ կ'ուզէ ձերբակալել Մուրատ Պոյաճեանն ու Միհրան Տամատեանը: Այս վերջինը կաղմակերպչական աշխատանքներու համար Սասունէն կ'անցնի դաշտի արեւմտեան կողմը՝ Գոմեր, Ղըզըլաղաճ եւ մօտակայ գիւղեր: Այդ շրջանի խմբապետներուն հետ կ'ունենայ խորհրդակցութիւններ եւ որոշումներ տալէ ետք կ'անցնի դէպի արեւելեան կողմը՝ Եղերգուտի Ս. Յովհաննու վանքը, յետոյ անոր մօտիկ Տատրագոմ գիւղը եւ Շէն գիւղի ճամբով կը հասնի Շէնիկ, անկից՝ Առաքելոց վանքը, ուր կը տեսակցի ու կը խորհրդակցի Յովհաննէս վարդապետի հետ:

ՏԱԼԻՈՐԻԿԻ ԿՌԻԻԸ

1893-ի Յունիսին, երբ Տալուրիկի կողմերը կռիւներ տեղի կ'ունենային, անդին Խիանքի շրջանն ալ քիւրտ աշիրէթները կը կեդրոնանային: Կառավարութեան միտքը Քիւրտերու ձեռքով մահացու հարուած մը տալ էր Սասունի կեդրոնին՝ Տալուրիկի: Կը կարծէին, թէ այդպիսով պիտի կարենային ստրկացնել մնացած Հայութիւնը եւ կամ գիւրութեամբ բնաջնջել ի սպառ: Տալուրիկի շրջանի ժողովուրդը այս բանը կը տեղեկացնէ Հրայրին:

Այն ատեն Հրայր իր շուրջը համախմբած էր Սասունի լաւ կռուողները, մօտաւորապէս 12 հոգի, որոնց մէջն էին նաեւ Գէորգը, Գեալչօ Մանուկը, Տէր Քաջի տղան Աղամը եւ այլ փորձառու Ֆետայիներ, որոնք թռուցիկ խումբի անունով կը շրջէին գրեթէ Սասունի բոլոր գիւղերը ու այդ ձեւով իրենց օժանդակութիւնը կը բերէին բոլորին:

Հրայր(*), խումբին գլուխը անցած, կը հասնի Տալուրիկ: Ան

(*) Տես «Յեղափոխական Ալպոմ»ի Ա. հատորը էջ 66:

կը խօսի գալիք դէպքերու մասին ու կը խրախուսէ ընկերները :

Թշնամին պաշարած էր շրջանը, որով Հրայր կ'որոշէ դիրքերը եւ պատրաստ վիճակի մէջ կը թողու իր խումբը իր ազդանշանի հրամանին : Ֆետայիները կը բռնեն իրենց դիրքերը : Իսկ անոնք, որոնք անընդունակ էին գէնք գործածելու, կ'օգնեն կռուողներուն պաշար հասցնելով : Հայ կիները եւս անգործ չեն մնար, հապա կ'օգնեն ո'չ միայն հաց թխելով, այլեւ կռուողները պարենաւորելով :

Յունիսի 16-ին տեղի կ'ունենան փոքր ընդհարումներ դիւղացիներու եւ թշնամիին միջեւ : Լոյս 17-ին, քրտական աշիրէթներ գունդ առ գունդ սպիտակ սարէն կը սկսին իջնել դէպի Գաբլոր, յարձակելու համար հայկական կարեւոր դիրքերուն վրայ :

Ու կռիւը կը սկսի երկուստեք... : Թշնամին, հակառակ իր գերազանց ոյժին, ահեղ թափով մը կռուելու միտքով կը սպասէ նոր ոյժերու ժամանումին : Վերջապէս Շէյխ Ձէլան, 2000 զինուած խուժանի մը գլուխը անցած, այս անգամ կը յարձակի երկու թեւով : Մերինները, որ մինչեւ կէսօր հիանալիօրէն դիմադրած էին, կէսօրէ ետք ժամը 2-ին մէկ թեւը կը թուլնայ ու կը թողու Տալուորիկի բանալին թշնամիին ձեռքը : Թշնամին մեծ ուրախութեամբ կը քալէ դէպի դիւղ : Գիւղացի կիներ ու երախաներ իրենց վախէն կը փախին, թշնամիին ձեռքը չիյնալու համար :

Հրայր, Գէորդ ու քաջ Ադամ, տեսնելով որ թշնամին կը յառաջանայ, անմիջապէս յարձակելու հրաման կու տան իրենց ընկերներուն եւ դիւղացիները կը խրախուսեն, ըսելով, որ իրենց ձորերը պէտք է ըլլան գերեզմանը վատ ոսոխին :

Եւ ահա՛ Շէնիկցիները Մոսէ Գրգոյի առաջնորդութեամբ կը բարձրանան Աւխարկնին, վատ թշնամիի անհամար զնդակներու տարափին տակ : Իսկ Գեալեցիք անոնց ետեւէն թուրով ու սուրով կը կռուին հակառակորդին հետ, դուրս կը շարտեն դանոնք ժայռերու ետեւէն ու կը մտածեն կտրել թշնամիին թիկունքը : Քիւրտերը անակնկալի կու գան, որովհետեւ Տալուորիկցիներն ալ փութով կը միանան Գեալեցիներուն : Այն ատենն է, որ իրենք կը սթափին իրենց կրած ահաւոր հարուածէն : Կռուի ամենէն տաք շրջանին, մեծապէս օգտակար կ'ըլլայ ու աչքի կը դարնէ Համգէի քոյրը, որ իր ոգեշնչող խօսքերով կը սրտապնդէ ու ոգեւորիչ երգերով կը խանդավառէ Տալուորիկցիները, վերականգնելով անոնց ընկճուած ուրին : Ան դիւղացիներուն կ'ըսէ. «Շէնիկցիներն ու Գեալեցիները եկած են պաշտպանելու Տալուորիկցիներուն կնտոց լաչիկները» :

Համգէի քրոջ այս խօսքերը կը լսեն նաեւ Հրայր ու Գէորդ : Ծուտով կը վերականգնուի դիւղացիներուն տրամադրութիւնը : Անոնք դօտեպնդուած, իրենց առաջնորդներուն հետ միասին կը յարձակին քիւրտերուն վրայ «դէպի մա'հ» դռչելով : Անոնց կը միանան Շէնիկցիները եւ Գեալեցիները :

Այս յանդուգն քայլին վրայ, թշնամին կը լքէ իր դիրքերը ու

կը դիմէ փախուստի: Մեր խումբերը, այս անգամ իրարու միացած, վատհոգի թշնամին կը հետապնդեն մինչեւ սարին ստորոտը:

Սոյն կռուին մենք զոհ տուինք 200 շունչ, իսկ ոսոխը՝ մօտաւորապէս հազար հոգի: Անոնք իրենց քրտերէն երգերուն մէջ կը խոստովանին իրենց պարտութիւնը: Իսկ Սասունցի կիներ երգեցին հետեւեալ երգը.

Սասուն վագեց արեան գետեր,
Զէնքեր չունինք առանք փէտեր,
Մըր դարդը դուք հէջ չըք քաշեր,
Խայե՛ր, խայե՛ր, խայեր, խայե՛ր:

Անգուք տանիկ խըտ Քրդերուն,
Աւերեցին մըր տեղ ու տուն,
Մըր ջիւաններ տարան գերի,
Թորկին մըր տըներն անվերի:

Խարս ու աղջիկ բռնին քուանք,
Տընով տեղով մընք քանդուանք.
Մեռաւ մամ, պապ, ու ծեր մեռան,
Սովէն քեւ քիկունքներս կ'եռան:

Սասուն ձեռնէ գնաց, կ'աւե՛ք,
Զուր տեղ մարդու մի՛ քամքաւե՛ք.
Զոր խաց տւէք ու քանի մ'գէնք,
Է՛լ ուրիշ քան ձրգնէ չուգնք:

Քրդի մեռնինք Սուրբ Տիրամէր,
Դու մի՛ թորկի մըրկի անտէր:
Խըղճուկ խըղլաք, կանչէ ու լաց,
Բալքի քու ձէն քսէ Աստուած:

Այնուհետեւ երկարատեն Քիւրտեր չեն համարձակիր Տալուրիկին մօտենալ: Այդ կացութեան հանդէպ Սասունցիներուն ուրիշ բան չէր մնար, եթէ ոչ համախմբուել ազգային յեղափոխական դրօշին տակ ու իրենց փրկութիւնը փնտռել միայն ու միայն ոյժի եւ միութեան մէջ:

Տալուրիկի յաղթական կռիւը մեծ յոյսեր կը ներշնչէ գիւղացիներուն, թէ գէնքով կարելի է պահպանել իրենց ազատութիւնը եւ միաժամանակ հնարաւոր է գլուխ չծռել քիւրտ աշիրէթներուն առջեւ:

Հայ Փետային եւ յեղափոխականը կը ջանան այս գիտակցութեամբ զինել ժողովուրդը եւ կը հրահանգեն որ այնուհետեւ չճանչնան քրտական աշիրէթական որեւէ հրաման եւ ի հարկին գէնքով պատասխանեն հակառակորդի բոլոր ոտնձգութիւններուն ու պահանջներուն:

Այդ օրերուն Սուլթանի կատաղութիւնը կը հասնի իր գագաթնակէտին, քանի որ Սասունի վրայ կատարուած մասնակի թէ հրոսակային բոլոր յարձակումները անգոր կ'ըլլան ընկճելու զայն:

Եւ սակայն Սուլթանը կ'որոշէ.

— Պէտք է բնաջնջել Սասունը:

Այդ զաղափարը նախ կը հաղորդէ սեւ սյտերու գործակալ Ղազի Օսման եւ Տէրվիշ փաշաներուն, որոնք համախորհուրդ սոյն դիւանին ու ոճրային ծրագրին՝ իրադործումը յանձնել կ'ուզեն Չէքի փաշային, որ այն օրերուն պաշտօնով կը գտնուէր Պիթլիս:

Ասիկա Չէքիին հաղորդելու համար Պիթլիս կը ղրկուին երկու պատուիրակներ՝ Սայիտ պէյ եւ Շէյխ Սիւլէյման, որ Սուլթանի հատարիմներէն էր:

Անոնց մեկնումը նախապէս կը հեռադրեն՝ պատշաճ ընդունելութեան համար: Երբ պատգամաւորները Պիթլիս կը հասնին, անոնց կ'ընծայուին արտակարգ պատիւներ:

Չէքի իրեն վստահուած այս գործը սրբազան պարտականութիւն մը համարելով, անմիջապէս ժողովի կը հրաւիրէ շրջանի քիւրտ ցեղապետները: Ան կը բացատրէ ժողովին նպատակը, որմէ ետք Սուլթանին պատուիրակները ներկայ եղող ցեղապետներուն կուրծքերը կը զարդարեն Սուլթան Սպախիւլ Համիտի շքանշաններով ու հարիւրաւոր ոսկիներ ալ նուէր կու տան:

Հակառակ սակայն Չէքի փաշայի դումարած այս ժողովը եւ անոր որոշումները գաղտնի պահել ուզելնուն, Միհրան Տամատեան, որ այն ժամանակ Վարդենիս գիւղը կը գտնուէր, կ'իմանայ:

Տամատեան առաջին անգամ Մուշ եկած էր 1884-ին, տեղւոյն Ներսէսեան Բարձրագոյն վարժարանի ընկերութեան հրաւէրով, ու կը մնայ մինչեւ 1888 թուականը:

Սասունի-Տարօնի եւ մասամբ ալ Վասպուրականի մէջ իր քառամեայ (1884-1888) կրթական բեղուն գործունէութեան շրջանին, Տամատեան պատեհութիւնը կ'ունենայ դիտելու, ուսումնասիրելու, նոյնիսկ ապրելու իրաւազրկուած եւ հարստահարուած իր ժողովուրդին կեանքը: Ան ցաւով կը տեսնէ հայ ժողովուրդին սպառնացող վրտանգը, կը թափանցէ իրերու խորքը եւ վրդովուած կը հաստատէ, թէ ան ընկճուած իր ստացած ծանր ու անվերջ հարուածներէն, համակերպած է առանց ընդվզումի, առանց արժանաւորապէս հակադրելու եւ հակագործելու: Այսպիսով մարդիկ ենթարկուած են ու գոհացուցած բռնակալներու անմարդկային պահանջները: Այդ ընկճուածութիւնը կը շարունակուէր նախկին դարերու հերոսածին հողին վրայ: Միայն Սասունն էր, որ մասամբ պահած էր «ակն ընդ ական» սրբազան հաւատքը, յաճախ ենթարկուելով մէկտեղ քրտական եւ կառավարական բռնատիրութեան:

Տամատեան կը տեսնէ Սասունի եւ Մուշի տառապած հայուն կեանքը, որ կորսնցուցած էր իր ինքնապաշտպանութեան տարրական

բնագրը եւ իր անգորութեան մէջ կը տուայտէր, որովհետեւ լքուած էր եւ վերածուած կամագուրկ ամբոխի մը՝ ձգուած իր ճակատագրին: Տամատեան կը բռնուի անօրինակ երկունքէ մը: Այդ երկունքը կ'առաջնորդէ զինք բիրտ հայրենասիրութեան՝ զէնքով մաքառելու ճանապարհին:

Իր ուսուցչութեան չորս տարիներուն ցեղային անարդարութեան միջավայրը կը դարբնէ իր մէջ նո՛ր մարդը: Կը բանայ իր մտքին համար տեսողութեան նոր հորիզոններ, նոր աշխարհ մը, ուր պայքարի եւ տառապանքի դիծով պէտք էր որ նուիրուէր իր տառապած ցեղակիցներուն ազատագրութեան գործին:

Միհրան Տամատեանի հոգեկան աշխարհը կ'ենթարկուի վճռական յեղաշրջումի մը 1886-ին, երբ հակահայ շարժումը կ'ըլլայ անհանդուրժելի՝ իր չափազանցութեամբ:

1888-ին կ'անցնի Պոլիս: Կը պաշտօնավարէ Հայ Կաթողիկէ վարժարանը մինչեւ 1890, բայց երբ կառավարութիւնը կ'ուզէ ձերբակալել զինք, անմիջապէս կը մեկնի Աթէնք:

Տամատեան 1891-ի Օգոստոսին, իր առաջարկութեամբ եւ Կեդրոնի որոշումով, իբրեւ յեղափոխական գործիչ կը մեկնի Սասուն:

Մուշի մէջ կը յարաբերի Առաջնորդ Խարախանեան Ներսէս վարդապետի, Սիսակ Գույումճեանի եւ Վահան Մոզեանի հետ: Նաեւ կապեր կը հաստատէ հինէն ծանօթ քաղաքացի զաղափարակիցներու եւ բարեկամներու հետ եւ հիմը կը դնէ Հնչակեան կուսակցութեան:

Միհրան Տամատեան կը շրջի Սասունի բոլոր շրջանները, ամէն տեղ կը քարոզէ սուրբ գործը, հայ գիւղացին կը պատրաստէ հերոսական կռիւներու, պաշտպանելու իր ընտանեկան պատիւը ու ճակատին քրտինքովը շահած արդար վաստակը՝ թիւրք եւ քիւրտ աւատապետներու անվերջ շահատակութիւններուն դէմ:


Տամատեան, Մարգար վարժապետի հետ, կ'որոշէ ժողով մը գումարել վարդենիս գիւղը ու հրաւիրել շրջանի պատասխանատու անձնաւորութիւնները:

Մուրատ Պոյաճեան, իբրեւ մուրացիկ ծալտուած, Տիգրանակերտէն կ'երթայ Հայնէ ու Լճէ ու ահա՛ անակնկալօրէն կը ժամանէ վարդենիս ու կը մասնակցի այդ ժողովին:

Մուրատի եւ Տամատեանի հանդիպումը կ'ըլլայ սրտառուչ եւ յուզիչ: Ուրախութեան արտասուքը կը հոսի անոնց աչքերէն. տարիներու անսահման կարօտը մրկած էր զիրենք:

Մուրատի ժամանման աւետիսը ելեկտրական հոսանքի նման կը հասնի Սասնոյ ողջ հայութեան, որուն անձկանօք կը սպասէր այն օրէն ի վեր, երբ Տարօնի Հնչակեան վարչութիւնը անոր Աթէնքէն մեկնումի լուրը ստացած էր Հնչակեան կուսակցութեան կեդրոնէն:

Սասունցին, ապառաժներու կողերուն վրայ ծնած ու մեծցած, իր ազատութեան համար պայքարելու պատրաստակամ ոգիով լեցուած, կը խանդավառուի Մուրատի ներկայութեամբ:



ՄԻՀՐԱՆ ՏԱՄԱՏԵԱՆ

Մուրատ քիչ մը շունչ ու հանգիստ առնելէ յետոյ, Տամատեանէն մանրամասնօրէն կը տեղեկանայ կարգադրուած ու ծրագրուած աշխատանքներու մասին . . . :

Տամատեան, որ իր Սեմալ մեկնումը յետաձգած էր քանի մը օրով, որպէսզի կարենար տեսակցիլ Մուրատի հետ, կ'երթայ հանգիստ սիրտով ու այն վստահութեամբ, որ այլեւս իր բացակայութիւնը ո'չ միայն զգալի պիտի չըլլայ անոր ներկայութեամբ, այլեւ ծրագրուած աշխատանքները պիտի լրանան ատենին :

Մուրատ կը կրկնապատկէ իր աշխատանքը :

Սասունցիները, տեսնելով Մուրատի հոգեւին նուիրումը, ա'լ աւելի կ'ողբելորուին : Ոյժերը կը կրկնապատկուին : Այն իշխանները, որ դեռ անհաշտ էին, իրարու կը մօտենան, կը հաշտուին ու Մուրատ

տի ներկայութեան կ'ուխտեն միասնաբար պայքար մղել՝ փշրելու համար Սասունը հետզհետէ պրկող երկարաձիգ շղթան :

Տամատեան եւ Մուրատ ամէն ջանք կը թափեն , որ Սասունի անդորրութիւնը չխանդարուի :

Որքան որ այդ ամառն ու աշունը կ'անցնին համեմատօրէն խաղաղ , բայց իրերը այնպէս ցոյց կու տան , որ փոթորիկ մը մօտալուս է եւ կրնան թշնամութիւնները վերսկսիլ :

Ուստի , որպէս նախատեսութիւն , վտանգը կանխելու համար , երկու ղեկավարները կը խորհրդակցին եւ կ'որոշեն , որ ձմրան մէջ Մուրատ կովկաս անցնի , այնտեղէն նիւթական օգնութիւն ձեռք բերելու , իսկ Տամատեան մնայ ու ջանայ , որ պոռթկում մը տեղի չունենայ մինչեւ անոր վերադարձը Սասուն :

1893-ի Մայիսին Տամատեան Սողոյի հետ վանքէն դիշեր ատեն ճամբայ ելլելով կ'ուզէ դարձեալ Սասուն անցնիլ : Անոնք կը բռնեն Տիգրանակերտի կողերը քերող ճամբան : Հարաւային սաստիկ քամին կը փչէ : Երկու ուղեկիցները կը քալեն ձիւնոտ ճամբայէն , երբեմն ուժաթափ կը մտնեն մացառներուն մէջ քիչ մը հանդստանալու : Յետոյ դարձեալ կը շարունակեն իրենց ուղին եւ վերջապէս կը հասնին Կորեկաղբիւր : Անկէ Մայիս 31-ին կ'անցնին Շէնիկ Մերկեր գիւղը , որ շատ հեռու չէր . . . : Գիւղէն հազիւ 15 վայրկեան քալած , ձիւնի թումբերու ետեւէն իրենց դէմ կ'ելլեն հինգ զինուած Քիւրտեր , որոնք իրենց ուսերուն կը կրէին չախմախի հրացաններ : Տամատեան կ'ըսէ Սողոյին , որ պատրաստուի կռուի . իսկ ինքն ալ ատրճանակը ձեռքին՝ կը սկսին յառաջանալ իրենց ճամբան թեթեւ մը շեղելով :

Քիւրտերը կ'ուզեն հասկնալ իրենց ո'վ ըլլալը . Տամատեան կը պատասխանէ , թէ իրենք ճամբորդ են ու կ'երթան իրենց գիւղը :

Բաւական մը յառաջանալէ ետք , իրենց ետեւէն հրացանի պայթիւն մը կը լսուի թէեւ , սակայն անոնք առանց կարեւորութիւն տալու կը շարունակեն իրենց ճանապարհը : Կը հասնին ջուրի հոսանքի մը առջեւ . հազիւ անցած , այս անգամ կը լսուին հրացանի կրակոցներու ձայներ ու գնդակ մը կը մխուի Միհրան Տամատեանի ոտքին քով : Մինչ այդ , քիւրտերը արդէն մօտեցած էին Տամատեանին ու Սողոյին , ու փոքր կռիւէ մը ետք ձերբակալելով զիրենք , կը յանձնեն թիւրք զինուորներուն , որոնք հարցաքննելէ ետք , չորրորդ օրը կը տանին Մուշ , ապա՝ Բաղէշ , եւ զինք կ'արտաքսեն Պոլիս :

Այդ միջոցին Գէորգ Զաւուշ կ'իջնէր գիւղերը : Կը լսէ Միհրան Տամատեանի եւ Սողոյի ձերբակալման լուրը եւ անոնց Մուշ տարուիլը : Առանց ժամանակ կորսնցնելու , Գէորգ կ'անցնի Սեմալի սարը , որ միակ ճամբան էր , ուրկէ պիտի տանէին Միհրանը : Սակայն երբ այդ վայրը կը հասնի , անոնք արդէն անցած կ'ըլլան :

Մ Ո Ւ Ր Ա Տ Ի Լ Ե Տ

Մուրատ որոշ չափով ծանօթ էր Սասունցիներու բնաւորութեան, որով Հրայրի ու Տամատեանի տարած աշխատանքէն ետք, իրեն համար դժուար չէր հետեւիլ անոնց հարթած ճամբուն: Մանաւանդ, որ ինք ունէր ղեկավարի եւ առաջնորդի բոլոր յատկութիւնները: Ան իր շուրջ կը հաւաքէ Սասունի ֆետայիները: Իրեն կը միանայ նաեւ Գէորգը:

Մուրատի միջոցաւ ամբողջ Սասունը մէկ բանակ կը դառնայ: Զէնքերը կարգի կը բերուին եւ հրացաններուն համար արծիճ, ծծումբ կը հաւաքեն ու սեւ վառօդ կը պատրաստեն: Տեղի կ'ունենան նաեւ վարժութիւններ:

Միւս կողմէ Հրայր Սասունի մնացած փոքր ոյժերը իրարու միացնելու աշխատանքին կը լծուի: Անոր նպատակն էր նաեւ կռուի չբռնուիլ թշնամիին հետ, մինչեւ որ արտասահմանէն դրամ ու զէնք ստանան:

Ահա՛ այս միտքով Հրայր կը սկսի նամակներ գրել, թուղթիկներ ուղղել թէ՛ «Հնչակ»ին եւ թէ՛ ալ «Դրօշակ»ին, ըսելով.

«Մենք, յանուն Տարօնի եւ Սասունի հայուն, կրնանք կատարելապէս ըսել եւ հաստատել, թէ «Մեմֆ մեզի նշանաբան ընտրած եմք՝ մահ կամ ազատութիւն», առանց մտածելու այլեւս թշնամի ոյժերու անհամեմատ առաւելութեան վրայ:

«Ո՞ւր են այն Հայերը, որոնք միշտ կը փափաքին Հայաստանի ազատութիւնը: Ահա՛ ժամանակն է: Ուստի որպէս անձնուէր հայ, իրրեւ հայ թող իր նիւթական թէ՛ ռազմական օգնութիւնը եւ ձեռնտուութիւնը չխնայէ: Այս վայրկեանները կորսնցնել՝ հասարակութիւն մը կորսնցնել է: Ուրեմն գթացէ՛ք եւ կարեկցեցէ՛ք մեզ այժմ կամ՝ երբե՛ք: Բայց վստահ եղէ՛ք նաեւ, որ եթէ ամէն կողմէ ալ անօդնական մնանք, պիտի մնանք նաեւ միշտ արի, անյողդոզ եւ անընկճելի: Ու՛ վերջին ձայն մըն ալ պիտի արձակենք, բայց հողի ներքեւէն եւս անէծք պիտի կարդանք ա՛յն Հայերուն, որ մեր արեան հովիտներուն մէջ դիտարկելու խաղալուն հանդիսատես կը լինեն եւ սնտոյի առարկութիւնք մեզ կը բերեն. առանց չափելու եւ ի նկատի առնելու իրենց շուրջ ի գործ դրուած քաղաքական եւ տնտեսական հալածումն, բանտարկութիւնքն, աքսորն, մահացմունքն, խժդժութիւնքն, եւ այլն»:

Հրայր, որ այդ միջոցին Սասնոյ եւ Տարօնի շրջաններուն միակ ու կեդրոնական անձնաւորութիւնն էր, կ'անցնի Խնուս, էրզրում եւ ապա կովկաս՝ անձամբ տեղեկացնելու Սասունի ծանր վիճակը:

«Թերթեցէ՛ք «Հնչակ»ի 1892—1894-ի ամբողջ համարները, եւ դուք կը դտնէք այն տեղ մեր պաշտելի Մուրատի, անմահ Արմենակ Ղազարեանի (Դժոխք—Հրայր) սրտառուչ նկարագրութիւններն ու օգնութեան հասնելու օրինական կոչ—աղաղակները, որոնք կրակէ ծովու մէջէն եկող վտանգներն կը մատնանշեն» (*):

1894-ի Յունիսի սկիզբը թիւրք կառավարութիւնը կը դիմէ վճռական միջոցներու, զօրք կեդրոնացնելով Մուշ, մօտաւորապէս 12 բանակ հետեւակ եւ նոյնքան ալ հեծեալներ, ոստիկաններ եւ այլ զօրամասեր:

Մուրատ եւ Գէորգ կատարելապէս համոզուած էին, որ իրենք եւս հայ ժողովուրդին հետ դատապարտուած են մահուան: Հետեւաբար կ'որոշեն անձնատուր չըլլալ ու մինչեւ վերջին շունչը դիմադրել, կեդրոն ունենալով Գեալէ դիւղը, Սպաղանք եւ Տաւուրիկ դիծը իբրեւ թիկունք՝ ունենալով Անտոք ու Գեփին լեռները, իսկ առաջը՝ Սասնոյ գետն ու Գեալու հիւսիսային բարձունքները:

Գալով ուտելիքի կարիքին, կ'որոշեն յարձակիլ մերձակայ աւաններուն վրայ ու տիրանալ անոնց հօտին:

Իրենց ծրագրածը կ'իրականացնեն՝ տիրանալով քանի մը հազար ոչխարներու:

Մուրատ Սասունի ընդհանուր հրամանատարութիւնը ստանձնելէն ետք, Յունիս 5-ին Շէնիկ դիւղին մէջ ժողով մը կը գումարուի, որուն ներկայ կ'ըլլան Մեծն Մուրատ, պատանի Գէորգ Չաւուշը, Ռէս Գրգոն, Քոլոզ Յովհաննէսը, իսկ Տաւուրիկի ինը թաղերուն ներկայացուցիչներէն՝ Սաչոյեան Գասպար, Գամէեան Համգէ, Գաբրիէլ քահանան, Չառոյեան Պետրոս, Համգէեան Արթին, Գոլոյեան Գասպար եւ Մկրէ ու իր երկու եղբայրները՝ Սաչոն ու Մակարը:

Այդ օրը ամբողջ տունը լեցուած էր երկսեռ բազմութեամբ մը եւ ամէն մէկը զբաւած իր տեղը:

Ներկաները մտախոհ էին ու մատնուած հոգեկան խոր յուզումի, քանի որ անորոշ էր իրենց ճակատագիրը: Չէին գիտեր գալիքը եւ անհամբեր էին լսելու, իմանալու բան մը, որ կ'ուշանար:

Մինչ այդ սակայն Մուրատ Պոյաճեան տեսնելով, որ գործիչներ, իշխաններ եւ ժողովուրդ պատրաստ են լսելու զինք, ժողովը բացուած կը յայտարարէ ու կ'աւելցնէ.

«Եղբայրներ՛ր, Սասունը պաշարուած է. ձեզի յայտնի է առաջին օրուան արիւնահեղ ընդհարումը Բատկանցի ցեղախումբին հետ: Կառավարական զօրքը արդէն իսկ եկած ու հաստատուած է մեզմէ մէկ—երկու ժամ հեռու Մերկէ—Մօղանի: Քիւրտ ցեղախումբերն ու հրոսակախումբերը իրենց անթիւ վոհմակներով պաշարած են մեր

(*) Երիտասարդ Հայաստան 1907 թիւ 5:



ՄՈՒՐԱՏ ՊՈՅԱՃԵԱՆ
(Մեծն Մուրատ)

լեռները: Պատերազմը անխուսափելի է, իսկ մեր դրուժիւնը վատ, քանի որ մենք անպատրաստ ենք: Իմ կարծիքով, սակայն, մենք վհատելու չենք, այլ, Սասունի վաղեմի սովորութեան համաձայն, պէտք է ջանանք մինչեւ մեր արեան վերջին կաթիլը պաշտպանել մեր հայրենի լեռները, մեր ընտանեկան սուրբ օճախը: Հոս ներկայ եղողներէն կը խնդրեմ, որ մտածեն եւ մենք շուտով ելք մը գտնենք: Բոպէները թանկ են մեզ համար, թշնամին այլեւս միջոց չի տար մեզի երկար խորհելու»:

Մուրատ հազիւ վերջացուցած իր խօսքերը, Շէնիկի Ռէս Գրգոն չափազանց յուզուած ոտքի կ'ելլէ եւ կրակոտ կերպով կ'ըսէ.

— Հընը լաւօ՛, էլ ի՞նչ կը մտածենք. աւ տայի է լը սըր, չի բողտկի չի թեղքի: Քիւրտերէն առածը կ'ըսէ. «Ձուրը ծածկեր է գլախ. ի՞նչ արչին, ի՞նչ թիզ»: Մի՞թէ մեր պապերը, որ կռիւով ապրեցան, շատ էին մտածեր եւ կամ մեր շատ մտածող եղբայրները ի՞նչ եղան եւ ի՞նչ պիտի ըլլան: Ահա՛ թշնամին եկած է մեր դուռը, կ'ուզէ մեր տէրը ըլլալ, մեր օճախը քանդել, տակն ու վրայ ընել, մեզ գերել, տանիլ, բանտարկել: Մոռցա՞նք մի՞թէ մեր քաջ իշխաններ՝ Ազոյի եւ Գուրգէնի նահատակութիւնը թրքական բանտերուն մէջ: Ու ձեռքով ցոյց տալով դէպի դուրսը, կը շարունակէ. — Մեր թշնամին կ'ուզէ թրքացնել մեր կոյս աղջիկներուն կին-զաւակներուն, քանդել մեր եկեղեցիները եւ ոտնակոխ անել մեր ընտանեկան պատիւը, նամուսը: Մի՞թէ մենք տղամարդ չենք, ո՞ր օրուան համար կը սպասենք: Ես իմ 120 մարդկանցով պատրաստ եմ. բոլորս ուխտած ենք մեռնիլ եւ գլուխ չծռել թշնամիին: Կամ Մահ, կա՛մ Ազատութիւն:

Ռէս Գրգոն խօսքը վերջացնելով կը դանդաւոր: Եւ ապա դառնալով միւս հայրենակիցներուն, կ'աւելցնէ.

— Ո՛վ որ խօսք ունի ազատ է:

Տաւրոսիկցի Տէր Գարրիէլը խօսքը Ռէս Գրգոյին ուղղելով կ'ըսէ.

— Մենք առ այժմ՝ կրնանք ձեզի օգնել ո՛չ աւելի քան 300 մարդով, որովհետեւ Խաչոյի Գասպարը Մայր խումբով ստիպուած է մեզ սպասել Տաւրոսիկ: Ինչպէս կը տեսնուի, այն կողմէն ալ շուտով յարձակումը պիտի սկսի: Միայն պէտք է ըսեմ, թէ մենք բնաւ պատրաստութիւն չունինք, ո՛չ հացի եւ ո՛չ ալ զէնքի:

Շէնիկի Ռէս Գրգոն, չափազանց կրակոտ մարդ, սաստիկ բորբոքած ոտքի կ'ելլէ ու կ'ըսէ.

— Հընը, էլ ի՞նչ պատրաստութիւն պիտի տեսնենք: Ի՞նչ հաց, ի՞նչ բան, քանի որ մեռնելու ենք: Հաց չկայ, հը, հընը բոլորիս համար չկայ. խոտ կ'ուտենք, արմատ կը կրծենք: Իսկ զէ՞նք: Միեւնոյնն է. մենք ունինք մեր հին չախմախլի հրացանները, ինչ որ ունին մեզի թշնամի Քիւրտերը: Իսկ եթէ անոնք նոր տեսակներ պիտի ունենան, մենք ի՞նչ ընենք. Չէ՞ որ մահն ալ մեր կողմն է միշտ: Մեր կռիւը օրհասական է, մենք պիտի պաշտպանենք մեր պատիւը եւ պիտի կռուինք մեր երկրին եւ մեր ազատութեան համար:

Ներկաները միահամուռ կը ձայնակցին կրկնելով.

— Այո՛, այո՛, կռուի՛նք, կռուի՛նք...:

Այս ուրախ խօսքերու կրկնումին վրայ, յանկարծ Կեյիեկուզանի ներկայացուցիչը՝ Տէր Պետրոս խօսք կ'ուզէ եւ կ'ըսէ.

— Միրելի՛ եղբայրներ, իմ կարծիքովս պէտք է հաշտութիւն առաջարկել եւ եթէ հնարաւոր է, աշխատինք մի քիչ զիջումով այս տարին ալ վտանգը հեռացնել մինչեւ դալ տարի: Մանաւանդ այժմ, ինչպէս գիտէք, քաղի ժամանակն է, ապրանք ու պաշար ձեռք բերենք եւ յետոյ ընենք ինչ որ կրնանք:

Տակաւին խօսքերը չվերջացուցած, չորս կողմէն խիստ կերպով կը բողոքեն, որմէ ետք Կելիեկուզանի Ռէս Աւոն, որ խիստ խոհուն ու լուրջ անձ մըն էր, կ'ըսէ .

— Մենք ի հարկէ պէտք չէ ցոյց ընենք եւ աշխատելու ենք խռովութեան տեղի տուող դէպքերէն խուսափիլ: Բայց, ինչպէս դիտել տուաւ Մուրատը, սպառնացող վտանգէն խուսափելու համար հնար չկայ: Տէր Պետրոսը կ'ըսէ, թէ պէտք է աշխատինք զիջումներ ընել, բայց ի՞նչ զիջումներ. թիւրքը մեր «երկու ոտքը դրած է մէկ կօշիկի մէջ», եօթը տարուան տուրքի մնացած դրամը մէկ անգամէն կ'ուզէ գանձել: Բացի այդ դրամէն, ան խիստ կերպով կը պահանջէ, որ Տալուրիկի եւ Սասունի բոլոր երեւելիները, թիւով 67 հոգի, իրենց քահանաներով մէկտեղ, Մուշ կառավարութեան դուռը երթան եւ հպատակութեան ու հաւատարմութեան խոստում տան: Եւ իբրեւ երրորդ պայման, կը պահանջեն, որ Սասունցիք միահամուռ երդում տան կառավարութեան, թէ ոեւէ մէկ օտար մարդ պիտի չընդունին իրենց մէջ եւ եղածներն ալ պիտի բռնեն ու յանձնեն կառավարութեան: Եւ կ'ուզէ՞ք, որ մենք բոլորս ալ երթանք եւ թիւրքին ձեռքը տանջանքներով նահատակուինք եւ կամ դաւաճան Յուզա՞ դառնանք ու մեր հիւր եղբայրները բարբարոս Ռոմի ձե՞ռքը մատնենք: Ահա՛ այս է, Տէ՛ր Պապա, թիւրքի հետ հաշտուելու միակ միջոցը: Գալով այն հարցին, թէ աշխատինք կալերը վերցնել, ապրանք ձեռք բերել եւ յետոյ ընել, ի՞նչ ընելու ենք, կ'ըսեմ. ա՛յդ միտքը շատ լաւ է, բայց թշնամին չի համբերեր: Ան կ'ուզէ օգտուիլ մեր նեղ դրութենէն: Ուրիշ ելք չկայ, պէտք է կռուինք: Կռուինք եւ մեռնինք միասին: Շէնիկ, Սեմալ եւ Անտոք չեն կրնար մեզի պատսպարան ըլլալ, իմ կարծիքովս պէտք է թողուլ այդ վայրերը եւ քաշուիլ Կելիեկուզան: Յետոյ, Աստուած մի արասցէ, եթէ շատ նեղը մնանք, մեր վերջին ապաւէնը թող ըլլան Տալուրիկի սարերը եւ Փրո-Փրո քարը:

Այդ պահուն Մուրատի քով նստող պատանի Գէորդ կը լսէր բոլոր խօսակցութիւնները: Երբ խօսքը կը դառնար կռիւի մասին, կ'ոգեւորուէր ու կը խանդավառուէր: Իսկ երբ հարցը կը դառնար զիջումներու, կը գունատուէր ու ահա մէկէն դառնալով ժողովականներուն կ'ըսէ, իր խրոխտ ձայնով .

— Պէտք է կռուինք, մինչեւ մեր վերջին շունչը:

Միւս կողմը նստած էր նաեւ Կելիեկուզանի հին դիւղապետ Աւոյի հօրեղբայրը, որ ճանչցուած էր ամբողջ Սասունի մէջ Խոզըջի Պետօ անունով: Ան հմուտ բեկարոյժ էր: Շատ յարգուած էր իր անվեհերութեան համար: Մինչեւ այդ ատեն լուռ ու մունջ նստող ծերունին մէկէն ջղայնացած խրոխտ հազով մը եւ առիւծի ձայն մը հանելով, ձեռքի շարժումով կը լռեցնէ ամէնը եւ կ'ըսէ ներկաներուն .

— Տեսէք իմ արեւոր մազերս: Տարիքս 70-ի մէջն է, բայց դիտէք, ձեզմէ քսանը էլի մէկ չեմ սեպեր: (Ձեռքը երկարելով երիտասարդներուն) Այս եօթանասուն տարուան մէջ 37 կռի՛ւ եմ տեսած,

Թող թէ պատահական մանր-մունր հանաքներ: Բայց ձեզ պիտի ըսեմ, որ այս կռիւը չի նմանիր այն կռիւներէն եւ ո՛չ մէկուն: Սոյն կռուի դոյնը եւ ձեւը ուրիշ է, ես կը վախնամ այս կռիւէն: Կը տեսնէ՞ք այս վէրքերը: (Յոյց տալով բազմաթիւ սպիներ, կը շարունակէ). Ասոնք ձեզի ցոյց տալով չեմ ուզեր վախցնել, ընդհակառակը, ինչպէս որ ես մահէն չեմ վախնար, կը փափաքիմ եւ կը յուսամ որ դուք եւս նոյն սիրտն ու ոգին ունենաք: Բայց մէկ բան կայ. մեր թշնամին անհամար է եւ թիւով մեզմէ շատ: Բացի անկէ, ինչպէս իմացած ենք, անիծեալ Ռոմի (Թիւրք) սեւ զինուորն ալ միացած է այդ անհաւատ Գիւրտերուն հետ: Այսուամենայնիւ պիտի չյուսահատինք, պէ՛տք է սկսինք: Միայն իբրեւ ծերունի ու փորձառու մարդ, սա ալ ձեզի ըսեմ, թէ յաղթողը ա՛յն է, ով որ առաջին հարուածը կու տայ: Պէտք է կռուինք, ա՛լ սպասելու ժամանակ չունինք: Կեցցէ՛ կռիւը, կեցցէ՛ Սասունը:

Այդ պահուն բոլորը միաձայն կը գոչեն. «Կեցցէ՛ կռիւը, կեցցէ՛ Սասունը»:

Հազիւ լռութիւնը տիրած, Պետօ կը շարունակէ:

— Այս յաղթութիւնը կախուած է առաջին հարուածէն. խորհուրդ կու տամ, որ դադանի յարձակինք թիւրք զօրքերուն վրայ, որ քանակով քիչ են ըստ մեր լրարբերներուն՝ հազիւ երկու կամ երեք հարիւր հոգի: Այո՛, կը յարձակինք գիշերով, փախուստի կը ստիպենք եւ անոնց զէնքերն ու ռազմամթերքը եւ պաշարն ալ առնելով կը քաշուինք Կելիեկուզան ու Տալուրիկի սարերը: Եւ այնտեղ, Աւոյի ցոյց տուած ծրագրով, կը պաշտպանենք մեր պատիւը եւ ազատութիւնը, մինչեւ որ մեր հեռաւոր եղբայրները օգնութեան հասնին...:

Ժողովը կը վճռէ յարձակումը կատարել նոյնիսկ յաջորդ գիշերը: Ի նշան ուրախութեան կը սկսին երգել:

Մենք սրտով կտրին ու բաժով պարթեւ
Հաստ, հաստ ունինք թեւ ու վազենք թեթեւ,
Բեզրանք նստելուց, մենք կռուել կ'ուզենք,
Միայն թէ Հայե՛ր, տուէք մեզի գէնք:

Անօթի, ծարաւ, աղ չէ լէ մնաց,
Արմատ կը կրծենք, չենք ուզեր ձեր հաց.
Անօթի, ծարաւ՝ բանի կարօտ չենք.
Լոկ միայն, Հայե՛ր, գէնքի կարօտ ենք:

Մեր սուրբ Մըրըբէն եղնի մեզ վկայ,
Աշխարհ քըն գմըզի կտրին մարդ չկայ.
Շէյխ մեր առջեւէն փախնի քըն գկատու,
Ամօք չէ՞ մնանք թիւրքին հարկատու:

Ձեզմէ չընի ուզի ոսկի, ո՛չ արծաթ,
Տուէ՛ք մեզ, Հայե՛ր, մէկ-մէկ ծակ երկաթ.
Հանդէ կը կայնենի ու առաջ վազենի,
Միայն, աղբըրտի՛ք, տուէ՛ք մեզի գէնի:

Երգը հազիւ վերջացած, ժողովականները երբ կրկին ուրախութեամբ պատերազմելու մասին կը խօսէին գուժկանը ներս մըտնելով.

— Հաւա՛ր է՛, հէ՛յ, հաւա՛ր է, Բըքրանցիք Գրգոյի տան ոչխարները տարան:

Գէորգ այս խօսքերը լսելով, զէնքը կ'առնէ ու դուրս կը վազէ. անոր կը հետեւին ուրիշներ եւս:

Մուրատ ժողովականներուն դառնալով կ'ըսէ.

— Կը տեսնենք, թշնամին այլեւս միջոց չի տար երկար մտածելու, բայց հոգ չէ. մենք մտածենք վաղուան մեր ընելիքի մասին:

Խորհրդակցութենէն ետք, Մուրատ կրկին դիմելով ժողովուրդին.

— Եղբայրնե՛ր, արշալոյսը բացուելու մօտ է արդէն, վաղուան մասին ինչ որ հարկաւոր է, մենք ժողովականներու հետ մտածած վերջացուցած ենք: Այժմ ձեզ կը մնայ երթալ ու քիչ մը հանդրստանալ որպէսզի վաղը իրիկուան կազմ ու պատրաստ ըլլաք:

Ժողովուրդը դեռ նոր ցրուած, հայ լրագրերը ներս կը մտնէ ու խօսքը Մուրատին ուղղելով.

— Թրքական զօրքը հետզհետէ կը հեռանայ իր բանակատեղիէն ու կը բաժնուի մասերու: Բըքրանցի Շէյխը քիչ առաջ Օսմանեան բանակէն վերադարձաւ իր տեղը, Քիւրտերուն մօտ:

Մուրատ քիչ մը մտածելէ յետոյ ժողովականներուն կ'ըսէ.

— Կը տեսնուի, թէ մեր ծրագրածը բոլորովին պիտի փոխուի: Անիծեալ Քիւրտերը մարդ զրկեցին եղելութիւնը զօրքին յայտնելու: Ինձ կը թուի, թէ մենք պէտք է պատրաստուինք գետին միւս կողմը, դէպի Ալիանք անցնելով, ուր անտառոտ ու քարքարոտ է, միջոց կ'ըլլայ մեզի դիրք բռնել եւ երկար պաշտպանուիլ ու դիմանալ...:

Երբ լուռ ու մունջ մտիկ կ'ընէին Մուրատի խօսքերը եւ մէկը դիմելով, միւսը խօսքով հաւանութիւն կու տային, յանկարծ ներս կը մտնէ ուրիշ գուժկան մը յարելով.

— Հաւար է՛, հէ՛յ, հաւար է՛, քիւրտեր Բըքրանցիք եւ Բատրքցիք հեղեղի նման լեցուեցան Շէնիկի եւ Սեմալի գոմերը եւ կըրակի տուին անոնց ցորենի ու դարիի բարտերը:

Սոյն անսպասելի լուրը ալ աւելի կը ցնցէ ներկաները եւ ամէնքը միասին կը գոչեն.

— Զէ՛նք, զէ՛նք, հըսէ՛ք, հէյ հըսէ՛ք օգնութեան:

Մուրատ դառնալով ժողովականներուն, կ'ըսէ իր վերջին խօսքը.

— Ես կ'երթամ. իսկ դո՛ւք, Տէ՛ր Գարրիէլ, Տէ՛ր Քաջ, Պետո, Աւօ, Ըրքօ, Մըրտօ, հաւաքեցէ՛ք ժողովուրդը եւ շուտով անցէք Ալիանք: Իսկ դո՛ւք, Տէ՛ր Յովհաննէս, Դաւօ, Մոսէ, վազեցէ՛ք Սեմալ, հաւաքեցէ՛ք ձերինները եւ միացէ՛ք անոնց շուտով, որքան որ կարելի է: Մենք ալ մեր խումբերով, տակաւին չլուսցած, ձեզի հետ կ'ըլլանք:

Կռուողները կը ցրուին...:

**

Սասունի քաջ ժողովուրդը առաջին անգամը չէր որ բռնութեան դէմ դուրս պիտի բարձրացնէր, այլ ան 80-ական թուականներէն սկսած արդէն իսկ տեսակ մը պատերազմական դրութեան մէջ էր: 1891-ին, երբ թրքական պետութիւնը այս բուռ մը քաջերուն դէմ 2000-էն աւելի զօրք ու թնդանօթներ ղրկեց, բայց կոտորածով ու խայտառակութեամբ հարկադրուեցաւ ետ փախչիլ:

Այդ շարունակական կռիւներուն միակ պատճառը անոնց վրայ դրուած ծանրածանր տուրքերն էին: Պետութիւնը կ'ուզէր կիսանկախ, խրոխտ ու լեռնական Սասունի զաւակներուն վիզը հարկերու ծանր լուծի տակ մտցնել եւ այդպիսով ենթարկել իրեն: Մինչդեռ այդ բուռ մը կտրիճները սորված չէին դարերէ ի վեր հարկ վճարել: Որով աշխատած էին ամէն կերպով քաջաբար դիմադրել:

Նոյն ամառը, Յուլիսի սկիզբները պետութիւնը մարդ կը ղրկէ եւ հարկ կ'ուզէ քաջ տալո՞րիկցիներէն, որոնք բացէ ի բաց կը մերժեն: Այս մերժումի հետեւանքով, տեղւոյն նահանգապետը 300-ի չափ զօրք եւ խումբ մըն ալ Քիւրտեր կը հանէ Սասունցիներուն դէմ: Անոնք չկարենալով դիմանալ, կը ստիպուին ցրուիլ:

Նահանգապետը սակայն չի յուսահատիր եւ կը դիմէ հնարքներու՝ յաջողելու համար: Ուստի խումբ մը մարդիկ կը ղրկէ շինելու համար Սատանայի Կամուրջը, որ դէպի Սասուն առաջնորդող միակ ճամբան է: Ասով մարդիկ կրնային դիւրութեամբ մտնել Սասնոյ սիրտը:

1891-ի ապստամբութեան ատենը Սասունցիք քանդեր էին այս Սատանայի Կամուրջը:

Եւ ահա Սասունցիք հասկնալով այժմ նենգամիտ նահանգապետին նպատակը, անմիջապէս կը յարձակին կամուրջ շինողներուն վրայ: Թիւրքեր օգնութեան կու գան ու կռիւը կը սաստկանայ:

Սասունցիները 10 թիւրք սպաննելէ ետք, շինուածն ալ քանդելով լեռը կը բարձրանան:

Այս անգամ նահանգապետը կը դիմէ յետին նպատակներու, մարդ կը ղրկէ ու հաշտութիւն կ'առաջարկէ: Կը խոստանայ հարկերէ ազատ կացուցանել: Միամիտ Սասունցիները կը խաբուին եւ լեռներէն վար կ'իջնեն: Ասոր հակառակ այդ անամօթ թիւրքերը պատե-



Տալուրիկի Սատանի կամուրջը

րազմական ամէն ազնուութեան դէմ երթալով՝ վայրկեանապէս կը ձերբակալեն գիւղին գլխաւորները, կը կոտորեն զանոնք, գիւղը կ'աւարեն, գործադրելով ամէն տեսակ անդթութիւն: Մնացեալ սասունցիները ասիկա տեսնելով, կը զգուշանան ու կրկին կ'ամրանան իրենց լեռները:

Կառավարութիւնը անմիջապէս հարկահաւաքներ կ'ուղարկէ դէպի Կելիեկուզան, Իշխնձոր, Աղբիկ, Շէնիկ, Սեմալ եւ այլ գիւղեր, փորձելու համար, թէ պիտի վճարե՞ն իրենց տուրքերը թէ ոչ: Սասունցիները մէկ մարդու պէս կը մերժեն տուրք վճարելը, որուն վրայ Փսուրի տեղապահ կառավարիչը (գայմագամ), 37 ոստիկաններով ու քիւրտ հեծեալներով, կը ձերբակալէ Խուլիի եւ Խիանքի մեծամեծները, ապա կ'անցնի Իշխնձոր, կը բռնէ 4—5 հոգի եւ կը պահանջէ անոնցմէ Տալուրիկցի Գասպարը, Փսուրի գիւղի Խաչոն, Կելիեկուզանցի Կերոն՝ Պետոյի տունէն, եւ Շէնիկցի Տէր Գրգոն: Սասունցիք ո՛չ միայն կը մերժեն յանձնել յիշեալ անձերը, այլ եւ Իշխնձորի մէջ

յարձակելով կառավարիչին վրայ, կը սպանենն ոստիկաններն ու 12 Բիւրտերը, միւսները կը փախչին :

Քանի մը տարի Սասունցի Հայոց քիւրտ աշիրէթներուն դէմ ցոյց տուած թշնամական վարմունքը յաճախակի կռիւներու պատճառ կը դառնայ : Նամանաւանդ Տալուորիկի նախորդ տարուան կռիւները, որոնք հարիւրաւոր քիւրտերու մահուան պատճառ եղեր էին, շրջանի այլապէս ցեղերը կատղեցուցած էին եւ անոնք պատեհ առիթի մը կը սպասէին իրենց վրէժը լուծելու :

Տալուորիկի շրջանի բոլոր երեւելիներն ու դիւղերը գտնուող Փետայիները, կազմ ու պատրաստ վիճակի մէջ, կ'որոշեն ամէն զնով դիմել ինքնապաշտպանութեան : Ասոր համար խումբեր կը կազմուին, որպէսզի իւրաքանչիւր դիւղ պաշտպանէ իր դիրքերը եւ յետոյ դիւղերները պահակ կենան նաեւ այն տեղերը՝ ուրկէ կրնար թշնամին անցնիլ : Այսպիսով Տալուորիկ կ'ունենայ իր դիւղերային պահակները :


Պօսքը տանք Մկրտիչ Աւագ Քահանայ Մուրատեանին :

«1894 թուականին Յուլիսի վերջերն էր, երբ ժողովուրդը, Ստեփան վարդապետ Պաղտասարեանի եւ Հազմանց յայտնի հերոս Ղազար Տէր Գաբրիէլեանի հետ կը մեկնին Մատին Առաքելոց վանքէն՝ Տալուորիկի դժով՝ Մշոյ Ս. Կարապետի վանքը երթալու համար : Մենք ստիպուած էինք օտքով քալել, որովհետեւ ճամբաները այնքան լեռնային են, որ ձիով ճամբորդելը բնաւ կարելի չէր. մանաւանդ Իշու կոչուած նեղ անցքը : Այս անցքը Տալուորիկի հարաւարեւմտեան միակ դուռն է, որով կռիւներու ժամանակ շատ անգամ մէկ կամ երկու հրացանով հազարաւոր թշնամիներուն մուտքը կարելի եղած է արգիլել ի Տալուորիկ :

«Իշուէն վերջը կու գայ Սատանի կամուրջը, ուր մենք կը հասնինք ճիշդ ժամը 2.30-ին, երբ արդէն մութը կոխած էր եւ դիւղերուան մեռելային լուսթեանէն մարդ կը սարսափէր լսելով սրընթաց դետին գոչիւնը եւ հինաւուրց կաղամախիներու սօսափիւնը : Հազիւ թէ կամուրջը անցած էինք, երբ յանկարծ սուլելու ձայն մը լսուեցաւ, որ կրկնեց եւ երեքնեց խորհրդաւոր շեշտով մը : Քիչ մը յետոյ մօտաւորապէս քարակոյտի մը ետեւէն մարդու գլուխներ տեսնուեցան : Հայ յեղափոխականներն էին, որոնք հերթով կամուրջէն անց ու դարձին հսկելու համար հոն կը սպասէին. ազդանշանով մը մեր ո'վ ըլլալը հասկնալով մեր քով վազեցին :

«Ատոնց մէջ կը գտնուէր նաեւ Գէորգ Զաւուչը, Բսանաց դաւառի այդ չքնաղ հերոսը՝ որ անմիջապէս Ստեփան վարդապետին վիզէն փաթթուելով սկսաւ համբուրել : Գէորգ Զաւուչը՝ իր ընկերները հոն ձգելով՝ ինքը ընկերացաւ մեզի Փուրխ ելլելու համար :

«Կէս ժամէն հասանք Փուրխ, մեծահամբաւ Փուրխոյ Գասպարին դիւղը, զոր իր անառիկ դիրքին ու քաջարի բնակչութեան համար Բիւրտերը անուանած են Գալայէ Տալուորիկէ՝ Տալուորիկի բերդը :



ՄԿՐՏԻՉ Ա.Ի.Ա.Գ. ՔԱՀԱՆԱՅ ՄՈՒՐԱՏԵԱՆ

Գիւղին բոլոր հոյակապ դռները նախորդ տարուան դէպքին առթիւ արդէն մոխրացած՝ տակաւին վերաշինուած չէին :

«Մենք իջեւանեցանք քարայրի մը մէջ, ուր Գաբրիէլ հերոս քահանան կը բնակէր իր համեստ ընտանիքով : Հոն հետզհետէ հասան աւելի քան վաթսուն հայ զինուած Ֆետայիներ, որոնք հրաւիրուած

էին Գաբրիէլ հօր կողմէ վաղուան օրակարգի վրայ լուրջ խորհրդակցութիւններ կատարելու եւ անմիջական կերպով գործի սկսելու համար: Վաղուան օրակարգը՝ որքան կը յիշեմ, Բագրանցի քիւրտ աշիրէթին Չոզան երթալ գալու առիթով իրենց ճամբու վրայ բողոքն էր, որ կու դար Բասնայ գաւառի ճնշուած եւ հարստահարուած հայ դիւղացիներէն՝ դարման մը գտնելու խնդրանքով:

«Քարայրը մեծ ու ընդարձակ էր: Անոր ճիշդ մէջտեղը կը ցցուէր ինքնաբոյս քարակոյտ մը սիւնի ձեւով: Վերջինիս վրայ դըրուած էր հողէ ճրագ մը, որ հազիւ կը պլպլար իր մարմրուն լոյսովը: Իսկ հրաւիրեալ հայդուկները կը կանգնէին քարայրի պատերուն երկայնքով երկու կարգի վրայ, իւրաքանչիւրը իր զէնքը գրկած՝ կայմ ու պատրաստ, որ կարծես թէ հրամանի կը սպասէին:

«Ընդհանուր լռութիւն մը կը տիրէր ժողովասրահին մէջ, երբ նախագահ Գաբրիէլ Քահանան իր պարթեւական հասակովը ոտքի ելաւ եւ արտասանեց հետեւեալը.

«Սիրելի՛ զինուորներս, մենք որ ազգին ու հայրենիքին փրկութեան գործին համար զինուորներ ենք, պէտք է մեզի յանձնուած պարտականութիւնները անթերի կատարենք, որպէսզի դարերէ ի վեր տանջուած հայ ժողովուրդին ծով ցաւերը քիչ մը մեղմանան: Լաւ պէտք է ըմբռնենք, թէ յաջողութիւնը քանակին մէջ չէ, այլ՝ որակին: Հաւատացէ՛ք, որ եթէ մենք կանոնաւոր շարժինք՝ հրաշքներ պիտի գործենք այս լեռներուն վրայ: Մահէն չվախնանք, այլ յոյս դնենք զէնքերուն վրայ, որ դարուս աստուածն է: Մի՛ վհատիք, Փըռ-Փըռ քարի կորիւններս, փրկութեան աստղը ծագելու մօտ է եւ ազատութեան արշալոյսը բացուելու վրայ: Պարծանք է ինձ ըսել, թէ Տաւուորիկի սահմանները ապահով են: Սակայն Բասնայ գաւառէն հասած լուրերը շատ տխուր եւ յուսահատական են: Մանաւանդ Արխունդ, Բացի, Մկիթինք, Հաւկոնք, Թաթանք, Քիաթախ, Քրտամանք, Խլովիտ, Չանտուս եւ Հարկորք հայ դիւղերը, որոնք Բագրանցուց Ծովասարի լեռը Չոզան երթեւեկութեան ճամբուն վրայ կը գտնուին, այժմ ալան թալանի ենթարկուած են եւ մեզմէ օգնութիւն կը խրնդրեն: Անշուշտ մենք, իբրեւ բռնակալութեան դէմ մաքառող ուխտեալ զինուորներ, չենք կրնար անտես թողուլ անոնց դիմումը եւ ինչ գնով ալ ըլլայ պարտինք փութալ մեր ազգակիցներուն օգնութեան»:

«Նախագահ հօր այս հակիրճ հրահրող խօսքերուն վրայ՝ ժողովական առիւծները մռնչելով ցնցուեցան եւ իւրաքանչիւրը կը պնդէր, որ այն դիշերն իսկ յարձակում գործեն Չոզանէն վերադարձող բագրանցիներու մէկ մասին վրայ, որ տասը օրերէ ի վեր Քրտամանք եւ Չանտուսի մօտերը իջեւանած խեղճ հայ դիւղացիներուն ցանուած արտերն ու հանդերը կ'արածեցնէին իրենց հօտերուն ու նախիրներուն:

«Որոշումն ու գործադրութիւնը մէկ եղաւ: Գէորդ Չաւուչի



Տալուրիկի երկաթահանքերէն մաս մը,
 ուր մօտակայ Սասունցիները կ'երթային ամառը անցընելու :

նոյն պահուն տուած մէկ դադտնի հրահանգին համաձայն՝ խումբը
 ճամբայ ելաւ անհուն վրէժխնդրութեամբ լեցուած :

«Լուսին չկար, մութ դիշեր էր : Քաջարի խումբը՝ Ֆրո-Ֆրո-
 քարի առասպար փէշերէն մազլցելով՝ պիտի խոյանար դէպի Քրտա-
 մանց եւ Չանտուսի ձորը :

«Աստուած յաջողած էր հայ Ֆետայիներու առաջադրութիւնը :
 Առաջին պատեհութեամբ իսկ յաղթութիւն տարած էին մերոնք եւ
 քսան բազրանցի սպաննելով՝ խումբը անթիւ աւարով արշալոյսին
 դէմ ետ դարձաւ Փուրխ :

«Ստեփան վարդապետը եւ Գաբրիէլ քահանան՝ երկու Ֆետայի
 եկեղեցականները ուրախութեամբ համբուրեցին Գէորգ Չաւուշի ճա-
 կատը» :

Քրտամանց եւ Չանտուսի կռուէն ետք, Գէորգ կ'ուզէր անցնիլ
 Սխտորքարի գագաթը, ուր թաղուած էին 93-ի կռիւի միջոցին սպան-
 նուած թիւրք զօրքերը : Գէորգի նպատակն էր հանել անոնց աճիւննե-
 րը դերեզմաններէն ու ցիրուցան ընել, որպէսզի անոնց տեղը յայտ-
 նի իսկ չըլլայ :

Խումբը քանի մը օր մնալէ ետք, Փուրխէն կ'անցնի դէպի Վերին
 Տալուրիկ Հլոզիտի գիծով, Չուոօ Պետրոսի գիւղը : Այս գիւղը կը

գտնուի կազա կապլորիկի ստորոտը, ծառախիտ հովիտի մը մէջ: Ան բնական շա՛տ աղուոր տեսարաններով օժտուած՝ հարսի մը նման կանգ կ'առնէ իր շուրջ տարածուող Հազմանք, Կտանք, Քորոխի եւ Դաւաշնք գիւղակներով, որոնք իբրեւ հարսնեքոյրեր իրարու երես կը նային քառաթեւ խաչի մը նման: Սոյն գիւղերը կը կազմեն Վերին Տալուորիկը, որուն ներկայացուցիչն էր Զուռօ Պետրոսը, որ ունէր սեփական երկաթագործարան մը, զոր պետութիւնը զլացած էր հաստատել: Ինքը Տալուորիկի հարուստ երկաթի հանքերէն մին շահագործելով կը ձուլէր բահ ու քրիչ, խոփ, խաչերկաթ եւ «ուլուսի» կոչուած տեղական հրացաններ, զորս հետզհետէ կը կատարելագործէր:

Գէորգ Զաւուչ ամէն անգամ որ Տալուորիկէն անցնէր, կը մնար Զուռօ Պետրոսի տունը: Այս անգամ քիչ մը աւելի կը մնայ ու իր շուրջ կը հաւաքէ Տալուորիկի զանազան գիւղերէն երիտասարդներ:

Իրիկուն մը այդ երիտասարդները գինելով բահով ու բրիչով, կ'առաջնորդէ զանոնք դէպի Սխտորքար սարը:

Պումբը երբ կը հասնի Սխտորքար ըստուած յերան գագաթը, իր աչքին կը պարզուին ամբողջ Տալուորիկը, Խիանք եւ Խուլբի ընդարձակ դաշտերը, ինչպէս նաեւ Մարաթուկը, Անտոքը, Ծովասարը ու Սարէ Սիւթէն իրենց ձիւնապատ գագաթներով:

1893 թուին Օսմանեան չորրորդ զօրաբանակի հրամանատար Զէքի փաշան Սխտորքարի կատարէն ուժբակոծել տուած էր Տալուորիկի հայ գիւղերը, երբ Համիտեան «Գահիրը թէտմիր»ի հրահանգը ստացած էր կեդրոնէն:

Այդտեղ դեռ կը տեսնուէին վրաններու հետքեր ու գերեզմաններու հողակոյտեր, որոնք մեռած թիւրք զինուորներու գերեզմաններն էին:

Սասունցի երիտասարդներուն վրէժխնդրութիւնն ու հայրենասիրական տաք զգացումները թոյլ չեն տար, որ թիւրքերուն դիակները թաղուած մնան իրենց հայրենիքի կոյս հողին տակ, ատոր համար սովալլուկ բորենիներու պէս բահով, բրիչով, նոյնիսկ ճանկըտելով կը փորեն ու դուրս կը բերեն կիսովին փտած անոնց մեռելուտին ու Սխտորքարի ամենէն բարձր կէտէն կը գլորեն դէպի վար...:

Երեկոյեան Գէորգ իր խումբին հետ ճամբայ կ'ելլէ դէպի Կելիեկուզան, որ Անտոքի ստորոտը մեծաչէն գիւղ մըն էր եւ որ սակայն նախորդ տարուան դէպքին հետեւանքով քարուքանդ եղած էր. կանգուն կը մնար միայն եկեղեցւոյ հոյակապ շէնքը:

Գէորգ անկէ կ'անցնի Տալուորիկ:

Նահանգապետը, տեսնելով իր գօրքերուն ու հետեւող Քիւրտերուն պարտութիւնը, եւ ասիկա անգօրբութիւն համարելով իրեն, ամբողջ Սասունը պաշտօնապէս ապստամբած կը համարէ: Առ այդ կը դիմէ Բաղէչի, Էրզրումի եւ այլ կուսակալութեանց, որ անմիջապէս զօրք ուղարկեն Սասուն: Յետոյ կ'իմացնէ նաեւ, թէ Սասունի մէջ օ-

տարականները կան, որոնք կ'աշխատին ժողովուրդը պրզուել ընդդէմ կառավարութեան եւ արտասահմանէն դէնքեր կը փոխադրեն հոն: Եւ արդէն Անտոքի Սարը ունի հայ հրոսակային խումբ մը, որ տեւական յարձակումներով սարսափ կ'ազդէ շրջակայ Քիւրտերուն վրայ:

Բաղէշի կուսակալի տուած որոշումով, նահանգապետը հոն կը մեկնի ներկայ ըլլալու Բաղէշ գումարուելիք ժողովին: Հոն կը փութան նաեւ Բազարանցիներու, Ռըշկոտանցիներու, Խարըկանցիներու, Փէնջարիի, Ծովասարի վրայ բնակող Խարզանցիներու, Բշերէկի մեծ աշիրէթապետը, Բէլիկցիներու պետերը, Խոյթի, Բոնալիի բոլոր իշխանները, Մոտկանցի, Խնդանցի զլխաւորները, Բաղկանցի եւ Սլիվանի բոլոր ցեղապետները եւ հիւսիսային բերդերու Համիտիէ հեծելազունդի Բէհմէդտին փաշան, որոնք կու գան այն եզրակացութեան, թէ Սասուն իր անառիկ դիրքով, անմատչելի սարերով եւ քաջասիրտ ժողովուրդով մեծ վտանգ մըն է Օսմանեան պետութեան համար, եւ անոր ըմբոստ օրինակին կը հետեւին դրացի գաւառացիք: Ուրեմն անհրաժեշտ է, որ ապստամբութիւնը խեղդուի դեռ իր սաղմին մէջ եւ անմիջապէս, քանի դեռ անոնք բոլորովին անպատրաստ են: Կ'որոշուի, որ բոլոր քիւրտ ցեղերը անյապաղ հաւաքուին եւ ջորս կողմէն յարձակին Սասունի վրայ:

Աներեւակայելի արագութեամբ բոլոր շրջակայ կուսակալութեանց զօրքերը կը դիմեն դէպի Մուշ: Կը համախմբուին մօտ 7870 հետեւակ, 1000-ի չափ ձիաւոր եւ 150 թնդանօթներ. այս բոլորը կ'ուղեւորուին դէպի Սասուն: Ռուսական եւ պարսկական սահմանադրութիւն սկսեալ բոլոր ցեղախումբերը գունդագունդ կը դիմեն այնտեղ: Միայն Բուլանրիսի Հայտարանցիք 300 ձիաւորներով կու գան, որով կարելի է գաղափար մը կազմել այն ահեղ բազմութեան վրայ, որ մէկ անկնթարթի մէջ կը պաշարէ Սասնոյ բաւառը:

Սասունցիք, կազմ ու պատրաստ, կը հսկէին իրենց սահմաններուն: Անոնք կը տեսնեն փոթորկարբեր ամպերը, որ կը կուտակուին իրենց ազատ սարերուն վրայ:

Չորս կողմէ եկող լրաբերներ չափազանց սարսափազդու տեղեկութիւններ կը հասցնեն ժողովուրդի ականջին: Սասունցին անգիտակից չէր թշնամիի բազմութեան, բայց եւ այնպէս ուրախ սիրտով կը սպասէր այդ «մեծ որս»ին: Տակաւին հնձուած չէին արտերը, հետեւաբար մէկ օրուան իսկ պաշար չունէին եւ ո՛չ ալ վառօդի եւ դնդակի մեծ մթերք: Բոպիկ ոտքերով, մէյ մէկ շապիկ հագած, ապաւինելով իրենց անառիկ սարերուն, իրենց քաջ բազուկներուն եւ որոտացող շէշխանաներուն եւ երկսայրի նաջախներուն, անվախ կը սպասէին:

Թիւրքերու եւ Քիւրտերու թիւը օրէ օր կ'աւելնայ: Օսմանեան կառավարութենէն շուտով կը ստանան դէնք ու ռազմամթերք եւ իրենց ցեղապետներուն եւ շէշխերու մեծաւորին՝ Շէյխ Զիլանի առաջնորդութեամբ ու թիւրք բանակի 12300 զօրքի հետ, կը պատրաստ-

տուէին յարձակման : Իսկ Սասունցիներու ստոյգ թիւը յայտնի չէր , որովհետեւ կիներ եւ մանուկներ նոյնպէս կը կոուին :

Սասունցիներէն շէնք ունեցողներուն թիւն էր 304 հրացանաւորներ Տաւուրիկէն՝ իր զիւղերով միասին , 741 Ֆլիլի զիւղէն , 209 Շէնիկէն , 160 Սեմալէն , 180 Իշխնձորէն , 34 Հեթինքէն , 120 Աղթինէն եւ 208 Ալեանաք զիւղէն :

Թշնամին իր գերազանց ոյժերով կը պաշարէ Տաւուրիկը եւ կոուի ազդանշանն ալ կու տայ :

Սասունցի կորիւններ խիզախութեամբ կը կոուին , կարկուտի հեղեղի նման գնդակներ տեղացնելով անարգ թշնամին վրայ : Անոնք անակնկալի գալով , սարսափահար կը ձգեն իրենց գիրքերը եւ կը հեռանան Տաւուրիկէն : Մօտակայ թշնամին , երբ կը տեսնէ իր ընկերներուն այս նահանջը , ինք եւս կը լքէ ճակատը ու կը հետեւի անոնց :

Այս կոուին եւս Գէորգ ցոյց կուտայ իր քաջութիւնը :

Տաւուրիկի ժողովուրդը ցնծութեան մէջ էր , որովհետեւ կրցած էր իր նպատակին հասնիլ :

Միհրան Տամատեան սոյն կոուի մասին յարինած է գեղեցիկ երգ մը՝ նուիրուած Տաւուրիկցիներուն .

Տաւուրիկցի կարին եմ խորդ ,
Քաղցու պէս ՚եմ քույամորք
Սարի գաւակ , քարի որդի՝
Հին քաջ Հայոց եմ մնացորդ :

Տաւուրիկցի գաւակ եմ քաջ ,
Չեմ խոնարհիր թիւրքին առաջ .
Քարտա լերանց եմ ազատ լան՝
Չեմ տեսեր ո՛չ արօր , ո՛չ ման :

Հայ աղբըրտի՛ ցան աղբըրտի՛ ,
Տաւուրիկցի գաւակ եմ քաջ ,
Ազատութեան սիրոյն համար ,
Եկե՛ք դէպ ինչ յառա՛ջ , յառա՛ջ :

Երբ իմ աչեր բացի աշխարհ ,
Ազատ տեսայ մեր սաք ու քար
Մինչեւ փակեմ աչքս խաւար .
Պիտ՝ չի կոխէ հոս ոտք օտար :

Իմ մայր ծնաւ զիս սարերու ծոց ,
Ընկուզի կոնդ մ'եղաւ օրոց ,
Տըզլոզ ծընած՝ մեծգայ սըկլոզ .
Կեանքիս քաժինն է կոխ ու քոց :

ՉԱՅԻ ԿՌԻՒԸ

Չայի կռիւի մասին Գէորգ Չաուուշ կը գրէ .

«1894 Յուլիսի 30-ին կռիւը սկսաւ Սեմալի վերել, Չայ ըսուած տեղը: Առաւօտեան արշալոյսին հոն հաւաքուած էին Շէնիկի եւ Սեմալի գիւղերուն բնակիչները, կելիեկուզանի եւ Տաւրիկի օգնական խումբերը իրենց խմբապետներով, գիւղապետներով եւ քահանաներով»:

Այս կռուին ալ թշնամին պարտուեցաւ, ահա թէ ինչպէս:

Մեծն Մուրատ, Մօսէ Գրգոյի հետ, իրենց քաջերով գիւղերը փոքրիկ ընդհարում մը ունենայէ ետք Քիւրտերու հետ վերադարձան Ալիանք, հո՛ն պատրաստուելու մեծ կռուին:

Հեռաւորութեան վրայ կ'երեւար թշնամի բանակը, որ սեւամալի նման փռուած էր Սիմ լեռան ստորոտները:

Ժողովուրդը մորմորով կը դիտէր իրենց այրող գիւղերուն մուխն ու ծուխը եւ վրէժ կը մրմնջէր . . . :

Մուրատ իր շուրջը կը համախմբէ Շէնիկի, Սեմալի կռուող ոյժերը իրենց խմբապետներով: Երբոր բոլոր ոյժերը միացած էին եւ կռուելու կազմ ու պատրաստ վիճակի մէջ, անոնց ըսաւ .

— Ժամանակն է բանակը կարգի դնելու, թշնամին կամաց կամաց կը մօտենայ: Ուրեմն դո՛ւն Գրգօ, քու խումբովդ եւ Սեմալցիներով բռնէ աջ կողմը: Իսկ դուք՝ Աւօ, Պետօ, Սազօ, առէ՛ք կելիեցի եւ Ալիանցի ձեր քաջերը եւ խմբապետ Պօղոսի հետ միասին անցէ՛ք դէպի ձախ թեւը: Դո՛ւք ալ, Տէր Գարրիէլ եւ Տէր Քաջ, առէ՛ք Տաւրիկցի քաջերը եւ մեր Գէորգի ու Աղամի հետ կանգնեցէ՛ք մէջտեղ, սպասելով իմ կարգադրութիւններուն:

Խումբերուն անմիջական ետին կազմ ու պատրաստ կանգնած հայ կիներ ու աղջիկներ մատակարարի դէպք ստանձնած էին՝ հասցնելով ո՛չ միայն փամփուշտ ու վառօդ, այլեւ ուտելիք, խմելիք եւ դեղորայք:

Անվեհեր Սասունցուհիներուն մէջ աչքի կը զարնէին իրենց քաջութեամբ Ալիանցի Համսէն՝ 67 տարեկան, 7 մանչ զաւակներու մայր, Շաքէն՝ Գրգոյի հարսը եւ Մարգոն՝ Սեմալցի Գորգէի մայրը: Շաքէ կանգնած Մուրատի ետին՝ պատրաստ էր մինչեւ վերջ օգնելու անոր կռիւներու ընթացքին:

Այս կարգադրութիւններէն յետոյ Մուրատ երգել կու տայ «Մեր Հայրենիք»ը, որուն աւարտին առջեւ կու գայ ու յուզուած ձայնով կը յայտարարէ .

— Սիրելի՛ եղբայրներ, քաջ ընկերներ, այսօր մեզի համար տօնի եւ ուրախութեան օր է, որովհետեւ մենք կը կռուինք հայրենիքի

ազատութեան համար: Գուցէ մեզմէ շատեր իյնան այս կռուին մէջ ու մեռնին, բայց այդ մահը կ'ըլլայ մեր պարծանքը, մեր պսակը: Զվհատինք թշնամիի բազմութեան առաջ. ան անարդար է, շուտով կը տապալուի: Մեր կռնակը ցոյց չտանք թշնամիին, այլ ցոյց տանք, որ մենք արժանի զաւակներն ենք մեր քաջ նահապետներուն, հերոս Սասունցիներու:

Կեցցէ՛ Հայաստան, կեցցէ՛ Սասուն, կորչի՛ թիւրքը:

Փետայիները որոտընդոտ ձայնով կը կրկնեն.

— Կեցցէ՛ Հայաստան, կեցցէ՛ Սասուն, կորչի՛ թիւրքը:

Արեւը ծագած էր Ծիրնկատարի ու Ծովասարի լեռներուն ետեւէն ու իր արծաթափայլ շողիկներուն մէջ խամրեցուցած, անտեսանելի դարձուցած Շէնիկ ու Սեմալ դիւղերու աւերակ մոխրակոյտերը: Ահա՛ հայ յառաջապահ լրարներն շնչառազառ գալով կը դուժեն քիւրտ ու թիւրք միացեալ բանակի առաջխաղացումը:

Հայ խմբապետները իրենց հեռադիտակներով նայեցան՝ քննելով թշնամիի կողմը: Անոնք խառն ի խուռն գանազան մասերու բաժնուած՝ դանդաղօրէն կ'առաջանային, աւետելով, քանդելով ու հըրկիզելով ամէն ինչ որ պատահէր իրենց ճամբուն վրայ: Ակնյայտնի էր, որ Քիւրտերուն հետ կային նաեւ Օսմանեան բանակի կանոնաւոր զօրքեր:

«Թիւրք կառավարութիւնը միացած է քիւրտի հետ, այս պատերազմը տէրունական է, այս խմորը շատ ջուր կը վերցնէ, ինչ որ ըլլալու է թող ըլլայ», — լսուեցաւ Փետայիներու կողմէ:

Եւ անոնք սուրացին դէպի ոսոխի կողմը:

Քիւրտերը երեք մասի բաժնուած՝ իրենց ճերմակ, կանաչ ու կապոյտ գլուխներով, Սալաւաթ բերելով, կը յառաջանային: Իրենց Շէյխը, որ ձի նստած ազատ համարձակ կը մօտենար, Փետայիներու առաջին գնդակին զոհ կը դառնայ ու գետին կը գլորի:

Ճակատամարտը օրհասական էր: Երկուստեք կատաղօրէն կը կռուէին: Քիւրտերը թիւով աւելի ըլլալով, մարախի նման կը թափէին, նոյնիսկ զիրար տրորելով առաջ կու գային մոլեգնած ու կատաղած: Անոնք այնքան կը մօտենան, որ Սասունցիներու հին «չախմախլի» հրացանի հարուածները նոյնիսկ կը սկսին ազատօրէն հասնիլ թշնամիի շարքերուն: Բարեբախտաբար արեւը հետզհետէ կը թեքուէր դէպի հարաւ ու իր այրող ճառագայթները կը զարնէր ոսոխի ուղղակի ճակատին եւ աչքերուն: Ան ընկճուած էր ու չէր կրնար այլեւս մերձենալ:

Քաջ ու խիզախ Գրդոն աջէն եւ Ալիանցի Պօղոս իր կտրիճներով միւս կողմէն պաշարելով քիւրտերու գլխաւոր թեւը, կը սկսին կրակ տեղացնել անոնց վրայ:

Թշնամին կանգ կ'առնէ շուարած եւ ահաբեկ... Շատ չանցած կը սկսի նահանջը, որուն միջոցին Գրդոյի ձեռքով կը սպաննուի Բըքրանցի ցեղապետ Աւտալ աղան: Այդ ատեն կը լսուի անբնական ոտ-



ՄՈՒՐԱՏ ՊՈՅԱՃԵԱՆ
 ԵՆ Հնչակեան անմահ հերոսներ

նոց մը... : Թշնամին խելակորոյս, ցիր ու ցան եւ խառնիլուուն կը դիմէ փախուստի :

Սասունցիները այս յաջողութենէն կրկնապէս քաջայերուած, աւելի առաջ կ'երթան Թշնամին հալածելով մինչեւ գետին միւս կողմը :

Յաղթական ճակատամարտը կը տեւէ ընդամէնը 7 ժամ : Թշնամին կորուստը կ'ըլլայ շատ մեծ : Քիւրտ ու թիւրք դիակներով կը ծածկուին Ալիանքի լեռնահովիտներն ու ձորերը : Սասունցիներու ձեռքը կ'անցնին բաւականաչափ քանակութեամբ հրացան ու ռազմամթերք, որոնց մէջ կային բազմաթիւ արքունի հրացաններ :

Երեկոյեան, իրենց մեռելները ամփոփելէ ետք հողի տակ ու վիրաւորները իրենց հետ առած՝ խումբը կը քաշուի Մերկերի բարձրաւանդակը :

Այս կռիւը շատ ազդած էր հաւասարապէս թէ՛ քիւրտերուն եւ թէ թիւրքերուն վրայ, որոնք լուրեր տարածեցին մէկը միւսէն աւելի ոգեւորիչ :

Անոնք կռուի դաշտին վրայ 200 դիակներ ձգելով, իրենց փախուստի ճամբուն վրայ երբ Սիմ լերան ստորոտը կը հասնին, ուր հանգչած էր Օսմանեան կանոնաւոր բանակի զօրքը, կը թելադրեն որ շուտով ձգեն ու հեռանան այն տեղերէն, ազատուելու համար անհա-

ւատ հայերուն ձեռքէն : Ու իրենք ահ ու դողի մէջ կը շարունակեն իրենց ճանապարհը :

Ասկէ զատ, անոնք կը պատմեն նաեւ հայոց մասին արտաքոյ կարգի առասպելներ, թէ հոն եղողները բոլորն ալ «Մոսկովի կեաւուրներ» են, թէ մեծ-մեծ թնդանօթներ ունին, թէ անոնց մէջ կան կիկլոպանման մարդիկ, որոնք միայն մէկ աչք ունին իրենց ճակտի վրան, թէ անխոցելի են եւ մանաւանդ այնպիսի հրանօթներ ունին, որ մէկ ումք արձակած ժամանակ սար ու ձոր կը լուսաւորուի :

Սոսկումի այս լուրերը կայծակի արագութեամբ կը տարածուին Մուշ, Բաղէշ ու շրջակայ այլ քաղաքներ՝ յուզում յառաջացնելով : Շրջան կ'ընեն այլ լուրեր ալ, թէ կեաւուրները ամէն տեղ բանակներ ունին, եւ օղապարիկով բազմաթիւ ուսահայեր Սասուն իջած են եւ պիտի յարձակին քաղաքներուն վրայ, մէկ խօսքով՝ ընդհանուր ապստամբութիւն տեղի պիտի ունենայ :

Չայի կռիւէն քանի մը օր ետք, թիւրք զօրքը կը բռնէ Ռազմիկ լեռներուն ճամբան :

Կասկածոտ կառավարութիւնը կ'որոշէ Սասունի կործանումը : Բաղէշի կուսակալ Թահսին փաշան կ'անցնի արշաւանքին գլուխը եւ կ'երթայ դէպի Կելիեկուզան : Խալիլ փաշան կը քալէ Անտօքի վրայ : Զէքի փաշային կը յանձնուի Կելի մէկ մասը : Կատաղի կռիւը կը սկսի լեռներու լանջերուն ու ձորերու մէջ, Ֆրու-Ֆրու քարի մօտ :

Սասունի լեռնականները քաջարար կուրծք կու տան պետական կանոնաւոր զօրքին :

Անոնք եկած էին կոտորելու ինքնապաշտպան ժողովուրդը : Հերոսական մնաց Սասունցին, հերոսական նոյնիսկ անկման ու վրտանդի գերագոյն ըրպէներուն, երբ Գրգոն կռուի դաշտին մէջ, Շաքէն՝ իր ընկերուհիներով ժայռէն գահավէժ եւ ապաբախտ Սեմալցիները մարդկային սպանդանոցի մէջ իրենց կեանքը տուին իրենց սիրած ազատութեան համար . . . :

Սասնոյ բարձունքներուն Մուրատի, Գէորգի, Հրայրի, Գրգոյի եւ հայ քաջերու դող ձայնը կը տարածուի .

Իսլամական գոռ վաշտերը կատաղի

Պաշարել են մեր լեռները սոսկալի .

Մի՛ վհատիր քաջ Սասուն,

Քեզ համար չէ նորութիւն .

Մեր պապերից սովրել ենք

Մեռնիլ քաջամարտի պէս,

Զոր մեզ թողին յիշատակ :

Շէնիկ, Սեմալ պաշարուած են Թիւրքերով,

Տալարիկի անցքն է փակուել Քիւրտերով,

Զքեզ տեսնեմ, քա՛ջ Մուրատ,

Սուրդ շարժիր անվհատ,
Մեր հեռաւոր եղբայրներ
Չեն մնար միշտ անտարբեր,
Շուտով կու գան օգնութեան:

Թնդանօթի դէմ դրել եմք քաջ սրտով,
Սովի դիմադրել եմք կաթով, բանջարով,
Ի սէր Աստուծոյ, դժուար է
Հպատակիլ իսլամին.
Լա է մեռնիլ առանց հաց,
Քան յանձնուիլ վատ բիրտին
Անգութ եւ անաստուածին:

Հա՛յ ազջիկներ, առէ՛ք վառօդ եւ կապար,
Լցրէ՛ք դատարկ փամփուշտները շար առ շար.
Իսկ դո՛ւք, կանա՛յք անվհատ,
Առէ՛ք սուր եւ հրացան,
Խրախուսեցէ՛ք հայ քաջեր,
Ազատե՛նք մեր հայրենիք
Չեր կանացի արիւնով:

Օգոստոս 3-ին Սասունի շուրջ հաւաքուած թրքական բոլոր դօրամասերն ու քիւրտերը ընդհանուր յարձակումի կ'անցնին Միրնկատարէն մինչեւ Կրոննկի կէօլ, Մահրուբանքի կողմերէն Բոնաշէնի եւ Սուրէն ալ Շատախի դիւղերուն վրայ: Թշնանօթի ռումբեր կը տեղան անդադար:

Իսկ միւս կողմէ Բոզկանքի եւ Հազոյի ոյժերը կ'իջնեն դէպի Հեթինք եւ Աղբիկ: Սպիտակ Սարի կողմերէն ուժեղ յարձակում մը տեղի կ'ունենայ Տարուրիկցիներուն եւ Գեփին սարին վրայ ամբացած Իշխնձորցիներուն եւ Սիանքցիներուն վրայ: Թշնամին կը ջանայ խլել Գեփինը, Գարլորը եւ մտնել Մերկեր, բայց իր նպատակին չի հասնիր:

Սասունի ամենէն ընտիր Ֆետայիները բռնած էին Անտոքէն մինչեւ Կրոննկի կէօլ ուղին: Այս ճակատը կեդրոնացած էր նաեւ թշնամի ոյժերուն մեծ մասը, որոնք երկու կողմէն կը յառաջանային, մէկը՝ Սեմալի վրայով դէպի Չայ, իսկ միւսը՝ Կրոննկի կէօլ եւ Մերկեր, մինչեւ Ալիանք ու Բարբառի հովիտը:

Բորբոքուած Սասունցիք, առաջնորդութեամբ քաջն Գրգոյի, գերագոյն ճիւղով մը կը կոտրեն թշնամիի յարձակման թափը:

Օգոստոս 4-6 կռիւները կը շարունակուին յիշեալ գիծերուն վրայ: Ընդհանուր յոգնութիւն, ռազմամթերքի պակաս, պաշտպանութեան նկատումներ կը ստիպեն Սասունցիները լքել երկրորդ գիծը եւ քաշուիլ դէպի երրորդ պաշտպանողական գիծը:

Թշնամին տեսնելով ասիկա, առիթէն կ'օգտուի եւ անմիջապէս

կը գրաւէ դատարկուած դիրքերը, կը հրկիզէ հայկական գիւղերը: Սասունցիք լեռներու կատարներէն կը դիտեն իրենց օճախներուն հրդեհումը:

Օգոստոսի 8-ին թնդանօթները կ'որոտան ամէն կողմերէն ու գրոհը կը սկսի Անտոքի եւ Սպաղանքի վրայ: Սասունցիք նահանջի եւ փրկութեան ո՛չ մէկ ճամբայ ունին, կը կռուին յուսահատօրէն: Կը կռուին քարով, կը կռուին ատամներով՝ չիյնալու համար ոսոխին ձեռքը: Վերջ ի վերջոյ թշնամին կը նահանջէ հարիւրաւոր դիակներ թողելով:

Օգոստոսի 9-12-ին կռիւները կը մեղմանան թէեւ, բայց անօթութիւնը կ'ընկճէ զիրենք: Միտի եւ մանաւանդ հացի պակասէն շատեր կը նուազին ու կ'իյնան: Ուտելիքի պակասէն զատ, կը նեղուին նաեւ արճիճի ու վառօդի նուազութենէն:

Օգոստոս 13-ին թշնամին նոր ոյժերով կը յարձակի Անտոքի վրայ:

«Այդ կռիւը աւելի կատաղի կ'ըլլայ քան Օգոստոս 8-ի կռիւը: Ժայռերն ու քարերը ձեռքէ ձեռք կ'անցնին ու արիւնով կը ներկուին Սասունցիք ինքնամոռացութեան մէջ պարով ու երգով սիրտ կու տան իրարու: Մահը չէ կարծես, որ իրենց կը սպասէ, այլ հարսանիքը: Գրգոն ու Գէորգը, Կարապետն ու Ադամը հրաշքներ կը գործեն եւ անտառի նման շարժուող թշնամիին գրոհը երեկոյեան դէմ կը կասեցնեն յետ չպրտելով զայն:

Թէեւ յաղթական՝ Սասունցիք ուրախանալու պատճառ չունին: Անոնք կորսնցուցած են 200-է աւելի լաւ կռուողներ եւ չունին այլեւս ռազմամթերքի պաշար: Ճիշդ է, թշնամին քանի մը անգամ աւելի շատ դիակներ է թողուցած հայկական դիրքերու մէջ, բայց ի՞նչ օգուտ, երբ նորէն ու նորէն աւելի մեծ ռազմութիւններ կու գան ու կու գան: Սասունցիք յուսահատ են: Նոր կռիւ մը եւս, եւ անոնք այլեւս պիտի չկրնան դիմանալ:

Միւս բանակի մէջ եւս երկմտութիւնը ծայր կու տայ: Կառավարութիւնը յոյս չունի, որ պիտի կրնայ տիրանալ լեռներուն: Իսկ քիւրտերը մեծ կորուստներ ունեցած ըլլալով՝ կը սկսին կասկածիլ, թէ կառավարութիւնը չար դիտաւորութեամբ կոտորել կու տայ զիրենք: Անոնց մէջ կը սաստկանան ամէն տեսակի դժգոհութիւններ եւ շատերը կ'ուզեն տուն վերադառնալ»(1):

Սուլթան Ապտիւլ Համիտը օրը օրին տեղեակ կը պահուի Սասունի կռիւներու ընթացքին մասին:

Զէքի փաշա, փրկելու համար իր պատիւը, հրամանատարներուն հետ ժողով մը կը գումարէ՝ ռազմական կացութեան մասին խորհրդակցելու: Ժողովը նկատի ունենալով կացութեան լրջութիւնը՝

(1) Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», Գ. հատոր, էջ 114-115:



SLAUGHTER OF ARMENIANS AT SASSUN. This is a fair illustration of the slaughter of innocents that the bloody Kurds and infuriated soldiers have visited upon the unarmed and unoffending Armenians, resulting in the murder of some 50,000 or more, and through pillage and fire rendering homeless and destitute hundreds of thousands.

Արիւնախումբ Գիւրտեր կը կոտորեն Սասունցի անգէն ժողովուրդը

նը, կ'որոշէ դիմել սովորական նենգ միջոցի մը՝ հայերուն հաշտութեան առաջարկ ներկայացնել, խոստանալով լի ու լի դոհացնել իրենց պահանջները եւ այսպիսով զանոնք թակարդը ձգել: Յաջորդօրն իսկ ճերմակ դրօշակ կը պարզուի ու պատգամաւոր մը հաշտութեան նամակը կը տանի հայ ռազմիկներու հրամանատարին:

Նամակաբերը, Դ. Զօրաբանակի սպաներէն մին, երբ կը ներկայացուի Մուրատին(1), զինուորական բարեւով մը կ'ողջունէ զայն ու կը յանձնէ հաշտութեան զլխաւոր պայմանները պարունակող նամակը եւ կը խնդրէ պատասխանը:

Մուրատ կը կարդայ նամակը: Պահ մը կը մտածէ եւ յետոյ կը բացատրէ իր ընկերներուն ու դառնալով հարիւրապետին.

— Իմ ալ ջերմ փափաքս է, որ հաշտութիւն ըլլայ, սակայն ես մինակս բան մը չեմ կրնար ընել: Ունիմ ընկերներ, որոնց կարծիքը եւս անհրաժեշտ է, — կ'ըսէ:

Մուրատ անմիջապէս նամակաբեր հազարապետը իր զինուորներուն յանձնելով, փութով ժողովի կը նստի իր ընկերներուն հետ:

Ժողովը դժբախտաբար երկու կարծիք կ'ունենայ: Մուրատ, Տէր Քաջ եւ Շէնիկի Ռէս Գրգոն համամիտ չեն գտնուիր հաշտութեան, այդ առաջարկը դաւադրութիւն մը նկատելով: Հետեւաբար, կռիւր շարունակելու կողմնակից կ'ըլլան անոնք: Մնացեալները ան-

(1) «Մեծն Մուրատ», էջ 38:

հրաժեշտ կը նկատեն հաշտութիւնը, առաւելապէս ո՛չ թէ անոր համար, որ լիովին վստահութիւն ունէին, ո՛չ. այլ որովհետեւ դուրսի հայութենէն օգնութեան յոյս չունենալէ զատ, իրենց ռազմամթերքի եւ ուտելիքի պակասը սուր կերպով զգալի դարձած էր:

Մուրատ կը խնդրէ, կ'աղերսէ, որ չիյնան նպատակաւոր կերպով լարուած թակարդին մէջ:

— Ծուղակ մըն է այս, ծուղակ մը, սիրելիներ, — կ'ըսէ Մուրատ: — Ես յաճախակի հանդիպած եմ թիւրք պաշտօնեաներու, որ երբ կը համոզուին, թէ իրենց հակառակորդը զօրաւոր է, զայն յաղթելու համար կը դիմեն նենգամիտ միջոցներու, այն է՝ հաշտութեան դրօշ պարզել, որպէսզի այդպիսով ձգեն թակարդը եւ անոր մորթը քերթեն: Դուք չէք ճանչնար Համիտի ձագերը...:

Կը խօսին Տէր Քաջ եւ Ռէս Գրդոն. —

— Ազնիւ ընկերներ՝, մտիկ ընենք Մուրատին եւ հետեւինք անոր խորհուրդին, հաւատք չընծայենք այդ շուներուն...:

Այդ օրը համաձայնութիւն չի կայանար: Հետեւեալ օրը, Օգոստոս 15-ին, կուսակալը ինքը կու գայ ձիաւորներով եւ կը պահանջէ հաւատալ տրուած խոստումին ու անձնատուր ըլլալ:

Արշալոյսը դեռ նոր բացուած, Սասունի կտրիճներէն մօտ 180 հոգինոց զինեալ պատգամաւորութիւն մը, ճերմակ դրօշներ պարզած, կ'իջնէ Անտոքէն ու կ'առաջնորդուի դէպի Սեմալ:

Սասնոյ քաջերը թէեւ անակնկալի կու գան յարձակման ենթարկուելով, սակայն առանց յուսահատելու հերոսաբար կը կռուին: Թշնամիի շարքերէն հարիւրաւորներ գետին կը փռեն, բայց շատ չանցած իրենք ալ ամբողջութեամբ գնդակներու եւ սուրերու տակ կ'իյնան, արեան լիճին մէջ կը խեղդուին եւ մէկ հորի մէջ կը թաղուին:

Ձէքի եւ Մուսթաֆա փաշաները, զինովցած իրենց դաւի յաջողութենէն, կ'որոշեն լայն շունչ մը առնել եւ վերջին գրոհին հրամանը արձակել՝ մնացած Փետայիները եւս սպաննելու համար:

Բայց Սասունցին վերջնականապէս զէնքը վար դրած չէր եւ վրէժի բոցովը վառուած կը սպասէր, այլեւս առանց սոսկալու սովէն ու ռազմամթերքի սուր պակասէն:

Մուրատ, Գէորգ, Աղամ, Ռէս Գրդոն, Քոլոզ Յովհաննէս ամէն ջանք կը թափեն, որ թշնամին իր երկրորդ նպատակին չհասնի: Գրդոն կը յաջողի նոյնիսկ նոր ոգեւորութիւն ներշնչել արդէն յուսահատ կռուողներուն եւ նորէն կազմակերպել Անտոքի պաշտպանութիւնը:

Կռիւր կը շարունակուի օրեր ու գիշերներ: Թշնամին կրկին կը նահանջէ:

Սասունցի մարտիկներու փառաւոր յաղթանակը շմեցուցած էր Մուշի կառավարիչ Միւթեսարիֆ փաշան: Իսկ կատրած թիւրք խուժանը վրէժ կ'աղաղակէր: Հետեւաբար թիւրք բանակը դարձեալ կը շարժի ետ դէպի Սասուն, իր հետ բերելով նաեւ զինուած քիւրտեր:

Իշխնձորի գայմազամը Տալուրիկի գիւղացիներէն կը պահանջէ

Մուրաաի յանձնումը, ինչ որ կը մերժուի ըսելով. «Մեր մէջ այդպիսի անունով մէկը չկայ: Մենք ապստամբ չենք կառավարութեան դէմ: Եթէ դուք դիտէք, ահա՛ Տաւրիկը, կրնաք երթալ ու ձերբակալել»:

Ամէն անոնք, որ բռնի հանուած էին դայմագամի ներկայութեան ու խոչտանդուած, նոյն պատասխանները տուած էին:

Մուրատ(1), Ֆրո-Ֆրո քարի մէկ քարայրին մէջ, գիշերով անմիջական ժողով մը կը գումարէ Սեմալի խումբերու պետերուն հետ, ուր կ'որոշուի դիմել Տարօնի Հնչակեան վարչութեան, որպէսզի կոչ մը ուղղէ ընդհանուր հայութեան, որ Սասունը մինակ, անօգնական չթողու, շուտափոյթ օգնութեան հասնի:

Տարօնի Հնչակեան վարչութիւնը ընդառաջելով կը հրատարակէ կոչ մը, որուն մէջ կ'ըսէ.

«Սասուն եւ Տարօն՝ սաստիկ հալածանքներէ հարկադրուած պարզած են յեղափոխական կարմիր դրօշակն եւ միեւնոյն ժամանակ կոչ կ'ընեն ընդհանուր Հայութեան՝ մինակ չթողուլ իրենց հայ եղբայրները, ոտքի կանգնիլ ամէնուրեք եւ միեւնոյն ուժգնութեամբ կռուիլ թշնամւոյն դէմ, քանի որ ամէնուրեք միեւնոյն վիճակն ու հալածանքը կը տիրէ:

Թող չկարծեն մեր հայ եղբայրք թէ մենք ընդարձակ պատրաստութիւն, պաշար, դէնք, դրամ, ռազմամթերք ունինք ընդերկար դիմագրաւելու թշնամւոյն յարձակմանց, այլ յուսահատութիւնը, ծայրայեղ ճնշումը, լուռ ու մունջ կորսուելու տեղ՝ կռուելով մեռնելու պատրաստակամութիւնը մղեցին մեզ յոյս ու գործ»:

Սասունցի կանայք կը սկսին երգել հետեւեալ երգը.

Ծագէ՛ արշալոյս, ծագէ՛ արուսեակ,
Ծագէ՛ մեր վրայ, չըլիցի կորուստ.
Թիւրքն յարձակեցաւ քաղում գորֆերով,
Սասուն լեցուեցաւ լաց ու կոծերով:

Օգնեցէ՛ք մեզի, Արմենեա՛ն քաջեր,
Դիակներ լեցուեցան Սասունի դաշտեր,
Երբ օգնեն մեզի հօր ձեռքերը,
Շուտով կը յաղթենք վատթար թիւրքերը:

Ինչո՞ւ կը ննջես, իմ սիրուն գառնուկ,
Արեամբ կը լողան Սասունի մանկունք,
Հայրի՛կ քան, Հայրի՛կ, ինչո՞ւ գնացիր,
Սասունի դաշտեր արեամբ լեցուցիր:

(1) Տե՛ս «Մեծն Մուրատ», էջ 34:

Մատաղ մանկտի՛ք գոհ եղան գացին,
Անմեղ արիւնով ազգը փրկեցին.
Երկինք թող պատմէ անունց անունը,
Թող յաւերժ կեցցէ Պոյաճեանը:

Զէքի փաշան այս անգամ անձամբ կ'առաջնորդէ Տալուրիկի վրայ խուժող թիւրք եւ քիւրտ վոհմակները:

«Հնչակ»ի թղթակիցը կը դրէ.

Այս վերջին ճգնաժամին մէջ, Գրգոյի նորահաս կիներ՝ Շաքէն օրինակելի յաջողութեամբ ու զերբնական առաքինութեամբ, երբ աչքերը դարձնելով այս ու այն կողմը, կը տեսնէ թշնամիին անհամար բազմութիւնը, կը զղայ, որ այլեւս անհնար է ազատուիլ: Ան կը բարձրանայ քարաժայռի մը վրայ եւ իր միամեայ երախան կրծքին սեղմած կը կանչէ.

— Քոյրե՛րս, կռուինք հայրենիքը պաշտպանելու համար, իսկ եթէ չենք կրնար, պատուով մեռնինք, չիյնանք թիւրք աւազակաց պիղծ ձեռքը...:

Այսպէս պոռալով Շաքէ իր քոյրերուն, որոնք քարերով իսկ կը կռուէին ժայռերու ետեւէն, ինքզինքը կը նետէ խոր անգունդը երախան կուրծքին: Շատեր կը հետեւին անոր, թիւրքերուն ճանկը չիյնալու համար:

Իսկ ծերունի Համսէն, միւս կողմէ միշտ խրախուսելով հայ կիները, կ'ըսէր.

— Քոյրե՛ր, կռուինք քաջի նման, վատութեամբ չաղարտենք Սասունցոց անունը:

Այդ օրերուն «Հնչակ» Հոկտեմբերի թիւերէն մէկուն մէջ կը դրէ հետեւեալը.

«Սասուն կրակի մէջ է. թնդանօթները կ'որոտան: Հայեր, Մուրատի առաջնորդութեամբ առիւծանման կը կռուին ու ինկող երիտասարդները կը փոխարինեն կանայք»:

Նորանոր զինուորներով ստուարացած Զէքի փաշայի(1) զօրագունդերը, որոնց խոստացուած է հարիւրաւոր ոսկիներ ապստամբապետ Մուրատը ողջ բռնելու պարագային, կատաղի մոլեռանդութեամբ կը քանդեն ամէն ինչ:

Մոխրակոյտերու կը վերածուին Շէնիկ, Սեմալ, Ալիանք, Կելիեկուզան եւ այլ գիւղեր:

Սասունցի կտրիճներու կողքին կ'երեւին եւ տարեցները:

Բայց, աւա՛ղ, սպառած էր անոնց ռազմամթերքը եւ սովը իր ճիրաններով չոքած էր անոնց վզին եւ ուժգնօրէն կը պրկէր:

(1) «Մեծն Մուրատ», էջ 41-42:



Սասունցի ՇԱՔԻՆ

Սասունցին դարձած էր թեւերը կոտրած արծիւ, անկարող ալլեւս ճախրելու :

Արտաքին հայ աշխարհէն օգնութեան որեւէ յոյս չքացած էր բոլորովին :

Միւշիւր Ձէքի փաշայի դօրքերը թիւրք եւ քիւրտ անկանոն խուժանը իրենց վայրագ կիրքերը յագեցնելու համար կը սկսին իրարու հետ մրցիլ մագլցելով Սասունի բարձունքը, երբ յայտնի կ'ըլլայ, որ Սասունցին զէնքը վար դրած է :

Մուրատի համար անհնարին կը դառնայ կռիւը շարունակել, հետեւաբար իր փոքրացած խումբով կ'ապաստանի մօտակայ քարայր մը, ուր դժբախտաբար զինուորներէն նշմարուելով կը հետապնդուի :

Խօսքը տանք Գէորդ Չաւուշին .

«Բայց թշնամուն հետ մեր կռիւները չդադրեցան երբեք. կռիւ

Չայ, կռիւ Անտոք, նորէն կռիւներ Կայի գիւղի մէջ: Չորրորդ կռիւէն վերջն էր, որ վառուաւ Կելիեկուզան գիւղ: Շէնիկ ու Սեմալ եւ ուրիշ գիւղեր արդէն վնասուած էին, ժողովուրդը այլեւս դիմադրելու անկարող էր, չկար որեւէ օգնութիւն, չկար ռազմական ոյժ, մենք ալ քիչուոր էինք:

«Պեղճ ժողովուրդը սկսած էր ցրուիլ արդէն. Օսմանցի զօրքեր, որոնք այնքան բազմաթիւ էին, սկսած էին իրենց աւերը գործել. անոնց միացած էին նաեւ քիւրտ աշիրաթներ, որոնք եւս կը կոտորէին մեր ժողովուրդը: Մենք ալ հարկադրուած թողինք այդ տեղերը եւ դացինք Տալուրիկ, Պրն. Մուրատի քով, բայց հազիւ հասած, հոն ալ կոտորածն սկսեց: Մուրատն ալ մեզ հետ, ամբողջ օր մը կռիւ ունեցանք Հրանուտ: Քիւրտ աշիրաթներ այդ տեղի հարուստ մի քանի գերդաստաններու վրայ յարձակուան, իսկոյն օգնութեան հասանք եւ ցրուեցինք զթշնամին:

«Հոն մնացինք 3-4 օր. իմացանք, որ Տալուրիկէն 11 հոգի ձերբակալուած են, Կտորնու մոլլային միջոցով: Չդացինք որ մենք ալ պիտի մատնուինք, առաջարկեցինք Պրն. Մուրատին եւ Գասպարին, որ շուտով հեռանանք այդ կողմերէն, բայց ի՛նչ օգուտ, որ մեր ձայն անլսելի մնաց: Կարճ ժամանակ ալ մնացինք Տալուրիկի շրջանակներ եւ մէկ օր ալ կանուխ, արշալոյսին ատեններ դացինք մտանք մէկ քարայրի մէջ, բայց հազիւ թէ 3-4 ժամ մնացինք հոն, մատնուած էինք արդէն: Թիւրք զինուորներ եւ քիւրտ աշիրաթներ լեռ ու ձոր լեցուած էին, ամէն տեղ քիւրտեր ու թիւրքեր իրարու կը կանչէին. «Հոս է Մուրատ էֆէնտին իր ընկերներով» եւ ահա՛ ամէն կողմէ կը հաւաքուէին:

«Առանց ժամանակ կորցնելու թշնամին զմեզ պաշարեց. սկսաւ կռիւ, մենք ներսէն, նրանք դուրսէն, ամբողջ 24 ժամ օդին մէջ գընդակներ կը խաղային, ամենէն վերջը թիւրքերու միրալայր (գնդապետ) վերէն ձայնեց. «Պէտք է անձնատուր ըլլաք. հրաման չկայ այլեւս սպաննելու»: Մենք չէինք գիտեր ի՛նչ պիտի ընենք, ամէնքով 6 ընկերներ էինք, բայց 5 հատ գիւղացի ծանօթներ ալ մեզի հետ էին: Մեր ուտելիք շատ քիչ էր, կողով մը խաղող եւ չանախ մըն ալ կորեկ ալիւր միայն ունէինք, ա՛լ ուրիշ ոչինչ: Թշնամին իր հետ բերած էր հոտ եւ քարիւղ, որպէսզի քարայրին առջեւ վառեն եւ մեզ մուխով ծուխով խեղդեն. բերած էին երկու հատ ալ թնդանօթ: Ճար ու ճանապարհ չկար մեզ համար, օգնութեան յոյս ալ չկար: Միրալայր շարունակ կը ձայնէր. «Անձնատուր, անձնատուր...»: Այն ատեն մեր մէջէն Գասպար ձայնեց, եւ ահա նրա ծանօթ Քիւրտերէն մէկը մօտեցաւ. Գասպար եւ քիւրտ բաւական երկար խօսեցան: Գասպար ըսաւ, թէ այս քարայրին մէջ օտար մարդ չկայ, ես եւ իմ գերդաստանն ենք. 1000 դրուշ և 2 հատ ալ ջորի կու տամ, եթէ քիւրտ աղաներ հեռանան աս տեղէն: Քիւրտը գնաց Գասպարի ըսածները հաղորդեց, ամէն ինչ անօգուտ դարձաւ, Քիւրտեր չընդունեցին Գասպարի առաջարկ:

Այն ատեն Գասպար 1000 դր. 2 ջորի և 4 տղամարդով գնաց յանձնուաւ Քիւրտերուն եւ ըսաւ. «Առէք ասոնք, սպաննեցէք զիս, կախեցէք, ինչ կ'ուզէք ըրէք, միայն զիմ գերդաստան ազատ թողէք»: Գերդաստանը մենք էինք, մեզ ազատելու համար ամէն բան ըրաւ. իր որդի Աւետիսն ալ կար, բայց ինչ օգուտ, որ ամէն բան անօգուտ անցաւ: Այն ատեն Գասպար մեզի գալով ըսաւ. «Դուք զիտէք, տղա՛ք, ա՛լ իմ ձեռք բան չմնաց ընելու, 4 հոգի յանձնեցի, ահա ես ալ կը յանձնուիմ»: Բոլորովին ճարահատ, մենք ալ յանձնուանք:

«Երբ զօրքերուն մէջ մտանք, սարսափելի յարձակուան մեր վրայ. զմեզ կողոպտեցին, մեր վրայէն ամէն բան առին. միրալայ, քոլազասի, պինպաշի աչքեր շարունակ մեր վրայ տնկեր էին: Մեզ բոլորովին կողոպտելէ ետք, Քիւրտ մը հրացանի կոթով ոյժով զարկաւ Մուրատի գլխուն եւ զայն ուշաթափ ըրաւ: Քիչ վերջ երբ Մուրատ զարթնեցաւ, Քիւրտեր զմեզ կապեցին եւ ուղղակի բանակ առաջնորդեցին: Հոն սկսան հրացան արձակել, ուրախութիւն ընել, եօթ անգամ ալ թնդանօթ պարպեցին: Այնուհետեւ զմեզ 15 օր բանակին մէջ պահեցին, յետոյ տարին Սեմալ, ուր կը գտնուէր մեծ բանակը, Երզնկայի Միւշիւր Շաքիր Փաշան ալ հոն եկած էր: Զմեզ տարին նրան ներկայացուցին, յետոյ տարին եկեղեցի, կապեցին մեր ձեռքեր, ոտքեր եւ սկսան կարգաւ ծեծել ու չարչարել. լման երկու գիշեր, երկու ցերեկ ո՛չ հաց տուին մեզի, ո՛չ ջուր, ո՛չ քուն քնացանք, ո՛չ հանգիստ առինք. նոյնիսկ ջուր թափելու երթալ արգիւնուած էր. մեր բոլոր աղաչանքը անօգուտ մնաց:

«Երկու օրուան այս չարչարանքներէն յետոյ, զմեզ առաջնորդեցին մուսթանթըքին (հարցաքննիչին) առաջ քննուելու: Մուրատ անկարող եղաւ մի քանի բառ ըսելու. խմելու համար չայ ուզեց. յետոյ թուղթ գրիչ բերին, իրենք հարցումներ ըրին, Մուրատ մէկ առ մէկ անոնց պատասխան գրեց: Երբ քննութիւն վերջացաւ, չորրորդ օր զմեզ տարին Մուշ, հոն ալ բաւական չարչարեցին: Երկու ամիս սպասցնելէ յետոյ, զիս, Մուրատ, Գասպար, Աղամ եւ Կարապետ տարին Բաղէշ: Մեր ընկերներէն մէկը՝ Ռուսաստանցի Սենեքերիմ Մուշոյ բանտին մէջ մեռաւ:

«Երբ որ Բաղէշ տարին, բոլորս ալ առանձնացուցին եւ արգիւլեցին իրարու հետ խօսիլ: Բայց Բաղէշի մէջ Պրն. Մուրատը շատ չարչարեցին, մինչեւ անգամ դպեխ մկրատով կտրեցին, ջուրի տեղ քարիւղ խմցուցին, 24 ժամ շարունակ ոտքի կանգնեցուցին: Այս տանջանքներէն յետոյ՝ Մուրատ հիւանդացաւ ամբողջ մէկ ամիս: Երբ մեր միւս ընկերներն ալ Մուշէն Բաղէշ բերին, Մուրատ արդէն բաւական լաւացած էր: Խօսք կար թէ հիւպատոս Մուշ եկած էր: Նորէն քննեցին, երկար բարակ հարցութորձեր արեցին, Մուրատին 101 տարի վճիռ տուին, իսկ ինձի եւ իմ ընկերներուն 15-ական տարուան վճիռ:

«Յունուարի մէջ էր, որ այս վճիռը տրուաւ, իսկ Ապրիլ 10-ին, մեզ նորէն Մուշ վերադարձուցին հիւպատոսներուն հրամանաւ: Մու-

չոյ մէջ առաջնորդեցին սրւարի զօրքերու զօրանոց. հոն իւրաքանչիւրս առանձին սենեակներու մէջ դրին, իւրաքանչիւրի դրան առջեւ ալ մէկ-մէկ պահապան կեցուցին. սենեակի պատուհաններուն վրայ հակողութիւն կը կատարուէր. ամէն բան, իրարու հետ յարաբերութիւն, երթեւեկութիւն բոլորովին արգիլուած էր: Տաս օր վերջ տարին զմեզ հիւպատոսներուն առաջ, նորէն առանձին առանձին երկար բարակ հարցաքննութիւն, ամէն մէկս ամբողջ օր մը, երկու օր քննեցին, Մուրատին քննութիւնը երեք օր տեւեց: Նորէն բանտ տարուեցանք. այս անգամ ծեծ դադրած էր, բայց որեւէ յարաբերութիւն ունենալ իրարու հետ բոլորովին արգիլուած էր»:

Այս հարցաքննութիւններուն ժամանակ ոչ ոքի մտքէն կ'անցնէր, թէ ձերբակալուածներէն մէկը իրենց փնտռած Մուրատն է, զոր ողջ բռնողին բաւական մեծ գումար մը խոստացուած էր:

Կանոնաւոր զօրագունդի սպաներէն մէկը կը մօտենայ ձերբակալուածներուն ու առանձին առանձին կը քննէ զանոնք ուշագիւր ու վերջնոյն քով կանգ առնելով մէկէն կը պոռայ.

— Ասիկա ապստամբներուն պետն է, նոյնինքն Մուրատը, իմ դասընկերը Պոլսոյ բժշկական վարժարանէն...:

Թիւրքերը իրենց ուրախութենէն խելայեղ բացազանչութիւններ կ'արձակեն:

Անմիջապէս կը խուզարկեն բոլորը: Մուրատի վրայէն կը դըտնուի նամակ մը, գրուած իր խումբերէն մէկուն կողմէ, որուն մէջ կ'ըսուէր.

«Յարգելի ընկեր Մուրատ,

Խնդրոյ առարկայ նամակը ստացանք եւ զայն ընդունեցինք յուզումով: Եթէ մեզմէ հարցունես՝ այլեւս մեզի բան մը չէ մնացած, որովհետեւ ահա 12 օր է յարձակումը անվերջ կը տեղայ մեր վրայ, եւ Աստուծոյ շնորհիւ՝ մենք ենք յաղթականը:


Թշնամին շրջապատած է Հիւսէյնիկը եւ գիշերը գիւղը մտնելով՝ մոխիրի վերածեր է: Այս առտու ալ ան մեր վրայ քաշեց Անտոքի բոլոր կողմերէն: Ահա թէ ինչու Տէր Պետրոսը, իր հետ առնելով կելիեկուզանի բնակչութեան մեծամասնութիւնը, գնաց Սասուն՝ հակառակ մեր կամքին: Տակաւին չենք գիտեր սպանեալներուն թիւը, միայն թէ կիներու եւ երախաներու մեծամասնութիւնը այրուած են տուներուն մէջ: Շատեր ալ կորսուած են:

Գիրֆօ Մոսէեան

Օհան Նիկայեան

Տէր Յովհաննէս ֆհնյ.

Մուրատի ձերբակալութենէն ետք, Սասունի մնացած Փետայիներն ու ժողովուրդը կը շարունակեն պայքարը իրենց գոյութիւնը պահպանելու համար: Սասունցի կռուողներուն անունը եւ քաջագոր-



Մ Ե Շ Ն Մ ՈՒՐ Ա Տ
(Համբարձում Պոյանեան)
(1860—1915)

ծուլթեան համբաւը ո՛չ միայն իմացան շրջանի դաւառներն ու ամբողջ Հայութիւնը, այլեւ Տաճկաստանի, Կովկասի եւ միւս քաղաքները:

Մուրատի եւ Գէորգի ձերբակալութենէն յետոյ Սասունի մնացած Ֆետայիները առիւծ կտրած կը կռուին թշնամիին դէմ, կուրծք տալով բոլոր շրջաններուն մէջ:

Պետութիւնը ասիկա տեսնելով, ինչ որ իրենց համար անսպասելի էր, նշան մը պիտի ըլլայ, շուտով կը փոխէ իր վերաբերմունքը Հայոց հանդէպ: Անմիջապէս կը հեռացնէ Ձէքի փաշան, որուն դեկավարութեամբ կատարուեցան Սասնոյ վերջին դէպքերը: Ամէն կերպով կը ջանայ համոզել Հայերը, թէ կատարուածը պարզ թիրիմացութիւն մըն է եւ Քիւրտերու անիրաւութեան արդիւնք, հետեւաբար ասկէ ետք նման դէպքեր պիտի չպատահին:

Սասունցիներուն մէկ մասը կ'ապաստանի Մշոյ դաշտը, միւսը կը մնայ լեռներու մէջ:

Մուշի եւ Պիթլիսի բոլոր դաւառներուն մէջ բողոքի ու դժգո-

հուլիսեան ցոյցեր տեղի կ'ունենան, մինչեւ իսկ բազմաթիւ հեռագրեր կը ղրկուին Վարդան վարդապետի կողմէն: Պոլսոյ Հայոց Պատրիարքարանը եւս արձագանգ կ'ըլլայ այս բողոքներուն:

Ուրեմն այդ կռիւներուն ընթացքին Սասունի նահատակներու եւ մարտիկներու արիւնը ի զուր չթափեցաւ: Հայութիւնը իր թմրած վիճակէն ոտքի կը կանգնէր: Եւրոպական պետութիւններ, հանրային կարծիքի ճնշման տակ, իրենց ուշադրութիւնը կը դարձնէին Սասունի դէպքերուն: Ամէն տեղ մեծ յուզումով կը խօսուէր Սասնոյ կռիւներուն մասին եւ եւրոպական դիւանագիտութիւնը առիթ կ'ունենար նորանոր դիմումներով նեղել Բարձրագոյն Դուռը՝ փութացնելու համար խոստացուած եւ սակայն չգործադրուած Հայկական Բարենորոգումները:

Այս դիմումներուն հետեւանքով, Օսմանեան կառավարութիւնը կը յօժարի մասնաւոր քննիչ յանձնախումբ մը ղրկել Սասուն, տեղւոյն վրայ ապստամբութեան բոլոր պարագաները քննելու համար: Այդ յանձնախումբին պիտի միանային էրզրումի օտար հիւպատոսները կամ անոնց ներկայացուցիչները:

Թիւրք կառավարութեան պատուիրակութիւնը կազմուած էր հետեւեալ անձներէն. Շեֆիք պէյ՝ նախագահ, Ճելալ պէյ, Մաճիտ պէյ, Թեֆիք փաշա: Իսկ օտար հիւպատոսական ներկայացուցիչներն էին Ֆր. Վիլպէր, Փրժեւալսքի եւ Շիփլէյ — Ֆրանսական, ռուսական եւ անգլիական հիւպատոսներուն փոխանորդները:

Այս քննիչ յանձնախումբը Սասուն կը հասնի 23 Յունուար 1895-ին եւ յաջորդ օրն իսկ կը սկսի աշխատանքի, որ կը տեւէ մինչեւ 26 Յունիս: Ան կ'ունենայ 106 նիստ եւ կը լսէ 190 վկաներ, որոնցմէ՝ 23 կառավարական պաշտօնեաներ, 6 բանակի սպաներ, 6 հայ կղերականներ, 61 Քիւրտեր, 2 մշեցի Հայեր, 78 թաւարցի Հայեր, 18 խիանցի Հայեր:

Տեղեկագիրը, որ ընդարձակ գրքոյկ մըն է, քննութեան արդիւնքը տալէ առաջ, կը ներկայացնէ Սասունի աշխարհագրական դիւղերը, բնակչութիւնն ու կենցաղի պայմանները եւ երկարօրէն կանգ կ'առնէ հայ եւ քիւրտ փոխ-յարարեցողութեանց վրայ: Ինչ կը վերարերի բուն ապստամբութեան, տեղեկագիրը յենլով Մուրատի քով գտնուած օրագրի տեղեկութեանց վրայ, ինչպէս նաեւ այն իրողութեան վրայ, որ Սասունի հայ ընտանիքները տակաւին սալթատամբութենէն շատ առաջ լեռները քաշուած եւ ապահով տեղեր ապաստանած էին, կ'եզրակացնէ, որ շարժումը կանխամտածուած, նախապատրաստուած խռովութիւն մը եղած է:

Ապրիլ 22-ին, երբ եւրոպացի քննիչներ թիւրք ոստիկանապետներու եւ հայակեր Թիւֆնիկ պէլի հետ կը բարձրանան Շատախի կողմերը ուսումնասիրութեան՝ Շէնիկ, Սեմալ եւ կելիեկուզանի շրջանները բոլորն ալ քանդուած եւ այրուած էին:

Ճամբան քննիչներ կը տեսնեն քանի մը Հայեր, որոնք հրաշքով



Անտափի բարձունքներուն վրայ, քննիչ յանձնախումբը Յուլի-
սին Իշխնանք անցնելու համար, հարկադրուած է անցնիլ «Քրֆէ Փէր»
(ճիւղէ կամուրջ) կոչուած սառցադաշտին վրայէն:

ազատուած էին: Անոնք իրենցմէ կ'ուզեն իմանալ ա'յն գիւղերուն այ-
րուելուն եւ անմարդաբնակ ըլլալուն պատճառները:

Սասունցիներ նախ ցոյց կու տան ճամբուն մօտը գտնուած ե-
կեղեցի մը որ այրուած էր Թիւրքերուն կողմէ: Ապա զիրենք կ'առաջ-
նորդեն կելիեկուզանի այն մեծ փոսը, զոր գնդապետ Թիւֆնիկ պէկ
դարձուցած էր Հայերուն գերեզմանը՝ նախ խաբելով Տէր Յովհաննէս
նէս քահանան եւ յետոյ քանի մը հարիւր գիւղացիներու ալ հաւատաց-
նելով, որ ո'չ մէկ տանջանք պիտի տրուի իրենց՝ այլ ազատ կերպով
իրենց հողերը պիտի հերկեն ու ցանեն:

Եւ երբոր այդ խաբուած Հայերը կը հասնին իրեն՝ Թիւֆնիկ
պէկի մօտ՝ ան անամօթաբար կը դրժէ իր խոստումը եւ անոնց ձեռքը
մէկական բրիչ տալով կը հրամայէ խոր հորեր բանալ: Մնացեալնե-
րուն ալ ձեռքերը կապել կու տայ ու հրացանի սուլիններով բոլոր կա-
պուածները սպաննելով հորին մէջ նետել կու տայ Տէր Յովհաննէսի
աչքին առջեւ: Ապա Տէր Հօր աչքերն ալ սրածայր դանակով կը հա-
նեն, ու գլխատելով զայն կը նետեն հորը եւ յետոյ հողով կը ծածկեն:

Այդ Հայերը ահա ցոյց կու տան քննիչներուն ա'յն մեծ փոսը եւ
կը հասկցնեն, թէ դերակատարը Թեւֆնիկ պէկն է: Անոնք չէին գիտեր
թէ իրենց մօտ գտնուողը նոյնինքն ոճրադործն էր:

Քննիչները կը հրամայեն փոսը բանալ: Այդ միջոցին Թիւֆնիկ պէկ ծանր նայուածքով, լուռ ու մունջ կը դիտէ, թէ ի՞նչպէս քաջ սասունցիներ կը պեղէին փոսը: Եւ երբ կը սկսին կամաց կամաց մարմինները երեւան դալ, ժանտահոտութիւնը կը ծաւալի ամէն տեղ, այնպէս որ քննիչները կը ստիպուին մարդ զրկել Մուշ՝ հականեխիչ դեղեր բերելու համար:

Մինչ այդ իրենք կ'անցնին կելիեկուզանի աւերակները, ուր անսուաղ եւ մերկ կին մը մօտենալով քննիչներուն, արտասուաթոր աչքերով ցոյց կու տայ Ս. Գէորգ եկեղեցին՝ այրուած ու քանդուած եւ կ'աղաղակէ.

— Այստեղ, այս սուրբ ժամուն մէջ, վաթսուն կիներ ու երիտասարդ աղջիկներ սղծեցին ու մորթեցին. ե՛ս ալ հոն էի. մեր անարգեալ սրատուին համար վրէժ կը սրահանջեմ:

Երբ հականեխիչ դեղերը կը հասնին, այն ատեն կը բանան Ռէս Պետոյի տան մօտերը դռնուող Մեծ Փոսը, կը դռնեն Տէր Յովհաննէսի մաշկաղերծ մարմինը, ականողիքը փորուած եւ կապ մը վզին: Ճիշդ այնպէս, ինչպէս նկարագրած էին քննիչներուն: Եւ դիակներու կոյտեր, մանր ու մեծ, ծեր ու երախայ, այր ու կին խառն լեցուած:

Եւրոպացիք այս տեսնելով կը սարսափին ու չկարողանալով դիմանալ սոյն սրտաճմլիկ տեսարանին, կը հրամայեն անմիջապէս փոսերը դոցել: Այլեւս բաւ կը համարեն քննութիւնը ու չեն ուզեր երթալ Տալուրիկ: Անոնք իսկոյն կը վերադառնան Ս. Յովհաննէսի վանքը, իսկ թիւրքերն ալ դէպի Մուշ:

Այս մասին զանազան թերթերէ կը քաղենք հետեւեալ տեղեկութիւնները.

«Կ. Պոլսոյ Միացեալ ընկերութիւններու սովորական պարահանդէսը տեղի չունեցաւ Պատրիարքի հրամանով: Ժողովուրդը սուգ կը պահէ: Հայ փափկասիրտ տիկիներն եւ օրիորդներ մերժած են պարել՝ Սասունի նահատակներու մահէն ետք»:

1895, «ՏԱՐԱԶ»

«Դամասկոս ժամանած են Պիթիսցի մօտ 300 Քիւրտ դերդաստաններ, որոնք կեցած էին Սասունի լեռներէն ո՛չ հեռու: Այս Քիւրտերը մեծ մաս ունեցած են Սասունի կոտորածներու ժամանակ: Թիւրք իշխանութիւնն երկիւղ կրելով, որ չըլլայ թէ քննիչ յանձնաժողովը հարցուփորձի ենթարկէ անոնց եւ բանայ սիրազորութիւնները, ուղարկած է Սիւրիայի եւ Դամասկոսի կողմերը, ուր մի առանձին թաղ կայ, որ միայն Քրտեր կը բնակին: Ասոնք սիրալիր են, հիւրասիրութիւն ցոյց կու տան իրենց եղբայրներուն: Տէրութիւնը հողացած է անոնց պէտքերը»:

«Le Rappel», 1895

«Քննիչ յանձնաժողովի թրքական կոմիսարները սկիզբը կը հրատարուին Սասուն երթալէ, անգլիական, Ֆրանսական եւ ռուսական նուիրակներուն հետ: Բայց յետոյ միացան անոնց հենց Մուշէն ուղեւորուելու օրը:

Յանձնաժողովը անցնելով Սեմալ եւ Շէնիկ գիւղերու աւերակներու մօտով, որոնք կը գտնուէին քարուքանդ ըրած դաշտերու մէջ, վերջապէս հասան Կելիեկուզան, ուր 120 տուն բոլորովին աւերուած տեսան»:

«Frank Zeit.»

«Անգլիական, Ֆրանսական եւ ռուսական դեսպանները ստացած են Սասունի կոտորածներու քննիչ յանձնաժողովի զեկուցագիրը, որ մէկ ստուար վաւերագիր է: Դեսպանները այժմ զրաղուած են անոր քննութիւնով»:

«Reuter»

«Փետրուար 23-ին Մուշից ստացուած հեռագիր մը կը հաղորդէ, թէ տաճիկները ամէն հնար ի գործ կը դնեն թաքցնելու այն մեծ փոսը, ուր թաղել են հարիւրաւոր յօշոտուած դիակներ: Կոտորածներն այնքան վրդովեցուցիչ են, որ սլուլկարական զազանութիւնները ոչինչ են Հայոց զազանութիւններու վերաբերութեամբ»:

«Inbep Vosg»

«1893 թ. արդէն հայ մը Դաղմալեան (երեւի Տամատեան) անունով մտած էր Սասուն՝ իր եղբայրները ապստամբութեան նախապատրաստելու համար: Երբ ան մատնուելով ձերբակալուեցաւ, շարժումը սկսաւ Տալուրիկի մէջ: Տաճիկ կառավարութիւնը Քիւրտերը զինեց Հայերու դէմ. սակայն այս վերջինները՝ Հայեր, երկար կռիւններու մէջ միշտ յաղթող եղան: Այն ժամանակ օգնութեան հասան 10—15 հազար տաճիկ զինուորներ իրենց լեռնային թնդանօթներով, որոնց դէմ Հայերը սնունդի կողմէ սաստիկ նեղուած՝ չկուեցին, այլ միայն այն ժամանակ յուսահատական մարտ մը մղեցին, երբ տաճիկ զինուորները սկսան անխնայ կոտորել կանանց եւ երեխաներուն:

Եթէ նոյնիսկ հայերը իսկապէս ըլլային կռուին սկզբնապատճառը, տաճիկ կառավարութեան բարոյական պարտականութիւնը խիստ մեծ է, որովհետեւ ամենադառն տրտունջները ուղղուած են տաճիկ զօրքի եւ ո՛չ թէ քիւրտերու դէմ»:

«H. Fr. Presse»

«Անգլո-Հայկական ընկերութեան քարտուղար Ադկին ստացած է նամակ մը Գլադստոնէ, որուն մէջ կ'ըսէ ան.

«Մեր կողմէ խոշոր սխալ կ'ըլլայ, եթէ իննանք տաճիկներու խօսքերու եւ խոստումներու ցանցի մէջ: Տաճիկներու խոստումները բարենորոգութիւններու մասին տրուած, արժանի չեն այն օղին, որով կ'արտասանուին: Բնաւ արժէք, գին պէտք չէ տալ տաճիկներու խօսքերուն»:

«West Gaz.»

«Times» լրագրի մէկ հեռագիրը կը նկարագրէ Սասունի բանտարկեալներու անտանելի վիճակը: Կը պատմէ, թէ ինչպէս Մուրատին կը տանջեն եւ անգութ կերպով կը ստիպեն, որ ան ցուցումներ տայ, թէ իբր Սասունցիները ունեցեր են պատերազմական մեծ պատրաստութիւններ, թէ՛ օտար մեծ պետութիւն մը, ա'յն է Անգլիան, անոնց կ'օգնէ եւայլն: Քսան եւ եօթը Սասունցի բանտարկուած իշխաններին կենդանի են այժմ միայն տասն եւ եօթը՝ մնացեալները մեռել են բանտի տաժանելի կեանքէն, վայրենի ծեծէ, քաղցածութենէ եւ տանջանքէ:

Կառավարութիւնը այժմ կը ստիպէ, որ անոնք թողթ տան թէ մեռածները քոլերայի դոհ եղած են»:

«Լոնտոնէն ստացուած այն լուրը, թէ հայկական քննիչ յանձնաժողովը դադրած է գործելէ, ճիշդ է: Պէտք է սպասել, որ անգլիական լրագիրները նոր արշաւանքի սկսին: Լոնտոնի մէջ մեծ նշանակութիւն կու տան այն երկար հեռագրին, որ Մուշէն ստացել է «Daily Telegraph»ը, մանաւանդ հեղինակը միակ թղթակիցն է, որ չնայելով թիւրք պաշտօնեաներու դիմադրութեան՝ յաջողուել է հասնիլ անցքերու վայրը:

«Hob, B. P.»

«Միջազգային քննիչ յանձնաժողովէն շատ առաջ Քէքի փաշան կըրցած էր ոչնչացնել կոտորածի բոլոր հետքերը: Փախած հայերուն բռնի եւ խոստումներով կը համոզեն վերադառնալ իրենց բնակարանները: Իսկ տեղական զօրքին հրամայուած էր օգնել հայերուն իրենց աւերուած տունները վերանորոգելու Սեմալի, Շէնիկի եւ ուրիշ՝ գիւղերը: Կելիեկուղան խնամքով մաքրել են ա'յն հորը, որուն մէջ թափել էին հարիւրաւոր այլանդակուած դիակներ, որ ապա հանցին այդ դիակները ու տարին թաղեցին անծանօթ տեղեր»:

«Daily Telegraph»

«Սասուն մեկնած քննիչ յանձնախումբին՝ յատուկ թղթակցութիւն հաստատուած է, որ Տրապիզոնի վրայով կ'անցնի դէպի Կ. Պոլիս կամ դէպի Սասուն» :

«ՄՇԱԿ»

«Հայկական քննիչ յանձնաժողովի նիստերը Մուշի մէջ այնպիսի ընթացք ստացան, որ իրաւունք կու տային յուսալու, թէ կը բացուին իսկական փաստերը: Վերջին նիստերուն հայ մը ցուցմունքները բաւ, որ կը հասկնային անկէ առաջ եղած բոլոր վկաներու ցուցմունքները: Հենց, որ վկաներու հարցուփորձը կը վերջանայ, յանձնաժողովի անդամները կ'երթան Սասուն կոտորածի տեղը քննելու համար: Քննութիւնը մի քանի ամսէն չէր աւարտած» :

«Times»

«Թիւրքերը խրախուսուելով այն դանդաղութենէն, որով կը կատարուէր Սասունի մէջ քննութիւնը, նոր բարբարոսութիւններ կատարեցին Պիթիիսի նահանգին մէջ: Նահանգապետի պաշտօնէն արձակուելէ առաջ, Թահսին փաշան հրամայեց բանտարկել ա'յն բոլոր հայերը, որոնց վկայութիւնները եւ ցուցմունքները կրնային լոյս սփռել անոնց կատարած յանցանքներուն վրայ: Բանն այն է, որ Սասունի մէջ ոչ մէկ ապստամբութիւն չէր եղած եւ հայերը կոտորեցին առանց որեւէ պատճառի» :

«Times»

«Հայոց քննիչ յանձնաժողովը, իր վերջին նիստին հարցուփորձի ենթարկեց քանի մը հայ վկաներ եւ անոնցմէ մէկը ցոյց տուաւ պատուիրակներուն ա'յն վէրքերուն հետքերը, որ անոր տուած էին Թիւրքաց զինուորները իրենց սուիններով: Այնինչ Թիւրքաց զինուորական վիրաբոյժները կը պնդէին, թէ այդ վէրքերը այրուածքի հետքեր են, եւ ո'չ թէ սուիններու հարուածներէ գոյացած վէրքեր: Ի նկատի ունենալով այդպիսի հակասութիւն մը, յանձնաժողովը վճռեց հրաւիրել որեւէ օտար անկախ բժիշկ՝ այդ վէրքերը քննելու համար» :

«Times»

«Թիւրքիոյ դեսպանը խնդրեր է Ռուսաստանէն՝ լռութիւն պահել հայկական գործի մասին, մինչեւ քննիչ յանձնաժողովի քննութիւններու վերջանալը» :


«Daily News»

ՆՈՐ ՇՐՋԱՆ

Եւրոպական քննիչներ իրենց քննութիւնները կատարելէ ետք, կառավարութիւնը կը հեռացնէ քիւրտերը հայկական Սասունէն: Միւս կողմէ ալ կ'ուզէ սիրաշահիլ հայ ժողովուրդը: Կ'օգնէ Սասունցիներուն որ տեղաւորուին: Բռնի ոյժի գործադրութիւնը կը դադարեցնէ գրեթէ բոլոր գաւառներուն մէջ, սակայն կը պահանջէ միաժամանակ, որ հանրագրութիւններ ստորագրեն՝ իրենց գոհունակութիւնը յայտնելով թիւրք կառավարութեան հանդէպ եւ եղած աղէտները վերագրեն քիւրտերուն:

Այդ օրերուն Կովկասէն Սասուն եւ Տարօն կու գայ Արամ Արամեանցը (Թաթուլ): Ան գաղտնի կերպով կը խօսի, կը խրախուսէ Սասունցիները, որ չխաբուին կառավարութեան սուտ խոստումներէն, բնաւ չվախնան բանտէ ու սպառնալիքներէ: Եւ յետոյ իրենց դառն վիճակի մասին՝ ամենայն մանրամասնութեամբ, պէտք է ներկայանան հիւպատոսներուն, խօսին եւ արդարութիւն պահանջեն:

1894-ի աշնան յեղափոխական գործիչները ընկերութեան ցանցը կ'ընդարձակեն Տարօնի բոլոր շրջաններուն մէջ: Բողոքներ պիտի կազմակերպէին, տեղեկագրեր պիտի հասցնէին Պոլսոյ Պատրիարքարանը եւ օտար պետութիւններու ներկայացուցիչներուն, ինքնա-



Կարևոյ բանտը եւ բանտարկեալները
ԱՐԱՄ ԱՐԱՄԵԱՆ հոս կախաղան հանուեցաւ



ԱՐԱՄ ԱՐԱՄԵԱՆ
(Աշոտ — Թաթուլ)

Ծնած է կարին 1870-ին: Յայտնի է նաև Թաթուլ եւ Աշոտ անուններով: Սանասարեան վարժարանի ընթացաւարտ: 1890 թուին կը մտնէ Դաշնակցութեան շարքերը եւ շատ գործօն դեր կը կատարէ, իբրեւ վառվռուն, անկախ եւ անձնագոհ յեղափոխական: կը մասնակցի Հ. Յ. Դ.ի Առաջին Ընդհ. ժողովին, 1892-ին կը մտնէ բուն կերպով կը պաշտպանէ յեղափոխական տեղորի սկզբունքը: 1894-ին կը մտնէ Սասուն ժողովուրդը կազմակերպելու եւ զինելու, բուն գործունէութիւն ցոյց կու տայ: Զերբակալուեցաւ 1896 թուի Յուլիս 2-ին Բասէնի մէջ եւ մահուան դատապարտուեցաւ: կախաղան հանուեցաւ 1899 թուի Օգոստոս 2-ին, կարնոյ մէջ:

պաշտպանութեան պիտի մղէին զաւանները Սասունի օրինակով: Գործի վրայ են վարդան վարդապետ, Կառնենի Մկրտիչ, Սարգիս եւ Պօղոս Ղըզըլազաճէն, Մխիթար Շեխիկեան, Տերգեւանքի վարդանը, Մշոյ նոր մտաւորականները՝ Վահան Փոստոյեան, Մկրտիչ Պուլէեան, Կոստոյեան Հաճի Յակոբ, Կայծակ վաղարշակ, Մշոյ Դաշտի բազմաթիւ գիւղապետներ, որոնք Պուլսէն վերադարձած էին յաղթական: Վարդենիսի շրջանին մէջ արդէն գոյութիւն ունէր Մարգար վարժապետի կազմակերպութիւնը: Արամ Արամեանցը կը հանդիպէր Մուշ եւ կը քաջալերէր այս կազմակերպութիւնները: Տուրպախ Դաշնակցութեան ներկայացուցիչն էր Խնուսի շրջանին մէջ: Հրայր Կովկաս անցնելով, 1894-ին կը կապուէր Դաշնակցութեան եւ կը դառնար ամենէն կարկառուն դէմքերէն մէկը: Հրայր մինչեւ այդ թուականը իր թղթակցութիւնները հաւասարապէս կը դրկէր «Հնչակ»ին եւ «Դրօշակ»ին, կոչ ընելով որ բոլորի ճիգերը մէկտեղուին եւ նոյն նպատակին ուղղուին: Տարօնի մէջ ծնած ու սնած Ընկերութիւնը ազգային ազատագրական շարժում մըն էր եւ կը գործակցէր բոլորին, ազատութեան գերագոյն նպատակին շուրջ: Հրայր Կարսի մէջ զինական եւ մարտական ոյժը միայն Դաշնակցութեան քով կը գտնէր եւ անմիջապէս կը լծուէր գործի՝ զինեալ խումբեր երկիր հասցնելու համար: Հրայր նամակներով կը հաղորդակցէր Տարօնի գործիչներուն հետ եւ զանոնք կը յուսադրէր մարտական օգնութեան մասին:

Հայկական Հարցի արժարժման ամենէն խանդավառ շրջանն է 1894-ի աշունը եւ 1895-ի Գարունը: Ամէն կողմ լարուած աշխատանք կը կատարուի:

Հրայր, Բասէնը կազմակերպելէ ետք, կ'անցնի Պաթում եւ Ռումանիա, աչքի ինկած կտրիճները կը հաւաքէ եւ կը վերադառնայ Կարս: Անոնց մէջ ամենէն ուշագրաւը Սերոբ Վարդանեանն էր (Աղբիւր Սերոբ), որ ընդհանուր խմբապետ կը նշանակուի այն մարտական խումբին, որ պիտի անցնէր Ախլաթ, Տարօնի շրջանը: Այդ խումբի զինուորներէն մէկն ալ Անգրանիկն էր:

Հրայր այդ մարտական խումբը կազմակերպելէ ետք կրկին անգամ կ'անցնի Բասէն եւ կը գործակցի Արամ Արամեանցին: Բասէնը, Խնուսը եւ Պուլսնուխ—Մալազկերտը անհրաժեշտ կամուրջներ էին զինական խումբերու փոխադրութեան համար: Ամէն տեղ եռուն աշխատանք կը տարուի, դիւրութիւններ եւ ապաստարաններ ստեղծելու յեղափոխական խումբերու անցքին համար:

Արամ Արամեանցի նամակներէն յայտնի կ'ըլլայ, որ էրզրումէն մինչեւ Վան գործիչներու եւ մարտական խումբերու դասաւորումը կը կատարուի ընդհանուր ապստամբութեան մը համար: Խումբերը դէպի երկիր դրկելու ժրաջան աշխատանք մը կայ, զէնք ու ռազմամթերք փոխադրելու կարգադրութիւնները նամակներէն յայտնի կ'երեւին: Արամ Արամեանցը ամենէն անհամբեր դէմքերէն մէկն է. կապ ունի Մուշի, Վանի, Խնուսի, Ալաշկերտի, Կարսի, Երեւանի եւ Թիֆլիսի



ԱԲՐՕ
(Մկրտիչ Սահակեան)
(1855—1896)

հետ՝ յատկապէս երկիր ուժեր կեդրոնացնելու ծրագրով: Թրքական կառավարութիւնը եթէ բարենորոգումներու չձեռնարկէ, հայ ժողովուրդը պիտի դիմէ ապստամբութեան մը, որուն անպայման պիտի մասնակցին Վասպուրականը, Էրզրումը եւ Տարօնը, որ արդէն առաւելագոյն չափով իր տուրքը տուած էր եւ ցոյց տուած էր թէ յուսահատ Հայն ալ կրնայ կռուիլ թիւրքին եւ Քիւրտին դէմ:

Կովկասի մէջ Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոն կ'որոշէ ամէն զնով օգնել Սասունի ժողովուրդին: Այդ նպատակին իրագործման համար Սասուն կը փութացնէ կարող գործիչ ու ղեկավար Աբրոն՝ Մկրտիչ Սահակեանը: Ան, կարեւոր դումար մը ստացած Պաքուէն, յատուկ խումբի մը ղլուխը անցած, 1895-ի գարնան կը հասնի Տարօն:

Աբրոյի փոքր խումբը կը վայելէ ժողովուրդին ջերմ համակրութիւնը ամէն տեղ: Ան ուր որ կ'երթայ կ'ողբելորէ, կը սրտապնդէ, յուսահատներուն յոյս եւ հաւատք կը ներշնչէ՝ մղելով գործի: Կ'ըսէ, որ չվախնան, կրկին զէնքի դիմեն, կռուին թշնամիին դէմ ու տիրանան ազատութեան:

Աբրո իր վրայ դրուած պարտականութիւնները լիովին կը կատարէ, նոյնիսկ ժողովուրդին դրամ բաժնեկով :

Թէ Սասունի եւ թէ Տարօնի մէջ, ան կը յաջողի բազմաթիւ համակիրներ հաւաքել Դաշնակցութեան դրօշին տակ եւ ստեղծել առաջին կանոնաւոր՝ ըստ կանոնադրի, Դաշնակցական կազմակերպութիւնը : Այդ շրջանին է որ Հ. Յ. Դաշնակցութիւնը արդէն կը դառնայ տիրական քաղաքական ոյժ մը Դուրան-Բարձրաւանդակի մէջ : Իսկ Հնչակեան կուսակցութիւնը կը սկսի տկարանալ : Ասոր գլխաւոր պատճառներէն մէկը այն էր, որ Հնչակեանները երբեք չկրցան կանոնաւոր կազմակերպութիւն ստեղծել : Գործողները անհատներն էին, որոնք զանգուածները աւելի իրենց կը կապէին քան թէ իրենց կուսակցութեան :

Աբրոն շատ կարեւոր դեր կը խաղայ Մշոյ դաշտին մէջ եւս : Գիշեր ու ցերեկ կը շրջի գիւղէ գիւղ, օգնութեան կը հասնի թոյլերուն կ'ոգեւորէ զիրենք ու անոնց ետ մղել կու տայ քրտական արշաւանքներ :

Ան կը ճգնի ու կը յաջողի աւելի թիւով համակիրներ ունենալ իր շուրջ : Խումբին մէկ մասը կը դրկէ Կովկաս, որ զէնք ու ոյժ բերեն Սասունի համար :

Երբ խաղաղութիւնը կը վերահաստատուի եւ դաշտին մէջ մնալը այլեւս կարեւոր չի նկատուիր, կ'անցնի Սասուն իր գործունէութեան կեդրոնատեղին :

1896 թուականի Մարտի 18-ին Աբրոյի որոշումով Ս. գիւղի մէջ կը գումարուի Կազմակերպութեան ընդհանուր ժողովը, ուր ներկայ կ'ըլլան շրջաններու ընկերները : Ժողովէն ետք Աբրոն դարձեալ գործով կը դառնայ Սասուն, իր հետ Ռէս թովմաս Էֆէնտին եւ քանի մը ընկերներ : Ճամբան Մէզրէուր կոչուած բարձր սարէն իջնելու ժամանակ երկուքը մէկ կը թաղուին ձիւնամբրիկի տակ :

ՓԱԽՈՒՍՏԸ ԲԱՆՏԷՆ

Մուրատ եւ Գէորդ Զաւուչ բանալի մէջ կը լսեն Հ. Յ. Դաշնակցութեան ներկայացուցիչ Աբրոյի եւ օտար հիւպատոսներու քննիչ յանձնախումբերուն մուտքը Սասուն :

Գէորդ շարաթներ առաջ մտածած էր բանաէն փախչիլ ու ասոր համար սկսած նախապատրաստական աշխատանքներու :

Պօսքը տանք Գէորդ Զաւուչին .

«Ապրիլ ամսուն մէջ էինք, եկած էր մեր մեծ Զատիկ, Յարութեան Կիրակի : Մէկ-երկու շաբաթ ալ անցաւ : Սկսանք դադանի խորհուրդ ընել փախչելու համար : Սեպտեմբեր ամսուան մէջ էր : Ես ծակեցի իմ սենեակ, բայց զօրքեր տեսան եւ զիս փոխադրեցին վերի

յարկ : Հոն մնացի երկու ամիս , նորէն զիս փոխադրեցին . հոն ալ ծակեցի զիմ սենեակ , որպէսզի փախչէի . դրեցի Մուրատին , բայց չթողուց , ըսաւ թէ հիմա ձիւն է դուրսը , թող որ դետինները սենան , թէ ոչ չենք կրնար ազատուիլ : Բայց երբ որ ձիւները սկսան հալիլ , ես հիւանդացայ ամբողջ ութ օր եւ չկարողացայ երբեք շարժուիլ : Ութ օր յետոյ լաւացայ , նորէն եկան եւ զիս վերի յարկ փոխադրեցին , ա՛լ զիս վարի յարկ չէին թողեր , որովհետեւ տեսած էին պատ ծակելս :

«Բայց ես վերջապէս երեքշաբթի օր մը պայմանաւորուեցայ իմ ընկերներու հետ , որ աշխատին պատրաստ ըլլալ , որպէսզի դիչերուան ժամը 4-ին փախչինք : Փափչելու ծակեր նորէն պատրաստուած էին : Ժամը 4-ին ատեններ զիմ վերջին գրութիւն զրկեցի Մուրատին եւ իր կողմէն երթաք բարովի պատասխան ստացայ : Թղթակցութեան ծակ դոցեցինք եւ ճիշդ ժամը 4-ին , դուրս նետուեցանք 4 ընկերներով , ես ու Յովհաննէս եւ յետոյ երկու ուրիշ ընկերներ , Աւօ Գասպարեան եւ Պաշօ Տփեան(*) : Սկսանք փախչիլ արագօրէն , դուրսը ձիւն կար , անձրեւ ալ կու դար , դետինները ամբողջ ջուր էին , կարծես մեր փախուստը յաջող էր : Մեր ընկերներէն մէկը ճամբան յոգնեցաւ , բռնեցինք ձեռքէն եւ սկսանք քաշել : Կամաց կամաց կը լուսնար : Արշալոյս ըլլալու մօտ էր , երբ հասանք Տերգեւանք , ամէն տեղ ձիւնով ծածկուած էր . շատ անգամ , ճամբան կը կորցնէինք : Վերջապէս բարձրացանք Տերգեւանք սար , որտեղ ինծի ծանօթ քարայր մը կար , ընկերներով մտանք այդ քարայրի մէջ : Արշալոյս արդէն սկսած էր բացուիլ , քամին շարունակ կը փչէր , իսկ ցուրտ սարսափէլի էր : Երկու դիչեր եւ երկու ցերեկ մնացինք այդ քարայրի մէջ առանց հացի , առանց ջուրի : Երկու օր վերջ եղանակ մի քիչ հանդարտաւ» :

Պումբը կը ստիպուի մնալ քարայրին մէջ պատասպարուելու համար ցուրտէն եւ անձրեւէն , յետոյ կարենալ շարունակելու իր ճամբան դէպի Սասուն : Անոնք նկատի ունէին , որ անպայման մօտակայ դիւղերը կը հանդիպին իրենց ծանօթ ընկերներուն :

Պօսքը տանք Աւոյին(**) :

«1896-ի Ապրիլ 7-ն էր :

«Մշոյ երկիրը , զուլումի այդ վայրին , ախոռի մը մէջ նստած կը խօսէինք մեր դարդերից : Քսանրվեց կապ տաւար կը կապուէր թէեւ այդ մեծ ախոռին մէջ , սակայն վաղուց դատարկուած էր ան . դոյդ մը սիրուն եզներ մնացած էին , քսանրվեց քուլֆաթի յոյսը . . . : Եզներ փոնչալով կ'ուտեն իրենց դարմանը՝ լայն լայն բանալով իրանց փնչածակերը . կարծես կ'ուզեն ախոռը տաքցնել : Ի դո՛ւր , որովհետեւ դուրսը բուք ու բորան էր , երկնքից քուլայ-քուլայ քամուհետ կը թափուէր ձմրան խոշոր ձիւնը : Քամին դուրսը կը մոնչէր հա

(*) Առիթէն օգտուելով իրենց հետ կ'ազատեն ձիպրանցիներու աշիբէքապետ Ապրօ աղան , որ բանտարկուած էր իրենց հետ :

(**) Սեպուհ , «Դրուագներ Սասունի կռիւներէն» :

կը մոնչէր . իբրեւ թէ տարրերը ոտքի կանգնած՝ տեղահան ընել կ'ուզէին Հաւատորկայ սարերը : Բայց դարձեալ ի դուր , քամին մոնչելով կ'անցնէր եւ միջոցին մէջ կը տարածուէր՝ Զուլումի Երկրի դարդերուն նման , անսանձ ու կամայական . . . :

Մեր նստած ախոռը կատարեալ սառցարանի նման էր , բարեբախտութիւն մը , որ փայտը առատ էր եւ մեր ընկերները շարունակ էր նետէին օձախը :

Իսկ քիչ մը հեռու ծերուկ մը նստած՝ կը պատմէր Սասնոյ 94 Դուականի ապստամբութենէն :

Ան իր պատմութիւնը սկսաւ այսպէս .
— Է՛հ , աղբրտա՛նք , մեռնիմ ձեզի , դիտէ՞ք լաօ՛ , 65-70 տարու մարդ եմ : Երկու անգամ դնացել եմ Սասնոյ Շատախ՝ Անդանիա ուխտի . ձեր մուրազը տայ Ս . Անդանիա , ես իմ մուրազս առի . ոսկրացաւ ունէի՝ առողջացայ : Վերջին անգամ երբ դնացի , Կոփի գիւղը հանդիպեցայ եւ օր մը հիւր եղայ Ռէս Ա . . . ին : Նստած մեր քիւլֆաթի ցաւերու վրայ կը խօսէինք , երբ յանկարծ 6-7 թֆանքուոր ներս մտան — Քիւրտեր էին :

«Մէկ էլ տեսայ՝ «բարի իրիկուն» ասացին , «էֆարիպ թախէր» չասին : Օ՛հ , ո՛րքան ուրախացայ տեսնելով հայ ֆետայիները . ի՞նչ , ֆետայի մի՛ ըսեր , մի աժտահար ըսէ՛ :

Բարեւէն յետոյ թիւնքները վար դրին ու նստան :

Երբ քանի մը ըոպէ անցաւ , ի՞նչ տեսնամ աղէկ , մեր Առաքելոց վանքի աշակերտներէն երկուքը անոնց հետ — Գէորգը եւ Աղամը : Տեղէս ուսիք մը վեր կեցայ եւ դացի Գէորգի աչքերը պազի ու ասի .

— Լաօ՛ , դու այն Գէորգին չես նմանիր , դու Ասլան ես եղած . Աստուած քեզ ոյժ ու կարողութիւն տայ Ասլա՛նս , որ մեր տիւշմանին մէջքը կոտրես :

Ինքն ալ ուրախացաւ եւ քանի մը խօսքով պատասխանեց ինծի .

— Աբօ ,— ըսաւ նա ,— քէ մատաղ . եթէ դուք մեզ նման ճէք (հրացան) կապէիք ու սարեր ելնայիք , մենք այսօր ուսումնարանից դուրս չէինք դար եւ թիւնքի հետ դործ չէինք ունենար : Սակայն երբ տեսանք , որ դուք այդ չարիք , մենք այսօր մեր պապերը կ'անիծենք : Ես էլ մտածեցի , որ դոնէ մեր որդիները կամ թոռները մեզ չանիծեն , ատոր համար էլ գէնք վերցրի :

Լաօ՛ , այսպէս երկար խօսացինք , չգիտեմ քանի՛ սահաթ , անկէց պառկեցինք . առտուն խօսակցութիւնը նորէն շարունակելու յոյսով :

Բայց առտուն սարերու արծիւները թռած էին . չկայի՞ն . . .

Եւ ան դնաց ու այնուհետեւ է՛լ չտեսայ՝ չիւր (մինչեւ) Սասնոյ կռիւր :

Կռուի ժամանակ քէլէշները բռներ էին , օ՛ֆ , հիմա ան բանտն է , բա՛նտն է . . . Աստուած բոլոր բանտարկեալներուն ազատութիւն տայ , Մուրատինու իր ընկերներուն : Մէկ էլ տեսնէի , այն Առաքելոց

Վանքի աշակերտին, ա՛յն ճահիլ Ֆետային, ու անկէ ետք Աբոն թող մեռնէր» :

Այսպէս կը խօսէր երկա՛ր, երկա՛ր :

Ու քամին դուրսը կը մռնչէր, կարծես կ'ուզէր տապալել ախոռի դուռը, որ ուժգին հարուածներէն անդադար կը ճռնչէր :

Այդ բոպէին ներս մտաւ գիւղի երիտասարդներէն մէկը շնչասպառ ու քնաթաթախ՝ եւ լուր տուաւ, թէ տասնապետ մը լսած է, որ փախած Ֆետայիները իբրեւ թէ այստեղ են, 25 ղինուորներով եկած է գիւղը խուզարկելու :

— Ի՞նչ փախած Ֆետայի, — կը հարցնէ միւս ընկերը :

— Ապա գիշերը Մշոյ Սվարի-Ղչլան ծակեր է Մուրատ էֆէնտին եւ իր երեք ընկերներով փախեր է . . .

Մեր ուրախութիւնը չափ ու սահման չունէր, սարերու արծիւները վանդակէն թռած էին :

— Բայց պիտի գտնեն զանոնք, ո՛րտեղ որ ալ ըլլան, ըսաւ ընկերներէն մէկը՝ ուրախութենէն դողալով :

— Պոռալու ժամանակը չէ, պէտք է աճապարել եւ այստեղէն հեռանալ, — ըսաւ ուրիշ մը :

Ո՛ր հեռանալ, դուրսը քամին կը փչէ սաստիկ. ձիւնը քուլայ-քուլայ կը թափուի եւ մրրիկը պար կը բռնէ ձիւնի փաթիլներուն հետ :

— Վերջապէս որոշուեցաւ, — ըսաւ անդիէն չորրորդ մը, — ինչ որ պիտի ըլլայ. պէ՛տք է հեռանալ :

Արդէն ժամանակը երեկոյ էր, թիփին մէկ կողմէ, բորանը միւս կողմէ, ճանապարհ ընկանք դէպի Սասուն : Եւ կէս ժամ հազիւ թէ բարձրացած էինք, երբ յանկարծ տեսանք, որ հեռուէն գոմի դռնէն մեզ կը կանչեն :

Ուղղուեցանք դէպի այն կողմը :

— Ակնջկլա (աւետի՛ս), Պ. Գէորգը հոս է, ազատ է, եղաւ գիւղացիներէն մէկուն խօսքը ուրախութեան լի արտայայտութեամբ :

Ու ցնցուեցանք ամէնքս ալ, ուրախութեան, յուզումի նոյն զգացումներով :

Գէորգ իր ճարպիկութեան եւ հնարամտութեան շնորհիւ յաջողեր էր պատը ծակել ու փախչիլ : Չկար Մուրատը :



Ես հոս առաջին անգամ տեսայ Գէորգը : Գեղադէմ, զոյգ մը կենդանի, փայլուն կրակոտ աչքերով, իսկ եւ իսկ կռուելու սիրահար մարդու աչքեր : Երկու տարուան բանտարկութիւնը թէեւ սարերու այդ հսկայ սիրահարը գունատեցուցած էր, բայց եւ այնպէս ան մարմնով առողջ էր :

Երկար նայեցանք իրարու երեսին ապշած, մինչեւ որ Ասլանը իր բերանը բաց արաւ ու սկսաւ հետաքրքրութեամբ հարցնել, թէ ո՞վքեր կան Սասուն, ի՞նչ պատրաստութիւններ ունին, ժողովուրդի

դրութիւնը ի՞նչպէս է, եւ այլ նման հարցեր, որոնցմով կրնայ հետաքրքրուիլ հայրենիքի ցաւերով տապկուող բանտարկեալ մը, որ այլեւս ազատ է:

— Պարո՛ն, Մկթինք պիտի դնա՞ս այժմ, թէ Սասուն պիտի մընաս, — հարցուց անհամբեր ընկեր մը, ընդմիջելով Գէորգի խօսակցութիւնը:

— Է՛հ, սիրելի՛ս, — ըսաւ Գէորգ նայելով քաղցրօրէն ընկերոջը երեսին. — ես ո՛չ մէկ տեղ չեմ երթար մինչեւ որ իմ հաշիւս չմաքրեմ Վոսփորի ափերին նստած Ճիւղին հետ:

Ու փոքր ընդմիջումէ ետք, ան դարձեալ շարունակեց.

— Գիտէ՞ք, երբ զէնք վերցուցի, ուխտեցի ազատութեան անունով, որ զէնքը վար պիտի չդնեմ, մինչեւ չամռքին մեր Զուլումի Երկրին մէջ ապրող ժողովուրդի ցաւերը: Սասնոյ սարերը արիւնով ներկուեցան, Շաքէներ ու հարիւրաւոր կոյս աղջիկներ Ֆրո-Ֆրո-քարի ծերպերէն դահավիժուեցան՝ աննամուս, արիւնարբու թիւրք զինուորներու ձեռքը չանցնելու համար: Անոնց ուրուականները ինձ հանգիստ չեն թողուր: Ես ուխտեր եմ մեռնիլ՝ որպէսզի անոնք ապրին. իսկ այսօր, ի՞նչ կը տեսնեմ, անոնք մեռած են, իսկ ես ողջ եմ: Ո՞ւր է Գրգոն, Շէնիկի Ռէսը, անոնց հետ ուխտ ու պայման ըրած էինք՝ թիկունք թիկունքի տուած կռուել եւ գլուխ չծռել թշնամիին:

«Ես չմեռա՛յ, իսկ անոնք ինկան հերոսարար եւ հերոսական փառքով...»

«Առաջին երգումը, սրբազան ուխտը ես եմ տուեր անոնց եւ հիմա երթամ տունս փակուի՛մ... Չէ՛, չէ՛, ընկերներ՛ր, պէտք չունիմ, պէտք է մեռնիմ զէնքը կուրծքիս՝ առանց զայն վայրկեան մը մոռնալու»:

Ու խոր հառաչով մը, արցունքը լեցուած աչքերուն մէջ, աւելցուց ան, — Է՛հ, ընկերներ՛ր, երթա՛նք, երթանք, նահատակներու օրանը, նահատակներու սրբատեղին՝ դէպի Սասո՛ւն...

Եւ մենք ամէնքս, իբրեւ ամենաջերմեռանդ ուխտաւորներ, ոտքի ելանք ու անգամ մըն ալ զօրացած մեր սրբազան ուխտին ոյժովը՝ սկսանք բարձրանալ դէպի լեռը, արծիւներու բոյները:

Կ'երթայինք ամէնքս ալ. լո՛ւռ, մտածկո՛տ: Մեզմէ շատերը երբեմն կը նայէին Գէորգին կարօտի անուշ նայուածքով ու չէին կըշտանար:

Իսկ Սարերու Ասլանը չէր քալեր՝ ան կը թռչէր կաքաւի նման, մինչ մենք մինչեւ դօտկերքս խրուած էինք ձիւնի մէջ: Ան կը թռչէր ամենէն արագ, կարծես անոր մէջ երբեք յոգնածութիւն չկար, կարծես ամիսներու բանտարկութեան միջոցին նո՛ր ոյժ, նո՛ր կորով ամբարած ըլլար, այնպէս որ ընկերներէն մէկը ստիպուեցաւ ըսել անոր.

— Իսկապէս Արծիւի պէս կը սլանաս, Պարոն, դէպի Զէյնիկի դադաթը, եւ չես մտածեր, որ անգոր ընկեր կայ միասին, որ չի կըրնար այդքան արագ քալել:



ԳԻՈՐԳ ԶԱԻՈՒՇ

— Սիրելի՛ս, — պատասխանեց մեղմիկ Գիորգ, առաջինը՝ ես պարոն չեմ, ես ընկեր եմ, երկրորդը՝ շատ քիչ մնաց, որ տեղ հասնինք: Քիչ մըն ալ չարչարուինք ու անկէ ետք միշտ ազատ կ'ըլլանք: Չէ՞ք գիտեր, որ յեղափոխական կեանքը իրթորկալի կեանք մըն է, դառնութիւններով լեցուն. անոր ճանապարհը իշոտ եւ տատակոտ է: Այդ ճամբան քաղողներու վրայէն միշտ կը սաւառնի մահուան ատուածը, անզգոյշ քայլ մը միայն ու գերեզման կ'իջեցնէ այդ ճամբորդը եւ իրեն հետ շատ մը անմեղներ: Բայց Փետայի կեանքը ունի նաեւ իր քաղցրութիւնները:

Շատերը կը ցանկան Փետայի ըլլալ, սակայն քիչեր կ'արժանանան այդ պատուոյն: Պէտք է քալե՛լ, քալե՛լ, որպէսզի հասնինք մեր

նպատակատեղին . այն ժամանակ կը մոռնանք մեր կրած այս շարչարանքներն ու նեղութիւնները : Է՛հ , արծուի ճուտե՛ր , մենք որ այս փոքր նեղութիւնը չկրնանք տանիլ , ապա ի՞նչպէս տանի այն հերոս ժողովուրդը , որ ամէն օր զրկանքներու եւ շարչարանքներու ենթակայ է : Տեսէ՛ք հեռուն , այն մեծ ապառաժ քարի կողքին , սառ հողի տակ պառկած են քանի մը Սասունցիներ , որոնք ազատութեան սիրոյն զոհ ինկան . երբ ես անոնց պատկերը աչքիս առաջ կը բերեմ , այն ատեն կը մոռնամ ամէն նեղութիւններս :

— Ուրեմն ա՛լ պարոն չեմ ըսեր , — աւելցուց խօսակիցը , — դու ընկեր ես :

— Ընկե՛ր ջան , — հարցուց ուրիշ մը , — ի՞նչ Սասունցիներ են ասոնք , այդ լերկ ապառաժի ստորոտը թաղուած :

— Այո՛ , Սասունցիներ են , պատասխանեց պաշտելի Գէորգը : ԾԱ-ի ապստամբութեան ժամանակ թիւրք զինուորներն շատերուն արեւը խաւարեցին եւ ինկան իրենք էլ : Անոնք էին , որ դոռ կռուի մէջ ստրկութեան շղթան մէկ կողմ ձգած՝ տուշմանին վէրք կը հասցնէին ու վէրք կը ստանային : Բայց , աւա՛ղ , երկար չտեւեց կռիւը , որովհետեւ մենք տասն էինք՝ իսկ տուշմանը հազարնե՛ր . . . Ահա թէ ինչո՛ւ ես չեմ զգար յոգնածութիւն ու նեղութիւն : Երբ ես յոգնիմ , մեռնողները կը բերեմ աչքիս առաջ եւ ոյժերս կը հաւաքեմ , կը կազդուրուիմ : Քալե՛նք , քալե՛նք . ես շատ բաներ ունիմ ձեզ ըսելու . հիմա ժամանակը չէ . տեսէ՛ք , լուսաստղը ծագեց , արշալոյսը մօտ է բացուելու եւ մենք դեռ շատ ճանապարհ ունինք :

Ու խումբը կտրիճի խօսքերէն իրախուսուած՝ սկսաւ քալել ու բարձրանալ նոր թափով : Կը բարձրանար ե՛ւ ինքը , գաղափարի հերոսը , մոռցած իր երկու տարուան կրած խոշոր նեղութիւնները , այն նեղութիւնները , որոնք տաճկաց բանտերուն մէջ ամէն օր , ամէն րոպէ տեղի կ'ունենային : Օ՛հ , ի՞նչ սոսկալի է բանտի կեանքը , ան ալ կարմիր հողերու աշխարհի մէջ , Մշոյ բանտը : Ես կը տեսնէի անոր մէջ մաքուր Փետայիի արիւն եւ հաստատակամութիւն . ան կոտրած էր այդ շղթաները , որոնցմով կաշկանդուած էր . անոր հայրենասիրական տենչը հանգիստ չէր տար , որ մնար այդ մութ ու մռայլ խորշին մէջ : Եւ կռուի սիրահարը կը մտածէր դիշեր ու ցերեկ , որ դուրս գար այդ բանտէն եւ դուրս ալ եկած էր : Ալ ան չէր նայեր որ իր ետեւ ընկերներ կան : Կ'աճապարէր հասնիլ որոշուած կէտը դեռ արշալոյսը չբացուած : Ահա թէ ինչո՛ւ ան կը սուրար դէպի Զէյնիկի գաղաթը :

Անցաւ մի քանի վայրկեան եւ մեր հարցասէր ընկերը կրկին հարց տուաւ .

— Է՛հ , ընկեր Գէորգ , գիտե՞ս , շատ բաներ կան քեզ հարցնելու , սակայն տեսակ մը կաշկանդուած կը զգամ զիս :

— Ինչո՞ւ , — պատասխանեց Գէորգը մեղմիւ , — դու հարց տուր եւ կը ստանաս ինձմէ պատասխան :

— Ընկե՛ր , դու ըսիր թէ ԾԱ-ի ապստամբութեան ժամանակ այն

կտրիճները վէրք տուին տուշմանին եւ վէրք ստացան : Խնդրեմ , պատմէ՛ քանի մը անցքեր ձեր եւ Սասունի նահատակ ժողովուրդի անցեալէն :

— Պատմե՛մ ,— ըսաւ Մկթինքի կորիւնը ,— միայն հասնինք այնտեղ , ուր պիտի դիմաւորեն մեզ ազատութեան մարտիկները . ժամանակը չէ պատմելու : Ահա՛ տեսէ՛ք , առաւօտեան աւետարերի ձայնը կու գայ , ան կ'երգէ եւ մեզ իւր երգով կ'ըսէ ,— աճապարեցէ՛ք ձեր նպատակատեղին , որպէսզի արեւի ծագումը դիմաւորէք , եթէ ոչ չէք հասնիր արեւէն առաջ արծիւներու բոյնը : Տէ՛ , երթա՛նք» :

Խումբը կը շարունակէր իր ճամբան . այս անգամ միւս ընկերները ուզեցին հասկնալ , թէ ի՞նչպէս Սարերու Ասլանը՝ Գէորգ Չաւուշը կրցաւ թրքական բանտէն դուրս գալ : Գէորգ լուռ էր , չէր ուզեր այս մասին խօսիլ : Յանկարծ Աւետիսը դառնալով ըսաւ տղոց .

— Ես ձեզ կը պատմեմ այդ փոքրիկ պատմութիւնը , որ մեր բանտի կեանքէն է , ես ալ Բսանայ գաւառի վազրի հետ բանտի մէջ էի : Կը տեսնէ՞ք այդ քաջը , ընկերներ՛ր ,— շարունակեց Աւետիս որ բազէի պէս կը սլանայ դէպի սարը , ցոյց տալով Գէորգը ,— այդ անխոնջ կտրիճը կռուի մէջ ալ այնպէս է , ան երբեք յոզնութիւն եւ վհատութիւն չի գիտեր , ան չունի վախ ու երկիւղ , ան մէկ նշանաբան ունի . մեռնիլ եւ տուշմանին գլուխ չծռել : Տեսէ՛ք , այժմ ալ չկան անոր գեղեցիկ դէմքի վրայ յուսահատութեան նշաններ : Ան ինչպէս հոս է , նոյնը եղած է բանտին մէջ : Ա՛ն էր բանտին մէջ մեր մխիթարիչը : Մենք օր մը այդ ամեհի կտրիճի բերնէն չլսեցինք ա՛խ ու վա՛խ : Ահա անոր երկու տարուան խօսքերը , որ շարունակ կը կրկնէր մեզի .

«Ընկերներ , գիտէ՞ք , յաջողութիւնը եւ անյաջողութիւնը իրարու հետ հաւասար ընկերներ են եւ միշտ կը մրցին , որ կրկին մէկը միւսը տապալեն : Կը յիշէք դուք , երբ մենք արծիւներու աշխարհին մէջ ստրկութեան լուծը մէկ կողմ դրած , բռնած էինք ազատութեան գործիքը , մե՛նք էինք երկրի տէրը , ու ոչ մէկ թշնամի չէր համարձակեր վեր բարձրանալ , համոզուած ըլլալով , որ այնտեղ առիւծի կորիւններ կան , որոնցմէ պատառ-պատառ կ'ըլլան : Եւ այն ատեն մենք մեզ ուրախ կը զգայինք : Իսկ այսօր դուք այս զնտանին մէջ տխուր էք . բայց չէ՞ որ յուսահատութիւնը , տխրութիւնը , ամօթը անպատուարեր են հայդուկի մը համար : Այդ շղթաները ժամանակաւոր են , համոզուած եղէ՛ք , մօտ է ժամանակը երբ մենք նորէն կը սլանանք արծիւի նման դէպի Սասո՛ւն : Ես հաւատացած եմ ատոր , մի՛ տըխրիք : Եթէ եօթը կարգ պարիսպով պատեն մեր բանտին շուրջը , յաղթանակը դա՛րձեալ մերն է , մենք շուտով կը հասնինք մեր ցանկալի Գեփինին եւ Անտոքին , կ'երթանք , կը դիմաւորենք Ծովասարի ետեւէն ծագող ազատութեան արշալոյսը . . . :

Կտրիճը այս խօսքերը կը կրկնէր միշտ մեզի բանտին մէջ եւ աչքը շարունակ կը դարձնէր դէպի պատուհանը , ուրկէ մենք վերջը դուրս թռանք . բայց մեզի ոչինչ չէր ըսեր , ամէն անգամ որ մեր ազա-

տուժեան մասին կը խօսէր, աչքերը կը հրավառէին, կ'ուրախանար իբրեւ մանկիկ: Երկու տարի շարունակ միասին եղած ենք անոր հետ բանտին մէջ, ճաշի եւ թէյի ժամանակէն զատ, մենք ոչ մէկ ատեն անոր նստիլը չէինք տեսած. գիշերներն անգամ քիչ կը քնանար. կը քալէ՛ր, անգագար կը քալէ՛ր...»:

Ու դեռ ընկեր Աւետիսը իր խօսքերը չվերջացուցած՝ մէկ ալ ուժգին ձայն մը լսուեցաւ. Գէորգի ձայնն էր...

— Ահա, տեսէ՛ք ընկերներ, — հասկանալի եղան Գէորգի խօսքերը, — մենք արդէն Զէյնիկի կատարն ենք: Դէպի վար նայեցէ՛ք, անոնք հայկական տուներ են, .. Օ՛հ, ի՞նչ կը տեսնեմ, այրուած տուներ, հրդեհուած դոմեր:

Ու խոր զայրոյթով աւելցուց Գէորգ.

— Ա՛խ, տուշմա՛ն, տուշմա՛ն...

Հերոսը լռեց... Երբեմն երբեմն ան կը նայէր դէպի երկինք՝ աչքերը խոժոռեցնելով: Անոր երեսին նայողը կարծես կը զգար, թէ անոր մէջ ալեկոծութիւն մը կար, որ երբեմն կ'արտայայտուէր ձեռքի սկամայ շարժումներով:

Ինչո՞ւ տխրեցաւ ան այժմ՝ Զէյնիկի դադաթը բարձրանալով. միթէ ան յոգնած էր — ոչ. ինչպէս վիթխարի նաւը ովկիանոսի սիրտը կը ճեղքէ ու յառաջ կը խոյանայ, այնպէս ալ Գէորգը ձիւնի սիրտը ճեղքելով առաջ կ'երթար: Ան դեռ ըսպէ մը առաջ ուրախ էր, իսկ այժմ երկինքը կարծես յանկարծակի փոթորկեցաւ:

— Ինչո՞ւ յուզուեցար, ընկե՛ր, — հարցուց Աւետիս մօտենալով. — դուն յուզուելն ի՛նչ է չէիր գիտեր, ինչո՞ւ յանկարծ փոխուեցար. ընդհակառակը, այսօր մեր ուրախ ըլլալիք օրն է, որովհետեւ մեզ պրկող շղթաները կտորած ենք, այլեւս թիւրք զապթիէներու անարդանքները չենք լսեր, մենք ազատ ենք:

— Այո՛, ընկե՛ր, մենք ազատ ենք, ատոր տարակոյս չկայ եւ ես երբեք չեմ տխրիր, բայց կը տեսնե՞ս հեռուի այն տարածութիւնը. Մշոյ դա՛շտն է, հոն նաեւ զոհերու շարաններ ունինք.

Անոնք նոյնպէս ինծի հանգիստ չեն տար... Դուն տեսար երէկ մեր անցած ձիւնապատ ճանապարհները, կարծես ամէնքն ալ կարմիր էին. այո՛, կարմիր՛ը, բայց մինակ մեր երկրի ձիւնը չէ կարմիր, հողն ու ջուրն ալ կարմիր են. ամէն բան կարմիր է, բացի հայ գեղջուկէն, որ շարունակ սեւաւորուած կ'ողբայ իր սեւ օրը: Օ՛հ, վերա՛ն աշխարհ...

Ու դարձեալ լռեց: Եւ մենք կանգնեցանք քայլ մը առաջ: Արշալոյսը արդէն բացուեր էր. ան ալ էր կարմիր այդ երկրին մէջ:

— Ինչո՞ւ կանգնեցաք, — պոռաց Արծիւը, — չէ՞ք տեսներ այդ պատերը, սեւ են ատոնք. այդ նշանն է, որ այստեղ բնակութիւն չկայ, այդ նշանն է, որ անոր տէրերը կա՛մ ազատութեան ճամբուն զոհ գացած են, կա՛մ զաղթած: Ի՛հ, ընկերներ, ես շատ եմ եղած այստեղ. շատ բաներ գիտեն գիւղացիի կեանքէն այդ սեւ պատերը: Քանի՛-

քանի՛ անգամ այս գոմի մէջ հիւրընկալուած ենք, քանի՛-քանի՛ անգամ ճէքեր (ղէնքեր) կախած ենք այս սեւ պատերէն. իսկ այսօր կրակի ճարակ դարձած են: Հեռանա՛նք, շուտով հեռանանք: Տեսէ՛ք. երկինքը ամպամած է, Ծովասարի գլխուն կուտակուած են սեւ-սեւ ամպեր, այդ նշան է փոթորիկի, աճապարեցէ՛ք, որ հասնինք հոն՝ գիշատիչ անգղներու աշխարհը:

— Օ՛Ք, ի՞նչ ցուրտ է, — լսուեցաւ խումբի մէկ ընկերէն, — այսքա՛ն կը քալեմ, նորէն աչքերէս արցունք կը վազէ:

— Հա՛, ընկե՛ր, ցուրտ է, ցո՛ւրտ մեր աշխարհը, — պատասխանեց Գէորգ, — եւ ծառերը տերեւաթափ, որովհետեւ մեր երկրի արեւն ալ վախժխելով դուրս կու գայ: Քեզի պէս շատե՛ր այս ճամբուն վրայ ցրտամահ եղած են, եւ այն վայրը, ուր հազարաւոր թըշուառներ կ'ապրին, անոնք ալ ցուրտէն կը դողան: Այս երկրին արեւն ալ զօրութիւն չունի, որովհետեւ Երլտրդի շքեղ ապարանքներէն փչող դիւային շունչը ա՛լ ոյժ չի թողուր արեւին վրայ: Պէտք է հասնինք այն սրբազան ուխտատեղին, ուր ինկած են հազարաւորներ, եւ անկէ ձեռք մեկնենք մեր մարդասիրական ծակ երկաթներուն եւ անոնցմով հանենք արեգակը՝ խաւարող ամպի տակէն: Այն ատեն թէ՛ աշխարհը կը տաքնայ եւ թէ՛ հազարաւոր ժողովուրդներ Քիւրտի ձեռքէն կը փրկենք: Ահա՛ շիտակ ճամբան...

Խումբը կ'երթայ դէպի այն կողմը, որտեղ կը սպասեն փայլուն լուսաստղի ծագումը:

Յանկարծ շշուկ մը հասաւ Գէորգի ականջին եւ անմիջապէս ընկերներուն ուշադրութիւնը հրաւիրեց անոր վրայ:

— Օ՛հ, — աւելցուց իսկոյն Գէորգ, — տեսէ՛ք, տեսէ՛ք, մարդիկ իրար կ'անցնին ու կը վազվզեն դէպի Ծովասար. ինչո՞ւ արդեօք. անո՞նք ալ կ'ուզեն դիմաւորել ազատութեան արշալոյսը: Ի՞նչ սարսափելի ձայներ են...

Ամէնքս ալ վազեցինք դէպի այն կողմ, բայց երբ կտրիճը նկատեց, որ անոնց պիտի չկրնանք հասնիլ շուտով, ձայնեց.

— Ո՞վ էք:

— Բարեկամներ, — եղաւ պատասխանը հեռուէն:

— Կանգնեցէ՛ք, եթէ ոչ կրակ պիտի բանանք:

Եւ փոխանակուած հարց պատասխաններէն պարզուեցաւ, որ եկուորները թշնամիներ չէին, այլ Անտոքի գազաթին թառող արծիւները:

Անոնք ալ միացան մեզի եւ միասին մտանք դիւղ:

Յանկարծ ամբոխի մէջէն ծերունի մը մօտեցաւ Գէորգին յուզուած, եւ ժպտուն դէմքով սկսաւ խօսիլ.

— Կը յիշե՞ս Մէճէլներու կաժը, — ըսաւ ծերուկը, — ուրկէ խփեցիր թիւրք ձիաւորին, ու ձիաւորը փախաւ հովիտը: Երանի՛ այն ատեն...:

Ու ծերունին դառնալով իր շուրջ գտնուողներուն.

— Գիտէ՞ք ով է այս կտրիճը, որ ձեր ետեւէն պոռայ. ասի Մկթինք գիւղացի է. Ծ...ի տղան: Երբ Տամատեանը եկաւ այս կողմերը Ընկերութիւն քարոզելու, մեր Սասունէն ամենէն առաջ այս կտրիճը զէնք վերցուց եւ գնաց անոր ետեւէն: Է՛յ, մեռնիմ ձեզի, տղե՛րք, տեսէ՛ք այդ Ասլանին, մեր զէնք վերցուցած օրէն սկսեր է կռիւ մինչեւ բանտ երթալու ժամանակը:

Եւ ծերունին սկսաւ խորասուզուիլ անցեալ յիշատակներու խորը եւ անկէ մի առ մի դուրս հանել այն դոհարները, որոնց ամէն մէկը Գէորգի ճակատը կը զարդարէր: Բայց Գէորգ իրեւ համեստութեան մարմնացում, չուզեց խօսեցնել ծերունին իր մասին եւ ընդհատեց խօսակցութիւնը:

— Է՛հ, Աբօ, — ըսաւ ան, — մի՛ քրքրեր անցեալը, որուն հետ խառն են շատ մը տխուր եւ ուրախ յիշատակներ: Գուն այն միայն ըսէ, թէ ո՞ւր կը վազէիք այս կողմէն, ի՞նչ հարա-հրոց էր որ կը բարձրացնէիք:

— Ասլանս, Ասլանս, — պատասխանեց ծերունին, — ձեր բանտ երթալէն ետք, երբ մենք նորէն գերի դարձանք քրտու եւ տաճկի ձեռք, ա՛լ մեզ հանգիստ չկար ան օրէն ասդին: Ամէն օր մեր քաղաքը աս է եղեր քամու ու թիփուն առաջ մեր ճծիրով փախած ենք սարը, ամէն օր Քիւրտեր կու գան խարճ ու խարաճ ուղելու, եւ ծեծ, թալան ու զուլում... Բայց ի՞նչ ընենք, չկայ մալ, չկայ տովլաթ, որ ձեռք բերենք քանի մը ծակ երկաթ, որ դիմաւորենք անոնք: Ահա՛ այսօր գեղի պահապանը լուր բերաւ, որ խումբ մը զէնքով մարդիկ կուգան: Քիւրտեր են, որո՞ւ մտքէն կ'անցնէր, որ լաօ, դո՛ւ ես, որովհետեւ դո՛ւն բանտն էիր, դո՛ւն շղթաներով կապուած վանդակի մէջ դրուած էիր. օ՛խ, հիմա ազա՛տ ես:

— Այո՛, Աբօ, ըսածներդ ճիշդ են, անոնք մարդիկ չեն. անոնց մօտ քաջութիւն չկայ: Երբ կը տեսնեն իրենց դէմը կանգնող կայ՝ վախկոտ նապաստակ կը դառնան, իսկ երբ կը տեսնեն դէմերնին կանգնող չկայ, մէյ-մէկ առիւծ կը դառնան: Աբօ, արօ, եթէ չմեռայ եւ հասայ այս ընկերներով այն երամին, որ բոյն է դրեր այնտեղ, ուր մենք կ'ապրէինք երբեմն, այս երկիրը նորէն իր նախկին վիճակին պիտի հասնի:

— Մեռնիմ քէ Գէորգ, — բացագանչեց ծերունին դողդոջ ձայնով, — մէկ էլ Սասունը այն օրերուն մէջ տեսնեմ, ու թող քո Աբոն Հայոց ազգին մատաղ եղնի: Բայց որդի, դնա՛նք, արդէն պատրաստ կերակուր կայ, քիչ մը անուշ արէք, անկէ ետք դուք գիտէք:

Ընկերներով բոլորուեցանք սեղանի շուրջը. իսկ ծերունին իր խօսքը շարունակեց, մինչ մենք կ'ուտէինք: Ես ուշադրութեամբ կը լսէի զինքը:

— Լաօ, — ըսաւ ան զինք լսողներուն, — անգամ մը այս ձիւանը իր խումբի տղոց հետ գնաց Անտոքի միւս երեսը: Մէկ ալ կը տեսնէ, որ գիւղի մօտ քիւրտ հովիւր ոչխար կ'արածէ: Գէորգ կը կանչէ հո-



Անտոֆի գագաթը, Սխտոր քարի մէջ,
 հայ կիկը իր հօտերը արածելու ժամանակ

վիւր եւ կ'ըսէ. «Լաօ՛, մենք Փետայիներ ենք, եկած ենք, մեզմէ խը-
 լած տաւարնիդ ետ ստանալու»: Հովիւր կը թողու կը փախչի ու հա-
 ւարն է կը ձգէ չորս կողմը, ամէն տեղէ թֆանքուոր քիւրտեր կը թա-
 փին մեր կտրիճներուն վրայ, եւ կը սկսի կռիւր: Հրացաններու ձայ-
 նը սար ու ձոր կը լեցնէ: Մերոնք տասը, տուշմանը հարիւրներ...
 Կռիւի ընթացքին Գէորգի անվախութիւնն ու արհամարհանքը կը
 կատղեցնեն քիւրտերը, որոնք սալաւաթ տալով առաջ կը շարժին:
 Բայց երբ քանի մը հատը խումբալով գետին կը գլտորին, քիւրտերը
 կը փախչին եւ տղերքը աւարով կը դառնան: Այն օրէն քիւրտերու
 մէջ կ'իյնայ սարսափը եւ չեն համարձակիր մէկով երկուսով ճանա-
 պարհ քալել:

Մերունին դեռ երկար կը շարունակէր իր պատմութիւնները,
 որոնց մէջ միշտ Գէորգի փայլուն ճակատը կը ցուցադրէր, երբ Գէորգ
 հրահանգեց մեկնիլ, տեսնելով որ արդէն ամէնքս ալ վերջացուցած
 ենք մեր ճաշը:

Ի դուր անցան ծերունիին թախանձանքները խումբը այդ գիշեր
 իր խրճիթին մէջ պահելու համար: Գէորգ երբեք չէր համաձայնած՝
 յայտարարելով, որ պէտք է ժամ առաջ տեղ հասնին:

— Է՛հ, — ասաց ծերունին, — գնացէ՛ք, Աստուած ձեզ հետ,
 փառք որ ձեզ անգամ մըն ալ տեսայ իմ յարկիս տակ. այժմ կը հա-
 ւատամ, որ նորէն Սասունը առաջի Սասունը պիտի դառնայ:

Եւ արդէն խումբը կազդուրուած՝ պատրաստուած էր, երբ հնչեց Գէորգի խրոխտ ձայնը:

— Տղէ՛րք, յառաջ, դէպի Անտոք:

*
**

Սրբազան հողի վրայ ոտք դրած էինք: Արշալոյսը իր աղօտ լոյսը տարածած էր չորս կողմը, գայլերն ու աղուէսները քաշուած էին իրենց որջերը, իսկ Ծովասարի սառ քամին կը փչէր եւ այդ էր միայն բնութեան հանգիստը խանգարող: Անիծուած քամին ձիւնը գետնէն վերցնելով դէս դէն կը շարտէր, բոլոր տղաներն ալ իրենց երեսները սեւ փուշիներով ծածկած էին, ձեռները իրենց գրպանները կամ ծոցերը դրած:

Եւ այսպէս հասանք հին օրերից քանդուած եկեղեցիի մը առաջ, ուր եւ կանգնեցանք:

— Կը տեսնէ՞ք, — ըսաւ Գէորգ, — այս եկեղեցին ալ քանդուած է: Ատենօք երբ հազարաւոր բարեպաշտ հայեր հաւաքուած իրենց ջերմեռանդ աղօթքը կը մատուցանէին, յանկարծ հարիւրաւոր քիւրտեր կը յարձակին եւ անդէն մարդիկը կը կոտորեն, անօթները կը թալլեն, եկեղեցին կատարեալ սպանդանոցի վերածելով: Իսկ դեղեցիկ հարսներն ու կոյս աղջիկները կ'առեւանդեն... եւ Հայաստանի դժբախտ ժողովուրդը հազարաւոր այս տեսակ զուլումներու ենթարկուած է, այս տեսակ դէպքեր շա՛տ ու շա՛տ կան:

Հերոսի դէմքը կրկին մռայլուեցաւ. ան չէր ժպտեր, չէր ալ խօսեր. կը քալէր լո՛ւռ ու մտախո՛հ:

Ես կը մտածէի լռութիւնը խզել, երբ ընկեր մը զիս կանխեց եւ հարցուց Աւոյին.

— Է՛, Աւօ՛ ջան, դու քու պատմութիւնդ կիսատ թողուցիր. ըսէ՛, մեռնիմ քեզի, ինչպէ՞ս կտրեցիք ձեր ամրակուռ շղթաները եւ բանտի հաստ պատերը ինչպէ՞ս ծակեցիք. գուցէ օրին մէկը մեզ ալ դժբախտութիւն մը պատահի եւ մենք ալ երթանք հոն:

— Դժբախտութիւ՛ն, — ընդմիջեց Գէորգ, — այդ դժբախտութիւն չէ, յեղափոխական կեանքի մէջ շատ բնական, շատ սովորական դէպք. իմ կարծիքով երջանկութիւ՛ն է, քանի որ քու հայրենիքիդ համար կ'երթաս:

Իսկ Աւոն այսպէս շարունակեց իր ընդհատած պատմութիւնը.

— Երբ մենք Յըռ-Ֆըռ քարի մօտերը պահուած էինք, տեսանք որ մեզ չորս կողմէն պաշարած են: Մեր քաջը (ակնարկելով Գէորգին) չէր ուզեր բնաւ անձնատուր ըլլալ, սակայն քանի որ չկար ռազմամթերք, կա՛մ պէտք էր անձնասպան ըլլալ եւ կամ՝ անձնատուր: Եւ զօրքերը մեզ բռնելով, բերին Մուշ, անկէ քչեցին Բաղէշ եւ յետոյ վճիռ արձակեցին ու նորէն դարձուցին Մուշի սվարի-ղշլան: Դուն կը հարցնես, թէ ինչպէ՞ս փախանք: Բայց ես առաջ նկարագրեմ մեր կեանքը: Մենք 6-7 ընկերներ էինք, մեզ 2-3 բաժնած կը պահէին: Այս

կտրիճին նեղ կու գար այդ սենեակը եւ կը մտածէր կերպով մը դուրս
 նետել ինքզինք. բայց չէր ուզեր մինակ փախչիլ, պէտք էր Մուրատն
 ալ միասին: Եւ այդ պատճառով Գէորգը եւ Մուրատը տարբեր յար-
 կաբաժիններու մէջ բանտարկուած էին: Հնար ալ չկար, որ դոնէ ան-
 դամ մը զիրար տեսնէինք, չար Ներոնի նման պահապանը շարունակ
 մեր գլխուն վերեւ կանգնած էր: Գէորգը օրերով, ամիսներով այս
 բանին վրայ կը մտածէր: Վերջապէս գտաւ: Հնարագէտ Գէորգը մեր
 սենեակէն մինչեւ Մուրատի սենեակը լուցկիի տուփերէն հեռախօս մը
 հաստատեց եւ սկսաւ խորհրդակցիլ Մուրատի հետ: Մուրատ կը մեր-
 ժէր փախչելու առաջարկը, պատճառներ առաջ բերելով եւ խորհուրդ
 կու տար Գէորգին, որ ինք փախչի, եթէ վստահ է թէ պիտի յաջողի:
 Կտրիճը շատ խնդրեց ու թախանձեց, որ միասին ըլլայ Մուրատն ալ,
 սակայն Մուրատ չհամոզուեցաւ: Եւ տեսնելով, որ համոզելը անկա-
 րելի է, Գէորգը սկսաւ գործի: Այն գիշեր ու ցերեկ հանգիստ չունէր,
 երբեմն կ'ուզէինք իրեն օգնել՝ չէր թողուր եւ կը խնդրէր, որ պառ-
 կինք ու հանգստանանք: Իր անկողինը փռած էր այնտեղ՝ ուր կ'աշ-
 խատէր բանալ ծակը. փորած հողը իր գրպանները կը լեցնէր, առանց
 յայտնելու թէ ո՞ւր կը տանէր: Մեր սենեակը բանտի երկրորդ յարկն
 էր եւ փախուստի ծակը կը պատրաստուէր դուրս ինկած կլոր պա-
 տուհանի մը յատակէն, որ երբեմն մոլլաներու իբրեւ «էզան»ի տեղ
 ծառայած էր: Ամէն բան պատրաստ էր: Կը մնար վերջին ճիգ մը եւս
 թափել Մուրատը համոզելու: Գէորգ նորէն դիմեց նահապետական
 հեռախօսին. — նորէն մերժում:

Այլեւս սպասել վտանգաւոր էր: Ամէնքս ալ կը սպասէինք որոշ-
 եալ ժամուն. մեր սրտերը ոյժով կը բարախէին եւ մենք անհանդարտ
 էինք. մինչդեռ Գէորգ ինքզինք այնքան սառն, հանդարտ կը պահէր,
 իբրեւ թէ ոչինչ կար: Չէինք գիտեր ուրկէ՛ ձեռք անցուցած էր այժի
 մազ, յաջորդ գիշերն ամբողջ այդ մազը սկսաւ ոլորել եւ պարան
 պատրաստել:

Վերջապէս հասաւ ժամը: Գէորգ վերջին անգամ դիմեց հեռա-
 խօսին ու երկար թախանձեց, մինչեւ որ իր ճիգերուն մէջ անյաջող՝
 վշտահար մէկ կողմ թաղուեցաւ ըսելով.

— Ա՛խ, յամառութի՛ւն, յամառութի՛ւն:

Դուրսը սաստիկ ցուրտ էր, այնպէս որ մարդ չէր կրնար կանգ-
 նիլ, — շարունակեց Աւոն դարձեալ իր պատմութիւնը: Մեր թիւրք
 պահապանը մտած էր իր «խովուշ»ին մէջ: Երկինքն ալ աւելի ամպո-
 տեցաւ եւ սկսաւ ձիւնախառն անձրեւ տեղալ: «Հրաշալի եղանակ է»,
 — ըսաւ դուրս նայելով Գէորգ, որ ամէն նախնական կարգադրութիւն
 ըրած, մեզի մանրամասն բացատրած էր, թէ որ կողմէն եւ ի՞նչպէս
 պէտք է երթանք: Ու սեւ պարանը պատուհանի երկաթին կապելով
 սկսանք դէպի վար սողալ:

Գիշերուան ժամը 3-ին մենք արդէն ազատ դուրս ելած էինք:
 — Ո՞վ է, — լսուեցաւ պահապանին ձայնը.

— Ճամբորդներ՝ — պատասխանեց Գէորգ անտարբեր :

Եւ սկսանք արագ-արագ հեռանալ բանտի պատերուն ներքեւէն ու փողոցներէն, մինչեւ որ բռնեցինք ապահով ճամբան :

Մենք հասանք սրբավայրը, բայց արեղակը դեռ չէր ծագած... Աւոն իր պատմութիւնը լրացուցած էր երբ նկատեցինք, որ արդէն մենք ալ հասած ենք Անտոքի ստորոտը...» :

**

Գէորգ Չաւուշ իր խումբով օր մը կը մնայ Անտոքի շրջանը : Երկրորդ օրը ժամը 12-ին կ'անցնի Առաքելոց վանք, ուր կը հասնի ժամը 2-ին : Վարդապետի յանձնարարութեամբ խումբը հոն կը մնայ երկու օր, լաւ մը հանստանալու, ցրտացած մարմինները տաքցնելու եւ ապա նոր հազուստեղէն՝ գուլպայ, կօշիկներ եւ զանազան պիտոյքներ ճարելով մեկնելու համար :

Հո'ն է, որ Գէորգ Չաւուշ կ'իմանայ թէ Աբրոն եւ Թովմասը ձիւնի տակ մնացած ու խեղդուած են : Ան կ'որոշէ ամէն դնով անոնց դիակները հանել ձիւներու մէջէն : Ուստի անմիջապէս ընկերներուն հետ ճամբայ կ'ելլէ դէպի Մեզրէուր սարը :

Գէորգ Չաւուշ կ'ըսէ .

«Իսկոյն անցանք Սասուն, ուր գտանք մի քանի ընկերներ ալ : Խարախանեան Միսաք եւ Համբարձում քանի մը ընկերներով անցան-դէպի Տաւրոսիկ, իսկ ես եւ Յարութիւն մնացինք, որպէսզի Աբրոյի եւ Թովմասի դիակներ հանենք ձիւնի տակէն : Հանեցինք, բերել տըւինք քահանայ, պատարագ ընել տուինք եւ թաղեցինք մեր ընկերները» : Այսպէս ահա, Աբրոյի մարմինը իր մահէն 45 օր ետք կրցան գտնել ու հողին յանձնել :


Գէորգ անկէ ետք կ'անցնի Հրայրի մօտ եւ անոր թելադրութեամբ որոշ ժամանակ մը կը մնայ աչքէ հեռու, աննշմար տեղեր :

Սասնոյ այս հերոսական կռիւներու մասին օրը օրին կը տեղեկացնէին «Դրօշակ»ին :

Նոյն օրերուն տեղի ունեցան Էրզրումի ցոյցերը :

ՆՈՐ ԳՈՐԾԻԶՆԵՐՈՒ ՆԵՏ

Երբ ամէն մարդ շուարումի ու վհատումի մէջ էր, Դաշնակցութեան հիմնադիրներէն Ռոստոմ, որ կը խմբագրէր «Դրօշակ»ը, կը թողու ժընեւը եւ կ'անցնի Էրզրում : Անոր ժամանումով նոր թափ եւ նոր ուղղութիւն կը ստանայ յեղափոխական գործունէութիւնը Էրզրումի եւ Պիթլիսի նահանգներուն մէջ : Ան իր շուրջ կը համախմբէ այնպիսի ընկերներ, որոնք լաւ ըմբռնած էին յեղափոխութեան նպա-



ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ
(1862—1915)

Մասնոյ Ահորոնք գիւղացի: 1890 թուին կը ձեռնադրուի կրօնաւոր եւ այնուհետեւ կը վարէ բազմաթիւ պաշտօններ: Երկար տարիներ Ս. Կարապետի վանահայր: Մասնակցած է Սասունի եւ Տարօնի բոլոր յեղափոխական գործերուն: 1915 թուին թիւրքերը զինք ողջ-ողջ այրեցին:

տակը եւ պատրաստ կռուելու եւ զոհուելու իրենց գաղափարներուն համար:

Ան հիմը կը դնէ վեհ ու սրբազան գործի մը, որ անշեղ կերպով շարունակեցին իր շուրջ խմբուողները, որոնք մեկնեցան գաւառները որպէս գործիչներ: Անոնց շարքին մէջ կը գտնուէին Հրայրը՝ Արմենակ Ղազարեան (Բասէն), Թաթուլ՝ Արամ Արամեան (նախ էրզրում, ապա Սասուն), Տուրպախը՝ Յարութիւն Այվազեան եւ Չալլաղը՝ (Սնուս եւ Սասուն), Աղբիւր Սերոբ՝ Վարդանեան (Ախլաթ), Աբրոն՝ Մկրտիչ Սահակեան եւ Թուման (Սասուն եւ Տարօն):

Այս Դուրան-Բարձրաւանդակի շրջանին մէջ եղած կուսակցական գործունէութեան համար կ'արժէ կարգաւ Հրայրի նամակները «Դրօշակ»ի մէջ(): Հրայր Հնչակեան կուսակցութեան սիւներէն մէկն էր եւ ղեկավարը 1893-ի Մասնոյ շարժումներուն:*

Սասունի պատասխանատուները՝ Թաթուլն ու Աբրոն կը զոր-

(*) «Դրօշակ», 1895, թիւ 4 եւ 9:

ծակցին Վարդան վարդապետի հետ, որուն յեղափոխական կեղծանուններն էին Յեսու եւ Վկայ : Այս ծածկանունները իրապէս կը համապատասխանէին իրեն : Ան Խրիմեանի ժամանակէն սկսած մինչեւ իր մահը եղած է բոլոր դարձերու եւ դէպքերու վկան ու միաժամանակ Յեսուի նման ժողովրդական առաջնորդ :


Վարդան վարդապետ սկիզբները կ'ընթանար Հայրիկի եւ Սարեանի ընդդած ուղիով, յետոյ ծանօթանալով Տամատեանին, ներսէս վարդապետի հետ միասին կ'օժանդակեն Հնչակեաններուն : Աբրոյի միջոցաւ կը դառնայ ամենաջերմ կուսակիցը Հ. Յ. Դաշնակցութեան եւ Դուրան-Բարձրաւանդակի ամենամեծ կեդրոնական անձնաւորութիւնը :

Վարդան վարդապետ մեծ դեր կատարեց 1895-1896-ի ամենածանր օրերուն, իբրեւ առաջնորդական փոխանորդ եւ Դուրան-Բարձրաւանդակի կեդրոնական անձնաւորութիւն. անոր վրայ կ'իյնային ո՛չ միայն հոգեւոր ու կրթական պէտքերը հոգալու պարտականութիւնները, այլ նաեւ հայութեան շահերու պաշտպանութիւնը, կառավարութեան եւ քիւրտ տարրի առջեւ : Իր միջոցաւ էր, որ կը ներկայացուէին դաւառի հայութեան ցաւերը Պատրիարքարանին, կառավարութեան, եւրոպական քննիչներուն եւ այլուր : Բայց իբրեւ յեղափոխական մարմնի մը անդամ, պէտք է մտածէր նաեւ իր ժողովուրդի ինքնապաշտպանութեան կազմակերպման մասին ու միջոցներ պոնէր զայն գինելու համար :

Վարդան վարդապետ կրցաւ այս ծանր պարտականութիւնը կատարել 1895-1896-ի արիւնոտ տարիներուն, յաջողելով կոտորածէ ազատել Դուրան-Բարձրաւանդակի ժողովուրդին մեծ մասը :

Ինչպէս տեսանք, Սասնոյ դէպքերու առիթով եւրոպացիներու թէ թիւրք կառավարութեան կողմէ քննիչներ զրկուեցան : Վարդան վարդապետ հո՛ս է որ կրցաւ ցոյց տալ իր քաղաքական ամբողջ իմաստութիւնը : Ան ակնյայտնի կերպով հրապարակ չիջաւ, բայց կըրցաւ ցոյցեր կազմակերպել, հանրապրութիւններ դրել տալ, ցոյց տալով թէ՛ կառավարութեան եւ թէ՛ այ եւրոպական յանձնախումբերուն՝ երկրի ժողովուրդին տաժանելի կացութիւնը : Յաջողեցաւ պարզել կառավարութեան բռնած սխալ ընթացքը, եւ փաստել անոր յանցաւոր ձգտումը՝ քայքայելով եւ կոտորելով Սասնոյ Հայութիւնը : Այս բոլորը կ'իրագործէր ժողովրդական ներկայացուցիչներու միջոցով, ինք միշտ մնալով վարագոյրի ետեւ իբրեւ դրդող ու թելադրող ոյժ :

1895 թուականի Հոկտեմբերէն ետք Սասունի եւ Տարօնի մէջ կեանքը համարեա թէ խաղաղ վիճակ ունեցաւ : Վերաշինութեան աշխատանքները սկսան ու հայերը իրենց քանդուած տնտեսութիւնները վերականգնելու վրայ էին : Անոնք հազիւ թէ կրցած էին շունչ մը առնել ու մոռնալ իրենց անցեալի արհաւիրքի օրերը, երբ կը հասնի Պիթիւսի կոտորածի դոյժը :



№ 14 Գեղամի պրոպանիերի գտնուածքը Քիբլիսում—Скелеты заживо сожженных бьженцевъ въ Битлиць.
Ետն հայ էս դու ու մեռած չէ քո մեզ ոգին զո նահույսաց, հիղիր՝ - Երևի
Միլիոն նահատակ ունեն ու պարտը՝ նրանց հա նդեպ: Դիղիր՝ որ զԵ -
ԴՈՒՐՅԱՆ Մեզ է սուրբ լեռը. քո Արարատ: Դիղիր որ անարգված ու
Նահույան մայր հողդ է հեճում ու բնչ կառչում: Դիղիր՝ որ տարեգիր ու
անդատան եղբայրներ ունես սիրույամ աղիարհող մեզ: Դիղիր ու համահուճվիր:

Այս բոլոր մեծ սոսկում առաջ կը բերէ Սասունի եւ Տարօնի ժողովուրդին մէջ ու պահ մը մտածել կու տայ անոնց, թէ վտանգը կըրնայ իրենց ալ մօտենալ. հետեւաբար ամէն միջոց ձեռք պէտք է առնել՝ դիմակալելու դալիք փոթորիկը:

Թիւրք կառավարութիւնը, քիւրտ ղեկավարներու օժանդակութեամբ, իրենց պաշտօնեաներու եւ դործակալներու միջոցաւ, սկսան դրդուել քիւրտերը հայերու դէմ:

Այս լուրը իմանալուն պէս, Վարդան վարդապետ անմիջապէս ժողովի կը հրաւիրէ Ղաբիլաթներու գլխաւորները եւ կառավարական պաշտօնեաները:

Թալիպ էֆէնտին, որ անոնց բոլորին մէջ ամենէն ազդեցիկն էր, ըլլալով հեղինակը Սասունի կռիւներուն եւ գլխաւոր ոգին ջարդարարներու, ջանաց ապացուցանել, թէ Պիթլիսի կոտորածին պատճառը եղած են հայերը, որովհետեւ, իբրեւ թէ յարձակած են մղկիթին վրայ եւ հոս ու հոն ալ պատրաստութիւններ տեսած Թիւրքերը կոտորելու: Թալիպ էֆէնտի կարծիքով, պէտք է Մշոյ հայերը դադրեն, որպէսզի Մուշի մէջ ալ կոտորած չպատահի:

Վարդան Վարդապետ իր համոզիչ խօսքերով կը չէզոքացնէ անոնց բոլոր չար մտադրութիւնները: Եւ ոսկիներու ազդեցութեամբ ալ ընդունիլ կու տայ իր առաջարկները: Այսպիսով անոնք իրարմէ կը բաժնուին իբրեւ վստահելիներ:

Ատկէ ետք հայերը իրենց երգիքներուն տակ կ'ապրին հանգիստ կերպով:

Չանդուածային կոտորածները չէին սկսած, կողոպուտն ու ասպատակութիւնը նուազած էին, միեւնոյն ատեն Մշոյ մէջ ձերբակալուածները մեծ մասով ազատուած եւ կամ ալ անոնց մէկ մասը հեռուները աքսորուած էին: Այդ միջոցին էրզրումի բանտէն կ'ազատի Հրայրը ու կը վերադառնայ իր հայրենի գիւղը:

Պաղաղութիւնը սակայն փոթորիկին նախորդող դադարի մը կը նմանէր. ամէն չնչին երեւոյթ սարսափ կը սփռէր ու ջղային վիճակի մէջ կը պահէր ժողովուրդը: Ամէն վստահութիւն դէպի կառավարութիւնը վերցած էր ամէն ոք նոր աղէտներու կը սպասէր: Թիւրքն ու Քիւրտը չէին ծածկեր իրենց խօսքերը, թէ յարմար առիթի մը կը սպասէին՝ վերջնականապէս մաքրելու համար հայ ժողովուրդը:

Թիւրք կառավարութիւնը շուտով պաշտօնանկ կ'ընէ Մուշի միւթէսարիֆը՝ իբրեւ թոյլ մարդ, իսկ Վարդան Վարդապետը կը հեռացուի պաշտօնէն առանց որեւէ պատճառաբանութեան, կղզիացուելով Ս. Կարապետ վանքին մէջ:

Այս լարուած եւ սպասողական վիճակը կը ստիպէ ժողովուրդի մտածող մասը արթուն մնալ ու պատրաստուիլ դալիք փորձանքներու:

Հրայր Մշոյ դաշտին մէջ եւ Սերոբ Աղբիւր Ախլաթի մէջ կը կազմակերպեն գիւղերը ու կը լծուին ինքնապաշտպանութեան քարոզ-

չութեան : Կոտորածի տարիներուն փորձը ցոյց տուած էր , որ ինքնապաշտպանութեամբ միայն հնարաւոր է փրկել ժողովուրդը : Այդ պատճառով մարդիկ դիւրութեամբ կը հետեւին իրենց խորհուրդներուն ու թելադրութիւններուն : Հրայր ու Սերոբ իրարու հետ կապ կը հաստատեն եւ կարճ ժամանակի մը ընթացքին կը յաջողին կազմակերպել Գուրան-Բարձրաւանդակի ամբողջ շրջանը :

1897 Յուլիս ամսուն Վասպուրականի կողմէ Ախլաթ կը հասնի Գուրգէնը իր փոքրիկ խումբով եւ կը միանայ Սերոբին : Անոնք անվըհատ եռանդով մը կը լծուին կազմակերպչական նոր աշխատանքներու ու այդ նպատակով ալ կը խնդրեն օժանդակութիւնը Հ. Յ. Դաշնակցութեան Անդրկովկասի մարմիններուն :

Պիթլիսի ամբողջ շրջանը կազմակերպելէ ետք , «Սասնոյ Զորի Կեդրոնական Կոմիտէ» անունով իրենց ուշադրութիւնը կը դարձնեն Մշոյ եւ Սասնոյ վրայ : Տեղացիներէ կազմուած ղեկավար խումբ մը Ախլաթ ձգելով , իրենք կ'անցնին Սասուն եւ Մուշ :

Գէորգ Չաւուշ բանտէն նոր փախած էր եւ Հրայրի խորհուրդով զգուշութեամբ կ'ապրէր Տալուորիկի եւ Սպաղանքի թաղերուն մէջ : Ան որքան որ աննշմար կը մնար , բայց եւ այնպէս կ'աշխատէր , որ հայ ժողովուրդին մէջ վառ մնայ յեղափոխութեան ոգին :

Ահա՛ թէ ի՛նչ կը պատմէ Գէորգ Չաւուշ .

«Անդրանիկ ալ եկած էր ու մեր մօտ մնաց մինչեւ գարուն : Գարնան սկիզբները Սերոբ ու Գուրգէն իրենց խումբով եկան Սասուն : Հազիւ թէ տասը օր եղած էր իրենց գալը , երբ Թալիպ էֆէնտին ալ Սեմալ հասնելով սկսաւ խիստ խուզարկութիւններ ընել , բայց չկարողացաւ ոչ մէկը ձեռք անցընել» :

Կառավարութիւնը սկսաւ կասկածելիները հետապնդել : Աղբիւր Սերոբ երբ կ'իմանայ , որ զինք եւս կը փնտռեն , կը հրաւիրէ իր զինակիցները եւ զիրենք կը լուսաբանէ բացատրելով Թալիպի նպատակն ու խուզարկութեանց պատճառները , եւ յետոյ կ'աւելցնէ .

— Պէտք է , որ ես նորէն վերադառնամ Ախլաթ , անոր համար որ արդէն ծանօթ եմ այս շրջանի Հայութեան . կրնայ ըլլալ իմ ներկայութիւնս վնաս պատճառէ գործին , ու մենք չկարենանք հասնիլ մեր նպատակին : Զիս կը փոխարինէ Գուրգէնը , ու ան կը յարատեւէ կազմակերպել մնացած անկազմ շրջանները : Գուրգէնը կառավարութեան աչքին յայտնի անձ մը չէ դեռ , որով իր ներկայութիւնը առանձնապէս թիւրք պետութեան ուշադրութիւնը չի գրաւեր Սասունի , Մուշի եւ իր շրջաններուն մէջ : Ախլաթ մեկնելով շատ աւելի կըրնամ օգտակար ըլլալ զէնքի փոխադրութեան գործին՝ Վասպուրականէն եւ Անդրկովկասէն դէպի Սասուն :

Աղբիւր Սերոբի մեկնելէն ետք , Գուրգէն կը լծուի գործի , իրեն կը միանայ Գէորգ Չաւուշ : Անոնք իրենց համար կեդրոն կ'ընտրեն Սպաղանք գիւղը : Կը պտրտին դիւղական պարզ տարազներով , որ-

պէսզի աննկատ մնան եւ յայտնի չըլլայ, թէ Ֆետայի կամ օտարներ են :

Գուրգէն նամակագրութեամբ թէ անձնական շրջագայութեամբ կը ղեկավարէ կուսակցական գործերը ամբողջ շրջանին մէջ : Ազատ ժամերուն կը հաւաքէ Սպաղանքի երիտասարդութիւնն ու պատանիները եւ անոնց դրել-կարգալ կը սորվեցնէ այնպէս մը վարուելով իրենց հետ թէ ինք պարզ ուսուցիչ մըն է :

Միւս կողմէ Գէորգ զինավարժութեան փորձեր կը կատարէ գիւղի երիտասարդութեան :

Զէորգ Զաւուշ կ'ըսէ .

«Մենք Գուրգէնի առաջնորդութեամբ մինչեւ աշուն մնացինք Սասուն : Հոկտեմբերին՝ ես, Գուրգէնը ու երեք ընկերներ ալ մեր հետ գացինք Քոփ գիւղը : Սերոբ ալ իր խումբով հոն եկաւ եւ Անդրանիկ ընկերոջ մը հետ դաշտէն վերադարձաւ, մեր թիւը բարձրացաւ 17-ի :

Գուրգէն Քոփ մեկնած էր կազմակերպչական նպատակով : Կը մտածէր քանի մը օր հոն մնալ եւ ապա շարունակել միւս շրջանները : Երկրորդ օրը սակայն գիւղ կու գան Բալակցի Քիւրտեր՝ Պշարէ Խալիլի մարդիկը . ա'լ յայտնի չէ թէ անոնք պատահամ'մբ եկած են, թէ կռահած են, որ գիւղին մէջ Ֆետայիներ կան :

Բալակցի Քիւրտերը կ'որոշեն հայ Ֆետայիները զինաթափել : Գուրգէն իր զինակիցներով կռուէ խոյս տալու համար կ'որոշէ կռուի չբռնուիլ եւ խումբը անվտանգ գիւղէն դուրս հանել :

Թշնամին սակայն իմացած էր անոնց թաքստոցը եւ պաշարած զիրենք, այնպէս որ որսը ինկած էր թակարդը :

Գէորգ Զաւուշ կ'ըսէ .

— Գիշերուան ժամը 3-ի ատենները երբ տան մը մէջն էինք, պաշարուանք : Սասնոյ Պշարէ Խալիլի մարդիկն էին պաշարողները : Այդ տեղ մեր մէկ ընկեր վիրաւորուաւ, բայց մենք թշնամիին վրայ կրակ բանալով յաջողեցանք դուրս ելնել մեր եղած տեղէն . Քիւրտեր փախան կորսուան, իսկ մենք առինք մեր եարալու ընկեր եւ եկանք Աղբրիկ : Այնուհետեւ Սերոբ իր քանի մը ընկերներով անցաւ Տալուրիկ, իսկ ես, Գուրգէն եւ մի քանի ընկերներ մնացինք Կելիեկուզան, մեր զարնուած ընկերոջ քով : Մեր խեղճ ընկեր ամբողջ 60 օր հիւանդութիւն քաշելէ յետոյ մեռաւ . այդ ընկերոջ անունն էր Կարապետ Կիրակոսեան, Փառկայ գիւղէն :

Գալով մեզի, մենք բաժանուանք երեք մասի, մի քանի ընկերներ մնացին Սերոբի մօտ, Աղանք գիւղ, մէկ ուրիշ մաս Գուրգէնի հետ մնաց Կելիեկուզան գիւղ, իսկ ես, Ռուբէն, Տիգրան, Սեդրակ, Վարդան եւ մի քանի ուրիշներ որոշ գործերով դաշտ կ'իջնէինք շատ ատեն, մինչեւ որ եկաւ գարուն» :

Գուրգէնի կազմակերպչական աշխատանքներուն կ'օգնեն Հրարայր, Գեղամ, Մխիթար Շեխիկեան, Տերգեվանքի Յակոբը, Կայծակ



ԳՈՒՐԳԷՆ
(Բաղդասար Մալոյեան)
(1873—1899)

Վաղարշակը եւ բազմաթիւ այլ գործողներ Սասունէն եւ Մշոյ դաշտէն :

Սասունի եւ Մուշի ժողովուրդը, ողբերուած իրենց զեկավարներով, կը սկսին երգել հետեւեալը .

Դարձեալ փայլեց Սասնոյ գլխին
Ագասաւթեան դրօշակ,
«Կեցցէ հայրենիք» գոչելով
Բարձրացուցին աղաղակ :

Թնդաց, որոտաց ձայներից,
Ողջ աշխարհը հայկական.
Խոււմբ-խոււմբ կու գան հայ գաւակներ
Հայրենիքի օգնութեան :

Գուրգէն, վահան Հրայր-Գժովօ,
Քաջ Անդրանիկ զեկավար,
Տալուրիկի լեռներումը
Շրջում էին անդադար :

Սարսափեցան քիւրտ ցեղերը
Մինչ պալատը սուլթանին,
Հրամայեց շուտ կործանել
Գիրքերը հայդուկներին :

Ահա անգութ Քիւրտն ու Թիւրքը,
Սարսափելի տեսարան . . .
«Ժամանակն է վրէժ լուծել»,
Գոչեց ձայնը հայկական :

Կրակ տեղաց հայ քաջերի
Բնակավայր դիրքերից,
Կոտորուեցին թշնամիներ
Ահռելի գնդակներից :



1898 թուականին մեր ժողովուրդը կը հեծէր անօրինակ բռնութեան ներքեւ. թալան, սպանութիւններ, ոստիկանական ծեծեր, կաշառակերութիւններ, հարկահաւաքութեան զեղծումներ, տուրքերու խստացում, հողերու բռնագրաւումներ եւ Հայերու արտաքսումը գիւղերէն :

Այս բռնութեան եւ շահատակութեան նկարագրութիւնները առատօրէն կարելի է գտնել այդ թուականներու բազմաթիւ տեղեկագիրներու եւ բողոքագրերու մէջ, որոնք ղրկուած են կառավարութեան, Պատրիարքարանին եւ Կուսակցութեան :

Հազիւ քանի մը շաբաթ անցած էր առաջին բախումի օրէն, երբ Սասունի Քիւրտերը քայլ առ քայլ սկսան յառաջանալ դէպի Հեթինք, Աղբիկ եւ Սպաղանք գիւղերը : Սասունցին, որ ազատ եղած էր եւ կը փորձէր իր ազատութիւնը տարածել ամբողջ լեռնաշխարհի Հայութեան վրայ, այժմ ինքը պիտի ենթարկուէր գերութեան վտանգին :

Նման պայմաններ բնականաբար առաջ պիտի բերէին ժողովուրդի մէջ ըմբոստութեան եւ դիմադրութեան բուռն պահանջ մը : Գուրգէն կ'ըմբռնէր այդ պահանջը եւ կը գտնէր, որ Վարդան վարդապետի զիջողական քաղաքականութիւնը արդէն իր դերը կատարած է : Ուստի ան եռանդով սկսած էր քարոզել ժողովուրդին՝ կազմակերպուել բոլոր ճնշող տարրերու դէմ, ինչ ալ ըլլան անոնք :



Բերդակ գիւղի Ռէս Բարսեղը սկսած էր մատնութեան վատ գործին, տեղեկութիւններ հաղորդելով կառավարութեան : Տուած էր արդէն անունները Բերդակ գիւղի շրջակայ կազմակերպութեան անդամներուն ու տեղական վարիչներուն : Կառավարութիւնը անոնց մէկ

մասը անմիջապէս կը ձերբակալէ : Ան կը սկսի նաեւ ուշի-ուշով հետեւիլ Ֆետայիներու շարժումներուն :

Ասոր վրայ Հրայր եւ Գուրգէն(*), որոնք Գուրան-Բարձրաւան-դակի Կեղըոնական Կոմիտէի անդամներն էին, իսկոյն ժողովի կը հրաւիրեն իրենց միւս ընկերները : Ժողովը լսելով Ռէս Բարսեղի ըրած մատնութիւնները կ'որոշէ տեղորի ենթարկել զայն, ու այդ պաշտօնը կը յանձնուի Գէորգ Չաւուչին :

1898-ի Նոյեմբեր ամսուն Գէորգ իր հետ առնելով երկու ընկերներ, կ'իջնէ Սասունէն ու կ'երթայ դէպի Բերդակ : Օր ցերեկով գիւղ կը մտնէ եւ թիւրք ոստիկանութեան աչքին առջեւ դաշոյնի հարուածներով կը սպաննէ Ռէս Բարսեղը ու դարձեալ քալելով լեռ կը բարձրանայ եւ անվտանգ կը հասնի Սասուն :

1899-ի դարնան Գուրգէն իր փոքր խումբով կրկին կը շրջի դաւառները քննական աշխատանքներ կատարելու համար : Ան Ապրիլ 20ին կ'անցնի Մուշ, երկու օր կը մնայ Չորի թաղին մէջ, քննութեան կ'ենթարկէ տեղական Կոմիտէի գործերը, հաշիւները, գէնքերը եւ ապա անվտանգ դուրս կ'ելլէ :

Օղունք գիւղացի Մկրտիչ Երամեան, որ գաղտնի ոստիկան մը եղած էր, կը հետապնդէր Գուրգէնի շարժումները նախ Մուշ քաղաքի Չորի թաղը, յետոյ Տերգեւլանք եւ ապա կ'իմանայ Յրօնք երթալու շիտաւորութիւնը : Ու գաղտնի հեռագիր մը կը հասցնէ Պիթլիսի Ալայ Պէկ կուսակալին :

Ապրիլ 23-ին Գուրգէն կը հասնի Յրօնք : Նոյն գիշերը Պիթլիսէն դուրս կու գայ Ալայ Պէկ զօրքով ու կ'ուղեւորուի Յրօնք : Ապրիլ 25-ի առտուն կանուխ Յրօնք գիւղը կը պաշարուի Պիթլիսէն եւ Մուշէն եկած զօրքերով, ոստիկաններով եւ քիւրտ ու չերքէզ չեթէներով :

Գուրգէն իր ընկերներով կը գտնուէր մարազի մէջ : Թշնամին կը պաշարէ մարազը եւ տանիքէն կրակի կու տայ : Գուրգէն կը հրամայէ իր զինուորներուն դուրս գալ թակարդէն ու կռիւ մղել բաց օդին մէջ թշնամիին դէմ : Բոցի մէջ կորած մարազի դուռը՝ առաջինը, կը բանայ Ղարաբաղցի Փարսաղանը : Բայց դրան դէմ դիրք բռնող զօրքերու համազարկէն անշունչ կը փռուի շէմքին վրայ : Աղջանի Ռուբէնը եւ Մշեցի Տիգրանը կը հետեւին անոր ու Փարսաղանի դիակը իրենց պատնէշ դարձնելով կը սկսին կրակել թիւրք զինուորներուն վրայ : Իսկ ցուիքի վրայէն գետին կը գլորեն Սասունի եւ Տարօնի պատուհասը եղող թալիպ էֆէնտին :

Այդ խառնաշփոթ վիճակին մէջ Գուրգէնը, Մկրտն, Նշանը, Վարդանը եւ Կրպոն ցատկելով դիակներու վրայէն, կրակ կը բանան փողոցն ու տանիքները դիրք բռնած զօրքերուն վրայ եւ փախուստի կը մատնեն զանոնք :

(*) «Յեղփ. Ալպուս», Ա. հատոր, էջ 218 :

Այս կոուլին կը սպաննուի Գուրգէն իր քաջարի 7 ընկերներով :
Թշնամին զոհ կու տայ 13 Թիւրք զինուորներ եւ 10 Քիւրտեր :

Ալայ Պէկի հրամանով կատարած Թիւրք զինուորները կը կտրեն
Գուրգէնի գլուխը, իսկ միւս ընկերներուն մարմինները սայլերու
վրայ դրած կը փոխադրեն Մուշ, ուր կը թաղուին Ս. Մարինէ թաղի
կողի գերեզմանատան մէջ, որ սրբատեղի մը կը դառնայ Մուշի ժո-
ղովուրդին :

Այդ կոուլէն ետք բազմաթիւ զիւղացիներ Մշոյ բանտը կը նե-
տուին զանազան ամբաստանութիւններով : Ոմանք կաշառքով ազատ
կ'արձակեն դարձեալ բանտարկելու զիտաւորութեամբ : Թիւրքերու
գլխաւոր մտահոգութիւնը սակայն միւս Փետայիներն էին եւ կ'ու-
ղէին ամէն գնով ձեռք անցընել զանոնք : Անոնց դէմ արդէն իսկ դաւեր
սարքած էին եւ կը սպասէին արդիւնքին :

Գուրգէնի խումբի Յրօնք զիւղին մէջ կռիւի մասին ժողովուրդը
երգեց հետեւեալը .

1899-ին Ապրիլին քսան եւ հինգին ,

Յրօնք գիւղ շրջանակի պատեցին .

Թիւրքաց զօրքեր գունդ առ գունդ պաշարեցին ,

Կարկուտի պէս հուր եւ գնդակ թափեցին :

Այդ պահուն ուր անձնուէր երիտասարդ ,

Գուրգէն , Տիգրան , Նշան , Ռուբէն , Պարսանդ ,

Դիմադրեցին եւ կոուեցան քաջ գուարթ ,

Ափսո՛ս չեղաւ իրենց օգնող բնաւ մարդ :

Քաջեր ընկան քաջ կոուելով որպէս մարդ ,

Որոնց ազնիւ դէմք կը փայլէր ինչպէս վարդ .

Ապշեցուցին թշնամիներ մինչեւ ցարդ ,

Զէին տեսած երբեք այսպէս ջարդ :

Գուրգէն , Տիգրան , Նշան , Ռուբէն , Յաղջանցին

Իրենց կեանքի բոյսեր ազգին գոհեցին ,

Սուրբ , արիւնով հոդ քար ու փայտ ներկեցին ,

Հանդերձ իրենց քաջ ընկերօք գոհեցին :

Զարթիր Գուրգէն ել Տիգրան երթանք Սասուն

Դուք չէք մեռած , կենդանի է՛ք ձեր անուն

Նլէք , ելէք , խրախոյս տուէք դուք Հայուն

Թէ Հայ թողուց ձեզի համար լոկ անուն :

Հրայր միշտ ծածուկ կ'աշխատէր . իր խրատներով ու քարոզ-
ներով կը ջանար ժողովրդական յուսալքումին առաջքը առնել : Յա-



ՍԵՐՈՒՔ ԻՐ ԶԻՆԱԿԻՑՆԵՐՈՎ

Զախէն աջ կանգնած՝ (1) ԶԱԼԼԱԹ, (2) ԱՌԻԻԾ ԱԻԱԳ, (3) ՍԵՐՈՒՔ ԱՂԲԻԻՐ: Մէջտեղ նստած՝ ՃԱՐՏԱՐ:

Չողութեան համար անհրաժեշտ էր զգուշութեան սահմաններէն դուրս գալ եւ ահաբեկել երես առած մատնիչներն ու դաւաճանները: Հրայր կ'որոշէ նախ տեռորի ենթարկել կարապետ վարդապետ Եսայեանը, Աւրանցի, որ 1894—1895-ի դէպքերէն ետք կեղծ հանրագրութիւններ էր շինած՝ շնորհակալութիւն յայտնելու համար կառավարութեան: Այս գործի կարգադրութիւնը կը յանձնէ Իսօ Կորիւնին:

Իսօ Կորիւն տաքարիւն երիտասարդ մըն էր. ան կ'երթայ Աւրան գիւղը: Վարդապետին յատկացուած երկու ոստիկաններէն զատ տեւապէս կը հսկէին 50 զինուորներ եւս: Ան ներս կը մտնէ վարդապետին մօտ՝ իբր թէ գործով, եւ անոր աջը համբուրելու ատեն ատրրճանակը կ'ուղղէ կուրծքին, տեղն ու տեղը գետին գլորելով զայն, դուրս կ'ելլէ անվտանգ: Երկու թիւրք ոստիկաններ, որոնք կանգնած էին վարդապետի կողքին, շճած կը դիտեն անցուղարձը: Վերջալոյսի աղջամուղջին մէջ Իսօ Կորիւն կ'անհետանայ, ուղղելով իր քայլերը դէպի Հրայրի մօտ:

Սոյն տեռորը մեծ ազդեցութիւն կը թողու Սասունի եւ Մուշի ժողովուրդին վրայ: Եւ զրեթէ այդ ամառ կարեւոր դէպքեր տեղի

չեն ունենար, բացի քանի մը անշշան դէպքերէ որոնք յեղափոխական կուռ կազմակերպութիւնը կը սարսէին՝ Գէորգի, Անդրանիկի, Հրայրի, Զրից Համբարձումի եւ Սպաղանաց Մակարի խումբերուն դէմ:

Գուրգէնի մահուընէն ետք, Սասունի գրեթէ բոլոր կռիւններուն ու դէպքերուն կը մասնակցէր Գէորգ Զաւուշ: Եկող ու գացող բոլոր շարժական խումբերուն համար մնայուն հիմնաքարը ան էր: Տեւապէս մնաց լեռները գիշեր ու ցերեկ, անկողնի տեղ դէնքը գրկեց, իսկ բարձի տեղ՝ քարը:

Ախլաթէն կու գայ Աղբիւր Սերոբ ստանձնելու Գուրգէնի պաշտօնը: Իր հետ էին Սօսէ Մայրիկը իր դաւակնելով, եղբայրը Մխոն, որ նոր բանտէն փախած էր, եւ միւս եղբայրը՝ Զաքարը: Այսպէս ան իր շէն ու հարուստ օճախը քանդած՝ ամբողջական նուիրումով կու գար օգնելու Սասունի եւ Տարօնի ժողովուրդին: Սերոբ իր հետ չի բերեր իր խումբը, նկատելով որ Գուրգէնի խումբին մէկ մասը արդէն ներկայ է, եւ հին ու փորձառու մարդիկ էին:

Սերոբի վերադարձով իր շուրջ կը համախմբուին Փետայիններէն մօտ 17 հոգի, բացի Սասունի եւ դաշտի այն Փետայիններէն, որոնք օժանդակի գերին մէջ էին:

Սերոբ Աղբիւր ա՛յդ օրերուն մեծ ջանք կը թափէ Սասունի ժողովուրդին մէջ համերաշխութիւն առաջ բերելով՝ վերջ տալու աշիրէթական հակառակութիւններուն, որոնք տեղի կ'ունենային ընդհանրապէս աղջիկ փախցնելու խնդրով: Սասունցիք երդում կ'ընեն հնազանդիլ գրուած կանոններուն եւ ենթարկուիլ յեղափոխական վճիռներուն: Այս շրջանին տեղի կ'ունենայ դժբախտ դէպք մը, որ մեծապէս կ'անդրադառնայ Սերոբի ու Գէորգ Զաւուշի փոխյարարերութիւններուն վրայ:

Գէորգ Զաւուշի հօրեղբայրը՝ Աւոն, Առաքելոց վանքի հօտարածն էր: Հոն կը ծանօթանայ Սաս գիւղացի տնտեսուհի Հերմոյին ու փոխադարձ համաձայնութեամբ կ'որոշեն իրարու հետ ամուսնանալ: Իրենց ամուսնութիւնը վանքին մէջ անկարելի ըլլալով, կը ստիպուին միասին մեկնիլ Մկթինք գիւղը՝ հոն կարենալ պսակուելու համար:

Վանքի վանահայրը՝ ծերունազարդ Յովհաննէս Ծայրագոյն Վարդապետ Մուրատեան, հովիւ Աւոյի այդ արարքը սրբապղծութիւն համարելով, անմիջապէս նամակներ կը գրէ Աղբիւր Սերոբին, Ռէս Պետոյին, Աղբի գիւղի Ռէս Սինոյին՝ պահանջելով խիստ պատիժ անոնց հանդէպ:

Աղբիւր Սերոբ եւ կոմիտէի միւս ընկերները չէին կրնար անտարբեր մնալ Աւոյի այս արարքին համար ու անտեսել զայն, որովհետեւ նախ վիրաւորած պիտի ըլլային վանքին վանահայրը եւ երկրորդ՝ ա՛յն հայրենակիցները, որոնք դիմումներ կատարած էին այս առընչութեամբ:

Սերոբի կարգադրութեամբ Աւոն ու Հերմոն կը բերեն Կելիեկուզան եւ հոն հսկողութեան տակ կ'առնեն :

Աղբիւր Սերոբ փութով ժողովի կը հրաւիրէ Կեղրոնական Կոմիտէի անդամներն ու իշխանները , որպէսզի Աւոյին դատը տեսնեն եւ վճիռը արձակեն : Եւ սակայն իշխանները կ'ըսեն .

— Հիմա դուն ես ազգապետը , հետեւարար դո՛ւն պէտք է վրձուես :

Ապա Կեղրոնական Կոմիտէն ու իշխանները լիազօրութիւն կուտան , որ Սերոբ ինք դատէ ու ինք վճռէ :

Սերոբ Աղբիւր դիմելով Գէորգին կ'ըսէ .

— Սիրելի՛ , Գէորգ , Սասնոյ առաջին ապստամբութենէն առաջ Ապաղանքցիները Կելիեկուզանէն աղջիկ փախցուցած էին և այս երկու դիւղերը կռուի բռնուած : Իշխաններու ժողովը եւ Տամատեան հազիւ կրցած էին հաշտեցնել զիրենք եւ անոնց զէնքը դարձնել թշնամիին դէմ : Այդ թուականներէն սկսած՝ աղջիկ փախցնելը արգիւտուած էր , որպէսզի Սասնոյ դիւղերու համերաշխութիւնը չքայքայուի : Գիտես արդէն , որ Սասնոյ իշխաններուն մէջ համերաշխութեան ոգին վառ պահելու համար , վերջ տրուած էր աշիրէթական հակառակութիւններուն , որ ընդհանրապէս առանց ծնողներու հաւանութեան աղջիկ կամ կին փախցնելու սովորութենէ առաջ կու գային : Սասնոյ երեւելիներու ժողովին ներկայ էր նաեւ հօրեղբայրդ Աւոն , որ ուրիշներու կարգին երգում ըրաւ ենթարկուիլ Յեղափոխութեան Բարձրագոյն Դատարանի կողմէ տրուած վճիռներուն : Սակայն հօրեղբորդ այս արարքը , որ կին մը փախցուցած է , պատճառ կը դառնայ երկպառակութեան :

Ու Սերոբ Աղբիւր բացատրութիւն կ'ուզէ Գէորգէն՝ զիտնալու համար թէ ինք լուր ունի՞ այս խնդրէն : Գէորգ բաց սրտով կը խօսի , թէ ինք ո՛չ մէկ բանէ տեղեակ է , իրմէն ծածուկ կատարուած է այդ գործը , որով դառնալով Սերոբին , կ'աւելցնէ .

— Դուն ես այս երկրի մեծը , ինչպէս կ'ուզես , այնպէս դատէ՛ ու վճռէ՛ :

Սերոբ , որ ընդհանրապէս կտրուկ եւ վճռական մարդ էր , բայց նման գործերու մէջ նուրբ վարմունքի անվարժ զինուորական , փոխանակ ինք դատելու եւ գործը տեղ մը կապելու , Գէորգին կ'ըսէ .

— Եթէ դատը իմ ձեռքս է , ես ալ քեզի կը յանձնեմ գործը . դնա՛ եւ դատէ (*) . . . :

Գէորգ կը ցնցուի , գոյնը կը նետէ , իր հպարտութեան մէջ կը վիրաւորուի եւ առանց պատասխանի դիտահակ դուրս կ'ելլէ Սերոբի քովէն :

Ճամբան քալած միջոցին Գէորգ կը սկսի մտածել հօրեղբորը մատին , թէ ի՛նչպէս կրնայ մարել անոր աչքերը , անշարժութեան

(*) Կ. Սասունի , «Տարօնի Պատմութիւն» , էջ 117 :

դատապարտել անոր բազուկները, որ յաճախ կը գրկէր զինք. ինչպէ՛ս խամրեցնէր անոր շրթունքները, որ յաճախ իր ճակատէն համբոյրներ քաղած էին: Գէորգ չէր կրնար դորձադրել այսպիսի հակամարդկային արարք մը:

Ու այսպէս խորհրդածելով կը շարունակէր ճամբան:

Բայց ո՞ւր կը մնայ իր կատարած սրբազան ուխտը, պատուոյն վրայ ըրած երդումը, նոյնիսկ իր կեանքը պէտք է զոհէր իր գաղափարին համար:

Եւ ան մնաց սրբազան գաղափարի եւ զգացումի, երկու տարամերժ հոսանքի մէջ:

Սպաննե՞լ հօրեղբայրը թէ ոչ...

Կ'որոշէ.

— Թող ուխտադրուժ եւ դասալիք կոչուիմ, թող հրացանադարկ իսկ ըլլամ, հօրեղբա՛յր, պիտի չմարեմ աչքերդ, ուր մանկութեանս ժպիտն է ծաղկեր:

Պահ մը մտածելէ ետք, դառնալով ինքնիրեն.

— Գէորգ, դուն ամէն բանէ առաջ Ֆետայի ես, ուխտդ սուրբ է: Եթէ ազգականական սէրը նախընտրես յեղափոխութեան հետապընդած վսեմագոյն նպատակէն, լաւ է որ դաւաճան Մերուժան մը կամ Վասակ մը կոչուիս: Սերոբ մը չէ այս հրահանգը քեզի տուողը, այլ՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Մարմինը, որ ծնած է հայ պատուոյ զգացումէն, հայ տառապանքի արիւնէն եւ արցունքէն: Լսէ՛, Գէորգ, լսէ՛, հայ լլկուած աղջկան աղերսագին ճիչը, հայ մշակին հոնդիւնը, հայ որդեկորոյս մօր սրտակեղէք ողբն ու կականը կուսակցութեան բերնով քեզի կ'ըսեն. «Կատարէ տրուած վճիռը»:

Ան շտապ քայլերով կ'երթայ դէպի ա՛յն տունը, ուր բանտարկուած էին հօրեղբայրն ու կիները: Առանց խօսելու զնդակով մը նախ գետին կը գլորէ իր հօրեղբայրը եւ երկրորդը կ'ուղղէ կնոջ ճիչդ ճակտին: Գէորգ, իր արարքէն յուզումնահար, հրացանը ուսին նետած, կ'ուղեւորի Հարսնգոմերի բլրակները, հո՛ն ողբալու իր դառն վիշտը, դիտնալով որ գործած էր անարդար ոճիր մը:

Գէորգ Չաւուշ բոլորովին անսպասելիօրէն տեսեր էր դատը, սխալ կա՛մ շիտակ, հետեւաբար այժմ անկարելի էր ուղղել զայն: Ամենէն ցաւալին այն էր, որ ինք ոչ մէկ լուր ունէր իր հօրեղբօր յանցանքի մասին ու գործած էր պարզապէս ոճիր մը, չգիմանալով Սերոբի խիստ դիտողութեանց: Այդ ակամայ ոճիրը կը մաշէր, կը տանջէր իր սիրտը, եւ անտանելի ցաւերու ճնշման տակ, թերեւս ինքնիրեն երդում տուած էր այլեւս չտեսնել Սերոբի երեսը, քանի որ այդ պարագային կը զգար, որ ինք պիտի դառնայ ոչ միայն եղբայրասպան, այլեւ «ազգասպան»:

Սոյն դէպքէն շարաթ մը յետոյ Գէորգ երկու ընկերներով կ'երթայ Ղըզըլաղաճ, Սր. Յովհաննու անտառները, ուր Հրայր զինք կը մխիթարէ ու կը հանդարտեցնէ:

Գէորգի մեծ եղբայրը Ղըզրոն, որ նմանապէս քաջ էր ու յանդուզն, լսելով հօրեղբոր սպաննութիւլը իր եղբորմէն, շուտով կը մեկնի ա՛յն գիւղը, ուր ապաստանած էր Գէորգ: Ան կը վճռէ սպաննել եղբայրը:

Ղըզրօ երբ գիւղ կը հասնի, գիւղացիք զինք կը գտնեն անհանգիստ: Եւ երբ կը հասկնան իր նպատակը, տարեցները թախանձագին կը խնդրեն, որ այդ դործը չկատարուի: Այդ միջոցին Գէորգ անհանգիստ ըլլալուն կը պառկի տանիքի մը վրայ:

Ասոր վրայ Ղըզրոն կը մեկնի Աղբի, իսկ Գէորգ տխուր ապրումներու մէջ կը վճռէ թողուլ այդ շրջանը քանի մը օրուան համար ու մեկնիլ: Ուստի ընկերներով կը մեկնին Սլիվան, հոն մոռնալու համար իր կատարած արարքը: Բայց վերադարձին կը հանդիպին Խիյանցի քիւրտ ցեղապետի մը զոլամներուն:

Գէորգ Քիւրտերը տեսնելուն պէս կը կռահէ, որ կռիւը անխուսափելի է, հետեւաբար կը հրամայէ իր ընկերներուն պատրաստ ըլլալ կռուի ազդանշանին: Քիւրտերը հազիւ քանի մը հողի էին: Հայերը երկու կողմերը անցնելով դիրքերու մէջ կը մտնեն: Երբ ձիաւորները իրենց կը մօտենան, Գէորգի ազդանշանին վրայ տղաքը կրակ կը բանան, եւ իրենց կռիւ մղելու դիրքը շատ աննպաստ ըլլալով հանդերձ, բռն կերպով կը դիմադրեն: Զիաւոր Քիւրտերու յաջորդական յախուռն գրոհներուն քաջաբար կուրծք կու տան քանի մը հայորդիներ: Խուճախն այս յանդուզն կռիւը մեծ դարմանք ու հիացմունք կը պատճառէ Քիւրտերուն:

Գէորգի մղած այդ դիւցազնական կռուի պատմութիւնը բերնէ բերան տարածուելով Քիւրտ ցեղախումբերուն մէջ, անոր հմայքը աւելի քան կը բարձրացնեն: Քիւրտեր գովասանական երգեր յօրինեցին Գէորգի մասին, ուր ի միջի այլոց կ'ըսեն. «Գեւօ, լաօ, Հայֆեւաւէ դը Փլահ է» («Գէորգ, ափսո՛ս, որ դուն հայ ես...»):

Գէորգի կողմէ իր հօրեղբոր սպաննութենէն ետք, Սերոբի խումբէն մաս մը անցան հեռու շրջաններ: Անդրանիկ իր ընկերներով ուրիշ տեղ էր: Եւ ահա այս ձեւով Սերոբի խումբը կը տկարանար:

Թիւրք կառավարութիւնը մատնիչ մը գտած էր Գեղաշէն գիւղէն՝ Աւէն, որ Սասունի անցուղարձը կը տեղեկացնէր թշնամիին: Պշարէ Խայիլը կառավարութեան թելադրանքով կրցած էր Աւէն իր ձեռքին մէջ առնել եւ դրամի ոյժով զայն դաւադրութեան դործիք մը դարձնել: Աւէն յանձն կ'առնէ թունաւորել Սերոբն ու իր հետ եղող ընկերները:

«Թէ ի՞նչ թոյն էին ընտրել այդ դաւաճանները, յայտնի չէ(*), բայց կ'ըսեն թէ ծխախոտի միջոցով էին մատուցած զայն Սերոբին: Թոյնը ըստ երեւոյթին ուժեղ եղած չէ. Սերոբը չի մեռնիր, բայց չի ալ հասկնար թէ թունաւորուած է. երբ յանկարծ աչքերը կը մթնին,

(* «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», Ռուբէն, Գ. հատոր, էջ 189:



ԱՂԲԻՒՐ ՍԵՐՈՐ
(Սերոբ - Վարդանեան)
(1864—1899)

ուտքերը կը կթոտին եւ վար կ'իյնայ : Այդ ծանր վիճակին լուր կը տարածեն, հարկաւ հնարովի լուր, որ Բալակցի Քրտերը ապստամբեր են կառավարութեան դէմ եւ վերջինս զօրք կը հանէ անոնց դէմ :

«Մինչ Սասունցիք ու Փետայիները կը կարծէին, որ կառավարութիւնը, զբաղուելով Քրտերով, զիրենք հանգիստ պիտի ձգէ, Հոկտեմբերի վերջերը Պիթլիս քաղաքէն Խուլթի եւ Բոնաշէնի վրայով Ալայ Պէկը կ'ուղեւորուի դէպի Սասուն 500 զինուորներէ բաղկացած զօրաբաժնի մը հետ : Եւ այդ շարժումը կը կատարէ շատ գաղտնի կերպով : Միաժամանակ Խուլթի եւ Խիա'նքի Քիւրտերն ալ շարժման մէջ կը դրուին : Եւ զիշեր մը, երբ ամբողջ Սասունը հանգիստ կը քնանար, վաղ արշալոյսին կը պաշարուի յանկարծ կելիեկուզան գիւ-



ՍՕՍԷ ՄԱՅՐԻԿ

(1868—1953)

ղը, ուր ապաստանած էր կիսամեռ Սերոբ իր ընտանիքի եւ քանի մը զինուորներու հետ:

«Գիւղի մեծ մասը անտեղեակ է, թէ ի՞նչ կ'անցնի կը դառնայ. իսկ միւս մասը շուարած է եւ չի գիտեր իր ընեւիքը, երբ յանկարծ հրացաններ կը պարպուին տնէն դուրս ելլող Սերոբի ու ընկերներուն վրայ: Սերոբ գրեթէ անկարող է շարժուելու, անոր թեւերէն կը բռնեն զինուորները. Սերոբ գրեթէ չի տեսներ, աչքերը մթնած են եւ խումբը ամբողջ զբաղուած է իր կիսամեռ խմբապետի փրկութեամբ: Մէկը միւսին ետեւէն կ'իյնան Սերոբի հաւատարիմ ուղեկիցները, բայց ոչ ոք կը լքէ Սերոբը. կ'իյնայ անոր մեծ եղբայր՝ Ռէս Մխոն, կ'իյնայ փոքր եղբայր Զաքարը. կ'իյնայ որդին Յակոբը: Իր կիներ Սոսէն չի թողուր իր վիրաւոր ամուսինը եւ կը ջանայ կերպով մը բարձրացնել ու տանիլ գոյն լերան դաղաթը: Գիւղացիներէն մէկ քա-

նին ուշքի կու գան, հրացան կ'առնեն ու կը փորձեն ճամբայ բանալ Սերոբին, պատուելով թշնամիի շղթան, բայց այդ փորձը ի դուր կ'անցնի, որովհետեւ Սերոբ արդէն անկարող է շարժելու: Ան կը խնդրէ դնել զինք քարի մը վրայ, որպէսզի վերջին ժամուն քանի մը փամփուշտ կարենայ կրակել եւ այնպէս մեռնիլ:

«Կելիեկուզանի Տէր Քաջ, որու առաջնորդութեամբ տեղի ունեցած էր փորձը Սերոբը փրկելու, կը զոհուի: Երբ Սերոբի բոլոր պաշտպանները արդէն ինկած են եւ միայն անոնցմէ չորսը հաւած լեւրան կատարը, զնդակ մը կու գայ Նեմրութի Ասլան Սերոբ փաշայի տանջանքներուն վերջ դնելու: Կը հասնի զօրքը եւ Պշարէ Խալիլ կը կարէ Սերոբի գլուխը ու գերի առնելով անոր վիրաւոր կիներ՝ Սօսէն, Կահանջի փողը կը հնչեցնէ»:

Այս բոլոր դէպքերը կը կատարուին շատ արագ, հազիւ կէս ժամուան ընթացքին: Լեռնականները նոր կը սկսին հասկնալ թէ ինչ կը կատարուի, երբ Ալայ պէկ արդէն կը հեռանայ Կելիեկուզանի սահմաններէն, իր հետ տանելով ամենաթանկ աւարը՝ Սերոբ փաշայի գեղեցիկ գլուխը, որ ահ ու սարսափ էր կառավարութեան եւ պաշտամունքի առարկայ՝ Տարօնի Հայութեան համար:

Սասնոյ շրջանը շքամ կը մնայ այս արագ գործողութիւններէն: Երբ կ'անդրադառնայ կատարուածին, Սերոբի գլուխը արդէն կը հասնէր Մուշ եւ զօրքն ալ կը հեռանար Սասունէն:

Մուշ քաղաքին թիւրքերը նոր կ'իմանային կատարուածը: Կառավարութիւնը հարիւր ձիաւոր զինուորներ ընդառաջ կը զրկէր պարտուած հերոսական գլուխին, որ ցիցի մը անցուցած կը պտըտողընէին թաղերը, համողելու ժողովուրդը, թէ անպարտելին զլիափառուած է: Անկից կ'անցնէին Պիթլիս քաղաքը, ուր խռնուած ամբոխը եկած էր տեսնելու ա'յն Փետային, որմէ կը վախնային ու կը ստոկալին տարիներով:

Աղբիւր Սերոբի եւ իր կորիւններու յիշատակին կ'երգուի հետեւեալ գողտրիկ երգը.

Գնդակ որոտաց Նոյեմբեր ամսուն,
Պաշարուած եմք մեմք իմ սիրուն Սօսէ.
Զէմք վեր առնելով, վերջի քաջութեան
Քո սիրած Սերոբի ընտրեալ օրն այս է:

Չայն տուաւ Սօսէն. «Սերոբ ջան հոս եմ,
Զիւնուած պատրաստուած, ձայնիդ կը սպասեմ
Քեզի հետ կուտելով, քո կողմին մեռնելով,
Ամէն օր ամէն ժամ պատրաստ է Սօսէն»:

Իսկ քո Սերոբը կեանքիդ հատորը,
Արիւնով ներկեց Տալուրիկ սորը,

Առիւծի նայուածքով դիտում էր բոլորը,
Յաղթական կռուի մէջ էր ամբողջ օրը:

Զարթիր Անդրանիկ, կենսատու ընկեր,
Արդեօք այս պահունն ո՞ր լեռն ես պառկեր.
Քանգրահեր մագերով երեսդ ես ծածկեր,
Յաղթանդամ բազուկով մոսիկդ ես գրկեր:

Հասիր Անդրանիկ, հասիր օգնութեան,
Սերոբ կը գոհուի ի սէր ազգութեան,
Դէ հասի՛ր, շուտ հասի՛ր, հասի՛ր օգնութեան,
Սերոբ կը գոհուի ի սէր ազգութեան:



ԱՂԲԻԻՐ ՍԵՐՈՐԻ գերեզմանը

Սերոբի եւ Գուրգէնի նահատակութիւնը ծանր հարուած մըն էր Սասունի ու Տարօնի բոլոր դաւառներուն եւ Փետայական շարժման համար:

Գուրգէնի մահուրնէն ետք թուլցած էր կազմակերպութիւնը, իսկ Սերոբի մահով կը վերնար ուժեղ եւ մեծ ժողովրդական հեղինակութիւն մը: Այդ պատճառով ալ, Դուրան-Բարձրաւանդակի ընդարձակ շրջաններուն մէջ կազմակերպութիւնը կը մնայ անդեկ եւ յեղափոխական փոքրիկ խմբակներն են միայն, որ կը կարողանան իրենց գոյութիւնը պահպանել:

Մշոյ դաշտի կազմակերպութիւնները գործօն էին եւ լաւ, ու-

նենալով ղեկավար-գործիչներ, ինչպէս Հրայր, Կայծակ Վաղարշակ, Կոտոյի Հաճին, Կառնենի Մկրտիչ, Պոլէեան Մկրտիչ, Ղուկաս վարժապետ, Վարդան Վարդապետ, Գեղամ Տէր Կարապետեան եւ բազմաթիւ այլ գործիչներ: Սակայն Փետտայիները կը զրկուէին մեծ խրմբապետէ մը ու կը մնային առանց ղեկավարի: Այդ գերազանցութիւնը կրնար շահիլ մէկը, որ ծանր դէպքերու մէջ փորձով ցոյց պիտի տար իր արժանիքները. Հրա՛յրն էր ան:

**

Օրուան կացութիւնը Հրայրը միայն կրնար փրկել: Եւ սակայն իր համոզումին մէջ շատ յամառ էր: Անոր կարծիքով Սասունի եւ Տարօնի ժողովուրդը տակաւին պատրաստ չէր յեղափոխական իտէալները իւրացնելու, աւելին՝ դեռ շատ թոյլ էր ռազմական ոգիով ալ: Յետոյ Հայ ժողովուրդի հարեւան ցեղերը պատրաստ չէին դեռ միասին գործելու եւ պայքարելու հայ յեղափոխականներու հետ: Ուստի, ըստ Հրայրի, պէտք էր շատ զգոյշ ըլլալ, անարիւն այլ ապահով գործունէութեամբ պատրաստելու համար յեղափոխութիւնը: Ան այդ համոզումը դոյացուցած էր Սասունի առաջին շարժումէն ետք: Գուրգէնի եւ Սերոբի սպաննութիւններն ալ աւելի զօրացուցեր էին այդ համոզումը իր մտքին մէջ: Այդ պատճառով ան յամառօրէն կը մերժէ յեղափոխական գործի գլուխ անցնիլ ու դառնալ ընդհանուր ղեկավարը Փետտայիներուն: Ան գիտէր, որ մեծ թափով լծուելէն քիչ ետք, պիտի հարկադրուէր փախստական դառնալ, — բան մը, որ բացարձակապէս հակառակ էր իր համոզումներուն եւ տրամադրութեանց: Ընդհակառակը Հրայրի կարծիքը այն էր, թէ փախստականները պէտք է հեռանան երկրէն, կառավարութիւնը ժամանակէն առաջ չարթնցնելու համար:

Այսպիսով ժողովուրդը փաստօրէն մնաց անդլուխ, ենթարկուելով ընդհանուր յուսահատութեան:

Բայց կար երկրորդ՝ Փետտայական-գինուորական ուղղութեան հետեւորդներու խումբը (*): Ժողովուրդի շատ փոքրիկ մասն էր միայն, որ փարած էր այս ուղղութեան: Անոնք բոլորն ալ գերազանցապէս վրէժի զգացումով լեցուած անհատներ էին: Վրէժի եւ կռուի մէջ կարծես նպատակ մը կը տեսնէին եւ չափազանց անհամբեր էին անոր հասնելու համար: Անոնք մեծ մասով փախստականներ էին: Ու թէեւ կ'ընդունէին Արմենակի (Հրայր) ըսածները, բայց գործնականին մէջ շատ կը տարբերէին անկէ: Կը գտնէին, որ Արմենակի եւ իր ընկերներուն ուղղութիւնը ճիշդ է, բայց կ'ըսէին, որ Հայկական Յեղափոխութիւնը կարելի չէ դանդաղեցնել, մինչեւ որ հարեւան ցեղերը նոյնպէս պատրաստուին յեղափոխութեան: Մինչեւ որ մենք քայլ մը

(*) «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», Ռուբէն, Գ. Խատոր, էջ 210:

առաջ ընելու ստիպենք մեր հարեւանները, պետութիւնը իր մեքենայութիւններով երկու քայլ ետ առնել պիտի տայ անոնց: Ատկէ զատ, հայ ժողովուրդը եթէ կը համախմբուի Դաշնակցութեան դրօշի տակ, ատիկա հետեւանք է ո՛չ այնքան քարոզչութեան, որքան կենդանի պայքարի, որու մարմնացումն են Ֆետայիները: Վերջապէս Ֆետայիները փախստական ըլլալով հանդերձ, երկրին հարազատ զաւակներն են եւ ո՞ւր պիտի երթան ու ինչո՞ւ պիտի հեռանան իրենց հայրենի գիւղերէն ու լեռներէն: Իսկ եթէ անոնք հեռանան ալ, իսկոյն նոր Ֆետայիներ առաջ պիտի դան, քանի որ կառավարութիւնը իր հալածանքները պիտի շարունակէ եւ նոյնիսկ պիտի խստացնէ:

Բացի այս առարկութիւններէն, Ֆետայիներու ուղղութեան կողմնակիցները կ'ըսէին, թէ ժողովուրդի դրութիւնը աւելի պիտի ծանրանայ, անոր մէջ եղող վատերը աւելի պիտի բազմանան, աւարառութիւններն ու բռնութիւնները աւելի պիտի սաստկանան, եթէ Ֆետայիները հեռանան, քանի որ անոնց տեղը պիտի բռնեն իսկական աւագակներ:

Ռուբէն կ'ըսէ.

— Փախստական Ֆետայիներու մնացած մասին մէջ ամենէն հին, ամենէն փորձուածն ու քաջը Գէորգ Չաւուշն էր, որ իրօք կարող էր դառնալ Սերոբը փոխարինող անձ մը: Բայց Գէորգը իր բնաւորութեամբ շատ հեռու էր կեդրոնական ղեկավար անձ մը դառնալէ: Չէր սիրեր այդ եւ մանաւանդ չէր սիրեր խաղաղ ժամանակի փոքրիկ աշխատանքները: Գէորգի համար շատ աւելի հաճելի էր երթալ պատերազմի, ղեկավարել կռիւ, գնալ կատարելու ամենայանդուզն գործեր քան թէ մտածել զինուորներու հագուստի եւ ուտելիքի մասին: Գլորի կ'ատէր փոքրիկ վէճերն ու էնթրիկները, որոնք յաճախ անխուսափելի են ղեկավարող անձնաւորութեան մը դերին շուրջ: Ամէն բանի վրայ ան կը նայէր բարձրէն, խաղաղ ժամանակ ան անհոգ էր, չէր սիրեր ցուցադրել ինքզինքը, իր Ֆետայի ըլլալը, կը պահէր ինքզինքը շատ պարզ եւ լուռ, դերադասելով ուրիշները լսել, իսկ երբ ձանձրանար, պար կը բռնէր. հոլ ու վէզ կը խաղար զինուորներու եւ գիւղի երիտասարդներու հետ: Ով չէր ճանչնար զինքը, բանի տեղ պիտի չգնէր այդ կարճահասակ, թիկնեղ Ֆետային, որուն միայն բոցավառ փոքրիկ աչքերը կրնային ուշադրութիւն դրաւել: Երբ ան կոուէն դառնայ, կարծես թէ իր տունէն կամ եկեղեցիէն կը վերադառնայ: Երբ հետաքրքրուողները իրեն հարցումներ ուղղեն կռուի մասին, քանի մը խօսքով միայն կը զեկուցէ.

— Գացինք էգա Սարս, փեթցուկ քրդերը, փինուկ ասկեարների հետ եկան զմեզ պաշարեն: Մենք լը դարկինք խըլսանք քանի մը ճիժ ու միժ, քանի մը ասկեարներ փիթցան ու դացին, մենք յը սաղ սալիմ հուտա ենք եկած:

Այս էր սովորաբար իր «զեկուցում»ը կռուի մը մասին, որ տեւած էր օրեր, ուր սպաննուեր էին հարիւրներ եւ անոնց շարքին նաեւ

Թիւրք մեծաւորներ, զէնքեր էին խլուեր թշնամիէն. ինքն ալ իր խրմբով հրաշքներ էր գործեր եւ ահագին նեղութիւններ քաշեր: Այդ բոլորի վրայէն կ'անցնէր ան, կարծես թէ սովորական հաց մը կերած ըլլար: Ան կը խուսափէր իրեն որեւէ դիրք տալէ եւ հպարտանալէ, նկատելով այդ հնդու հաւի ընթացք: Երբ զինուորները իր կռիւներու եւ քաջագործութիւններու մասին ծաղկեցուցած գոյներով կը պատմէին, Գէորգը լուռ կը լսէր եւ երբեմն ժպտելով կ'ըսէր.

— Խղզէ՛, խղզէ՛, Կիրակոս:

Բազմաթիւ ժողովրդական երգեր կ'երգուէին Գէորգի վրայ ոչ միայն հայերէն, այլ եւ թրքերէն ու քրտերէն, բայց Գէորգ չէր սիրեր լսել զանոնք, միշտ կը կարմրէր ու կը դադրեցնէր ըսելով. «Ես մի բոսթանջու տղայ բոսթանջի. իմ վրայ կ'երգես դու խանատան տղայ. ի՞նչէն կը լինի որ քեզի չես երգէ»: Ու կ'աւելցնէր. «Լաօ լինէ՛ր Հայաստան, ես բոսթան ցանիմ, դու էլ միւսաֆիր լինիս իմ բոսթան, ես քեզի խիյար ուտեցնեմ»: Եւ ժողովրդի հետ ինքն ալ կը խնդար ու կ'ուրախանար:

Երբ Գէորգին հարցում կ'ընէիր եւ կ'ուզէիր համոզել, թէ խաղաղ վայրկեանին եւս անհրաժեշտ է աշխատիլ ու յեղափոխական պատրաստել, ան լուրջ դէմք մը առնելով կը պատասխանէր. «Ձանգը որ քաշեն, զըմմէնն էլ ժամտուն կը ժողվուին. էն վախթ ես լը պատարազ կ'անեմ, դուք լէ էն վախթ հանգիստ մնացէք եւ ամբողջ գործը ինծի թողուցէք»: Եւ իրաւ, Գէորգ նեղ օրուայ մարդ էր: Երբ կռուի ժամը հնչէր, ան կը կերպարանափոխուէր ամբողջովին. իր բովանդակ էութեամբ հրաման կը դառնար, եւ թէ՛ մեծ թէ՛ պզտիկ վտանգի պահուն անմռունչ կերպով անոր կ'ենթարկուէին: Ու համեստ Գէորգ այդ վայրկեաններուն տէր ու տիրականն էր բոլորի կեանքին եւ բոլորը այդ զգալով առանց տրտունջի ամուր կը փարէին անոր առաջնորդութեան: Գէորգ շատ լաւ կ'ըմբռնէր այդ, ուստի եւ խաղաղ ժամանակ չէր ձգտեր առաջինը ըլլալու, վստահ ըլլալով որ վտանգի պահուն միշտ առաջագոյնն է:

Անյարմարութիւն մը եւս ունէր Գէորգ: Արարոյի ժամանակներէն սկսած ան սորված էր չարքաշ կեանքի: Երբ զինուորը կը տրտնջար ցուրտէն կամ անօթութենէն կամ տկլորութենէն, Գէորգ Չաւուշ անհասկնալի ու անթոյլատրելի կը դառնէր այդպիսի տրտունջ մը եւ չէր ալ ուզեր բարւոքել ո՛չ իր, ո՛չ ալ իր ընկերներուն դրութիւնը: Այդ պարագային Գէորգ կը բաւականանար յիշեցնելով ժողովրդական առած մը.

«Էհ, Ֆետայու հալը հղպէս պիտի լինի՝ մին օր փաշա, միւս օր փոշա»:

Ու այդ խօսքերն արտասանելով կը սկսէր խնդալ:

Գործօն Ֆետայիներուն մէջ ամենէն արժանաւորը Գէորգ Չաւուշն էր, որ իր ետեւը ունէր տասը տարուան փառաւոր անցեալ մը եւ որ սակայն միշտ մերժեց ստանձնել այդ պատասխանատու ղեկավար



ԶՕՐ . ԱՆԴՐԱՆԻԿ

րութիւնը : Գէորգը պատերազմիկ էր եւ կը փայլէր երբ վտանգաւոր կռիւի մը մէջ նետուէր : Գիտէր վարել խումբերը մարտական դործողութիւններուն մէջ, բայց ատկէ դուրս ուրիշ խնդիրներով չէր զբաղեր :

Անդրանիկ չորս-հինգ տարիներէ ի վեր զէնքի տակ ըլլալուն փորձուած չէր տակաւին : Երկու անգամ Կովկասէն մտած էր երկիր : Անցած էր փոքր դէպքերէ, բայց իսկական կռուողի անուն չունէր : Առաջին երկու տարին, 1899-1901-ի վերջը Անդրանիկի ղեկավարու-

Թեան շրջանն է : Անդրանիկ եւ Գէորգ միասին կը տանին գործերը : Գէորգ անձնապէս չի շահագորգուիր մինակը ղեկավարելու : Անոր սկզբունքն էր առհասարակ թողուլ ղեկավարութիւնը դուրսէն եկած անձի մը : Ահա այդ ուղղութեամբ ո՛չ միայն կը թելադրէր այլեւ կը համոզէր, որ բոլոր զինուորները ենթարկուին Անդրանիկին :

Գէորգի, Անդրանիկի ու իրենց ընկերներուն համար սկսած էին ամենէն ցաւազին ու դժնդակ օրերը : Անոնք թափառական լեռնէ լեռ, ձորէ ձոր, հեռու մարդոցմէ ու գիւղերէ ստիպուած էին կորսնցնել իրենց հետքերը : Կառավարական բոլոր սողուն զօրութիւնները՝ զօրք, թիւրք, քիւրտ եւ ամէն ազգի լրտեսներ ու մատնիչներ՝ կը հալածէին բուռ մը Փետայիները, որ անտեսանելի սակայն ամէնուրեք կը մնային անհաս ու անպարտելի : Անոնք միայն Սասունի վրայ չէր, որ կեդրոնացուցած էին իրենց ուշադրութիւնը, այլեւ Մշոյ դաշտի կողմերը եւս ու արդէն իսկ ձեռնարկած խուզարկութիւններու, որպէսզի կարենան վերջ տալ Փետայիներու մնացորդներուն : Անոնք լսած էին, որ Ս. Յովհաննու վանքի կողմերը ապաստան գտած է Գէորգ Զաւուչը : Քանի մը անգամ Գէորգ հանդիպումներ ունեցաւ թէեւ ոստիկաններու եւ զինուորներու հետ, բայց միշտ ալ յաջողեցաւ անվնաս դուրս գալ :

Աչնան օր մը, երբ Գէորգ՝ Ուռուզի Արթինի եւ ուրիշի մը հետ կը գտնուի Սերոբի Վերին գոմը, կը պաշարուի արշալոյսին ու կռուի կը բռնուի իրմէ գերազանց ուժերու դէմ : Սակայն ան թշնամին յանկարծակիի բերելով եւ անոնցմէ երկու հոգի ալ սպաննելով իր ընկերներով կ'անցնի գոմի աջ կողմէն ու մշուշի մէջ կը կորսուի : Ոստիւր կը հետապնդէ զիրենք բայց ապարդիւն, քանի որ ան իր խումբով կ'անցնի Սասուն :

Տ Ե Ռ Ո Ր Ն Ե Ր

Որոշ ժամանակ մը Սասուն մնալէ ետք, Գէորգ եւ Անդրանիկ կ'անցնին գործի : Նախ՝ քանի մը զինուորական հակահարուածներ անհրաժեշտ էին, տրամադրութիւնները բարձրացնելու եւ մանաւանդ սանձելու ո՛չ միայն դաւաճանները այլեւ պետական բռնութիւնները :

Սասունի մէջ Փետայիներուն համար կեանքը շատ դժուարացած էր : Ժողովուրդը գիտէր, որ իր մէջ կան դաւաճաններ, որոնք դաւադրութեամբ սպաննել տուին Սերոբն ու անոր ընկերները : Եւ քաջ գիտնալով այս պարագան, որ մատնիչներ ամէն մէկ քայլին տեղեկութիւններ կու տան թէ կառավարութեան եւ թէ քիւրտերուն, ե-

դան խոհեմներ ալ որ բարւոք կը համարէին հեռու մնալ Ֆետայիներէն : Թէեւ վնաս չէին հասցներ եւ սակայն դիւրութիւն ալ չէին ընծայեր :

Գէորգ, Անդրանիկ եւ միւս Ֆետայիները սկսան կասկածիլ այն անձերուն վրայ որոնք Յուդայի ձեւով կը մօտենային իրենց, նամանաւանդ գեղաշէն Աւէին վրայ, որ կրնար ինք թունաւորած ըլլալ Աղբիւր Սերոբը :

Սոյն հարցի լուծումը Գէորգ կ'ուզէ ինք ստանձնել՝ ստուգելէ ետք, հաշիւը իր ձեռքով մաքրելով :

Ապրիլեան օր մը, ընկերակցութեամբ Շէնիկցի Մանուկի, Ղազարի ու Չոլոյի, կը մեկնի Գեղաշէն : Կը մտնէ ուղղակի Աւոյի տունը, ուր կը տեսնէ որ ան նստած է աթոռի մը վրայ : Գէորգի ընկերները մէկ կողմ կեցած կը դիտեն Աւոն : Գէորգ նախ եւ առաջ անուշ լեզուով կը խօսի իր հետ հասկնալու համար թէ ո՞վ թունաւորեց Սերոբը : Աւօ հազար ու մէկ սուտ խօսքերով եւ երդումներով կ'աշխատի հաւատացնել, թէ ինք ոչ մէկ բանէ լուր ունի :

Գէորգ կը տեսնէ անոր դէմքին գունափոխուիլն ու կակազելով խօսիլը : Անոր երդումներուն եւ սուտ խօսքերուն չի հաւատար : Որով կը սկսի խոստումներ տալ իրեն, սակայն կրկին չի խոստովանիր : Այս անգամ կը դիմէ սպառնալիքի, որուն վրայ կը պատմէ իր կատարած մեղքերը՝ նաեւ իր հետ գործողներն ալ մատնանշելով :

Գէորգ լաւ մը ունկնդրելէ ետք զինք, կը հրամայէ որ սպաննեն ո՛չ միայն Աւոյի ամբողջ ընտանիքի անդամները այլեւ անոր փեսան Պօղոսը եւ իր երախտները՝ որպէսզի անոնց անունները չյիշուին այնուհետեւ, թէ ասոնք ալ ա՛յն դաւաճանին զաւակներն են :

Աւոյի պատմած միջոցին ուշի ուշով մտիկ կ'ընեն նաեւ Ղազար, Մանուկ եւ Չոլօ առանց շունչ առնելու : Յիշեալները երբ կը լսեն թէ իրենց գիւղացի Շէնիկի Կարապետն ալ իր մասնակցութիւնը բերած է լրտեսական ցանցին, խիստ կը մտահոգուին, քանի որ այդ իրենց համար մահէն դժուար էր որպէս համագիւղացի դաւաճան յորջորջուիլ՝ դիւղին պատիւը ոտնակոխելով : Ահա՛ առանց Գէորգին լուր տալու կ'որոշեն փութով անցնիլ Շէնիկ ու հաշիւը մաքրել դաւաճանին :

Հո՛ն հասնելով՝ երեք առիւծները միասին կը մտնեն դաւաճան Կարապետենց տունը : Ան կ'ուզէ զիրենք հիւրասիրել բայց կը մերժեն ըսելով .

— Դաւաճանին վրայ վստահութիւն չկայ . . .

Եւ երեքը մէկ դաշոյնի անխնայ հարուածներով կը սպաննեն զինք, ու առանց ժամանակ կորսնցնելու կ'աճապարեն եւ կը միանան Գէորգին :

Ասկէ ետք կը սկսին անխնայօրէն սպաննել բոլոր ա՛յն դաւաճանները, որ կը յարաբերէին կառավարութեան հետ :

Այդ ատեն Սասունի մէջ կը տիրէր թէ սոսկում եւ թէ ալ ուրախութիւն : Ֆետայիները սկսած էին ազատ կերպով շարժիլ :

Հայ դաւաճաններու ոչնչացումը չափազանց ուրախութիւն կը պատճառէր Սասունցիներուն, բայց անոնք ատկէ զատ կը ցանկային, որ Գէորգ իր զէնքը ուղղէ նաեւ դարաւոր ոսոխին՝ թիւրքին դէմ, նամանաւանդ Պշարէ Խալիլին, որ ոչ միայն դաւաղութիւնը կազմակերպողն էր, այլեւ Աղբիւր Սերոբի պատուական գլուխը կտրողն ու շքանշան ստացողը Սուլթանէն: Նաեւ Հիւսնի եւ Ալայ պէկերէն՝ որոնք դարձած էին ժողովուրդի անգուսպ ատելութեան առարկան:

Ուրեմն ըլլայ Սասունցիները, ըլլայ Ֆետայիները կ'ուզէին ամէն գնով վրէժը լուծուած տեսնել Աղբիւր Սերոբին՝ պատժելով Պշարէ Խալիլն ու իր նմանները, որոնք պատուհաս էին հայ ժողովուրդին:

Եւ ասա համաձայնութեամբ մը՝ Ֆետայիները Գէորգի, Անդրանիկի ու Մակարի գլխաւորութեամբ կ'ընտրեն շուրջ երեսունի չափ լաւ կռուողներ ու կը մտնեն ինչ գնով ալ ըլլայ սպաննել Պշարէ Խալիլը:

Պշարէ Խալիլ՝ Սերոբը թունաւորել տալէ եւ անոր գլուխը կտրելէ յետոյ, իր մատուցած այս թանկագին ծառայութեան համար, Սուլթան Ապտիւլ Համիտէն ստացած էր զոյգ շքանշաններ, որոնք կը դարդարէին կուրծքը: Ան հպարտօրէն կը շրջագայէր Մշոյ քաղաքին մէջ: Պատուի էր քաղաքի երեւելիներէն ու կը հիւրասիրուէր անոնցմէ: Ասոր հակառակ Ֆետայիները չէին կրնար իրենց նախկին դիրքը պահպանել այնքան ատեն, որ յաղթական Խալիլը իր կուրծքին կը կրէր Սուլթանի շքանշանները:

1900-ի դարունէն սկսած Պշարէ Խալիլ կը հետապնդուէր մերիններէն: Մուշի Կեդ. Կոմիտէի մարտական ներկայացուցիչները՝ Մճոն եւ Կոտոյի Հաճին քաղաքէն տեղեկութիւններ կը հասցնէին Գէորգին ու Անդրանիկին:

Պշարէ Խալիլի մէկ ոտքը Մուշ էր: Ան դարձած էր կառավարութեան աջ բազուկը. ո՛չ միայն դրամ կը ստանար այլեւ պատիւներու կ'արժանանար. իր տրամադրութեան տակն էին 40 զինեալ թիկնապահներ: Ասկէ զատ պետական ոստիկանութիւնն ալ միշտ պատրաստ էր իր պաշտպանութեան համար:

Ան ամէն անգամ, որ Մուշ կու դար տեւապէս կը մնար Միրզոյի Նատէր աղայի տունը: Ասոր շատ ծանօթ էր հաւատորիկցի սուրհանդակ Պետրոսը, որ անգամ էր կուսակցութեան:

Սուրհանդակ Պետրոսը ըլլալով վաղեմի բարեկամը Նատէր աղային, կարծես թէ անոր տան անդամներէն մին էր, մէկ խօսքով կը վայելէր անոնց կատարեալ վստահութիւնը: Ան ամէն տարի գիւղէն մեզր, սեր, կարագ կը տանի անոնց: Ու այս առիթէն օգտուելով, կը սկսի հետեւիլ Պշարէ Խալիլի շարժումներուն, օրը օրին տեղեկացնելով Մճոյին կամ Կոտոյի Հաճիին:

Պետրոս երբ կ'իմանայ, թէ Պշարէ Խալիլ իր ձիաւորներով պիտի անցնի Խաս գիւղէն դէպի Սասուն, շուտով կը տեղեկացնէ Մճոյին

ու Հաճիին որոնք իրենց կարգին կը հաղորդեն Գէորգին ու Անդրանիկին թէ Պշարէ Խալիլ Մուշ ըլլալով՝ քանի մը օրէն պիտի անցնի Խաս գիւղի Կիրճի ճամբով դէպի Աղբրիկ :

Հոկտեմբերի կիսուն էր . Ֆետայիները Գէորգի , Անդրանիկի եւ Սպաղանայ Մակարի ղեկավարութեամբ իրենց մարտիկներով կ'երթան Մովասարէն անդին Բալաքցիներու սահմանին մօտ՝ ճանապարհը կը կտրեն : Խումբը երկու մասի բաժնուելով դիրք կը բռնէ Կիրճին երկու կողմերը : Այդ օրերուն Անդրանիկ , որ յօդացաւով կը տառապէր , չէր կրնար նոյնիսկ արագ քայլել , ատով հանդերձ կը մասնակցէր այդ պատմական գործողութեան :

Պշարէ Խալիլ իր 25 զինեալ ձիաւորներով կը հասնի Կիրճի մօտ Ֆետայիներու դիրքին առջեւ : Կեդրոնը կը մնայ Գէորգ Չաւուշ : Իր ազդանշանին վրայ երկու կողմերէն կրակ կը բանան Խալիլի խումբին վրայ : Առաջին համազարկին տասնըչորս հոգի զետին կը փռուին : Խալիլ յանկարծակիի եկած կը փորձէ սրընթաց փախչիլ , սակայն Գալէի գնդակներուն տակ կը վերաւորուի եւ ձիէն վար կ'իյնայ : Պշարէ Խալիլի թիկնապահները կը փախչին եւ սակայն ոմանք մերիններու հարուածներէն թաւալուր կ'իյնան : Ֆետայիներէն մաս մը անոնց ետեւէն երթալով կը հալածեն զիրենք սպաննելով քանի մը հոգի եւս :

Խալիլ , որ շատ մօտ կ'ըլլայ Գէորգ Չաւուշին եւ Յարութիւնին , իր ատրճանակը կ'ուղղէ երկուքին՝ բայց փամփուշտը կը վրիպի : Գէորգ ասիկա տեսնելով կիրքով կը մօտենայ անոր ու կուրծքին կը զետեղէ քանի մը պատուանշաններ :

Խօսք տանք Գէորգ Չաւուշին .

— «Անդրանիկ կարգադրեց սպաննել զԽալիլ , ճամբի եզերքին բռնեցինք դիրքեր եւ երբ տեսանք Խալիլ ձիու վրայ կ'անցնի ճամբէն , բացինք կրակ . Խալիլի ձին ընկաւ , Խալիլն էլ տակը ողջ . յարձակուանք եւ բռնեցինք զԽալիլ , ես եւ Յարութիւն թեւերէն , Անդրանիկ գլխի մազերէն : Յարութիւն քրտերէն հարցաքննեց զԽալիլ , յետոյ ես եւ Յարութիւն զարկինք խանչալներով եւ Անդրանիկ կտրեց զգլուխ գազանին : Սասնոյ ժողովուրդ շունչ առաւ » :

Ֆետայիները խօսք տուած էին(*) Սպաղանայ Մակարին , որ Խալիլի գլուխը ինք պիտի կտրէր . բայց Մակար փախչողները հետապնդելէն երբ դարձաւ , գլուխը կտրուած գտաւ : Քակեց անոր դաշոյնը ու իր մէջքը կապեց : Անդրանիկ ալ Խալիլի կուրծքէն առաւ շքանշանը եւ իր կուրծքէն կախեց :

Այս ամբողջ գործողութիւնը կէս ժամ հազիւ տեւած էր : Սերորի վրէժը լուծուած էր : Գլուխի փոխարէն գլուխ մը :

Ֆետայիները սպաննուած քիւրտերու զէնքերը առնելով՝ կը մեկնին դէպի Մովասար իրենց հետ տանելով նաեւ Պշարէ Խալիլի գլուխը :

(*) Կ. Սասունի , «Տարօնի Պատմութիւն» , էջ 636 :

Թիւրքերը Սերորի գլուխը ցիցի մը անցուցած պտրտցուցեր էին Մուշ ու Պիթլիս մինչդեռ Փետայիները Մովսասարէն Շատախ կ'իջնէին ու մարգագետիններու վրայ Սալիլի գլուխով գնդակ կը խաղային :

Ու լուրը կայծակի արագութեամբ կը հասնէր Մուշ, կ'անցնէր Պիթլիս եւ կ'արձագանգէր բոլոր դաւառներուն մէջ սարսափ տարածելով ամէն կողմ : Սալիլի գլուխը Սասունի մարգագետիններուն վրայ գնդակի պէս կը դառնար ոտքէ ոտք, որպէս ազդարարութիւն բոլոր Սալիլներուն :

Տպաւորութիւնը շմեցնող էր . հակահարուածը կը սկսէր : Յուսահատութեան ալիքները տեղատուութեան մէջ էին :

Անդրանիկ եւ Գէորգ վիթխարի դիւցազներու կերպարանքը կ'արձանացնէին Մովսասարի բարձունքին, ի մխիթարութիւն վիշտի ծովին մէջ տապլտկող ժողովուրդին, իսկ Թիւրքերուն համար՝ հայութեան նոր փաշան կը ծնէր .

«Իբրեւ արծիւ սաւառնում ես լեռ ու ձոր...
Հայ ժողովուրդի տէր ու պաշտպան Անդրանիկ,
Հայութիւնը անոր անունը պիտի յիշէր յաւիտեան,
Ու Թիւրքը պիտի սարսափէր անկէ շատ երկար տարիներ» :

Գէորգ Զաւուշ Սերորի վրէժը լուծուելէ ետքն ալ դաւաճաններու խնդիրը փակուած չէր համարեր : Ան զօրաւոր զայրոյթ մը ունէր դէպի ազգուրաց, թրքացած իժին՝ Գոմիսէր Ռուբէնի դէմ, որ թոյն էր բերեր ու գործակցեր՝ Պշարէ Սալիլի եւ Հիւսնի պէյի հետ :

Ռուբէն կը բնակէր Մո'ւշ, թրքական թաղամասի մը մէջ, հեռու մնալով միշտ հայկական թաղերէն՝ նկատելով որ կրնան զինք սպաննել : Արդէն իսկ սարսափի մատնուած էր եւ ամիսներով հրապարակի վրայ չէր երեւնար :

Գէորգ Զաւուշի յանձնարարութեամբ՝ կրկին անգամ հաւատորիկցի սուրհանդակ Պետրոսը իր փորձառութեամբ աննկատ կերպով եւ չափազանց զգուշութեամբ կը սկսի հետապնդել Ռուբէնը : Լաւ մը ուսումնասիրելէ ետք լուր կու տայ Գէորդին, որ ան ալ իր կարգին քրտական տարազով ծպտուած, անօրինակ յանդգնութեամբ, առանց ոեւէ ընկերոջ իմացնելու, անօգնական, օր ցերեկով կը մտնէ Մուշ ու կ'անցնի թրքական թաղամասը ուր կը բնակէր ոստիկանապետ Ռուբէնը : Հազիւ հասած անոնց փողոցին ծայրը իր դէմ կը գտնէ դաւաճան Ռուբէնը : Գէորգ զայն յանկարծակիի բերելով դաշոյնի հարուածներով տեղն ու տեղը կը սպաննէ Թիւրք խուժանի առաջ : Եւ՝ անայլայլ կը վերադառնայ իր եկած ճամբով, կարծես ոչ մէկ դէպք պատահած ըլլայ իրեն համար : Համախմբուած Թիւրքեր չմած կը դիտեն դիակը, մինչդեռ Գէորգ արդէն իսկ անյայտացած էր :

Այս դէպքը Մշոյ Թիւրք ոստիկաններն ու պետական պաշտօնեաները կը ցնցէ, թէ ինչպէս հայ Փետայի մը կը յանդգնի օր ցերեկով



Տարօնցի ընտանիք մը

Քաղաքին մէջ սպաննել իրենց պաշտօնակիցներէն մէկը ու ազատ կերպով մեկնիլ առանց ձերբակալուելու: Որով կը սկսին կասկածիլ ու վախնալ հայ Ֆետայիներէն՝ թէ օր մը իրենք եւս կրնան զոհ երթալ...: Ասոր վրայ գիշերները իրենց տան դռները պինդ կը կղպեն ու որեւէ մէկուն առջեւ դուռը չեն բանար:

Ձմեռը մօտ ըլլալուն Ֆետայիները պիտի հայթայթէին ո՛չ միայն ուտեստեղէն այլեւ ռազմամթերք: Գէորդ իր հետ առնելով քանի մը զինակիցներ կ'երթայ Մուշ, հակառակ անոր որ տեռորի տպաւորութիւնը դեռ թարմ էր ժողովուրդին համար եւ կառավարութիւնն ալ կը հսկէր գիշեր ու ցերեկ: Պէտք է խոստովանիլ, որ այդ օրերուն աւելի դիւրին էր օր ցերեկով բաց դաշտի մէջ բանակած թշնամիի շարքերէն անցնիլ քան թէ Մուշ մտնել քանի որ ամբողջական թակարդ մըն էր լարուած թշնամիէն: Սարսափի, ահուգողի օրեր էին որ մարդիկ կ'անցընէին. հայը կը վախնար թիւրքէն եւ թիւրքն ալ հայ Ֆետայիներէն:

Գէորդ կը մտնէ փողոց մը եւ կը ծեծէ առաջին հանդիպած դուռը, որ չի բացուիր: Ապա քանի մը դռներ զարնելէ ետք կը գտնէ Առաքելի տունը: Անոր հետ միասին կ'այցելեն Մշոյ պատասխանատու ընկերներուն ու կը խօսին կատարուելիք աշխատանքներու մասին:

Նոյն գիշերը Գէորգ իր ընկերներով կը վերադառնայ գետի վրայով ու կը բարձրանայ Աստղկայ Բերդը:

Գիշերուան այս ճամբորդութեան ընթացքին կը վիրաւորուի Համբարձումը՝ ոտքը քարին զարնուելով: Համբարձում եւ իր ընկերը կը մնան Բերդակ գիւղը, իսկ Գէորգ կ'անցնի լեռը:

Մշոյ թիւրքերը իմացած էին թէ ոստիկանապետ Ռուբէնը ըսպաննողը Գէորգ Չաւուչն է առ այդ իր մասին երգած են առասպելական երգեր: Գուշակած էին նաեւ թէ գիշերը ուշ ատեն դռները զարնողը դարձեալ ինքն էր: Թիւրքերուն դռները որոշ տեղեր զարկած էր ան եւ ուրիշներ ալ լսած էին դռներու բախման ձայները ու վախ ու դողի մէջ մնացած մինչեւ առաւօտեան արշալոյսը եւ առասպելներ հիւսեցին «Արէղօլ» գայլերու առաջնորդ Գէորգ Չաւուչի մասին:

Առաւօտուն թիւրք պահակներ գինուորներու հետ գործի կը լծուին ձերբակալելու Գէորգը Չաւուչը եւ սակայն ոչ մէկ հետք կըրնան գտնել անկէ: Անոնք նկատելով որ հայ Ֆետայիներ Բերդակ գիւղի կողմէ միշտ լեռ կը բարձրանան, հրաման կ'ընեն պաշարելու գիւղը այն կողմէն: Երբ գիւղացիք կ'իմանան լուր կու տան Համբարձումին, որ հակառակ վիրաւոր ըլլալուն, հրացանը առնելով, կաղալով ու կռուելով կը սկսի դէպի լեռ բարձրանալ: Բայց երբ թշնամին կը նկատէ ասիկա, կը սկսի կրակել ու միաժամանակ ջանքեր թափել զինք ձերբակալելու համար: Մինչ այդ Գէորգ դիրք բռնած ըլլալով կը սպասէր որսին, որ մօտենան իյնալու ծուղակը: Թշնամին կը մտածէր թէ ինք պիտի կարենար որսը ձեռք ձգել մինչդեռ անակնկալօրէն կրակի տարափին տակ քանի մը հոգիներ ալ զոհ տալով կը փախէր մէկը միւսի ետեւէն:

Համբարձում կը միանայ Գէորգին ու անվտանգ կը հասնին իրենց ընկերներուն:

Գէորգի այս գիշերային ճամբորդութիւնը ապարդիւն չ'անցնիր, առանց դժուարութեան ան կը կարողանայ ապահովել ռազմամթերք եւ ուտելիքի փոքր պաշար մըն ալ:

Նոյն Զմեռը Գէորգ դարձեալ Մուշ(*) կ'երթայ, տեղւոյն վրայ դանուած գէնքերն ու կապարճները փոխադրելու համար Սասուն: Վերադարձին, Պնաւի գիւղին մօտ քիւրտերը տեսնելով լուր կու տան Մուշի զօրքերուն, որոնք ձիաւոր խումբով կու դան եւ կ'ուզեն ճամբան կտրել Ֆետայիներուն: Գէորգ կը տեսնէ թշնամիի գալը ու առանց ժամանակ վատնելու կու տայ կռիւի ազդանշանը, զիրենք անակնկալի բերելով: Թշնամին քանի մը սպաննուածներ ձգելով կը փախչի: Գէորգ շալակաւորներուն գլուխը կ'անցնի ու զիրենք ապահով կը հասցնէ Սասուն:

Այդ օրերուն Պիթլիսի ռուսական հիւպատոսարանը մեծ ջանք

(*) Մշոյ կ. Կոմիտէի անդամներն էին Կոտոյի Հանի Յակոբը, Մկրտիչ Պոլեւանը, Վահան Պորոյեանը, Միսաք Բդեեանը եւ Գեղամ Տէր Կարապետեանը:

կը թափէր հայերը դաւանափոխ ընելով Ռուս եկեղեցիին կապելու համար: Գիւղերու մէջ այդ ուղղութեամբ տարուած աշխատանքը բընականաբար ապարդիւն պիտի չմնար: Հայ գիւղացին, որուն մէջ դեռ նոր էր արթնցեր ազգային գիտակցութիւնը, պէտք է խոստովանիլ թէ ինքնապաշտպանութեան համար կ'ընէր կարելի ամէն զոհողութիւն:

Քիչ չէին անոնք, որ իրենց ընտանիքին բերնէն կը կտրէին զէնքի կտոր մը ձեռք ձգելու համար: Հակառակ այս տարածուած յուսադրիչ մտայնութեան, քիչ չէին սակայն անոնք, որ թիւրք եւ քիւրտ միացեալ հարստահարութիւններէն փրկուելու միակ միջոցը սկսած էին նկատել Օրթոտոքսութիւնը: Այնքան ալ մեղադրելի չէին անշուշտ, ապրող մարդուն համար, օդին հետ ամենէն կարեւոր պայմանը կը կազմէ կեանքի ապահովութիւնը:

Յեղափոխականներուն համար Օրթոտոքսութիւնը կը ներկայանար իբրեւ վտանգ: Իսկ Գէորգի տեսակէտով՝ կրօնափոխութիւնը արդէն ազգութեան թիւն էր: Որով ան կը մտադրէ համոզել գիւղացիութիւնը ետ կենալու սոյն մտքէն՝ ու ատոր համար ալ իր ընկերներով կ'անցնի դաշտի կողմերը:

Բ Ե Ր Դ Ա Կ Ի Կ Ռ Ի Ի Ը

Զօր. Սմբատ կ'ըսէ.

— Գէորգ Զաւուշ իր խումբով բաժնուեցաւ դէպի դաշտ, իսկ մենք՝ իր թելադրութեամբ սկսանք բարձրանալ դէպի Սասուն:

Օր մը ետք միայն լուր առինք թէ Անդրանիկ հասած է Սեմալ. որով գացինք զինք տեսնելու:

Տխուր էր: Իր առնական դէմքը կը մատնէր մտահոգութիւն մը, որուն գաղտնիքը մեզ յայտնուած էր գիւղացիներու հետ մեր խօսակցութեան ընթացքին: Պօսելու տրամադրութիւն ցոյց չէր տար ու մենք՝ կը զգուշանայինք հարցումներ ուղղելէ:

Երբ իրեն պատմեցինք պարագաները որոնք մեզ ստիպեր էին այդ ձիւնին ու ցուրտին բռնել լեռներու ճամբան ու յայտնեցինք հայդուկային խումբերու մէջ մտնելու մեր մտադրութիւնը՝ մէկու մը պէս, որ իր սիրտը բանալու առիթը կը փնտռէ, ըսաւ.

— Մեզ իսկ զինաթափ կ'ընեն, դուք ելեր էք զէ՞նք վերցնելու:

Հրայր եկած էր Շէնիկ եւ Անդրանիկն ու իր ընկերները զինաթափած: Ահա՛ այս պայմաններու ներքեւ Անդրանիկ իր եօթը հոգինոց զինաթափ խումբով, ընկճուած ու տխուր եւ իր արժանապատուութեան մէջ վիրաւոր կը մեկնի Սեմալ:

Սոյն զինաթափումը կատարուած էր Հրայրի եւ պատասխանատու մարմնի կարգադրութեամբ Քեաթիպ Միքայէլի ձեռքով :

Զինաթափութենէն ետք՝ երբ Անդրանիկ Սեմալ մեկնած էր, Զրիկ գիւղացի Համբարձում եւ Ուրուղայ Արթին մնացեր էին Շէնիկ բանակցելու Հրայրի հետ եւ կերպ մը գտնելու Անդրանիկին եւ իր խումբին վերադարձնելու համար զէնքերը :

Սմբատ կ'ըսէ .

— Անդրանիկ որոշեց հեռանալ Սեմալէն : Տեղացիներէն քանի մը զէնք առնելով մեկնեցաւ Կելիեկուզան : Իսկ ես ու ընկերներս, չունենալով որոշ հրահանգ պատասխանատու Մարմնէն՝ Անդրանիկի թելադրութեամբ միացանք իր խումբին ու հետեւեցանք իրեն :

Հազիւ հոն հասած, Անդրանիկ նամակներ գրեց Գէորգին, Համբարձումին եւ Արթինին, որ շուտով վերադառնան, խորհրդակցելու համար :

Քանի մը օր ետք Գէորգ Չաւուշ վերադարձաւ դաշտէն. հոն լսած էր Հրայրի եւ Անդրանիկի միջեւ եղած դէպքը, բայց չէր հաւատար, որ նման բան մը կրնայ պատահիլ մինչեւ որ չստացաւ Անդրանիկի նամակը :

Զօր. Սմբատ կը շարունակէ .

— Գէորգի վերադարձով խումբը դտաւ իր ամբողջական կազմը : Անդրանիկ՝ խմբապետները կանչեց ժողովի խորհրդակցութեան համար, որուն անշուշտ իբր նորեկ զինուորներ՝ ես ու ընկերներս չէինք մասնակցեր :

Նուաստացած հայդուկները այդ ժողովին մէջ տուեր էին վրձնական որոշումներ : Պիտի պահանջէին զէնքերը, մերժումի պարագային՝ մահուամբ պիտի պատժէին քանի մը ղեկավարները, որ տրւած ու գործադրած էին խումբերու զինաթափութեան որոշումը :

Նախքան այդ պահանջը ներկայացնելը, Անդրանիկ ու Գէորգ Տերգեվանք ժողովի կանչեցին Գեղամը, Մճոն, Հաճին ու Վարդանը, այս հարցը խաղաղօրէն լուծելու միջոց մը գտնելու մտքով : Ժողովէն կը բացակայէր Գեղամը :

Հաճին բացատրելէ յետոյ, թէ այս պառակտումը շատ վատ տպաւորութիւն գործած է ժողովուրդին վրայ, եւ կառավարութիւնն ալ արդէն տեղեկութիւններ քաղած է, խոստացեր էր հակառակ պարագային իր իսկ պատասխանատուութեամբ՝ մինչեւ 15 օր վերադարձնել զէնքերը :

Այս խոստումը չափով մը գոհացուցեր էր Անդրանիկը, որ նախընտրած էր սպասել դրական արդիւնքին :

Զէնքերը արդէն նորոգուած էին. Անդրանիկ անոնցմով զինեց իր տղաքը ու որոշեց Կելիեկուզանէն հեռանալ դէպի Սասուն : Ես մընացի գիւղը» :

Գէորգ իր հետ առած Սպաղանայ Գալէն, Յակէն, Արամը, Մշեցի Սիմօնը եւ ուրիշներ, անցաւ դէպի դաշտ, անկէ գիւղէ գիւղ

չըջելով ոգեւորելու գիւղացիները : Յրօնք գիւղի մէջ պատրաստել կուտայ վառօղ, ուրիշ գիւղի մը մէջ կապար եւ այլ ուղմապաշար : Շարունակելով իրենց ճամբան կը հասնին Բերդակ գիւղը, ուրկէ Քանսարի ստորոտներէն կրնային երթալ դէպի Սասուն : Հոս կ'որոշեն քիչ մը հանգստանալ ու ապա շարունակել ճամբան : Բայց առաւօտեան արշալոյսին կը նկատուին խումբ մը թիւրք ճիւղորներ, որոնք կը մօտենան գիւղին, կը շրջապատեն ու կրակ կը բանան Փետայիներուն վրայ :

Կռիւէն առաջ թշնամին իրենց ճամբուն վրայ լուր կուտայ գիւղի միւս ընկերներուն որպէսզի անոնք ալ միանան : Հազիւ կռիւը սկսած մօտակայ վայրին վրայ գտնուող թրքական զօրանոցէն ոյժեր կուգան բուռ մը Փետայիները ոչնչացնելու համար : Գէորդ իր փոքրիկ խումբը կը բաժնէ երկու մասի : Իրենցմէ երկուքը նախ պիտի կռուին, մինչեւ որ միւս երկուքը բարձրանային լեռը : Երբ վերջինս քիչ մը առաջ կ'երթայ, կը նստի գիրքի ու կը կռուի, հնարաւորութիւն տալով, որ առաջին խումբը նոյնպէս բարձրանայ : Մինչեւ որ թշնամին օգնական նոր ոյժեր ստանայ կռիւի մասնակցելու համար, Գէորդ իր խումբով կ'անցնի հասնելով Միրինկատարի մօտերը : Թըրքական զօրքերը, Քիւրտերը եւ թիւրք խուժանը ճամբաները կտրած համարելով վստահ էին, թէ Գէորդի գլուխը շուտով պիտի ցուցադրէին Մուշի ժողովուրդին :

Մշոյ քաղաքէն հոծ բազմութիւններ եկած էին կռուի վայրը : Տեսարանը խեղապէս արժանի է տեսնելը : Երկու հազարէ աւելի թիւրքեր ու Քիւրտեր կռուի ելած են քանի մը հայ Փետայիներու դէմ : Հեքիաթ կը թուի, բայց փաստ է, որ այդ փոքրիկ խումբը, յոգնած եւ ուժասպառ կը հասնի մինչեւ Կորեկի աղբիւր : Հոն հասած պահուն արդէն յուսահատական վիճակ ունէին բայց Գէորդի բախտը կռիւներու ընթացքին միշտ ժպտուն եղած է. կարծես Աստուած օգնութեան հասաւ Փետայիներուն : Թանձր մշուշ մը կ'իջնէ լեռան վրայ եւ թըշնամիի աչքէն կը կտրէ հայ մարտիկները : Գալէն վիրաւորուած է թեւէն, իսկ Գէորդը այնքան յոգնած, որ այլեւս չէր կրնար շարժիլ իր տեղէն : Յակէն կը տեսնէ Գէորդի վիճակը շալկելով զինքը եւ մշուշի մէջէն քալելով կը յաջողին ազատիլ թշնամիի հետապնդումներէն, անվտանգ հասնելով Կելիեկուզան :

Սոյն կռիւը մեծ նշանակութիւն ունեցաւ ո՛չ միայն իր գեղեցկութեամբ այլեւ Փետայիներու ցուցաբերած քաջութեամբ, որ խոր տրպաւորութիւն թողուցած էր Հայոց վրայ, ներշնչելով ա՛յն հաւատքը, թէ Փետայիներու դատը արդար է, ուստի Աստուած անոնց օգնութեան կուգայ :

Այս դէպքէն յետոյ Գէորդ կը դառնայ առասպելական անձնաւորութիւն մը եւ անյաղթելի հերոս մը ժողովուրդին աչքին :

Սոյն պատահարները հիւպատոսարաններու միջոցաւ կը հեռագրեն Պոլիս, որոնք իրենց կարգին չեն հաւատար, որ հայ Փետա-

յին կը կռուի իրմէ շատ աւելի դերազանց ոյժերու դէմ : Յետոյ գիտէին նաեւ, որ մեծ թիւով թիւրքեր ու Քիւրտեր կը գտնուին Սասուն եւ դժուար է, որ Հայը կարենայ անոնց դէմ դնել. այս առթիւ Berlinger Lokal Ahreiger թերթի Պուլսոյ թղթակիցը Սեպտ. 1901-ի թիւին մէջ կը գրէ .

«Սասունը չորս թիւրք վաշտերու կողմէ այնպէս մը պաշարուած է, որ մինչեւ իսկ կէս ժամ հետու գտնուող Մշոյ մէջ բացարձակապէս չի գիտցուիր թէ ինչ կ'անցնի կը դառնայ Սասուն : Ամենագէշ բաներէ կը վախցուի :

Հոս ամէն լուր կը պակսի : Հայոց պատրիարքարանը Գրան հաւանութեամբ բարձրաստիճան հոգեւորական մը զրկեց Մուշ այնտեղի անցուղարձերուն մասին լուրեր առնելու : Կ'ըսուի թէ մեծ թիւով Քիւրտեր կը գտնուին Սասունի մէջ : Պատած լուրերուն նայելով՝ այնտեղի գործողութիւնները ուղղակի Երլարգէն կը դեկավարուին, առանց կառավարութեան գիտութեան, ինչպէս նաեւ դէպի հասնողները առաջումը բազմաթիւ իւլէմաներու, որոնց գրգռիչ գործունէութեան կը վերագրուին արդէն Սասնոյ դէպքերը : Ընդհանուր կացութիւնը նման է հինգ տարի առաջուան կոտորածներէն առաջ տիրող վիճակին» :

Այդ օրերուն տեղի կ'ունենան քանի մը տեռորներ : Յիշատակելի է Շէրիֆ աղայի սպաննութիւնը Մոկանքի մէջ : Այս տեռորները արդիւնքն էին ժողովրդական փոխ վրէժի, չունենալով քաղաքական եւ կրօնական բնոյթ, այլ զուտ տնտեսական ուղղուած վաշտուներու եւ հարստահարիչներու դէմ : Շրջանի զարիւթները զգալով, որ վտանգը կրնայ իրենց ալ պատահիլ, կը դիմեն արտակարգ միջոցներու՝ խեղդելու համար շարժումը :

Գէորգ կը մնար Կելիեկուզան, Անդրանիկ եւս փութով կու գայ ու կը միանայ անոր : Անդրանիկի խումբին Կելիեկուզան վերադարձին՝ Սմբատ կ'ըսէ .—

«Հարցը կը բարդանար, մանաւանդ, որ ինքնապաշտպանութեան դժուարութիւններուն կը խառնուէր ուտեստի նեղութիւնը : Խումբը, որ հետզհետէ կը ստուարանար նոր փախստականներով, հասեր էր 50—55 հոգիի եւ գիւղը չէր կրնար սնուցանել այդ բազմութիւնը, մանաւանդ որ այդ տարին բերքն ալ շատ չէր եղած :

«Անդրանիկի կարգադրութեամբ խումբը ցրուեցաւ զանազան գիւղեր, ատեն մը պատսպարուելու : Ինքը 10—15 հոգիով կը մնար Կելիեկուզան, իսկ ես եօթ հոգինոց խումբով մը գացի գիւղին մօտիկը Ալոճիկ գոմ : Մեզի հետ էր վիրաւոր Գալէն : Զինքը դարմանելու հոգը ստանձնած էր Կելիեկուզանցի ոէս Աւէն, որ գիւղին բժիշկի համբաւը կը վայելէր :

«Զեմ գիտեր, թէ ոէսը ի՞նչպէս կը կիրարկէր իր գիտութիւնը, զոր սորված էր, բայց իր խնամքներուն շնորհիւ, Գալէի վէրքը կը գոցուէր օրէ օր : Խումբը գիշերը կը պարտկուէր գոմին մէջ, մօտ չորս

հարիւրի չափ ոչխարներու հետ, իսկ ցերեկը՝ զինավարժութեամբ կ'անցընէր ժամանակը:

«Գալէն բաւական ուժեղ կը զգար ինքզինքն արդէն, երբ մեզի հրահանգ եկաւ հաւաքուելու Ստան գիւղը, որպէսզի այնտեղէն ուրիշ խումբերու հետ անցնինք Գեփին սարը: Մօտ վաթսուն հոգի էինք հաւաքուած այնտեղ, ուր մնացինք մէկ քանի օր»:

Հազիւ պատրաստուած էին մեկնելու դէպի Գեփին սարը, լուր կը ստանան, թէ Մոկունքի մէջ սպաննուած է քիւրտ ցեղապետ մը՝ Քէոթան Չատէ Շէրիֆ աղան: Շէրիֆ այն հազուագիւտ ցեղապետներէն էր, որոնք Հայոց հանդէպ եթէ սրտաբուխ բարեկամութիւն չէին տածեր, դոնէ թշնամութենէ կը խուսափէին: Հայերու հետ իր յարաբերութիւնները ընդհանուր ձեւով լաւ էին: Ազատ մուտք ունէր հայկական գիւղերը, բայց իր գործերուն բերումով, առաւելաբար Մոկունք գիւղը կ'երթար:

Գիւղացիները անպատեհութիւն չէին տեսներ, եւ զինք կը հիւրասիրէին, տուն հրաւիրելով, իրրեւ բարեկամ հայ ժողովուրդին:

Մոկունք գիւղի մէջ կը հանդիպի Եսթեր անունով հայ աղջկայ մը, որուն գեղեցկութիւնը զինքը հմայեր էր: Օր մը, ուշ ժամուն, կը բախէ Եսթերենց տան դուռը: Զինք կը հիւրասիրեն, մանաւանդ որ Շէրիֆ Աղան պարկեշտ քիւրտի համբաւ ունէր: Այնքան վստահութիւն ունէին, որ նոյնիսկ կ'ընդունին որ իրենց տան մէջ գիշերէ:

Ինչպէս ընդհանրապէս կ'ըլլար այդ ժամանակներուն, Եսթերենց տունն ալ կը բաղկանար միայն մէկ սենեակէ, ուր կը քնանային բոլորը: Ուշ գիշերին, երբ բոլորը խոր քունի մէջ կ'ըլլան, Շէրիֆը կամաց-կամաց կը մօտենայ Եսթերին, որ իր կարգին խոր քունի մէջ մտած էր: Վատը երբ կը մօտենայ աղջկան, ափով կը փակէ Եսթերին բերանը, որպէսզի չկարենայ օգնութեան որեւէ աղաղակ բարձրացնել: Իր վայրագ կիրքը դոհացնելէ ետք, երբ տան գիշերային հանդարտութիւնը կը խանդարէր իր խռպոտ խումբոցներով, ուշափորոյս Եսթերը ինքզինք կը վերագտնէ, կը սթափի եւ անդրադառնալով իրօղութեան, կ'իյնայ հոգեկան տանջանքի դժոխքին մէջ:

Երկար մտածումէ ետք, կատարուածի ծանրակշռութեան լոյսին տակ, զգոյշ կը մօտենայ եղբօրը, կ'արթնցնէ եւ փափսալով կը յայտնէ, որ դուրս ելլէ, որովհետեւ պատմելիք ունի: Երբ քոյր ու եղբայր դուրս կ'ելլեն, Եսթեր հեկեկալով կը պատմէ իր բռնարարումը եւ կ'աւելցնէ. —

— Ահա՛, քոյրդ անպատուուած է: Մեր տան վրայ արատը քսուած է: Այլեւս չենք կրնար մարդու աչքի մէջ նայիլ: Բոյորը հեղնանքով ու անարդանքով մեզ մատնացոյց պիտի ընեն: Կամ կը մեռնիմ, կամ այս արատը կը սրբուի:

Քոյր ու եղբայր երկար չեն վարանիր: Կու տան իրենց որոշումը. — վրէժ լուծել:

Զգոյշ, անաղմուկ կը մտնեն տուն: Եսթեր կը փառէ ճրագը,

խակ եղբայրը անկիւնէն մէջտեղ կը հանէ հին, ժանգոտած, քուրջերու մէջ փաթթուած եաթաղան մը, զոր կը մերկացնէ ու կը մօտենայ վատի անկողնին:

Քոյր ու եղբայր, իրենց դողդոջ ձեռքերը միացուցած եաթաղանին կոթին վրայ, զօրաւոր հարուած կու տան քիւրտի կողին: Առաջին այդ քայլէն ոյժ ու կորով ստացած, աւելի կը հրեն մահացու դործիքը, որ կը ծակէ թոքերը այդ վատ քիւրտին ու աջ կողէն դուրս ելլելով կը խրի անկողնին մէջ:

Քիւրտը խռնդիւն մը կ'արձակէ, ցնցում մը կ'ունենայ, կը փռուի կոնակի վրայ, վերջին շունչը կը փչէ:

Քոյր ու եղբայր իրենց վրէժը լուծած էին: Դիակը վերմակով մը կը փաթթեն ու կը տանին Առաքելոց վանքին ու Մզրայի միջեւ գտնուող անդնդաձեւ ձորի մէջ կը նետեն զինք:

Ոստիկանութիւնը քանի մը շարաթ պրպտումներ, խուզարկութիւններ ու քննութիւններ կատարելէ ետք, ձորին մէջ կը գտնէ Շէրիֆի դիակը:

Անկէ ետք Մոկունք սպառնալիքի եւ վտանդի տակ կը մնայ: Տեղւոյն Փետայիները, օժանդակ ընկերները, նաեւ Եսթերի եղբայրը՝ Յակոբ կ'անցնին Սասուն:

Երբ կ'իմացուի, որ ոճիրը Յակոբը գործած է, թիւրք կառավարութիւնը ձերբակալել կու տայ մայրը եւ մօտ քառասուն հայ դիւղացիներ: Եսթերը ձերբակալելէ ետք երբ զինուորները կ'ուղէին զինք գիւղէն Մուշ տանիլ, դառնալով դիւղացիներուն, բարձրաձայն կ'ըսէ.—

Էս ի՞նչ օրի հասանք, տէրտէր, վարդապետ թող չալմա կապեն եւ մզկիթ երթան, թող յեղափոխականները, ֆետայիները, լաչիկներ կապեն եւ հաց թխեն, մեզի ոչ նամուս, ոչ պատիւ մնաց. մենք ալ կնիկներ, եա Մշոյ աղաներու ծոցուրնին մտէք, եա անոնց կոկորդը կտրէք»:

Երբ Գէորգ կը լսէ այս լուրը, կացութիւնը մեղացնելու, ինչպէս նաեւ կառավարութեան դիտումնաւոր հետապնդումները կասեցրնելու համար, կը ծրագրէ վառել Մոկունք գիւղէն քանի մը փլածփլված տուններ եւ բուռն կերպով բողոքել կառավարութեան, ամբաստանելով Շէրիֆի մարդիկը, թէ վրէժխնդրական արարքներու կը դիմեն Մոկունքցիներուն դէմ: Միաժամանակ կողմնակի միջոցներով հասկցնելով, որ կառավարութեան եւ Շէրիֆի մարդոց տուած նեղութիւնները կրնան գիւղացիները բոլորը ոտքի հանել եւ ամբողջ շրջանը կանգնեցնել կառավարութեան դէմ: Լաւագոյն է ուրեմն, ազատ արձակել Մոկունքի այրերը, որ ի հարկին գիւղը պաշտպանեն Քիւրտերու դէմ:

Շէրիֆի ցեղախումբը առիթ չէր փախցնել նեղելու Հայերը: Սպաննութիւններ յաճախադէպ էին: Գիւղէն դուրս գիշերային եր-

Թեւեկը բոլորովին դադրած էր: Գիւղը երբեմն յարձակման կ'ենթարկուէր նոյնիսկ ցերեկ ատեն:

Գէորգ Չաւուշ որոշումը գործադրելու համար, կը պատրաստէ հրձիգներու խումբ մը, որուն ղեկավարութիւնը կը ստանձնէ ինք: Այրուելիք տուները կը նշանակուին, գիւղացիներու հաւանութեամբ:

Ու գիշեր մը, մութին մէջ, Գէորգի եօթը հոգինոց խումբը կը վառէ նշանակուած տուները ու կը վերադառնայ Առաքելոց վանք: Հոն կը մնան քանի մը օր, զբաղելով կապարի, վառօղի եւ ցորենի փոխադրութեամբ:

Գէորգի այս ձեռնարկը կը մեղմացնէ երկու կողմերը եւ գիւղացիները կարելիութիւնը կ'ունենան ազատ կերպով գործի լծուելու: Ապա Գէորգ Չաւուշ կ'անցնի Սասուն՝ Անդրանիկի, Համբարձումի Ուլուղայ Արթինի եւ Սպաղանաց Մակարի մօտ, խորհրդակցելու փախստական Ֆետայիներու հարցի մասին:

Նիւթական միջոցներ չէին բաւեր պահելու խումբերը, կ'արէին աւելի քան վանականի մը ժուժկալութեամբ: Միւս կողմէ սակայն, փախստականներու թիւը տակաւ կ'աւելնար, լուրջ դժուարութեան մատնելով յեղափոխական շարժումին ղեկավարները՝ տնտեսական եւ զինական նկատումներով: Սասունէն դուրս, գրեթէ երկրորդ

ՄՈԿՈՒՆՔ ԳԻՒՂԸ ԵՒ ԱՍՏՂԱԲԵՐԴԻ ՃԱՄԲԱՆ



Սասուն մըն ալ կազմուած էր սարին վրայ, շնորհիւ փախստական կտրիճներու, որոնք կը թափառէին Անդրանիկի եւ Գէորգի խումբերուն շուրջ, ժամ առաջ զինուելու եւ գործի լծուելու անհամբերութեամբ:

Յետ խորհրդակցութեան այն եզրակացութեան կը յանգին, որ պէտք է փախստականներու մէկ մասը անցնի Կովկաս իսկ փոքր խումբ մըն ալ Վան, սպասելով նոր կարողազրութիւններու: Իսկ զինեալ խումբերը պիտի մնային, բայց պէտք էր անոնց թիւը նուազեցնել կամ նոր ընկերներ չաւելցնել: Խումբերը երբ բաժնուեցան, Գէորգ եւս իր խումբին գլուխն անցած սկսաւ կրկին շրջիլ գիւղերը: Այս շրջագայութիւններու ընթացքին Գէորգ ստիպուած էր կռուի բռնուիլ թշնամիին հետ: Լրտեսները անպակաս էին: Ան իր այս շրջագայութեան ժամանակ կը լսէ գիւղացիներէն, թէ քանի մը գիւղապետներ կառավարութեան լրտեսներ եղած են: Կ'առնէ անոնց անունները եւ կը շարունակէ իր շրջագայութիւնը:

Լրտես-գործակալներու անունները առնելէ երկու օր ետք, Գէորգ Չաւուշ արդէն իսկ տեռորի ենթարկած էր քանի մը գիւղապետներ, որոնք կառավարութեան յուրեր կը հաղորդէին Ֆետայիններու շարժումներու մասին: Այս անարեկումներուն լուրը շուտով կը տարածուի գիւղերուն մէջ, սարսափ տարածելով եւ զգաստութեան մղելով ժողովուրդը: Գէորգ իր հետ կ'առնէ նաեւ սպաննուած անձերու զաւակները, որոնց թիւը տասի կը հասնէր:

Գէորգ այդ որբերու մէկ մասը կ'ուղարկէ Կովկաս, իսկ միւս մասը իր հետ առնելով կ'անցնի Առաքելոց վանք: Երբ կը ներկայանայ Յովհաննէս վարդապետին կը յայտնէ, որ այդ փոքրերը ինք որբացուցած է եւ պէտք է զանոնք վանք ձգէ:

Յովհաննէս վարդապետ մտիկ ընելէ ետք, յանդիմանելով կ'ըսէ Գէորգին.

— Անպիտան թիւրքը շատեր որբացուցած է, եւ հոս աչքովդ կը տեսնես գանձնի, ալ ինչո՛ւ ասոնի ալ դուն որբացուցեր եւ բերեր ես մեզի բռն պիտի ընես:

Գէորգ խնդալով կը պատասխանէ.

— Հայր Սուրբ, բերի այս որբերը, որ ինծի պէս մարդ ընես, եթէ ասոնց շուն հայրերը ողջ մնային՝ ամբողջ ազգը պիտի ուզէին որբացնել. բերի որ այս վանքի հացն ուտելով յեղափոխական դառնան: Եթէ իրենց հայրերու շունչով մեծնային, մեր ազգի գլխուն փորձանի պիտի բերէին. այս վանքի հացը այսպիսիներու համար է:

Հայր Սուրբը զանոնք սիրայօժար կ'ընդունի:

Գէորգ կը մեկնի վանքէն: Վանքէն քիչ մը հեռու կը գտնուի

Թիթ-քար անունով ապառաժ մը, որուն մէկ կողմը հողին հաւասար է եւ կարելի է Մշոյ դաշտը տեսնել. այդ քարը հովանոցի պէս երկարած է եւ մարդիկ կրնան հոն պատսպարուիլ անձրեւէն: Ֆետայիները երբ ուղէին վանք երթալ, նախ հոն լաւ մը հանգստանալէ ետք, իրենց շուրջը կը դիտէին, որպէսզի չըլլայ թէ թշնամին զիրենք տեսնէ ու իրենց պատճառաւ վանքը վտանգուի:

1901-ի Մայիսին, երբ Գէորգ Չաւուշ, Համբարձում եւ Յարութիւն նստած էին Թիթ-քարի վրայ հանգստանալու, Մշոյ կողմէ թիւրք ոստիկաններ կու գան դէպի վանք. երբ Նեղ-Պողազ կը հասնին, կը նշմարեն մէկը, որ Թիթ-քարի կողմէն դէպի վանք կ'երթայ եւ որուն ձեռքը կերակուրի ծրար մը կայ: Ոստիկանները կը հասնին այդ անձին եւ կը տեսնեն, որ վանքի միաբաններէն է: Անոնք իրարու հետ խօսելով կը հասնին Թիթ-քարի վրայ, ուր մէկ ոստիկանը միւսին կ'ըսէ՝ «այս կողմէն էր, որ հաց բերողը գնաց»: Գէորգն ու իր ընկերները նստած էին քարին ետեւի կողմը եւ կը լսեն թիւրք ոստիկաններուն խօսակցութիւնը. կը մտածեն, որ եթէ կռուի բռնուին ոստիկաններուն հետ, կը նշանակէ վանքին աւերման պատճառ պիտի դառնան. նախընտրելի է առանց նշմարուելու հեռանալ:

Գէորգ ու իր ընկերները ապառաժի տակէն միւս կողմը անցնելով, կը հեռանան: Սակայն ոստիկաններէն մէկը կը տեսնէ զանոնք եւ դառնալով իրենց Չաւուշին, կ'ըսէ. — «Չաւու՛ւշ, տես, Չաւուշը այս ուղղութեամբ փախաւ»: Ոստիկանները կը սկսին կրակել տղոց վրայ: Բայց Գէորգ ու իր ընկերները, լաւ ծանօթ ըլլալով շրջանին, շուտով իրենց հետքը կը կորսնցնեն: Այսպէս ան կը ստանայ Չաւուշ տիտղոսը:

Ըստ ուրիշ պատմութեան մը, Թարգմանչաց վանքի կռուին, երբ Գէորգ դիշեր ատեն թիւրք պահակներուն կը հանդիպի, հարց կու տան, թէ ո՞վ է եւ կը պահանջեն օրուան նշանախօսքը, Գէորգ զայրացած կը հայհոյէ պոռալով՝ «չե՞ս տեսներ, ես այնինչ գումարտակի Պաշ-Չաւուշն եմ»: Թիւրք զինուորներ սահմուկած ներողութիւն կը խնդրեն: Ահա այսպէս է, որ Գէորգ-Սարհատը կը մկրտուի Գէորգ Չաւուշ անունով:

ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԻ ԿՈՒՒԸ

Թիւրք կառավարութիւնը այդ տարին կը սկսի տարբեր ձեւով կիրարկել Հայերու դէմ իր հալածողական քաղաքականութիւնը, մանաւանդ տնտեսական մարզի մէջ: Թիւրտերը գրգռելէ զատ, օգտուելով Կովկասէն եկած բազմաթիւ թիւրք գաղթականներու ներկայութենէն, զանոնք հանեց Հայերու դէմ, ըսելով թէ այդ հողերը իրենց կը պատկանին: Այդ դժբախտներու միջոցով անոնք կը ջանային ոչընչացնել հայ դժբախտները: Չէնք կը բաժնէ անոնց եւ բռնի ուժով կը տեղաւորէ հայ գիւղերու մէջ, խլելով Հայերու հողերը եւ անոնց տալով: Այդ կ'ընեն այն նկատումով, որ միատարր հայ գիւղեր չըմնան, իսկ գիւղերու միջեւ մահամետական նոր գիւղեր առաջ բերելով, կը ջանան կտրել անոնց ապահով հաղորդակցութիւնը, այնպէս որ հայ գիւղացին ոչ միայն կը գրկուի իր արօտատեղիէն կամ արտէն, այլեւ ազատ երթեւեկելու հնարաւորութենէն:

Այսքանով չբաւարարուելով, կառավարութիւնը Դաշտը կը լեցնէ բազմաթիւ զօրքեր, զորս կը տեղաւորէ հայ գիւղերու մէջ: Անոնք իբր թէ կը հսկեն ապահովութեան, բայց իրօք պատժիչ խումբեր էին, որոնք կ'ապրէին հայ գիւղերու հաշտոյն ու պատուհաս կը դառնային: Որպէս թէ անոնց պաշտօնն էր Ֆետայիներու հետապնդումը, բայց իրականին մէջ կը ջանան խառնակութիւններ յառաջ բերել ու այդ միջոցով խեղդել հայ յեղափոխութիւնը:

Հայ ժողովուրդի կացութիւնը առաջուան պէս ծանր է ու անմխիթար. կառավարական զօրքերը տեղաւորուած են Դաշտի բազմաթիւ գիւղերու մէջ. տեղի կ'ունենան ամէն տեսակի սանձարձակ բռնութիւններ: Գաղթականները դրաւած են աւելի քան տասը հայկական գիւղեր եւ այլան թալանի կ'ենթարկեն հայերը. թիւրք զարկաթները իրենց «ջանքէզարներով» կ'այրեն ու կ'ոչնչացնեն հայկական տուները. աւազակները կը գործեն ազատ համարձակ եւ մարդասպանութիւնը կը դառնայ սովորական երեւոյթ: Ոչ ոք վստահ է, թէ միւս օրը պիտի կրնայ պահել իր գլուխը. Հայութեան մէջ հետըզհետէ կ'ամրանայ այն համոզումը, որ փոխանակ թիւրքի, քիւրտի, գաղթականներու գերին կամ զոհը դառնալու, փոխանակ հաւատափոխ ըլլալու, աւելի լաւ է մեռնիլ իբրեւ մարդ եւ իբրեւ հայ: Բայց ոչ մէկ յոյս կայ որեւէ տեղէ:

Այսպիսի պայմաններու մէջ, Սասունի եւ Տարօնի ղեկավարները կ'որոշեն ժողով մը գումարել Կելիեկուզան գիւղին մէջ:

«1901 տարուան Հոկտեմբեր ամիսն էր, — կ'ըսէ Զօր. Անդրանիկ, — Կելիեկուզան գիւղին մէջ մեր զինուորներէն գաղտնի խորհրդակցական ժողով մը գումարեցինք: Ես, Գէորդ, Յարութիւն,

Վաղարշակ եւ Հաճի Յակոբ: Մեր խորհրդակցութեան նպատակն էր միջոց մը եւ ճամբայ մը գտնել, հայ ժողովուրդին վրայ ծանրացող տառապանքը մեղմելու եւ թրքական ու քրտական հարստահարութիւններն ու հալածանքները դադրեցնելու, քանզի քիւրտն ու թիւրքը ազատ եւ անվախ, հայ գիւղերուն մէջ իրենց ոճիրներն ու ամէն տեսակ բռնութիւնները կը գործադրէին եւ կառավարութիւնը այս բոլորը տեսնելով չէր պատժեր, չէր սանձահարեր եւ չէր սաստեր: Կառավարութիւնը ոչ միայն իր աչքերը կը գոցէր չտեսնելու եւ չլսելու այդ ոճիրներուն պատմութիւնը, այլ ներքնապէս կը քաջալերէր եւ կը կազմակերպէր դանոնք, յառաջ տանելու իր հայահալած ու հայաջինջ քաղաքականութիւնը, պսակելով անոնց կուրծքերը պատուանշաններով եւ առանձնաշնորհումներ պարգեւելով»:

Տիգրանակերտէն մինչեւ Սասունի ու Տարօնի շրջանները քիւրտ եւ Համիտիէի մարդիկը զինուած են թրքական արդիական հրացաններով եւ պիտոյքներով՝ Սուլթան Համիտին կամքը կատարելու: Պատկանցի, Սլիվանցի, Խեանցի, Բագրանցի, Պոթանցի, Խերզանցի, Պոզըզցի, Պելէկցի, Մըլլանցի, Ռեչքոթանցի, Հեսնանցի, Սբիկցի, Ճելալցի, Հայտարանցի, Մուխուրցի, Թախուրցի, Մեզըրըէկցի ինչպէս նաեւ այլ մեծ ու փոքր քրտական աշիրէթներ սիրաշահուած էին այլեւայլ խոստումներով:

Թիւրք կառավարութիւնը, բացի Մուշ քաղաքէն, քսան ութը ցեղերու վրայ թիւրք կանոնաւոր զինուորներ տեղաւորած էր, ըստ գիւղերուն դիրքին մեծութեան: Ամէն հայ գիւղի մէջ կառավարութեան կողմէ նշանակուած էին պահապան քիւրտեր՝ «հսկելու եւ պաշտպանելու համար գիւղը գիշերային որեւէ քրտական յարձակումի դէմ»: Գիւղացի հայը պարտաւոր էր լիովին վճարել այդ գիշերապահպահապան քիւրտերուն: Իրականութեան մէջ, այդ քիւրտ գիշերապահները կառավարութեան ու զօրքին աչքերն էին եւ եթէ որեւէ օտար կամ Ֆետայի գիշեր ատեն գիւղ մտնէր, լուր կու տային ամենամօտը գտնուող զօրքին:

Այս բոլորը նկատի ունենալով ժողովը կ'որոշէ կռուիլ եւ արիւնը արիւնով մաքրել: Պէտք է սարսափի մատնել թիւրքն ու քիւրտը, իրենց որջերուն մէջ իսկ, հանգիստի խաղաղ պահ մը տալով հայ ժողովուրդին:

Տաղանդաւոր եւ հնարամիտ Կոտոյի Հաճին կը յղանայ Առաքելոց վանքի գրաւման ծրագիրը: Ճարպիկ եւ ընդունակ, իր խօսքը ընդունիլ կու տայ այդ նեղ պարագաներուն մէջ, հարցը ներկայացնելով հետեւեալ ձեւով. — «Անհրաժեշտ է բոլոր հայդուկները կեդրոնացնել Առաքելոց վանք, որ աւելի շուտ անառիկ բերդ մըն է, եւ այնտեղէն կոիւ մղել թիւրքերու դէմ՝ որպէս բողոք. թերեւս այդ միջոցով քրիստոնեայ պետութիւններու հիւպատոսներուն ուշադրութիւնը հրաւիրենք...»:

Այս ծրագրին համամիտ եղան բոլոր խմբապետները: Սասունէն

եւ Մշոյ դաշտէն որոշուած օրը պիտի հաւաքուէին Առաքելոց վանքը, իրենց հետ պիտի բերէին ռազմամթերք եւ բաւական պաշար՝ քանի մը շաբաթ դիմանալու համար :

Առաքելոց վանքը կը գտնուի Մուշ քաղաքի հարաւ արեւելքը, կառուցուած է Սիմ սարի թիկունքը, բարձրաւանդակ մարզադետնի մը վրայ, որ շատ հեռու չէ ձիւնածածկ Ծիրնկատարէն : Մեր նախնիքները ընդհանրապէս ամենալաւ տեղերու վրայ շինած են մեր այդ հողեւոր եւ մտաւոր կոթողները. հոն, ամէն քայլափոխիդ, կը հանդիպիս աղբիւրի, հոտաւէտ ծաղիկներու, բնութեան զմայլելի տեսարաններու, եւ դուն քեզ կը մոռնաս, կը կարծես բնութեան հրաշալիքներով չըջապատուած՝ վերացական կեանք մը կ'ապրիս : Առաքելոց վանքի դմբէթը մեր վանքերու դմբէթներուն ամենէն բարձրն է : Եկեղեցիին մէջ, աջ ու ձախ կան դերեզմանները երկու աւետարանիչներու՝ Մատթէոս եւ Մարկոս : Աջ ու ձախ երկու եկեղեցիներ՝ Գէորգ եւ Ս. Ստեփաննոս, որոնց դմբէթները Լենկթիմուրի ժամանակ կործանուած են. մնացած էին կեդրոնական դմբէթը եւ զանգակատան դմբէթը : Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ սեղանը վերցուած էր եւ մէջը յարդ կը լեցնէին անասուններու համար. իսկ Ս. Գէորգին մէջ, մինչեւ 1900 թուականը, համանուն սուրբի տօնին, պատարագ կը մատուցուէր, իսկ 1901-ին իբրեւ մառան կը գործածուէր :

Վանքէն 200 քայլ հեռու կը գտնուի Ս. Աստուածածին եկեղեցին : Հարաւ արեւմուտքը Թաղէոս Առաքեալի անունով աղբիւր մը եւ խաչքարով գերեզման մը կան :

Վանքը ունի պատմական գերեզմաննոց մը, զոր մշեցիները «Խաչերով բակ», իսկ վանքի միաբանութիւնը «խաչաթոռքներ» կը կոչեն : Այդ գերեզմաննոցը կը հանդէին մեր ազգի ամենէն թանկագին անձերու նշխարներ. — Ղազար Փարպեցի, Դաւիթ Անյաղթ, Մամբրէ Վերծանող, Մովսէս Խորենացի, Ասողիկ եւ Մամիկոնեան տոհմէն երկու ճորտիկներ :

Վանքը չըջապատուած է քանի մը հայկական գիւղերով : Վանքին անմիջապէս ստորոտը, կէս ժամ հեռու կը գտնուէր Արախ գիւղը, իսկ ժամ մը հեռաւորութեան վրայ կը գտնուէին Հաւատորիկ, Բերդակ, Տերդեվանք եւ Մոկունք գիւղերը, Մուշ քաղաքն ալ լեռնային ճանապարհով շուրջ մէկ ժամ հեռու էր միայն :

Առաքելոց վանքի հոգածութիւնը եւ հսկողութիւնը յանձնուած էր Վանահայր Յովհաննէս Վարդապետին : Իր հոգածութեան տակ էին 60—70 օրբեր, որոնց ուսուցիչ-վարպետ մը կը դասաւանդէր հայերէն լեզուն, կրօնը եւ կը սորվեցնէր արհեստներ : Վանքը կը բնակէին ընդամէնը 80 հոգի, վարդապետ, ուսուցիչ, տնտես, հովիւ, եւայլն :

Հոս կ'արժէ ծանօթացնել վանահայր Յովհաննէս Վարդապետը :



ԱՌԱՔԵԼՈՅ ՎԱՆՔԻ ՄՕՏ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ԳԵՐԵԶՄԱՆԸ

Ուր կը հանգչին մեր ազգի ամենէն քանկագին անձերու նշխարներ — ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՅԻ, ԴԱԻԻԹ ԱՆՅԱՂԹ, ՄԱՄԲՐԷ ՎԵՐԾԱՆՈՂ, ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ, ԱՍՈՂԻԿ եւ Մամիկոնեան տոհմէն երկու ճորտիկներ:

Աջին նստած է վանահայր ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՈՒՐԱՏԵԱՆ:

Յովհաննէս Ծ. վարդապետ Մուրատեան ծնած է Խուլի դաւառի Պարզան դիւղը: Կը յաճախէ Առաքելոց վանք, ուր Յովհաննէս իր ուշիմութեամբ եւ բարի վարքով շուտով սիրելի կը դառնայ թէ՛ վանահօր եւ թէ՛ միւս վանականներուն: 18—19 տարեկանին վարդապետ կը ձեռնադրուի: Քանի մը տարի ետք կը ստանայ ծայրազնութեան աստիճան, երբ իր նախորդը՝ Յովհաննէս վարդապետը կը վախճանի: Իր ազդեցիկ եւ ժրջան բնաւորութեան շնորհիւ, ինք կ'ընտրուի վանահայր, թէեւ ամենէն երիտասարդն էր:

Յովհաննէս վրդ. շատ ազդեցիկ եւ արդարադատ վանահայր մը կը դառնայ: Զի դռնուիր մէկը, որ չհիանայ անոր անբասիր կենցաղին վրայ: Վանքը խիտ անտառով շրջապատուած էր, եւ թիւրք ու քիւրտ աւազակներ միշտ վանքին պատուհաս եղած են. երբ աւազակ թիւրքեր կամ քիւրտեր վանքին վնաս հասցնէին՝ ան շուտով կը դիմէր իր սուրմալի հրացանին:

Շատ անդամներ ան ետ մղած է աւազակները: Նոյնիսկ երբեմն զինուած, ձի կը նստէր եւ կը շրջէր վանքի բոլորտիքը, լաւ մը ուսումնասիրելու համար:

Շնորհիւ վանահօր, վանքը եղած էր նաեւ յեղափոխականներու օրրան, եւ շատ մը աշակերտներ փոխանակ կղերական ըլլալու, իր

չունչով Ֆետայիններ կը դառնային : Իր աշակերտներն էին Արաբոն ,
 Լեւոնը , Գէորգ Չաւուշը , Մուրատը , Մովսէսը եւ շատ ուրիշներ :

Իսկ Ֆետայինները մեծ յարգանք ունէին դէպի Յովհաննէս վար-
 դապետը . յաճախ Կոտոյեան Հաճի Յակոբը կ'ըսէ .—

«Հայր Սո'ւրբ , մենք շատ կը սիրենք , դու մըր Խրիմեան Հայ-
 րիկն ես , Վարդան Վարդապետէն զատ ինչքան վարդապետ կայ՝ զը-
 մէնլէ խուրպան եղած են քրդի . մենք բոլորս լէ գըրդի կը սիրենք , մէկ
 շաբաթ գըրդի չտեսնանք՝ գինանք տարի մ'է չենք տեսի» :

Ժողովը որոշում առնելէ ետք , Անդրանիկ , Գէորգ Չաւուշ եւ
 Կոտոյի Հաճին լուր կ'ուղարկեն Յրօնք գիւղը , որ տասը հոգի անյա-
 պաղ վառօղի փոշի փոխադրեն Առաքելոց վանք :

Քանի մը օր ետք , Շաբաթ 3 Նոյեմբեր 1901-ին , Սասունի եւ
 Տարօնի լեռներն ու ձորերը ծածկուած էին ձիւնի թանձր խաւով , քա-
 մին սաստիկ կը փչէր , ամէն մարդ տուն քաշուած էր , «Մովասարի
 խումբը եւ իր խմբապետը լեռներէն իջան . . . » : Մուշէն բերած էին
 ռազմանիւթ , իսկ դաշտէն ալ տղաք , որոնց վանքի պատերուն տակ
 արհեստական պատնէշներ շինել տուին :

Երբ խումբը կը մօտենայ Առաքելոց վանքին , «Դաշտի գիւղե-
 րու մէջ թափառող(*) Սէյարի (խուզարկիչ) ժանտարմաներու գու-
 մարտակ մը , իմանալով այդ բանը՝ կը փութայ հոն , ուր ան կ'են-
 թարկուի մեր տղոց անակնկալ հրազէնի կրակին եւ քանի մը անձերու
 կորուստով՝ խոյս կու տայ եւ քաղաք գալով՝ լուր կու տայ կառավա-
 րութեան :

«Կառավարիչը շուտով իր քով կը կանչէ տեղապահ Վարդան
 վարդապետը եւ Քաղաքական Ժողովի անդամները՝ որոնց կը յայտնէ
 որ սիտի ռմբակոծէ վանքը , եթէ անոր մէջ տեղաւորուած Ֆետայի-
 ները անձնատուր չըլլան :

«Մերինները կը պատասխանեն .—

«Մենք որեւէ կերպով կապ եւ յարաբերութիւն չունինք Ֆետա-
 յիններուն հետ , անշուշտ մենք ալ կը ցաւինք անոնց այս ըմբոստ վար-
 մունքին համար :

«Յուզումի մատնուած կառավարիչը հոն կը փութացնէ հրա-
 մանատար Սալեհ փաշան՝ ընկերակցութեամբ մեծաքանակ զօրքի եւ
 թնդանօթի» :

Նոյն օրը կէսօրէ ետք կը լսուի փողի ձայն մը . տասնըվեց
 թիւրք զինուորներ կ'երեւին վանքին մօտ : Երբ թիւրք հարիւրապետը
 կը հասնի վանքի դռներուն մօտ , կը տեսնէ մեծ դուռը գոց է , կը
 ստիպուի անցնիլ միւս կողմը , փոքր դռնէն ներս մտնելու համար :
 Հազիւ հասած էր իր ընկերներով եւ կ'ուզէին վանքի դռնէն ներս մտ-
 նել , Ֆետայինները օդին մէջ կրակելով , զիրենք զինաթափ կ'ընեն եւ
 զէնքերը կը գրաւեն . Նոյեմբեր 4-ի Կիրակի օրն էր : Այլեւս թիւրք կա-

(*) Ազան Տարօնցի , «Հարազատ Պատմ. Տարօնոյ» , էջ 155 :

ուսման ժամանակ յայտնի է, որ Փետայիները կան վանքին մէջ: Լուր կուտան Փետայիներուն, թէ պատրաստ են թոյլատրելու, որ վանքէն դուրս ելլեն ու հեռանան, եւ զիրենք պիտի չձերբակալեն:

Չորեքշաբթի Նոյեմբեր 7-ի երեկոյեան ժամը 7-ին վանքի հովիւները լուր կը բերեն, թէ երեք տարբեր տեղերէ թիւրք կանոնաւոր հազարաւոր զինուորներ դէպի վանք կը յառաջանան: Նոյեմբեր 12-ին օդը կը սկսի աւելի ցրտիլ եւ ձիւնը բարձր լեռներէն հետզհետէ կ'իջնէ ու կը հասնի վանքի բակը: Թրքական 6000 զինուորները ձիւնէն ու բուքէն պաշտպանուելու համար, մօտակայ հայ դիւղերէն, — Բերդակէն, Արախէն, Տերգեվանքէն, Ալի Չղնայէն, — վեց հարիւր լծկան եղներ բերած են իրենց ծառայեցնելու եւ դետնափոր տուններ եւ դիրքեր շինելու համար:

Սակայն, երբ վանքը կը պաշարուի թշնամիի կողմէ, պատրաստութիւնները տակաւին չէին վերջացած: Պաշարումէն անմիջապէս ետք, Անդրանիկ, Գէորգ եւ Կոտոյի Հաճին խոհեմութիւն կը սեպեն չերեւիլ, այլ սպասել եւ կարծել տալ թշնամիին, թէ ներսը զինեալ Փետայիներ չկան, յուսալով որ թշնամին այդ ձեւով կը հեռանայ: Բայց թիւրքը վստահ էր իր հոտառութեան եւ եկեր նստեր էր վանքի պատերուն տակ, շնորհիւ իր վարձած վատոզի լրտեսներուն, առանց նկատի առնելու ձմեռնամուտի խստութիւնները:

Օրերը կ'անցնին, նօսրացնելով զինուորական շարքերը, մինչ պաշարեալները ամէն օր նոր կորովով կը դիմադրեն: Ինչ որ կառավարութիւնը չէր կրնար գէնքի զօրութեամբ յաջողցնել, պաշարող զինուորները կը փորձեն անուշութեամբ յաջողցնել, առաջարկելով, որ ձգեն վանքը ու մեկնին, բայց Փետայիները չեն պատասխաներ:

«Երբ հայդուկները մուտք էին դործում վանք, — կ'ըսէ Յարութիւն Սարգիսեանը, — աշակերտները խմբերի բաժանուած, պարտականութիւն ունէին վանքից դուրս հեռուններ կամ քիչ մօտ, յարմար սեպուած տեղերում պահակ կանգնել. այդ օրերին դպրոցը փակ կը մնար:

«Վանքը ունէր մէկ մեթր երկարութեամբ մի մեծ հեռադիտակ, որին տանում էր Մուշ քաղաքի ճամբաներին հսկող պահակ խումբը, երբ որեւէ կողմից թրքական զօրքի յառաջացումը նկատուում էր, պահակները այժեամի վազքով սրնթաց հասնում, որպէս վտանգի ազդանշան՝ եկեղեցիի մեծ դանդերը հարում էին, որոնց ձայնը շատ հեռուններում լսում էր, այսպիսով միւս պահակները չորս կողմից արագ վերադառնում էին. հայդուկները վանքի փոքր դռնից առանց նկատուելու, իջնում էին Իշխանաց աղբիւր, յետոյ Մեղրաձոր, ապա քարքարոտ ձորամիջով բարձրանում Կումկումներ կոչուած տեղ, այնտեղից էլ դէպի Միրնկատար, ապա անցնում Սասուն եւ կամ Մեղրաձորից ժայռերի արանքներով ուղիղ բարձրանում, յեռնաթեւ դնում էին Հաւատորիկի կամ Մառնկայ անտառը (պուրակ):

«Թիւրք հրամանատարութիւնը վանքը պաշարելով՝ նախ այն

համոզմունքն է գոյացնում, որ վանքում ուտեստեղէնները շուտով սպառուելու են. յետոյ՝ ձիւն-ձմեռին, սառնամանիքին, հայրուկները պիտի չկարողանան պաշարման շղթայից անցնել, ճողոպրել. հետեւաբար դատապարտուելու են ոչնչանալու կամ անձնատուր լինելու:

«Բայց ի՞նչ էր մտածում հնարամիտ Գէորգը. նա ամէն օր աշակերտներին հանում էր բարձր տանիքը, բըռ (բերդ) խաղալու. յաճախ ինքն էլ մասնակցում էր. երեք կողմից թիւրքերի արձակած զնդակները ջրլըփ-ջրլըփ կպչում, մխրճւում էին տանիքի թաց հողի մէջ եւ կամ խաղացողների դուռխների վրայով Փսթ-Փսթ սուլոցով անցնում-գնում՝ հաճոյք պատճառելով չարաճճի աշակերտներին:

«Շատ տարիներ յետոյ պարզ է դառնում, որ Գէորգը աշակերտներին տանիք հանելով դէմ առ դէմ թիւրք զինուորների, խաղարկումներ կատարել տալով, նպատակ է ունեցել թշնամիին զգացնել, որ վանքում ապրողները որեւէ մտահոգութիւն չունին եւ միաժամանակ զինուորների մէջ հոգեբեկում առաջացնել եւ նրանց դիմադրական կորովը թուլացնել:

«Այն ժամանակներին ապակիի փոխարէն, ձմեռուան եղանակին եկեղեցիի եւ սենեակների պատուհանները ծածկում էին սպիտակ հաստ թուղթերով, որոնց վրայ քիչ ձէթ էին քսում, որ լոյսը աւելի թափանցիկ դառնար. Գէորգի զրդմամբ միաբաններից Բերդակցի Մուրատը յիշեալ թուղթից մի մեծ կտոր ոլորելով, դանդակատան սիւներից մէկի ետեւ թաքնւում, միանգամայն ճիշդ եւ բնական սկըռում է թրքական «Հիւճիւճ Պոռխի»ն փչել. Անդրանիկը եւ բոլոր հայրուկները անակնկալի եկած, ապշահար իրենց տեղերից-զիրքերից դուրս են թափւում. «Թիւրք զինուորները ե՞րբ եւ ի՞նչպէս են մուտք գործել վանքի բակը»: Սակայն ոչինչ չի նկատուում. Գէորգը մի անկիւնում կանգնած քմծիծաղ է տալիս. քիչ յետոյ կատակ-խաղը բացայայտուում է. Անդրանիկը ջղայնացած հայհոյում է՝ «Պապան ճանրնա...» եւ վերադառնում է իր տեղը:

«Գէորգը հանգիստ չէր մնում. միշտ շարժման մէջ էր. նա զինակիցների Ֆիզիքական թերի կողմերը գիտէր. թէ ով որտեղից խրտրտի ունէր. միշտ մէկին զրդում էր միւսին նեղացնելու. կուլաչ բռնել, գօտեմարտ ամէնօրեայ զբաղմունքն էր. նրանց մէջ Ֆիզիքայէս ամենէն ուժեղը Տերգեւիւնքցի Եահուտի Բարսեղն էր, որին ոչ ոք կարողացել էր յաղթահարել, մէջքը գետին դնել. այդ տեսակէտից ուժեղ էր նաեւ մեր աւագ ուսուցիչ Մշեցի Միքայէլը, որին Դաղօ էին կոչում. նա բարձրահասակ, քիչ նիհարակազմ, բայց ջղուտ եւ ուժեղ էր. Գէորգը մեր դասարանում յիշեալներին մղում է գօտեմարտի. երկուքն էլ ամենի եւ հուժկու, նրանց մաքառումը կէս ժամից աւելի է տեւում. աշակերտներս բուռն հետաքրքրութեամբ դիտում ենք. վայ թէ մէկը նրանց ոտքերի տակ ընկնէր. վերջապէս Բարսեղը յաղթում է, Միքայէլի մէջքը գետին տալով. ապա իջնում գնում է տրն-



Ա Ն Դ Ր Ա Ն Ի Կ

տեսատուն. հետեւում ենք իրեն. թոնիրը նոր վառել եւ մուխը իջել էր մինչեւ յատակը. օդը անշնչելի էր. Բարսեղը թոնրան եզրին նըստում, սկսում է յաղթական երգել. «Մասեաց ճակատէն ամպրոպ պայթեցաւ, Սուլթան ուժ ունիս, իջիր մարտի դաշտ... ալ չեմ վախնար քո ք...ոտ զօրքէն, Սուլթան ուժ ունիս, իջիր մարտի դաշտ...»:

«Թիւրք զինուորներից ոմանք իրենց դետնափոր դիրքերից սողոսկելով, քարերի արանքներով իջնում էին ցած, գոմի ետեւի քարերում թաքնւում եւ նշանառութեամբ կրակում էին. երբ մէկն ու մէկի գլխի Ֆէսը երեւում էր, Գէորգը նշանառութեամբ կրակում էր. Ֆէսը թռչում էր օդին մէջ. նման պարագաներին Գէորգը ըստ իր սովորութեան բացազանչում էր — «Հըլ, հըլ, ես Գէորգն եմ». Ժայռերի միջից մի զինուոր ձայնում է. «Այդ դո՞ւ ես Գէորգ Չաւուշ...»:

Անդրանիկ շուտով կը կանչէ իր զինակիցները եւ կ'ուզէ կազմել զինուորական խորհուրդ մը. ժողովը կ'ընտրէ հետեւեալ կազմը. — Անդրանիկ՝ նախագահ, խորհրդականներ Կոտոյի Հաճի Յակոբը, Գէորգ Զաւուշ, Կայծակ Վաղարշակ եւ Իսրո Կորիւն: Իսկ զինուորներն էին Եահուտի Բարսեղ (որ կը սպաննուի դուրս գալու օրը, վրիպած գնդակէ մը), Մոկացի Աստուր, Արապ Աւտուլլա, Սէյտո Պօղոս, Վարդան՝ Ալվառինջ գիւղացի, Անդրօ եւ Միսաք եղբայրները՝ բերդակցի, Մկրօ՝ Խաս գիւղացի, Կամոյի Զադօ, Եղօ, Երկար Քիթ Մուրատ՝ բերդակցի, Թարսիթող Սարգիս՝ տալուորիկցի, Սիմոն՝ սողգոմցի, Սերոբ եւ Ղազօ՝ արախցի, Մխիկ Մանուկեան, Ելօ Մանուկեան, Մկրտիչ Պետոյեան, Խուրշուտ Յակոբեան, Նիկողոս Յարոյեան, Վելօ Հլղաթեան, Մուրատ Պետրոսեան՝ ցրօնքցի, Խաչիկ Մանուկեան՝ ցրօնքցի, Սահակ Թաթիկեան, Մովսէս Բոնդէեան՝ բերդակցի, Աղեքսանդր Նիկողոսեան՝ խասգիւղցի, Արամ Խուրշուղեան՝ արախցի, Պօզէն՝ մառնիկցի, Մելքոն եւ Քեարիմ մոկացիներ:

Ցրօնքցի Մուրատ, որ մասնակցած է Առաքելոց վանքի կռիւին, կը պատմէ. —

«Նոյեմբեր 19-ի գիշերը ժամը 3.15-ին թիւրք զինուորներ երեք կողմերէ ուժեղ յարձակումի սկսան: Մութ էր երկինքը: Ահաւոր մշուշ մը տարածուած վանքի շուրջ, տասը քայլի վրայ ոչինչ չէր երեւեր: Թիւրք զինուորները գիշերուան մութէն օգտուելով գոմին յատը ծակած ներս խուժած էին»:

«Գոմի ներսի պատն ալ ծակելով — կ'ըսէ Զօր. Անդրանիկ — մարազը եկած դիրքեր բռնած էին գոմին եւ մարազին մէջ, մեզմէ եօթանասուն քայլի վրայ: Յանկարծ մէկը քրտերէն լեզուով հայհոյանք մը ըրաւ դէպի մեզի եւ սկսաւ պոռալ.

«Անդրանիկ փաշա, Անդրանիկ փաշա, ես Մերտինի գաւակն եմ, Հասանին ալ հայրը, ո՞ւր պիտի ագատիս իմ ձեռքէս»:

«Գէորգը թարգմանեց խօսած խօսքերը, ըսի Գէորգ պատասխանէ անոր քրտերէնով, քանզի ես քրտերէն չեմ գիտեր: Գէորգը պատասխանեց. «Ես պգտիկ Գէորգն եմ եւ Հասանին մօրը սիրականը, ո՞ւր պիտի ագատիս իմ ձեռքէս»:

«Մարդը ձայնը կտրեց: Այն ատենն էր որ թիւրք մը ձայն տուաւ եւ ըսաւ. «Գէորգ Զաւուշ դո՞ւն ես»:

«Գէորգ կարգ մը հայհոյանքներէ վերջ պոռաց. «Գացէք սոխու սխտոր ծախեցէք, դուք ո՞ւր, կռուիլ ո՞ւր»:

Օրերը կը յաջորդէին իրարու, կառավարութեան համար ամօթապարտութեան նախատինքով, իսկ Փետայիներու համար քաջութեան ու արժանաւոր պարծանքի դափնիներով: Ու Երլտըզ նստած Կարմիր բռնապետը աւելի եւս կը ջղայնանար, հեռագիր հեռագրի վրայ տեղացներով դողահար կառավարիչին, անկէ պահանջելով ժամ առաջ վերջացնել որեւէ կերպով: Անդրանիկ եւ Գէորգ համաձայնու-

Թիւն յայտներ էին վանք ընդունելու կառավարութեան բանադնաց-
ները :

Երբ բանադնացները վանք կը հասնին , եւ կ'առաջնորդուին ի-
րենց յատկացուած սենեակը , դողահար , սմբած ու շփոթ , չեն հա-
մարձակիր խօսիլ , յստակօրէն յայտնել այն պաշտօնը , որ իրենց տըր-
ուած էր , մինչեւ որ Անդրանիկ եւ Գէորգ վստահութիւն կը ներշնչեն
անոնց :

Խեղճերը , միշտ չքմեղացնելով իրենք զիրենք իբր «հրամանի
ծառաներ» , կը յայտնեն , թէ Սուլթանը կը պահանջէ եւ կը հրամայէ ,
որ Ֆետայիները անձնատուր ըլլան , հաւաստելով թէ ներման եւ
չնորհներու պիտի արժանանան :

Իսկ Անդրանիկին ալ դրամ կը խոստանան , պայմանաւ որ հե-
ռանայ երկրէն , նկատի ունենալով որ ազատ ճամբայ պիտի տրուի :

Գացէ՛ք , հաղորդեցէ՛ք ձեր տիրոջ , — կը պատասխանէ Անդրա-
նիկ , — թէ մեր մէջ մահուընէ վախցող չկայ , այն օրը որ դէնք բարձ-
րացուցինք , արդէն ինքզինքնիս մեռած նկատեցինք : Կրնանք բոլորս
մեռնիլ : Բայց ամէն մէկուն ետեւէն հարիւրաւորներ , հազարաւորներ
կը հասնին : Քանի բռնութիւնը կը տիրէ եւ անմեղ ժողովուրդը կը հա-
րըստահարուի , պայքարը կանդ պիտի չառնէ : Ու կը ճամբէ բանա-
դնացները :

Այս առթիւ խօսք տանք Անդրանիկին .

« . . . Աշխատեցանք նոր ընկերներ եւ մի քիչ պատրաստութիւն
ձեռք բերել , Ս . Առաքելոց վանուց մէջ ամբանալ , բայց կառավարու-
թիւնը միջոց չտուաւ , եւ դեռ լիապէս չպատրաստուած՝ պաշարուե-
ցանք : Նոյն օրը չորս հինգ զինուոր լեռ ունէինք , եկան ներս մտնելու ,
այդ միջոցին դէպքն սկսաւ , երկու մարդ մեզմէ սպաննուեցաւ , մէկը
մեր հին զինուորներէն՝ Յուրուղցի Յարութիւնը , միւսը զինուորաց
հետ եկող ժողովրդէն՝ կելիեկուզանցի Ղազար Խըչոյեան . անոնց ներս
առինք եւ 20 օր դէպքը շարունակուեցաւ : Չորս կողմերնիս պաշարած
թշնամեաց կողմանէ թէ սպաննուած եւ թէ ցուրտէն սառած սատկածի
թիւը 50-ի կը հասնի . հիւանդանոցներ մարդ լեցուն են եւ մահ ան-
պակաս մէջերնին : Դէպքին չորրորդ օրը բանակցութեան մտանք կա-
ռավարութեան հետ , առաջին անգամ իրենց կողմէ նամակ մը գրուե-
ցաւ մեզ , Առաջնորդարանի ձեռամբ , որպէսզի որեւէ ձեւով զմեզ կամ
անձնատուր ընէ կամ դուրս հանէ : Բայց մենք կարեւորութիւն չտալով
երեք օր միջոց ուղեցինք պատասխանելու , բայց իրենք իբր վախ ցոյց
տալու մեզ , վանքի առաջնորդը տոմսակաւ մը զրկեցին՝ եկաւ վըճ-
ուական պատասխանը ուղելու , թէ ոչ ուժգին գործողութեանց պիտի
ձեռնարկուի . կրկին պատասխանեցինք թէ , առաջարկութիւննիս
վճուական է . երեք օր պայմանաժամ պէտք է տրուի , եթէ ոչ ուղածը
թող ընէ : Այդ գիշեր ժամը երկուքին արշաւանք ըրաւ , ներս լեցուիլ
ուղեց , բայց ապարդիւն , իր նպատակին չհասաւ :

«Վերջապէս երեք օր զինաձգութիւն անպակաս շարունակուելէ

յետոյ, կրկին տոմասկաւ պատասխան խնդրեցին. առաջարկեցինք, թէ մէկ քոմիտէր եւ երկու առաջնորդ պէտք է դան, անոնց պիտի յայտնենք նպատակնիս. ուստի եւ դէպքին 11-րդ օրը եկան 2 քոմիտէր եւ 2 առաջնորդ, ներս առինք երեք ժամ խօսեցանք: Սօսակցութեան չսկսած իմացանք անոնցմէ Անգլիոյ հիւպատոսին քաղաք վերադառնալը, նաեւ թէ Ռուսիոյ հիւպատոսը օրթոտոքսութեան պատճառաւ մեր խնդիրները կը մերժէ, որով ծրագիրնիս փոխեցինք. առաջարկեցինք թէ, նպատակնիս է անձնագոհ լինել, ազգերնու իրաւունքը պաշտպանելու համար, եւ թէ չիրագործուի պահանջնիս՝ պիտի կըռուինք ու մեռնինք:

«Ա.— Քաղաքական տեսակէտով ձերբազալուածներ արձակել:

«Բ.— Սպաղանաց սրածութիւնք եւ վառուիլը. Հիթանայ եւ Շուչնամերկի այրուիլն եւ մի քանի մարդոց սպանութիւնք. հատուցում ընել:

«Գ.— Ըստ կառավարական օրինի, դիւղը պէտք չէ ծախուի:

«Դ.— Այս տարի ամրան կառավարութեան հրամանով տեղի ունեցած հարստահարութիւնք եւ սպանութիւնք դաշտի մէջ, որ 50—60 անձէ աւելի սպանուեցան, պէտք է դարմանուին:

«Իրենք ալ իրաւունք տուին մեր առաջարկած պահանջաց, խոստանալով, որ անպակաս պիտի հեռագրեն Սուլթանին եւ Պատրիարքին եւ ատոնց դարմանուելուն պիտի նայուի: Մենք ալ առաջարկեցինք, որ մեր բողոքներու պատասխանը մինչեւ որ Սուլթանի, Պոլիս պտնուող դեսպանաց եւ Պատրիարքին կնիքով կնքուած չգայ, հեռագրով նոյնիսկ գալու լինի ալ, դուրս պիտի չելլենք: Եւ երբ կնքուած դայ՝ ձայներնիս լսելի եղեր է եւ ըստ այնմ պիտի վաւերացնենք մեր կողմանէ եւ ապա դուրս գանք: Առաջարկութիւննիս բոլոր յանձն առած մեկնեցան եւ 8 օր յետոյ պատասխան եկաւ Պատրիարքի կողմանէ հեռագրուած սատրաղամի վաւերացմամբ, թէ երբ անձնատուր լինիք պիտի օգտուիք Սուլթանէն եւ պահանջնիդ պիտի իրագործուի, քայց տեսանք որ մեր պահանջներուն համապատասխան չէ, միջոց փնտռեցինք դուրս ելլելու»:

Վանքի մէջ մնալ եւ կռիւր շարունակել դժուար էր այլեւս Ֆետայիններուն համար, թշնամին աւելի զօրք կը բերէ եւ չորս կողմը կը զօրացնէ իր ոյժերը: Զինուորական խորհուրդը կ'որոշէ ամէն գնով ձգել վանքը ու դուրս ելլել: Այս մասին կը մտածէին, երբ կէսօրուան մօտ, Շուչանիկը որ Գէորգի եւ Անդրանիկի կողմէ Մուշ դրկուած էր առաջնորդարան լուր տանելու անցուղարձերու մասին եւ որ յաջողած էր երթուղարձ ունենալ շնորհիւ թիւրքերու թոյլտուութեան, որովհետեւ կին մըն էր եւ ծանօթ էին իրեն, ուրեմն այդ կինը կու գար դէպի վանք, Յովհաննէս Վարդապետի հետ:

«Նոյեմբեր 22-ի(*) կէսօրն է: Երկու կողմէն դադրած էին հրա-

(*) Զօր. Անդրանիկ, «Առաքելոց Վանքին կռիւր», էջ 41—49 :

ցանաձգութիւնները: Այն հայ կիներ որ քանի մը օրեր առաջ նամակ մը բերած եւ իր պատասխանը առած գացած էր, դարձեալ երեւցաւ իր ձեռքերը օղին մէջ բարձրացուցած: Այս կնոջ կ'ընկերանար վանքին վանահայր Յովհ. Վարդապետը: Մուշէն կու գային անոնք, իրենց հետ նամակ մը բերելով: Վանահայրը եւ կիներ վանքի դրան առջեւ հասան: Դողդոջ ձայնով մը վանահայրը ըսաւ. «Աստուած օրհնէ. Աստուած օրհնէ, ի՞նչ պիտի ըլլայ ձեր վիճակը չորս կողմ արիւններ թափուած էր: Աստուածածնի մատուռին գետինը արիւնով ծածկուած էր: Թիւրք սպաննուածներն ու վիրաւորները դիշերով Մուշ կը բերուին յուսալքում չպատճառելու թիւրք ժողովուրդին»:

«Հայր Մուրբ ինծի ըսէ թէ թիւրք զինուորը ամենէն շատ ո՞ր կողմը կեդրոնացած է եւ այդ զօրքերուն հրամանատարին վրանը ո՞ր կողմն է»:

«Փաշա՛, ամէն կողմերը զօրքերով լեցուն է: Լսածիս նայելով հրամանատարին վրանը Խեւ Յովհաննու Քարերն են: Աստուած օրհնէ ձեզ, կարդացէք այդ նամակը եւ պատասխանեցէք: Մուլթան Համիտէն իրատէ (հրաման) ելած է որ Մուղտատ էֆ.ին եւ Քոմիսէր Մուհամմէտ էֆէնտին գան եւ լսեն ձեզ եւ իմացնեն Վերին Մարմիններուն ձեր պահանջները»:

«Հա՛, ես ուզեցի որ Պիթլիսի կուսակալը, Ֆերիք եւ Ալի Փաշաները գան, անոնց հրաման եղած է:

«Նամակին պատասխանեցինք թէ թող գան: Յովհ. Վարդապետը եւ կիներ մեր նամակը ստանալով հեռացան վանքէն:

«Այն օրը որ մենք իրենց նամակին պատասխանեցինք թէ թող գան, իսկոյն վանքին Առաջնորդարանը մաքրեցինք եւ մոմերուն դատարկ սնտուկները բերինք եւ Առաջնորդարանին մէջ իրարու վրայ շարեցինք՝ վրայի չորս հինգ սնտուկները միայն փամփուշտներով լեցնելով: Փամփուշտի այդ սնտուկներուն քով ցիրուցան ձգեցինք փամփուշտ լեցնող գործիքները, անդլիական եւ տեղական վառօղներուն տոպրակները եւ սնտուկները: Մենք զմեզ պատրաստեցինք ընդունելու մեր «բարեկամները», որոնք պիտի գային մեզ մօտ լսելու մեր պահանջները...»:

«Նոյեմբեր 23-ի օրը ժամը 6.30-ին, (Բ. Թ.) թրքական փողերը դարձեալ հնչեցին: Քանի մը վայրկեան վերջ մէկ քանի անգէն մարդիկներ երեւցան: Անոնք դէպի մեզ քալել սկսան: Երբ մեզի մօտեցան, տեսանք թէ Մուշի Առաջնորդ Խոսրով Վարդապետ Պէհրիկեան, Մուղտատ էֆ.ին, Մուհամմէտ էֆ.ին եւ վանահայր Յովհ. Վարդապետն էին:

«Աչքի զարնող ինը տղաքները իսկոյն իրենց դիրքերուն վրայ պահապան դրի եւ մնացած զինուորներն ալ պահեցի, որ անոնք չտեսնեն մեր զինուորին խեղճ հագուստը եւ իրազեկ չըլլան մեր ոյժին եւ քանակին:

«Երբ խումբը Աստուածածնի մատուռին առջեւ հասաւ՝ հոն կե-



ՎԱՀԱՐՇԱԿ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

Կայծակ

(1875 — 1904*)

ցան եւ սկսան մէկ քանի վայրկեան թիւրք զինուորին հետ խօսիլ: Երբ վանքին դրան առջեւ հասան իսկոյն Վաղարշակն ու Բարսեղը զրկեցի որ վանքին փոքր դուռը բանան եւ հիւրասիրեն դէպի Առաջնորդարան: Տասը վայրկեանի չափ Վաղարշակին եւ Բարսեղին հետ խօսքի բռնուեցան քանզի կը վախնային ներս մտնել: Իսկոյն վերէն պոռացի. «Կամ ներս թող դան, եւ կամ հեռանան, թէ որ մենք զարնել ուզէինք»

(*) Կարդալ «Յեղափոխական Ալպում»ի երկրորդ հատոր, էջ 216:

արդէն զարկած էինք հեռաւորութեան վրայ : Պէտք է գիտնան թէ երբ մենք խօսք կու տանք , ամէն գնով մենք մեր խօսքերը կը յարգենք» :

Ներս եկան եւ հիւրասիրուեցան Առաջնորդարան :

«Բարեւ ձեզ :

«Բարեւ տեսանք :

«Սկսան իրենք զիրենք ծանօթացնել , Մուղտատ էֆ . , Մուհամմէտ էֆ .ին , Առաջնորդը եւ Վանահայրը :

«Նստեցէ՛ք , նստեցէ՛ք , ըսի :

Մուղտատ էֆէնտին վախէն կը դողար : Երբ Մուղտատի այդ վիճակը տեսայ՝ ըսի . «Կատարեալ կերպով դուք զձեզ ապահով զգացէք եւ մի վրդովիք երբեք» :

«Խոսրով Վարդապետ իր աջը երկարեց ինձի եւ ըսաւ .

«Համբուրէ , զաւակս , համբուրէ» :

«Մտածելիք ունիմ , պէ՞տք է համբուրեմ՝ թէ ոչ» :

«Համբուրեցի աջը : Վանահայրը եւ Պէհրիկեանը դիտմամբ իրարու հետ կը շփոթէի անոնց անունները տալու ատենս : Ես այդպէս կ'ընէի որ Յովհ . Վարդապետը որեւէ պատասխանատուութենէ ազատ պահեմ : Վանահայր Յովհ . Վարդապետը երկար շատ երկար տարիներէ ի վեր կը ճանչնայի եւ վայելած էի շատ անգամներ անոր հիւրասիրութիւնը եւ բարեկամութիւնը :

«Հայութենէ դարձած Մուհամմէտ էֆէնտին սխալներս կը շրտկէր քմծիծաղով մը՝ երբ Յովհաննէսին Խոսրով եւ Խոսրովին Յովհաննէս կ'ըսէի : Մեր խօսակցութիւնը սկսաւ եւ ես այսպէս խօսեցայ .

«Կը փափաքէի որ Ալի եւ Ֆէրիք փաշաները հոս ըլլային Պիթլիսի կուսակալին հետ , բայց քանի որ Սուլթան Համիտը ձեզ նշանակած է գալ եւ դուք եկած էք , լաւ . . .» :

«Այս ատեն էր որ Մուղտատ էֆէնտին խօսքս ընդմիջելով դողդոջ ձայնով մը ըսաւ .

«Փաշա՛ , վանքը (թէ՛քէ՛ն) թող վկայ ըլլայ , ոչ մէկ բառ ոչ աւելի , ոչ պակաս պիտի ըսեմ : Պիտի խօսիմ ինչ որ ըսէք մեզի :

«Մենք մեր կռնակները մոմերու դատարկ սնտուկներուն տուած էինք : Իմ ձախ կողմս նստած էր Գէորգ Չաւուշը , անոր ձախ կողմը Հաճի Յակոբը , դուռը կեցած էր Վաղարշակը , իսկ լաւ զինուորներէն մաս մը դիրքերուն վրայ կեցած՝ կը հսկէին դուրսի անցողդարձերը :

«Մուղտատ էֆէնտին դողդոջուն ձեռքով մատիտ մը բռնած սկսաւ նօթագրել կտոր մը թղթի վրայ ինչ որ ըսի : Մեր պահանջները հետեւեալներն էին :

- 1.— Պոլիսէն մինչեւ հոս քաղաքական բոլոր հայ յանցաւորներու ներում :
- 2.— Իւրաքանչիւր դիւղէ հաւաքուելիք տասանորդը պէտք է դիւղացին ինք հաւաքէ եւ յանձնէ կառավարութեան՝ իրեն հետ ունենալով բարեխիղճ պաշտօնեայ մը միայն :

3.— Այն քիւրտերը որոնք միշտ յարձակում գործեր են հայ գիւղերուն վրայ, զինաթափ ընել կամ սլաշտպանել այդ գիւղերը:

4.— Այն բոլոր հայ գիւղերը որոնք գրաւուած են քիւրտերէն, վերադարձուին Հայերուն:

5.— Այն բոլոր քիւրտ ցեղապետները որոնք կառավարութեան հետ հայ գիւղերէն տուրք կ'առնեն, անոնց ջնջումը: Կառավարութեան մէջ կառավարութիւն չ'ըլլար:

6.— Դուք յեղափոխականներս աւագակներ կոչած էք: Աւագակները պէտք է կառավարութիւնը ինք իր մէջ փնտռէ, որոնք ահագին զեղծումներ կը գործեն եւ կաշառքներ կ'առնեն: Երկար տարիներէ ի վեր է որ ես հոս եմ իմ զինուորներուս հետ գողութիւն մը ըրած չեմ: Ձեր փօսթան ինծի հանդիպեցաւ, զայն տանող սլաշտոնեաները ձգեցին ու փախան, մենք առանց կողոպտելու՝ թողուցինք եւ հեռացանք: Յաջորդ օր ձեր զինուորները եկան եւ հոն գտան տոպրակները, ձիերն ու ջորիները: Մենք խաղաղ ժողովուրդին ոչ մէկ օր կամ ոչ մէկ ատեն չարիք պատճառած ենք: Դուք գիտէք որ շատ անգամ մեզի քիւրտեր հանդիպած են, մենք զանոնք ոչ սպաննած եւ ոչ ալ անոնց չարիք հասցուցած ենք: Բայց այն որ մեզի կամ հայ ժողովուրդին դէմ չարիք գործած է, մենք պատժած ենք զայն, ինչպիսին է Պշարա Խալիլը: Պշարա Խալիլն էր, որ Սերոբ Փաշային գլուխը կտրեց եւ անոր ընկերները սպաննեց իր է'չրէթին եւ Ալի փաշային հետ հայ դաւաճաններու մատնութեամբ: Կոտորեց Տալուրիկի Սպաղանաց գիւղի 27 կին եւ երախաներ Տէր Պետրոսի հետ: Երբ անոնց դիակները թաղուած էին հայ գիւղացիին կողմէն, 48 ժամ վերջը եկաւ հանեց եւ Ռէիս Մակարին տան մէջ լեցնելով քարիւղ ցանեց եւ վառեց զանոնք, անոնց հետքերը անհետացնելու համար: Հեթինք գիւղէն եօթը երիտասարդներ բռնելով կապեց զանոնք անոնց թեւերէն եւ գետը իջեցուց եւ հրացանազարկ ըրաւ բոլորն ալ: Այս բոլորը կատարուեցան թիւրք կառավարութեան թելադրութեամբ, թիւրք կառավարութիւնը միացած Խալիլի հետ՝ այս ոճիրները գործադրեց եւ Սուլթան Համիտ անոր կուրծքը պատուանշանով զարդարեց, Ալվառինջ հայ գիւղին տասանորդն ալ անոր ընծայելով: Ահա այսպիսի հրէշներն էին որոնք պատժուելու տեղ կը վարձատրուէին շքանշաններով եւ ընծաներով:

«Ես երեք տեղերու վրայ մարդիկ դրած Խալիլի ճամբան կտրած էի, եկաւ ու ողջ ողջ ձեռքս անցաւ. հարցաքննութենէ մը վերջ այս խէնչէրովս եւ այս ձեռքերովս անոր վիզը կտրեցի: Ահա Սուլթան Համիտի տուած պատուանշանն ալ: Խալիլին գլուխը կտրելէս մինչեւ այսօր անոր հետ գործակցող ընկերներէն տասնեւեօթը հոգին ալ ըսպաննեցինք: Կառավարութիւնը փոխանակ ուրախանալու չարագործներուն պատժուելը տեսնելով, բանտարկեց երեսուն եւ մէկ անմեղ Հայեր, ենթարկելով զանոնք անլուր չարչարանքներու:

7.— Մոկունք գիւղի Շէրիֆին սպանութեան համար տասնեւ-

հինգ անմեղ Հայեր բանտարկեցիք եւ քանի մը օր վերջ ձեր օրհնուած աղը տուիք եւ անոնք մեռան չարաչար մահերով : Անոնց տրուած թոյնին սաստկութենէն գլուխներուն մազերն իսկ թափեցան : Դուք առանց խղճահարուելու բանտերուն մէջ լեցուցիք մօտաւորապէս հարիւր եօթանասուն անմեղ հոգիներ եւ տակաւին կ'ըսէք ինծի թէ ի՞նչ է նպատակդ եւ ի՞նչ կ'ուզես :

8.— Սբ. Աղբերիկ վանքի վանահայր Ղազար վարդապետը դուք սպաննել տուիք երկու քիւրտերու ձեռքով, գիշեր ատեն վանքին դուռը բարեկամաբար ափ առնելով : Այդ երկու քիւրտերն ալ ես ըսպաննել տուի :

9.— Տիգրանակերտէն մինչեւ Պարսից սահմանը զինուած 150,000 քիւրտեր կան, ի՞նչ են ասոնք, եւ որո՞ւ դէմ ուղղուած են անոնց զէնքերը : Անոնք պահուած են միմիայն Հայուն պատուհաս դառնալու : Եթէ կ'ըսէք թէ արդարութիւն կայ, ո՞ւր է, եւ ինչո՞ւ կը բանտարկուին Հայերը : Ինչո՞ւ չեն բանտարկուիր քիւրտերը իրենց հրացաններուն համար, ո՞ւր է այդ արդարութիւնը եւ «հայրական դուժը» :

10.— Այս ի՞նչ տեսակ պաշտօնէութիւն է, որ ամէն տեսակ բռնութիւններ կը բանեցնէ Հայ ժողովուրդին վրայ տուրք հաւաքելու պատրուակին տակ, խլելով անոնցմէ իրենց վերջին հացի կտորը՝ հայ պատիւին հետ : Այս վերջինը մեզի համար, անտանելի է : Դուք երբեք չէք խղճահարուիր ճնշելէ եւ հալածելէ տկար ժողովուրդները եւ թոյլ քիւրտ աշիրէթներն ալ :

11.— Մարդար վարժապետը կախեցիք, Մուրատն ու Տամատեանը բանտարկեցիք, Սերոբ փաշան եւ Գուրգէնը սպաննեցիք, եւ հիմա ես եմ որ հոս եմ : Մենք հարիւրաւոր մղոններ կտրած հոս եկած ենք մեր պատանքները մեր տոպրակներուն մէջ դրած : Եթէ այս համեստ առաջարկներուս բաւարարութիւն չտրուի, մենք ուժ ունինք վեց ամիս դիմագրելու — աչքերս դարձնելով դէպի մոմի դատարկ սնտուկներուն : Քանզի թիւրք ներկայացուցիչները չէին գիտեր թէ մոմերուն սնտուկները դատարկ էին : Անոնք այն տպաւորութիւնը ստացան թէ այդ քառասուն սնտուկները լեցուն էին ռազմանիւթերով : Այս բոլորին բաւարարութիւն տալու համար պէտք է վաւերացուին Սուլթանէն եւ օտար դեսպաններուն կողմէ, այն ատեն ես իմ երկրորդ ըսելիքս կ'ըսեմ : Եթէ իմ ըսածներս հեռագրէք, քսանեւչորս ժամէն Պոլիս կ'երթայ, երկու օր հոն խորհրդակցելէ վերջ՝ անոնց պատասխանը 13 օրէն փոսթով հոս կը հասնի, իսկ եթէ դուք շինուածք մը ընէք կտոր մը թուղթի վրայ, այդ պիտի մերժուի մեր կողմէն եւ պիտի վերադարձուի ձեզի :

Մեր խօսակցութիւնը տեւեց 7-10.30 (բ. թ.), երբ մեր խօսքերը լմնցան Մուղտատ էֆէնտին ըսաւ թէ «Փաշա՛, կարելի չէ՞ որ երկու կողմէն զինադադար մը կնքուի մինչեւ մեր պատասխան ստանա-

լը» : «Յայտնեցէք ձեր զինուորականներուն , եթէ իրենք յարգեն իրենց խոստումները , ես ալ կը յարգեմ , եթէ զարնեն , ես ալ կը զարնեմ» :

«Մեր խօսակցութեան միջոցը զինադադար մըն էր ինքնին , թիւրք զինուորները ազատ ու անվախ իրենց զիրքերէն դուրս ելած ձիւնին վրայ կը քալէին ու կը ծխէին :

Ժամը 10.30ին «մնաս բարով» ըսելով մեկնեցան : Երբ դուրս կ'ելլէին յիշեցուցի իրենց այն խոստումը որ նախապէս ըրած էին ինծի խօսելու իրենց բարձրագոյն պաշտօնէութեանց ճիշդ ու ճիշդ ինչ որ ըսինք իրենց : Այս ատեն էր որ Պէհրիկեան վրդ . հայերէնով դարձաւ եւ ըսաւ . «Տղաս այդ պահանջներդ մէկ օրուան , մէկ շաբթուան եւ մէկ տարուան գործ չեն , այլ տարիներու» :

«Երբ մենք թիւրք ներկայացուցիչներուն հետ վանքին Առաջնորդարանին մէջ նստած մեր առաջարկները կը ներկայացնէինք , ինքնին զինադադար մըն էր : Այդ պատահութենէն օգտուելով Ռուսիոյ հիւպատոսը եկած եւ լուսանկարած էր թիւրքերուն զիրքերը եւ պատնէչները՝ Առաքելոցի վանքին հետ» :

Երբ թիւրք ներկայացուցիչները կը մեկնին եւ Փետայիները կը վստահին , որ երկու կողմէ զինադադարի խօսք տրուած է , եւ այն իրողութեան , որ թիւրք զինուորը կը սպասէր այս լուրին , գոնէ քանի մը օր հանդիստ ընելու համար , ժողով կը գումարեն եւ կ'որոշեն այս առիթէն օգտուելով ճեղքել թշնամիի գիծը , ու անցնիլ : Այդպիսով նախ անձնատուր եղած չէին ըլլար , ինչպէս նաեւ անգամ մը եւս կառավարութեան յայտնած կ'ըլլային իրենց արհամարհանքն ու անվստահութիւնը : Աւելին , յաջողութեան պարագային բարոյական մեծ յաղթանակ մը տարած կ'ըլլային թշնամիին վրայ , որ հազարաւոր զօրք հաւաքեր էր եւ ամէն օր օգնական ուժերով կը ստուարանար ափ մը հայդուկներու դէմ :

Փախուստը որոշուած էր : 27 Նոյեմբերն է :

Դիւրին չէր սակայն յաջողցնել ձեռնարկ մը , որ կրնար ամէն քայլի բախիլ այլազան արգելքներու եւ վտանգներու :

Պէտք է նախ աննշմար դուրս ելլել վանքէն , անադմուկ մօտենալ թշնամիին , կտրել պաշարման խիտ շղթան ու յետոյ ամէն հետք կորսնցնել ոչ միայն հետապնդումներէ խուսափելու , այլ մանաւանդ զիւղերը փրկելու համար նոր վայրագութեանց սպառնալիքէն :

Փախուստի գիշերը , խսաիւ արգիլեր էին վանականներուն եւ վանքի 50-60 սաներուն հետեւիլ խումբին , ինչպէս նաեւ պատուիրած էին , որ խումբին մեկնումէն ետք փակեն վանքի դռները :

«Գէո'րգ , Սէյսօ Պօզո'ս , Վարդա'ն , Յովսէ'փ , հագէ'ք ձեր մերմակ շալիկները եւ փաթեցէ'ք ձեր գլուխները» :

«Այն զինուորները , որոնք նորեկ էին , հրաման ըրի որ պարպեն իրենց հրացանները , ըլլան անոնք էլզէլի կամ Չախմախի : Այդպէս



ԳԷՈՐԳ ԶԱՒՈՒՇ

պէտք էր ընել այդ տասնըհինգ անվարժ զինուորներուն, որովհետեւ անոնք անփորձ էին եւ կրնային վտանգել մեզ, կրակ բանալով» :

«Գէորգ, խուզարկէ՛ անոնց հրացանները» :

«Գէորգ մէկիկ մէկիկ նայեցաւ հրացաններուն» :

«Ամէնքն ալ կազմ եւ պատրաստ են, տապրակնին շալկած, հրամանի կը սպասեն շարժելու» :

«Տղերք, հետեւեցէ՛ք ինձի, որ Յարութիւնին եւ Ղազարին գերեզմանները համբուրենք եւ մեր վերջին յարգանքը տանք անոնց» : Կարգով անոնց գերեզմաններուն քարերը եւ վանֆին ապանոսեայ դուռը համբուրեցինք, կարն, շա՛տ կարն աղօթք մը մրթմրթալով : Հաւատքի եւ յոյսի աղօթքներ էին, որ կը մատուցանէինք հոն, երկու սիրելի կտրիճներու գերեզմաններուն վրայ եւ խունկով ու աղօթքով սրբացած վանֆի հին, շա՛տ հին նուիրական դրան առջեւ» (*) :

Ու հայդուկները զոյգ-զոյգ զուրս ելլելով կը բաժնուին յառաջապահ, յետապահ եւ կարգապահ խումբերու : Առջեւէն կը քալէր Անդրանիկ՝ փոքրիկ խումբով մը : Կռնակի պաշտպանութիւնը վստահուած էր իսօ Կորիւնի խումբին, իսկ Գէորգի խմբակը պիտի հսկէր փախստականներու կարգապահ յառաջացման : Բոլորը հագեր էին վանքի տիրացուական ճերմակ շապիկներ՝ հեռուէն

(*) Զօր. Անդրանիկ, «Առաքելոց Վանֆին կոիւր», էջ 58—60 :

եթէ նշմարուէին իսկ, շփոթուելու համար ձիւնին հետ, որ թանձր խաւով ծածկեր էր շրջակայքը :

Նախ քան վանքէն դուրս ելլելը, Գէորգ վանքի աշակերտները իր շուրջ հաւաքելով կը թելադրէ, որ «չվախնան, ձեզ երբ հարցաքրննութեան պիտի ենթարկեն, պիտի ըսէք, որ որեւէ մէկուն չենք ճանչնար եւ որեւէ մէկու անունը չենք գիտեր» :

Այդ իրիկունը խիստ մշուշը ալ աւելի թանձրացած էր : Մշուշին մէջէն աղօտ, շա՛տ աղօտ կերպով կը պլպլան կրակի լոյսեր : Թիւրք զինուորներ գետնափոր տուներու մէջ սեղմուած, իրենց պատնէշներու ետեւ կրակներ վառած կը հսկեն Փետայիներուն : Պէտք է զգոյշ ըլլալ, պէտք է զգաստ եւ արթուն ըլլալ, ծրագիրը յաջողութեամբ առաջ տանելու եւ թշնամին ամօթի, դարմացումի եւ անակնկալի մատնելու համար : Պէտք է հայ հանճարը, հայ միտքը, իր մաքուր մտայնութեամբ եւ հզօր սրտով ծիծաղի եւ յանդիսօրէն արհամարհէ թիւրք կառավարութիւնը, իր պաշտօնեաները եւ զինուորը, վերջը ուժեղ հարուած մըն ալ տալով : Պէտք է յաղթանակով ցելսի մէջ թաղուի թրքական դահը եւ թիւրքը զինուորական աշարհի առջեւ ծաղր ու ծանակի առարկայ ըլլայ : Պէտք է ափ մը ջան Փետայիներու կորովը եւ յանդուգն սիրտը կտրէ-անցնի վեց հազար թիւրք կանոնաւոր զինուորներու շղթան՝ յոյս, հաւատք եւ կորով ներշնչելու հայ սրտերուն, որոնք տառապեալ, անիրաւեալ եւ զրկեալ կ'ապրին :

«Ժամացոյցները կը շտկեմ — կ'ըսէ Անգրանիկ. — եւ ճամբայ կը հանեմ իրենց պարտականութիւնները կատարելու համար : Ահա եկաւ վերջապէս բաժանումի ժամը : Բանտարկուած էին որբերն ու ուսուցիչները : Բանալիները ձգուած են ցելսերուն մէջ : Ութսուն տարեկան ծերուկ տնտես մայրիկը հետս էր. «Մայրիկ ահա բանալին ցելսերու մէջ կը ձգեմ : Երբ մենք դուրս ելլենք դուռը կը փակես եւ երկաթը կ'անցընես : Վանքին դուռը չես բանար մինչեւ որ Ֆէրիք փաշան, վանահայրը եւ Առաջնորդը չգան : Եթէ թիւրք զինուորներ ըստպառնան, մի՛ վախնար : Եթէ սանդուխներ դնեն ու պարիսպէն ներս գան, դարձեալ դուռը մի բանար որ թիւրք զինուորները վանքը չկողոպտեն» :

«Մեռնիմ քեզի, ինչ որ կ'ըսես անանկ կ'ընեմ, Աստուած եւ Քրիստոս քեզի հետ ըլլայ» :

Այլեւս վանքին նուիրական դռնէն դուրս են : Վանքին դուռը հանդարտօրէն կը փակուի, աղօթքի մը մաղթանքի բառերու հետ :

Առաքելոց Վանքի կռուին կը վիրաւորուի Ուրուխցի Արթինը եւ կը սպաննուի Կելիեկուզանցի Ղազարը : Արթին եւս կը մեռնի պաշարման Զրդ օրը, զինք կը թաղեն Ղազարի կողքին :

Առաքելոց Վանքի կռիւին առթիւ յօրինուած է հետեւեալ երգը .

Պաշարման մէջ է քարգմանչաց սուրբ վանք

Որ գնա պատեց թիւրֆ գորաց փաղանգ
Ահա կը լսուի որբոց աղաղակ,
Ահա օգնութեան կոչէ մեզ գանգակ :

Պաշարուած են հոն Անդրանիկ, Գէորգ .
Վաթսուն որբերով անտէր եւ անոք,
Ելէֆ, ո՛հ, հայեր, մի մնաք չէգոք,
Զֆանդեն գվանֆ թիւրֆերն անողոք :

Զանգակի հնչիւն հասաւ մինչ Սասուն,
Օգնութիւն կանչեց գֆաջ Յարութիւն,
Որ իւր հետ առաւ գկալեցի Ղազար
Զայնեց Համբարձման՝ ելի՛ր, ո՛հ, եղբայր :

Աւա՛ղ, այն ատեն չկար Համբարձում,
Կնֆած էր իւր կեանֆ, ննջած ի շիրմում,
Մի փոքրիկ խումբով հեւ ի հեւ ելան,
Գագաթ Սիմ սարին, անդր վար իջան :

Զայնեց՝ վանֆին մէջ պաշարեալ եղբարց,
— Քաջ եղէֆ, ահա, կ'օգնէ՛ ձեզ Աստուած,
Քաջին հրացան գոռաց ի բարձունս,
Դէպի վանֆ դիմեց հետ իւր ընկերաց :

Պատահեցան հոն գորաց շղթային
Երեֆ գորֆ մէկէն գլորին գետին,
Յրութեան գորֆեր, մօտեցան վանֆին,
Բայց վիրաւորուած հասան փափաֆին :

Ինկաւ եւ նոյնպէս Կալեցի Ղազար,
Անտոքայ ֆաջեր, ունկնդիր եղբարք,
Վանֆին չորս կողմէն տեղացին գնդակ,
Յիրուցան ըրին թշնամու բանակ :

— Յաղթութի՛ւն, եղբա՛րք, առինք յաղթանակ,
Հայի փրկութեան կանգնելով դրօշակ,
Կամ մեռնինք, չըլլանք մեկն ազգին ծանակ,
Կամ յաղթենք, ըլլանք հայ ազգին պարծանք :

Սումբը ճամբայ ելած ժամանակ իւրաքանչիւր 50-60 քայլին ծունկի կու գան քննելու եւ տեսնելու իրենց շուրջը : Ոեւէ շարժում եւ շշուկ չկար, քամին միայն կը սուրար ծառերուն մէջէն եւ ձիւնը կը տեղար անընդհատ : Թիւրք զինուորներուն վառած կրակները սակա-

ւին կը պլպլային : Քամին կատաղի գազաններու նման կ'որոտա՛ր , կը դոռա՛ր ու կ'անցնէր : Ճամբան , ուրկէ Փետայիները պիտի մեկնէին դէպի գոմը , քարքարուտ էր :

Անդրանիկ կը պատմէ .—

«Ձայն մը , դողդոջուն ու կցկտուր ձայն մը յանկարծ կոչեց .

— Դուք ո՞վ էք :

«Մեր եւ թիւրք զինուորին մէջտեղ հազիւ հինգ կամ վեց քայլ կար : Չորս ընկերներու հետ մեր հրացանները ուղղելով անոր կուրծքին .

«Չճանչցա՞ր զիս , ես հարիւրապետ Մահմէտ էֆէնտին եմ , կէս ժամ է որ հոս կը խուզարկեմ եւ դուք կը քնանաք , այսպէ՞ս պիտի պահէք եւ հսկէք ձան Փետայիները , արգիլելու անոնց փախուստը» : Խօսքերս դէպի Գէորդ Չաւուշին ուղղելով ըսի . «Մահմէտ Չաւուշ այս մարդը կը քնանար , այնպէս չէ՞» :

«Այո , էֆէնտի կը քնանար» , ըսաւ Գէորդը :

«Մեր ետեւէն եկող խումբին յառաջապահները կը լսէին մեր խօսակցութիւնները : Չեռքով նշան ըրի տղայոց , որ գան եւ ետեւի դիրքերը բռնեն : Քիչ մը վարանեցան անոնք եւ ուշացան դիրքերուն ետեւ անցնիլ , ուստի օգտուելով առիթէն հարցուցի թիւրք զինուորին թէ «անունդ ի՞նչ է» :

«Հառան» , պատասխանեց դողդոջ ու վարանոտ ձայնով : «Ո՞ւր տեղացի ես եւ որո՞ւ որդին ես , ըսէ ինձի , ես քեզի ցոյց կու տամ առտուն այս անտարբերութեանդ պատիժը» :

«Դողդոջ ձայնով մը ըսաւ . «Աստուած , Աստուած , չեմ գիտեր դուք ի՞նչ տեսակ մարդիկներ էք» :

«Կտրէ ձայնդ , թէ ոչ շան պէս պիտի սատկիս» , ըսի եւ հրացանս ուղղեցի կուրծքին :

«Խումբը այս ատեն իմ երկրորդ նշանիս վրայ եկաւ ու անցաւ մեր քովէն : Անոնք փոխանակ Արարոյի եւ Արծիւի քարերէն անցնելու , ձիւնին վրայ նստած թեքեցան դէպի ձորը ու այլ չերեւցան» :

Այս կէտէն Գէորդ կը բաժնուի Անդրանիկէն , կը սկսի անօրինակ յանդգնութեամբ ու վճռական բարձրանալ բլուրի կողմը . հազիւ մի քանի հարիւր մեթր անցած կը հասնի աջ թեւի գետնափոր դիրքերը , ուր թիւրք պահակը կը նկատէ զիրենք եւ ձայն կու տայ , թէ ո՞վ են . Գէորդ կը պատասխանէ , թէ գիշերաշրջիկ սպան է , կը հրամայէ մօտ գալ . պահակը կը մօտենար Գէորդին , որ զինուորին հրացանը ձեռքէն առնելով , լուռ մնալ կը պատուիրէ , իսկ ընկերներուն կը յայտնէ շարունակել ճամբան . ապա իր հետ առնելով զինուորը , կը հետեւի անոնց :

Ու Փետայիները՝ անշշուկ , միշտ պատրաստ դրոհելու , կ'առաջանան կծկտած , երբեմն սողալով ձիւնին վրայ , կը յաջողին անվնաս բայց ոչ անվտանգ կտրել շղթան :

Պաշարողներու առաջին գիծի թիւրք պահակը , որ ցուրտէն

ամբած էր, նշմարեր էր մարդիկ եւ ուղած էր կեցնել զանոնք, բայց երբ հասկցած էր, թէ հայդուկներն են, որ կը մեկնին, վախէն սարսափած չէր կրցած ձայն հանել:

Կարգադրութեան համաձայն, յառաջապահները՝ վերջին դիծը անցնելէ ետք, պիտի սպասէին յետսապահներուն: Սակայն Անդրանիկ չէր կրցած լուր ստանալ: Երբ վերջին մարդը անվտանգ կտրեր էր թշնամիի դիծը, Գէորգ մէկ քանի հոգիով Յրօնցի Մուրատը ղրկեր էր Անդրանիկը գտնելու եւ լուրը հաղորդելու: Բայց այդ պահուն, թանձր մշուշ մը սկսած էր նստիլ ու թիւրքերը զգացած ըլլալով հայդուկներու փախուստը, բուն կրակ մը կը տեղացնէին մութին մէջ:


«Գէորգ Չաւուշի կարգադրութեամբ, — կ'ըսէ Յրօնցի Մուրատ, — մենք չորս հոգի՝ առաջին շարքերէն ուղարկուեցինք՝ հասնիլ Անդրանիկին ու յայտնել, թէ զօրքերի բոլոր դիրքերէն անցանք, թող սպասէ եւ չըլլայ թէ ընկերներն իրարու կորցնեն: Պատճառն այն էր, որ այդ բոպէին արդէն մեր վրայ կը տեղային բիւրաւոր զնդակներ, թէեւ աննպատակ:

«Առաջ վազեցինք, չկարողացանք Անդրանիկը գտնել, որովհետեւ ան թեքուել էր աջ ու անցեր էր թշնամու կռնակը: Այդ բոպէին ալ թանձր մշուշը պատեց մեզ, այնպէս որ Անդրանիկի հետքն ալ կորսընցուցինք: Բաւական զնացինք, չկրցանք գտնել եւ որոշեցինք ետ դառնալ, որպէսզի խումբէն չկտրուինք»:

Անդրանիկի խումբը պահ մը սպասելէ ետք, երբ կրակը սկսեր

ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆ

Մշոյ Հարաւային – Արեւելեան լեռներու վրայ Սբ. Լուսաւորիչէն հիմնուած



էր, ենթադրելով որ տղաքը ամբողջ ազատած կ'ըլլան, անցեր էր թիւրքերու կոնակը ու ատեն մը կրակելէ ետք, ուղղուեր էր դէպի նախապէս նշանակուած վայրը:

Երբ Անդրանիկ իր ընկերներով հոն կը հասնի, շուտով իր մօտ կը կանչէ Գէորգ Զաւուչը, հասկնալու համար թէ ի՞նչ պատահած էր, որ իրեն չընկերացան, այլ դէպի ձորը ուղղուեցան:

«Գէորգ պատասխանեց, թէ երբ դուք թիւրք զինուորին հետ կը խօսէիք, տղաքները առանց հնազանդելու ձեր պատուէրին, թիւրքերուն ետեւի դիրքերը բռնելու, ձորն ի վար սահեցան շուտ ազատելու համար: Տրոնքէն նոր եկող անվարժ զինուորներէն մէկը հակառակ պատուէրիդ եւ իմ խուզարկութեանս, իր հրացանը դադանի լեցուցած է եղեր. ձորն ի վար սահելու ատեն, հրացանը յանկարծ պայթեցաւ եւ գնդակը գնաց Մկրոյին ապան ծակեց եւ ջարդ ու փշուր ըրաւ Մկրոյին փամփշտակալը: Մկրոն խորհեցաւ, թէ դարնուած է, ուստի սկսաւ պոռալ եւ անունս տալ: Վազեցի եւ քննեցի, ու տեսայ թէ դարնուած չէ: Այդ ատեն՝ տղան վախնալով թէ Մկրոն մեռած է, ձգեց մեզ ու փախաւ: Հազիւ քանի մը վայրկեան անցած էր, Հաճի Յակոբին ձայնը լսեցի. ան ալ անունս կու տար ըսելով՝ որ վիրաւորուած է եւ չի կրնար քալել: Մօտեցայ եւ տեսայ թէ վիրաւորուած չէր, հակառակ իր աղմուկին եւ վախին: Ձորն ի վար սահելու ատեն ուարձրութենէ մը վար ինկած էր եւ սուր քար մը անոր գիտը մխուած էր քչիկ մը արիւնելով: Այս դէպքը Հաճի Յակոբին խորհիլ տուած էր, թէ վիրաւորուած է:

«Ի՞նչպէս եղաւ որ դուք գոմը չկրցիք գալ»:


«Գոմը չկրցինք գալ, քանզի քամին շատ սաստիկ էր, եւ մենք դժուարութեամբ ՍԻՆԷ ՄԵՐԻԿ չգացած՝ սարը ուղղուեցանք եւ անկէ եկանք Քոփ»(*):

Քսան օր տեւեց Առաքելոց վանքի կռիւը, որ արդէն արձագանգած էր Վանի, Պիթլիսի, Կարնոյ, Խարբերդի եւ Տիգրանակերտի նահանգներուն մէջ: Քիւրտ, թիւրք եւ հայ ժողովուրդները այն համոզումը ունէին, թէ հայ Փետայիներու համար ազատութիւն չկայ երբեք: Հայերը ամէն օր հսկումներ եւ աղօթքներ կը կատարէին, Փետայիներու ազատութեան համար, նոյնիսկ մատաղներ խոստանալով:

Փետայիներու մեկնելէն ետք,

«Վանքի մէջ կը գտնուէին տասի չափ տնտեսներ, — կ'ըսէ Խորէն Խ. Մինասեան, — ու տնտեսուհիներ. ինչպէս վանքի որբերէն ամէն մէկը իր պատմութիւնն ունի՝ նոյնպէս եւ ասոնք: Տնտեսուհի մը կար, որ Գէորգ Զաւուչն իր գաւկին չափ կը սիրէր, այդ տնտեսուհի անունը Զոջօ էր, Սասնոյ Հեղին գիւղացի, եւ մենք զինք Հեղընցի Զոջօ կը կոչէինք. Հեղընցին ճերմակ մազերով եւ խիստ բնաւորութեան տէր կ'ին մըն էր:

(*) Զօր Անդրանիկ, «Առաքելոց վանքին կռիւը», էջ 68—69:



ԱՌԱՔԵԼՈՅ ՎԱՆՔԻ ԴՈՒՌԸ
(Երեւանի Պետ. Թանգարան)

«Հեղընցի Ձոջոն ունէր իր անձնական մառանը, ուր, կ'ըսէին, հաւու կաթ միայն պակաս է. ինքն էր, որ վանքի մէջ զատ կ'եփէր եւ կ'ուտէր: Հայր սուրբը գիտէր Ձոջոյի բնաւորութիւնը եւ ազատ թողած էր զինք: Հեղընցին փոքրիկ տոպրակ մը ունէր, մէջը 15—20 հատ փոքրիկ քարեր կային. բախտ նայելու համար էին անոնք. երբ Գէորգ Չաւուշ եւ ընկերները կուիւ կ'ունենային՝ կ'երթայինք Հեղընցու քով, որ բախտ նայէր, թէ ի՞նչ պիտի ըլլայ Գէորգի զրութիւնը: Նոյնիսկ

Հայր Սուրբը կը հաւատար Ջոջոյի բախտագուշակութեան: Ան դե-տին կը նստէր, երեք անգամ կը խաչակնքէր, քարերը կը ձգէր. եթէ կռիւը թեթեւ ըլլար՝ առաջին անգամ քար մը միւսներէն կը զատուէր, եւ Ջոջոն ուրախութեան ճիչ մը կ'արձակէր, «բան չկայ, Գէորգ ազա-տուաւ» կ'ըսէր: Երբեմն ալ, երբ քարերը կը թալէր (նետէր), խառ-նափնդոր կու գային եւ իրարու վրայ կուտակուած, այն ատեն Հե-ղընցի Ջոջոն արտասուալից աչքերով կ'ըսէր «դժուար է, դժուար է», եւ երկրորդ անգամուն արդէն Գէորգի քարը կը զարնուէր, կը հեռա-նար միւսներէն, եւ Ջոջոն ուրախութեան ճիչ մը կ'արձակէր «Գէորգը ազատուաւ» ըսելով: Օր մը Անդրանիկ, Գէորգ, Հաճի Յակոբ, Վա-ղարշակ, Կորիւն եւ ամբողջ ընկերներ վանքն էին, ուղեցին կատակ մը ընել Ջոջոյին ու զինք բարկացնել. Ջոջոն բաւական հաւեր ունէր, Անդրանիկը Գէորգին ըսաւ. «Հեղընցու աքաղաղն սպաննէ, նայինք ի՛նչ կ'ըսէ», եւ Գէորգը սուրմալիով Ջոջոյի աքաղաղին գլուխը թըռ-ցուց. տղոցմէ մին Ջոջոյին լուր կու տայ, որ Անդրանիկն իր աքա-ղաղը սպաննէր է. մեր Ջոջոն էր դուրս եկաւ եւ անէծքին տոպրակը բացաւ ամէնուն, Անդրանիկ եւ ընկերներ սկսան խնդալ, տղաներէն մէկը ըսաւ. «Ջոջօ, մենք չենք, Գէորգն է արեր», իսկոյն Հեղընցին սկսաւ զղջալ ու խեղդուկ ձայնով մը. «Բերանս կոտրէր, բան չասէի». ապա աքաղաղը եփեց ու զրկեց Գէորգին, որ ուտէ: Ջոջոն Գէորգը կը սիրէր եւ կը պաշտէր, վա՛յ անոր՝ որ Հեղընցու ներկայութեան Գէորգ Չաւուշի մասին անհաճոյ բան ասէր»:

Վանքն ունէր տարագագործութեան (մանուսա) արհեստանոց մը, զոր 1900-ին հիմնեց Մուշի առաջնորդ Բարդէն Ծ. Վրդ. Կիւլէ-սէրեան, եւ Այնթապէն բերել տուաւ վարպետ մը՝ Պր. Մուշեղ Սա-րաֆեան, որ իր ուսուցիչն եղած էր, որպէսզի վանքի որբանոցի տղաք արհեստ սորվին: Որբերու ծախսը Պոլսոյ Պատրիարքարանը կը հո-դար: Դպրոց-արհեստանոցը ունէր 75 աշակերտ, 5 ուսուցիչներով, եւ վարպետ մը իր ընտանիքով, Լուսիա անունով: Կ'արժէ քանի մը խօսք ըսել այդ քաջ տիկնոջ մասին, որ գորգագործութիւն կը սորվեցնէր մաս մը տղոց: Վանքի դէպքէն ետք, երբ Անդրանիկ եւ Գէորգ իրենց խումբերով կը մեկնին, լուսաբացին թրքական բանակի փողերը կը հնչեն եւ զօրքերը կ'առաջանան դէպի վանք ու հրամանատար փաշան վանքի դրան առջեւ կենալով կը հրամայէ, որ դուռը բացուի: Քաջ Լուսիան, որ այնթապցի էր եւ շատ լաւ թրքերէն գիտէր, կ'ըսէ, որ դուռը չեն կրնար բանալ մինչեւ, որ Մուրախիաս Էֆէնտին չգայ: Թիւրք փաշան՝ թիւրքի վայել բռներով կը պոռայ. — «Անզգա՛մ, մինչեւ հիմա Անդրանիկ քու սիրականդ էր, անոր դուռը կը բանա-լիր, իսկ այժմ կառավարութեան փաշային չե՞ս բանար»: Լուսիան էր պատասխանէ. — «Կը ցաւիմ այդ բարձր պաշտօնին, որ քեզի տը-ւած են. եթէ դուն քաջ էիր՝ այս 20 օր ո՞ւր էիր, թող գայիր բռնէիր Անդրանիկը. հիմա, երբ գացած է, ելած եկած ես եւ անվայել խօս-քեր կ'ըսես. մինչեւ Հայր Սուրբը չգայ՝ դուռը չի բացուիր»: Փաշան



ՄՈՒՐԱՏ ՊԵՏՐՈՍԵԱՆ

(Յրօնփցի Մուրատ)

(1884—1927)(*)

Իր սպառնայ դուռը կոտրել, այդ ալ օգուտ չ'ըներ: Մարդ կը զրկէ Մուշ՝ Հայր Սուրբը բերել տալու համար: Երբ Հայր Սուրբը կու գայ, դուռը կը բացուի ու փաշան ներս մտնելով կը գովէ Լուսիայի քաջ կերպով պատասխանելը եւ ներողութիւն կը խնդրէ, իր անվայել խօսքերուն համար:

Մինչ այդ, արդէն մանուսագործ վարպետն ալ նամակ գրած էր Մուշ, վանահայր Յովհաննէս վարդապետին, յայտնելով Քետայիներու մեկնումը: Երբ վանքին դուռը կը բացուի, թիւրք զինուորներ կը մտնեն եւ մանրակրկիտ խուզարկութիւն կը կատարեն, ոչինչ կը գտնեն:

Աշակերտները կը հարցաքննուին եւ շաբաթ մը ետք կը փոխադրուին Մուշ, Զորի թաղի կեդրոնական դպրոցի շէնքը, ուր կը մնան մինչեւ 1908-ի թրքական սահմանադրութիւնը, երբ կրկին վանք կը փոխադրուին:

Առաքելոց վանքի կռիւէն ետք, խումբը կ'որոշէ ռազմանիւթ եւ

(*) Տես. «Յեղփ. Ալպում»ի 3-րդ հատոր էջ 99:

պաշար պատրաստել, յառաջիկայ կռիւներու համար: Չմբան խիստ ցուրտին, Գէորգ իր հետ առած Մշեցի Վաղարշակը, Սէյառ Պողոսը, Վարդանը, Գոմսոյ Իսօ Կորիւնը, Աստուրը, Պօզէն, Միսաքը եւ Սիմօնը, Սասունէն կ'իջնէ դէպի Առաքելոց վանքի կողմերը: Յրօնք գիւղ չհասած, Գէորգ Չաւուշ նամակ մը կը գրէ Յրօնքցի Մուրատին, որ Զրվէժ գիւղը կը գտնուէր: Նամակին մէջ կ'իմացնէ, որ ինք գիշերը կը հասնի Յրօնք, ի միջի այլոց կը յայտնէ, որ տղաքը իր հետ պիտի բերէ:

«Այդ միեւնոյն գիշերը, — կ'ըսէ Մուրատ, — վերադարձանք մեր գիւղը: Մեր հասնելէն երկու ժամ ետք, Գէորգ հասաւ իւր խրմբով: Երեք օր մնաց գիւղը եւ ինչ որ պէտք էր, ապսպրեց գիւղացիներուն, որ ամէն կերպ աշխատին՝ կառավարութեան կողմէն գալիք վտանգը հեռացնելու մեր վրայէն:

«Գէորգը գիւղէն մեկնելէ առաջ, ազգականներս եւ ծնողքս դաւադրութիւն մը սարքեցին, որպէսզի ոտքս կապեն: Այդ դաւադրութիւնը զիս ամուսնացնելն էր: Ծնողքս խնդրագրով դիմած էին Գէորգ Չաւուշին որ ինձ պսակել տայ եւ ապա գիւղէն մեկնի: Գէորգը հօրս եւ ազգականներուս շատ մտերիմ ըլլալով, մերժած չէր դիմումը: Յանկարծ կանչեց ինձ ու յայտնեց, թէ հիմա քեզ պէտք է պսակենք: Որչափ աղաչեցի, պաղատեցի, անօգուտ եղաւ: Բռնի կերպով նոյն երեկոյեան ամուսնացուցին ինձ: Ի հարկէ, չվայելեցի այդ ամուսնութիւնը»:

Պսակադրութեան երկրորդ օրը, Գէորգ իր ընկերներով կը մեկնի Նորչէն հայ-կաթոլիկ գիւղը, Մուրատը իրեն հետ առնելով:

Երբ Նորչէն գիւղը կը հասնին, Գէորգի կարգադրութեամբ ինք, Վաղարշակը եւ Սէյառ Պողոսը կը մնան Սահակ Աբրոյեանի տունը, իսկ միւս ընկերները կը բաժնուին զանազան տուներ: Ետևով Գէորգ կը լծուի իր կուսակցական աշխատանքներուն. հազիւ վերջացած էր իր գործունէութիւնը եւ կը մտածէր այն գիշեր հոն մնալ հանգստանալու, եւ յաջորդ օրը մեկնելու ուրիշ գիւղեր, երբ Սահակ Աբրոյեան հեւ ի հեւ տուն կը հասնի հաղորդելու Գէորգին, թէ խումբ մը ձիաւոր զինուորներ դէպի գիւղը կու գան:

Գէորգին եւ իր փոքրիկ խումբին գիւղին մէջ ներկայութիւնը մատնուած էր Բենիկ Անտրիկեանի եւ երկու ուրիշ վատոգի հայերու կողմէ: Այս երեք այլասերած հայերը կ'երթան քաղաք, Միւթեսարը՝ Քին մօտ, եւ կը յայտնեն, որ Քետայիներ կան իրենց գիւղը:

Միւթեսարը՝ մտիկ ընելէ ետք խոժոռ դէմքով այդ վատոգիներուն կ'ըսէ՝ «դուք հարբած էք. հեռացէք այստեղէն»: բայց Բենիկ Անտրիկեան կը պնդէ, թէ իր տուած լուրը ճիշդ է, Գէորգ Նորչէն գիւղը կը գտնուի:

Այդ պահուն Միւթեսարը՝ Քին մօտ կը գտնուի նաեւ Հիւսէին աղա անունով անձը, որ սարքած էր Սպաղանքի կոտորածը, ինչպէս

նաեւ Ալայ պէկի եւ Պշարէ Խալիլի հետ մասնակցած էր Աղբիւր Սե-
րոբի դէմ դաւադրութեան եւ անոր գլխատման գործողութեան : Հիւ-
սէին աղա ոխ ունէր Գէորգ Չաւուշի դէմ : Լաւ մը մտիկ կ'ընէ Բենիկի
խօսքերը եւ կը մտածէ , թէ այդ ցուրտ օդին , ձիւնին ու բուքին Ֆե-
տայիները ազատում չեն կրնար ունենալ : Հիւսէին աղա կ'ըսէ Միւ-
թեսարըՖին .— «Ես պիտի երթամ եւ Գէորգ Չաւուշի գլուխը պիտի
բերեմ . այդ իրիկուան ընթրիքը ինծի թող ըլլայ , եթէ այդ գլուխը
չբերեմ» :

Այս խօսակցութենէ հազիւ ժամ մը ետք , հարիւրապետ Հիւ-
սէինի հրամանատարութեամբ մօտ հարիւր ձիաւորներ Սոխգոմ գիւղի
կողմէն կ'ուղղուին դէպի Նորչէն :

Բարեբախտաբար , Հիւսէին աղան չէր գիտեր , թէ ո'ր տունը
իջած էր Գէորգ : Երբ կը մօտենան Նորչէն գիւղին , զօրքին կը հրա-
մայէ կռուի պատրաստ ըլլալ եւ այդպէս կ'երթան գիւղին հրապարա-
կը , անցնելով Սահակ Աբրոյեանի տան մօտէն : Գէորգ իր ընկերներով
կը դիտէ անոնց անցքը , իրենք ալ կռուելու պատրաստ վիճակով : Երբ
թշնամին կը մօտենայ իրենց , Սէյտօ Պօղոս կ'ուզէ կրակել , սակայն
Գէորգ վճռապէս կ'արգիլէ , որովհետեւ կրակելով ոչ միայն զիրենք
կը վտանգէր , այլ նաեւ այն տունը , ուր ապաստանած էին : Չօրքը
անցնելէ ետք , Գէորգ իր ընկերներով դուրս կու գան տունէն եւ
գինուորներու կռնակը դիրք կը բռնեն :

Գէորգ Չաւուշ պահ մը կը դիտէ զօրքը , ապա կը բարձրացնէ
հրացանին փողը , երկիւղածութեամբ կը համբուրէ փողին բերանը ,
ըսելով՝ «Քեզ տեսնեմ Արարօ' , չղաւաճանես ինձ» : Գէորգ Արարօ կը
կոչէր իր գէնքը , ի յարգանս եւ ի յիշատակ իր խմբապետին՝ Արարօ-
յին , որուն հանդէպ եղբայրական ջերմ սէրը կենդանի կը մնար իր
սրտին մէջ :

Այդ վայրկեանին , գիւղին միւս ծայրէն երկու հրացանի ձայներ
կը լսուին . Անդրոն ու Միսաքն էին , Բերդակ գիւղէն երկու եղբայր-
ներ , որոնք իրենց դիրքերէն դուրս ելած՝ առիւծաբար կը կռուէին :
Հիւսէին այս տեսնելով , գինուորներուն կը հրամայէ կանգ առնել եւ
անոնց առջեւ անցնելով ու գրոհելով կը պոռայ .

— Յանձնուեցէ՛ք , յանձնուեցէ՛ք :

Հայդուկներուն պատասխանը կրակն էր : Այդ պահուն Գէորգ
Չաւուշ հասած էր զօրքին ետեւը եւ դիրք բռնած էր Սէյտօ Պօղոսի եւ
Վաղարշակի հետ : Թշնամին կը մնայ երկու կրակի միջեւ .— միայն
քանի մը հոգի՝ հարիւրի դէմ : Ֆետայիներու իւրաքանչիւր հարուա-
ծը զոհեր կը խլէր թշնամիի խիտ շարքերէն : Հարիւրապետ Հիւսէին
կռնակէն կը զարնուի . Պօղոսի փամփուշտը կ'անցնի անոր սրտէն եւ
մահը կ'ըլլայ վայրկեանական , իսկ իր օգնականը ծանրօրէն կը վիրա-
ւորուի : Թրքական զօրքը կը մնայ անգլուխ եւ շփոթութեան կը մատ-
նուի . ամէն ջանք կը թափեն , որ իրենց գլուխը ազատեն , բայց երկու
կողմէ ճամբաները բռնուած եւ կրակի մէջ ըլլալով , կը նախընտրեն

լքել ձերը իրենց վիճակին ու աստատանիլ փրկված գոմի մը մէջ, ուրկէ օդը կը կրակեն մօտակայ գիւղերուն իմացնելու եւ օգնութիւն ստանալու նպատակով:

Թշնամին ինք իր ոտքովը ծուղակը մտած էր: Գէորգի որոշումով, երկու անբաժան եղբայրները՝ Անդրոն ու Միսաքը կը մնան պահակ-բանտարկուած զօրքերուն վրայ:

Հազիւ խումբը նստած էր հանգստանալու, նոր լուր մը կը ստանայ Գէորգ, թէ թշնամին Մշոյ կողմէ մեծ ուժերով կու գայ դէպի գիւղ՝ օգնելու հարիւրապետ Հիւսէինին: Ժամ մը ետք արդէն գիւղը կը պաշարուի:

Գէորգ կ'իմացնէ Վարդանին, Պօզէին եւ Աստուրին, որ իրենց ամէն կարելին ընեն, որ թշնամին չկարենայ գիւղ մտնել: Իսկ ինք, Սէյտօ Պօղոսի, եւ Վաղարշակի հետ կը բռնէ կեդրոնի մասը: Իրենց կը հետեւին հարիւրաւոր անգէն երիտասարդներ, չանսալով Գէորգի հրահանգներուն, որ չհետեւին իրենց: Այնքան մեծ էր ոգեւորութիւնը:

Կացութիւնը ծանր էր: Կռիւր կը սաստկանար, մանաւանդ որ թիւրքերը անընդհատ օգնական ուժ կը ստանային եւ արդէն կանոնաւոր պաշարման ենթարկեր էին գիւղը, ուր տակաւին չէին համարձակեր մտնել, վախնալով հայդուկներու կորովի դիմադրութենէն:

Միայն Գէորգի խմբակին դիմաց արդէն մօտ 2000 դինուորներ կային, առանց հաշուելու աւարառու ֆիւրտերը:

Գէորգի օգնութեան կը հասնին Վարդան, Աստուր եւ Պօզէն, որոնք մինչ այդ կռուեր էին քիւրտ խուժանին դէմ: Կացութիւնը կը ստիպէր զիրենք լքել իրենց առաջին դիրքը, անոր պաշտպանութիւնն ալ յանձնելով երկու քաջարի եղբայրներուն՝ Անդրոյին ու Միսաքին, որոնք մինչեւ գիշեր կը յաջողին անշարժութեան մատնել գոմի ձիաւորները եւ քիւրտերը:

Երբ մութը կ'իջնէ, կռիւր կը դադրի: Սակայն հայդուկներուն համար այլեւս անկարելի էր գիւղ մնալ:

Թշնամիի անճարակութիւնը նկատելով, դեռ մութը չկոխած Գէորգը իր խումբին հետ կը բռնէ Բերդակի ճամբան եւ նորէն ասպահով ու անվնաս կը հասնի Սասուն:

Այս կռիւին, թէեւ շատ թիւով թշնամիներ չեն սպաննուած, սակայն Գէորգ իր յաղթանակով կըցաւ սիրտ տալ հայ ժողովուրդին եւ հաւատք ներշնչել դէպի կազմակերպութիւնը:

Ժողովուրդն ալ իրեն ձօնեց հետեւեալ երգը՝ նուիրուած Նորչէնի կռիւին.

Հագար ին հարիւր մէկ թուականին
 Պարոն Գէորգ ութ ընկերներով
 Նարչէն մտաւ պատահումով

Գիւղացիք լաւ ընդունեցին,
Սիրով գիրար ողջունեցին:

Խրախոյս կարդացին Հայ կաթոլիկաց,
Ջէնքի միայն ապագան է հարց,
Ամէնքը իրաւունք կու տային
Քաջերն ասով խրախուսեցին:

Հայն ալ շատանց կը լինէր ազատ,
Երբ չունենար մատնիչներ վատ.
Իմաց տուին «Վասակ» Բիմկան
Թէ գիւղ յեղափոխական կան:

Նա շուտ մը լուր տուաւ Մշոյ հուճմաթին
Գուցէ նշան կը վաստըկի.
Մոռնալով մատնիչ Մակարին,
Որուն ի մահ վնիռ տուին:

Հիւսէն աղէն հըտ ուր դամին,
Զարկեց Պօղոս կորցուց գամին.
Հիւսէն աղէն գետին ընկաւ
Ոտքն ու գլուխ մըջ տըլին չքաւ:

Ապրի Պօղոս ուր սուրմալին,
Թըփռի վըրդոն ուր այնալին
Ինչպէս Բարշէն եւ Զրադաց,
Յրոնք գիւղ վանք Թարգմանչաց:

Գէորդ Չաւուշ, ամէն անգամ որ գիւղերը կը մտնէ, կը կանչէ տեղական խմբապետները, կ'իմանայ թէ անոնք իրենց յանձնուած պարտականութիւնները կատարած են թէ ոչ. եթէ հարկ կայ քանի մը ժամ այդ գիւղերը հոն մնայ: Հոն մնալու պարագային, կը կանչէին գիւղի մարտական տղաքը, որպէսզի իւրաքանչիւրը իր պաշտօնին անցնի. — գիմաւորութիւն, ճամբաներու հսկողութիւն, պահակութիւն եւ այլն:

Պօղոս տանք Նորշէն գիւղացի Պօղոս Սրհոյեանին. —

«Ամէն անգամ, որ Գէորդ Չաւուշ մեր գիւղը գար, տեղական խմբապետ Հիմիկ (Հմայեակ Գասպարեան) առաջուց զմըզի կը կանչէր եւ ամէն մէկին պաշտօն կիտէր: Շատ անգամ Գէորդ կ'իջնէր կաքաւի տուն: Դրան վրէն կը հսկէին ութ Փետայիք, քիւրտ Սլօն լէ ուրանց հետ: Ընծի սովորաբար կը տրուէր գեղի միջէն էկող դացող այլազգիներ հետապնդելու եւ խմբապետին լուր տալու պարտականութիւն:

Գիշեր կ'երթէնք ժողովի: Գէորգ Զաւուշ զկազմակերպութեան հարցեր կը քննէր. զգատեր կը տեսնէր, խմբերուն նոր հրահանգներ կ'իտէր: Զհարցեր լուծելուց յետոյ՝ կը սկսէր զիւր անուշ խօսակցութիւն, տեսակ-տեսակ իմաստուն առակներով մըզի կը բացատրէր զյեղափոխութեան ուխտ:

Օր մը պատմեց, թէ ի'նչպէս կործանաւ մըր թաղաւորութիւն եւ ինչպէս մենք ընկանք թիւրքերու ձեռք գերի, որոնք զմըզի կը հալածին, զմեր աշխատանք կը վայելեն, վրէ՛ն լէ՛ զմըր խաչ կը հայհոյին: Շատեր կը մտածին, թէ խմբերով լեռներ ընկնելով եւ յեղափոխութիւն էնելով ազգ պիտի ազատուի՞: Ազգի ազատութիւն շա՛տ դիւրին գործ է, եթէ սուտ յոյս չդնիք հանգրստի վրէ՛ն, որ չունիք քանի զըռ թիւրքի ձեռաց տակն ինք ու չխաբուիք հարստութենով, որ ձեր չէ: Մտածէք, որ մըր կեանք կարճ է շատեր կը մըռնին չծնած, շատեր՝ խելքի չեկած ու զաշխարհ չտեսած, տեսնողներ լէ կ'ապրին շատ-շատ 50, 60 կամ 70 տարի: Երբ լէ էղնի պըտ մեռնինք: Բայց եթէ չսպասենք Աստու կամքին եւ ուզենք մըր կամքով մեռնիլ՝ էն ժամանակ կ'ազատուինք: Աստուած գմբղի կ'ազատէ մարդ արարածի կեանաց տանջանքէն, մարդ լէ՛ զինք կ'ազատէ մարդու փորձանքէն: Թէ որ զիմ խօսքի միտք հասկցաք՝ յեղափոխական իք: Մենք ըսինք.— «Յեղափոխական ինք, չընք ուզի մնալ կենդանի մեռեալ»: Գէորգ ըսաւ.— «Թէ որ բոլոր հայեր իրկուսն ուխտ էնին մեռնիլ, առաւօտ արեւ դըռ չծագած՝ ազատ ին»:

Էս խօսքի վրէ՛ն ներս մտաւ պահակ եւ ըսաւ, թէ Ալիզոնանայ Մքոն էկեր է կ'ուզէ զԶաւուշ տեսնել եւ յեղափոխութեան գինուոր գրուել: Գէորգ հարցուց մըզի.— «Դուք կը ճանչնա՞ք զՄքոն»: Ըմէնքս լէ միաբերան կանչեցինք.— «Կը ճանչնանք». զովարանեցինք զՄքոն ու ըսինք, թէ Լեւոնի աղբէրն է:

Գէորգ քիչ մը մտածեց՝ ըսաւ.— «Մէկ հոգի էրկու մարմնի մէջ չեղնի, բայց մէկ մարմնի մէջ էրկու հոգի կ'եղնի: Լեւոնի աղբէր էրկուով միքէ՞ եղ Մքոն լէ անպայման լաւ է: Ծառի մի վրէն կեղնի՛ խաչ, խեչ, շանկրէն»:

Յետոյ կանչեց զՄքոն, հարց ու փորձ էնեց, զհոգին լաւ մի քննեց. ճամբու գրաւ ըսելով.— «Մքո՛, քրզի կրկին պըտ տեսնիմ»:

Մի քանի օր ետք Գէորգ Զաւուշ կը կանչէ Մքոն. ու իր խումբին միացնելով, կ'անցնին Սասուն:

Գէորգ Զաւուշ կ'ըսէ.—

«Մենք անցանք Սասուն: Մեր խումբի ընկերներ կը հասնէին 30-ի: Անդրանիկ զիս, զՅարութիւն եւ մի քանի ընկերներ գրկեց Առաքելոց վանք, նպաստ բերելու սովեալներու համար: Զկրցանք բերել ոչ մի նպաստ, որովհետեւ պատրաստ բան չկար: Յարութիւն վերադարձաւ Սասուն, մենք ընկերներով դացինք Բերդակ»:

Ճամբու վրայ Հաւատորիկ գիւղի Շէյխնիստ գոմբրու մօտ կը հանդիպի Քիւրտերու. փոքր կռիւէ մը ետք, թշնամին փախուստի կը

գիմէ : Գէորգի հետ էին նաեւ եօթը ընկերներ : Ապա կը շարունակեն իրենց ճամբան , դէպի Բերդակ գիւղը :

Այդ օրերուն , հանրածանօթ Ալայ պէկը մօտ 200 ձիաւորներով կը շրջէր գիւղերը : Կասկածած տուները բռնի կերպով կը մտնէր եւ կը խուզարկէր . երբ որեւէ զէնք , սուր , կամ թուր գտնէր , այդ տան բնակիչները անմարդկային կերպով կը տանջէր : Բերդակ գիւղի մէջ Ալայ պէկը կրցած էր դաւաճան Ռէս Բարսեղի հետ համաձայնիլ , որ պէսզի որեւէ ժամանակ երբ Փետայիները գիւղը երթային , իրեն իմացնէր , նիւթական վարձատրութեան մը փոխարէն :

«Քեռի Մուրատ եւ ես ,— կ'ըսէ Գէորգ ,— մնացինք Բերդակ մէկ օր : Այդ օր գիւղի Ռէս Բարսեղ Մուշ գնալով մատնեց զմեզ : Անմիջապէս 70 ձիաւոր , 20 զօրք եւ 40 քիւրտեր Ալայ պէկի հետ եկան մեր վրայ , բարեբախտաբար շուտ իմացանք զլուր» :

Մատնիչ Ռէս Բարսեղը երբ կ'իմանայ Գէորգին իրենց գիւղը երթալը , նոյն ժամուն լուր կու տայ Ալայ պէկին , որ իր կարգին գինուորներով արշալոյսին կը շրջապատէ գիւղը եւ երկու այն տուները , ուր կը մնային Փետայիները : Այդ օրը Գէորգ թեթեւ ջերմ ունէր : Իր հրամանով , դրան ներսէն կը սկսի կռիւր . թշնամին անակնկալի գալով ինքնապաշտպանութեան կը դիմէ , պատերու ետեւ անցնելով : Իսկ Փետայիները , առիթէն օգտուելով , կ'անցնին թիկունքի կողմը , ուր իրենց համար կռուելու միջոց կ'ըլլայ :

Երբ կռիւ մը սկսէր , Գէորգ Չաւուշ սովորութիւն ունէր թըշնամիին իմացնելու իր ինքնութիւնը , պոռալով՝ «ես Գէորգն եմ» . թիւրքերն ու քիւրտերը գիտնալով հանդերձ , որ իրենց ոյժը շատ աւելի է քան Գէորգ Չաւուշինը , անոր հմայքի վախին ու սարսափին կ'ենթարկուէին եւ կարծէք ակամայ կը կռուէին : Կռիւր կը տեւէ մինչեւ երեկոյ :

Գէորգ կ'որոշէ , որ խուճրը անցնի դէպի բլուրը . ճամբու վրայ կային ոչխարներ , այգիներ եւ հնձաններ , որոնցմէ օգտուելով գիրքեր կը պատրաստեն եւ կը շարունակեն կռիւր : Առաջ գիւղէն օգնութեան կու գան զօրքին , որով Ալայ պէկի հետ կ'ըլլան մօտ 800 հոգի կռուող , իսկ Փետայիները միայն եօթ հոգի էին , սակայն հրաշքներ գործեցին :

Այս առթիւ խօսք տանք Յ . Սարգիսեանին .—

«Առաքելոց վանք վերադարձած մի խուճր աշակերտներս , առաօտ արշալոյսին , Բերդակ գիւղի կողմից հրացանների խուլ որոտներ լսելով , վանքի մեծ հեռագիտակը վերցնում եւ վազում ենք Ս . Աստուածածնի մատուռ : Հայդուկները հազիւ նկատելի էին , իսկ թիւրք ձիաւորները , հետեւակները դաշտը բռնել էին . քիչ յետոյ կողմերը չէին տեսնում :

Կէսօրին , 60—70 թիւրք ձիաւոր զինուորներ բարձրանում են դէպի վանք եւ հապճեպ անցնում կաղամախի ծառերը . նրանք նպա-

տակ ունէին Կումկումների կողմից անցնել, բարձրանալ Հաւատորիկի սարը՝ հայդուկների թիկունքը բռնելու, նրանց առնելու երկու կրակի մէջ. բայց այդ ձիաւորները յետ են դառնում, որովհետեւ ճամբայ չկար. քարակոյտերի միջով, մանաւանդ ձիերով անցնելը անհնար էր:

«Թիւրք սպաները իրենց համարում են անպարտելի, եւ համոզուած էին, որ առաջին իսկ պահին փոքրաթիւ հայդուկներին իրենց ձիերի սմբակների տակ պիտի տրորեն ու ճզմեն...: Բայց ժամեր սահում, անցնում են եւ չեն կարողանում մօտիկնալ Փետայինների գիրքերին. թշնամիները չէին սպասում, անգամ երեւակայում՝ որ կը հանդիպեն այսպիսի յամառ դիմադրութեան, որ խելքից-մտքից դուրս բան էր:

«Գէորգը զինակիցներին սիրտ տալով, քայլ առ քայլ կռիւ մղելով հասնում է Հաւատորիկ գիւղի սարը: Հաւատորիկ գիւղի պահակ երկու զապթիաների դրդամբ մի քանի բողոքական հայեր սկսում են թիկունքից զնդակներ արձակել հայդուկների ուղղութեամբ: Գէորգը խիստ դառնացած ու զայրացած՝ ձայնում է ընկերներին.

«— Թողէք թշնամիին, զէնքերը դարձրէք այս վատոգի դաւաճաններին...»

«Մի քանի զնդակներ նրանց փախուստի են մատնում: Հայդուկները վաղ առաւօտեանից սոված, ծարաւ, անվերջ լեռն ի վեր անընդհատ ցատկում են աջ եւ ձախ, կռիւ են մղում, վերջապէս ուժասպառ՝ հրաշքով հասնում են Ծիրնկատար բարձր լեռը եւ շրջում Կորեկի աղբիւր:

«Վրդովուած ու գազազած թշնամին յոյս է տածում, որ նեղն ինկած հայդուկները վերջ ի վերջոյ մեռած կամ ողջ՝ իրենց ճանկերը պիտի ընկնեն, ուստի հետապնդումը շարունակում են: Բարեբախտաբար բնութիւնը օգնութեան է հասնում. երեկոյեան կողմ սկսում է ուժեղ քամի եւ փոթորիկ, բարձրացած աւազուտ փոշին արգելք է հանդիսանում:

«Իսկ հայդուկները արդէն ուժասպառ, գրեթէ կիսայուշ վիճակում, ընկնում են Կորեկի աղբիւրի մօտերքը եւ դատապարտում անշարժութեան: Սասունցիները ժամանակին հասնում, բոլորին շալկած փոխադրում եւ տանում են:

«Կռիւի ընթացքին միայն Գալէն թեւից վիրաւորւում է:

«Թիւրք զինուորները եւ քիւրտերը ամօթահար ու գլխիկոր վերադառնում են: Անխտիր, անգամ թշնամիները, յիշեալ կռիւը համարում են հրաշք. իսկ քիւրտերը գովասանական երգեր են յօրինում Գէորգի մասին:

«Գէորգ հանգիստ նստել չէր կարող, յոգնիւ չգիտէր: Մի շարաթ անց, Սասունից իջնում է Առաքելոց վանք, ուր երկու օր մնում են: Գալէի թեւը կապուած էր, նա ամբողջ օր տանիքում, թաղիքի վրայ երկարած անխօս մնում էր:

«Փոքր աշակերտներս իր շուրջն ենք, իր ընկերներից ոմանք

երբեմն գալիս՝ փորձում էին խօսեցնել, կատակ անել, նա սառն ա- սում էր. «Ըյ տղայ վագ կից», ու կրկին լուռ մնում :

«Կառավարութիւնը Բերդակ եւ Նորչէն գիւղերում մէկական ջոկատ զինուորներ թողել էր որպէս պահակ՝ հայդուկների երթեւեկը լրտեսելու կամ արգելք հանդիսանալու նպատակով :

«Գէորգը իջնում է դաշտ, դէպի Բերդակ՝ զինակիցներին թող- նում է գիւղի եզրը, ինքը մենակ, արհամարհելով պահակ զինուոր- ների ներկայութիւնը՝ գնում է ուղիղ դաւաճան Ռէս Բարսեղի տուն, նրան կանչում է դուրս, եւ տեղն ու տեղը սպաննում է : Դաւաճանը Մոկունք գիւղացի հայդուկ Քեռի Ղազարի փեսան էր, բայց Գէորգը անողոք էր եւ նման փափկանկատութիւն չունէր :

«Գէորգը առանց ժամանակ կորցնելու, նոյն գիշերն իսկ Բեր- դակից գնում է Նորչէն գիւղ, մատնիչ Ռէս Կրպոյին կանչում դուրս եւ նրան էլ ահաբեկում է : Յաջորդ գիշեր մեկնում է Հաւատորիկ գիւղ. իր թիկունքում գնդակ արձակող վատոգիներից երկուսին ա- հաբեկում է : Այս արագաշարժ եւ յաջող գործունէութիւնը կայծակի արագութեամբ տարածւում է : Սարսափը թանձր ամպի նման տարած- ւում է ո՛չ միայն Տարօնի աշխարհում, այլեւ հեռաւոր շրջաններ :

«Կառավարութեան ձեռք առած միջոցները, թափած ջանքերը Գէորգին ձեռք բերելու եւ ծուղակ զցելու, անցնում են ապարդիւն» :

Սերոբի եւ Գուրգէնի սպանութենէն ետք, Սալնոյ-Չորի Կեդ- րոնական Կոմիտէութենէն միայն բեկորներ մնացեր էին, Փետայիներ չկային, անոնք սպաննուած կամ հեռացած էին, իսկ տեղ-տեղ կային փոքր խումբեր, համակիրներ ու կուսակցութեան գործին սակաւա- թիւ ջերմեռանդ հաւատացեալներ : Սասունի եւ Տարօնի ժողովուրդը ընկճուած եւ յուսալքուած էր, ենթակայ ըլլալով ամենածանր ճրն- չումներու եւ բռնութեան : Անոնք կը կարծէին, թէ իրենց գլխուն ե- կած բոլոր պատուհասներու պատճառը յեղափոխութիւնն է. իսկ այ- սօր, ընդհակառակն, անոնք կը գիտակցէին, թէ շատ կարեւոր է յե- ղափոխականներու գոյութիւնը. անոնք կ'ուզէին նոյնիսկ Սերոբ Աղ- բիւրի եւ Գուրգէնի ժամանակներուն պէս կազմակերպուիլ :

«Հրայր կ'որոշէ, փոխանակ Վասպուրական շտապելու, առ այժմ մնալ Սալնոյ-Չորի մէջ, անոր կեդրոնը դարձնելով Ախլաթ դա- ւառը : Ան նամակներ կը գրէ Վան՝ Վարդգէսին եւ Կ. Կոմիտէին, կը բացատրէ Դուրանէն հեռանալու իր պատճառները եւ կը պահանջէ, որ զինքը փոխարինող ընկեր մը փութով ղրկուի Դուրան-Բարձրաւան- դակ : Իսկ մինչեւ իր պատասխան ստանալը, կը նուիրուի կազմա- կերպչական գործերու :

«Ոչ ոք կրնար խանդարել զինքը իր ուզած ձեւով վերաշինելու խարխլած կազմակերպութիւնը. մեծ արագութեամբ ան կը յաջողի վերակազմել Սալնոյ-Չորի Կ. Կոմիտէութիւնը. ամէնուրեք կը ստեղ- ծէ մարտական եւ օժանդակ խումբեր, ենթակոմիտէներ ու կոմիտէ- ներ : Ոգին սակայն տարբեր էր Սերոբի եւ Գուրգէնի ժամանակներէն :

«Պէտք է այլեւս ոչ մէկ յոյս դնել դրսի ուժերու վրայ, որոնք թերեւս թշնամի էին հայ ժողովուրդին, ոչ մէկ յոյս թիւրք կառավարութեան վրայ, որքան ատեն որ կը տիրեն ներկայ կարգերը, ոչ մէկ յոյս դրսի հայերու կամ Ֆետայիներու վրայ. — այլ ապաւինիլ միայն սեփական ոյժին, սեփական միութեան ու կազմակերպութեան: Բերելով Սերոբի օրինակը, Հրայր կ'ըսէ, թէ պէտք է ջանալ որ ամէն մէկ հայ Սերոբ դառնայ եւ ոչ թէ ստեղծել մէկ-երկու Սերոբ ու անոնցմէ սպասել փրկութիւնը: Ան կը քարոզէ պատրաստուիլ, առժամանակ խուսափիլ կռիւներէ, յամառ ու դանդաղ պայքար մղել այն չափով միայն, որքան հնարաւոր է այժմ եւ որքան կը ներեն ժողովուրդի ներկայ ոյժերը: Որովհետեւ, կ'ըսէ Հրայր, տոկաշն ու համբերելը նոյնքան անհրաժեշտ զէնքեր են, որքան հարկ եղած պարագային զէնքով կռուիլը եւ արիւն թափելը: Համբերութեան եւ տոկունութեան ժամանակաշրջանին պէտք է պայքարիլ խելքով ու աշխատանքով, իսկ կռուի պարագային պէտք է պատրաստ ըլլալ հերոսի նման:

«Այս էր Հրայրի յեղափոխական փիլիսոփայութիւնը: Շատ շուտով, ան դարձաւ ժողովուրդի համար երկրորդ Քրիստոս մը: Հրայր չէր չըջեր Ֆետայիներու հետ գիւղէ գիւղ, ընդհակառակը իր հետ բերած Ֆետայիները՝ Քեռի Բարսեղը եւ ուրիշները, ետ կ'ուղարկէ, եւ ինքը, գիւղացիի հագուստով, մեն-մենակ, երբեմն նոյնիսկ ցերեկով ու անզէն, իբրեւ խեղճ գիւղացի մը, կը պտըտի գիւղերը եւ քարոզչութիւն կ'ընէ:

«Կառավարութիւնը իմացած էր այդ վտանգաւոր մարդու ներկայութեան մասին եւ կը հետապնդէ զայն ամէնուրեք. բայց ոչ ոք կը մտնէր զինք, հակառակ տրուած շարչարանքներուն: Եւ Հրայր անվտանգ կը շարունակէ իր գործը: Նոյնիսկ Ախլաթի յայտնի դաւաճանները, որոնք շատերու մահուան պատճառ էին դարձեր, չեն յանդրդնիր վատութիւն ընել այդ նոր մարդարէին: Եւ ժողովուրդը կը պահէ զինքը իր ծոցին մէջ, անվտանգ ու ապահով:

«Հրայր չի բաւականանար միայն յեղափոխական քարոզչութեամբ, այլ նաեւ կը խրախուսէ ուսումը, վաճառականութիւնը, համայնական աշխատանքները, փոխադարձ օգնութեան սկզբունքը եւ ամէն մշակութային ձեռնարկ: Անոր գործերէն են օրինակ՝ Գրդուռի տակ ինկած Ջրհոր գիւղի ջուրն ու աղբիւրները: Գիւղացիք յաճախ ծարաւ կը մնային եւ իրենց կենդանիներն ալ ջրելու համար մէկ ժամ ճամբայ կը կտրէին ու յաճախ ջրի պակասութենէն կը փճանային իրենց ցանքերը: Հրայր միմիայն ժողովուրդի միութեամբ եւ համայնական աշխատանքի միջոցով կրցաւ ջուր հայթայթել Ջրհոր գիւղին, շինելով աղբիւրներ, որոնք կը կոչուին Արմենակի Աղբիւր(*)»:

1902-ին, թիւրք կառավարութիւնը ալ չէր կրնար համբերել Ֆետայիներուն այս քաջագործութիւններուն եւ կ'որոշէ ամէն զնով

(*) Ռուբէն. «Հայ Յեղափոխականի մը Յիշատակները», Գ. Խատար, էջ 248:



ՀՐԱՅՐ - ԴԺՈՒՖ
Արմենակ Ղազարեան(*)
(1864—1904)

բնաջնջել Սասունի եւ Մուշի ֆետայիները եւ ամբողջ ժողովուրդը : Կառավարութիւնը դուրսէն հինգ վաշտ զօրք բերած էր Սասունի սահմանները, իսկ գլխաւոր ոյժերը կը մնային Մուշ քաղաքին մէջ : Բոլոր միւս բնակավայրերը եւս լեցուած էին ոստիկաններով ու զինւորներով, որոնք կ'ապրէին ժողովուրդի հաշուոյն եւ կը ճնշէին զայն բոլոր երեւակայելի ու աներեւակայելի միջոցներով : Շուտով բանտերը լեցուեցան հարիւրաւոր հայ անմեղներով, ծուխը մարեցաւ հայ շինականներու խրճիթներուն մէջ : Զէնք կրելը արգիւտած էր մահուան պատիժով, անկարելի էր երթեւեկը առանց յատուկ անցադրի (թեզքերէ) : Ամէն ոք ահ ի սիրտ կը սպասէր ընդհանուր կոտորածի :

Ծանր ու դժուարին պարտականութիւն մը ինկած էր հայ յե-

(*) Տես. «Յեղափոխական Ալպում»ի Ա. հատոր, էջ 65 :

դափոխականերուն վրայ. պէտք է հայ ժողովուրդը զերծ պահէին յուսալքումէ եւ վտանգաւոր շեղումներէ, կոտորածներու առաջքն առնէին, միաժամանակ հետապնդելով իրենց ազատագրական նպատակները:

1900-ական թուականները պէտք է նկատել յեղափոխութեան ամենէն յաջող շրջանը: Այդ շրջանի ամենէն կարկառուն դէմքերն էին Հրայրն ու Վահանը, որոնք կրցան առանց աղմուկի եւ աւելորդ պայքարներու ազատել հայ ժողովուրդը ստոյգ մահէ: Հրայր եւ Վահան (որ նոր եկած էր) Սասուն կը մտնէին որպէս Հ. Յ. Դաշնակցութեան Պատասխանատու Մարմնի անդամներ, իսկ խորհրդականներն էին Վարդան Վարդապետն ու Գեղամ Տէր Կարապետեանը:

«Վահան կարգադրեց, որ Փետայիները ցրուին իրենց գիւղերը, եւ ամէն մէկը իր հայրենի տան մէջ պատսպարուելով աննկատելի դառնայ կառավարութեան համար: Ասոնք նորէն կը մնան իբրեւ Փետայիներ, բայց կը հաշուուին իբրեւ պահեստի ոյժ, հարկ եղած պարագային իրենց շրջապատող Փետայիներու հետ միասին արձագանդ տալու համար կուսակցութեան կոչին:

«Այսպիսով Փետայիներու ամենաքաջ մասը՝ Գալէն, Յակէն, Սադոն, Մօրուք Կարոն, Շէնիկցի Չոլոն, Մանուկը, Ղազարը եւ շատ մը ուրիշներ կը դառնան «նստկան»: Ցրուելով գիւղերու մէջ, Փետայիները տեսակ մը մակարդ դարձան՝ պատրաստելու համար ապագայ զինուորական ոյժը մեր ժողովուրդի:

«Այս բոլորը սակայն կիսամիջոցներ էին, որովհետեւ թէ՛ իսլամ ժողովուրդի եւ թէ՛ կառավարութեան աչքի փուշն էր Գէորգ Չաւուշը: Եթէ անգամ ոչ մէկ Փետայի դոյութիւն չունենար ամբողջ Դուրան-Բարձրաւանդակի մէջ եւ մնար միայն Գէորգ Չաւուշը, այդ ալ արդէն բաւական էր, որ կառավարութիւնը յուզուի եւ խիստ միջոցներու դիմէ, յեղափոխութիւնը արմատախիլ ընելու համար, որովհետեւ Գէորգը իրօք որ յեղափոխութեան մարմնացումն էր, զէնքի եւ կռուի խորհրդանշանը» (*):

Համաձայն Հրայրի պահանջին, Գէորգ Չաւուշ որպէս շատ հետապնդուող Փետայի, պէտք է մեկնէր Վան, ժամանակ մը Վարդգէսի մօտ գործելու համար: Իսկ Անդրանիկ դեռ այնքան ճանչցուած չէր կառավարութեան կողմէ, ուստի այնքան ալ վտանգաւոր չէր իր ներկայութիւնը: Անոր մնալը Դուրան-Բարձրաւանդակի մէջ անհրաժեշտ էր այն տեսակէտով, որ իր անունը կարող էր նպաստել աւելի լաւ յարաբերութիւններ հաստատելու Անդրկովկասի Հայութեան հետ, անկէ ստանալու համար դրամական եւ զինական աջակցութիւն: Կը մնար նաեւ Փետայիներու փոքրաթիւ խմբակ մը, որուն մէջ կեդրոնական անձնաւորութիւնը Գոմսայ Իսօ Կորիւնն էր, որ Հրայրի հետեւող էր:

(*) Ռուբէն. «Հայ Յեղափոխականի մը Յիշատակները» Գ. հատոր, էջ 254:

Հրայր ծանօթ էր նաեւ Դժոխք կեղծանունով :

«Առաքեալ մըն էր բուն իսկ Տարօնոյ ժողովուրդի ծոցէն : Մտաւորական մը՝ օժտուած խօսելու եւ գրելու գեղեցիկ տաղանդով : Միատիկ շունչ մը կար այդ պարզ, շինական տղայի մէջ, որ միայն միջնակարգ կրթութիւն էր ստացեր եւ գիտէր խորապէս յուզել ձեզ իր սրտագրաւ քարոզչութեամբ :

«Այդ վտիտ մարմինը, մաշած, վաղաժամ աղօսուած դէմքով, այդ խորունկ ու թախծոտ աչքերը, որ այնքան սակաւ կը ժպտէին եւ կարծէք հարազատ ժողովուրդի բախտը կու լային, այդ լուրջ, հանդարտ, էնսիմուան գրոյցը, որ կ'ընէր վշտոտ, սրտառուչ ձայնով մը, առանց դիմացինին նայելու, այդ ամբողջ տերւիշանման կերպարանքը, գլխուն տնկած մշեցիի անբաժան արախչին, — այդ ամէնը անջնջելիօրէն գրոշմուած կը մնայ բոլոր անոնց յիշողութեան մէջ, որոնք առիթ ունեցեր են մօտէն դիտելու գերազանցապէս ժողովրդական այդ դէմքը : 1895-ի Օգոստոսի վերջերը, Կարսի մէջ, հարիւրաւոր կտրիճներ, սպառազինուած Հ. Յ. Դաշնակցութեան ձեռքով, կը պատրաստուէին սահմանն անցնիլ. այդտեղ էին մեր մեծ խմբապետները, — Սերոբ, Անդրանիկ, Աշոտ-Թաթուլ, Առիւծ-Աւագ եւ այլն, — եւ մէկը կար անոնց մէջ, մտաւորական ու խմբապետ միանգամայն, որ կը կապտէր ձեր ուշադրութիւնը, կը ներշնչէր հեղինակութիւն ու հմայք եւ որու ձայնին ու հրահանգին երկիւղածօրէն կ'ունկնդրէին զինուորները :

«Հրայրն էր : Դժուար է գտնել վերջին 40 տարուան ընթացքին թրքահայ մտաւորականութեան շարքերուն մէջ ուրիշ մէկը, որ այնքան խոր ազդեցութիւն, գովք ու հմայք ունենայ ժողովրդական զանդուածներուն մէջ, ինչպէս որ ինքնաբոյս տերւիշ-հրապարակախօսը, որ երկար տարիներ ազատութեան փողը հնչեցուց Սասնոյ լեռներէն» (*):

1894 թուի Սասունի առաջին ապստամբութեան ժամանակ «Հնչակ»ը, իր թիւ 3-ի մէջ, կը հրատարակէր Հրայր-Դժոխքի մէկ գրութիւնը Տարօնի Հնչակեան Կաղմակերպութեան Յայտարարութեան մասին, որ կու գար ծանուցանելու գալիք փոթորիկը : Ահա թէ ի՛նչ կը կարդանք այդ Յայտարարութեան մէջ, որ գրուած է դէպքերէն առաջ .

«Հայ եղբայրներ ,

«Հասաւ, վերջապէս, դարերէ ի վեր սպասուած կարմիր օրն . ահա կը հնչէ սրբազան զանգակն Սասնոյ բարձրաբերձ լեռներէն . ահա կը ծածանի այդ բարձանց վրայ հայութեան եւ մարդկութեան ոտնակոխուած իրաւանց նախանձախնդիր կարմիր գրօշակն . ահա զրկելոյն վրիժուց եւ բռնաւորին դատաստանի կենաց եւ մահու ժամը վճռական :

(*) Մ. Վարանդեան, «Հ. Յ. Դաշնակցութեան Պատմութիւն», էջ 144 :

«Այսօր Հայկական խնդիրը նոր եւ գեղեցկայոյս շրջանի մը մէջ կը թեւակոխէ: Այսօր ստրկական համբերութիւնը, գաղտագողի հառաչանքը, լռելեայն զայրոյթը եւ խուլ բողոքը կը վերջանան եւ անոնց կը յաջորդէ առիւծի մռնչիւնը»...

Եւ յայտարարութիւնը կը վերջանայ այս բառերով.

«Թող չկարծեն մեր հայ եղբարք, թէ մենք ընդարձակ պատրաստութիւն, պաշար, զէնք, դրամ, ռազմամթերք ունինք ընդերկար դիմադրելու թշնամւոյն յարձակմանց, այլ յուսահատութիւնը, ծայրայեղ ճնշումը, լուռ ու մունջ կորսուելու տեղ կռուելով մեռնելու պատրաստականութիւնը մղեցին զմեզ յայս գործ»...

Հրայր իրապաշտ ու շրջահայեաց մարդ էր: Կը գիտակցէր, որ թշնամին խիստ զօրաւոր է եւ որ հայութեան վիզին ծանրացած լուծը կրկնակի էր՝ թիւրքի եւ քիւրտի լուծը: Կը գիտակցէր, որ հայ ժողովուրդը պէտք ունէր ամենէն առաջ զինուելու, նկատի ունենալով, որ, բացի թրքական կառավարական ոյժէն, թիւրք եւ քիւրտ ժողովուրդները ոտքէն մինչեւ գլուխը զինուած էին եւ սանձարձակ: Կը գիտակցէր, որ նման բռնակալական ծովի մը մէջ, ստրկացած հայ ժողովուրդը, ամէն տեղ, գլուխ պիտի բարձրացնէր եւ իր հաւաքական բռունցքը ցոյց տար չորս կողմէն եկած հարուածներուն: Այսպիսով, հայկական ազատագրական գործը, համազգային իր բնոյթով կը պահանջէր համազգային շարժում մը:

Հրայր համազգային այսպիսի շարժման մը հաւատացողներէն էր, ու այդ պատճառաւ հայ գիւղական զանգուածները կ'ուզէր շարժման մէջ դնել, յեղափոխութեան տարբերքը լայն շրջանակով մեծցնելու համար: Այս հիմնական ուղղութենէն կը բխէր յեղափոխական նկարագրի այն տարբերութիւնը, որ Հրայրը կը դարձնէր զանգուածային շարժումներու ղեկավարը, բոլորովին տարբեր՝ խմբական կամ ցուցական գործիչներէն:

1890-էն սկսեալ Արաբոն, Լեւոնը եւ Գէորգը երբ ինքնաբերաբար լեռները կը բարձրանային, իրենց անհատական արիութեամբ մարմին տալու յեղափոխական Փետայիի նախատիպին ու ցոյց կու տային տիրող շրջանակին, որ հայն ալ կարող է զէնք կրել եւ այդ զէնքը գործածել, անդին Հրայրը մեծ ոգեւորութեամբ հետամուտ էր ըմբոստութեան ոգին տարածելու շրջանէ շրջան եւ մղելու որոշ գիւղախումբերը աւատական անիրաւութիւններու դէմ ծառանալու: Այդ կարգի շարժումներ Խնուսի, Զխուրի (Մշոյ գաշտ), Ղըզըլաղաճի եւ Սասունի շրջաններուն մէջ կը սանձահարէին աւատապետներու ոտընձգութիւնները: Ղըզըլաղաճի եւ շրջակայքի դիմադրութեան կազմակերպիչն եւ կռիւններու ոգին Հրայրն էր:

Այդ դէպքերը կարեւոր նշանակութիւն ունեցան այն ժամանակ, երբ սանձարձակ աւատապետներն ու աշիրէթները զգացին, որ եթէ գիւրին է ոչխարի պէս ենթարկուած ժողովուրդ մը կեղեքելը, սակայն դժուար է զինական դիմադրութեան դիմող ժողովուրդի մը

դէմ սուր շողացնելը, եւ սկսան զգուշանալ մասնաւորաբար այն շըրջաններէն, որոնք սուր ատամ ցոյց կուտային:

Հրայրի առջեւ այլեւս ոչ մէկ խոչընդոտ կար. ան կրնար կազմակերպել գործը ինչպէս որ ինք կ'ուզէր: Հրայր գիտակից էր իր պատասխանատուութեան. ան վստահ էր իր ոյժերուն եւ իր ժողովուրդին վրայ: Ուստի Վահանը կը թողու Սասուն իր փոքրաթիւ Ֆետայիններուն հետ, ինքը մինակ կ'իջնէ Մուշի դաշտը, Ախլաթի, Պուլանըխի, Վարդոյի եւ Խնուսի կողմերը՝ քարոզելու իր ուզած ուղղութեամբ:

«Գիւղացիի հագուստով, ցուպը ձեռքին, գիշերուան խաւարին մէջ Հրայր ճամբայ կը կտրէ գիւղէ գիւղ, շրջանէ շրջան եւ ամէն տեղ կը քարոզէ ու կը կազմակերպէ: Այս փոքրիկ, վտիտ, տժգոյն, մարդը, որ միշտ լուրջ է ու սառն որպէս տխրութիւն, կը յիշեցնէ շարունակ ժողովրդին հին, նահապետական բարքերը, կը վերակենդանացնէ անցեալի պատկերները եւ կ'ոգեւորէ ապագայի յոյսերով: Կարծես մեր անցեալէն եկած ուրուական մը ըլլար ան, որ կը դեզերէր հայրենական աշխարհը, արթնցնելու համար ժողովուրդը: Եւ հայ մարդը ոչ թէ կը սիրէր զինքը, այլ կը պաշտէր. թշնամին անդամ կ'ենթարկուէր անոր: Հրայր կը ճանչնար մեծն ու փոքրը Տարօնի աշխարհի մէջ, գիտէր նոյն իսկ ընտանեկան գաղտնիքները, ամէն մէկուն տկար եւ զօրաւոր կողմերը, ուստի կը գտնէր ամէն տեղ առաջնորդող, կարող ուժեր կը լծէր զանոնք աշխատանքի:

«Գործի վրայ էր նաեւ Վարդան Վարդապետը, որուն ուղղութիւնն էր, որ կատարելագործուած ձեւով կը հետապնդէր իր ազգական Հրարը. գործի վրայ էին նաեւ Բազումի Յակոբ, Սորտարայ Տիրանը, Մեղտիի Միսակը, Յիսաւայ Արթուրը, Աւրանի Հայկը, Ասոն, Գոմերի Յովիկը, Տէր Սարգիսը, Բեդարցի Պետոն, Կառնենու Մկրտտիչը, Մոկունաց Դաւոն ու Ղազարը, Ֆրանք Սահակը, Տերզեւանուց Վարդանը ու Բարսեղը, Բերդակի Ներսոն, Վարդենիսի Մարտիրոսը, Դրմերդու Յովհաննէ, Ալիգըզբունի Անդրանիկը, Արոսցի Հրաչը, Քոփեցի Արշակը, Քաղաուլուի Ղազարը եւ շարք մը ուրիշ գործիչներ, որոնք կը դառնան Հրայրի ստեղծած կազմակերպութեան հիմնաքարերը: Բոլորն ալ խանդավառ աշակերտներն են Ուրուականի (այս անունով կը կոչուէր Հրայր). բոլորն ալ կը ներշնչեն ժողովրդին Հրայրի ոգին, միութեան եւ զոհողութեան գաղափարը. հաւատ ու վստահութիւն կը հաղորդեն անոր իր ուժերու եւ ապագայ յաղթանակի հանդէպ. անոնք ատելութիւն կը սերմանեն դէպի այն բոլորը, որ վատ է ու անձնական, եւ ընդհակառակը՝ անձնուէր սէր դէպի այն, ինչ որ լաւ է, վեհ եւ օգտակար հայրենիքին ու ազգին:

«Հրայրի ժամանակն է, որ վերջնականապէս կը ձեւակերպուին Դուրան-Բարձրաւանդակի շրջանի կուսակցական վարչական բաժանումները եւ կեղծ անունները, որոնք մինչեւ վերջ մնացին շատ չնչին փոփոխութիւններով: Այսպէս՝ ան կը ստեղծէ երեք զլխաւոր շրջան-

ներ՝ Բարձրաւանդակ, Դուրան եւ Սալնոյ Զոր, որոնք իրենց հերթին կը բաժնուին կոմիտէութիւններու եւ ենթակոմիտէութիւններու: Կոմիտէութեան մը շրջանը կ'ընտրէր կոմիտէն, որ վարչական մարմին մըն էր, իսկ ենթակոմիտէն կ'ընտրուէր խմբապետներու կողմէ: Ամէն մէկ գիւղ ունէր ա) մարտական խումբ, որ կը փոխարինէր Ֆետայինները, բ) օժանդակ խումբ, որ կը վարէր կազմակերպութեան տնտեսական գործերը, եւ գ) գիւղի գլխաւորները, որոնք կոչուած էին հսկելու գիւղի մնացեալ զանգուածին վրայ: Կուսակցական բոլոր մարմինները ենթակայ էին խիստ կարգապահութեան եւ բոլորը միասին՝ Հ. Յ. Դաշնակցութեան լիազօր ներկայացուցչին, Վահանի, որուն մշտական բնակատեղին Սասնոյ լեռներն էին:

«Աւելի խորհրդաւոր կերպարանք մը տալու համար իր դիրքին, Հրայր կարծես դիտաւորեալ կերպով չէր ուզեր կազմակերպութեան ամբողջ շէնքը ենթարկել իր անմիջական կամքին, այլ կը վարէր Վահանի հետ, ինքը ուզելով լինել կազմակերպութեան ոգին: Այդ նկատումով Հրայր չէր ուզեր, որ Վահանն ալ շատ մատչելի ըլլայ ժողովրդի ընդարձակ խաւերուն: Մեծ կարեւորութիւն տալով խորհրդաւորութեան հմայքին, կ'ուզէր որ Վահանն ալ մնայ հեռաւոր մշուշին մէջ եւ միայն քիչերը, բացառիկ մարդիկ բախտ ունենան տեսնուելու անոր հետ եւ անմիջապէս ստանալու անկէ կուսակցական հրամաններ:

«Այսպէս կարճ ժամանակուան ընթացքին Դուրան, Բարձրաւանդակ, Սալնոյ Զոր շրջաններէն կ'անհետանան անհատ հերոսները ու անոնց հմայքները, ինչպէս նաեւ դաւաճաններն ու մատնիչները: Եւ կազմակերպուած ամբողջ զանգուածը դանդաղօրէն կը բարձրացուի դէպի հերոսութիւն, դէպի աներեւոյթ Վահանը, իսկ իրականին մէջ՝ Հրայրը» (*):

Հրայր սիրուած էր Սասունի եւ Մշոյ Դաշտի ժողովուրդէն: Ան կը ներկայանար մտաւորական գործիչ, դրող, խօսող ու կազմակերպող, միեւնոյն ժամանակ՝ իբրեւ զինուորական վարիչ եւ անվեհեր կռուող:

Գուրգէնի սպաննուելէն եւ Սերոբի թունաւորումէն ետք՝ «Հրայրի պարտականութիւնները աւելի բարդացան: Կազմակերպութեան պահպանումը եւ ժողովրդական ապստամբութեան պատրաստութիւնները հրատապ հարցեր էին: Բոլորի հայեացքը կեդրոնացած էր Հրայրի վրայ: Ժողովուրդը եւ տեղական կազմակերպութիւնները Հրայրի հետն էին եւ ջերմ կողմնակից անոր գործելակերպին: Սակայն, Ֆետայական խումբերը երկուքի բաժնուած էին: Պմանք կողմնակից Հրայրին եւ նոր կիրարկած մեթոտներուն, ոմանք ալ, — ինչպէս Անդրանիկ, — կը պահանջէին Հրայրէն, որ փախստական դառնայ եւ անցնի խումբերուն գլուխը, գործնականօրէն վարիչը

(*) Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը Յիշատակները», Գ. հատոր էջ 257-258:

ըլլայ Ֆետայական շարժումին, այլապէս, Հրայրի ընդհանուր վարիչի հանգամանքը կը ժխտէին:

«Հրայրը, բնականաբար իր գործելու եղանակէն շհրաժարեցաւ: Բազմաթիւ ջանքեր թափեց խումբերը հաշտեցնելու եւ անոնց պարտաւորութիւնները սահմանաւորեց: Անդրանիկը շատ յաճախ ըմբոստ գտնուեցաւ եւ միշտ պահանջեց, որ Հրայրը կ'առարկէր. եթէ ինքը բարձրանայ, պիտի դառնայ պարզ Ֆետայի մը, մինչդեռ յեղափոխական գործը կը պահանջէր լայն աշխատանք տանել ժողովրդական գանգուածներուն մէջ, ինչ որ ինքը կրնար կատարել, երբ փոխըստական չէր. եւ երկրորդ, որ Ֆետայական խումբերը, ըստ Հրայրի, յեղափոխութեան թուղիկ զօրամասերն էին, ենթակայ շրջանի ընդհանուր կազմակերպութեան, եւ կրնային օգտագործուիլ այս կամ այն պատեհ առիթին: Յեղափոխութեան հիմնական գործը ժողովուրդն ամբողջ ոտքի հանելն էր, խմբական կռուի փոխարէն, ընդհանուր ապստամբութեան պատրաստութիւնն էր:

«Հրայրը այս շրջանին, բաւական նեղութիւններ կրեց: Քանի մը անգամ ստիպուեցաւ խումբերէն ոմանց զինաթափ ընել: Անգամ մը նոյնիսկ Անդրանիկը Շէնիկի մէջ (Սասուն) զինաթափ ըրաւ: Բայց այդ բոլոր նեղութիւններու ընթացքին, երբեք չընկրկեցաւ իր վարիչի բարձրութենէն եւ պատասխանատուութեան կատարեալ գիտակցութեամբ՝ առաջ տարաւ իր աշխատանքները:

«Այսօր, երբ նկատի կ'առնենք Անդրանիկի Յուշերը այդ ժամանակաշրջանի մասին գրուած (Անդրանիկ իր յուշերը գրի առած է 1905-ին, Սասնոյ դէպքերէն մէկ տարի յետոյ, թարմ յիշողութեամբ ու կիրքով), ու երբ քննութեան կ'առնենք անոր ամբաստանութիւններն ու դժգոհութիւնները Հրայրի այս կամ այն քայլի վերաբեմամբ, կը տեսնենք, որ Հրայրը, որպէս հեռատես յեղափոխական եւ պատասխանատու դէմք՝ աւելի կը մեծնայ մեր աչքին:

«Այն ինչ՝ որ Անդրանիկը կ'արձանագրէ իր յուշերուն մէջ Հրայրը նսեմացնելու, կը ծառայէ խորին յարգանքի արժանացնելու: Եւ իրօք, նոյն հիմնական խնդիրն է, որ վէճի նիւթ կը ծառայէ: Անդրանիկը խմբական ու յանպատրաստից քայլեր կ'առնէ, իսկ Հրայրը կողմնակից չէ ու կը զսպէ ժողովուրդի եւ տեղական կազմակերպութեան միջոցով: Անդրանիկը տեղական եւ ցուցական նշանակութիւն ունեցող կռիւններու կը մղուի, մինչդեռ Հրայրը այդ բոլոր ցնցումներն ուժի աւելորդ սպառում կը նկատէ եւ կը ստիպէ խումբերը հրաժարիլ ցուցական գործերէն եւ դառնալ համեստ ու զաղտնի յեղափոխականներ, ժողովուրդը զանգուածօրէն պատրաստելու: Հրայրը ամբողջովին կլանուած էր ընդհանուր ապստամբութեան մը պատրաստութեամբ, որ երկար տարիներ եւ տքնաջան աշխատանք կը պահանջէր, մինչդեռ Անդրանիկը այս կամ այն անկիւնի վրայ կ'ուզէր յարձակիլ, եւ տեղական նեղ հորիզոնէն անդին՝ համաժողովրդական շարժում չէր տեսներ եւ չէր ըմբռներ:

«Այս բոլորը շատ յատակօրէն կը տեսնուի նոյնիսկ Անդրանիկի շատ կողմնակալ յուշերէն :

«1900—1904 ժամանակաշրջանը Հրայրի տիրապետութեան շրջանն է : Ռուբէն իր յուշերուն մէջ, այդ ժամանակաշրջանը իրաւամբ կ'անուանէ «Հրայրեան շրջան» : Դէպքերու եւ կատարուած աշխատանքներու վրայ չենք ծանրանար : Այդ ընելու համար, հատոր մը անհրաժեշտ է գրել : Որովհետեւ, Հրայրի վերջին տասնամեայ դործունէութիւնը կ'ընդգրկէ Երկրի ամենէն լայն շրջանը, եւ ամենէն նշանակալից պատմական երեւոյթները : Այս բոլորը Հ. Յ. Դաշնակցութեան ընդհ. պատմութեան մէջ կը մտնեն : Մենք կ'աշխատինք շարժման էութիւնը բնութագրելու, անշուշտ համառօտակի (տեսնել «Պատմութիւն Տարօնի Աշխարհի» ընդարձակ պատմութիւնը) :

«Հրայրը ի՞նչ հիմնական նպատակ կը հետապնդէր յեղափոխական այս նոր ձեռնարկով :

«Նախ պէտք է շեշտել, որ Հայութիւնը սկսած էր ինքնամփոփուիլ եւ ազատիլ 1895—96-ի կոշտարներէն : Յեղափոխական կազմակերպութիւնը աւելի արմատական էր Երկրէն ներս : Ժողովուրդը կը ձգտէր զինուելու : Եւ տիրող կարգերու յարածուն խտութիւններուն դէմ ըմբոստական ոգին բարձրացած էր : Կազմակերպութեան շղթան իրարու միացուցած էր հեռաւոր շրջանները, այսպիսով լրացնելով նախապայմանը ապստամբութեան մը :

«Երկրորդ, Հրայրը, հաւատարիմ իր յեղափոխական նկարագրին, այժմ նորէն կանգնած կը մնար ընդհանուր ապստամբութեան տեսակէտին վրայ ու կը հաւատար, որ նման ապստամբութիւն մը կրնար նշանակութիւն ունենալ, երբ տեղական ժողովուրդը զանդուածօրէն ոտքի կը կանգնէր :

«Այս ընդհանուր նպատակին համար Հրայրը նետուեցաւ գործօն աշխատանքի : Տարօնի շրջանը, Սասուն եւ Մշոյ դաշտը, կազմակերպելէ ետք, անցաւ եւ կազմակերպեց Խնուսի, Բուլանրդ-Մալազկերտի շրջանները, որպէսզի Բասէնի եւ Ալաշկերտի գծերը կտրուած չմնային Տարօնէն : Այսքանով չբաւականացաւ : Անցաւ Պիթլիսի եւ Ախլաթի շրջանները, վերակազմեց եւ սերտ կապերով միացուց Դուրան-Բարձրաւանդակի Կ. Կոմիտէութեան : Աւելի'ն : Ընդհանուր ապստամբութեան խնդիրը չկապեց միայն այս շրջաններուն հետ : Անոր կարծիքով՝ Վանի ամբողջ նահանգի հայութիւնն ալ միեւնոյն ժամանակ պիտի պարզէր ապստամբութեան դրօշը : Այդ պատճառով անցաւ Վան : Խորհրդակցեցաւ Վարդգէսի, — որ այդ ժամանակ Վանի պատասխանատու գործիչն էր — եւ Վասպուրականի Կ. Կոմիտէի հետ : Համաձայնեցաւ ընդհանուր ծրագրի մը շուրջը՝ զինելու հայ յեղափոխութեան երկու կարեւոր կեդրոնները, կապակցելու իրարու, լրացնելու բոլոր նախապատրաստական աշխատանքները եւ պարզելու ընդհանուր ապստամբութեան դրօշը Սասունէն մինչեւ Վան» (*) :

(*) Կ. Սասունի, «Հրայրի դերը հայ ազատագրական շարժման մէջ», էջ 34-38 :



ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ

Մինչ այդ Անդրանիկ դժգոհ էր : Ան սկսաւ ընկերներուն եւ ժողովուրդին միտքը պղտորել ըսելով . « Հրայրը տուն նստած , աղատ կեանք վայելելով , չի կրնար ղեկավար ըլլալ , անհրաժեշտ է որ լեռ բարձրանայ . . . » : Ֆետայիներու մէկ մասը կը սիրէ Գէորգը որուն Սասունէն մեկնելուն պատճառը Հրայրն էր : Անդրանիկ ասկէ եւս օգտուելով կ'ըսէ . « Մենք ուխտեր ենք լեռ բարձրանալ եւ կռիւ մղել յանուն Ազգին , իսկ հիմա Հրայրը կը պարտադրէ մեզ ուխտադրուժ ըլլալ . . . » : Հայդուկները , որ մեծ պատկառանք ունէին Հրայրի նկատմամբ , կը սիրէին ու կը յարգէին զինք , սակայն զիրենք « ուխտադրուժ դարձնելու » հանգամանքը զանոնք կը վրդովեցնէր : Ուստի անոնք կ'որոշեն չենթարկուիլ Հրայրի հրահանգներուն : Անդրանիկ , օգտուելով այս որոշումէն , կը գրգռէ Ֆետայիները եւ կը ջանայ համոզել զանոնք , որ « Եթէ Հրայր իր որոշումը իրագործէ » , պէտք է զայն սպաննել :

Երբ Հրայր կը վերադառնայ Սասուն՝ Շէնիկ գլուղ՝ իր որոշումը գործադրելու , Շէնիկցիները տեղեակ էին Անդրանիկի հետասպնդած նպատակին :

Անդրանիկ խումբով կու գայ Շէնիկ եւ կ'ուզէ զինաթափել Հրայրը : Գիւղացիները իմանալով այս լուրը , շուտով կու գան Հրայրի մօտ : Իշխան Վարդանը դաշոյնը քաշելով կը յարձակի Անդրանիկի վրայ , բայց Ռէս Հեպոն արգելք կը հանդիսանայ : Հրայրի որոշումով Անդրանիկը կը զինաթափեն , ապա կ'ուղղուին դէպի Կելիեկուզանի



Կելիեկուզանցի հայ ընտանիք մը

լեռները : Մօտ մէկ ամիս կը տեւէ այդ գոյամիճակը : Ի վերջոյ Ս . Կարապետի վանահայր Վարդան վարդապետի եւ Առաքելոց վանքի վանահայր Յովհաննէս Վարդապետի միջամտութեամբ Անդրանիկի եւ հայդուկներու զէնքերը կը վերադարձնեն :

Հայդուկները իրենց զէնքերը վերստանալէն ետք , Անդրանիկի գլխաւորութեամբ անիշխանական դրութիւն կը ստեղծուի :

Փետայիները կը սկսին աննպատակ շրջադայիլ մօտակայ լեռներն ու գիւղերը , առանց ուշադրութիւն դարձնելու երթեւեկող ոստիկաններուն ու քիւրտերուն : Գաւառապետը օրը օրին լուրեր ստանալով եւ մտահոգ Փետայիներու այս անսովոր ընթացքէն , քիւրտերը կը մղէ լրտեսութեան՝ որպէսզի աւելի ստոյգ տեղեկութիւններ ձեռք բերէ :

Հրայր դէմ էր Անդրանիկի այս ցուցամոլական ընթացքին ու գործելակերպին , որոնք ժողովուրդը պիտի կանգնեցնէին կատարուած տխուր փաստի առաջ : Ան գիտէր զալիք ողբերգական հետեւանքները եւ անդարմանելի կորուստը իր ահաւոր հետեւանքներով , քանի որ 1894-ի ապստամբութեան մասնակից եւ ականատես եղած էր : Ուստի , նախ քան ապստամբութիւնը , ան նամակ մը կը գրէ «Դրօշակ»ին ըսելով .

«Գուցէ այս ըլլայ մեր վերջին նամակը... ձիւնը շատ , բուք ու

բորանը խիստ, ժողովուրդը մերկ ու բոսիկ, կռիւը անհաւասար... ընկերներ, դիմում ըրէք քաղաքական աշխարհին, մեր բարեկամներին, առանց վայրկեան կորսնցնելու, գուցէ դազանութիւններին սահման կը դրուի...

Անվերջ համբոյրներով
Հրայր» :

Մշոյ դաշտի եւ Սասունի ժողովուրդը ոչ միայն կողմնակից էր Հրայրի տեսակէտին, կը զգար անոր հոգեկան ապրումները, կը յարգէր զինք, այլ կարելի է ըսել, որ իբր սուրբ առաքեալ մը կը պատէր զինք, իսկ Անդրանիկի բացայայտ ու ինքնավստահ շարժումները օսմանեան կառավարութիւնը կը բերեն այն համոզման, թէ Սասունի ժողովուրդը մեծ պատրաստութիւններ կը տեսնէ ապստամբութեան համար: Ուստի կառավարութիւնը Վարդան Վարդապետը եւ Յովհաննէս Ծայրագոյն Վարդապետը իբր բանագնաց կ'ուղարկէ Սասուն եւ անոնց միջոցաւ կ'առաջարկէ ապստամբներուն կա'մ յանձնուիլ եւ կամ հեռանալ Սասունէն:

Անդրանիկ լաւապէս տեղեակ էր, որ կովկասէն օգնութեան եկող խումբերը, ճամբան կռուի բռնուելով, դժուար թէ կարենային հասնիլ Սասուն: Սակայն, հակառակ բոլոր այս աննպաստ պայմաններուն, ան խստիւ մերժեց բանագնացներուն բերած առաջարկները:


Սասունի ժողովուրդը զգաց սակայն, որ վերջ ի վերջոյ իրենց գլխուն պիտի պայթի աղէտը: Ուստի, ճակատագրական ժամանակին ձեռնհաս ղեկավար մը ունենալու համար շարունակական խնդրազրկումով, որոնք երբեմն պահանջքի բնոյթ ունէին, ժողովուրդը կը պահանջէ ետ բերել Գէորգ Չաւուշը: Ի վերջոյ այդ պահանջքը նկատի կ'առնուի Վահանի կողմէն եւ 1903 թուին կը գրուի Վարդգէսին, որ ետ դրկէ Սասնոյ հերոսը:

ԳԵՈՐԳ ՉԱՒՈՒՇ ՎԱՆԻ ՇՐՋԱՆԻՆ ՄԷՁ

Գէորգ գիտէր, որ իր Վասպուրական ուղարկուելու խնդրին գլխաւոր շարժառիթը քաղաքական հրամայական պահանջքն էր: Ուստի կոտորուած սրտով, առանց բողոքի ու խօսքի, ճամբայ կ'ելլէ դէպի Վան՝ Վարդգէսի մօտ:

1902-ի աշնան ան կը հասնի Վան. նոյն գարնան Պարսկաստանէն հասած էր նաեւ Վարդան Շահպաղը:

Վարդգէս լսած էր Գէորգի անունը եւ անոր կատարած անհաւատալի հերոսութիւնները ու մեծ հաւատք ունէր անոր վրայ: Ուստի



ՎԱՐԴԱՆ ՇԱՀՊԱԶ
(Մինաս Տօնիկեան) (*)
1864 — 1959

օգտուելով անոր ներկայութենէն, փոքր խումբ մը կը յանձնէ անոր, որպէսզի շրջին Արճէշի կողմերը եւ կաղմակերպչական աշխատանք կատարեն: Գէորգին կ'ընկերանան Վարդան Շահպազը եւ Ծուռ Դաւոն:

Արճէշի կողմերը կային մեծ ու փոքր քիւրտ աշիրէթներ. մէկ կողմը կը բնակէին Սիփան լեռան շուրջը հաստատուած շարք մը վրանաբնակ քիւրտերը, միւս կողմը՝ Զիլանաձորի (Աղբի-տաղ) հոծ

(*) Տես «Յեղափոխական Ալպում»ի երկրորդ հատոր էջ 358:

քրտութիւնը, որոնց մէջ յայտնի էր Քէօռ Հիւսէյն փաշան : Այս երկու ոյժերուն միջեւ Արճէշի անգէն հայերը կարծես աքցանի մէջ առնուած, ճնշուած վիճակի մէջ կ'ապրէին : Այս կացութեան մէջ, Գէորդի ներկայութիւնը այդ շրջանին մէջ մեծ եւ բարերար ազդեցութիւն թողուց : Գիւղերու կազմակերպչական աշխատանքները յաջողութեամբ առաջ կ'երթային :

Օր մը, անակնկալ կերպով, 30 զինուած քիւրտ ձիաւորներ մուտք կը գործեն դիւղ, ժողովուրդը սարսափի կը մատնուի, Գէորդի զինակիցներով դուրս կու գայ փողոց՝ անոնց դէմ առ դէմ եւ քիւրտերէն լեզուով սպառնալին կը թելադրէ որ անմիջապէս հեռանան, եթէ կ'ուզեն ողջ մնալ... : Քիւրտերը շփոթուած կ'ընկրկին : Առաջին անգամն էր, որ անոնք զինուած, խիզախ հայերու էին հանդիպած : Առանց անդրադառնալու իրենց ամօթալի կեցուածքին, քիւրտերը շուտով կը վերադառնան եւ իրենց տեսածները կը պատմեն ցեղապետ Հիւսէյն փաշային, որ Սուլթան Համիտի վստահելին էր եւ Վասպուրականի նահանգապետի մտերիմը : Հիւսէյն փաշան յաճախ ինքնավստահ կերպով կը յօխորտար նահանգապետին առջեւ, որ հայ Ֆետայիները համարձակած չեն իր ազդեցութեան դօտիէն ներս մտնել : Ուստի, նկատի առնելով, որ Ֆետայիներու երեւման լուրը տարածուելու պարագային իր վարկը պիտի նսեմանայ յաչս կառավարութեան, կը կանչէ լրաբեր քիւրտերը, կը սաստէ զանոնք որպէս ստախօսներ եւ խառնակիչներ եւ խստիւ կ'արգելէ այդ մասին որեւէ տեղ խօսիլ :

Վարդգէս, երբ կը ստանայ Սասունէն Վահանի նամակը, շուտով կ'իմացնէ Գէորդին :

Հետաքրքրական է յիշել, որ Վարդգէս, երբ Գէորդ Չաւուշը, Վարդան Շահպաղը եւ Ծուռ Դաւոն կ'ուղարկէ Արճէշի շրջանը կազմակերպելու աշխատանքով, դառնալով անոնց կ'ըսէ. «Ձեզ կը ճամբեմ, բայց դիտցէք, որ զիս պիտի չտեսնէք այլեւս, պիտի մատնեն զիս կամ պիտի սպաննուիմ, վերադարձին գործը ձեզի պիտի մնայ, չթողուք որ քայքայուի» :

Կարծես Վարդգէս նախազգացած էր պատահելիքը, հազիւ մի քանի շաբաթ ետք, 1903-ի Յունուարին, ան կը ձերբակալուի Վանի մէջ(*) :

Գէորդ Չաւուշ երբ կը լսէ, որ Սասունը կը պահանջէ զինք, անմիջապէս ճամբայ կ'ելլէ առանց Վան երթալու : Երբ կը հասնի Մշոյ դաշտը, կարծես տօնական տրամադրութիւն կը ստեղծուի : Իսկ երբ կը բարձրանայ Սասուն, ժողովուրդը մեծ խանդավառութեամբ եւ հրացանի համադարկերով կը դիմաւորէ Սասունի մեծ հերոսը :

1903-ին թիւրք կառավարութիւնը հետզհետէ կը խստացնէր հսկողութիւնը, զգուշանալով սակայն ազմկայոյց միջադէպեր ստեղ-

(*) «Յեղափոխական Ալպում»ի 5-րդ հատոր, էջ 116 :



ՎԱՐԴԳԵՍ ՍԵՐԵՆԿԻԻԼ ԵԱՆ

(Զայրմայր Գիսակ) (*)

1871 — 1915

Ծելէ : Գիւղերու եւ տուներու մէջ, զէնք ու փախստական փնտուելու պատրուակին տակ, խուզարկութիւններ յաճախադէպ կը դառնան եւ ամէն բանուկ ճամբաներու վրայ ոստիկանական խուճբեր կ'երթեւեկեն անընդհատ : Կառավարութիւնը ուղեր էր նաեւ զօրանոցներ հաստատել ամենէն ապստամբ բոյներուն կողքին, ինչպէս Շէնիկ, Կելիեկուղան, Տալուրիկ եւ ուրիշ վայրեր :

Կելիեկուղանի զօրանոցին շինութեան ժամանակ, Գէորդ շու-

(*) Տես «Յեղափոխական Ալպում»ի հիմնգերոյրդ հատոր էջ 161 :

տով կրցաւ, ժողովուրդի բուն ընդդիմութեան ու ազմկալի բողոքներուն կռթնած, կառավարութեան ծրագիրը ձախողեցնել: Սակայն կառավարութեան միջոց չէր պակսեր իր ծրագիրը տարբեր ճամբով, եւ ձեւով իրագործելու: Իսկ սասունցին կ'երազէր հայկական եօթը նահանգներու ամբողջական հողին մասին: Սա արդէն նոր գիծ մըն էր զոր բնորոշելու համար առաջ կը բերենք այն ժամանակ Սասունի մէջ ընդհանրացած քրտերէն երգ մը իր թարգմանութեամբ.

Դէ լէխն, լէխն, բրանօ լէխն,
Դուշմանէ մագն, մօլլա շէխն,
Մօսունի բինըն, փշէկա լէխն,
Լաշէ կուրմանջա լը արգէ բախն:

Ֆիդա դոքէդը ժալէ հալաթէ,
Կոմդա դաւօրդան հափթ վօլիլաթ,
Գէորգ Սունդիսարի չար ինջիլա,
Խօյնախօթ բէժմբոյ հէսիրտ:

Գէորգ Սունդիսարի դվէ մօսանի,
Կօմ նժդա բաւէն սար խշլէ գալէ,
Դուժը դինա Խա, ըժ դինա Խունս,
Ժէ մէնէնի ժը վա իգի բխալէ:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Դէ՛ գարկէ՛ք, գարկէ՛ք, եղբայրնե՛ր, գարկէ՛ք,
Թշնամու մեծին. մօլլին ու շէյխին,
Մօսինը բերէք, փամփուշտ դրէք,
Թշնամի քրդին գլորէք գետին:

Ֆետային ահա, եկաւ իլաթով,
Եօթը վիլայէթ մենի կը պահանջենի.
Գէորգը երդուեց չորս աւետարանով,
Խեղնի համար մենի արիւն պիտ' քափենի:

Գէորգը երդուեց մոսինի վրայ,
Աւրել գօրանոցը կելիեկուզանի.
Դու մահմեդական, ես քրիստոնեայ,
Մեր երկուսից մէ՛կը պիտի ջնջուի:

Այս կացութեան հանգէպ, տարրական ողջմտութիւնը կը պահանջէր անշուշտ ծայր աստիճան խոհեմութեամբ շարժիլ: Եւ յեղափոխական ոյժերը ցրուելու կարգադրութիւնը, այդ խոհեմութեան առաջին թելադրութիւնն էր, որ երբեք պիտի չնշանակէր լքել ճակատը, ընդհակառակը, պիտի ծառայէր զայն աւելի եւս ամրացնելու:

Բացի այդ, կարգ մը որոշումներու համաձայն, աշխատանքի բաժանում մը կատարուած էր, որ կը գործադրուէր շատ վտանգաւոր պայմաններու տակ, ինչպէս զէնքի փոխադրութեան, պարէնի մթերման, քիւրտերու հետ յարաբերութեան եւ ժողովուրդի կազմակերպման կարգադրութիւններու ժամանակ:

Ժողովուրդին կազմակերպումը յանձնուած էր կոմիտէներուն, որոնք Հրայրի շունչին տակ՝ նոր կորովով լծուեր էին գործի:

Զէնքի փոխադրութիւնը գլխաւորաբար երկու հանգրուանով կը կատարուէր: Վանէն գէպի Ախլաթ փոխադրութիւնը յանձնուած էր Շամիրամ գիւղացի Սողոյին եւ Միսաքին, Զրհորայ Ակոյին եւ Աճէմին: Իսկ Ախլաթէն Սասուն, — ամենէն վտանգաւոր ճամբան, — գործը կը վարէին Վարդենիսցի Մուրատն ու Յարդոնքցի Զնտոն:

Իսկ քիւրտերու հետ յարաբերութեանց մասնագէտը Գէորգ Չաւուշն էր: Պէտք է ըսել, թէ քիւրտերը սիրաշահելու ձգտումը նոր չէր, որ երեւան կու դար: Յեղափոխական կազմակերպութիւնը առաջին օրերէն իսկ պէտք տեսեր է եթէ ոչ քիւրտերը մեզ կապելու իբր դաշնակից, այլ գոնէ ապահովելու անոնց բարեկամութիւնը կամ չէզոքութիւնը: Զանք չէ խնայուած այս ուղղութեամբ. յարաբերութիւնները միշտ ալ մշակուած են քիւրտ ցեղապետներու հետ՝ զանազան գործիչներու միջոցաւ:

Առաքելոց վանքի կռիւը նոր թափ տուած էր նաեւ քիւրտերու հետ յարաբերութեան սերտացման ձգտումին, մանաւանդ որ այս անգամ, կարգ մը ցեղապետներ իրենք իսկ՝ ուղղակի կը փափաքէին մօտենալ Փետայիներուն: Առաքելոց վանքի կռիւը ցնցած էր բազմաթիւ քիւրտեր. նոյնիսկ ըսուած է, թէ Պոլսոյ Պահրի փաշան, — որ Ալէնտի քրտական ցեղախումբէն էր եւ Սասգիւղի մէջ ու շրջակայքը հողային տարածութեանց սեփականատէրն էր, — հետաքրքրուեր էր եւ իր մարդոց գրուած նամակներով՝ իբր թէ ուղեր էր հասկնալ թէ յեղափոխականները ի՞նչ ոյժ կը ներկայացնեն, ի՞նչ կը հետապնդեն և կը փափաքի՞ն բարեկամութիւն հաստատել քիւրտերուն հետ ու իբր թէ նաեւ թելադրեր էր իր մարդոց՝ հաշտ երթալ յեղափոխականներու հետ: Անկէ ետք իր ազգական Սասգիւղի պէկը՝ մօտեցաւ յեղափոխականներուն:

Թիւրք կառավարութիւնը կ'ուզէր քիւրտերը հայերու դէմ հանել, զանազան առաւելութիւններ տալով անոնց:

Այս վիճակին մէջ, անապատի քարոզ կը դառնար ազատութիւն ճառել մարդոց, որոնք գոհ էին իրենց յատուկ ազատութենէն...

Սակայն, անկարելին իսկ պէտք էր փորձել՝ հայ յեղափոխութեան դոյզն նպաստ մը բերելու համար: Ու պէտք է ըսել, թէ թափուած ջանքերը բոլորովին ապարդիւն չէին անցնել: Քիւրտերու հետ բարեկամութեան հաստատման ամենէն հաւատաւոր առաքեալն էր Գէորգ Չաւուշը, որ արդէն իր սխրագործութիւններով համբաւաւոր էր աշիրէթներուն մէջ: Ծանօթ քրտական վարք ու բարքին եւ բար-



ԽԱՍ ԳԻՒՂԸ

բառին, գիտէր իւրաքանչիւրին համապատասխան լեզու գործածելու դադարները:

Քիւրտերու հետ բարեկամութեան գլխաւոր օգուտը այն էր, որ մասամբ անոնց միջոցով կարելի կ'ըլլար ապահովել զէնքի փոխադրութիւնը, զոր ստանձնած էին Շամիրամ գիւղացի Սողոն եւ Միսաքը, Ջրհոր գիւղացի Ակոն եւ Աճէմը, Վարդենիսցի Մուրատը եւ Յարգոնքցի Ճնդոն:

Մասնաւորաբար սերտ կապեր ունէին Մուսա պէյի եղբօրը Խասրմի հետ, որուն տան մէջ օրեր կ'անցընէին:

Սասունի շրջանէն Պողըքցի Թելօ, որ 400 «չախմախլը» ունէր իր տրամադրութեան տակ, կապուած էր Գէորգին եւ Սասնոյ կռիւններուն ընթացքին գոնէ չէզոք մնաց, չմիանալով կառավարական ոյժերուն եւ քիւրտ աւարառու խուժանին:

Խճուղ գիւղացի Տէրվիշը, որ ցեղապետ էր եւ որ իր եօթը եղբայրներով իսկապէս յեղափոխական խառնուածք ունէր, մինչեւ վերջ հաւատարիմ մնաց Փետայիներուն:

Ինքնաբերաբար Փետայիներուն մօտեցեր էր ուրիշ քիւրտ ցեղապետ մը՝ Տրպոյի Սայիտը, որ Գէորգին հետ տեսակցելու եւ դաշինք կնքելու փափաք յայտներ էր: Իշխանձորցի Յարութիւնի միջոցաւ կը յայտնէ, որ 25 ձիաւորներով զինք կը սպասէ: Գէորդ Չաւուշ քսան հոգի ընտրուած ամենէն ներկայանալի, բարձրահասակ,

Թիկնեղ հայդուկներով կ'երթայ որոշուած վայրը տեսակցութեան եւ անկէ ետք բարեկամական հանդիպումներ յաճախ կ'ունենան :

Գէորգի հետ բարեկամ էր նաեւ Սասունցի քիւրտ Շէկոյի ցեղը, որ Ս. Աղբերեկի շրջակայքը կը բնակէր : Աշիրէթին պետը՝ Մուրաա, յաճախ կը տեսակցէր Գէորգի եւ Անդրանիկի հետ :

Քիւրտերէն զատ, աշխատանք կը կատարուէր նաեւ քաղաքին քիչ թէ շատ լուսամիտ թիւրքերուն մէջ : Այս դժուար, գրեթէ անկարելի գործը ստանձնած էին կորիւնը եւ կոտոյի Հաճին :

Թերեւս ասոնց աշխատանքներուն շնորհիւ էր, որ Զեքերիա անունով թիւրք աստիճանաւոր ստիկան մը, զոր հետագային Զաքար կը կոչէին, քանի մը ուրիշներու հետ փախաւ ու միացաւ Փետայիններուն եւ Սասնոյ կռիւներուն քաջարար կռուեցաւ թիւրք զօրքին դէմ :

Կառավարութեան համար հարկահաւաքութիւնը յարմար առիթ մըն էր գիւղերը լրտեսելու, որովհետեւ արդէն մասնաւոր գիտաւորութիւններ ունէր Սասունի նկատմամբ եւ այդ ուղղութեամբ կը պատրաստուէր :

Արդարեւ այս մասին փաստ մըն է սուլթանական պալատէն կուսակալներուն ուղարկուած այն հեռագիրը, որուն հարագատ թարգմանութիւնը կու տանք ստորեւ. —

ԳԱՂՏՆԻ ՀԵՌԱԳԻՐ

«Հայ խոռվարարները՝ օտարներէ վայելած օգնութեամբ եւ հանգանակութեամբ՝ գէնֆեր, ռուս (տիկամիտ) եւ ասոնց նման ռաբային դեղօրայֆ հաւաքելով կայսերական երկիրներու մէջ փոխադրելը եւ աստ ու անդ պահելով, այս կերպով գարնան եղանակի սկիզբէն խոռվայոյզ ընթացքներու դիմումը, եւ, առնուած տեղեկութեան նայելով, կրկին, ըստ նախնոյն, Սասունի կողմերէն գործի սկսելին հասկցուած ըլլալով, — ասոնց մասին պետական կառավարութեան կողմէն ընելիք թան պիտի ըլլայ միայն, — կատարեալ ուշադրութեամբ, ամենախիստ եւ ստոյգ միջոցներով ուշադիր ըլլալ, թողնելով անկարելիութեան մէջ շարունակաբար հայ խոռվարարներու պատրաստած վնասաբեր շփոթներու գործադրութիւնը, չարագործ եղող գլուխներն ալ ձերբակալելով, գարնան սկիզբի մօտեմալուն խոռվութիւններ ու շարժումներ անկարելիութեան մէջ պիտի թողնել : Ինչպէս այս մասին առաջ եւ վերջ ծանուցուած է, կայսերական բարձր հրամանատարութեան եւ տեղեկացուած ըլլալով, կուսակալութեան մէջն ալ ջանֆեր եւ միջոցներ ի գործ դնելնիդ, ձեռք բերուած նորագոյն արդիւնքը եւ հետեւանքը նորին բարձրութեան ոտքի հողերուն ներկայացնելնիդ, ժողովրդեան բնաւ երբեք գործի միջամտել չտալնիդ խալիֆայական վեհ. կայսեր բարձր հրամանաւ կ'ազդարարուի» :

Կայսերական քարտուղար

«Գերեզմանային լուծեան այդ տարիներուն, — կ'ըսէ Ա-
Դօն, — հայաբնակ գաւառների մէջ միմիայն մի տեղ հայը ազատ
չունչ էր քաշում. դա Սասունն էր, ուր մի բուռն ժողովուրդ անմատ-
չելի լեռներին ու ձորերին կպած, մի փոքր ազատ էր զգում իրենը այն
սոսկալի կացութիւնից, որի մէջ ապրում էր մնացեալ հայ ժողովուր-
դը: Բայց տաճիկ կառավարութիւնը խիստ անհանգիստ էր, որ հա-
յաբնակ շրջաններում դեռ եւս ազատ չունչ քաշող հայ կայ. եւ նա
բունը փախցրած, գիշեր ու ցերեկ մտածում էր այդ մի բուռ ժողո-
վրդի հետ էլ իր հաշիւը մաքրել»:

1904-ի սկիզբէն, երբ ոյժ կը հաւաքէր եւ Սասունը կ'առնէր
տեսակ մը պաշարման շղթայի մէջ՝ կառավարութիւնը Սասնոյ ճամ-
բաները զօրք լեցնելով, կը դժուարացնէ Սասնոյ եւ Մշոյ Դաշտի հա-
ղորդակցութիւնը եւ առեւտուրը: Միայն գիշերները, այդ ալ մեծ
վտանգներու ենթարկուելով, կարելի կը դառնար երբեմն կապ պա-
հել Մշոյ հետ: Սասունը բոլոր կողմերէն ենթակայ էր խստագոյն
պաշարման, թիւրք զօրքերու, ոստիկաններու եւ տեղական քիւրտե-
րու կողմէ որոնց հրամանատարն էին Սայի Փաշան եւ Պիթլիսի կու-
սակալ Ֆէրիք Փաշան. իրենց հետ էին նաեւ Ալայ պէկը եւ քիւրտ ցե-
ղապետներէն ամենէն եռանդուն գործողն բալակցի Հաճի Ֆէրօն,
ինչպէս նաեւ չորրորդ բանակի հրամանատար Ջէքի Փաշան:

Աւելի քան 10.000 զօրք կեդրոնացուած էր Մուշի մէջ, առանց
հաշուելու քրտական աշիրէթները:

Մարտական միջոցառում կար ամէն կողմ: Ճիշդ այդ ատեն Թոր-
գոմի (Թուման Թումեանց) ձիաւոր խումբը(*) Կովկասէն սկսեալ
կտրելով լեռ ու ձոր, անարգելով ամէն վտանգ, խուսափելով թիւրք
ոստիկանին ու զօրքին զարհուրելի հսկողութենէն, կը հասնէր Սա-
սուն: Ժողովուրդին աչքին՝ անոնք յառաջապահներն էին զալիք կա-
րեւոր ուժերու: Երբ խումբը անվտանգ Սասուն կը հասնի, Սեմալի
եւ Շէնիկի ժողովուրդը ուրախութեան ցոյցեր կը կատարէ:

Թորգոմի Մրրիկ խումբը կը բաղկանար 23 հոգիէ: Թիւր քիչ,
բայց որակը շատ բարձր մարտական ոյժ մըն էր, որ ժամանած էր
Սասուն: Խումբին կը մասնակցէին Հ. Յ. Դաշնակցութեան ամենէն
յայտնի մարտիկները: Կային Քեռին, Սեբաստացի Մուրատը, Սե-
պուհը, Տուրպախը, Մաշատի Աւետիսը, Կիւմիշխանեցի Աւոն, Ղար-
սեցի Նիկոլը, Որսորդ Գէորգը, գինուոր Գրիգորը, Կայծակ Առաքելը:

Թորգոմի այս խումբը առաջին ճամբան բացողն էր, անոր պի-
տի հետեւէին աւելի մեծ խումբեր: Կովկասը՝ բոցավառ տրամադրու-
թիւններով, պատրաստ էր խումբեր ճամբայ հանելու դէպի Սասուն:

Թրքական կառավարութիւնը ուշի ուշով կը հետեւէր այս շար-
ժումներուն: Տեղեակ էր, թէ ի՞նչ տեղի կ'ունենար Կովկասի սահ-
մաններէն մինչեւ Սասուն, որ իր մարտական ուժերով վտանգաւոր


(*) Տես «Յեղափոխական Ալպուս»ի Բ. հատոր, էջ 197:



ՍԵՊՈՒՀ



ՄԱՇԱՏԻ ԱԻԵՏԻՍ




ՏՈՒՐՊԱԽ



Ք Ե Ռ Ի



ԿԱՅԾԱԿ ԱՌԱՔԵԼ



ՈՐՍՈՐԴ ԳԷՈՐԳ



ԿԻՄԻՒՇԽԱՆԵՑԻ ԱԻՕ
(Աւետիս Պիգեան)

բերդ մը դարձած էր թիւրքերու աչքին : Թիւրք ժողովուրդին մէջ, բերնէ բերան տարածուած զրոյցները առասպելի կը վերածէին խումբին ժամանումը : Թիւրք կառավարութեան զգացած վախը, — որ զինքը կը մղէր անակնկալ եւ ուժեղ հարուածով մը կանխելու հայերու հաւանական ըմբոստութիւն մը, — մեր ժողովուրդին համար կը դառնայ մարտական ոգեւորութեան ներշնչարան մը : Գալիք խոշոր դէպքի մը նախազգացումով կ'ապրէր Սասունցին :

Հրայր, որ կազմակերպչական գործով զբաղող գլխաւոր անձն էր եւ որ Դաշտի շրջանին մէջ տենդագին աշխատանք կը տանէր, Յունան գիւղ կը զրկէ փոքր խումբ մը, որուն մէջ էին Կորիւնը, Կայծակ Առաքելը, Եղոն, Միհրանը, Յրօնքցի Մուրատը : Անոնց գիւղ գլուխուած միջոցին հոն կ'երթան ոստիկաններ՝ տուրքերու դանձման համար : Փետայիները կը նշմարուին, եւ չեն կրնար խուսափիլ բախումէն, որովհետեւ ոստիկանները նախայարձակ կ'ըլլան : Խումբը կը յաջողի պարտութեան եւ փախուստի մատնել ոստիկանները եւ գիշերով ճամբայ ելլելով, հայդուկները կ'ապաստանին Մատնայ վանքը :

Այլեւս յստակ կը սկսի դառնալ, որ բախումներն ու կռիւները անխուսափելի կը դառնան :

Այս պայմաններու մէջ, որոշուեցաւ ընդհանուր ժողով մը գումարել, թէ՛ կացութիւնը ուսումնասիրելու եւ թէ՛ կարգադրութիւններ ընելու համար . մանաւանդ որ թորգոմ պիտի վերադառնար Կովկաս եւ կ'ուզէր իր հետ ստոյգ տեղեկութիւններ տանիլ ու պահանջներ ներկայացնել Հ. Յ. Դաշնակցութեան :

Այս ժողովին կը մասնակցէին Սասնոյ բոլոր ուժերը . նաեւ դուրսէն եկած ընկերները : Եւ անհրաժեշտ կը նկատուէր նաեւ հրաւիրել Սասնոյ շրջանի իշխանները : Ժողովը բախտորոշ կարեւորութիւն մը պիտի ստանար դէպքերու պարտադրութեամբ եւ բոլորին տպաւորութիւնն էր, թէ վերջին ժողովը կրնայ ըլլալ : Հոն էին Շէնիկի Ռէս Միքայէլը, Սեմալի Քեաթիպ Մանուկը, Տափկը գիւղացի Գրէն, Կելիեկուզանցի Քեաթիպ Աւէն եւ Ռէս Աւէն, Կորայ Յարէն, Աւերմայ Օսոն, Հեթինքի Մակարը, Եզկաթայ Գրքոն, Աղբի գիւղացի տիրացու Սինոյեանը, Զորերու Ակոն, Սպաղանաց Մակարը, Տալուորիկէն Համդէ եւ Թաթար, Այգու տունէն Պալօ Գեւոն եւ Խաչոն, Հոսնուտի Տէր Գաբրիէլը : Միայն տասնեակ մը մարտիկներ բացակայ էին, որովհետեւ Զուլումաթի ղեկավարութեամբ կը մնային Ախլաթի եւ Ովասիսի շրջանը : Այսպիսով շրջաններու հսկողութիւնն ու ապահովութիւնը վստահուած էր տեղական ուժերուն :

Ժողովը, որ տեղի կ'ունենար Կելիեկուզանի բարձունքին վրայ, Ռշկնէր կոչուած վայրը, երկար քննելէ ետք կացութիւնը, կառավարութեան մտադրութեան մասին ներկաներու միջոցաւ քաղուած տեղեկութիւնները, մանրամասնօրէն կը ծանօթանայ Սասնոյ շրջանի գիւղերու տրամադրութեան, սեփական ուժերու, մարդու, զէնքի,

ուազմանիւթի եւ պարէնի ընդհանուր հաշուեցոյցը կը հանէր եւ կ'որոշէ պահեստի բոլոր զէնքերը բաժնել :

Կ'որոշուի, որ Հրայր կրկին շարունակէ Դաշտի իր կազմակերպչական աշխատանքները, բայց այս անգամ մասնաւոր ուժ տալով զէնքի գնման : Կայծակ-Վաղարշակ՝ Թորգոմի հետ պիտի մեկնէր Կովկաս, ուրկէ Թորգոմ պիտի վերադառնար Սասուն, նոր խումբի մը հետ :

Ապա ժողովը կը ստիպուի մասնաւոր ուշադրութեամբ քննել փախստական երիտասարդներու համախմբման հարցը՝ Սասունի մէջ :

Յեղափոխական փոթորկալի շունչ մը վարակած էր Հայ երիտասարդները, որոնք իրենց սովորական խոհեմութիւնը մոռցեր էին : Օր չէր անցներ որ չլսէին թէ երիտասարդներ ոստիկան մը զինաթափ ըրած են եւ անոր զէնքը շալկած՝ Սասուն ապաստանած են : Զէնք հայթայթելու ամենէն դիւրին միջոցն ալ այդ էր, բայց ամենէն ալ վտանգաւորը :

Կառավարութիւնը այդ պարագան ալ նկատի առեր էր եւ խրատացուցեր գիւղերու հսկողութիւնը, հայ եւ թիւրք լրտեսներու միջոցով :

Նաեւ կ'որոշուի, որ Վահան Տողրամաճեանը ըստ առաջնոյն շարունակէ իր լիազօր գործիչի աշխատանքները :

Այնտեղ կ'որոշուի կազմել Սասնոյ հրամանատարութեան կազմը, հետեւեալ ձեւով. — Հրայր կը ստանձնէ Հիւսիսային ճակատի ուժերը, Անդրանիկ կը ստանձնէ Արեւելեան Շատախի անցքերու պաշտպանութիւնը, Գէորգ Իշխնձորի եւ Տալոօրիկի ճակատին կը հրամայէ, Կոտոյի Հաճիին եւ Սասնոյ մարտիկներու կը յանձնուին Չայի գլուխին պաշտպանութիւնը : Կորիւն, Սեպուհ եւ Շէնիկի Փետայիները Հրայրի տրամադրութեան տակ կը դրուին :

Ժողովը վերջանալէ առաջ, Անդրանիկ խօսք առնելով կ'ըսէ. —

— «Տղա՛ք, թերեւս մեր վերջն է այս տարի, բայց վստահ եղէք, որ սկիզբն է այս հայ յեղափոխութեան : Կառավարութիւնը մտադիր է վերջնականապէս դուրս հանել մեզ մեր սրբազան հայրենիքէն, եւ թերեւս մենք չկարենանք դիմանալ կեղրոնական կառավարութեան թիւով գերակշիռ զօրքերուն առջեւ եւ ստիպուած ըլլանք նահանջել եւ թերեւս դժբախտութիւնը ունենանք մարտի դաշտի վրայ ձգելու մեր ամենէն թանկագին ընկերներէն մէկ քանին, բայց վստահ եղէ՛ք, կառավարութիւնը աւելի կը տարածէ յեղափոխութեան սերմերը այսպիսով : Յանուն մեր նահատակներուն, յանուն մեր կորած սուրբ ընկերներուն, մենք կ'ուխտենք չվհատիլ եւ կռուիլ մինչեւ մեր արեան վերջին կաթիլը» :

Բոլոր Փետայիները կ'ուխտեն հաւատարիմ մնալ «Մահ կամ Ազատութիւն» նշանարանին եւ կը ցրուին իրենց հրահանգուած դիրքերը :

Կոմս, որ այդ տարին Վան կը մտնէ, կը գրէ:—

«1903 Նոյեմբերին, երբ Իշխանն ու ես Վան մտանք, մեր առաջին գործերէն մէկը ըրինք նախ հաղորդակցութեան մէջ մտնել բանտարկուած Վարդգէսի հետ, անկէ տեղեկանալու իր գործունէութեան վերջին շրջանի փուլերը եւ իր մտածումները Վասպուրականի եւ Տարօն-Բարձրաւանդակի կազմակերպութեան եւ շարժումներու մասին: Հրայրի, Վահանի եւ Գեղամի արխիւի մէջ պահուած նամակներէն ծանօթացած էինք արդէն Տարօն-Սասունի վիճակին: Դեռ Կովկասէն չմեկնած Սասունի դէմ պատրաստուող յարձակումներու մասին լուր ունէինք: Բիւրոն բացի զինական եւ նիւթական օգնութիւններէ, կը ծրագրէր զանազան կողմերէ խումբեր զրկել Սասունի պաշարումը խանդարելու համար:

«Անմիջապէս, Տարօնի ընկերներուն յայանեցինք մեր ապահով Վան հասնիլը: Տեղեկագիրներ եւս զրկեցինք Բիւրոյի ձեռնարկած աշխատանքներու մասին, ըսինք որ Վասպուրականի մեր զինապահեստը շատ աղքատ է իրենց այդ ձեւով օգնելու համար:

«Դուրան-Բարձրաւանդակի ղեկավար ընկերները անմիջապէս պատասխանեցին, թէ օրէ օր պաշարման օղակը կը նեղնայ, կը թուէին իրենց վրայ եկող աշիրէթներու անունը եւ քանակը, թէ իրենց ոգին բարձր է թէեւ, բայց միջոցները անբաւարար: 1—2 ամիս առաջ հոն հասած էր Թորգոմի ձիաւոր խումբը՝ ամենէն ընտիր ուժերով:— Մուրատը, Քեռին, Սեպուհը, Կայծակ Առաքելը, Աւետիսը, Մաշատին, 25-է աւելի փորձառու մարտիկներով, — որ բարձրացուցած էր թէ՛ տեղացիներու ոգին եւ թէ՛ հնարաւոր դարձուցած էր կանոնաւորել կռուող ոյժերը: Վահանը կը խնդրէր տպագրիչ փոքր մեքենայ մը եւ հրացանի մասեր: Յուզիչ էր Հրայրին նամակը: Կը գրէր, թէ այս կռիւը թշնամին պարտադրեց իրենց, թէ պիտի ջանան օրհասական վայրկեանը ուշացնել՝ լաւ կազմակերպուելու եւ արտասահմանէն օգնութիւն ստանալու համար: Լաւատես չէր ելքի նկատմամբ եւ կը վերջացնէր իր նամակը այսպէս. «Գուցէ վերջին նամակն է, որ կը գրեմ ձեզ, պիտի աշխատինք պաշտպանել մեր ժողովուրդը եւ մեռնիլ յեղափոխականի մահով»: Եւ այդ հեքիաթական Սասունցին, իրաւ, ինկաւ հերոսական մահով:

«1904-ի գարնան, երբ արդէն թշնամին Սասունի ամէն անկիւններէն յարձակումներ սկսած էր, Պարսկաստանէն ներս կը խուժէին «Փոխիկի» հետեւակ եւ քիչ վերջ (Յունիսի սկիզբը) Դումանի ընտիր խումբերը: Դումանը կը զրկուէր Սասուն ընդհանուր ղեկավարութիւնը ստանձնելու հաւանականութեամբ, իր հետն էին մտաւորական եւ զինուորական ղեկավար ուժեր, որոնք նոյնպէս ընդունակ էին ստանձնելու պատասխանատու դերեր: Մեծ սպասելիքներ ունէինք այդ խումբէն: Պատրաստած էինք ծովային ապահով գիծ մը՝ զանոնք Տարօն հասցնելու: «Փոխիկի» խումբը պարսկական սահմանազուխէն բաւական ներս կը պաշարուի, եւ կարծեմ մինչեւ վերջին մարդը կը



ԹՈՒՄԱՆԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ
 Երկորդ անգամ երկիր մտնելու ժամանակ նկարուած 1904-ին,
 Թամրուտ գիւղը (սահմանագլուխ)

լով մեր ընկերները: Կ'ազատուին միայն երկու հոգի, որոնցմէ մէկուն մասին (Քանաքեռէն Գասպար անունով) հերոսական տաղեր էին յօրինած քիւրտերը:

«Ճամբայ ելած էր Կարսի սահմանէն նաեւ Թորգոմի երկրորդ մեծ խումբը 61 հոգի, որ սահմանագլխին վրայ, Օլթի, Թիւրքերու եւ ռուսերու կողմէ երկու կրակի մէջ առնուելով՝ կը նահատակուի:

«Ատկէ առաջ Զիվինի մօտ կռուի կը բռնուի նաեւ Տարօնցի Վազարչակի «Դժոխք» ձիաւոր 34 հոգինոց խումբը, որի մէկ մասը կը ջարդուի:

«Գրեթէ նոյն ատեն, Մօսուկն-Զօրի վրայ յարձակում կը կատարուի մեր երկու խումբերու կողմէ, որոնք թէեւ կը յաջողին ջարդել բաւական զօրք, բայց իրենք ալ ծանր կորուստներով՝ կը նահանջեն Կովկաս, հոն կորսնցուցինք Գայլ Վահանը, Սեդոն եւ նմաններ: Այսպէս ահա, Սասունը կը մնար անյոյս դուրսէն ոեւէ օգնութիւն ստանալու համար. ոչ մէկ խումբ դուրսէն յաջողեցաւ թափանցել եւ իրական օժանդակութիւն բերել:

«Ի՞նչ պէտք է ընէինք մենք. ինչո՞վ կրնայինք օգնել անոնց: «Շամի» շրջանը բացարձակապէս անպատրաստ էր թէ՛ կազմակերպական եւ թէ՛ ռազմամթերքի սակաւութեան պատճառով: Մեր կազմակերպութիւնը դեռ նոր-նոր հասակ կ'առնէր, իսկ մթերքի փոխադ-

րական գիծերը հազիւ բացուած՝ փոքրաթիւ զէնքեր ներս կու գային, անոնք ալ մեծ մասամբ նորոգութիւններու կարօտ:

«Մուշէն Տատրակը (Գեղամ Տէր Կարապետեանը), որ Առաջնորդարանի քարտուղարն էր եւ Տարօնի մեր թղթակիցը, կը գրէր թէ Անդրանիկը կը պահանջէ, որ Վասպուրականը արձագանդէ իրենց շարժումներուն լեռնային գաւառներուն մէջ. իսկ Հրայրը, Գէորգ Չաւուշը դէմ էին ատոր՝ առարկելով, թէ Վասպուրականը բոլորովին անպատրաստ է (երկուքն ալ Վան եղած եւ մօտէն տեղեակ էին մեր ռազմական պաշարին) ու ժողովուրդը յուժանաս պիտի ջարդուի: Վահանը մասնակի թռուցիկ խումբերով այս ու այն կէտին վրայ շարժումներ ընելու կողմնակից է եղեր: Շարժումներու հակառակ է եղեր նաեւ Վարդան վարդապետը եւ ինքը Տատրակը: Ի միջի այլոց կը յայտնէր նաեւ, որ ժողովուրդը եւ զինուորները կը պահանջէին, որ Գէորգ Չաւուշը ընդհանուր ղեկավար դառնայ, բայց վերջինս մերժած է եւ Մուրատի հետ պաշտպանած է Անդրանիկի թեկնածութիւնը: Հրայրը հակառակ եղած է այդ թեկնածութեան եւ մինչեւ վերջ անհատ է մնացեր...»:

Գէորգ Չաւուշին յանձնուած էր Սասնոյ Հարաւային եւ Հարաւարեւմտեան պաշտպանութեան գիծը, որ շատ ընդարձակ էր, մինչ իր մօտ գտնուող կռուող ուժերը շատ քիչ էին: Այն օրերուն ալ հայ զիւղացիներու մէկ մասն ալ ցրուած էր քրտական շրջանները: Առիթէն օգտուելով, Քէօր Սլոն, որ գրեթէ ամենամեծ աշիրէթապետն էր, ոստիկաններու եւ զօրքերու օգնութեամբ կը պատրաստուէր արդէն յարձակելու եւ աւերելու այդ զիւղերը:

Յունուարի վերջերը Խեանքի եւ Խուլբի կողմերը կ'երեւին ձանպղզարներու խումբերը, որոնց կը յաջորդէին կանոնաւոր զինուորներ եւ քիւրտ խումբանը Քէօր Սլոյի առաջնորդութեամբ:

Գէորգ Չաւուշ, Սերաստացի Մուրատ, Սէյտօ Պօղոս եւ Իշխընձորի Արթինը իրենց խումբով կ'անցնին Տալուրիկէն դէպի Խեանք, պաշտպանելու այն գիւղերը, որոնց թշնամին մօտեցած էր՝ դրաւելու: Երեկոյեան խումբը կը հասնի գիւղը. այն գիւղեր խումբը պէտք է մնայ գիւղ:

Գէորգի կարգադրութեամբ խումբը կը բաժնուի չորսի եւ գիրք կը բռնեն գիւղին չորս կողմը: Գէորգ իմանալով, որ թշնամին բազմաթիւ ուժերով պաշարած է Խեանքը երեք կողմէն, շուտով լուր կը դրկէ իր ընկերներուն, որ պատրաստ ըլլան իրենց գիրքերուն մէջ եւ սպասեն իր հրամանին:

Առաւօտեան թշնամի թնդանօթները կը սկսին որոտալ եւ Խեանքի շուրջ կը պայթին ռումբերը, որոնցմէ շատերը կը խրին ձիւնի հաստ կոյտերու մէջ, առանց պայթելու: Ձիւնապատ եւ սառած գիրքերէն Գէորգի ազդանշանին վրայ Փետայիի մօսինը իր բերանը թշնամիներուն կ'ուղղէ: Դիմացի ձիւնապատ, սպիտակ տարածութիւնը սեւ կ'երեւի թշնամիի անհամար շարքերէն: Թնդանօթներու բերնէն



ՄՕՍՈՒՆ ԵՆ ԶՕՐԻ արշաւախումբի մէկ մասը



ԳԱՅԼ ՎԱՀԱՆԻ ԽՈՒՄԲԸ



ԿԱՅԾԱԿ ճիւղորդներու խումբը



ՆԵՒՐՈՒԶԻ ԽՈՒՄԲԸ
Բասենի եւ Դալիբարայի կռուին մասնակցող ֆետայիներ



ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆԻ խումբէն մաս մը,
Ոտֆի, ձախէն աջ (1) Սարբազ Խեչօ, (2) Զարիափախ Գեորգ, (3) դաշմակ-
ցական Խեչօ:

Նստած, ձախէն աջ. (1) Խմբ. Հրաչ Աւետիսեան, (2) Ռուբէն Տէր Միմասեան:



ԽԱՆԻ ԽՈՒՄԲԸ

Թուշող առաջին ռումբերուն հետ կը սկսին շարժիլ նաեւ Դաշտի Թըշ-նամինները, որոնց շարքերը յաջորդաբար կը ցրուին, կ'ամփոփուին, կրկին կը ցրուին, բաժան-բաժան կ'ըլլան: Բայց զօրքերու կարգերը միշտ կ'առաջանան, սուիններու անտառը կը փայլի եւ հրացանները միահամուռ կը սկսին կրակել: Քիւրտերու բազմութիւնը ոչ կարգ կը ճանչնայ եւ ոչ կանոն, սուրերը մերկացուցած, հարա-հուռա տալով կ'առաջնորդէ բանակը:

Փետայիները ծնկաչոք ձիւնի ու սառույցի վրայ, մոսինը կուրծքին սեղմած, կ'արձակեն իրենց գնդակները. հրացանի բերնէն Թուշող իւրաքանչիւր գնդակ իր սրտէն պոկուող վրիժառու մէկական սլաք ըլլայ կարծէք, որ կ'երթայ Թշնամիներու կուրծքին մէջ մխուելու, իսկ վերը փողփողացող դրօշակը մահ կամ ազատութիւն կը կանչէ: Սոսկալի է կռիւր. Թշնամիի գնդակները կարկուտի նման կը թափին եւ ջարդ ու փշուր կ'ընեն քար, հող, թումբ եւ կը սարսեցնեն լեռ ու ձոր. բայց անսասան էր ազատութեան տենդով բռնուած Փետային, որ արագ-արագ գնդակներ կը տեղաւորէր Թշնամիներու սրտին մէջ, առանց ուշադրութիւն դարձնելու չորս կողմ վժվժացող գնդակներուն եւ հոս ու հոն փշրուող, թափուող քարերուն ու հողերուն: Թշնամիի կարգերու մէջ հազիւ ժամանակ կը գտնէին փոխադրելու դիակները: Թշնամին շատ յամառ կ'երեւի, միտք չունի կանգ առնելու ոչ մէկ

զոհի առջեւ . միայն կը սեղմէ իր կարգերը եւ առաջ կը քալէ : Չկրնալով դիմանալ այս կռիւներուն՝ թիւրք զօրքերը, որոնք մօտեցած էին Խեանքին, քիւրտերու հետ միասին կ'անցնին դէպի Հեղինի կողմերը : Խեանքի գիւղացիները կը տեսնեն, որ հայ Ֆետային կայծակնային արագութեամբ յաջողեցաւ իրենց սահմաններէն դուրս հանել թշնամիները, աւելի կ'ոգեւորուին թշնամիներու նահանջէն ետք : Գէորգ կ'որոշէ պարպել մօտակայ հայ գիւղերը, եւ գիւղացիները հաւաքել Իշխնձոր գիւղը : Առանց միջադէպի կը պարպեն Հեղինը, Ընկուզնակը, Արդկոնք, Սեւեթ եւ Արսիկ գիւղերը : Մեղրէի մօտերը, ճակատի առաջաւոր մասի վրայ կը թողու Սէյտօ Պօղոսը իր տասնեակով, հսկելու համար թշնամիի շարժումներուն . երբ կը տեսնէ քիւրտ Սալահը, որ բազմաթիւ ոճիրներ գործած էր եւ բազմաթիւ հայեր սպաննած ու գրաւած անոնց ինչքերը, կը յարձակի անոր վրայ ու կը սպաննէ զայն : Շրջաններու հայութիւնը աւելի ապահով կը հասնի Իշխնձոր :

Փետրուարի սկիզբները Սասնոյ հարաւային ճակատի Ֆետայիները խուզարկութեան եւ այլ դիտումներով առաջ կ'երթային յաճախ մինչեւ Ընկուզնակ, Արդկոնք եւ մօտակայ վայրերը : Գէորգի զինուորները կ'իմանան, որ Տիգրանակերտի կողմէ նոր զինուորներ եկած են եւ կը մօտենան Սասունի հարաւ-արեւմուտքին : Միեւնոյն ժամանակ Սպաղանաց Մակար, որ իր կտրիճներով Տալուրիկի գետը կը պաշտպանէր, նկատած էր որ Փսանաց գաւառի կողմէն Հազոյի զօրքերն ու աշիրէթները կը մօտենան՝ դետը անցնելու նպատակով : Իսկ հիւսիսային կողմը ձիւնով ծածկուած էր եւ թշնամին չէր կրնար անկէ անցնիլ : Գէորգ հիւսիսի ճակատներէն նոր օգնական ուժեր բերելով աւելի կը զօրացնէ իր զիւրքերը : Այդ օրերուն տեղի կ'ունենան քանի մը փոքր ու մեծ ընդհարումներ, որոնք որեւէ արդիւնք չեն տար թշնամիին : Տեսնելով, որ առանց հիւսիսի կողմէն ճնշում ի գործ դնելու հարաւէն Սասուն մտնելը անկարելի է, թշնամին նորէն կը քաշուի եւ կը սպասէ ձիւնհալին :

Սասնոյ ղեկավարները, կռիւներու առաջին առնելու համար, կը դիմեն արտասահման կուսակցութեան բարձրագոյն մարմնին՝ Հ. Յ. Դաշնակցութեան Արեւմտեան Բիւրոյին եւ Առաջնորդարանի միջոցով նաեւ Պատրիարքարանին, բայց այդ դիմումները գործնական արդիւնք մը չեն տար :

Մինչեւ Մարտի կէսերը Սասնոյ մէջ ոչ մէկ դէպք կը պատահի, բայց երկու կողմերն ալ կը պատրաստուէին ապագայ կռիւներուն : Թէեւ հայերը ամէն կերպ կը ջանան առիթ չտալ ընդհարումներու, այսուհանդերձ կառավարութիւնը միշտ առիթ ստեղծելով աւելի զօրքեր կը կեդրոնացնէ Սասնոյ շուրջ : Մարտ 20-ին արդէն կը սկսի յարձակողականը : Առաջին հերթին կը շարժի ձիւնոր զօրքը, որ կը սկսի նեղել Տալուրսի տակ ինկած հայ գիւղերը, Ուռուզէն սկսած մինչեւ Մուշ ու Խասգիւղ : Այս գիւղերը մասամբ կը թալանուին : Գիւղե-



Ս Մ Բ Ա Տ

ըր ոչ մատնութիւն կ'ընեն, ոչ ալ որեւէ դիմադրութիւն ցոյց կու տան. գիւղացիներէն շատեր բանտ կ'առաջնորդուին, չարչարանքներու կ'ենթարկուին եւ կը նահատակուին, բայց զանգուածը, Հրայրի հրահանգին համաձայն, անտրտունջ կը տանի այդ բոլոր հալածանքները:

Այդ նոյն ժամանակ բանտ կ'առաջնորդուին (Մարտ 24-ին) Մուշի Առաջնորդ Գնէլ Վարդապետը եւ Քաղաքական ու Կրօնական ժողովներու 12 անդամները, որոնց յանցանքը այն էր, որ բռնութիւններու առիթով պատրիարքարանին ու կառավարութեան բողոքած էին:

«Ինչպէս արդէն յայտնի եղաւ, — կ'ըսէ Զօր. Սմբատ, — Մարտի վերջերը՝ Զատիկուան առտուն սկսած Լաճկանի կռիւը ազդանշանն եղաւ թրքական յարձակման:

«Ատկից քանի մը օր յետոյ, Քիւրտերը յարձակեցան Մովսսարի եւ Քորախուի վրայ եւ կողոպուտի տալէ յետոյ, վառեցին տուները: Սպաղանաց Մակարը, որուն յանձնուած էր գետին հսկողութիւնը, իր խումբով գնաց օգնութեան, իրեն միացայ նաեւ ես: Կրցինք փրկել Քորախուի բնակիչները եւ զանոնք անցընել գետին աջ եզերքը, թալանի մէկ մասն ալ ետ առնելով քիւրտերէն:

«Թիւրք կանոնաւոր ուժերը ձիւնին, բուքին ու ցուրտին տոկա-

լով կը յառաջանային շրջառիկ շարժումով մը . գլխաւորաբար երկու ուղղութեամբ : Զօրասիւն մը կը քալէր Հաւատորիկի վրայ :

«Երկրորդ ուժեղ զօրասիւն մը , մօտ 5000 զէնք , կը յառաջանար դէպի Շէնիկ : Քիւրտերն ալ իրենց կարգին , իբր անկանոն ոյժ , կը յառաջանային դէպի Բոնաչէն մէկ կողմէն , եւ դէպի Մերկեմոզան միւս կողմէն :

«Երբ կռիւներն սկսան , ես կը գտնուէի Իշխնձոր , որուն ղեկավարութիւնը յանձնուած էր Գէորգի : Շատ չանցած նամակ մը ստացանք , որով կը հրահանգուէր Գէորգի փութով վերադառնալ Կելիեկուզան , ինծի յանձնելով Տալուորիկի ճակատին ղեկավարութիւնը՝ տասնեակ մը զինուորներով :

«Նամակին բովանդակութենէն կը հասկցուէր , թէ թշնամի դերակշիռ ոյժերուն առջեւ , աւելի մտահոգութիւն կը տիրէ կեդրոնին պաշտպանութիւնը ապահովելու եւ թէ Իշխնձորի տեղական ոյժերը բաւական կը նկատուէին գիշերին պաշտպանութեան :

«Գէորգ իր հետ առնելով ոյժերուն մեծագոյն մասը , մեկնեցաւ դէպի Կելիեկուզան : Իսկ ես ալ իմ տասնեակովս դէպի Տալուորիկ» :

Այս առթիւ հոս տեղին է մէջբերել ռուսական գաղտնի սպասարկութեան մէկ ծածկագիրը նամակը , որ ստորագրուած է զինուորական նահանգապետ Սամոյլովի կողմէ .—

Զ . Ժ . Վ .
Զինուորական Նահանգապետ Կատարելապէս Գաղտնի
Գաղտնի բաժին

1904 , Ապրիլ 9

Վստահելի աղբիւրներէ ձեռք բերուած տեղեկութիւններու նայելով , թիւրք իշխանութեանը Փոքր-ասիական նահանգներուն , որոնք բնակեցուած են հայերով , դեռ անցեալ տարուայ ձմեռը յայտնի եղաւ , որ հայերը ձեռք են բերել ահագին քանակութեամբ զէնքեր , փամփուշտներ եւ պայթուցիկ ռումբեր , նպատակ ունենալով խառնակութիւններ առաջ բերել եւ կռուի բռնուիլ թիւրք կառավարութեան հետ , ներկայ թուի դարնանից սկսած : Ամենավտանգաւոր եւ անմատչելի կեդրոնը , առատ՝ լեռներով եւ անտառներով , որտեղ ներկայիս հաւաքուած են 17 հազար զինուած հայեր , համարուած է Սասունը : Թիւրքեաց կառավարութիւնը վճռել է ոչնչացնել Սասուն հաւաքուած հայերին , եթէ միայն կուսակցութիւններու պարագլուխներու հետ սկսած բանակցութիւններով՝ վերջինները չհամաձայնին զէնքերը յանձնել : Այդ պատճառով թիւրքաց զօրքերը կենտրոնացուած են Սասունի շուրջը եւ տեղեկութիւններու նայելով , մօտաւորապէս այս ամսէն սկսեալ , կամ քիչ մը ուշ՝ կը սկսին անոնց ընդհարումները Սասունի ապստամբներու հետ :

Վերոյիշեալը յայտնի է շարժման պարագլուխներուն Ռուսաս-

տանի ե՛ւ հայ ազգարնակութեան, եւ այդ պատճառով պարագլուխները վճռած են օգնութիւն հասցնել Սասունին զինուած խմբերով: Երբ անոնք ճանապարհին պատահեն թիւրքաց զօրքերուն, այն ժամանակ տեղական հայ ժողովրդի աջակցութեամբ պիտի ընդհարուին անոնց հետ, որպէսզի այդպիսով հեռացնեն անոնց ուշադրութիւնը Սասունէն եւ թուլացնեն սասունցիներու դէմ ուղղուած հարուածը: Խմբերը, բաղկացած ամէն մէկը մինչեւ երեք հազար հոգուց, պիտի անցնին թիւրքիա, մօտաւորապէս այս ամսուայ կէսին՝ կամ քիչ ուշ, երբ սահմանագլուխի լեռնաշղթան անցնող ճանապարհը ձիւնէն կ'ազատուի, հետեւեալ երեք գծերով, — երկուքը՝ Կաղզուանի շրջանի վրայով (անոնցմէ մէկը Խորասանի շրջանակով), իսկ երրորդը՝ Երեւանի նահանգով: Այլ աղբիւրներէն ստացուած տեղեկութիւններին նայելով, առաջին երկու խմբերէն երկուքը կ'անցնի Խորասանի վրայով, իսկ միւս մասը՝ Օլթիի շրջանէն:

Տեղեկութիւններին նայելով, Կաղզուանէն անցնող խմբերը կը կազմակերպեն Ալեքսանդրապոլի եւ Կարսի շրջանները ու անոնց անդամները խմբի անցնելու ժամանակ պէտք է հաւաքուին սահմանագլուխ, ինչպէս պատահեցաւ անցեալ աշնանը: Խմբերը կը ստանան զէնքեր ճանապարհին, բայց յայտնի չէ որտեղ: Մտադիր են սահմանը անցնելու 2-4 կէտով, բայց միաժամանակ:

Յայտնելով այդ մասին, կ'առաջարկեմ Ձերդ բարեծննդութեան ձեռք առնել ամենաեռանդուն միջոցներ՝ թոյլ չթալու հայկական զինուորական խմբերու կազմուիլ Ձեզ յանձնուած շրջանի մէջ եւ անոնց շարժուիլը դէպի սահմանագլուխ:

Բացի անկից, հայերը մտադրութիւն ունին Մայիսի սկզբներուն Կարս քաղաքի մէջ խառնակութիւն առաջ բերել, ուստի եւս իմ կողմէ առաջարկուած է Կարսի ոստիկանապետին ձեռք առնել ամենախիստ միջոցներ եւ հակողութիւն ունենալ հայերու վրայ: Վերոյիշեալ բոլոր կէտերու վերաբերմամբ եղած ուշադրութեան արժանի կարգադրութիւնները պէտք է անմիջապէս զեկուցանել ինձ:

**Զինուորական նահանգապետ
ՍԱՄՈՅԼՈՎ**

Տիգրանակերտէն եկած զօրքերը կը հասնին Ղալսերի, Փասուր, Սաչտուն եւ Փառկա գիւղերը: Հոն հաւաքուած էին ուրիշ երեք թապուրներ եւ տեղական քիւրտեր, հոն են նաեւ Հազրոյի Սեւտին պէյը իր աշիրէթներով եւ Սլենկանի Հաճի Ռաշիտը իր քիւրտերով: Այս բոլոր ոյժերը խիստ ճնշում ի գործ կը դնեն Տալուրիկի հարաւ եւ հարաւ-արեւելեան սահմաններուն վրայ: Եւ Ապրիլի մէկին արդէն Գէւորգ Չաւուշին յանձնուած ճակատները լուրջ վտանգի տակ են:

Ապրիլ 2-ին թշնամին Բոզկանքէն ու Հազրոյէն բերուած ոյժերով կը յարձակի Ծովասարի փէշերուն վրայ գտնուող Քորախուի վրայ: Սպաղանայ Մակար երբ կը լսէ այս լուրը, Տալուրիկի գետի



Սեմալի հայ գիւղացիները կալին մէջ

հոսանքի վրայ, կ'անցնի գետը եւ օգնութեան կ'երթայ Քորախուի իրեն շուտով կը միանայ Զօր. Սմբատի տասնեակը, ինչպէս տեսանք: Կը յաջողին կոտորածէ ազատել Քորախուցիները: Եւ անոնց հետ միասին նահանջել, Տալուրիկ գետի աջ ափը, ուր իր գլխաւոր պաշտպանողական գիծն էր:

Ապրիլ 4-ին թշնամին կ'ուղղուի դէպի Ընկուզնակ եւ Արդկոնք, ուր Գէորգ կազմ ու պատրաստ կը դիմաւորէ թշնամին. փոքր դիմադրութիւն մը ցոյց տալէ ետք, կ'այրէ երկու գիւղերը, եւ ժողովուրդը իր հետ առած կը քաշուի իր պաշտպանողական գլխաւոր գիծին վրայ, ուր ինքզինք ապահով կը զգայ:

Մշոյ եւ դաշտի մէջ հաւաքուած թրքական զօրքերը երկու ուղղութեամբ կ'առաջանան. — մէկը դէպի Հաւատորիկ, իսկ միւսը դէպի Ղըզըլաղաճ-Խոզմա կէտուկ: Միաժամանակ կ'աշխատին Մշոյ քաղաքէն Կուռտրիկի վրայով ճամբայ բանալ դէպի Սեմալ. այս նպատակով հազարաւոր մարդիկ կ'աշխատին խոր ձիւնը ճեղքելու եւ ճամբայ բանալու համար, սակայն փոթորիկները կը խանգարեն:

Սաստիկ ձիւնը անկարելի կը դարձնէ թրքական զօրքին յառաջխաղացքը: Ապրիլ 6-ին թշնամին կ'ամփոփուի Մերկեմոզանէն դէպի արեւմուտք, իսկ Սասունցիք ալ Շէնիկի ժողովուրդը դէպի Սեմալ գիւղ կը տեղափոխեն: Այսպէս, երկու կողմերը սպասողական վիճակի մէջ կը մնան, մինչեւ Ապրիլ 11-ը: Հարաւային կէտերը աւելի

ամուր էին եւ թշնամին ալ հոն համեմատաբար տկար էր, Գէորգ Զաւուչ իր ուժերու մէկ մասը կ'ուղարկէ հիւսիսային ճակատը, Սպաղանաց Մակարի մօտ, իսկ ինքն ալ իր հետ կելիեկուզան կը բերէ իր զինուորները, Տալուրիկէն եւ Սպաղանքէն :

Ապրիլ 11-ին, թշնամին կը մտնէ Շէնիկ : Ֆետայիները անմիջապէս յարձակման կ'անցնին : Քեաթիպ Մանուկը իր համազիւղացի զինակիցներով, Շէնիկցի Ղազարն ու Մանուկը՝ շէնիկցի տասնեակներով, Զօր. Սեպուհը՝ Ֆետայիներու ու ալեանքցիներու հետ, Շէնիկցի Զօրոն, Լաճկանցի Արթինը, Աւետիսը եւ ուրիշներ, զանազան կողմերէ, միաժամանակ զբոհ կու տան Շէնիկի վրայ, առնելով զայն խաչածեւ կրակի տակ եւ ջանալով կտրել թիւրք բանակէն : Թիւրք ձիաւորները չորս ժամ դիմադրելէ եւ սպաննուած ու վիրաւոր ձգելէ ետք, կը սկսին փախչիլ : Հայդուկները կը հետապնդեն փախչողները մինչեւ Լաճկացիներու մօտ : Կռիւներու ժամանակ Սասունցի կին մը Գէորգի եւ Անդրանիկի զրկած է զբօշակ մը, հետեւեալ նամակով, իբրեւ նմոյշ մը մեր իզական սեռի յեղափոխական զգացման .

Սասունի յեղափոխական խմբին .

Ի սրտէ՛ ձեզ յաջողութիւն ցանկացող եւ ջերմագին բարեմադրութիւններ ընող կնոջէ՛ մը կը ստանաք դուրսաբերայ նուէր մը, այն է հայ յեղափոխական դրօշակ մը, գոր գիշերուան աշխատութեամբ աւարտած եմ : Այո, կ'արժէ որ դուք ալ սրտանց ուրախանաք ո՛չ թէ դրօշին, որ ձեր արժանիքի նկատմամբ չնչին նուէր մըն է, այլ այն սուրբ գաղափարներու արդիւնաւորման, որ այսօր նոյնիսկ այս խաւարեալ աշխարհը թունդ հանած է : Այսու պիտի քաջալերուիք . մեր ազօթքներն ու բարեմադրութիւնները յուսամ պիտի վահան ըլլան ձեզ . եւ պիտի լաւ յիշէք, որ ձեզ համար մեռնող բոյրեր ալ ունիք : Կը վերջացնեմ գրութիւնս այն տողերով, որ ասեղնագործած եմ դրօշին վրայ՝

«Ահա, եղբայր, քեզ մի դրօշ,

Որ իմ ձեռքով գործեցի,

Գիշերները ես բուն չեղայ,

Արտասուքով լուացի» :

Յարատելութիւն, կարողութիւն եւ յաջողութիւն մաղթող
բոյրերնիդ՝

Զ...

Նկատի ունենալով, որ թշնամին կրնայ Շատախէն դալ ու մտնել զիւղերը, հասնելով մինչեւ Շուշնամերկ, ապա Զայր եւ կելիեկուզան, Անդրանիկ կը ստանձնէ շարժումը կասեցնելու դործը : Կեդրոն ունենալով Տափըկը, կը սպասէ դէպքերու զարգացման :

Երկրորդ եւ ամենակարեւոր վտանգը կը սպառնար Շէնիկի կողմէն : Թշնամին պիտի առնէր Շէնիկը, ապա Սեմալը եւ բարձրա-



ՀՐԱՅՐ — ԴԺՈՒՔ

նալով Չայը, մէկ կողմէն կապը պիտի կտրէր Անդրանիկի եւ շատախօսներու մէջէն՝ Կելիեկուզանէն, իսկ միւս կողմէն պիտի մտնէր Կելիեկուզան, բարձրանալով Ալիանքի ու Բարբառի հովիտով: Այս ճակատի պաշտպանողական գործը յանձնուեցաւ Հրայրին:

Հրայր երեք մասի բաժնեց իր ճակատը.—

Ա.— Չայի շրջան, զոր յանձնեց Սպաղանայ Մակարին. այստեղ կը գործէին նաեւ Մուրատ՝ իր Ֆետայիներով եւ Կոտոյի Հաճին՝ իր կամաւորներով:

Բ.— Կեդրոնը, զոր յանձնեց ալեանքցիներուն, մինչեւ Բարբառի հովիտը:

Գ.— Բարբառի հովիտը: Այս վերջին կէտերը պիտի պաշտպանէին Սեպուհը իր Ֆետայիներով, շէնիկցիներու տասնեակները՝ Ղազարի եւ Մանուկի ղեկավարութեամբ, Լաճկանցի Արթինը, Սեմալցի Քեաթիպ Մանուկը եւ Կրպոն՝ Սեմալի գլխաւոր ոյժերով, Իսոն՝ Գոմսեցի կամաւորներով եւ ալեանքցիներով, Մերկերցի Յովսէփը եւ քանի մը ուրիշներ՝ իրենց տասնեակներով:

Այս խումբերուն դէմ կը դանուէին թրքական եօթը քապուր կանոնաւոր զօրք եւ Պիթլիսի կուսակալ Ֆէրիք փաշան: Հոն էր նաեւ Կինճի ՄիւթեսարըՖը: Յարձակող զօրքերու զօրամասերու հրամանատարն էր՝ ուս-թրքական պատերազմի հերոս չերքէզ Քէօսէ պիւպաշին:

Ապրիլ 13-ի առաւօտուն թրքական բանակը արդէն Սեմալի դռներուն առջեւն էր: Սեմալցիները կը դատարկէն դիւղը եւ կ'այրեն: Ժողովուրդը կը բռնէ Կելիեկուզանի ճամբան. կռիւը կը սկսի եւ կը տարածուի մինչեւ Ալեանք: Թրքական զօրաբանակը լայն տարածութեամբ յարձակողականի անցնելով, նոյն օրը կ'ուղէ գրաւել Կելիեկուզանը, որ կեդրոնն էր ապստամբութեան: Անդադար առաջացող թըշնամի շարքերու դիմաց Ֆետայիները պարտաւորուած էին փոխել իրենց դիրքերը: Աւետիս, Իսօ, Մարտիրոս եւ Մոկացի Քեռի կը կրօնուէին Անտոքի կողին վրայ, Հրայր, Սեպուհ, Սեմալցի Կրպէն, Գեւոն եւ Մուշեղ որոշեր էին ձեւով մը կասեցնել թշնամին եւ մեռնիլ, կամ ետ քշել զանոնք: Անհաւասար ու կատաղի կռիւին մէջ կը վիրաւորուի Սեպուհը. կը սպաննուի աղբեցի խոհեմ ու ճարտար Գէորդը: Հրայր տեսնելով Սեպուհի վիրաւորուիլը, կ'երթայ ետեւէն զայն հետը վերցընելու, Սեպուհ կը կանչէ, կ'աղաչէ Հրայրին ձգել զինք եւ նահանջել, իրենց պաշտպանութեան համար աւելի բարձր, ամուր դիրքեր բռնել, բայց Հրայր չ'ուզեր լսել ու կը պատասխանէ. «Կամ կը սպաննուիմ, կամ քեզ ալ ազատելով հետս կը տանիմ»: Թշնամիէն եկած զնդակները աւելի ու աւելի կը հետեւէին Հրայրին, մինչեւ որ ան կ'իյնայ անոնց զնդակներու տարափին տակ: Վիրաւոր Սեպուհը կը համբուրէ անձնազոհ ընկերոջ դիակը եւ կը հեռանայ սող տալով: Քիչ ետք, տեսնելով որ բաւական ծանր է իր ստացած վէրքը եւ կրնայ թիւրքին ձեռքը իյնալ, դաշոյնը կը հանէ ու կը փորձէ սիրտը խրել, բայց ընկերները նկատելով այդ, կ'առնեն դաշոյնը ձեռքէն եւ զինք իրենց հետ կը տանին, շալկելով: Կռուող ոյժերը կ'ամփոփուին Բարբառի կիրճի բերանը, ուր թիւրք զօրքը կը կռուէր ամենամեծ թափով, անցքը գրաւելու համար, որովհետեւ այդ կիրճը զիրենք Կելիեկուզան պիտի առաջնորդէր: Աւետիսը, Իսոն, Համզոն ոգի ի բռին կը պաշտպանէին կիրճի բերանը: Կռուի միջոցին սասունցի կին մը, բարձր դիրքի մը վրայ կանգնած, կը կանչէ, կը խրախուսէ կռուողները, ըսելով. «Հեթէ՛, տղե՛րք, մալաւա խըպըտէ՛ք, Անթուան փաշէն Մճէյնու դէն էկաւ, Գէորդ Զաւուշ էկաւ Իշխնձորի կողմէ, տէ խըպըտէ՛ք, ձեր հոգուն մատա՛ղ, ըռօմ կոտորվաւ, պավէմըն ժի խըպըտէք, ազգի



ՀՐԱՅՐԻ ԵՆ ՍԵՐՈՒԹԻ գերեզմանները,
ուր Սասունցիները ուխտի կու գան (Կելիեկուզան)

հաց հալալ ըլնի ձի, հայ զինուորներ՝ որն որ պաշ չխըպըտի, կընկ-
տուս սաւան էնոր գլխուն թալենք, հալա դէ հալա, դէ հալա, ասկարէ
ուօժ կոտրվաւ, հայոց իմտատ շատցաւ»:

Երկար չ'անցնիր, տղայոց անվրէպ հարուածներէն կիրճի բե-
րանին մօտ զօրքը կանգ կ'առնէ, գլուխը կը կորսնցնէ եւ կը սկսի ետ
քաշուիլ: Երեկոյեան ժամը 7-ին Տափըկի կողմէն Անդրանիկ կը հասնի
դիրքերը: Ինչպէս թիւրքերն էին յանկարծակիի բերած եւ ետ քշած
Սասունցի կռուողները, այժմ կարգը եկած էր անոնց՝ փոխադարձե-
լու թիւրքերուն: Միացած ոյժերով կը յարձակին թիւրք զինուորնե-
րու վրայ եւ կոտորելով կը հալածեն մինչեւ Շէնիկ, ուր տակաւին
կ'որոտային թնդանօթները: Վալին, որ բանակի հետ եկած էր ան-
ձամբ հրամայելու, տեսնելով որ զօրքը յաղթուած կը նահանջէ, ինքն
ալ կը քանդէ վրանները եւ զօրքերը հաւաքելով Մուշ կը վերադառ-
նայ:

Յաղթութիւնը հայերու կողմն էր: Հայ Ֆետայիներէն ոմանց
ողեւորութիւնը այն աստիճան էր, որ հակառակ թանձրացող մու-
թին, կ'ուզէին տակաւին հետապնդել բանակը, հարուածելով յետսա-
պահները: Անդրանիկի կարգադրութեամբ բոլորը կը հաւաքուին, կը
վերցնեն Հրայրի եւ միւս նահատակ ընկերներու մարմինները եւ

Կ'անցնին Կելիեկուզան : Հրայրը հանդիսաւոր կերպով կը թաղեն Աղ-
բիւր Սերորի մօտ :

Հրայրին ձօնուած է հետեւեալ երգը .—

Սասուն գաւառ սեւ լալագին,
Զկար նման Արմենակին,
Առաօտեան ժամն էր հընգին ,
Հաշիւ չկար տանկաց գօրֆին :

Կանչէ՛ք փաշան Անդրանիկը ,
Զարկին պարոն Արմենակը ,
Եղաւ հայոց նահատակը ,
Թաղին Սասուն ժամին քակը :

Տանկաց գօրֆին տեղը ձիւն էր ,
Զիւնին երես արիւնաներկ էր ,
Կերած լեղի, խմած թոյներ ,
Տանկաց գօրֆը յոյս մը չունէր :

Տանկաց գօրֆը թնդանօթով ,
Հայ քաջերը մոսիւններով ,
Քաջ Գէորգը փայլուն գէնֆով ,
Զարդեց թիւրֆեր հագարներով ,

Քաջ Գէորգը հաստ ու կարն էր ,
Մոսիւնն իւր ձեռքին խարն էր ,
Ընկերներէն միշտ յառաջ էր ,
Թուրֆ բէկերին շատ կը ջարդէր :

Տանկաց գօրֆը երբ բարձրանար ,
Գէորգ Զաւուշ կ'ուրախանար ,
Կ'ըսէր տղերֆ դուք բռնէ՛ք պար ,
Ես կը ցրուեմ տանկաց գումար :

Մինչ այս դէպքերը տեղի կ'ունենային , թշնամին միաժամա-
նակ յարձակում կը գործէր ալեանքցիներու վրայ , Զայի կողմէն :
Հրայր սպաննուած էր , Սեպուհ վիրաւորուած . Անդրանիկը Տափըկ
կը վտնուէր , Գէորգ՝ Խչխնձոր ու Վահանը՝ Կելին . այդ ամենէն կա-
րեւոր ճակատը մնացած էր առանց ընդհանուր դեկավարի : Թիւրք
զօրքերը կ'ուղղուին դէպի Զայը , ուրիշ թեւ մը Ալեանքը կ'առնէ սաս-
տիկ կրակի տակ : Սակայն ամէն բլուրէ եւ ժայռէ դիմադրութիւնը կը
չարունակուի : Թրքական զօրքը որքան կ'առաջանայ , դիմադրութիւնը
այնքան կը սաստկանայ : Սասունցիները վտանգը տեսնելով՝ հակա-

յարձակումի կ'անցնին, կիներն ալ եռանդուն կը գործեն եւ կը խրախուսեն կռուողները: Քէօսէ Պինպաշին յառաջացող վաշտերու հրամանատարն է: Այդ ձորերուն եւ բլուրներուն մէջ, թիւրք վաշտերը կ'իյնան Ֆետայիներու եւ Սասունցիներու կրակին տակ:

Այդ կռիւը կը վերջանայ հայկական յաղթանակով եւ 160 թիւրք ու քիւրտ կորուստներով:

Ապրիլ 14-ի առաւօտեան, ժամը 10-ին, 6-7000 քիւրտեր եւ 2-300 զօրքեր կը յարձակին Մերկեր գիւղի (Կելիեկուզանէն երկու ժամ հեռու) վրայ: Այդ օրը Գէորգ Չաւուշ զբաղած էր պարապ փամփուշտները լեցնելով: Երբ այս լուրը կ'իմանայ, Մուրաա շուտով իր հետ կ'առնէ իր զինակիցները կ'անցնի Մերկեր գիւղը եւ կռուելով թշնամիին դէմ, փախուստի կը մատնէ զանոնք:

Ապրիլ 15-ի առաւօտեան, իր հետ կ'առնէ քանի մը տասնեակ զինուորներ (որոնց մէջ Սասգիւղի Տէր Քերոբը) եւ կը ստանձնէ Բարբառի հովիտի ամենավտանգաւոր կէտին՝ Մերկերի պաշտպանութիւնը, ճիշդ հոն, ուր նախորդ օր դիրք էին բռնած թիւրք զինուորները, որոնք պարտուելով նահանջած էին: Այս անգամ կառավարութենէն նոր ոյժ ստանալով՝ երկրորդ անգամ կը փորձեն գրաւել Մերկերը, մտածելով, որ թարմ եւ աւելի մեծ ոյժով պիտի յաջողին քանի մը ժամէն գրաւել Բարբառի հովիտը, ապա Մերկերը: Երբ կը մօտենան Գէորգի դիրքերուն, թիւրք յառաջապահներու բարեւին պատասխանը կ'ըլլայ Գէորգ Չաւուշի գնդակը, որուն կը յաջորդեն իր զինակիցներու կրակոցները: Թշնամին անակնկալի կու գայ որովհետեւ կը կարծէր, թէ այս յարձակումով պիտի գրաւէր դիրքերը, բայց չէր յուսար, որ իր դէմ այս անգամ պիտի տեսնէր կազմակերպուած խումբ մը Ֆետայիներ, Գէորգի առաջնորդութեամբ: Կռիւը կը տեւէ երկու ժամ, թշնամին կը նահանջէ, տանելով մէկ սպաննուած եւ մէկ վիրաւոր:

Բարբառի հովիտի բարձունքները շատ կարեւոր էին թշնամիին համար. անոնք ամէն գնով կ'ուզէին ձեռք ձգել:

Այս կռիւներուն առթիւ յօրինուած է հետեւեալ երգը.

Հագար ինն հարիւր չորս թիւին
Կրկին Տարօն ցնցեց թընդում,
Տարօնի խըմբեր բազմաճում
Ազատութեան ձայն է կոչում:

Հասաւ գարուն փառք ժամանակ
Հաստատուեցաւ հայոց բանակ,
Պատասխանատու քաջ Արմենակ(*)
Պարգեց հայոց արիւնոտ դրօշակ:

(*) Հրայր, Դժոխք:

Խրոխտ տուաւ Մուշ եւ Սասուն
 Լուրեր հասաւ Եւրոպացուն,
 Երբ կայացաւ բանակցութիւն
 Պահանջեցին ազատութիւն :

Հայ պետ Հրայր, Անդրանիկ քաջ
 Պարգեւազարդ ձեռքերնին խաչ,
 Խնդիրը պարզին վալուս յառաջ
 Անկախ Հայաստան նոցա պահանջ :

Թիւրքաց պատգամ վալին հպարտ
 Մնաց փակուած համ յուսահատ,
 Խնդրեց իրեն թոյլ տան ազատ
 Մեծ է այդ հարցը յանձնենք պալատ :

Երբ որ լսեց Համիտ սուլթան
 Սաստիկ մեծ ցաւ տուեց նրան,
 Մոնչալով որպէս գազան.
 Խանգարուեցաւ խաղաղ պայման :

Վալուն ֆէրիկին հրաման
 Երեսուն հազար զօրաց բաժան,
 Երկարացէք բազում թընդան
 Որոտացէք Սասնոյ շրջան :

Առաւօտեան ժամն էր կանուխ
 Լեռներ պատած էր մառախուղ,
 Բազում թընդանօթներու մուխը,
 Կը կարգադրէր Հրայրը, չունէր երկիւղ :

Հասաւ Անդրանիկ զօրավար,
 Խորտակեց թիւրք զօրաց գումար,
 Թիւ հասնելով մինչ եօթ հազար
 Զայն տարածուեցաւ ամբողջ աշխարհ :

Թիկնապահն էր Գէորգ քաջ մտադիր
 Կանանչ լեռները հագուց կարմիր,
 Հիւպատոսաց զեկուցագիր
 Եւրոթ լսուեց քաջի խընդիր :

Անտոք կ'եփուէր անմատչելի
 Մոսին հրացան մեզ յարգելի,

Տարօնի գործը սփանչելի
Գերման մնաց գարմանալի :

Հայոց փրկիչ Քեզ անուանենք
Որպէս քաջ Վարդան նմանիս ,
Արժանի ես որ գովասանենք
Հօր քաղուս ՍԱՐ ՀԱՏ (*) սիրալի :

Կառավարութիւնը մինչեւ 18 Ապրիլը 40 հազար զօրք բերելով ,
կ'որոշէ վճռական յարձակումով ջնջել սասունցիներու ոյժը եւ լռեցնել
անոնց բողոքի ձայնը :

Անդրանիկ եւ Գէորգ կը կանչեն իրենց ընկերները եւ կը պատ-
րաստեն ապագայ դիմադրութեան ծրագիրը , կելիեկուզանի շուրջը կը
նշանակեն դիրքեր , կ'որոշեն նոր խմբապետներ ու անոնց օգնականնե-
րը եւ կը ճշդեն , թէ ո՛վ ինչ դիրքի վրայ պէտք է ըլլայ :

Անդրանիկ եւ Գէորգ Չաւուշ կը ստանձնեն ՔեփրիչէրիՓ Խան
եւ Աղլէզի քարերը : Բարբառի հովիտի բերանը՝ Աւետիս եւ Արամ :
Ռաջայներ՝ Տիրացու Օհանէս , Գոմը՝ Մուրատ եւ Կուրաւցի Քեռին :
Չաթոն , Փուրթոն , Սրապիոն եւ քանի մը աղբեցի կտրիճներ կը բռ-
նեն Տաւրների վերեւ աւերակ Վանքի դիրքը : Մխիթարի խումը (կէ-
տիկ) կը բռնեն Մակար , Կարապետ եւ Եղօ : Մճելնի (աղբիւր) գլու-
խը՝ Կոտոյի Հաճին , զինուոր Գրիգորը , Օսէյի Աւէն եւ Կիրակոս :
Կարմիր քարերը՝ Սարգիս եւ Ղազար : Տալազարայ գլուխը՝ Մոկացի
Գրիգորը , Քեաթիպ Մանուկ եւ Ռէս Մանուկ : Բողոնոցներ՝ Մխիթար ,
Չոռէ Օհան եւ քանի մը շէնիկցի , սեմայցի եւ կելիեկուզանցի կտրիճ-
ներ :

Ապրիլ 20-ին կ'ամբացնեն նաեւ հետեւեալ դիրքերը —

Ամպրների գլուխէն մինչեւ Շաշկայ-Մուշէն դիրք կը բռնեն
մշեցի Սմբատը եւ փարկացի Սարգիսը : Շիրինակու արտերը՝ Անդրա-
նիկ , Մուրատ եւ Աւետիս : Խտանայ կողմէն մինչեւ Փուշփուշի տակը՝
Գէորգ Չաւուշ , աւրանայ Արամ , Սմբատ եւ մոկացի Գրիգոր :

Իւրաքանչիւր խումբի մէջ կը գտնուէր 10 կանոնաւոր հրացան ,
որոնց երեք կամ չորսը մոսին , մնացածները բերդանկա . կանոնաւոր
հրացաններուն կը միանային նաեւ չախմախլիով զինուածներ :

Անոնք լաւ դիտէին , որ այդ օրը կենաց ու մահու կռիւ պիտի
մղէին :

Թշնամին իր թնդանօթները աւելի կը մօտեցնէր եւ կը զետեղէր
Փետայիներու բռնած դիրքերուն դիմաց : Ու կը սկսի թնդանօթաձը-
գութիւնը : Կռուի միջոցին Հաճին եւ զինուոր Գրիգոր իրենց համար
նշանակուած դիրքէն աւելի առաջ կ'անցնին եւ կը սկսին կուրծք
կուրծքի կռիւր . մեղմէ 11 հոգի կը վիրաւորուին ու կը քաշուին , ի-

(*) Գէորգ Չաւուշ :



ԿՈՏՈՅԻ ՀԱՃԻ ՅԱԿՈՒՐ
1868 — 1915(*)

րենց նշանակուած դիրքի մէջ: Թշնամիի հրացանները քիչ անգամ կը գործէին մինչ թնդանօթները չեն լուեր:

Այս կռուի մասին Մշոյ կոմիտէն հետեւեալ նամակը ուղարկած է «Դրօշակ»ին.

Մուշ, 24 Ապրիլ

«Ապրիլ 20-ի գիշերն էր, որ թիւրք զօրքը եւ քիւրտ աշիրէթները ահագին բազմութեամբ յարձակում գործեցին Կէլիի վրայ, որ արդէն պաշարուած էր 10-12 լեռնային թնդանօթներով: Առաւօտեան ժամը 7-էն սկսեալ թնդանօթները կ'որոտան եւ հրացանաձգութիւնը

(*) Տես «Յեղափոխական Ալպում»ի 6-րդ հատոր էջ 226:



Անտոֆի բարձունքներուն վրայ, Իշխնձոր գիւղի ընտանիք մը՝
լեռ բարձրացած՝ այծերը կթելու համար :

Քիւրտերու եւ թիւրքերու կողմէն կը շարունակուի մինչեւ երեկոյ :
Հայերը, — ժողովուրդ ու Ֆետայիները, — դիւցազնաբար դիմադրե-
ցին : Առաջին օրը իրենց դիրքերը պահեցին . բայց երբ թշնամին յա-
ջողեցաւ գրաւել Շէնիկ եւ Սեմալ գիւղերն ու հանդիպակաց բլուրնե-
րը, այն ժամանակ մերիները ստիպուած եղան նահանջել :

«Ապրիլ 21-ին նոյն սաստիկութեամբ երկրորդ յարձակում տեղի
ունեցաւ : Նախորդ օրը 125 եւ երկրորդ օրը 230-է աւելի թնդանօթի
ուժեր ձգեցին պաշարուած հայերու վրայ եւ բաւական վնաս պատ-
ճառեցին : Թշնամուն կորուստները աւելի եղած են : Ամսի 21-ին
թիւրք բանակը աւելի յառաջացաւ : Հայ խմբապետները ուժովցուցին
իրենց պաշտպանողական միջոցները . բայց թնդանօթներու դործած
աւերը այլ կերպ վճռեց խնդիրը : Աւերմունքը մեծ էր : Համախմբուած
20.000-ի չափ կիներու, երեխայոց, ծերերու, հիւանդներու լացն ու
կոծը անտանելի էր : Այդ աննկարագրելի տեսարանի հանդէպ՝ բոլոր
ողջ մնացած տղամարդիկ, ինչպէս եւ պետերը՝ Վահան, Անդրանիկ,
Գէորգ եւ իրենց խումբերը ռազմական ոյժերը ձեռք առած՝ կը բարձ-
րանան դէպի Անտոքի գագաթները : Ուրիշներ ալ զանազան բարձրու-
թիւններու դիմեցին : Չենք գիտեր սակայն, թէ ինչպէս պիտի դիմա-
նան ձիւնապատ սարերու վրայ, առանց պատսպարանի եւ մանաւանդ
ուտեստի պաշարի : Թշնամին կը շարունակէ հետեւիլ անոնց : Վերջին

երեք օրերու մէջ բնաւ լուր չկայ Սասունէն, որովհետեւ հաղորդակցութիւնը դադրած է այդ կողմէն. նոյնիսկ Դաշտի մէջ գիւղէ-գիւղ հաղորդակցութեան դիւրութիւն չկայ:

«Սասունի վերջին կռիւներու զոհերու թիւը դեռ յայտնի չէ, դեռ չէ ճշդուած: Մերինների կորուստ թւով աննշան է. — կորսնցուցինք, սակայն, թանկագին ՀՐԱՅՐը, որի կորուստը շատ մեծ վնաս մըն է Սասունի յեղափոխական գործին:

«Երէկ եւ այսօր սկսան Մուշ բերել կէլիի ջարդ ու կոտոր ժողովրդի փշրանքները՝ պառաւներ եւ երեխաներ՝ մերկ, բոսիկ, անօթի, լլկուած: Իրենց ամէնուն երեսին մահուան դալուկն է նկարուած: Հարիւրներով կը բերեն ատոնց, շրջապատուած ոստիկաններով եւ թիւրքերով: Ողորմելիներուն քաշելով կը տանին կառավարութեան դուռը եւ արգելքի ներքեւ կը դնեն, ամէն հաղորդակցութենէ զուրկ, հիւանդ, անօթի... Չեն թողներ ո՛չ կանանց, ո՛չ երեխայոց հայոց թաղեր հաց մուրալու. անօթի եւ սովամահ պիտի կորչին. կորովիներ կան, որոնք կը փորձեն դիմումներ ընել: Արդէն հայոց թաղի մէջ տուն մը վարձուած է եւ կ'ուզեն հոն զետեղել մաս մը: Հաղորդակցութենէ զուրկ կը պահեն բոլորին, որպէսզի անցքերու մասին տեղեկութիւններ չտարածուին հայ ժողովրդի մէջ»:

Կ Ո Մ Ի Տ Է

Ապրիլ 21-ին թշնամին վճռած է գրաւել այն հայկական դիրքերը, որոնք կ'իշխեն Կելիեկուզանի վրայ, բայց մարտիկները կատաղօրէն կը պաշտպանեն իրենց դիակներով՝ իրենց լեռներու ամէն մէկ քարը: Հայ կիներն ալ գործի վրայ են: Անոնք շալակով գէնք ու հաց կը փոխադրեն: Իրենց ճերմակ սաւանները օդին մէջ պտտոցնելով, անոնք կը գոռան շարունակ. «Հալլա հալլա, դէհ խըպըտէք, դէհ խըպըտէք», ու սիրտ կու տան կռուողներուն: Բնութիւնը սակայն, այդ օրը թշնամի է կռուողներուն, անձրեւը կը թրջէ չախմախը հրացանաւորներու «թեզըկ»ը, հրացաններու գործածութիւնը անկարելի դարձնելով: Թշնամին իր ուժերը կը կեդրոնացնէ գլխաւորապէս Մըճեշներու եւ Մխիթարի Խոռի կողմերը: Կռուի ծանրութիւնը կ'իյնայ Կոտոյի Հաճիի ու Սպաղանաց Մակարի դիրքերուն վրայ: Թշնամին կը յաջողի գրաւել Կոտոյի Հաճիի դիրքերը եւ սուիներով քշել հայ մարտիկները: Բոլորը ինքզինքնին վար կը նետեն եւ ոմանք հազիւ կ'ազատին՝ կիսամեռ վիճակի մէջ: Սակայն, թշնամին անկարող կ'ըլլայ նուաճել Սպաղանաց Մակարի դիրքերը, որոնք կ'իշխեն բոլորի վրայ: Ան յամառ է ու անընկճելի, ինչպէս են եւ իր տասնապետները, մասնաւորապէս Մօրուք Կարոն եւ Սպաղանաց Գալէն: Թշնամիի թընդանօթի ռումբերը ամբողջ ալօսներ փորած են անոնց շուրջը, եւ ճիւղի, քարի, հողի ու արիւնի շաղախներ առաջ բերած: Այդ շաղախներուն մէջ է, որ հայ մարտիկները անվրդով կը շարունակեն իրենց



ԱՆՏՈՒՒԻ ԳԱԳԱԹԸ

1904-ին Գեորգի կողմէ քարերով կառուցուած դիրքերէն մէկը

հերոսական դիմադրութիւնը : Թշնամիի յարձակումները արդիւնք չեն տար եւ Գրեգորի ու շրջակայքի դիրքերը կը մնան հայոց ձեռքը :

Ապրիլ 22-ի գիշերը Կելիեկուզանի առաջին դիրքերը ամբողջապէս բռնուած էին թրքական զօրքերով : Գէորգի, Անդրանիկի եւ Վահանի որոշումով նոյն գիշերը ժողովուրդն ու Ֆետայիները կը համախրմբուին Ալուշակ գիւղը : Ոմանք կ'առաջարկեն ամրանալ լեռներու մէջ եւ շարունակել կռիւը, մանաւանդ որ ձիւները արդէն հալած են եւ կարելի է դիրքեր բռնել Անտոք-Կեփինի վրայ. իսկ ոմանք ալ՝ մասնաւորապէս Դաշտի ու դուրսէն եկած Ֆետայիները կ'ըսեն, թէ անհնար է կռիւը շարունակել լեռներու մէջ, քանի որ ոչ պաշար կայ, ոչ ալ մանաւանդ ռազմամթերք : Այս վէճին վերջ կու տայ Վահան, որ կը հրամայէ ժողովուրդին անցնիլ դէպի Մշոյ դաշտ :

Այդ որոշումը գործադրելու պաշտօնը կը յանձնուի ցրօնքցի Մուրատին, որ իր հետ առնելով 120 Ֆետայիներ, կ'երթայ ժողովուրդը անցընելու թրքական բանակի շղթաներէն եւ Հաւատորիկի վրայով իջեցնելու Մշոյ դաշտը :

Վահան, Անդրանիկ, Գէորգ, Գոմսայ Իսոն, Սասնոյ հին Ֆետայիները եւ ժողովուրդի մէկ փոքր մասը կը մնան Սասուն, շարունակելու կռիւը :

Անդրանիկ եւ Սպարապետ Մակար կ'ամբրանան Խիպու Քարի վրայ, Գէորգ Զաւուշ, Իսօ Կորիւն կը բռնեն Սխտոր Քարի տակը: 23 Ապրիլէն մինչեւ 1 Մայիս՝ Ֆետայիները լերան արծիւներուն նման, իւրաքանչիւրը քարի մը վրայ թառած, Տալուորիկի եւ Իշխնձորի քաջարի զինուորներուն հետ, կը շարունակեն կռիւը փոխադարձ յաջողութիւններով:

Թշնամին, չորս կողմէն, զգուշութեամբ կը սկսի առաջ շարժիլ: Սակայն ամէն մէկ լեռ, հովիտ ու ժայռ կը պաշտպանուի հայ հերոսներու կողմէն. Թշնամին 25 Ապրիլէն սկսեալ շարունակական կռիւներու մէջ է Ֆետայիներու եւ Սասունցիներու հետ: Ֆետայիները եռանկիւնաձեւ ճակատ մը կը պաշտպանեն Սխտոր-Քարէն Կըրչիկ եւ Կեփինէն Կըրչիկ: Կըրչիկ կը պաշտպանուի Մակարի եւ Անդրանիկի ոյժերով, իսկ եռանկիւնի միւս երկու ծայրերը Գէորգ Զաւուշի եւ Իսօ Կորիւնի խումբերով, որոնք կը կռուին մինչեւ 1 Մայիս, ապա կ'անցնին դէպի Ծովասար:


Արշալոյսին թրքական զօրքը թարմ ոյժերով կ'ուղէ յարձակիլ Ֆետայիներու վրայ. երբ կը հասնին հայկական դիրքերը, կը տեսնեն որ Ֆետայիները աներեւութացած են: Երկրորդ օրը միայն կը նկատեն, որ անոնք Ծովասարի վրայ համախմբուած են:

Սասունը դեռ կը դիմանար: Ռազմամթերքի պակասութիւն կար, կռուող ոյժերը կ'որոշեն վանէն նոր ոյժ եւ ռազմամթերք բերել. վան կ'ուղարկեն Սերաստացի Մուրատը, Քեռին (Արշակը) կարնեցի, Զուլումաթը, Մոկացի Գրիգորը, վանեցի Գրիգորը, Սամսոնը, Զէքերիա Զաւուշը(*) եւ քանի մը լաւ զինուորներ. նաեւ իրենց հետ Ախլաթ տարած էին վիրաւոր Սեպուհը:

Ֆետայիներու երեւումը վանի մէջ, ընկերներուն մեծ անակընկալ կը պատճառէ: Սերաստացի Մուրատ եւ Կարնեցի Քեռին կը նըկարագրեն Սասնոյ օրհասական կռիւները, յայտնելով, որ ռազմամթերքի պակաս ունին, որպէսզի կարենան իրենց կռիւները շարունակել: Քեռին կ'ըսէ. — օգնել պէտք է Սասնոյ լեռներու մէջ ծուարած բոլա մը ժողովուրդին, որ հազար ու մէկ թելերով կապուած է մեր ազատագրական մաքառումներուն, էն լուսաւոր փարոսներէն մէկն է եղած:

«Քեռին նախընտրեց մնալ մեր քով, — կ'ըսէ Կոմս: Վիրաւորուած էր Անդրանիկէն եւ ինչպէս ինքը կ'ըսէր, հոն տիրող ծանր մըթնոլորտէն: Մնացին նաեւ Մոկուացի Գրիգորը, Զուլումաթը եւ թիւրք երկու զինուորները: Մուրատի հետ, Ախլաթ բերուած է եղեր նաեւ ծանր վիրաւորուած Սեպուհը: Հոն ամիս մը կազդուրուելով, երբ Սասուն վերադառնալու փորձ է ըրած, չեմ յիշեր, Ախլաթի որ գիւղէն երեք հոգի լուր կու տան կառավարութեան: Սեպուհը քանի մը ըն-

(*) Այն երկու թիւրք զինուորները, որոնք փախած էին թրքական բանակէն եւ ֆետայիներու կողքին կատաղի կռիւ մղած էին թիւրքերու դէմ:



ՎԱՀԱՆ ՏՈՂՐԱՄԱՃԵԱՆ

Իսկական անունը ՎԱՀԱՆ (ՄԱՆՈՒԷԼԵԱՆ)։ Ուսուցիչ։ Դաշնակցութեան լիազոր ներկայացուցիչը Սասնոյ մէջ։ 1904 թ. Սասնոյ ապստամբութեան ղեկավարներէն։ Նահատակուեցաւ ապստամբութեան ճնշումէն ետքը։

Կերներով լեռ կ'ապաստանի եւ իր հետքը կը կորսնցնէ։ Բայց հետեւեալ գիշերը կ'իջնեն նոյն գիւղը, երեք մատնիչները յանկարծակիի բերելով՝ կը բռնեն եւ ճամբուն վրայ, ծառերու հաստ ճիւղերէն կը կախեն՝ կուրծքերնուն վրայ «մատնիչներու վերջը այս է» մակագրութեամբ թուղթեր փակցնելով։

«Քեռին կը պատմէր Սասունի դէպքերու ընթացքի մասին։ Պաշարող թշնամին (կանոնաւոր եւ անկանոն) 10.000-է աւելի էր։ Կառավարութիւնը փորձած է եղեր ստապատիր բանակցութիւններով

ներսէն կազմալուծել պայքարողները եւ ժամանակ շահիլ: Այս նպատակով հոն ղրկած է եղեր Բաղէշի Առաջնորդ Գնէլ եւ Մշոյ Առաջնորդ Վարդան Վարդապետները, որոնք պաշտօն ունէին համոզելու, որ Սեմալի մէջ ժողովուած յեղափոխականները յանձնուին և «ապրատամբները» զէնքերը վար դնեն: Վարդան Վարդապետը, յեղափոխական ընդլղումի այդ առաքելատիպ մարդը, առանձին տեսակցութեան մէջ կը պատուիրէ չխարուիլ, այլ խարել կառավարութեան եւ թռուցիկ հարուածներ տալ զանազան կէտերուն: Կ'ըսէ, թէ պիտի վերադառնայ եւ պիտի ջանայ ժամանակ շահիլ. «Թերեւս մինչեւ այն ատեն արտասահմանէն մեր օգնական ուժերը հասնին»...

«Վահան կ'անցնի Տաւրիկ, անկից անցնելու համար Մուշ, իր ներկայութիւնը թէ Գաշտի եւ Մուշի համար կարեւոր էր, ան պիտի տայ ուղղութիւն դործերու եւ թէ տեղեկագրեր ղրկելու եւ թէ բանակցութիւններ վարելու համար: Մուշի կոմիտէն թաքստոց իսկ պատրաստած էր Վահանի համար եւ կը սպասէր անոր գալուն. բայց Վահան անկարող էր ժայռերու միջով ու անդունդներու վրայով առանց դուրսի օգնութեան դուրս գալու իր թաքստոցէն եւ հասնելու Մուշ, կռիւններ մղելով: Ան անսովոր էր թէ զիշերով քալելու եւ թէ ճարպիկօրէն ազատուելու ամէն քայլափոխի պահապան կեցած թըշնամի զինուորներէն: Ուստի Գէորգ իր հետ առնելով քանի մը հողի Սասնոյ ամենէն ընտիր Փետայիներէն, կը դառնայ այդ դժոխք դարձած ամրոցը: Անոր հետն են Գալէն, Չոլոն, Թարփաթոզը, Չաթոն, Մանուկը եւ քանի մը ուրիշներ: Հազար վտանգով անոնք կ'անցնին թշնամու զօրքերու միջով եւ ինքզինքնին կը ձգեն Գեալու Հարսնագոմերի թաղը, Կերոյի տան մօտ: Կը յաջողին վերջապէս երկու Տաւրիկցի Փետայիներ հասցնել Վահանի կեցած վայրը եւ նշանով անոր հասկցնել, որ բարձրանայ մօտակայ լեռը:

«Վահան չի կրնար զիշերով քալել Սպաղանաց կածաններով, որ անդունդներու վրայ կ'անցնի. ցերեկը ճամբայ կ'ելլէ, բայց բարձրէն նկատուելով թշնամիի պահակներէն՝ յարձակման կ'ենթարկուի: Իր ընկերներէն Տիարպէքիրցի Հաճին կը գնդակահարուի ջուրը նետուելու ատեն, միւսները կը կորսուին ժայռերու մէջ, իսկ Վահան գնդակահար կ'իյնայ տեղն ու տեղը: Գէորգ երկու-երեք օր վտանգներու տակ սպասելէ ետք կը հասկնայ, թէ իր ուղարկած սուրհանդակները դժբախտ պատահարի մը հանդիպած են, եւ թախիծով լեցուած կը վերադառնայ Մուշ» (*):

Շուտով ամբողջ Մշոյ դաշտը կը լեցուին թիւրք լրտեսներ, զինուորներ, ոստիկաններ, ջանքեղարներ ու քիւրտեր, որոնք կը ձգտին Սասունի ողջ մնացած Փետայիները ձեռք ձգել եւ թոյլ չտալ, որ անոնք շունչ առնեն եւ նորէն կազմակերպուին: Իսկ Փետայիները թէ՛ ապաստանի եւ թէ՛ փամփուշտի նեղութիւն ունէին: Փետայիները

(*) Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը Յիշատակները», Գ. Խատր, էջ 308:

խումբ խումբ ցրուած էին ամէն կողմ : Անդրանիկ , մինչեւ Գէորգ Չաւուշի վերադարձը , ժամանակ մը կը պատասպարուի Փեթարի լեռներուն մէջ , ապա Սբ . Կարապետի անտառները : Երբ Գէորգ կու գայ , Անդրանիկի հետ իրենց խումբերով կը քաշուին Սասուն , ուր թէեւ ամէն ինչ աւերակ ու ամայի էր եւ թշնամի զինուորները դեռ կը վըխտային ամէն կողմ , բայց աւելի դիւրին էր պահուիլ ու խուսափիլ արիւնոտ կռիւներէ , քան Դաշտի մէջ : Մինչեւ 10 Յուլիս կը մնան Սասունի մէջ : Այն օրերուն Մուրատ վերադարձած էր Վանէն , Գէորգ եւ Անդրանիկ կը մեկնին դէպի Դաշտ , ուր Բերդակ սարի վրայ կը հանդիպին Մուրատին , որ բաւականաչափ ռազմամթերք բերած էր :

Այդ օրերուն Իզզէթ պէյը , որ խուզարկու խումբերու ղեկավարն էր , կը հասկնայ թէ Բերդակի սարերը ու շրջանները Փետայիներ կան : Իր հետ առնելով իր շերքէզ ձիաւորները եւ թիւրք կանոնաւոր զինուորներ , կը պաշարէ Տերգեվանք դիւղը , ուր Փետայիներէն դատ ապաստան գտած էր նաեւ Սասունէն եկած ժողովուրդէն մաս մը :

Արդարեւ , Տերգեվանք գացած էր Փետայիներու խումբ մը , ղեկավարութեամբ Սմբատի . խումբը այդ գիշեր մնացած էր Տերգեվանք , Խաչոյի տունը . հոն էին նաեւ զինագործ Արամ Սահակեանը , զինուոր Գրիգորը եւ ուրիշ քանի մը Սասունցիներ , որոնք վիրաւոր եկած էին դարմանուելու համար :

Առաւօտեան նախաճաշը տակաւին չէին վերջացուցած Փետայիները , երբ հեւ ի հեւ ու դեղնած , տանտէրը կը հասնի յայտնելու , թէ թրքական զօրքը անակնկալ կերպով եկած հասած է դիւղը :

— Ձեր հոս մնալը վտանգաւոր է , կ'ըսէ տան տէրը : Ելէք զգուշութեամբ դիւղին ետեւի հեռաւոր բլուրը ապաստանեցէք : Լաւ դիրք ալ կրնայ ծառայել : Սմբատ Փետայիներու հետ անմիջապէս կը մեկնին լեռը , Շարան ըսուած քարերը , որոնք տակաւին բռնուած չէին զօրքերու կողմէ :

«Չափազանց վտանգաւոր կը յայտնուէր մեր կացութիւնը , — կ'ըսէ Սմբատ : Հազիւ հրացանս պայթած , դիւղէն դուրս , վերջին տուներուն պատերուն տակ հանգչելու նստած զինուորները սկսեր էին ներս խուժել , եւ մեզ նշմարած ըլլալով՝ կը կրակէին մեր վրայ ու կը հետապնդէին մեզ : Արդիւլելու համար անոնց արագ եւ անվախ յառաջացումը , կը ստիպուինք մերթ ընդ մերթ դիրք բռնել եւ կրակել : Սակայն , քանի կը բարձրանայինք դէպի դագաթը , այնքան աւելի անելի մը մէջ կը մըխճուէինք : Դէպի դիւղ՝ զինուորներուն վրայ քանի մը ձեռք հրացան պարպելէ յետոյ՝ երբ կը սուրայինք դէպի վեր , աւելի քան երկու հարիւր հրաղէններէ տեղացող համազարկին տակ , նոյնքան խիտ կրակ մը յանկարծ մեզ դիմաւորեց ճակատէն , շատ մօտիկէն , հազիւ հարիւր քայլ հեռաւորութենէ : Շշմեր էինք պարզապէս եւ հազիւ մէկ մէկ քարի ետեւ կծկտած , հազար զգուշութեամբ արագ ակնարկով մը ճամբայ փնտռեցինք . կը նշմարենք , թէ ամէն մէկ քա-

րակոյտէ թրքական զինուորի գլուխ մը կը բարձրանար ու զէնք մը կրակ կը փսխէր մեր ուղղութեամբ: Պաշարուեր էինք երկու կրակի տակ մնալով, աւելի ճիշդը՝ մահացու ծուղակ մը ինկեր եւ հոն յառաջացեր էինք առանց գիտնալու, մանաւանդ որ զէպի աջ, ոչ մէկ քայլ կրնայինք առնել, քիչ անդին, հսկայ, անդնդային խռոչ մը կը խորանար: Ելք չկար: Կը մնար կռուել մինչեւ վերջին փամփուշտը եւ պատուով մեռնիլ, կամ կռիւը քաշքշել մինչեւ մութ եւ օգտուելով զիշերուան բարերար մեղսակցութենէն, թրքական շղթային մէջէն ճեղք մը փնտռել: Կացութիւնը արդէն վհատեցուցեր էր մեր սակաւաթիւ խումբէն (հազիւ վեց-եօթը հոգի) երկուքը, Ալիճանցի Մխիթարն ու Բզլիցի Յակոբը, որոնք զէնքերը վար դրած, ու քարակոյտի մը ետին կծկտած, եթէ անձնատուութեան մասին չէին մտածեր, սակայն, ապահովաբար կը սպասէին զարհուրելի մահուան մը: Կեանքի իրենց ջիղը արդէն փրթեր էր վախէն: Բայց իրենցմով չէինք կրնար զբաղիլ այդ պահուն: Ոչ ժամանակ ունէինք զիրենք համոզելու, ո՛չ ալ տրամադրութիւն՝ իրենց կորով ներշնչելու: Մեր ամէն մէկ բոպէն հազար հրաշքով օգտագործելու ժամ էր, մանաւանդ որ վարէն ու վերէն կրակը կը տեղար մեր վրայ, անդադար. մէկ միջոց կը մնար մեզի, — զէպի ձախ քալել, ո՛չ թէ փրկուելու, այլ՝ գոնէ կրակի խաչածեւումէն ազատելու, թշնամիին երկու կրակներուն ճակատ տալու եւ մեր խումբին հրացանները աջ ու ձախ երկու մասի բաժնելու: Եւ այսպէս փոխն ի փոխ, զիրար պաշտպանելով, օգտուելով ժայռերու մեծ ու փոքր ցցունքներէն, հողին անհարթութիւններէն, մերթ վազելով, մերթ սողալով, յաջողեցանք որոշուած տեղը հասնիլ անվնաս:

«Կէս ժամ տեւեր էր երկու վայրկեանի այդ ճամբան, ուրկէ օձի ճամբայ բանալով միայն կրնայինք ժայռերու վիթխարի գլուխները ճեղքել ու անցնիլ»:

Երկրորդ ճակատին տեղացող փամփուշտները Գէորգ Զաւուշի կողմէ կ'արձակուէին: Ատոր որպէս հետեւանք թշնամին անակնկալի դալով՝ սկսան իրարու վրայ դարնել եւ խումբը կրցաւ ազատիլ:

Այս առթիւ խօսք տանք խմբապետ Լորիս Պոլոյեանին:

«Փոքրիկ տղայ էի օր մը տեսայ թէ ինչպէ՞ս Գէորգ Զաւուշ Տերգեւմանք գիւղի կռուին օգնութեան հասաւ Սմբատին ու իր ընկերներուն:

«Մենք այդ տարին Բերդակ գիւղի մօտ վանքի այգիի ետեւը առած էինք: Գէորգի սուրհանդակ Բերդակցի Մանուկը եկաւ հօրս քով եւ ըսաւ. — Ինձ Գէորգ ուղարկեց, այս երեկոյ ժամը Տ-ին Գէորգ անպայման հոս կու գայ, սպասեցէք իրեն:

«Մանուկը վերադարձաւ: Թիւրք զապթիէները գիւղի մէջն էին: Մայրս գիւղին ճամբան կը նայէր: Ժամը ճիշդ Տ-ին Գէորգ երեւցաւ: Հայրս զնաց առաջը, առաւ զինք ու եկաւ: Մտան հնձան, եւ ինձ կանգնեցուցին դուռը, որ եթէ զապթիէներն երեւնան, իրենց լուր տամ:



ԽՄԲ. ԼՈՐԻՍ ՊՈԼՈՅԵԱՆ

Ծնած է 1893-ին Մուշ քաղաքը, գաւակն էր հանրաժանօք Պոլսյեան գեր-
դաստանի: 1915-ի ջարդէն ետք գինի կը տեսնենք կովկաս՝ կամաւորական գունդե-
րու մէջ. արիաբար ու վրէժով լեցուն՝ կը կռուի քիւրճերու դէմ. կը մասնակցի
Սարգարապատի օրհասական կռիւներուն:

*«Գէորդ ժամադրուած էր այդ իրիկուն իր ընկերներուն հետ,
որոնք մեր այգին պիտի դային: Անոնք ուշացան: Գէորդ ելաւ դուրս,
ականջը դրաւ դետին, ձայն առնելու համար: Մէկէն ցատկեց ու ը-
սաւ.— Հրացանի ձայն կու դայ: Հայրս ըսաւ.— Ծառերու թուփերու
ձայն է:*

«Գէորդ նորէն պառկեցաւ դետին, նորէն ձայն առաւ:

*— Տղաք անպայման թիւրք զօրքի հետ դէպքի բռնուեցան. ես
պիտի մեկնիմ: Այս գիշեր նորէն ինձ սպասեցէք: Համբուրուեցաւ
մեզի հետ եւ գնաց: Եթէ ձին քշէին ետեւէն, պիտի չհասնէին:*

*«Տերգեվանք գիւղէն տղաքներ կ'ելլեն, թիւրք զօրքի պահակին
կը հանդիպին, կռիւը կը սկսի եւ կը տաքնայ: Տղաները կ'ուզեն հե-
ռանալ, չեն կարող, զօրքի շունը տեղերնին կը յայտնէ: Տղաներու
փամփուռները հատնելու վրայ են, կը յուսահատին: Կ'ուզեն անձ-
նասպան ըլլալ, ու ողջ չյանձնուիլ:*

«Գէորդ Չաւուշ կը հասնի: Ոչ ոք չուր ունի:

«Կը մտնէ ջաղացի առուի մէջ, որ լեցուն է ջրով ու կը կրակէ թիւրքերու թիկունքին: Զօրքերը կը զարմանան: Փոխանակ Ֆետայիներուն վրայ կրակելու, իրենց զօրքին վրայ կը կրակեն: Թիւրքի սպան կը պոռայ, կարծելով թէ թիւրք զինուոր մըն է.— Սխալ կը կրակես: Այդ միջոցին Գէորգ զնդակ մը կը զարնէ շան ճիշդ բերանին: Շունը կը սատկի: Երբ շան ձայնը կը կտրի, Գէորգի ընկերները կ'ըսեն.— Գընըքէ Գէորգն է, հասած է օգնութեան: Գէորգ, սպան ալ կը զարնէ ու կը պոռայ,— Գէորգ Զաւուշն եմ, «Թեալիմ օլըն» (յանձնուեցէք), զօրքը փախուստի ճամբան կը բռնէ: Գէորգ կը միանայ ընկերներուն: Կռիւր կը դադրի:

«Ոտքի ձայն առինք: Գէորգ իր ընկերներով եկաւ: Հագուստները ամբողջովին ջուր էին: Քիչ հանդստանալէ ետք, ընկերները ճամբու դրաւ իրենց որոշած տեղը, ինք մնաց: Եափուկէ առաւ վրան, զէնքը դրաւ ոտքերուն մէջ, ծառին տակ պառկեցաւ: Ըսաւ եթէ եկող ըլլայ, ինձ յայտնեցէք:

«Ես կանգնեցայ պահակ: Երկու ժամ չանցած, ոտքի ձայն լսեցի: Տեսնեմ որ դէմի արտերուն մէջէն երեք ձիաւոր կու գան: Շուտ հայրիկիս լուր տուի: Ան ալ իր կարգին Գէորգին լուր տուաւ:

«Գէորգ քնած տեղէն ցատկեց, ըսաւ.— Ո՞ւր են: Յոյց տուինք, տեսաւ: Հայրս ըսաւ Գէորգին, որ երթայ: Ան չընդունեց.— Ձեզի չեմ ձգեր հեռանար. կը մտնեմ այգիի մէջ, եթէ ձեզ նեղացնեն, կը յարձակիմ վրանին: Հայրս եւ Գէորգ մտան այգիին եւ պահուրտեցան: Մնացինք ես ու մայրս:

«Երեք ձիաւորներն եկան, զինուած, քիւրտի քօլոզ գլուխնին, փուշին փաթթուած, սուրմայ շալվար, ապայ վրանին: Քիւրտերէն խօսեցան եւ «բարի երեկոյ ձեզ» ըսին: Բարեւ առինք.— Գէորգ Զաւուշ այս տեղն է, ցոյց տուէք, ըսին:

«Մայրս ըսաւ.— Մենք Գէորգ Զաւուշ չենք ճանչնար: Շատ սպառնալիքներ ըրին, բայց մենք երդում ըրինք որ չենք ճանչար: Անոնցմէ մէկը դարձաւ եւ հայերէն ըսաւ: Աման մայրիկ մեռանք անթութեանէն, ձիերէն վար իջան: Ինձի ըսին, կանչէ Գէորգը թող գայ: Ըսի, թէ չեմ գիտեր թէ Գէորգը ուր է: Բայց անոնցմէ մէկը ըսաւ.— Ծառի տակ կանգնիր եւ պոռայ,— Գէորգ եկո՛ւր, Իսօն եկեր է, քեզ կը կանչէ: Պոռացի, Գէորգ եկուր, Իսօն քեզ կը կանչէ: Ոչ մի ձայն: Մտայ ներս, ըսի, ձայն չկայ: Այն ատեն մէկը ցատկեց տեղէն դուրս,— Գէո՛րգ, Իսօն եմ, եկուր: Ոչ մի պատասխան: Երբ որ ըսաւ. Գէորգէ կնըք, Կորիւնն եմ, եկուր, խաղողի թուփերը սկսան ձայն հանել: Ձէնքը ձեռին, Գէորգն այժեամի պէս ցատկելով եկաւ, փաթթուեցան իրարու եւ համբուրուեցան»:

Այս կռիւները որքան որ հերոսական ըլլային, կարելի չէր մեղմել ժողովուրդի կացութիւնը, ընդհակառակն ան աւելի կը վատանայ: Կառավարութեան նպատակն էր Սասունը ճնշելէ ետք քայքայել նաեւ Մշոյ դաշտի հայութիւնը:

Այս ծանր կացութեան առջեւ, Դուրան-Բարձրաւանդակի Կ. Կոմիտէն եւ շրջանի միւս կոմիտէները ժողով մը կը գումարեն եւ կը մտածեն վերջ տալ այս կռիւներուն, մանաւանդ որ ռազմամթերք չկար եւ քաղաքական պայմանները նպաստաւոր չէին: Կ'որոշուի յուշագիր ներկայացնել եւրոպական հիւպատոսներուն, միաժամանակ, դրութիւնը մեղմացնելու համար, հեռացնել Փետայիները Մշոյ շրջանէն, որպէսզի կառավարութիւնը այլեւս պատրուակ չունենայ խուզարկութիւններ ու բռնութիւններ կատարելու:

Այս նոր ուղղութեան ոգին կը դառնան Վարդան Վարդապետը, Տարօնեցին (Գեղամ Տէր-Կարապետեան կամ Տատրակ), Իսօ Կորիւնը, Մշեցի Համազասպը, Մոկուկեցի Ղազարն ու Դաւոն, Ղըզըլաղաճցի Սարգիսը եւ ուրիշներ: Գեղամ մանրամասն յուշագիր կը պատրաստէ Դուրան-Բարձրաւանդակի վիճակի եւ յեղափոխական շարժման պատճառներու մասին: Ասկէ զատ յուշագիր մը եւս կը ներկայացուի եւրոպական պետութիւններու՝ Անգլիոյ, Ֆրանսայի եւ Ռուսիոյ հիւպատոսներուն: Կը ներկայացնեն այն գլխաւոր պահանջները, որոնց գործադրութիւնը անհրաժեշտ է, իբրեւ տարրական պայման, գէթ մասնակի խաղաղութիւն հաստատելու համար հայաբնակ նահանգներու եւ յատկապէս այն դաւառներուն մէջ, որոնք ընդհարման եւ կռուի բեմ դարձած էին վերջին ամիսները: Ահաւասիկ այդ յեղափոխական պաշտօնագիրը, զոր ստորագրած են Սասունի եւ Տարօնի Հ. Յ. Դ. Կ. Կոմիտէներու կողմէ Անդրանիկ, Սարհատ (Գէորգ Չաւուշի ծածկանունը), եւ Տարօնեցին (Գեղամ Տէր Կարապետեանը):

Պահանջներ. —

Ա. — Բոլոր բացառիկ ու ժամանակաւոր հարկերուն ոչնչացումը: Գանձուելիք այլազան տուրքերու փոխարէն իւրաքանչիւր ընտանիքի համար հողային կալուածներու համեմատութեամբ միանուագ տուրքի մը հաստատումը: Ձնջումը տասանորդական վարձակալութեան (աշար իլթիզամը), որ բռնաբարութիւն մըն է հողագործի արդար վաստակներուն:

Բ. — Տասը տարուան համար հարկերէ ազատում՝ հայերու տնտեսական քայքայեալ վիճակը վերականգնելու համար: Ապառիկներու բաշխումը: Զօրքեր, ոստիկաններ ու կառավարական պաշտօնեաներ չգործածել տուրքեր հաւաքելու: Տեղական եկամուտը գործածել տեղական տնտեսական պէտքերուն:

Գ. — Ձնջել զինուորական տուրքը եւ անոր փոխարէն հաստատել ընդհանուր զինուորագրութիւն, հայ զինուորներէն կազմելով առանձին գունդեր:

Դ. — Գիւղերու ազգաբնակչութեան խաղաղ կենցաղավարութեանը համար իւրաքանչիւրի բնակչութեան թիւին համաձայն 5—10 պահապաններու նշանակումը, որոնք պէտք է զինուած ըլլան արագաձիգ հրացաններով:



ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ ՀԻՒՊԱՏՈՍԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ ԿԸ ՔՆՆԷ
 Լորտ ձեյմս, Սըր Մ. Ռայտլի, Ա. ձ. Պալֆոր, ձօգէֆ Շամպըրլայն, Ս. Թ. Ռիթչի Կօզշէն, Լորտ Գրօս, Էլըլ Սառօկամ, Լորտ Աշտօրն Շաբլին, Լորտ Պարֆօր, Լորտ Հալիսպուրի, Լորտ Համիլթըն:

Ե.— Զնջել զէնք կրելու իրաւունքը իսլամական տարրերու համար, որոնք զայն կը դործածեն խաղաղ ժողովուրդը կեղեքելու եւ փճացնելու, հակառակ պարագայի մէջ ամէն կարգի հպատակներու համար արտօնութիւն զէնք կրելու եւ հաւասարապէս ազատ ըլլալ ինքնապաշտպանութեան իրաւունքին մէջ:

Զ.— Վերադարձումը հայոց այն բոլոր հողերուն, զորս իսլամներու խուժանը կամ կառավարութիւնը գրաւեր է հայերէն՝ ռուսթրքական պատերազմէն վերջ՝ թէ՛ բռնութեամբ եւ թէ՛ զանազան Էնթրիկներով: Վերադարձումը հայ եկեղեցւոյն այն նուիրական վայրերուն՝ դարաւոր ուխտատեղիներու, տաճարներու, վկայարաններու, գերեզմանատուներու եւայլն, որոնք հակառակ իրենց նուիրականութեան, գրաւուեր են այս կամ այն թիւրք աղաներէ կամ քիւրտ պէյերէ, եւայլն:

Է.— Վերահաստատումը սահմանադրական կարգերու: Դաւանանքներու կատարեալ ազատութիւն եւ հաւասարութիւն: Հայ եկեղեցւոյ նախկին առանձնաշնորհմանց պահպանումը՝ դպրոցներու, եկեղեցիներու շինութեանց եւ բարեկարգութեանց համար: Կատարեալ թոյլտուութիւն հայ ուխտաւորութեան՝ իրենց ազգային վանքերու եւ սրբութիւններու: Տեղական մամուլի հաստատութիւն:

Ը.— Ազատ իրաւունք անցագրի, առեւտուրի, վաճառականութեան, տեղափոխութեան, եւայլն:

Թ.— Դատաստանական բարենորոգումներ, որով ապահովուին

ազգաբնակչութեան ամէն դասերու իրաւունքներն եւ կատարեալ հասարութեան ապահովութիւնը :

Ժ.— Բոլոր հայ գաղթականներուն եւ պանդուխտներուն (Օսմ. հողերէ եւ թէ արտասահմանէ) վերադարձումը, կատարեալ իրաւունք իրենց հայրենի հողերուն տիրելու, վերադարձումը կրճատուած իրաւունքներու :

ԺԱ.— Ազատութիւն բոլոր քաղաքական հայ բանտարկեալներու եւ ամբաստանեալներու, եւայլն :

ԺԲ.— Իրենց չարագործութիւնները սանձարձակ ի գործ դնող քիւրտ հեծելազօրաց արդի աւերիչ կացութեան ջնջումը կամ բարեփոխումը : Արգելել ի սպառ, որ վրանաբնակ քիւրտեր ամարանոցի պատրուակով հայոց պատկանած լեռները իջնեն, սովորութիւն մը, որ ջնջուած էր 99-ի դէպքէն վերջ իրատէներով, սակայն Սասնոյ կառավարութենէ թոյլատրուած է ի վնաս հայերուն, մինչդեռ խեղճ ժողովուրդը զրկուած է իր ամարանոցներէն օգտուելէ :

ԺԳ.— Կառավարչապետի մը նշանակումը հայկական վեց նահանգներու համար՝ եւրոպական մեծ պետութեանց հսկողութեան տակ, որ պիտի կառավարէ ազգաբնակչութեան կողմէ ընտրուած խորհրդին աջակցութեամբ : Կառավարիչը պէտք է որ քրիստոնեայ ըլլայ :

ԺԴ.— Եւրոպական խիստ հսկողութիւն (կոնտրոլ) վեց նահանգներու վարչութեան վրայ :

ԺԵ.— Ազգաբնակչութեան թիւի համեմատ կազմակերպել ժանտարմներ, որոնց մէջ պէտք է ըլլան քրիստոնեայ պաշտօնեաներ, այն է՝ եւրոպացի սպաներ եւ որոնց վերահսկողութեան տակ դրուի ժանտարմերի կազմը :

ԺԶ.— Ընդհանուր հատուցում Սասունի եւ Մշոյ դաշտի հայոց վնասներուն, գիւղերուն վերականգնումը, անոնց տուններուն շինութիւնը, տարեկան ուտեստի, զգեստի, տնական պէտքերու, գոյքերու հոգացում, եւայլն, ինչպէս եւ հողային եւ մշակական գործիքներ :

Ի դիմաց Տարօնոյ-Սասնոյ կեդր. կոմիտէներու
ԱՆԴՐԱՆԻԿ, ՍԱՐՀԱՏ, ՏԱՐՕՆԵՑԻ
(կնիքներ)

Այս պահանջագրին հետ կը յանձնեն մանրամասն նկարագրութիւնը այն տառապանքներուն, որոնց ենթակայ է հայ տարրը՝ թիւրք կառավարութեան կողմէ շարունակ ի գործ դրուող զեղծումներու եւ չարիքներու պատճառով :

Այս չարիքներուն դարման տանելու համար էր, որ հայ յեղափոխութիւնը պարզեց իր դրօշը եւ հրապարակելու չարչարուած ժողովուրդը պաշտպանելու եւ պահանջելու բարենորոգումներու իրագործումը՝ հայկական վեց նահանգներու մէջ :



ՍԵՒԱՍՏԱՅԻ ՄՈՒՐԱՏ

(Մուրատ Խրիմեան) (*)

1874 — 1918

Սասունի եւ Մշոյ կեդրոնական կոմիտէները այդ պաշտօնագրէն զատ ուրիշ ծանուցագիր մը եւս կը յանձնեն հիւպատոսներուն, բուն կերպով բողոքելով Սասունի մէջ զօրանոցներ շինելու դէմ, կը պահանջեն այդ կառուցումներու արգելումը, սպառնալով հակառակ պարագային նոր ուժերով դէպքերը շարունակել:

Վերոյիշեալ յուշագիրը վարդան վարդապետի ձեռքով կը յանձնուի հիւպատոսներուն եւ թիւրք կառավարութեան:

(*) Տես «Յեղափոխական Ալպում»-ի Ա. հատոր էջ 327:

Յուշագիրը յանձնուելէ ետք, Ֆետայիները կը քաշուին : Յուլիսի կէսին Մշոյ աշխարհին մէջ Ֆետայի չէր մնացած արդէն, միայն լեռներու եւ անտառներու մէջ կը մնային փոքր խումբերով, սոված ու ծայր աստիճան նեղ դրութեան մէջ :

Դուրան-Բարձրաւանդակի Կ. Կոմիտէի որոշումով, Ֆետայիները կը հաւաքուին Մարնիկայ սարը ու կը խորհրդակցին Սասունի եւ Մշոյ սահմաններէն հեռանալու հարցով : Հոն էին Գէորգ Չաւուշը, իր զինակիցներով, Սերաստացի Մուրատը՝ իր ընկերներով, Կոտոյի Հաճին, Պոլէի Մճոն, Սմբատը, Յարօն, Իսօ Կորիւնը, Աւրանայ Արամը, Մոկաց Ղազարը, Անդրանիկ իր զինակիցներով Սպաղանաց Մակարը Սասնոյ հին զինուորներով, Գալէն, Չոլոն, Մանուկը, Ղազարը, Մօրուք Կարօն եւ ուրիշներ :

«Շատ ծանր հարց մըն էր (*), որ դրուած էր հաւաքուածներու առջեւ. շատերը իրենց ամբողջ կեանքը անցուցած էին այդ լեռներուն վրայ եւ պայքար մղած թշնամիին դէմ. շատերուն անձանօթ էր օտարութիւնը : Լքել հայրենի երկիրը, սիրած ժողովուրդն ու հարազատները այսպիսի օրհասական օրերուն մէջ խղճի եւ պատուոյ դէմ էր շատերուն համար : Սակայն Կ. Կոմիտէն անհրաժեշտ կը գտնէր ժողովուրդի խաղաղութեան համար դէթ ժամանակաւորապէս հեռացնել Ֆետայիները այդ շրջանէն : Սասունցիներու մէկ մասը, մասնաւորապէս Սպաղանաց Մակար, դաւաճանութիւն կը սեպեն թողուլ երկիրը, իսկ միւս մասը Անդրանիկի գլխաւորութեամբ, հիմ բռնելով Կ. Կոմիտէի պահանջը, կ'ուզեն դուրս ելլել : Գէորգ Չաւուշը կը տատանի : Եւ համաձայնութիւնը անկարելի կ'ըլլայ գոյացնել : Հետեւանքը կ'ըլլայն այն, որ Սասնոյ զինուորները կ'երթան Սասուն, իսկ մնացածները եւ Գէորգ Չաւուշ կ'աշխատին անցնիլ Վասպուրական՝ Ախլաթի վրայով» :

Նախքան մեկնումը, Սասուն մնալ որոշողները նիստ մը կը գումարեն, կացութիւնը քննելու եւ իրենց ընթացքը ճշդելու համար : Կը մնար փորձ մը կատարել՝ ստիպելու համար կառավարութիւնը, որ ժողովուրդին աւելի նպաստաւոր զիջումներ ընէ : Առաջարկ կը ներկայացուի աննշմար անցնիլ Ս. Կարապետի անտառը, հոն ծուարած մնալ քանի մը օր եւ յարմար առթիւ անակնկալ յարձակում մը գործել Ջիարէթի վրայ, ուր մէկ գումարտակ զինուոր կը բնակէր : Այս յարձակումին նպատակը պիտի ըլլար ազդու տպաւորութիւն ձգել եւրոպական հիւպատոսներուն վրայ եւ անոր ազդեցութեան տակ մղել զանոնք, որ խիստ միջամտութիւն մը գործեն ի նպաստ ժողովուրդին :

Անդրանիկ եւ Գէորգ կ'որոշեն նախքան զէնքը վերցնելը, գործածել վերջին փամփուշտը՝ կառավարութեան անգամ մը եւս հարուած տալու համար : 16 Յուլիսին, 34 հոգիէ բաղկացած խումբը

(*) Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը Յիշատակները», Գ. հատոր, էջ 326 :

կ'անցնի կուրաւու գիւղը, եւ առաջին հերթին վրէժը լուծելու կուրաւու Բարսեղ քեռիին:

«Բոլորս համամիտ գտնուեցանք, — կ'ըսէ Զօր. Սմբատ, — չունենալով ուրիշ միջոց ու ճամբայ, ելանք դէպի որոշեալ վայրը: Անվտանգ ու աննշմար կտրեցինք Եփրատը եւ գիշերեցինք կուրաւու գիւղը, եօթը խումբի բաժնուած:

«Գիշերը անցուցինք առանց միջադէպի: Սակայն, ըսուած էր, որ բուռն կռիւի մը համար պիտի արթննայինք առանց ուզելու:

«Երբ աչք բացի առաջին լոյսին հետ, նշմարեցի որ մեր տանտիրուհին ամանով թան կը փոխադրէր արագօրէն եւ զգուշութեամբ, չնշմարուելու ճիգերով: Կնոջ ընթացքը ուշադրութիւնս գրաւեց, առանց զիս մղելու որ աւելի հետաքրքրուիմ սակայն: Երբ վերադարձաւ, հարց տուի թէ այդքան կանուխ, որո՞ւ է որ թան կը տանի:



ԿՈՒՐԱՒՈՒ ԳԻՒՂԸ

— Մեր երկրագործներուն, պատասխանեց կէս մը շփոթ, ու փութով հեռացաւ միւս սենեակը, քիչ յետոյ նորէն, նոյն ամանը լեցուցած դուրս ելլելու համար:

«Կասկած մը՝ թէ անսովոր բան մը տեղի կ'ունենայ, ծանրացաւ մտքիս վրայ, պատրաստուեցայ դուրս ելլելու եւ ստուգելու, երբ յանկարծ շատ մօտէն հրացանի մէկ քանի պայթիւններ օդը թնդացուցին: Զայն տուի ընկերներուս, որոնք տակաւին կը քնանային, տանտիրուհին դողահար ու շնչասպառ ներս մտաւ ու գաղտնիքը պարզուեցաւ:

«Ստուար զօրախումբ մը առանց խուզարկելու կամ նեղելու մտադրութեան, կանգ առեր էր գիւղին առջեւ: Ու որեւէ պատրուակով անոնց գիւղ մուտքը կանխելու համար, գիւղապետին թելադրութեամբ,

տեղացիները հաց, ջուր ու թան կը տանէին անոնց, որպէսզի իրենց տեղէն չչարժին: Այդ կերպով կը յուսային պահել անոնցմէ՝ գիւղին մէջ մեր ներկայութիւնը, մինչեւ որ անոնք հեռանային, մանաւանդ որ պահ մը հանգչելէ յետոյ՝ ճամբան շարունակելու համար կանգ առեր էին հոտ. իսկ մենք ալ, գիտէին գիւղացիները թէ կռուելու մտադրութիւն չունէինք այդ պահուն եւ հոտ մանաւանդ»:

Նախքան գիւղ մտնելը, Անդրանիկ եւ Գէորգ նոր տասնապետներ եւ օգնականներ կը նշանակեն խումբերուն: Հազիւ այդ դիշեր քնացած էին, առաւօտեան ժամը 5-ին լուր կու տան խմբապետներուն, որ 80-ի չափ զօրք գիւղը կու գայ: Գիւղապետը կը դիմաւորէ զանոնք, գերեզմանոցը կը տանի, ուր բոլորն ալ կը ստանան ուտելիք: Թիւրք զօրքը, այդքանով չի բաւականանար, կը մտնէ գիւղ եւ կը սկսի տուներու դուռը զարնել եւ բռնի պահանջներ ընել. զինուորներէն մէկը կ'ուզէ լրբօրէն վարուիլ հայ կնոջ մը պատուին հետ, կինը ահաբեկած ճիչ մը կ'արձակէ ու կը փախչի: Խմբապետները լաւ կը դիտեն անցողարձը: Խումբը կը բաժնուի չորս մասի, զօրքերէն մէկը կը մօտենայ այն դրան, ուր Առաքելի տասնեակը կը գտնուէր. կը ծեծեն դուռը. Փետայիները կ'ուզեն դուրս նետուիլ, բայց Առաքել տակաւին կը սպասեցնէ, դուռի ճեղքերէն թիւրք զինուորները կը դիտեն ներս եւ կը տեսնեն ներս եղողները «Կէլի'ն, պուրտա փետայի վար» (եկէք, հոս Փետայիներ կան) պոռալով ձայն կու տան միւս ընկերներուն: Շուտով կը հաւաքուին թիւրք զինուորները ու կը պաշարեն տունը: Անդրանիկի եւ Գէորգի հրամանով միւս երեք խումբերը պատրաստ կը կենան, որպէսզի զօրքը աւելի հաւաքուի իրենց մօտ, ու այսպիսով իրենց արձակած գնդակներն ալ առատ հունձք ունենան: Երբ զօրքը եկած ու պաշարած է Առաքելի դիրքը, Գէորգ Չաւուշ ազդանշան կու տայ եւ երեք կողմերէ կը պայթին հրացանները, զինուորները կ'իյնան իրարու վրայ, խուճապը կը սկսի, մաս մը հազիւ կրնայ ազատուիլ ու անցնիլ գերեզմանատան կողմը ու դիրք բռնել: Փետայիները՝ «վրէ՛ժ Սեդրակի, Սարոյի, Քեռիի, վրէ՛ժ» պոռալով զանոնք կը հետապնդեն:

Գէորգ Չաւուշ եւ Սերաստացի Մուրատ կ'արշաւեն դէպի գերեզմանատունը, անոնց ետեւէն կը վազեն գիւղը գտնուող թիւրքերու մէկ մասը: Երկուստեք կը սկսի կատաղի կռիւ մը, գրեթէ կուրծք առ կուրծքի: Կը հասնին շուտով Մմբատ, Իսօ Կորիւն, Աստուր, կատաղի կռիւ կը մղուի եւ թիւրք զինուորներու դիակներով կը ծածկուի գերեզմանատունը, իսկ մնացողները կերպով մը կ'ազատեն իրենց գլուխը: Զօրապետը, որ քանի մը վայրկեան առաջ խրոխտ հրամաններ կ'արձակէր, այժմ սպիտակ անձեռոցով վիզը փաթթած այնպէս կը փախչի, որ որսկան շունը պիտի չկարենար ետեւէն հասնիլ:

Այս լուրը իմանալով, գիւղ մնացած զինուորները կը ստիպուին փախուստ տալ. արդէն ամէն խումբ կանոնաւոր կռիւ կը մղէր թշնամիին դէմ: Տասնեակ մը կը բարձրանայ եկեղեցիին զանգակատան վը-



ԱԻՐԱՆԱՅ ԱՐԱՄ

րայ Մշեցի Նազար Արամչարեանի մտածումով եւ հոն դիրք կը բռնեն եւ անխնայ ջարդ կու տան թշնամիին :

Թշնամին պարպած էր գիւղը : Գէորգ եւ Անդրանիկ իրենց շուրջը կը հաւաքեն Փետայիները . եւ դիրքերով կ'ամրացնեն գիւղը :

«Եկեղեցիի(*) շէնքը գիւղի տուներու ամենաբարձրն ըլլալով, անոր կտուրը դիրքեր կը շինեն : Եկեղեցիի զանգակները կը սկսին հնչել՝ շրջակայ գիւղերուն իմաց տալու կռուի մասին : Կորիւն, Սըմբատ եւ Պօղոս բռնած են գիւղի հարաւային կողմը . Մկրտն եւ Հասրաթ՝ արեւելեան կողմը . Առաքել եւ Մշեցի Աւետիս՝ հիւսիսային կողմը, իսկ արեւմտեան կողմը՝ եկեղեցիի կտուրի դիրքերը, Յովհաննէս, Աւրանայ Արամ, Աստուր եւ ուրիշ չորս ընկերներ : Աննկարագրելի է Փետայիներու ոգեւորութիւնը, մէկը կ'երգէր, միւսները կը պարէին եւ այսպէս ոգեւորիչ ուրախութիւն կը տիրէր դիրքերու

(*) Սասուն-Մուշի կռիւները, էջ 41 :

վրայ: Քիչ մը յետոյ կու գայ Ալայ պէկ 60-70 ձիաւորներու գլուխ անցած: Մեր դիրքերէն մեկնող չարաճճի գնդակ մը վար կը գլորէ առաջին ձիաւորը. ձին կը փախչի եւ գիւղը կու գայ: Այսպէս կը կատարեն յեղափոխականները պատուոյ եւ ընդունելութեան պարտքը: Շուտով հաւարի կը հասնին Աւրանէն, Սուլուխէն, Մատնավանքէն եւ ուրիշ գիւղերէն շատ մը թիւրքեր ու չերքէզներ: Կռիւր կը շարունակուէր. զանգակները կը հնչէին, դրօշակը կը ծածանուէր»:

Հայ Ֆետայիները կրկին կը ստիպուին կռուիլ թշնամիին հետ, որ գիւղ մուտք գործած էր:

«Կռիւր տեւեց մինչեւ երեկոյ, — կ'ըսէ Սմբատ, — եւ տակաւին դադրելու նշան ցոյց չէր տար: Մեզի տրուած հրահանգին համաձայն, օգտուելով մութէն, պիտի քաշուէինք դէպի Ախջան, որ հեռու չէր, բայց հոն հասնելու համար, գետը կտրելու էր նորէն: Թիւրքերը արդէն, շնորհիւ իրենց ստացած օգնութեան, յաջողեր էին գրաւել գիւղին կէսը. իսկ մենք կռուելով կը նահանջէինք քայլ առ քայլ դէպի գետը, ուր երբ հասանք, տեսանք որ ճամբան կտրուած է: Գետին դէմի եզերքը գրաւած էին Ալայ պէկի զինուորները: Վտանգաւոր կացութիւն էր: Երկու կրակի մէջտեղ, թիւով անհամեմատօրէն տկար եւ ուժասպառ օր մը տեւող կռուին մէջ, անօթի նաեւ, յուսահատական յանդգնութիւն մը միայն կրնար մեզ փրկել:

«Քսան հոգինոց խումբ մը հրաման ստացաւ զբաղեցնելու զինուորները, մինչ միւսները պիտի փորձէին գետը անցնիլ լողալով: Ու գնդակներու տարափի տակ, նետուեցանք ջուրը, վեր բռնած զէնքերն ու փամփշտակալները: Դժուար թէ մեզմէ շատերը ողջ կամ անվնաս հասնէին գետեզերքը, եթէ անակնկալ միջամտութիւն մը օգնութեան չհասնէր: Իրօք, Ախջանէն, յանկարծ համազարկ մը պայթեցաւ, շփոթի մատնելով թիւրքերը: Գիւղի մեր ընկերներն էին, որ աչք առնելով ամէն վտանգ եւ տեսնելով մեր վրայ ծանրացող մահացու սպաննալիքը, կը մտնէին կռուի մէջ: Զօրքը կը սկսէր փախուստ տալ, իր կարգին մնացած ըլլալով երկու կրակի տակ, ու մենք բոլորս ապահով կը կտրէինք գետը: Մենք ընդամէնը մէկ զոհ տուեր էինք, Յրօնքցի Սուչօն, որ սխալմամբ սպաննուեր էր եւ ուրիշ մըն ալ վիրաւորուեր էր թեթեւօրէն, դարձեալ հայդուկի մը կողմէն: Գիւղացիներէն ալ երկու վիրաւոր ունէինք: Իսկ, ինչպէս յետոյ իմացանք, թշնամին ունեցեր է 150 սպանեալ եւ 100 վիրաւոր:

«Սակայն, Ախջան, ուր նախապէս մտադրած էինք քաշուիլ, վտանգուած էր այլեւս. չէինք կրնար հոն ապաստանիլ. լաւագոյն էր ուրիշ ուղղութիւն մը բռնել. Անդրանիկի կարգադրութեամբ, սկսանք քալել դէպի Բերդակի սարը, որ աւելի ապահովութիւն կը ներշնչէր մեզի, եթէ յաջողէինք առանց նշմարուելու հոն հասնիլ: Զար բախտը սակայն մեր դէմ հանեց երկու քիւրտեր, որոնք եթէ ազատ մնային, կասկած չկար, որ նոյն իսկ առանց չարակամութեան, պիտի յայտնէին մեր ուղղութիւնը եւ հետեւաբար նաեւ թաքստոցը: Կարե-

և՛ չէր 90 հոգի վտանգել անխոհեմաբար: Ստիպուած, մեզ հետ տա-
րինք այդ երկուքը, որոնք Մուսա բէկի մարդիկն էին եւ հոս վերցու-
ցինք մէջտեղէն, Անդրանիկի կարգադրութեամբ: Հոտ մեզ միացան
Պոլէի Մճոն եւ Հաճի Յակոբը, որուն վէրքը առողջացեր էր»:

Ապա, Ֆետայիները ժողովուրդի հետ երգերով կ'անցնին դէ-
պի Բերդակ:

ՇԸՌ Է ՏԸ ԳՐԱՆ Է ԿՈՒՐԱԽՈՒ Է

Շըռբ՛ չէ դըպու լը Կուրախա
Շֆթի լը փալա գըրան է.
Ժորտայ ռունըշտի է Առաքել աղայ
Նը ոլա Աստուր է Մոնկունկի է
Մուսեմի է դըստետայ սըշխուլէ,
Միմամումէ նաւ ֆընըրան:

Լէ ժերտայ ռունըշտի է Մուրատ է
Սեվազէ նաւ գրան.
Նը ոլա Սեպուհ է Բըյթուրդ է
Իզքաշի է ջան ֆիտան:
Հընի է կոտոյ, քապղուր բաթըրան.
Կորիւն է Գոմսէ խըսապայ
Տը մերէ տը մուսուլմանէ:

Սմբատ է Մուշի է քրան է տը քուվիան
Ըվ քոյ ժորտայ հըլայ տըքէ
Յարուք է սիսաու է
Կամիտէ սըր գիւնտան.
Նը ոլա քաթըպ Միսիթար է տը Յալիման:
Ըկըր դու պըրսայ Գէորգ Զաուշ տըքի,
Նա ու տըկ է վի բալապու է
Սիևօք ու կոնֆոէս է տը եւրոպայ.
Ժեռա դըպէժըն օրտու բօգանը:

Անդրանիկ փաշայ դումանտարէ հըմնան,
Ժէ սըպէ հըբա էվարէ կուշտընէ
Զար Միլազըմ դու սըդ ըզկըր է Սուլթանէ
Փան ստանտըն է սըդ ու պէնն մաւիզըրէ տը դըվուք է:

Խումբը կ'անցնի Վարդենիսի շըջանը, ուր իրենց առաջին կեդ-
րոնը կ'ըլլայ Ղարս դիւղը: Հոն Անդրանիկի եւ Գէորգի միջեւ հարց
կը դառնայ Մշեցի ճալոյի Նազարը, զոր միասին էին բերած Բերդա-
կէն, եւ կը ճանչնային իրրեւ Սերոբի մատնիչ: Սերոբի սպանութե-

նէն ետք, Նազար փախած էր Կովկաս, ուր Ֆետայիներու հանդիպումէն ազատելու համար վերադարձեր էր Թիւրքիա, ապաստանելով իր բարեկամին՝ ոստիկանապետ Հիւսնիի պաշտպանութեան: Միւս կողմէ, զերծ մնալու համար Ֆետայիներուն ահաբեկումէն, Հրայրի խոստացեր էր սպաննել ոստիկանապետ Հիւսնին: Բայց ամէն առթիւ ալ, պատրուակ մը դտեր էր իր խոստումը դրժելու, միեւնոյն ժամանակ, իբր սուրհանդակ կարգ մը ծառայութիւններ մատուցանելով Ֆետայիներուն:

Կ'որոշուի մահավճիռ տալ Նազարին եւ գործադրութիւնը կը յանձնուի Սմբատին, որ ահաբեկելէ ետք մատնիչը, դիակը կը թաղեն Ղարս գիւղի եզերքը: Բաղէշի կուսակալը եւ Ֆերիք պէյը շուարած մնացեր էին ըսելով. «Եարաք Ալլահ, ներէ՞ կէթտիլար շու Ֆետայիլար» (Ո՞վ Աստուած, արդեօք ո՞ւր դացին այս Ֆետայիները):

Կառավարութեան հետապնդումը աւելի կը խստանայ. իսկ խումբին ռազմամթերքի պաշարը կը սպառէր: Կռիւ շարունակել անկարելի է: Անդրանիկ եւ Գէորգ Չաւուշ հաւաքելով վերջին զինուորները. ճամբայ կ'ելլեն դէպի Ախլաթ, (Պուրակ) կը հանդիպին Սեպուհին, որ երկու ամիսէ ի վեր կը մնար հոն, ապաքինած էր արդէն Սասունի մէջ ստացած իր վէրքերէն եւ եռանդուն կերպով կազմակերպչական աշխատանքներ կը տանէր: Սեպուհ նախ խիստ պատիժներով արմատախիլ կ'ընէ Սերոբի եւ անոր զինակիցներու դաւաճանները, սարսափ տարածելով շրջապատին մէջ:


Կառավարութիւնը աչալուրջ կերպով անցած էր գործի, Սասունի եւ Տարօնի կողմերը լրտեսներ ձգելով, ուզելով դիտնալ Ֆետայիներու վայրն ու թաքստոցը: Խումբի քանի մը օրուան բացակայութիւնը Դաշտի շրջանին մէջ կամ շրջակայքը եւ խումբի հետքը գտնելու համար կատարուած ապարդիւն խուզարկութիւնները կառավարութեան ուշադրութիւնը աւելի քրքրած էին:

12 Օգոստոսին խումբը անվտանգ կը հասնի Շամիրամ գիւղը, որուն կողքին կան սրածայր չորս բլուրներ, որոնցմէ աւելի հեռու կը դանուի հինգերորդ բլուր մը, որ ամենէն բարձրն է եւ որ դէպի Նեմրութ կը նայի:

Խումբը քանի մը օր պիտի մնար գիւղը, մինչեւ որ Վանէն ըստասուած կարգ մը տեղեկութիւններ հասնէին Անդրանիկին եւ Գէորգին, որպէսզի կարենային շարունակել իրենց ճամբան: Անհրաժեշտ զգուշութիւններ ձեռք կ'առնուին գիւղը եզերող կարեւոր դիրքերու պահպանութիւնը կը կազմակերպուի, եւ հաւանական կռուի ընթացքին անմիջապէս դրաւելի բոլոր դիրքերը, մասնաւորաբար բարձրագոյն բլուրը դրաւելու համար կարգադրութիւններ կ'ըլլան:

Կծուակի Աղային՝ Ալի պէկին լուր կու տան, որ Սերոբ Աղբիւրի մատնիչները կախող Սեպուհը իր ընկերներով հասած է Շամիրամ գիւղը: Ան չէր իմացած, որ Գէորգ Չաւուշ ու Անդրանիկն ալ հոն էին, մատնիչներու վրէժը լուծելու համար: Ալի պէկ իր հետ կ'առնէ 150






Թիւրք գինուորներ ու կը դիմէ դէպի Շամիրամ, Սեպուհը բռնելու : Առաջին գիշերը խումբը կ'անցընէ հանդարտ օր մը : Սակայն առաւօտ կանուխ լուր կը ստանան, թէ գիւղը պաշարուած է : Ամէն ոք հրահանգ կը ստանայ որոշուած դիրքերը գրաւելու : Թշնամին բազմաթիւ ուժերով հասած էր գիւղը, եւ իր առաջին դործը պիտի ըլլար գրաւել գիւղի տիրապետող բարձունքները եւ Նեմրութը, կտրելու համար խումբի փախուստի ճամբան : Երբ Ալի պէկի գալու լուրը կը հասնի Անդրանիկին ու Գէորգին, հրաման կուտան անմիջապէս պատրաստ ըլլալ կռիւի . «Իսկ Աստուրը, (*) Սողոն եւ փոքրիկ Պետրոսը կը վազեն Ալի պէկի դիմաց եւ զայն իրեններուն հետ գնդակներու առջեւ ձգած՝ կը հանեն Նեմրութ լեռան թեւերու վրայ : Եկեղեցիի կտուրին վրայ եւ գիւղի չորս կողմը կը պատրաստուին դիրքեր, գիւղի հիւսիսային կողմը, բլուրներու վրայ, ուր կան հին բերդի աւերակներ, դիրք կը բռնէ Գէորգ Զաւուշ 10-11 ընկերներով, Մուրատ կը բռնէ երկրորդ դիրքը, Անդրանիկը՝ երրորդ, իսկ Սեպուհը՝ չորրորդ : Եկեղեցիի կտուրը կը բարձրանան Սողոն, Օհաննէսը, Եղոն եւ քանի մը ընկերներ, Սմբատը եւ Մոսոն բռնած էին ջուրի վերեւ, որպէսզի թշնամիներ չկարողանային օգտուիլ ջրէն : Դրօշակը կը ծածանուէր :

«Նախ քան կռիւ սկսիլը Սմբատ գիւղէն կը հաւաքէ ուտելու պաշար, բոլոր կուժերը կը հաւաքէ, ջրով կը լեցնէ եւ կանանց ու աղջիկներու ուսերով դիրքերը կը փոխադրէ . մասնաւորապէս աչքի կ'ընար այս վերջիններու ոգեւորուած տրամադրութիւնը . մէկ կողմէն արագ փոխադրութիւն կ'ընէին, միւս կողմէն ասկէ անկէ ձայն կուտային . «դէ՛, տղերք՝ ձեր հոգուն մատաղ, մէկ էս քրտուն, Ալի պէկին լաւ խրատ տուէք, որ կեանքի մէջ չմոռնայ» : Ամէն կողմերէ օգնութիւն հասնող թիւրքերու եւ քիւրտերու բազմութիւնը երթալով կ'աճէր . սալաւաթ կարդալով առաջ կը խաղար : Թշնամիներ գլխաւորապէս իրենց ուշադրութիւնը դարձուցած էին ջուրի վրայ, ուր Սմբատ կը կռուէր ընկերներով» :

Սմբատ ոգեւին կը կռուէր, ջուրը պաշտպանելու համար, որովհետեւ եթէ թշնամիին ձեռքն անցնէր, Փետայիները պարտաւորուած՝ պիտի չդիմանային առանց ջուրի եւ ստիպուած պիտի ըլլային նահանջելու : «Ես (**), — կ'ըսէ Սմբատ, — մէկ քանի ընկերներով, որոնց մէջ Ալիջանցի Միսաքն ու Հաւրանցի Գէորգը, կը պաշտպանէինք Աղբիւրի դիրքը : Անդրանիկի կարգադրութեամբ, յետոյ ինծի միացաւ նաեւ Խասգիւղի Մոսոն : Իսկ Սերոբի հին գինուորներէն Զուլումաթի ինկած էր Եկեղեցին : Ծակատադրական կռիւը կը մղուէր բլուրներուն շուրջ, ուր կեդրոնացած էր թրքական ուժին զանգուածը, որ տեսնելով զանոնք խլելու անկարելիութիւնը՝ կը սկսէր յարձակողականի ուրիշ ուղղութեամբ : Լուռ կը յառաջանայ : Կը հրահանգուէր

(*) Սասուն Ի Մուշի կռիւները, էջ 44:
 (**) Սմբատի յուշերը էջ 282:

միեւնոյն ատեն կորովի կերպով դիմադրել: Մէկ քանի հոգի ալ կու գային մեր կողքին կռուելու: Կռիւը այս անգամ կեդրոնացած էր մեր դիրքին եւ եկեղեցիին միջեւ: Խումբէս երկու հոգի, Միսաքը աչքէն, Գէորգն ալ կռնակէն արդէն զարնուած էին: Անոնց փոխադրութեան հոգն ալ կը ճնշէր զիս, մինչ թշնամին արադօրէն կը մօտենար: Արդէն դէմ առ դէմ, հայհուէնք կը փոխանակէինք: Թիւրքերը կը ջանային օգտուելով հողին անհարթութենէն, սողալով կամ արագ ուտումով, աւելի մօտենալ աղբիւրին: Բայց շնորհիւ մեր անթերի նշանառութեան, զիրենք դամած էինք իրենց տեղերը: Ոչ ոք իրենցմէ կը համարձակէր քայլ մը յառաջանալ: Գլուխը վեր առնողը, առ յաւէտ կը տապալէր: Դէմ առ դէմ այս մահուան խաղը տեւեց աւելի քան եր-



Խլաթի Սոխորդ գիւղի աղբիւրը (Աղբիւր Սերոբի ծննդավայրը)
Հեռուն՝ Նեմրուքի գագաթը

կու ժամ: Բլուրներէն կը տեսնէին անշուշտ մեր դիրքին ճգնաժամային կացութիւնը, բայց չէին կրնար օգնութեան դալ, առանց երկու կրակի մէջ մնալու: Մէկ քանի փորձեր կատարեր էին, սակայն անյաշող: Միայն Լեւոնը յաջողեր էր տոպրակ մը փամփուշտ շալկած՝ հասնիլ մեր քով, երբ մեր ռազմանիւթը սպառուելու վրայ էր»:

Գէորդ Չաւուշ, իր դիրքը լաւ մը պաշտպանելէ ետք, երբ կը տեսնէ թէ թշնամին կ'ուղղուի դէպի Սմբատի դիրքը, խումբէն մաս մը իր հետ (7 հոգի) առած կ'անցնի այդ կողմը: Սկսած էր կատաղի

յարձակում Գէորգի կողմէ՝ թիւով ու նիւթով գերակշիռ թշնամիի մը դէմ, որ յոգնութեան ու վախի նշաններ կը մատնէր եւ շատ չանցած, թշնամին կը նահանջէր գրեթէ խուճապահար: Թշնամիին նահանջը թերեւս անխոհեմ յանդգնութիւն մը կը ներշնչէր Գէորգին. բայց անգամ մը ոտքի ելլելէ եւ մէկ քանի քայլ առաջ նետուելէ ետք, կանգ առնել ալ չէին ուզեր Ֆետայիները:

Շամիրամի գիւղացիները մեծ անձնագոհութիւն երեւան կը բերեն. այդ օրը, գնդակներու տարափին տակ, անոնց հարս ու կլիները հաց ու թան կը կրեն կռուող Ֆետայիներուն:

Պիթլիսէն թշնամիին նոր ուժեր օգնութեան կը հասնին, բայց մութը իջնելու վրայ էր: Յաջորդաբար եւ արագօրէն թշնամին վտարելով իր դիրքերէն, հասեր էին ձորը, ուր երեսունի չափ զինուորներու դիակները փռուեր էին: Անդրանիկ եւ Գէորգ կ'որոշեն հաւաքուիլ բլուրը, եւ որոշուած ժամուն նահանջել, մութէն օգտուելով, Գէորգ Չաւուշ ուսմբ մը կը պայթեցնէ իբր նշան հաւաքման:

Խօսք տանք Պրն. Արշակ Սաֆրաստեանի(*).

«Պատմական այդ անհաւասար հերոսամարտին անձամբ ականատես լինելէ յետոյ, անգլիական հիւպատոսի հետ Սասունէն Բաղէշ վերադարձայ 1904 Յուլիս 16-ին, երբ արդէն խաղաղած կը թուէր իրաց դրութիւնը:

«Օգոստոս 11-ի Չորեքշաբթի առաւօտ լուր հասաւ ինձ, որ ակեղ կռիւ վերսկսած էր թիւրք հեծելազօրքի եւ հայ Ֆետայիներու միջեւ՝ Շամիրամ գիւղին մէջ, եւ թէ Բաղէշ քաղաքը գտնուող բոլոր կանոնաւոր զօրքերը, ժանտարմաները եւ անադին թիւով քիւրտեր պիտի փութային դէպի Շամիրամ՝ օգնելու հեծելազօրքին: Անգլիական հիւպատոսը օրերէ ի վեր կը տառապէր տենդէ եւ ի վիճակի չէր ձի նստելու: Դեռ Մուշէն վերադարձած չէին Բաղէշի ուս հիւպատոս Շիրքով եւ Ֆրանսական հիւպատոս Ռոպէն:

«Հրահանգ կար Պոլսոյ անգլիական դեսպանէն՝ հայ-թրքական բոլոր բախումներուն ներկայ լինել հնարաւորութեան չափով արագ, քննել իրերը տեղին վրայ եւ հեռագրել դէպքը ի գիտութիւն:

«Անգլիական հիւպատոսը՝ Մր. Հեթքըթ առաջարկեց, որ անմիջապէս մեկնիմ Շամիրամ, գնամ ուղղակի վալիին եւ զինուորական հրամանատարին քով եւ հետեւիմ անցքերին: Անսահման ուրախութիւն զգացի այս առիթին համար: Օրէ օր արձանագրած եմ օրագրութեան մէջ պատանեկան զգացումով եւ բանաստեղծութեամբ նկարագրած եմ այդ դէպքը: Բայց այստեղ կը բաւականանամ մի ամփոփ պատմական համարատուութեամբ:

(*) Այդ քուականին անգլիական հիւպատոսարանին քարգմանի իր հանգամանքով, առիթը կ'ունենար յախի անձամբ բնուրփիւններ կատարելու հայկական գիւղերուն մէջ:

«Շամիրամ հայաբնակ գիւղ էր Նեմրութի ստորոտը, Վանայ ծովու նաւահանգիստ Դատուանէն ժամ մը հեռու, դէպի արեւմուտք, իսկ Բաղէշ քաղաքէն մօտ չորս ժամ հեռու հասարակ գնացքով դէպի հիւսիս:

«Վերցուցի երկու լաւ ձիեր եւ ուղեկցութեամբ հիւպատոսարանի գինուած քաւազին (թիւրք) եւ մէկ կառավարական ոստիկանի՝ մեկնեցայ անմիջապէս: Չորս ժամուան ճանապարհը կտրեցի երկու ժամէն. կարելի էր գնալ աւելի արագ, սակայն ճանապարհը բռնուած էր գինուորական սայլերով, աստ անդ շարժող կանոնաւոր զօրքերով եւ մանաւանդ անկիրթ քիւրտ խուժանով: Ճանապարհին կը գտնուին Պաշ-խան եւ Ալամէկ-խան, ուրկէ դէպի Շամիրամ մեկնած էին արդէն պահակագունդը: Շեղելով մի քիչ դէպի արեւմուտք՝ բռնեցի Ջրհոր հայ գիւղի ճամբան, ուրկէ արդէն յստակօրէն լսելի էր հրացանածգութիւնը: Շատ տաք եւ փոշելից Օգոստոսի օր էր: «Ուղտու քարեր» կոչուող հեղեղատն ի վեր քշեցի սրընթաց, թէեւ թիւրք հեծելազօրքը փորձեց համոզել զիս, որ վտանգաւոր էր յառաջանալ այդ ճամբէն, տեղացող գնդակների սուլոցէն: Մօտեցայ թիւրք բանակատեղին եւ վալիի թիկնապահը զիս առաջնորդեց ուղղակի կուսակալ Ֆերիտ փաշայի վրանը, զոր կանգնած էին բարձունքի մը ետեւ՝ Շամիրամէն մէկ քառորդ ժամ հեռու:

«Դեռ բոլորտիքս չնայած՝ վալին սկսաւ շատ լկտի փոլիթիքոսի բռուերով հայհոյել՝ հայ էշփիաներ, չափքըններ (աւազակներ, սրիկաներ) եւայլն, որոնք արդէն սպաննած եւ վիրաւորած էին բազմաթիւ զօրքեր եւ ձիաւորներ:

«Այժմ Շամիրամի մէջ ինքզինքս դէմ յանդիման կը գտնէի Ֆերիտ փաշային, ինչպէս իրեն հանդիպած էի Սասունի եւ Մշոյ մէջ, հայ էշփիաներու գնդակներու տեղատարափին տակ:

«Դուրս եկայ վրանի տակէն՝ քիչ մը նայելու բոլորտիքը. պայծառ արեւին տակ անգամ շատ քիչ բան կարելի է տեսնել: Հեծելազօրքի շարժումներէն կը բարձրանար փոշիի խաւ մը: Ախլաթէն հասած նշանաւոր դազան չերքէզ Ալի Պէյ, 400 սուլվարիներով շրջապատած էր Շամիրամը, Նեմրութի փէշերէն եւ Գրգուռի ստորոտներէն: Հարաւային դիրքերը բռնած էին կանոնաւոր զօրքը, ժանտարմաներ, ռիւրտեր, եւայլն, ընդամէնը մօտ երեք հազար օսմանցի՝ մօտ 70 հայ Ֆետայիներու դէմ, որոնք օր մը առաջ դալով Տարօնի դաշտէն իջած էին Շամիրամ գիւղը՝ յաջորդ օրը Դատուանէն նաւ առնելու դէպի Վան: Հայ հերոսներու գլխաւորներն էին՝ յաւերժ անմահ Անդրանիկը, Գէորգը, Սմբատը, Սեպուհը, Առաքել Աղան եւայլն:

«Վալին ինծի հաւաստեց, որ էշփիաները Բողոքականաց եկեղեցիին վրայ բարձրացուցած էին հայկական դրօշակ, դուցէ այն պատրուակ մըն էր՝ ռմբակոծելու համար բողոքականներու ժողովարանը, որ իսկապէս ալ ամենէն շատ վնասուած շէնքը դուրս եկաւ: Պէտք է ըսել, որ թիւրքերը արձակեցին փոքրիկ թնդանօթի մի քանի

հարուածներ միայն : Կռիւր մղուեցաւ հրացանի անդուլ եւ անդադրում կրակով :

«Վալիէն խէր չտեսայ, հարցուցի Բաղէշի զինուորական հրամանատար միրալայ Սայիտ Պէյի վրանը : Սայիտ Պէյը հին տիպի հաւատարիմ թիւրք զինուորական էր, վաթսուներ անց, հաստ ու կլոր, բայց կորովի եւ բարի թիւրք մը, ինձ մասնաւոր պատիւ կ'ընէր, որովհետեւ կ'օգնէի ինձ տարեկից իր զաւկին սորվելու Փրանսերէն :

«Սայիտ Պէյը վրանը չէր, իր թիկնապահը խնդրեց նստիլ մինչեւ որ դար ան : Բոպէներ կային երբ կրակը երկուստեք կ'առնէր ձեռն առ ձեռն կռուի սաստկութիւնը : Քրտնաթոր ու փոշոտ ներս մտաւ Սայիտ Պէյը, բարեւեց, ապսպրեց մածուն երկուքիս համար : Սիկարէթը վառելուն պէս հրացանաձգութիւնը սաստկացաւ անսովոր շափով : Այդ տպաւորութեան տակ ահա Սայիտ Պէյի խօսքերը .—

«Պալ քերաթալար արսլան կիպի քավկա էտիյորլար» (այս ստահակները — հայ Ֆետայիները — առիւծի պէս կը կռուին) : Կ'երգեն, կը թռվռան եւ մեզ կը զարնեն անվրէպ : Ափսոս, որ մեր տէօվլէթը (կառավարութիւնը) այսպիսի ճահիլները ճաշիլ չի գիտեր, փոխանակ մեր կողմը շահելու այսպիսի քաջ մարդիկ, մենք անոնք մեր դէմ կը դարձնենք...» :

«Ամէն հիգ բոպէին թիկնապահը հրամանատարին կը բերէր մատիտով գրուած թուղթի կտորներ : Խնդրեցի իրմէ ըսել, թէ ի՞նչ գրուած էր թուղթին վրայ : Դէմքը խոժոռած, երեսը շիկնոտ, զգացմունքով ըսաւ, որ մէկ հեծելազօրք եւս սպաննուած էր եւ երկուք ալ վիրաւորուած :

«Խնդրեցի Սայիտ Պէյին անցնիլ բլուրի միւս (Շամիրամ տանող) կողմը, քիչ մը մօտէն դիտելու կռիւր : Ան ըսաւ, որ կար իրական վտանգ, որովհետեւ զնդակը ոչ ոք չի ճանչնար :

«Իմ քաւազի հետ յառաջացայ դէպի առուի միջով մօտ երեքչորս վայրկեան եւ պառկեցայ աւազին վրայ : Արդէն այնքան մօտ էի, որ յստակօրէն կը լսէի Շամիրամի եկեղեցու տանիքէն կրակող հայ հերոսներու խօսքերը՝ եկեղեցիէն վար դիրք բռնողներու հետ, քիւրտերու եւ թիւրք սպաններու հետ անոնց փոխանակած կատակներն ու հեղնանքը : Դժբախտաբար շատ հեռուն կարելի չէր տեսնել :

«Վերադարձայ վալի Ֆերիտ պէյի մօտ, իրեն հաղորդեցի հիւպատոսին յոյսը, որ անմեղ ժողովուրդը պիտի պաշտպանուի կամոնաւոր զօրքէն : Եւ իսկապէս կանոնաւոր զօրքը լաւ պահպանեց գիւղը : Սպաննուեցաւ միմիայն պառաւ կին մը, որ անխոհեմաբար դուրս եկած էր ջուր առնելու : Գիւղին մէջ ոեւէ կողոպուտ չեղաւ եւ երբ քիւրտերը փորձած էին մօտակայ Զրհոր գիւղէն ոչխարներ գողնալ հեծելազօրքը խարազանած եւ փախցուցած էր աւազակները :

«Յետ միջօրէին վերադարձայ քաղաք :

«Դեռ մինչեւ այսօր ականջիս կը հնչէ թիւրք պարկեշտ զինուորական Սայիտ պէյի վճիռը՝ հայ հերոսներու մասին .

— «Պու քերաքալար արսլան կիպի կավկա էտիյորլար» :

«Այդ օրերուն , իսկապէս հայ տղաքը կռուեցան առիւծներու պէս» :

Խումբը համախմբուած էր . Գէորգի ազգանշանի վրայ ճամբայ ելաւ դէպի Ջրհոր գիւղը , անկից ճեղքելով թշնամիի շղթան , անցան դէպի Դատուան , որուն բնակչութիւնը , Շամիրամ գիւղի փախստականներուն հետ նաւերու մէջ ապաստանած էին կոտորածէ մը փրկուելու նախազգուշութեամբ : Ֆետայիները կը հասկնան , որ ափին մօտ գտնուող նաւակները հայերով լեցուած են , անոնցմէ մէկ քանին լողալով կը հասնին նաւակներուն եւ ափ կը բերեն զանոնք : Ֆետայիները նաւակներու մէջ նստելով եւ Դատուանցի Դանիէլի աջակցութեամբ ծովը կը քաշուին :

Զօրքերը ամէն ճանապարհ բռնած էին ու վստահ էին թէ Ֆետայիները պիտի չկարենան նաւակներ գտնել փրկուելու համար , բայց երբ կը տեսնեն որ Ֆետայիները նաւակներու վրայ են ու իրենց գրնդակներէն հեռու , կը սպասեն որ անոնք սովամահ ըլլան , քանի որ իրենց հետ պաշար չունին : Բարեբախտաբար , Ֆետայիները Վանէն եկող թրքական նաւ մը կը բռնեն , որուն վրայ կը գտնեն սիսեռ ու չամիչ : Ճամբորդութիւնը կը տեւէ երկու օր : Այդ երկու օրուան ընթացքին , խումբին ուտելիքը եղած է երեք պարկ սիսեռ : Աղթամար չհասած , դուրս կու գան Տէվէ Պոյուն եւ քիչ մը կը հանգստանան : Այնտեղ կը բռնեն նաեւ ուրիշ նաւ մը , որուն մէջ կը գտնուէին քանի մը քիւրտեր , հետեւեալ օրը խումբը ճամբայ կ'ելլէ երեք նաւերով , եւ Յուլիս 14-ին կը հասնին Աղթամար :

Երբ Սասունի ռազմիկները Աղթամար անցան , կառավարութիւնը իմացաւ ու քանի մը հարիւր զինուորներով պաշարեց կղզին , ցամաքէն ու ծովէն : Պաշարումը տեւեց քանի մը օր . թնդանօթները ցամաքէն կը ռմբակոծէին Ֆետայիներուն դիրքերը , իսկ զինուորները նաւերով կը յառաջանային՝ զանոնք ձերբակալելու մտադրութեամբ :

Առաջին օրը , առաւօտեան մօտ ժամը 10-ին , թիւրք զօրքը կրակ կը բանայ Ֆետայիներուն վրայ , որոնք Անդրանիկի կարդադրութեամբ , կը տնկեն Սասունի կռուին կարմիր դրօշակը : Խումբը շուտով կը մօտենայ ծովափին եւ թշնամիին ցոյց կու տայ որ Ֆետային դիտէ նաեւ կռուիլ նաւերու դէմ , ինչպէս սարերու վրայ : Թնդանօթի ահագազդորդ ռումբերու դէմ՝ Ֆետային կը պատասխանէ իր մոսինի գնդակներու տարափով : Թշնամին , տեսնելով որ իր ռումբերը չեն ծառայեր իր նպատակին՝ ինչպէս հակառակորդի գնդակները , մէկերկու ժամ կռուելէ ետք՝ ստիպուած կ'ըլլայ նահանջել , աւելի մեծ պատրաստութեամբ յարձակելու համար :

Քանի մը ժամ անցած՝ ահագին ոյժերով եւ նաւակներու վրայ աւազի տոպրակներով պատսպարուած , կրկին կը ռմբակոծեն Ֆետայիներու դիրքերը : Այս անգամ , կռիւը կը տեւէ մինչեւ երեկոյ : Նոյն գիշերը , Աղթամարի Դանիէլ վարդապետը խիստ ստիպողական նա-

մակ կը գրէ Իշխանին եւ Կոմսին, թէ «այս գիշերը կղզի հասաւ Սասունէն նահանջող Անդրանիկը, հարիւրէ աւելի մարտիկներով: Կը խնդրեմ շտապել կղզի՝ կարգադրութիւններ ընելու համար»:

Լեռնապարէն կու գայ Իշխանը, իսկ Շամէն՝ Կոմսը, իրենց խումբերով: Այսպիսով բաւականին պատկառելի ոյժ մը կը կեդրոնանայ փոքրիկ կղզիին վրայ:

Այժմ խօսք տանք Կոմսին.

«1904-ի ամրան սկիզբը, երբ մենք զբաղուած էինք (եւ գրեթէ լրացուցած) Վարդգէսի բանտի տակէն ներքնուղիի պատրաստութեամբ՝ զինքը եւ իր ընկերները փախցնելու համար, որմէ վերջ որոշած էինք արձագանգ տալ Սասնոյ եւ Մշոյ դաշտի կռիւներուն, օր մը Աղթամարի մեր գաղտնի գործակալէն գիր մը կը ստանամ թէ՛ Անդրանիկը, եթէ չեմ սխալիր, 130 հոգիի հետ, հասեր է Աղթամար կղզին եւ զիս կղզի կը հրաւիրէ... Պարզ էր ուրեմն, որ Սասունը պարպուած էր եւ մերինները փամփուշտնին սպառելով հեռացած էին:

«Այդ ժամանակ քովս կը գտնուէր Քեռին(*), որ ուզեց ընկերանալ ինձի: Ալէսին եւ Ծուռ Դաւոյին հետերնիս առած, իրիկնամուտին ձիերով սրարշաւ մեկնեցինք Ոստանի կռնակով, դէպի Խորգոմի ծովեզերք, ուր պայմանաւորուած էինք վանքի նաւակը առնելու:

«Գիշերուան կէսին անց էր, երբ մօտեցանք ափին եւ պայմանական խարոյկը վառեցինք:

«Մօտ երկու ժամ սպասելէ ետք, առինք թիերու ճողփիւնի ձայներ, որոնք կը ձեղքէին խաղաղ ծովը եւ քիչ մը վերջ նշմարեցինք ուրուազիծը առագաստանաւին: Զիերը վերադարձուցինք Խորգոմ, բոսկեցանք եւ զէնքերը ուսերնուս մօտեցանք նաւին, ուր 5—6 ստուերներ ձեռքերը երկնցուցին եւ մեզի նաւը առին: Սերաստացի Մուրատն էր իր զինուորներով: Անաղմուկ կը թիավարէին դէպի կղզին. Մուրատը հոգեկան խոր թախիծով եւ մերթ վիրաւոր առիւծի անզօր մոնչիւնով մեզի կը պատմէր իրենց կռիւներու ու տառապանքներու մասին...

«Արշալոյսը բացուած չէր դեռ, երբ մեր առագաստանաւը մօտեցաւ կղզիի աւազուտ ափին:

«Ամիսներ տեւող կատաղի ու յուսահատ կռիւներու մէջէն, հրկիզուող գիւղերու բոցերէն ելած եւ իրենց հարիւրաւոր հարստացաներու մահերուն ականատես՝ ահարկու, բղկտուած, բայց սպառազէն բազմութիւն մըն էր առջեւ՝ մութին մէջ՝ սեղմուած սեւ ժայռերուն, ձուլուած անոնց հետ:

«Երբ կը համբուրուէի արիւնի ու արցունքի հոտով այդ մարդ-

(*) Սասունը դեռ կը դիմանար. Քեռին, Սերաստացի Մուրատը, Զուլումաքը, Մուկացի Գրիգորը, Վանեցի Գրիգորը, Մամսն եւ Քեֆէրիա թիւրք Զառուշը եւ Բանի մը ընկերներ անցան վան, բայց Մուրատ վերադարձաւ: Ծ. Խ.

կանց հետ. կրակ ու արևն կը հոսէր կարծես անոնց աչքերէն, մարդիկ էին, որոնք կորցնելէ ետք իրենց սրբազան երկիրը, կ'ուզէին սր քար-քարի վրայ չմնայ այլեւս այս լիրը աշխարհին մէջ...

«Մահուան հանդէպ արհամարհանք ունէին ամէնքը, խոր վիշտ ու կատաղութիւն կը նշմարէի անոնց դէմքերուն՝ հրարուխէն ժայթքած լաւայի գոյնով ու ջերմով, կատաղութիւն ու զայրոյթ իրենց դէմ, որ դեռ կ'ապրին եւ ամէնքի դէմ, որ չեն մեռած...»

«Իշխանն ալ Լեռնապարէն կանչած էին, ինձմէ առաջ հասած էր:

«Անդրանիկն էր առջեւ, մտահոգ ու լուռ. լռութիւն, որ ամէն բան մէկէն կ'ըսէր մեզի — կորսնցուցած կռիւր, աւերակ երկիր, կատորուած հարազատներ: Կշտամբանք քեզի, որ չես հասած օգնութեան...»

«Կը զգայի, որ այդ մարդիկը պէտք է որ խօսին, կշտամբեն, գոռան, հայհոյեն, որպէսզի իրենց վիշտէն քիչ մը մեզի տալու դոհունակութիւնը ստանան. այդքանը պէ՛տք էր տալ անոնց...»

«Առաւօտ է: Ահա Մուրատը պողպատէ շարժական արձան մը, Սեպուհը իր պարթեւ հասակով եւ դաժան նայուածքովը. Աւոն՝ այնքան մեղամաղձոտ, հեզ ու բարի աչքերով, որ սակայն. իր մէջ վրէժի անշիջելի կրակը կը պահէր. Կայծակ Առաքելը՝ միակը, որ իր հեղնանքը, կատակն ու հայհոյանքը բերնին՝ աջ ու ձախ կը ցրուէր. Սմբատը, Սերգօն... ամէնքը բոլորուած մեծ շրջանակով մը գետնին վրայ, մաշուած փամփշտակալներով, հրացաններով ու ատրճանակներով բեռնաւորուած՝ մեծ մասամբ պատառոտուն ու ծայրահեղօրէն յոգնած:

«Զինուորական խորհուրդ է: Անդրանիկը, Իշխանը եւ ես նրստած ենք խոշոր ծառի մը բունին տակ, շրջապատուած մարտիկներով: Կը սպասենք՝ որ Անդրանիկը խօսի, մինչդեռ ան այդ միջոցին գլուխը բարձրացուցած, բազմութեան մէջ մէկը կը փնտռէ, վերջապէս կը ձայնէ. «Գէորգ, լա՛օ՛, ո՞ւր ես մնացեր, առաջ եկուր, էրեսդ տեսնանք»... Կարճահասակ, նիհար, գլուխը բաց մարդու մը ուղղուած էր այս հրաւերը, որ անտարբեր նստած գետնին՝ մեզ կը դիտէր, «հոտի աղէկ է», ըսաւ մեզմ ձայնով մը: Անդրանիկը ելաւ, ձեռքէն բռնեց եւ գրեթէ բռնի, բերաւ քովս նստեցուց: Գէորգ Չաւուշն էր, Մշոյ առիւծը, հանդարտ, կշռուած շարժումներով, ինքնամփոփ եւ խոնարհ ու միշտ լուռ:

«Կը քննուէր 1. Դուրան-Բարձրաւանդակի վիճակը եւ ընելիքը այսուհետեւ, 2. նոր շարժումներ պէ՞տք է առաջացնել, թէ ոչ, 3. խումբին հետագայ ընելիքները:

«Բոլորը այն կարծիքէն էին, որ Դուրան-Բարձրաւանդակը պէտք չէ լքել բոլորովին, թողուլ՝ որ ժողովուրդը յուսալքուի, նոր շարժումներէ խուսափիլ, բայց ոյժեր պէտք է պահել հոն, ի հարկին



PHOTO. ABEL PARIS

ԶՕՐ . ԱՆԴՐԱՆԻԿ

յարձակումներէ պաշտպանելու ժողովուրդը : Պէտք է պատրաստուիլ նաեւ Վասպուրականի լեռնային շղթաներու վրայ՝ հաւանական շարժումներու համար . խումբին մնացեալ մասը պէտք է Վանի վրայով անցնի Կովկաս :

«Ամենէն փափուկը Մուշ վերադարձող խումբին խնդիրն էր : Գիտակցաբար դէպի ստոյգ մահը մեկնելու որոշում էր այդ :

«Երկար, լուռ ու ծանր բոպէներ էին որոշում տուողներուն համար, ո՞վ կը համարձակէր իր ընկերոջը ըսելու «գնա՛ մեռնելու», առանց որ ինքը ընկերանար անոր . . .

«Որոշուեցաւ, որ Սեպուհը, Իշխանի հետ լեռ մեկնեն 20—25 հոգով, աչքի զարնող ոյժերը Մուշ վերադարձնել խոհեմութիւն չէր, անոնք ինձ հետ Վան պիտի գային Կովկաս մեկնելու, իսկ ո՞վ ուրեմն պիտի վերադառնար . . . Խիղճի երկար, երկար ու լուռ պայքար կար բոլորին մէջ : Ամէնքը, թեթեւնալու համար, կը ջանային բան մը ըսել : Մահէն ազատուած, նորէն եւ անմիջապէս մահուան երթալու տառապանքը կ'ապրէին ամէնքը : Երկիւղ չէր այդ, երբե՛ք, այլ սարսափ՝ նորէն տեսնելու, նորէն կրելու եւ մանաւանդ ապրելու անցուցած ահաւոր օրերը . . .

— Ի՞նչ ընել այժմ, թողուլ Տարօնը եւ հեռանալ վերջնականապէ՞ս . . . Ի՞նչպէս թողուլ ժողովուրդը անտէր ու խելակորոյս . չէ՞ որ մենք եղանք պատճառը անոր դժբախտութեան : Վերադառնալ, նոր կռի՞ւ բանալ՝ բեռնաւորուած Վասպուրականի ունեցած պաշարի ռազմամթերքով, թէ՞ Վասպուրականը եւս արձագանդէ այս անգամ . . . : Ի՞նչ կը մնայ մեր ժողովուրդէն, եթէ այդ քայլը առնենք . . . :

«Կցկտուր խոհեր՝ դառն եւ անիրական : Լիկուած խիղճը կը խօսէր անոնց բերնով . «Իմա՛լ քորկեմի Դուրանը, մըր ազգը, մըր նիժն ու պիժը տուշմընի ձեռքը, մըր երկիրը, մըր հողը» : Տիրապետող էր աղեկատուր այս ճիչը, ցաւազին այս հառաչը ամէնուն մօտ :

«Երկարօրէն, մերթ մեղմ, յաճախ բուռն ու կրքոտ, վիճաբանութիւնները կը շարունակուէին : Կը զգայի, որ իրենց մէջ անախորժ յարաբերութիւն ստեղծուած էր, նկատելի էր, որ թաքնուած եւ զրուպուած բան մը կար դուրանցիներու եւ դուրսէն եկած ոյժերու մէջ, որ կը ջանային չդրսելորել : Մուրատ, Սեպուհ եւ Աւետիս գուսպ էին եւ հաւասարակշռուած : Հաճին չէր թաքցներ իր ներքին զայրոյթը եւ մեղադրանքները եկուոր ոյժերու դէմ : Իշխանը եւ ես մեծ ճիգ գործ դրինք հանդարտեցնելու կիրքերը : Վէճերու ամբողջ տեւողութեան, քողարկուած ներքին տառապանքով, Գէորգ Չաւուշը եւ Կորիւնը լուռ ու սեւեռուն կը հետեւէին պոռթկացող ձայներուն :

«Ոչ ոք, սկիզբէն իսկ, հետեւելով առողջ բանականութեան, կը յանդգնէր կարծես քննադատութեամբ վերաբերելու վերադարձի հարցին, տարօնցի հայդուկը եւ տեղացի ղեկավարները կրնայի՞ն ներել այդ : Հարցը պէտք էր դնել վճռականօրէն : Դուրանցիները կը պա-



ԶՕՐ. ՍԵՊՈՒՀ

հանջէին, դուրսեցիները լուռ էին: Տիրող ծանր մթնոլորտը կրնայինք փարատել մենք՝ անկաշկանդ, իբրեւ խնդրէ եւ իրենց ներքին հաշիւներէ եւ նկատումներէ դուրս մաղիկ: Մեզ էին ուղղուած բոլորի հայեացքները...: Վայրկեանը շատ ծանր էր եւ փափուկ:

«Մենք խղեցինք անախորժ եւ երկար լռութիւնը: Իշխանը եւ ես, բարեբախտաբար, նոյնիմաստ տեսակէտներ ունէինք:

«Վերադառնալ նորէն եւ շարունակել կռիւները՝ ոչինչ պիտի աւելցնէ եւ չէր կրնար վերադարձնել մեր կորուստները, ժողովուրդի եւ դիւղացու մնացորդն ալ պիտի փճանար, որովհետեւ մեր ոյժերը եւ, մանաւանդ ռազմամթերքը սահմանափակ էին կարենալ արդիւնլու նոր աղէտը. ապարդիւն եւ վնասակար էր բորբոքել հրդեհը: Սակայն՝ անհրաժեշտ էր, որ ժողովուրդը չլքուի միայնակ եւ մնայ յուսալից՝ չկորսնցնելով իր հաւատն ու վստահութիւնը դէպի յեղափո-

խականները : Մարդիկ , որոնց հեղինակութիւնը մեծ էր ժողովրդին վրայ , փոքր խումբով մը պէտք է վերադառնային ժողովրդին մէջ , նպաստէին անոր համախմբման , տեղաւորման : Վերադարձող խումբին պէտք էր տալ լայն ռազմական եւ նիւթական օժանդակութիւն : Այս խումբը պէտք է խուսափէր նոր ընդհարումներէ եւ հեռու պահէր ինքզինքը կենդանի մնացած գիւղերէ : Այս էր մօտաւորապէս մեր առաջարկին իմաստը :

«Երկար եւ նոր տատանումներէ ետք՝ ընդունեցին մեր առաջարկը : Ովքե՞ր սակայն , պէտք է վերադառնային — այս ծանր հարցն էր դրուած . . . Երկար լռութիւն . հոգիներու մէջ հրաբուխ կար : Գէորգ Չաւուշ այդ վայրկեանին գլուխը բարձրացուց , դարձաւ դէպի զինակիցները եւ վճռական ու հանդարտ ձայնով մը ըսաւ :

— Ես կը դառնամ . . . : Ո՞ւր պիտի էրթամ , չըխօ Դուրանն է զիմ երկիրը , հոնի ծնուեր , հոնի պըտ մեռնեմ . . . ապա գլուխը կախեց , ժպտաց մեղաւոր ժպիտով մը , որ կարծես թողութիւն կը խընդրէր իր ընկերներէն՝ դէպի մահ երթալու իր որոշման համար :

«Եւ լռեց սանձազերծ յուզմունքէն :

Անհանգիստ շարժում մը սկսաւ հաւաքոյթին մէջ . կարծես ամէնքը նստած ըլլային փուշերու վրայ :

«Առաջին արձագանգը կորիւնէն եկաւ .

— Է՛ս լէ կը դառնամ Գէորգի հետ , ըսաւ ու կարմրած՝ Գէորգին նայեցաւ՝ կարծես լուռ հարցումով մը , թէ կ'ուզէ՞ր զինքը առնել . . .

«Ամէնքը նախապէս կը զգային արդէն , թէ միակ յարմար ոյժերը Գէորգն ու կորիւնն էին , որոնց հանդէպ ժողովուրդը պաշտամունք ունէր :

«Վերադառնալու պատրաստակամ զինուորներու հրմշտուքը սկսաւ .

— Է՛ս լէ , է՛ս լէ . . . հո՞րի տուն կը դառնաս , էս դաւաճա՞ն իմ , փի՞ճ իմ , որ չդառնամ :

«Անասելի գոռում գոչում ծայր տուաւ :

«Գէորգին եւ կորիւնին յանձնուեցաւ զինուորներու ընտրութիւնը : Դուրս մնացողները սգաւորի պէս դանդաղ հեռացան իրենց վիշտը ողբալու ժայռերուն մէջ . . .

«Ինչպէ՞ս հանգուրժէին դէպի ստոյգ մահ ղրկելու իրենց արեան ընկերները , իսկ իրենք հեռանային Վաթանէն եօթ սարերէն այն կողմ վարելու խաղաղ կեանք եւ մոռացութեան տալու «երկիրը» : Ամօթի եւ խղճահարութեան կսկծալի վայրկեաններ կ'ապրէին «անարժանները» : Ընտրութիւնը կատարուած էր , համակերպեցան տառապանքով : Շրջապատեցին մեկնող երջանիկները , դուրգուրացին , փաղաքուշ խօսքերու տակ քողարկելով իրենց պաղատանքը զիրենք երկչուտ , խուսափող եւ դաւաճան չհամարելու . . . :

«Պատրաստութիւններ տեսնուեցան : Մնացող ընկերները վե-



ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ (Կոմս)

րադարձողներու առջեւ թափեցին իրենց գէնքերը, փամփշտակալները, պայուսակները եւ դրպաններէն զմեւիներ, ծխախոտի տուփեր... Կը հանէին իրենց գլխու փուշիները, չմաշուած կօշիկները՝ մատուցանելու համար անդարձ մեկնողներուն: Երջանիկ էին անոնք, որոնց որեւէ իրը կ'առնէր մեկնողը... Ա՛ռ, ա՛ռ, ազի՛զ աղբէրս, դէտա լէ, էն լէ, առ, քրզի զուրպա՛ն...:

«Յերեկը Գէորգի եւ Կորիւնի հետ մինակնիս բարձրացանք «Րաֆֆիի Քարը»՝ ամենաբարձր գահավէժին գլուխը, ուր պիտի նկարէի երկու ղեկավարները: (Չաւուշի եւ Կորիւնի գոյութիւն ունեցող պատկերները, որ նկարեցի, միակն են, այլապէս այդ երկու չըքնաղ դէմքերը անձանօթ պիտի մնային): Ճամբան Գէորգը դարձաւ ինձի:

«Չը՞ս ի դայ էրթանք մըզի հետ... հորի՞ նստեր ես քաղաք... տես իմա՞լ անուշ էրկիր է մըր էրկիր...»:

«Այդ վայրկեանին ողբերգական տեսարանէ մը ապշեցանք: Նկարուելէ վերջ, երբ կը պարաստուէինք ծովուն վրայ կախուած գահավէժէն վանք իջնալ, յանկարծ, օդին մէջ երեւցաւ աղաւնիներու

Հեղինակը,
Զօրավար
Անդրանիկի
Յուշարձանի
Մօտ.
Ուշան գիւղ,
Հայաստան



խումբ մը, նոյն վայրկեանին օդը կտրող սուր ճիչով վերէն բազէ մը նետուեցաւ աղաւնիներու երամին մէջ, դժբախտ թռչունները սարսափէն կարծես քարացան օդին մէջ: Բազէն մէկ մէկը, մէկ միւսը կը կտցահարէր եւ, վերջապէս, գրոհով մը աղաւնիներէն մէկը առաւ ճանկերուն մէջ եւ աներեւութացաւ ժայռերուն տակ:

— Մըր ճակտի գիրը ըմլա է, — մըմնջաց Գէորգը տխրութեամբ՝ կարծես ինքնիրեն:

«Նոյն գիշերը, Գէորգ Զաւուշի եւ Կորիւնի 17 հոգիէ բաղկացած խումբը ծանր լուրթեան մէջ մօտեցաւ առազաստանաւին: Բոլորս, թաղման թափօրի մը տխրութեամբ, անոնց կը հետեւէինք:

«Մեկնող եւ մնացող հայդուկները՝ յուղմունքնին խեղդած՝ լուռ կը պլլուէին իրար. կատաղօրէն կը սեղմուէին կուրծքերը, եղ-

բայրական համբոյրներով կ'օծէին դէմքերը, ապա արձանացած՝ կը հետեւէին անոնց էջքին դէպի նաւը:

«Հէլա՛ւ ըրէք մըզի», «մի մոռնաք մըզի», «ուղուր եղնի», «Ֆետայու Աստուածը ձըզի քեռմակ եղնի»՝ ասիէն, մաղթանքներու այդ տարափը, յոյսի ցօղերու նման, կորով կուտային մեկնողներուն կամ՝ իրենց: Բաժանման տաժանքի թեթեւացման համար, բռնագրօսիկ սրամիտ կատակներ կ'ուղղէին անոնց»:

Գէորգ Զաւուշ կանչեց Իսօ Կորիւնը, եւ դառնալով ըսաւ. պատրաստ թող ըլլայ խումբը, կէս ժամէն պիտի մեկնինք, ապա դառնալով մնացած ընկերներուն՝ մնաք բարեւ ըսաւ. երբ ողջագուրուելու կարգը եկաւ Անդրանիկին, տասնեակ փոթորկալից տարիներու ամէն յուզումները, ամէն վրդովումները եւ բոլոր խռովքները ճաշակած այդ պողպատէ հոգին չկրցաւ սառնութեամբ դիմաւորել դառն բաժանումը եւ իր աչքերը թրջեցան արցունքներով: Բայց գաղափարը՝ աւելի թանկ ու սիրելի քան ընկերը, քան զէնքի անմոռանալի եղբայրը:

Գէորգ Զաւուշի Սասուն վերադառնալը կը նշանակէր դէպի մահ երթալ: Ո՞վ կրնար յաղթահարել անհամար դժուարութիւնները եւ այդ դժոխային պայմաններու մէջ շարունակել ուխտը՝ իր սիրած գաղափարին ու հայրենիքին համար:

Գէորգ, իր խումբին մէջ ընտրած էր հետեւեալները Գոմսոյ Իսօ Կորիւնը, Վարդենիսցի Մուրատը, Դրմերու Արամը եւ Մոսոն, Խաս գիւղացի Մոսոն, Մկրտն եւ Ասատուրը, Մեշիտի Աւետիսը, (յետոյ բռնուեցաւ), Մշեցի Եղոն (յետոյ բռնուեցաւ), Աւրանայ Արամը, Իսոն, եւ Մուրատը, էրչտերու Սարգիսը, Շամիրամցի Չրհոր Կարոն եւ Սողոն: Խումբը իջաւ ասի եւ նստելով առաջաստանաւերը խաղաղ շարժումով ուղղուեցաւ դէպի Ախլաթ, Վանայ ծովու կապոյտ ալիքներուն վրայ:

Փոքրիկ նաւակը երեք օրէն, փոթորկայոյց ծովու վրայով, կը հասնի Ախլաթ քաղաքի դիմացը, ուրկէ կրնային ասի ելլել եւ հասնիլ Կժկուակի մօտերը: Սակայն Զաւուշի խումբը կը նկատուի կառավարութեան կողմէ, երբ անոնք դեռ ծովուն վրայ էին: Խիստ հրաման կայ հսկելու բոլոր ասիներուն վրայ, որպէսզի Ֆետայիներէն ոչ մէկը կարենայ դուրս ելլել Աղթամար կղզիէն, ուր արդէն կատաղի կռիւմը տեղի կ'ունենար:

Գէորգ, անտեղեակ թշնամիին կողմէ եղած այս կարգադրութեան, նաւով կը մօտենայ Կժկուակայ քարերուն: Տղոցմէ մէկ քանին հազիւ ոտքերնին ցամաք դրած՝ դիշերային մթութեան մէջէն դարանամուտ թիւրք զօրքեր բուռն կրակի մը կ'ենթարկեն զանոնք: Գէորգ Զաւուշ՝ յանկարծակիի եկած, չի կորսնցներ իր տրամադրութիւնը կտրուկ վճռողականութիւնը եւ պաղարիւնութիւնը, տղոց կը հրամայէ առաջ անցնիլ եւ դիրք բռնել Կժկուակի ժայռերուն ետեւը, սողալով դէպի վեր կը բարձրանան ու կռուելով թիւրք զինուորներէն

կը գրաւեն ապառաժները: Չորս զինուորներ գնդակահար կ'իյնան, իսկ միւսները կը թողուն ու կը փախչին, ոմանք վիրաւոր: Ֆետայիներն ալ կը կորսնցնեն իրենց մէկ հին ընկերը՝ Սաստուրը, որ ծանր վիրաւորուելէ ետք, կը ջարդէ իր հրացանը եւ ինքզինքը բարձունքէն վար կը նետէ ու կը փչրուի: Մնացած ֆետայիները մթութենէն օդտուելով կը կտրեն զինուորներու շղթան եւ ինքզինքնին կը նետեն նեմրութի լանջերը:

Հետեւեալ օր, Գէորգ հաց կը ստանայ Ջրհոր գիւղէն եւ կը բարձրանայ Գրգուռի կողքը ու այնտեղէն կ'իջնէ Մշոյ դաշտ:

1904-ի Օգոստոս ամսուն, կարճատեւ բացակայութենէ ետք, Գէորգ եւ Կորիւն կը հասնին Մշոյ դաշտ: Կազմակերպութեան աշխատանքները դադրած էին, ամէն ինչ քանդուած՝ կարծես խորտակուած էին հայութեան միտքն ու հոգին: Գէորգ Չաւուշ կը լսէ ու կը տեսնէ, որ կառավարութիւնը հասած էր իր նպատակին՝ քանդելով Դուրան-Բարձրաւանդակի միջնաբերդը՝ Սասունը: Շուտով, թշնամին զօրանոցներ կը շինէ Սասնոյ ռազմական ամենէն կարեւոր կէտերուն՝ Իշխնձորի, Տալուրիկի, Սեմալի, Տափըկի եւ Կելիեկուղանի մէջ: Սասունցի ժողովուրդը, սուիններու սպառնալիքի տակ, ինքն իր ձեռքով կը շինէ այդ բերդանման պարիսպները, իսկ Սեպտեմբերին այդ զօրանոցներու վրայ կը ծածանի Օսմանեան դրօշը: Մօտ հինգ թապուր զօրք կը տեղաւորուի այդ շրջաններուն, իսկ ուրիշ բաս մը՝ Մշոյ դաշտին մէջ: Զինուորները անպաշտօն կերպով կը խուզարկեն տու-



Խլաթ գաւառի «Կարմունց» գիւղը

ները, Ֆետայի կը փնտռեն: Հարկահաւաքները նորէն գործի անցած էին, քիւրտերը, որոնք որոշ ժամանակ մը մեղմացեր էին շնորհիւ Ֆետայիներու շարժման, նորէն գլուխ կը սկսին բարձրացնել: Նորէն կը սկսին գիւղերը շրջիլ եւ շարունակել թալանը ու կողոպուտը, առանց որեւէ պատժի ենթարկուելու ո՛չ կառավարութեան եւ ոչ ալ հայերու կողմէ:

Խրախուսուելով կառավարութենէն եւ այլեւս Ֆետայիներու վախը չունենալով, «ղապիլաթ»ները ամենէն անխիղճ կերպով կը վերսկսին իրենց շահատակութիւնները ու զանոնք կը հասցնեն աննախընթաց չափերու: Անոնց նպատակն էր տէր դառնալ հայ գիւղերուն եւ հայ գիւղացիները դարձնել մարիպաներ: Անոնք քէօշկեր կը բարձրացնեն հայ գիւղերու մէջ եւ այնտեղ կը սլահեն իրենց փոքրաթիւ զինուորները՝ ծառայ անուան տակ: Այս իւրայատուկ միջնադարեան պարոնները ահ ու սարսափի տակ կը սլահեն գիւղացիները եւ զանոնք կը ստիպեն աշխատելու իրենց համար, ամէն բռնի միջոցներով:

Այսպէս, չարիք չարիքի վրայ կը բարդուի հայ ժողովուրդի գրեթէ յսուն: Սկիզբները ան չափով մը գոհ էր եւ միամտօրէն կը հաւատար, թէ Ֆետայիներու հեռանալէն ետք կառավարութիւնը հանգիստ պիտի ձգէ հայութիւնը, բայց շուտով այդ գոհունակութիւնը ցաւի եւ նոյն իսկ բարկութեան վերածուեցաւ: Շարունակ կը կրկնէին. «է. նոնֆ լը քորկին ու գացին գմեգ դաւաճանին մեզիկ քորկեցին տիւշմանին քերան»:

Որոշ գիւղերու մէջ մնացած գիտակից եւ ղեկավար տարրերը ժողով գումարեցին եւ եկան այն եզրակացութեան որ որոշ չափով զէնք եւ մարդ յանձնեն թշնամիին եւ ատով մեղմացնեն անոր բարկութիւնը: Այսպէս, ինքնակամ կը նահատակուէր Սասունի եւ Տարօնի ժողովուրդը՝ իր հողին սիրոյն, բանտերը կը լեցուէին հայ բանտարկեալներով, որոնց թիւը մէկ-երկու ամսուան ընթացքին հասաւ 2.000-2.500-ի:

«Այս զոհաբերութիւնները եւ տանջանքները(*) աւելի եւս կարծես կազդուրեցին ժողովուրդի ոգին ու լաւագոյն օրերու յոյսեր ներշնչեցին, լեցնելով ամէնուն սիրտը վրէժխնդրութեան զգացումով:

«Ժողովուրդը այսպիսով ամէն տեսակ զիջողութիւններ կ'ընէր, բայց կրաւորական կերպով կը դիմադրէր ընդդէմ իր ամբողջական զինաթափման, որ կառավարութեան առաջին նպատակներէն մէկն էր: Ծիշդ է տուեալ պայմաններու մէջ զէնքի դիմելու մասին չէր մտածուեր, բայց ոչ ոք կ'ուզէր ամբողջ զէնքերը յանձնել կառավարութեան:

«Տարօնի զինաթափման պաշտօնը ստանձնած էր Կրտան Ալայ պէկը: Իր հարիւրաւոր դահիճներով, ան ինկած էր հայկական գիւղերը, ուր մարդիկ կը կրտէր, ցից կը հանէր, կիներու շապրնկերնե-

(*) Ռուբէն «Հայ Յեզափոխականի մը յիշատակները», Գ. հատոր էջ 336:



Պարզ

ԻՍՐՕ ԿՈՐԻԻՆ(*)

(*) Տես «Յեղափոխական Ալպում»ի Ա. Հատոր Էջ 90:

րու մէջ կատու կը ձգէր ու կատուն կը ծեծէր, կը տաղէր մարդիկ, սառ ջուր կ'ածէր ծեծուած մարդոց մերկ մարմիններուն վրայ, մէկ խօսքով՝ ամէն տեսակ տանջանքներու կը դիմէր, հարկադրելու հայերը, որ իրենց զէնքերը յանձնեն: Այդ բոլոր ճիգերը ապարդիւն կ'անցնին: Տարօնցին որոշած է ամէն դիւղէն 5-20 հասարակ զէնքեր յանձնել. մնացած լաւերը պինդ պահել, թաքցնելով:

«Այս տաժանելի օրերուն է, որ Տարօն կը հասնին Գէորգ Չաւուշն ու Գոմսայ կորիւնը, որոնց երեւալը նորէն յոյս ու հաւատք կը ներշնչէ ճնշուած ժողովուրդին: Վհատութեան շղարշը կը պատուելի եւ ամէնուն սիրը նորէն կը լեցուի պայքարի տենչով. «Թէ որ մեռնիլ կայ, էլ ինչո՞ւ մեռնիլ փայտերու տակին, շղթան ձեռքերնիս: Աւելի լաւ չէ՞ մեռնիլ Գէորգի կողքին»:

Գէորգ եւ կորիւն իրենց խումբով կ'անցնին Մառնիկի լեռ, ուր մնացած Ֆետայիներու մէկ մասը այդ կողմերը հաւաքուած էր, շուտով լուր կ'ուղարկեն Ֆետայիներու թէ Գէորգ վերադարձած է. լուր ստանալուն պէս, Սպաղանաց Մակարը, Գալէն, Խեանցի Սարգիս (Թարսիաթող), Շէնիկցի Ղազարը, Մորուք Կարոն, Չոլոն իրենց զինակիցներով, կու գան Գէորգի մօտ, կարծես տարիներու ընթացքին զիրար կորսնցուցած են:

Գէորգ եւ կորիւն Դուրան-բարձրաւանդակի մէջ մնացած իրենց ընկերներուն հետ ժողով կը գումարեն ուր կը կազմեն իրենց հետագայ ծրագիրը. — ամէն գնով խուսափիլ կռուէ, հանգիստ պահել Սասունի եւ Տարօնի աշխարհը, մխիթարել եւ յուսադրել յուսալքուած ժողովուրդը եւ թոյլ չտալ, որ ժողովուրդը զինաթափ ըլլայ:

Գէորգ Չաւուշ լաւ մը մտիկ ընելէ ետք, երբ կը տեսնէ, որ մինակ մնացած է իր զինակիցներով, անոնց գործելակերպը կ'իսամիջոցներ համարելով, կը գծէ հետեւեալ ծրագիրը.

Ա. Կազմել մարտական ուժեղ խումբ.

Բ. Պայքար՝ ժողովուրդը հարստահարողներու դէմ.

Գ. Բարեկամութիւն մշակել այն թիւրք «ղապիլաթ»ներուն եւ քիւրտ պէկերուն հետ, որոնք շատ քիչ կերպով կը ճնշեն հայ ժողովուրդը եւ թշնամի են կառավարութեան.

Դ. Ուժեղ պայքար մղել այն քիւրտ եւ թիւրք հարստահարիչներու դէմ, որոնք գործիք են կառավարութեան եւ կը նեղեն հայ ժողովուրդը.

Ե. Անուղղակի ձեւերով ճնշում բանեցնել կառավարութեան վրայ, որ արդարացի կերպով կառավարէ հայ ժողովուրդը:

Ապա կ'որոշուի հետեւեալը. — քանի որ Գէորգ Չաւուշ կառավարութեան աչքի փուշն է դարձած, ուստի, կռուէ խուսափելու համար, պէտք է մնայ լեռներու մէջ՝ Ֆետայիներու մեծ մասին հետ եւ պիտի ձեռք առնէ միջոցներ՝ զսպելու քիւրտերը եւ զղապիլաթները, առանց սակայն գործը արիւնահեղութեան հասցնելու: Իսօ կորիւն

պիտի մնայ ժողովուրդին մէջ եւ պիտի գրադի կազմակերպչական եւ զէնքերու փրկութեան գործով :

Իսկ Սասունցի զինուորներու համար կ'որոշուի, որ Սպաղանաց Մակարի հետ մնան Գէորգ Չաւուշի քով, մինչ Իսօ Կորիւնի հետ դաշտ իջնեն քանի մը ծանօթ ու զգոյշ զինուորներ :

Գէորգ իր ընկերներով քաշուեցաւ լեռները : Դաժան էր կեանքը այս վայրենի լեռներուն մէջ, ցերեկը արեւը կը վառէր զանոնք, իսկ գիշերները՝ ցուրտը. անձրեւին ու քամիին պիտի դիմադրէին առանց տաք հագուստներու, յաճախ օրեր պիտի անցընէին կերակրութեամբ չոր կորեկով : Այս զրկանքներուն ու նեղութիւններուն կը միանար ամենէն անտանելին, — կառավարական յամառ հետապընդումը : Բազմաթիւ զինուորներ ու ոստիկաններ կանոնաւոր պաշարման երթարկած էին այն լեռներն ու անտառները, ուր կը շրջէր Գէորգ իր խումբով, բայց ան կը յաջողի միշտ խուսափիլ, առանց ենթարկուելու կռուի վտանգին : Գէորգ մեծագոյն զգուշութիւն կը գործադրէ իր հետքը սրբելու եւ իր տեղը անյայտ պահելու համար : Կորիւնի անունը միայն կար շրջանին մէջ. ան ալ անգտանելի էր : Կառավարութիւնը պահ մը խորհեցաւ, որ Փետայիները վերադարձած չեն : Նոյնիսկ հայեր սկսան կասկածիլ Գէորգի վերադարձի մասին : Երբեք չէին երեւակայեր, թէ ձմրան, Գէորգ եւ իր խումբը կրնան անչարժ մնալ լեռնային թաքստոցի մը մէջ :

Թիւրքերը եւ քիւրտերը լրբացած, բռնութեան բոլոր միջոցները կը գործադրէին ազատ-համարձակ : Հայ ժողովուրդը, ուժեղ բազուկէ զրկուած՝ կրկին յուսահատութեան գիրկը ինկած էր : Գէորգ քանի մը ամիս թաքնուած մնալէ ետք, տեսնելով, որ այդ վարմունքը յուսալքում կ'առաջացնէ, մանաւանդ՝ երբ կը լսէ որ կառավարութիւնն ալ սկսած է ժողովուրդին քարոզել թէ Փետայիները ձեր տունը քանդեցին եւ ձեզի դաւաճանեցին, լքեցին ու գացին, կը վճռէ հրապարակ գալ եւ անցնիլ հարուածողական գործունէութեան :

Ու ան կ'ելլէ լեռներու ծոցէն, իր շուրջը հաւաքելով ամենէն ընտիր զինուորները՝ Սպաղանաց Մակարը, Գայէն, Թարթափոզ Սարգիսը, Չոլոն, Ղազարը, Մանուկները, Ախոն, Աւրանայ Արամը, Մոսոն ու Մոսիկը, Մկրոն ու Չաթոն, Կրպոն ու Տիգրանը, Մօրուք Կարոն եւ շարք մը ուրիշներ, ինչպէս նաեւ մարտական ոյժեր՝ մօտ 50 հոգի, կ'իջնէ Մշոյ դաշտը եւ կը սկսի շրջիլ հայ գիւղերը : Կին թէ՛ երախայ, մեծ ու պզտիկ՝ աղ ու հացով, լաց եւ ուրախութիւնով կը դիմաւորեն Գէորգ Չաւուշն ու Փետայիները : Կարծես ժողովուրդը պահ մը կը մոռնայ իր դաժան վիճակը. զանգեր կը հնչեցնեն և բարձր ձայնով «Գէորգ եկաւ» աչքի լոյս կու տան իրարու :

Սակայն Գէորգ Չաւուշ հայերու մէջ գրեթէ ընելիք չունի, Իսօ Կորիւն իբրեւ նախահարապետ ամէն ինչ հարթած ու նախապատրաստած է, Գէորգին կը մնայ միայն ինքզինքը ցուցադրել երես առաժ թշնամիին՝ երկիւղ ներշնչելու համար անոր : Ան ձիեր կը պա-



ՍՊԱՂԱՆԱՑ ԳԱԼԷ

հանջէ գիւղացիներէն, հաւաքուած ձիերու մէջէն կ'ընտրէ լաւագոյնները եւ կը բաժնէ իր զինակիցներուն :

Աշնան անձրեւոտ ու մութ գիշեր մը, երբ քիւրտերը ազատ քունով մը տարուած էին, Գէորգ Չաւուշ անսպասելիօրէն կը մտնէ քրտական գիւղ մը եւ կը կանգնի աշիրեթապետին տան դրան առջեւ. դուռը զարնելով, բարձր ու համարձակ ձայնով Գէորգ Չաւուշ կ'ըսէ. «Հերիֆ չէ՞, այս մութ գիշերին մեզ սպասցնես, դուռը շուտ բաց, դռնախ եմ եկեր» :

«Սարսառան, սարջալան», կը լսուի դրան ետեւէն ահաբեկուած ձայնով եւ կիսամերկ թոռունները կը դիմաւորեն Չաւուշը :

Գէորգ կը հասկցնէ, թէ ինք երկար պիտի չմնայ գիւղը, այլ ուղեց հանդիպում մը ունենալ հարեւան քերվային հետ եւ սուրճ մը խմելէ ետք պիտի շարունակէ ճամբան : Հազիւ ժամ մը մնալէ ետք, ձիերը նստելով կը մեկնին գիւղէն՝ անծանօթ ուղղութեամբ եւ մութին մէջ :

Այսպէս, քանի մը գիւղերու պետերուն եւս այցելելէ ետք, առաւօտեան մօտ ապահով կերպով կը վերադառնայ իր թաքստոցը :

Այդ օր, մինչեւ առաւօտ, քիւրտ թոռունները անքուն անցուցին : Գէորգ Չաւուշ՝ պատկառելի խումբով մը. — երա՞զ էր, թէ իրականութիւն : Թոռուններուն պատմութիւնները լսուեցան գիւղացիներու կողմէ ու բերնէ-բերան, գիւղէ-գիւղ, տարածուեցան եւ ստուգուեցան. Գէորգ Չաւուշ Սասուն կը գտնուի :

Ամէն տեսակ մեկնութիւններու եւ խորհրդածութիւններու առարկայ կը դառնայ : «Ի՞նչ բախտով եւ նամուսով մարդ է, եթէ ուզեր մեզի վնասել, կրնար սպաննել մեզ բոլորս : Մեր ըրածներուն դիմաց

ոչինչ ըրաւ . գուցէ չէր գիտեր , գուցէ հաւատացած չէր , գուցէ յետին մտքեր ունէր» , կը մտածէին հարստահարիչները եւ ակամայ կ'եզրակացնէին . «Իրօք , աւելի լաւ է բարեկամ դառնալ այդ գիշերուայ գայլին , քան թշնամանալ իր հետ» :

Ամբողջ շաբաթ մը , Գէորգ իր խաղ-այցելութիւնները խաղաց , ներկայութիւնը ցուցադրելով , բայց առանց բռնուելու : Ան շարունակեց շրջիլ Մշոյ աշխարհին մէկ ծայրէն միւսը , սարսափի մատնելով քիւրտերն ու թիւրքերը . սակայն , իր այս շրջազայութեան ընթացքին , Գէորգ ո՛չ մէկ վրէժ լուծեց , ո՛չ մէկ պատիժ տուաւ , ո՛չ մէկ սպանութիւն կատարեց . ըրաւ աւելի ազդեցիկը՝ ցոյց տալով , որ Ֆետայիները ոչ մէկ թշնամութիւն ունին թօռուններուն ու քիւրտերուն հետ , բայց , ի հարկին՝ կրնան թշնամիին աչքին առջեւն իսկ անհետանալ ու կորսուիլ :

Գէորգ Չաւուշ մերթ դիչերներով , մերթ ցերեկներով , կրցած էր սարսափի մատնել հարստահարիչները : Իր զինակիցները եւս շատ լաւ կը կատարէին իրենց ստանձնած պաշտօնները , երբ խումբը կը հասնէր որեւէ տեղ , նախ իր զինակիցները կը բռնէին գիւղին կարեւոր դիրքերը , որպէսզի նեղ պարագային , թշնամին չկարենար լուր ուղարկել մօտակայ գիւղերուն , օժանդակութիւն խնդրելով : Այս գիշերային շրջապտոյտի ընթացքին Գէորգ Չաւուշ քանի մը ընկերներով կը մտնէր ճամբուն վրայ գտնուած գիւղերը եւ ուղղակի կ'երթար գիւղի պէկերուն տան դուռը կը դանգաճարէր , իբրեւ հիւր , իբրեւ «բարեկամ» : Երբ պէկերը կը սկսէին վախնալ եւ դողի մատնուիլ , դառնալով անոնց սիրտ կու տար եւ կ'ըսէր . «Նկայ քիչ մը խօսելու ձեր հետ , ծանօթանալու եւ հանգստանալու համար , ուրիշ ոչինչ» :

Ու այսպէս՝ օրերով , ան կրցաւ շրջիլ գիւղերը , իր այս շրջազայութեան ընթացքին ան կրցաւ լաւ մը ուսումնասիրել թիւրք եւ քիւրտ պէկերու եւ աղաներու ոյժն եւ անոնց բնաւորութիւնները :

Գէորգի այս յանդուգն գործունէութիւնը սարսափի մատնեց Սասունի եւ Տարօնի թիւրք եւ քիւրտ զինուորները եւս :

Իսկ հայ գիւղացին , իրեն յատուկ ձեւով , ըսաւ իր խօսքը . Գէորգ Չաւուշին .

- Քիւրտը ըսաւ . «Անունդ Չաւուշ» .
- Դէմքդ սիրուն , լեզուդ անուշ .
- Կեանքիդ մէջ հանգիստ չունեցար ,
- Թշնամեաց դարձուցիր ապուշ :
- Սասունն է քո ապաստան :
- Վրէժ է քո դատաստան :
- Հայոց համար սպարապետ ,
- Քաջ Մուրաւտիկ(*) ընկեր վարպետ .

(*) Մուրաւ Պոյաճեան :

Սասունը կանգուն պահեցիր,
Օգնող է քեզ Սուրբ Կարապետ:
Սասունն է քո, եւայլն,

Կոտորեցիր քանիցս վաշտ,
Անոնց արեամբ ներկեցիր դաշտ.
Անվախ հերոս անոնց դէմը՝
Մինչեւ վերջը մնացիր անհաշտ:
Սասունն է քո, եւայլն,

Անվախ հերոս ես ճշդապէս
Հայք պիտ' յիշեն քեզ մշտապէս,
Քաջաց քաջն ես, Գեորգ սարդար.
Վարդանի տիպ ես իսկապէս:
Սասունն է քո, եւայլն,

Գեորգ Զաւուշ օր մը գիշերով կը մտնէ նաեւ Շէխլան գիւղը, գործով. տեղական խումբերու գործերը վերջացնելէ ետք, կ'ուզէ լսել գիւղացիներուն դանդատները եւ իրենց պահանջները: Հոն կ'իմանայ որ Թեյլօ աղան շատ վատութիւններ բրած է հայերուն. կողոպուտներ կատարած է եւ շատ նեղութիւններ կու տայ գիւղացիներուն:

Գեորգ կ'որոշէ դաս մը տալ նաեւ Թեյլոյին.

— Կէս գիշերուան մօտ էր. — կ'ըսէ Շէխլան գիւղացի Յովհաննէս Ներսէսեանը. — (*) Գեորգ հրաման տուաւ ոտքի ելնել: Առաւ տասնեակ մը զինուորներ եւ ուղղուեցաւ դէպի Թեյլոյի տունը: Քանի մը տեղեր պահակներ դրաւ: Զարկեց Թեյլոյի դուռը: Թեյլոյի ծառաներէն մէկը բացեց դուռը: Ներս մտանք: Զիս ու ուրիշ տղէ մը կեցուց Թեյլոյի սենեակի դրան: Ինք ներս մտաւ:

— «Թեյլօ որ կ'ըսին դո՞ւ իս»: Անակնկալի եկած զազանը կրահեց, որ Գեորգ Զաւուշն էր: Տեղէն թռաւ եւ սարսափահար ու ապշած կեցաւ անոր առաջ: Թեյլոն ուղեց զինք նետել Գեորգի ոտաց: Գեորգ Զաւուշ բռնեց զԹեյլոն եւ ըսաւ. — «Թեյլօ՛, գիշեր ժամանակ մտեր իմ քու տուն՝ քրդի առակ մի պատմելու. թէ որ գմիտք հասկըցար՝ կը ներեմ քրդի, թէ որ չհասկցար՝ շան սատակ կ'էնիմ գգի»:

«Թեյլոն չոքաւ գետին եւ ըսաւ. — «Քու բախտն իմ ընկի Գեորգ Զաւուշ, թէ որ Աստուած զբնծի էշ չըստեղծի՝ պիտի հասկնամ գժու առակ»:

«Գեորգ Թեյլոյին բացատրեց հայ եկեղեցական արարողութենէն «նոջոյն»ի ձեւը եւ իմաստը, յետոյ պատմեց. — «Ժամ ու պատարագ չտեսած Սասունցի հայ մը Մուշ կ'իգայ եւ օր Կիրակի՝ ժամ կ'երթայ: Երբ պատարագիչ վարդապետ «նոջոյն» կու տայ՝ ժողովուրդի մէջ կը սկսի Սասունցուն անսովոր շարժում: Նա կարծելով, որ մար-

(*) Տարօնի Արծիւ, Թիւ 10, էջ 27:

դիկ կատարած գիրար կ'ուտին՝ ժամուց դուրս գալով, կը փախչի: Ճանապարհին հանդիպելով խումբ մը ժամ գացող մարդոց՝ կ'աղաղակէ. — «Հայե՛ր, ո՞ւր կ'երթաք, ժամու ժողովուրդ կատարած գիրարու միս կ'ուտին»: Զարմացած՝ մարդիկ կը հարցնեն, թէ ի՞նչ պատահեցաւ: Սասունցիին կը պատասխանէ. — «Պատմաւ չըմ գիտա, աղբէ՛ր, բայց էդ խառնակութիւն վերի սասանայ պամպլոզէն (վարդապետ) էլաւ»:

«Պատմութեան վերջ, Գէորգ ըսաւ. — «Թեւի՛ս, հասկցա՞ր զիմ առակի միտք: Կատարուն շուն կը կատարու գիւր խածած շներ: Ժողովուրդի մէջ ամէն խառնակութիւն կ'ելնէ պամպլոզէ մը: Մեր կռիւ իր թախտի վրայէն գժողովուրդ իրար խառնող Սուլթանի դէմն է: Գո՞ւ ինչո՞ւ իս կատարի, գժողովրդի միս կ'ուտիս»:

«Թեւի՛ն ըսաւ. — «Գէորգ Զաւուշ, քու ոտքն եմ պագի, հասկըցայ զքու առակի միտք: Ուխտ կ'էնիմ ժողովրդին եւ յեղափոխութեան հակառակ չերթալ»:

«Ու անկից ետք Թեւի՛ն հաւատարիմ մնաց իր խոստումին»:

ԳԷՈՐԳԻ ՇՐՉԱՆԸ

1905-ին, ընդհանրապէս յոյսերը կեղբոնացած էին միայն Գէորգ Զաւուշին վրայ: Իր կարողին, ան որոշած էր կարուկ միջոցներով գործի լծուիլ:

Ա. Նախ, պայքար՝ դէնքի ոյժով, մինչեւ արիւնհանգութիւն այն ցեղախումբերուն դէմ, որոնք կը շարունակեն ճնշել ժողովուրդը:

Բ. Սպառնալիքով կամ զինու. զօրութեամբ զսպել այն աշիրէթները, որոնք գործիք դարձած են կառավարութեան ձեռքին մէջ:

Գ. Անմիջական, բայց անուղղակի ճնշումներ կատարել կառավարութեան վրայ, առանց դիմելու ապստամբութեան, որուն ոգին սակայն միշտ վառ պէտք է պահել ժողովուրդին մէջ եւ որուն սպառնալիքին տակ՝ կառավարութիւնը:

Այդ օրերուն, Իսօ Կորիւն կ'որոշէ Կովկաս անցնիլ: Մեկնելէն առաջ, Կորիւն երկտող մը կը դրէ Գէորգին ըսելով. «Սիրելի Սարհատս, ես դնացի: Համբոյրներով՝ Կորիւն»:

Գէորգ, այս միատող նամակը միշտ իր գրպանը կը պահէր եւ հետզհետէ աճող յուզումով ցոյց կու տար իր մտերիմներուն:

Շուտով, վերոյիշեալ ծրագիրները գործադրելու համար, Գէորգ հաւաքեց իր նախկին ընկերները՝ 20—50 տարեկան՝ ըստ դիւզին եւ պայմաններուն:

Վերստին դէպի դաշտի գիւղերը՝ այս անգամ այլ մտադրութեամբ: Նախորդ շրջապտոյտին, ան ուսումնասիրած էր թիւրք եւ քիւրտ աղաներուն ոյժն ու բնաւորութիւնը, մշակած էր ծրագիր մը, թէ ո՛ր գիւղին ի՛նչպէս պէտք է մօտենալ եւ ի՛նչ միջոցներով յանկարծակիի բերել այս կամ այն պէկն ու աղան: Ան յանդուզն ու համարձակ էր, բայց միաժամանակ զգոյշ, ճարպիկ եւ փորձառու՝ վտանգաւոր այցելութիւններ ընելու գործին մէջ: Շատ լաւ ուսումնասիրելով իւրաքանչիւր քայլ, իսկ իր զինակիցները պատրաստ են իրենց կեանքը անգամ զոհելու Գէորգին համար:

«Եւ այսպէս, Գէորգ(*) նորէն այցելութիւններ կ'ընէ մերթ գիշերով, մերթ ցերեկով, մերթ փոքր խումբով, մերթ աւելի մեծ խումբով եւ ահ ու սարսափ կը տարածէ հարստահարիչներուն վրայ: Իր Ֆետայիները շատ լաւ գիտեն իրենց գործը, անմիջապէս կը բռնեն գիւղին կարեւոր գիրքերն ու տանիքները, որպէսզի պէկի զոլամներն ու փոքրաթիւ զինուորները ձայն-ծայտուն չկարենան հանել: Իսկ ինքը՝ Գէորգ, քանի մը հոգիով ուղիղ կը մտնէ պէկի քէօշկը: Հարկաւ ան միշտ իբր հիւր կու գայ, իբր «բարեկամ»... որ նոյնսիկ սիրտ կու տայ սարսափահար պէկին ու կ'ըսէ. «Եկայ մի քիչ խօսելու, ծանօթանալու եւ հանգստանալու համար, ուրիշ ոչինչ: Իսկ եթէ հաճելի չէ աղային իմ այցելութիւնը, ես կ'ընամ քու հացն իսկ չկտրել, եւ ինչպէս եկեր եմ այնպէս ալ կ'երթամ»:

«Գէորգ կը հետեւի ժողովրդական առածին, որ կ'ըսէ. «Թէ որ օձին գլխիցը պինդ բռնես, նա միայն պոչը օդում կը շարժէ»: Եւ իբրօք, Գէորգ, նստած թշնամու օճախի գլխուն, հանգիստ կը վայելէ անոր հիւրասիրութիւնը, երբ թշնամու ամբողջ ընտանիքը ահ ու դողի մէջ է: Գէորգ երկար չի խօսիր ու չի համոզեր, այլ կը թուէ միայն այն չարիքները, զորս գործած է այս կամ այն պէկը. կը պահանջէ բաւ համարել իր կատարած թալանը, եւ թողուլ հեռանալ, ինչ որ օրէնքով եւ խղճով իրեն կը հասնի, թող հալալ լինի, իսկ ինչ որ ապօրինի եւ խղճի դէմ է, նա իր արժանի պատիժը պիտի գտնէ ու արիւնով պիտի մաքրուի, եթէ չենթարկուի Գէորգի հրամանին:

«Կը պատահի, որ պէկերը թանկագին նուէրներ կ'առաջարկեն, կաշառքներ կը փորձեն տալ Գէորգին, բայց ան չ'ընդունիր, այլ առիթէն օգտուելով կը բացատրէ «ատելաթ» (արդարութիւն) բառին իմաստը եւ նոյն իսկ կը բաժնէ իր մօտ եղած դրամները կամ իրեն առաջարկուած կաշառքները խեղճ զոլամներուն:

«Այս շրջագայութիւնը մեծամեծ վտանգներով լեցուն է, որովհետեւ ամէն տեղ չի յաջողուիր յանկարծակիի բերել եւ հանգիստ գիւղ մտնել, թշնամին երբեմն կը կռահէ Գէորգի մօտենալը եւ կրակով կը դիմաւորէ զայն ու անոր մարդիկը: Բայց միշտ ալ Գէորգ կը յաջողի լռեցնել կրակը եւ իր գործը տեսնել:

(*) Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը Յիշատակները», Գ. հատոր, էջ 349:

«Անհետեւանք չեն անցնիր իր այս տեսակի այցելութիւնները դարբիլաթներու, ինչպէս նաեւ անոնց գլխուած պահապան-ծառաներուն վրայ: Քիւրտ կամ թիւրք զոլամները կը մտածեն ահամայ. «Ֆետայիք մեր դէմ ոչինչ ունին. Ղուրանէն կը խօսին եւ ատելաթ կ'ուզեն. անոնք դէմ են մեր աղաներուն, որ ինչպէս հայու այնպէս ալ մեր արիւնը կը ծծեն. ապացոյց՝ Գէորդ Չաւուշը, որ մեզ դրամ ալ կը բաշխէ»:

Շրջաններու այցելութիւններէն ետք, կ'ուզէ փորձել թշնամիին հաւատարմութիւնն ու անկեղծութիւնը: Կը քաշուի ապահով վայր մը, թշնամիի աչքէն հեռու: Կրցած էր այդ գիւղերուն մէջ դտնել մարդիկ, որոնք օրը օրին տեղեակ պահեն Գէորդը գիւղին մէջ պատահած որեւէ դէպքին կամ գիւղի բէկի կատարած գործունէութեան մասին: Տեղեկութիւններու համաձայն Գէորդ լուր կամ նամակ կ'ուզարկէ շնորհակալութեան, սպառնալիքի կամ խնդրանքի ոճով: Բայց այս քայլը արդէն վերջինն է. ատկէ ետքը անհրաժեշտ է գործի անցնիլ, որպէսզի չըլլայ թէ կարծուի, որ Գէորդ Չաւուշ պարապ տեղը սպառնալիքներ կը կարդայ:

Մշոյ դարբիլաթներէն Քոթանենց Եուսուֆը շինծու թուղթ մը ձեռքը առած կը յայտարարէ, որ Փեթար գիւղը իրենց կը պատկանի: Շուտով իր մարդկանց հետ կ'երթայ Փեթար եւ կը պատրաստուի երկյարկանի քէօշկ մը շինելու, գիւղացիներուն կը պարտադրէ որ երկար տարիներ աղայական տուրքը պէտք է վճարեն: Գիւղացիները կ'ընդդիմանան այս վճիռին, նոյնիսկ փոքր բախումներ կ'ունենան իրարու հետ, մինչ այդ, կառավարութիւնն ալ կը պաշտպանէր Եուսուֆ Աղան:

Գէորդ Չաւուշ երբ այս լուրը կ'իմանայ, իր ընկերներով ուղղակի կ'երթայ Փեթար եւ Եուսուֆ Աղային կը թելադրէ շուտով իր մարդոց հետ վերադառնալ եւ գիւղը ազատ ձգել: Աղան, Գէորդի վախէն խօսք կու տայ որ ձգէ գիւղը եւ մեկնի, բայց յաջորդ առաւօտ, երբ Եուսուֆը պիտի մեկնէր գիւղէն, կը ձերբակալէ քանի մը հոգի եւ իր հետ առնելով կը մեկնի դէպի Մուշ, ուր այս եղելութիւնը կը պատմէ թիւրք կառավարութեան: Երկու օր ետք, ոստիկան եւ զօրք հետը առած կրկին կու գայ գիւղ, նախ իր մարդերը կը սկսին կողոպտել գիւղը, ապա թիւրք ոստիկաններու հետ կը հաւաքեն Աղային տուրքը. եւ 300 ոսկիէ աւելի տուգանք առնելով կը վերադառնայ Մուշ, ուր կը բնակէր զօրանոցին մօտ:

Գէորդ երբ Փեթար կը վերադառնայ կ'իմանայ Եուսուֆի կատարած գործը, կը կանչէ գիւղի երիտասարդութիւնը եւ անոնցմէ կը պահանջէ ողջ կամ մեռած ձեռք բերել զայն: Մանուկը, Ախոն, Պետիկը, Իսրոն եւ Կիրակոսը յանձն կ'առնեն այդ գժուարին գործը:

Ֆետայիները նախապէս ուսումնասիրած էին Եուսուֆի տունը եւ քննած՝ ներս մտնելու կարելիութիւնները: Չուրտ եւ անձրեւոտ դիշեր մը, Ֆետայիները տեղական տարազներով, ատրաճանակներով



ՓԵԹԱՐԱՅ ՄԱՆՈՒԿ

Եւ դաշոյններով զինուած, կը քալեն դէպի Մուշ, կ'ուղղուին դէպի զօրանոցին կողմը ու կը մտնեն այն փողոցը, ուր կը բնակէր իրենց որսը: Երբ ԵՈՒՍՈՒՓԻ տունը կը հասնին նախ կը մտնեն տան կից ախոռը եւ հոն չուանով կը խեղդեն ձիապան Թիւրք պահակը, ապա պատը ծակելով կը մտնեն ներս, ուր ամէն ոք քնացած էր. երբ ԵՈՒՍՈՒՓԻ սենեակին դուռը կը բանան, կը տեսնեն, որ ԵՈՒՍՈՒՓ աղայի մօտ կան երեք զինուած պահակներ, որոնք քնացած էին, բոլորն ալ տեղն ու տեղը դաշունահարելով կը սպաննեն: Երբ իրենց գործերը վերջացուցած եւ Թշնամիի տան մէջ եղած զէնքերն ու փամփուշտները առած կ'ուղէին մեկնիլ, սենեակի մը մէջ կը տեսնեն պառաւ մը, որ վախէն չէր կրնար խօսիլ: Մանուկը այդ պառաւէն կը հասկնայ նաեւ տեղը

այն ոսկիներուն, զորս Եռսուֆ գանձած էր Փեթարի գիւղացիներէն, այդ դրամները եւս կը բերեն գիւղ ու կը վերադարձնեն իրենց տէրերուն :

Առաւօտեան այս լուրը կը տարածուի արագօրէն, ոստիկանները տունը գալով կը խուզարկեն կը տեսնեն միայն պառաւ կիներ, որ իր հարազատներուն վրայ կուլար : Ոմանք կը կասկածին քիւրտ աւազակներու, ուրիշներ՝ զօրքերու վրայ . բայց երկար պրպտումէ ետք, Եռսուֆի գրպանը երբ կը խուզարկեն, կը գտնեն Գէորգ Չաւուշի կողմէ կնքուած թուղթ մը, ուր գրուած է . «Զուլուսիդ համար, դուն պիտի մեռնիս քու սերունդովդ . Սարհատ» :

Կառավարութեան եւ ժողովուրդին համար շատ պարզ եղաւ, թէ այս գործը կատարած է Գէորգը : Այն օրէն ետք, ժողովուրդը ու մանաւա՛նդ դաբիլաթները հանգիստ չէին քնանար, նոյնիսկ իրենց երազներուն մէջ կը տեսնէին այս հերոսածին հերոսը որ սուրը ձեռք առած կ'ուզէ զայն մխրձել սրտին բոլոր այն անձերուն, որոնք կ'ուզեն վատութիւն ընել ուրիշներուն :

Այդ շրջաններուն, բողկանքցի Դեղձրմեր գիւղի բէկը սկսած էր իր անմարդկային արարքներով խօսակցութեանց նիւթ դառնալ այս ու այն հայ գիւղերը շրջելով, կը կողոպտէր հայ գիւղացիները : Երբ այս լուրը կը հասնի Գէորգին, ան բէկին հաշիւը մաքրելու պարտականութիւնը կու տայ Պասգիւղացի Մոսիկին եւ Մկրոյին : Նոյն օրը, Մոսիկն ու Մկրոն կը մեկնին Ալվառինջ գիւղը, ուր կը մնար բէկը : Գիշերով կը մտնեն տունը եւ ննջասենեակին մէջ կը սպաննեն բէկը, սակայն դուրս ելլելու պահուն, կը տեսնեն նաեւ անոր թիկնապահը, որուն հաշիւը եւս մաքրելէ ետք կ'ուղղուին իրենց կեդրոն-թաքստոցը :

Այս դէպքը եւս ազդեց թշնամիին վրայ . քանի մը օր ետք, Գէորգ իր ընկերներով կ'իջնէ Ալվառինջ գիւղ . իր շուրջ կը հաւաքէ զոլամ քիւրտերը, կը խօսի անոնց եւ մէկ-մէկ նուէր տալով կը հեռանայ գիւղէն, իբրեւ բարեկամ : Անկից կ'անցնի Գոմս գիւղը, ուր կառավարութեան կողմէ բանտէն նոր արձակուած եւ ներում ստացած էր յայտնի աւազակ եւ կառավարութեան դէմ երբեմնի ըմբոստ Ճիպրանցի Մեհմէտ Ալին : Կառավարութիւնը՝ իրմէ եւ Գոմս գիւղի հայերէն ազատելու համար, գիւղը նուիրած էր անոր . ան ալ իր կարգին 50-է աւելի իր նման աւազակներով կը մնար գիւղը եւ «կը հօկէր» խաղաղութեան : Մերթ ընդ մերթ, զանազան խստութիւններով, քանի մը հայ ընտանիքներու կը ստիպէր գիւղը թողուլ եւ հեռանալ, իսկ անոնց փոխարէն քիւրտեր կը բերէր :

Գէորգ քանի մը օր գիւղը կը մնայ : Չէր ուզեր անոնց հետ գործունենալ, բայց երբ կը տեսնէ թէ աւազակին գործակիցները հայ գիւղացիներուն վրայ բռնանալով դրամ կամ ցորեն կ'առնեն, կը շրջի գիւղի շրջա կողմը եւ գերի կը բռնէ Մեհմէտ Ալին իր քանի մը ծառաններով : Անոնք անակնկալի դալով կը վախնան, Գէորգ կ'ըսէ Մեհ-

մէտ Ալիին . «ձեր կեանքի հետ մեկ գործ չունիմք . մեկ իբր բարեկամ եւ դրացի պէտք է գիրար հասկնանք եւ մեր նպատակները իրարու փոխանցենք» :

Մեհմէտ Ալին կ'ընդունի Գէորգի ըսածները եւ կը խոստանան ոչ մէկ ատեն իրարու դէմ թշնամական քայլ առնել : Անկէ ետք , Մեհմէտ Ալին կը սկսի հիւրասիրել հայերը . ատեն մը ետք իր մօտ գտնուող քիւրտերը կը ցրուէ , կը մնան ինք եւ քանի մը հոգի : Իսկ Գէորգ ժամանակ առ ժամանակ կ'այցելէր անոր : Կառավարութիւնը կը սկսի կասկածիլ նաեւ Մեհմէտ Ալիին . ան կը ստիպուի թողուլ Գոմս գիւղը եւ հեռանալ ուրիշ տեղ :

Նաեւ Ալիջան գիւղի մէջ բոյն դրած էր Մշոյ զարելաթներէն Քեարիմ բէկը , որ երդուեալ թշնամի էր Ֆետայիներուն եւ հայերուն . կը յուսար որ օր մը պիտի կրնայ ձեռք ձգել Գէորգը , նոյնիսկ մեծ յոյս ունէր , որ շուտով իրեն օգնութեան կու դան նաեւ մօտակայ գիւղերէն , ան երբեք չէր վախնար Գէորգի սպառնալիքներէն ու կռիւներէն :

Տօնական օրերը կը մօտենային , Գէորգ կ'ուզէր նաեւ Քեարիմ բէկին հաշիւը մաքրել , տօնէն մէկ օր առաջ , Գէորգ իր խումբով կու դայ Շէյխ Եուսուֆ գիւղը , իր երկու Ֆետայիներուն՝ Մոսիկին եւ Մկրոյին հետ , որոնք քրտական հազուստներով , յաջորդ օր կը դըրկուին Ալիջան գիւղը Քեարիմի քէօշկը , անոր հաշիւը մաքրելու : Այդ օրը տօն էր , եւ շատերը եկած էին Քեարիմը շնորհաւորելու : Թիւրք , քիւրտ , հայ ամէն տեղերէ առանձին նուէրներով եկած էին , մէկը շաքարով , միւսը ոչխարով , ուրիշ մը հրացանով , հազուստներով եւայլն :

Աղջամուղջին , Մոսիկ եւ Մկրոն «սալամ» կ'ըսեն պահապաններուն եւ կը մտնեն շիտակ ներս , հիւրասրահը , ուր նստած էր Քեարիմ բէկը . «Պայրամըն միւպէրէկ օլսուն» իրենց խօսքէն ու ձեւերէն Քեարիմ բէկ կը սկսի կասկածիլ : Հրացանը վար առնելով , կ'ուզէ հարցուփորձ ընել անոնց ինքնութեան մասին : Սակայն , Մոսիկը աւելի արագ կը քաշէ հրացանը եւ գնդակով մը ծանրապէս կը վիրաւորէ զայն : Ճրագները կը մարին , մութին մէջ անկիւն մը քաշուած Մկրոն ու Մոսիկը , հրացան կը բանան եւ քիւրտերը իրարու վրայ կը պառկեցնեն : Քեարիմ դուրս կ'ելլէ սենեակէն . Մոսիկ եւ Մկրո՝ անոր ետեւէն : Դուրսը , դրան մօտ , կանգնած էին Ալիջանցի Տիգրանը , Բագիկը եւ ուրիշներ , որոնք եկեր՝ կը սպասէին , անախորժ անակնկալներու առաջքը առնելու եւ քիւրտերուն փախուստը արգիլելու համար : Տիգրան կը յարձակի Քեարիմի վրայ եւ զայն գնդակահար կը դըրէ ձորը , իսկ միւս ընկերները կը կրակեն դէպի դուռը , ուրկէ դուրս կ'ելլէին Մոսիկը եւ Մկրոն , քրտական հազուստներով , շփոթին ու իրարանցումին մէջ , հայ տղոց գնդակները կը սպաննեն նաեւ Մոսիկն ու Մկրոն :

Հագիւ կէս ժամ անցած էր փոթորիկէն , քէօշկը լռութեան կը

մատնուի, դիակներու կոյտերը վկայ էին կատարուած սոսկալի պատահարին: Այդ ժամուն Գէորգ իր միւս ընկերներով կը հասնի Ալիջան գիւղը եւ կը տեսնէ պատահածը: Ան իր նպատակին հասած էր, բայց զո՛հ տուած էր իր երկու հաւատարիմ տեւորիստները՝ Մոսիկը եւ Մկրոն. պահ մը անոնց անշունչ մարմիններուն մօտ կենալէ ետք, կը համբուրէ զանոնք եւ քանի մը կաթիլ արցունքներ կը հոսին իր աչքերէն:

Գէորգ եւ ընկերները ուրախ ու միաժամանակ սգաւոր կը հեռանան Ալիջան գիւղէն:

Թիւրքերն ու քիւրտերը կ'իմանան եւ կը զգան որ Փետայիներու հետ կատակ եւ խաղ կարելի չէ, կերպով մը պէտք է լեզու դտնել այդ «կեաւուրներուն» հետ:

Կառավարութիւնը, իր լրտեսներով, ոստիկաններով եւ զօրքերով շարունակ կը հետեւէր Գէորգի քայլերուն, եւ առիթ կը փնտռէր որովհետեւ «լիսաւորապէս» զայն կը փնտռէին: Գէորգին համար դժուար էր զօրքերուն պատահելէ խուսափիլ, միւս կողմէն ալ գործի բերումով ստիպուած էր շարունակ վտանգաւոր ճամբաներէ անցնիլ, ըլլայ զօրքերու կողքէն կամ անոնց մէջէն, միաժամանակ, զարիւթները սարսեցնելու եւ քիւրտերու աչքին իր վարկը բարձր պահելու համար, ան ինքզինք աւելի արձակ համարձակ պէտք է պահէր: Այդ պատճառով, անոր ուր ըլլալը անմիջապէս կը հասկցուէր մօտաւորապէս եւ զօրքերը անոր ետեւէն ինկած՝ կը փնտռէին զայն, առ հասարակ ապարդիւն կերպով:

Անխուսափելիօրէն, Գէորգ պիտի հանդիպէր բանակին եւ ընդհարումներ պիտի ունենար անոր հետ. Գէորգ այդպիսի «հանդիպումներ», արիւնալի կռիւներ յաճախ ունեցաւ. շատ պատահեցան թէ՛ գիշերային եւ թէ՛ ցերեկային բախումներ:

Գիշեր մը, Գէորգ իր ընկերներով Տերգեվանքէն պիտի անցնէր դէպի Հաւատորիկի շրջանը. երբ կը հասնի Առաղի մօտերը, կը նըշմարուի զօրքերու կողմէ, որոնք շուտով կը պաշարեն Փետայիները եւ կ'ուզեն ձեռք ձգել բոլորը, բայց երբ խումբը Առաղի հողերէն կ'ուզէր ելլել եւ անցնիլ դէպի Բերդակ, ձորին մէջ թումբերու ետեւ կը նշմարեն մարդիկ, որոնք կը շարժէին: Գէորգ կը հասկնայ, որ անոնք թշնամի զօրքերն են, կ'ուզեն զինք թակարդը ձգել այդ ձորին մէջ:

«Վայրկեան մը կը թուի թէ ամէնն ալ պիտի մեռնին տեղն ու տեղը, — կ'ըսէ Ռուբէն, — բայց, ճարպիկ Գէորգը խկոյն կը պատուիրէ երկու երիտասարդ Փետայիի, Զիարէթցի Մանուկին եւ Փեթարցի Ախոյին, իրենց վրայ վերցնել կռուի ծանրութիւնը, իջնել միասին ձորն ի վար հարայ-հրոցով եւ աղմուկով, որպէսզի զօրքերն իրենց ուշադրութիւնն այդ կողմը դարձնեն, յետոյ արագօրէն հեռանան ձորի ընթացքով դէպի Դաշտի կողմը, զօրքերուն մէջէն, իսկ մնացածներուն ալ կը պատուիրէ պառկիլ եւ փորսողին տալով՝ իրարմէ հեռանալ 100—200 քայլի վրայ, ոչ մէկ հրացան բանալ՝ մինչեւ որ

զօրքերը մէկ-երկու քայլ մօտիկ չլինեն եւ չտեսնեն զիրենք: Եւ երբ ձորի հակառակ ինկած, Հաւատորիկի կողմի զօրքերը դուրս գան իրենց զիրքերէն բացէ ի բաց փախչող Ախոյին եւ Մանուկին ետեւէն, առանց կրակելու՝ սողալով առաջ անցնել, ձորին այդ մութ կէտը բռնել ու Գէորգին հրամանին սպասել:

«Այդպէս ալ կ'ընեն. Ախոն եւ Մանուկը ուղիղ կը վազեն դէպի զօրքերը եւ կրակ կը բանան: Բոլոր կողմերէն կրակ կը բացուի երկու թարմ Ֆետայիներուն վրայ, միւսները պահուրտած՝ քարերու տակ եւ անյայտ: Զօրքերը իրենց ուշադրութիւնը կեդրոնացուցած Ախոյին եւ Մանուկին վրայ, վերէն ցած կ'իջնեն, կը հասնին Գէորգի եւ ցըրուած ընկերներուն տեղերը, բայց ասոնք պաղարիւնութեամբ լուռ կը մնան: Զօրքերը կը շուարին եւ կը զարմանան, որ մարդիկ չկան այդ տեղերը, ուստի կը շտապեն Ախոյին ու Մանուկին կողմը, իսկ Ֆետայիները սողալով կը հասնին զօրքերուն ետեւէն, մէկ քանին արդէն ցոյց տրուած տեղը հասեր են, ուր երկու վայրկեան առաջ զօրքերն էին: Կը հասնին միւսներն ալ: Լուսնի տակ, ձորին մէջ զօրքերն են լեցուած, Ախոյին եւ Մանուկին ետեւէն, որոնք վայրի եղջերուներունման եւ կամ վիրաւոր արջերու պէս մէկ այս կողմ, մէկ այն կողմ կ'իյնան, կը կրակեն աջ ու ձախ եւ կը գոռան:

«Արդէն ժամանակը հասեր էր Գէորգին համար մտածելու կրրակներուն մէջ մնացած ընկերներուն մասին: Խուճրը հասած է ձորին բերանը. համարձակ ասպարէզ կու գայ եւ կը սկսի կրակել զօրքերուն վրայ: Թիկունքին կրակ եւ Գէորգին ձայնը: Զօրքերը կը շփոթին եւ ճամբայ կը բանան Ախոյին եւ Մանուկին առջեւ: Մանուկը, թէեւ վիրաւոր, կը հետեւի Ախոյին եւ կ'անցնի զօրքի շղթային մէջէն դէպի Նորչէն գիւղը, ուր նստած էին զօրքեր: Կը յաջողին ծածուկէն մարագ մտնել եւ պահուրտիլ ամբողջ օր մը, յետոյ, ի մեծ ուրախութիւն ընկերներուն, կը միանան խուճրին: Իսկ Գէորգ հրաշագործութեամբ թակարդէն ազատելով եւ վեց զինուոր սպաննելով, կը հասնի ապահով լեռները եւ կը հանգստանայ գիշերուան յուզումէն ու խոնջէնքէն»:

Գէորգ իր խուճրով կ'անցնի Բերդակ գիւղ, երկու օր հանգստանալէ ետք. կ'որոշէ ժողով մը դումարել հոն. այդ նպատակով լուր կ'ուղարկէ Կորիւնին որ նոր վերադարձած էր Սասուն: Կորիւն իր ընկերներով կու գայ Բերդակ գիւղը, ուր Գէորգի եւ իր խուճրին հետ կ'անցնին այգիին հնձանը՝ իրենց ժողովը դումարելու համար:


Ընդհանուր կացութեան մասին լայն լուսաբանութիւններէ ետք, Գէորգ իրապաշտ եզրակացութիւններու կը հասնի եւ գործի բաժանումը կը կատարէ. «Մնացիմք մենք մեր իւրը եւ մեր ալիւրը: Պէտք է գործենք այնպէս եւ այնքան, ինչքան որ մեր ալիւրը ջուր կը վերցնէ: Սասունն ինկաւ, մնացիմք բաց Տարօնի եւ Դուրանի մէջ: ամէն մէկ քայլափոխը մէկ-մէկ վտանգ է, պէտք է աշխատինք Հրայ-

րի ծրագիրն իրականացնելու, այսինքն քիւրտ բէկերու հետ յարաբե-
րութեան մտնել եւ ամէն կերպ աշխատինք գանձնի մեր ձեռքի մէջ
պահել :

«Դուն, կորիւն, կ'անցնիս Խնուսի շրջանը եւ կ'աշխատիս Սա-
յիտ Բէկի, Խորումանկցի Զէյնալ աղայի եւ Ճպրանցի Իպոյի հետ յա-
րաբերութեան մտնել եւ ամէն կերպով բարեկամական կապ հաստա-
տել : Իսկ ես, այս կողմը կ'աշխատիմ այդ ուղղութեամբ» :

*Կորիւն կը մեկնի Խնուսի շրջանները, իսկ Գէորգ Սասունի եւ
Տարօնի շրջանները : Ան իր կազմակերպչական աշխատանքները տա-
նելով կը հասնի Ղարս գիւղը, ուր կը բնակէին Սաս գիւղացի Յակոն
եւ Մոսոն, որոնք մօտէն ծանօթ էին նաեւ Ղասըմ բէկին, ան ալ իր
կարգին մեծ վստահութիւն ունէր անոնց վրայ : Յակոն եւ Մոսոն Գէ-
ւորգին կ'իմացնեն թէ իրենք լաւ ծանօթ են Ղասըմ բէկին եւ կը մը-
տածեն որ Գէորգի եւ անոր միջեւ տեսակցութիւն մը կամ համաձայ-
նութիւն տեղի ունենայ : Գէորգի համաձայնութեամբ, Յակոն ու Մո-
սոն կը մեկնին Ղասըմի մօտ եւ կը համոզեն զինք, որ անպայման
տեսակցութիւն մը ունենայ Գէորգի հետ : Կը յաջողին Ղասըմէն ժա-
մադրութիւն մը առնել, վստահ՝ որ ժամադրութիւնը կը յարգէ :*

Գէորգի եւ Ղասըմի առաջին հանդիպումը կ'ըլլայ Արտոնք գիւ-
ղին մէջ : Գէորգ լաւ ուսումնասիրած էր քրտական սովորութիւննե-
րը, թէ երբ իրենց մօտ հիւր մը գայ, քիւրտը ստիպուած է ոտքի ել-
լելու եւ զայն հիւրասիրել. այդ նպատակով որոշուած ժամադրա-



Խնուսի բերդի ընդհանուր տեսարանը

վայր տունէն կը մեկնի ուրիշ տուն մը, մինչեւ Ղասըմի գալը: Երբ Ղասըմ բէկը իր թիկնապահներով կու գայ իր ժամադրուած տունը, ընկերները լուր կ'ուզարկեն Գէորգին, որ բէկը հասած է: Ան շուտով կու գայ, երբ սենեակ կը մտնէ Ղասըմի մօտ, ան շուտով ոտքի կ'ելլէ եւ կը մօտենայ կտրիճին եւ ուժգին կերպով կը սեղմէ անոր ձեռքը: Առ հասարակ Գէորգ այս սովորութիւններով կը վարուէր թիւրքերու եւ քիւրտերու հետ:

Լաւ մը հիւրասիրելէ ետք եւ բաւական սիրալիր խօսակցութեան ընթացքին, Գէորգ հարց կու տայ Ղասըմ բէկին:

— Բէկ, ինչո՞ւ ուզած էք անպատճառ զիս տեսնել:

Ղասըմ բէկը կ'ըսէ. «Քաջ մարդուն ո՞վ չ'ուզեր տեսնել. մանաւանդ քեզի պէս քաջին, որ կ'ըսեն թէ դնդակ չի բանիր»:

Գէորգ կը պատասխանէ. — Բայց ատով ի՞նչ օգուտ քեզի: Չէ՞ որ վաղը երբ կառավարութիւնը իմանայ թէ դուն հետս տեսնուած ես, թշնամի աչքով պիտի նայի քու վրադ ու օր մըն ալ դուցէ ձերբակալուիս եւ բանտ մտնես:

Ղասըմ պէկը կը պատասխանէ. — Ես կառավարութենէն միւնաթ չեմ քաշեր: Արդէն կառավարութիւնը հիմա ալ եթէ կարենայ, կը ձերբակալէ: Քեզի պէս բարեկամ մը ունենալէն ետք, այլեւս ի՞նչ հոգ պիտի ընեմ:

Գէորգ կ'ըսէ. — Ես մինակ եմ եւ քու բարեկամութիւնդ չեմ ուզեր: Եթէ տղամարդու պէս խօսք կու տաս որ դուն դառնաս հայ ազգի բարեկամ, եւ ես ալ քիւրտ ազգին, արդէն ես եւ դուն կ'ըլլանք ճշմարիտ բարեկամներ. իսկ եթէ ոչ, հաշուէ թէ զիրար չենք տեսած: — Լաւ, կը պատասխանէ Ղասըմ, դուն կրնաս ամբողջ հայ ազգին անունով խօսիլ: Իսկ ես, շատ-շատ, պիտի կրնամ միայն Սուլթի մասին քեզի խօսք տալ: Գէորգ կը համաձայնի, դուն ըրէ ինչ որ կրնաս. քեզի պէս շատ մը աղաներու հետ ալ այդպէս պայմանաւորուած եմ:

Իրամամբ, Գէորգ ծոցէն կը հանէ թուղթ մը, ուր երկու աղաներու անուններ գրուած էին. ցոյց կու տայ անոր, ահաւասիկ այդ աղաներն ալ կ'ուզեն զիս տեսնել, յարմարութեան կը նայիմ:

Այդ աղաներէն մէկը Ղասըմ բէկի փեսայ Ահմէտ բէկն էր, իսկ միւսը Համիտիէ ալայի գլխաւոր Իսա աղան, որոնց հետ բնաւ դեռ Գէորգ յարաբերութիւն չունէր:

Ղասըմ բէկը կը հետաքրքրուի հասկնալու թէ Գէորգ ո՞ր աղաներու հետն է տեսնուած:

Գէորգ կ'ըսէ. — Բէ'կ, եթէ ես իմ տեսնուած աղաներու անունները քեզի յայտնեմ, ուրեմն քու անունդ ալ պէտք է անոնց ըսեմ: Եւ եթէ վաղը ձեզմէ մատնիչ մը ելլէ, ուրեմն այդ աղաները բոլորն ալ պիտի ցոյց տայ ու ձերբակալուին: Հարկ չկայ անոնց անունները քեզի ըսելու, ոչ ալ քու անունդ անոնց, մինչեւ մէկ երկու տարի, որ ես լաւ փորձեմ, թէ դուք հաստատ սրտով իմ բարեկամներն էք: Այն ժամանակ զիրար կը հասկնանք:

«Ղասարմ բէկը այդ խօսակցութենէն գոհ կը մնայ, շուտով ոտքի ելլելով Գէորգի ձեռքը բռնելով ըսաւ.— «Գէորգ Չաւուշ. բերէ՛ք ձեր իննիւր որ երդում ընեմ. ես ձեր եւ ձեր հարազատ փոքր եղբայրն եմ, իմ եղբորմէս, նըհօ բէկէն կը հրաժարիմ, բայց ձեզմէ՛ ոչ: Ձեր ամէն ըսածները կ'ընդունիմ»:

«Գէորգ Չաւուշը Աւետարան բերելու հարկ չտեսաւ եւ ըսաւ.— Տղամարդու աղնիւ խօսքը ամէն բանէն բարձր է:

«Գէորգ ձեռք տուաւ Ղասարմին, ըսելով.— ահաւասիկ մեր եղբայրութիւնը: Այս ձեռքերը վկայ են:

«Այսպէս եղաւ Գէորգի եւ Ղասարմ բէկի համաձայնութիւնը:

«Ղասարմ բէկի մեկնելուն յաջորդ օրը, Գէորգ խումբով կ'անցնի Կոռածաղիկի շրջանէն Ուլասիսի (Չուխուրի) շրջանը, ապա Արտոնք գիւղը, ուր երկու օր հանգստանալէ ետք կրկին կ'անցնի Ղարս գիւղը, որ հեռու չէր Վարդենիս գիւղէն, Խրուների գիմացը, ուր կը դըռնուէր Մուսա բէկի քէօշկը, որուն կ'իշխէր անոր կրտսեր եղբայրը:

«Այդ օրը կարծես գիւղը հարսանիքի մէջ էր, մէկ կողմէ նուագը միւս կողմէ դհոլն ու զուռնան կը նուագեն, ժողովուրդը կը պարէ ու կ'երգէ. այդ գիշերը ուրախ եւ զուարթ օր մը անցուցին գիւղացիները»:

Գէորգի զինուոր Խասգիւղացի Մեսրոպ Շահնազարեան կը շարունակէ.—

«Ղարսի պահապան տղաներու հետ գիշերուան անունը փոխանակելէն յետոյ, մեզ առաջնորդեցին Միրոյեանի տունը՝ ուր Խասգիւղացի Տոնճօ Մոսոն իր տասնեակով իջեւանած էր: Քիչ մը հանգըստանալէն յետոյ, գացինք Բաւօ Մարգարի տունը, տեսայ Գէորգ եւ Գալէն թունտիւր կախուած կորեկ հատիկ կ'ուտէին, տղաներէն ոմանք հրացանները կը մաքրէին, ոմանք պատռոնտաշեր կը նորոգէին. իսկ ոմանք ալ անկիւն մը առանձնացած կը կատակէին եւ կը ժղլէին օրուան անցուղարձերու շուրջ: Տեսարանը լաւ տպաւորութիւն թողուց վրաս, բոլորին բարեւեցի եւ կանգնեցայ: Գէորգը տեղէն քիչ մը շարժեցաւ եւ ըսաւ. հազար բարով եկար Մեսրոպ ջան, ապա եւ ոտքի կանգնելով ճակատս համբուրեց, ես ալ խոնարհաբար իր ձեռքը սեղմեցի:

«Գէորգը ձեռքը դրեց ուսիս վրայ եւ ըսաւ.— «Ապրիս իմ պզտիկ զինուոր, հըլէ ըսէ, Ալվառինջու լերան թաքստանոցի մէջ պահուած ռազմամթերքը բերեցի՞ր»: «Այո, — ըսի, — Մրրիկի եւ մի քանի կըտրիճ ընկերներու օգնութեամբ, ամբողջ ռազմամթերքը բերած եմ եւ հիմա կը դտնուի Միրոյեանի տունը, Տոնճօ Մոսոյի հսկողութեան ներքեւ»: Գէորգին դուրեկան դէմքի վրայ ուրախութեան ժպիտը կը թաւալէր, երբ կանչեց Յակոյին եւ պատուիրեց, որ Միրոյեանի տունը եղած ռազմամթերքը իր քով փոխադրեն:

«Մինչ մենք ընկերական տաք մթնոլորտի մէջ անուշ-անուշ կը ժղլէինք եւ կը կատակէինք, յանկարծ դուռը բացուեցաւ եւ Միրոյեան

տան ծերունազարդ քահանան Տ. Յարութիւնը ներս մտաւ. ողջոյն ձեզ ըսաւ, բոլորս միասին ոտքի կանգնեցանք եւ Տէր Հօր բարեւեցինք, Գէորգը Տէրտէրին հարցուց. «Տէր Հայր խէ՞ր է, թէ շար է», Տէր Հայրը ըսաւ, «խէրն ու բարին թըխ յիգայ բոլորիդ վրէն, ես եկայ ձինէ խնդրանք մ'ընելու, կը յուսամ չպիտի մերժէք». Գէորգը ըսաւ.— «Տէր Հայր կը խոստանամ խնդիրքդ չմերժել, եթէ հնարաւոր է»: Տէր Հայրը շարունակեց ըսելով.— «Երկար տարիներէ ի վեր է, որ քահանայ ձեռնադրուած եմ, իմ միակ բաղձանքը եղած է պատարագ մը մատուցանել Հայ զինուորի ներկայութեան եւ մասնակցութեամբ: Փառք նախախնամակալին, որ դուք այսօր հոս էք, վաղուան կիրակին Ս. Զատիկի կիրակին է, ես զիս պիտի տեսնեմ Ղեւոնդ երէցի դերին մէջ, պատարագ մատուցանեմ, ձեզի հաղորդեմ, որ այդ Սուրբ Հաղորդութիւնը ձեզի օգնական ու պահապան եղնի ու պաշտպանի զձիզի ամէն վտանգէն, ու երբ այս իմ բաղձանքը կատարուի Աստուածութիւն թող զիմ հոգին առնէ»:

«Տէր Հօր առաջարկը բոլորիս զարմանք պատճառեց, վայրկեան մը լռութիւն տիրեց, ամէն մէկը սկսած էր մտածել եւ ինքնիրեն որոշումներ տալ, «ըդ հըմլայ բան իմա՞լ կ'եղնի», Գէորգը լռութիւնը խզեց ըսելով. «Տէր Հայր, դուն շատ լաւ խօսացիր, բայց պէտք է գիտնաս, որ մենք ազատ չինք ժամ երթալու եւ պատարագի արարողութեան մասնակցելու, մենք այդ ազատութիւն ձեռք բերելու համար է որ արիւն կը թափենք, եւ երբ մենք տիրացանք երկար տարիներ սպասուած ազատութեան, այն ատեն է որ խաչով ու խաչալամաներով անդաստան պիտի դառնանք եկեղեցիին ներսը եւ դուրսը, եւ փառաւոր պատարագ պիտի մատուցանենք, եթէ մենք չենք տեսներ մեր յաջորդ սերունդը թող տեսնէ»:

«Տէր Հայրը ըսաւ. «Այո Գէորգ զաւակս, ինչ որ ըսեցիր հմալ է, սակայն պատարագը մեր զինուորներու մէջ եռանդ կը յառաջացու, առանց եկեղեցու եւ առանց պատարագի մըր Հայ ազգը չկարայ ապրի, հինգ հարիւր տարիներու գերութեան ժամանակամիջոցին եթէ մենք չունենայինք եկեղեցիներ, վանքեր ու թուխամանուկներ, մենք շատոնց կորսուեր էինք: Մեզնից շատ աւելի զօրաւոր եւ մեծ ազգերը դացին, ու մենք դըռ կը մնանք: Յորի՞. որովհետեւ Քրիստոնեայ մնացինք ու զմըր լեզուն ու զմըր կրօնք սիրեցինք: Այսօր Զատիկ է, կէս գիշերէն յետոյ կը սկսինք պատարագ մատուցանել, դուք խըմբով եւ զինուած կու գաք եկեղեցին, ես գիտեմ ձըր մէջ դպիր լէ կայ, սպասաւոր լէ կայ, ու առօք փառօք պատարագ մը պիտի մատուցանենք»:

«Պասգեղու Տոնճօ Մոսոն ոտքի կանգնեցաւ, եւ ըսաւ. «Տէր Հայր, եթէ Գէորգը յարմար գտնէ եւ մեզ արտօնէ եկեղեցի երթալ, ես դպիր կ'ըլլամ, Մեսրոպը սպասաւոր թող ըլլայ, Գէորգը թող բուրվառ թալէ. իսկ միւս տղաները կրնան դպրաց դասին մասնակցիլ, կրնան աղօթել»:

«Գալէն, որ ուշի ուշով մտիկ կ'ընէր, սկսեց քա՛հ քա՛հ խնդալ եւ ըսաւ. «Մոսօ բոլոր տղաներին պաշտօն տուեցիր, հապա ես ինչ ընե՞մ» : «Գալէ, զուրպան դու լէ միւսների հետ գըմմա՛յ», ըսաւ Խարսայ Յակոն :

«Գէորգը տեսնելով որ տղաների մէջ զօրաւոր փափաք կայ պատարագին ներկայ ըլլալու, կանչեց Եղոյին եւ ըսաւ, որ բոլոր տղաներին լուր տայ, որ պատրաստուին եկեղեցի դալ :

«Կէս զիշերին բոլորս հաւաքուեցանք եկեղեցին : Պատարագին մասնակցեցան հետեւեալ ընկերները. Տոնճօ Մոսոն՝ դպիր, տողերիս գրող՝ սարկաւագ, Գէորգ Չաւուշը՝ բուրվառապետ, Եղոն եւ Խասգեղու Մկրտն դրան պահապան, իսկ միւս տղաները ոմանք դպրաց դասին մասնակցեցան, ոմանք կ'աղօթէին, իսկ ոմանք ալ արթուն պահակի նման կը հսկէին եկեղեցւոյ ներս եւ դուրսը :

«Խորհրդաւոր պատարագը սկսեց : Խասգեղու Տոնճօ Մոսոն իր գմայլելի եւ զիլ ձայնով երգեց «Խորհուրդ խորին»ը, Միրոյեան Մարգարի մասնակցութեամբ, վարագոյրը բացուեցաւ, Գէորգը բուրվառ ձգելով՝ պատարագիչ քահանայի առջեւ դպրաց դասի հետ թափօր պտրտեցանք եկեղեցւոյ մէջը : Հետաքրքիր էր լսել պառաւ հալւորների ջերմեռանդ աղօթքին հետ եղած բացազանչութիւնները : «Աստուած, այսուհետեւ դու զմըր հոգին առ, քընի որ մենք մըր աչքերով տեսանք՝ Հայ զինուորի մասնակցութեամբ պատարագ մը, ըլ ինչո՞ւ կ'ապրինք» :

«Ծերունի Բաւայ Մարգարը, որ իր բարի, համեստ եւ հայրենասէր բնաւորութեամբ բոլորէն կը սիրուէր, եւ արժանացած էր «Հայրիկ» անուան, արտասուք աչքերին մօտեցաւ Գէորգին եւ ըսաւ. «Գէորգ լա՛օ, զբուրվառ խայիմ թալ, որ ըդ կնդրուկի ծուխը երկինք բարձրանայ ու քոոցնէ զմըր թշնամիներու աչքերը» :

«Գէորգը ոգեւորուած զբուրվառը աջէն ու ձախէն կը թալէր, եւ երբեմն-երբեմն երգեցողութեան կը մասնակցէր : Ոգեւորութիւնը շատ բարձր էր, թէ տղաներու եւ թէ զարսեցի հաւատացեալ ժողովրդեան մէջ : Գէորգի կարգադրութեամբ բոլորս հաղորդուեցանք : Տէր Հայրը ամէն մէկին մէկ-մէկ նշխար տուաւ եւ ըսաւ. «Այս նշխարը կը պահէք ձեր քով, անիկա ձեզի զօրավիգ կ'ըլլայ որեւէ դժուարութեան հանդիպած ժամանակ, ես իմ նպատակին հասայ, Աստուածութիւն թրխ զիմ հոգին առնէ, բոլորդ մնաք խաղաղութեամբ» եւ պահպանիչով մը պատարագը վերջացուց :

«Բոլորս դոհ եւ ուրախ տրամադրութեամբ Տէրտէրի աջը համբուրեցինք եւ աճապարանքով մեկնեցանք դէպի Վարդենիս գիւղը, յաջորդ օրը վերագարձանք Յարդոնք գիւղը : Այդ միեւնոյն երեկոյեան Գէորգի կարգադրութեամբ բոլորս հաւաքուեցանք Խաչի տուն եւ անհամբեր կը սպասէինք Ղասըմ պէկի դալստեան, որ սկսէինք երկար սպասուած զինուորական խորհուրդի աշխատանքներուն :

«Մեր սպասողական լռութիւնը խզեց Յարդոնաց Չնտոն, հե-



ՁՆՏՕ՝ Յարդոնի գիւղացի

տեւեալ ձեւով. — «Ընկերներ, այսօրուան մեր ժողովին՝ Ղասրմ բէկի ներկայութիւնը և մասնակցութիւնը մեր աշխատանքներուն անիմաստ է եւ վնասակար, անիկա անկեղծ չէ մեր հանդէպ, անիկա իր գործունէութեան ծրագիրները կը ստանայ հայատեաց և բարբարոս թլայ շէխերից, անիկա իր աղուէս եւ խորամանկ քաղաքականութեամբ եւ անուշ ու շողոքորթ լեզուով կը փափաքի հասկնալ մեր յեղափոխական գաղտնի գործունէութիւնները, անիկա կ'ուզէ եւ կը փափաքի ծանօթանալ Դուրան Բարձրաւանդակի շատ մը կարեւոր եւ գործօն ընկերներուն, կը փափաքի ծանօթանալ մեր զէնքերու տեսակին եւ ռազմամթերքի պաշարներին, անիկա կառավարութեան կողմից վարձկան լրտես մըն է: Հետեւաբար, մենք ամենախելացի քայլը առած կ'ըլլանք, որ այսօր նոյնիսկ անոր եւ երկու ղոլամներին մէջտեղից վերցնենք, այն ատեն աւելի խաղաղ եւ ազատ գործունէութեան շրջան մը կ'ունենանք Տարօնոյ աշխարհին մէջ: Ես անոր ոտքից մինչեւ դլուխ կը ճանչնամ. անիկա վատ է, նենգ է եւ դաւաճան՝ նոյնիսկ իր հարազատների հանդէպ, ես անոր քով եղած եմ երկար տարիներ, մասնակցած եմ շատ մը քրտական եւ աշիրէթական կռիւներին, փայ-

լուն յաղթանակներ տարած եմ եւ վայելած եմ անոր վստահութիւնը : Բայց Հայ ըլլալուս համար դիմած էր ամէն ներելի եւ աններելի միջոցներին ինծի մէջտեղից վերցնելու , իր կիներ որ անսահման սէր ունէր ինձ հանդէպ , ինծի թելադրեց որ հեռանամ , այլապէս կեանքս վտանգի տակ էր : Յարմար առաւօտ մը դեռ Ղասրմ պէկը քնած էր , առի զէնքս եւ փախայ իր քովից , եւ միացայ Գէորգ Չաւոռչի խրմբին , անտես ընելով իր շատ մը սպառնալիքները : Հիմա ելնել եւ անոր ներկայութեան ժողովի աշխատանքներով պարապիլ , ես կը գտնեմ շատ վտանգաւոր» :

Ջնտոյի ըրած յայտնութիւնները մեծ ազդեցութիւն դործեցին բոլոր ընկերներու վրայ : Գալէն իր տեղից քիչ մը ժխտուելով նստեցաւ եւ ըսաւ . «Ասուած լէ հախ է , Ջնտոյի ըրած խօսքերը շատ դրուստ է . ես լէ քրտերին լաւ կը ճանչնամ , անոնց ազդեցութիւնը շատ է ռայա քրտերի վրան , եթէ պէկերը եւ աղաները չըլլան , ռայա քրտերին կը դարձնենք այնպէս ինչպէս որ մենք կ'ուզինք , ռայա քիւրտը շատ վախկոտ է , կտրիճ կը դառնայ այն ատեն երբ մէկը իրեն կը հրամայէ , ես էլ Ջնտոյին(*) համաձայն եմ Ղասրմ պէկը մէջտեղից վերցնել» :

Չորս կողմից ձայներ .— Մենք լէ համաձայն ենք , որ այդ դադանին մէջտեղից վերցնենք , լաւ պատահութիւն ներկայացած է , սպասելու չենք՝ եւ նման կարգ մը բացադանչութիւններ . . . մէջտեղից վերցնենք . . . լաւ պատահութիւն է . . . մէջտեղից վերցնենք . . . :

Գէորգը տեսնելով , որ խնդիրը ծայրայեղութեան կ'երթայ , ոտքի կանգնեցաւ եւ ըսաւ . «Ընկերներ , այդ մտքերը որ դուք կ'արտայայտէիք ես համակարծիք չեմ , Ղասրմ պէկի ներկայութիւնը եւ իր գործօն մասնակցութիւնը մեր հետ , ոչ թէ վնասակար է , այլ՝ ունի իր շատ մը օգտակարութիւնները , օրինակ . մենք անոր անունը կը շահագործենք քիւրտ հասարակութեան մէջ , երբ անիկա մեր հետ ըլլայ , մենք աւելի համարձակ եւ ազատօրէն կրնանք մեր քարոզչութիւնը ընել եւ որեւէ քիւրտ չի համարձակիր մեր վրայ ծուռ աչքով նայիլ , անտարակոյս՝ մեր գործունէութեան ամբողջ գաղտնիքը իրեն պիտի չըսենք , անիկա մեր ազդեցութեան տակ է . երբ կը տեսնենք որ դսամին կողմէ , ըն ատեն դսամաթէ պոկի վրէն աղէկ մը կը ժրենք , բայց քընի որ դմբը սէլ կը քաշէ , թըխ երթայ քաշէ , ինչքան որ կրնայ ,

(*) Աւա՛ղ , որ ընթացք չտրուեցաւ Ջնտոյի ըրած առաջարկին : Ջնտոն օրուան ամենահեռատես եւ իրատես մարդն էր : Հակառակ անոր , որ զինուորական բարձր կրթութիւն մը չուներ , սակայն կեանքի փորձառութեան բովից անցած , բրձուած յեղափոխական մըն էր , եւ իր ըրած առաջարկին ընթացք չտրուիլը պատճառ դարձաւ , որ այդ մեծ գազան Ղասրմ պէկը տմարդօրէն , բնած տեղ սպաննել տայ Ջընտոյին , Սէյտոյին եւ համալսարանական վաստիւնի եւ ապագայ խոստացող երիտասարդ Չաւեհիմ , միեւնոյն տան մէջ , ուր տեղի կ'ունենար զինուորական խորհրդակցական ժողովը :

միկա ելնանք ու ըզ հըմ լայ բան էնինք տղայ մարդու գործ է, ես հաւատացած եմ որ անիկա մըր անկեղծ ընկերն է, մըղի հետ կը մնայ, մըղի հետ կը գործէ, եւ շատ օգակար ծառայութիւններ կրնայ մըղի տալ» :

Գէորգը դեռ իր խօսքը չէր վերջացուած երբ պահապաններէն մէկը հեւքոտ ներս մտաւ եւ ըսաւ . Ղասըմ պէկը կու գայ : Գէորգը ըսաւ ներս հրամցուցէք, ու ահա երկայնահասակ, գեղեցիկ գէմքով, վայելուչ արտաքինով երիտասարդ պէկը ներս մտաւ իր երկու զոլամների (Հըսէն եւ Հիւսէն) հետ :

«Բոլորս ոտքի կանգնեցանք եւ իրեն բարի դալուստ մաղթեցինք, թէ հայերէնով եւ թէ քրտերէնով, միջանկեալ . Ղասըմ պէկը եւ իր երկու զոլամները լաւ հայերէն կը խօսէին, այնպէս որ ժողովի լեզուն գրեթէ հայերէն էր : Մի քանի վայրկեան կանգնած տեղ իրար բարեւելէ եւ կարգ մը հարց ու փորձէ յետոյ, Ղասըմ պէկը եւ Գէորգը իրարու քով նստեցան եւ մենք կարգաւ իրարու քով շարուեցանք :

«Մի քանի վայրկեան լռութիւն տիրեց, կարծես թէ երկու զօրաւոր թշնամիներ իրարու ոյժը կը չափէին, հետադատող սուր նայուածքները կայծակի արագութեամբ տան մէկ անկիւնէն միւսը կը դառնան, շատերի սրտերի մէջ անվստահութեան զօրաւոր փոթորիկները իրարու կը բախէին, կարծես թէ աներեւոյթ ոգի մը ասուպի արագութեամբ բոլորի սրտերի մէջ կը դառնար եւ կը մըմնջէր, մի' վստահիք, մի' հաւատաք այդ գազանաբարոյ եւ արիւնարբու քիւրտին, անոր բարեկամութիւնը վտանգաւոր է, անոր ընկերական յարաբերութիւնները կանխամտածուած եւ կանխապատրաստուած զրգուելի ծրագիրներ են, որ ապագային եւ յարմար վայրկեաններին գործադրութեան կը դնի, որի հետեւանքը աղիտալի կ'ըլլայ, ամենագովելի գործը ըրած կ'ըլլաք, որ ատոր մէջտեղից վերցնէք, այն ատեն է, որ ազատ գործունէութեան ասպարէզ կը բացուի ձեզ Տարօնոյ աշխարհին մէջ :

«Այդ խորհրդաւոր լռութիւնը անզգալաբար սպասուածէն աւելի տեւեց, հաւանաբար տասնեակ մը վայրկեաններ, անհանգստութեան եւ ատելութեան նշանները կը թաւալին բոլորի դառնացած գէմքերի վրայ, եւ այդ կասկածը աւելի շատցաւ եւ զօրացաւ, երբ նկատեցինք որ Հըսէն եւ Հիւսէն դրան ետեւ կանգնած կարծես թէ հրամանի մը կը սպասէին, անոնց կեցուածքը եւ դիրքը չէզոքացնելու համար, Խասգեղու Տոնձօ Մոսոն եւ Մկրոն դուրս ելլելու պատրուակով կազմ ու պատրաստ կանգնեցան Հըսէնի եւ Հիւսէնի ետեւը :

Ղարսեցի Յակոն տեսաւ, որ բան-բանից կ'անցնի, ոտքի կանգնեցաւ եւ ըսաւ «ըւ չի՞է, նուն ջըռայ խըպըր նատիի» (այս ի՞նչ է ինչո՞ւ չէք խօսիր), բոլորը հիասթափուած այդ լռութենէն, ինքզինքնին դտան եւ սկսեցին սովորական պարզ խօսակցութեան : Գէորգ իր սովորական պաղարիւնութեամբ բոլորին կարգի հրաւիրեց եւ ժողովը բաց յայտարարեց :

Ղարսեցի Յակոն հայերէնաձեւ քրտերէնով ժողովի նպատակը պարզեց, ըսելով հետեւեալը. — «Ընկերներ, այսօր մենք հոս հաւաքուած ենք հաշիւ տալու անցեալ ձմեռուան գործունէութեան եւ մեր ապագայ ընելիքներու մասին, ուրախ եմ յայտարարելու, որ մեր մեծ եղբայրը Ղասրմ պէկը մեր հետն է, մեզի կը գործակցի եւ մեզի հետ կ'աշխատի, որ հայերը եւ քիւրտերը ազատագրուին Սուլթաններու անարգ լուծէն: Ուրախ եմ յայտարարելու, որ անցեալ ձմեռը շատ խաղաղ եւ արդիւնաւոր շրջան մը ունեցանք, շնորհիւ մեր եւ Ղասրմ պէկի կազմակերպուած դադոնապահութեան: Հիմա դարուն է այլեւս, մենք պէտք է դուրս գանք մեր ձմեռուան թմրածութենէն եւ սկսինք մեր յեղափոխական աշխատանքները յառաջ տանիլ մեծ եռանդով: Մենք օրակարգի վրայ ունինք հետեւեալ հարցերը. —

- 1. — Հայերու եւ քիւրտերու բարեկամութիւնը եւ անոնց միջեւ սերտ գործակցութիւն:
- 2. — Ռազմամթերքի հայթայթում:
- 3. — Մեր այս տարուան գործունէութեան կերպը:
- 4. — Ուրիշ հարցեր»:

Գէորգ Չաւուշ կը կատարէ ժողովին բացումը, ծանրանալով մասնաւորաբար հայ եւ քիւրտ բարեկամութեան ու սերտ գործակցութեան անհրաժեշտութեան ու կարեւորութեան վրայ: Կը շեշտէ, որ թիւրքը ծրագրուած ատելութիւն կը սերմանէ հայերուն եւ քիւրտերուն միջեւ, թշնամացնելով երկու ժողովուրդները. դիտակցութեամբ եւ իրերհասկացողութեամբ միայն կարելի կ'ըլլայ առաջը առնել այդ դաւերուն:

Գէորգ Չաւուշէն ետք խօսք կ'առնէ Ղասրմ բէկ, որ Գէորգի տեսակէտներուն իր համամտութիւնը յայտնելէ ետք, կը խօսի իր ցեղախումբի ոյժի մասին եւ հայերու հանդէպ տածած իր բարեացակամութեան ու բարեկամութեան մասին: Անդրադառնալէ ետք սուլթանական կառավարութեան դաւադիր քաղաքականութեան, Ղասրմ կ'եզրակացնէ. — «Այսօր ես իմ ազատութիւնը կաշկանդած եմ, հոս եկած եմ այս դիշերային ժողովին մէջ ձեր հետ միասին աշխատելու մեր գործի յաջողութեան համար եւ ես հաւատացած եմ, որ եթէ մենք իրարու վստահինք ու իրարու հանդէպ անկեղծ ըլլանք եւ հաւաքաբար գործենք, շատ կարճ ժամանակամիջոցի մէջ կրնանք սուլթանական լուծը մեր վրայէն թօթափել: Մեր առաջին գործը ըլլալու է իրարու վստահիլ. — վստահութիւնն է, որ գործը կը դիւրացնէ»:

Ղասրմի այս խօսքերը որոշ չափով կը մեղմեն իր հանդէպ Ֆետայիներու վերապահութիւնը: Միայն Ջնտոն է, որ կը յամառի իր վերապահութեան վրայ:

Ժողովը կը զբաղի օրակարգի միւս հարցերով ալ եւ մասնաւորաբար Վանէն դէնք պահանջելու եւ Տարօն փոխադրելու խնդրով:

Ղասրմ բէկի հետ եղած խորհրդակցական ժողովը լրանալէն

յետոյ, միեւնոյն գիշերը՝ Ջնտոն իր երկու ընկերներով Օձ քաղաքի վրայով կը մեկնի Ախլաթ՝ Վան երթալու համար, որպէսզի գրադի դէնքի եւ փամփուշտի փոխադրութեան հարցով:

Ղասըմ բէկը եւ իր երկու ընկերները՝ Հըսէն եւ Հիւսէն կը մեկնին Խըւնէր, իսկ Գէորգը իր խումբով հանգստանալու կ'երթայ Արտոնք գիւղը:

ՂԱՐՍԻ ԿՌԻՒԸ

«Յաջորդ օրը Գէորգի կարգադրութեամբ մեկնեցանք Ղարս գիւղը եւ հոն հանգիստ ըրինք: Ղարս հասնելնուս պէս խումբը բաժնեցինք չորս տասնեակներու, ատիկա ռազմագիտական պատրաստութիւն էր ինքզինքնիս որեւէ սլատահականութեան դէմ պաշտպանելու համար, — կը շարունակէ Մեսրոպ:

Գէորգ, Գալէն, Եղոն եւ մի քանի ընկերներ գացին եւ տեղաւորուեցան Բաւայ Մարգարի տունը, որ կը գտնուէր գիւղի հարաւարեւմուտքը: Խաս գիւղի Մոսոն, Մկրոն եւ ես մի քանի ընկերներով մնացինք Ղարսայ Մերոյի տունը, որ կը գտնուէր հիւսիս-արեւելք: Տասնեակ մը տեղաւորուեցաւ գիւղի հարաւը: Իսկ միւս տասնեակներն ալ գիւղի հիւսիսը:

Այդ օր առաւօտեան՝ ես եւ մեր գիւղացի Տոնձօ Մոսոն կանուխ արթնցանք, գացինք եկեղեցին աղօթելու եւ եկեղեցական արարողութեան մասնակցելու համար: Եկեղեցական արարողութիւնը լրանալէն յետոյ Մերոյի տան ծերունագարդ քահանան Տ. Յարութը մօտեցաւ մեզի եւ ըսաւ. — «Աստուած օրհնէ զաւակներս, ես յըսօր գիշեր վատ երազ մը տեսեր եմ»:

— «Խէր էղնի Տէր Հայր» ըսաւ Մոսոն:

— «Խէրն ու բարին թըխ յիգայ ձըր բոլորի վրէն, կ'աղօթեմ որ քաջ ու կտրիճ էղնինք որ խըխամըցուք զմըր թշնամին»:

«Գիշեր երազիս մէջ տեսայ, որ երկինք ու գետինք մթուկեց, ամպերը սկսան դոռդռալ, Մշու քաղքի կողմից մըժ ու տուման պատեց զամբողջ Մշոյ դաշտ ու Դուրան, արեւմուտքից չորս գլխանի վիշապ օձ մը Ֆըշֆըշալով, զիր բերանը բացած, յընցաւ զՄեղրագետը, զՄկրագոմ, զՅալիզըլբուն, զԳրմերտ, զՅառնիստը ու էկաւ հասաւ մըր գեղի կալեր, կ'ուզէր զմըրի կլել, մեր գեղի ջըհէլները տեսան որ ճար չկայ, բոլորը հաւաքուեցան իմ քով եւ ինձմէ հարցուցին. «Տէր-տէր, ի՞նչ ընենք ըս վիշապ օձին միկայ կը կըլու զմըրի, ըն խըտէր մեժ է, որ մեր թֆընքներու դուլուլէն ընոր չի բանի: Տէր Հայր չըս կրնա՞յ աղօթելով զըտ օձ կապի որ չը կլու զմըր գեղ»:

Ես տղաներին ըսեցի, «Չաւակներս, մը վըխէնէք, առէք զձըր գերընդիներ, զհրա-

ցաններ, զբահեր ու զկեռներ, յարձակեցէք ըտ գազանի վրէն, զըրկէք ու զըրկէք ու հըմալ զըրկէք որ սատկըցուք զըտ գարշելի գազանը» :

— Տղաները բոլորը միասին սրտանք կանչեցին՝ «Եա Մշու Սուլթան Սըբ Կարապետ, դու մըզի ուժ տաս» ու յարձակեցան վիշապի վրէն, աջէն ձախէն զրկեցին ու զրկեցին հնչի սպաննեցին զըդ գազանը :

Ես կը վըխենամ որ յըսօր բան մը պատահի, պլէ, ինչ որ էղնի կամօքն Աստուծոյ դուք յաջողութիւն կ'ունենաք :

Եւ այսպէս խօսելով եկանք տուն Տէր Յարութիւնի հետ միասին :

Մերոյի նահապետական տունը նախաճաշի պատրաստութեան մէջ էր թէ մեզի եւ թէ այդ բազմանդամ ընտանիքին : Տանտիկիների առաջին գործը եղաւ նախաճաշ տալ գիւղատնտեսական աշխատանքներով պարապողներին, որոնք առան զեզներ եւ զզոմէշներ եւ զնացին զարտերը հերկելու եւ ցանելու : Մեզ համար ալ սեղան պատրաստեցին, Տէր Հայրը զսեղան օրհնեց ու բոլորս միասին ճաշեցինք :

Մոտոն ըսաւ. — «Տղաներ Տէրտէրը յըս գիշեր վատ երազ մը տեսեր է» : Տղաներից մէկը ըսաւ. — «Տէր Հայր, դու կը քնիս քեզի, զերազ կը տեսնես ուրիշին» : Տէր Հայրը համառօտ կերպով պատմեց իր տեսած երազը : Մկրոն ըսաւ, «Աստուած լէ հախէ, ո'ւր էղնի յըսօր մենք կռուի կը բռնուինք, պլէ, ես կը հաւատամ օր ըտ գազանի գլուխը պիտի ջարդենք» :

Գիւղը կատարեալ խրախճանքի մէջ էր, ոչխարներ մորթել, խորոված պատրաստել, կարծես թէ ուխտազնացութեան օր մըն էր, բայց այս ուրախութիւնը երկար չտեւեց» :

Յայտնի չէր, թէ ինչպէ՞ս Գէորգի ժամանումի լուրը շուտով իմացուեցաւ Մշոյ եւ Պիթլիսի իշխանութեանց կողմէ : Շուտով հազարապետ Սուլէյման աղայի եւ Հիւսնի բէկի կը հրահանգուի իրենց ոյժերով հասնիլ Ղարս գիւղը, նաեւ նոյն հրահանգները կը տրուին քիւրտ աշիրէթապետներուն ի միջի այլոց նաեւ Ղասըմ բէկին, որուն յանձնուած էին բոլոր այն ճամբաները, որոնք Ղարս գիւղը կը տանին :

Պահապանները լուր կ'ուղարկեն Գէորգին, որ Մշոյ կողմէ բազմաթիւ ձիաւոր եւ հետեւակ զինուորներ Դրմերտի ու Յառնիստի վրայով կու գան դէպի գիւղ : Գէորգ տանիքէն հեռագիտակով լաւ մը կը քննէ, ապա անմիջապէս կը հրամայէ իր զինակիցներուն, որ կազմ ու պատրաստ ըլլան, որեւէ հրացանաձգութիւն թող տեղի չունենայ, մինչեւ ինքը իր հրացանը կրակէ իբր ազդանշան :


Մուշի զօրքերը կը միանան ճամբու վրայ գտնուող բոլոր գիւղերու ոյժերուն՝ եւ կը յառաջանան դէպի Ղարս գիւղ, ուր կը հասնին առաւօտեան արշալոյսին : Ղասըմ բէկը դանդաղօրէն կը պատրաստուի իր հարիւրաւոր ձիաւորներով եւ իր ծառաներու միջոցաւ շուտով լուր կ'ուղարկէ Գէորգին, թէ ինք ստիպուած է գիւղ դալ եւ

կռիւին մասնակցիլ թրքական զօրքերու կողքին, այսուհանդերձ վրասահեցնելով, որ իրենց զնդակները օդը պիտի կրակեն, այնպէս որ Գէորգ կրնայ մասնաւոր վախ չունենալ իրմէ: Իբրեւ գործնական հաւաստիացում՝ այդ լուրը տանող երեք ծառաները, — Հիւսէն, Հըսէն եւ Մստոն, — կը մնան Գէորգին մօտ, նեղ պարագային թրքական զօրքին դէմ կռուելու պատրաստակամութեամբ:

Թիւրք բանակը Յառնիսա գիւղը անցնելով, կը շրջապատէ Ղարսի բոլորտիքը, բանակի մէկ մասը դիւրք կը բռնէ գիւղի հիւսիսային կողմը, քիւրտ աշիրէթները կը լեցուին արեւելեան եւ արեւմըտեան կողմը, փոսերու եւ առուններու միջեւ, իսկ հարաւը կը յանձնուի Ղասըմ պէկին, որ այդ օրը կը պատուիրէ իր աշիրէթին եւ խուժանին որ իրենց տեղերը մնան:

Բանակի հրամանատարը երբ գիւղին կը մօտենայ, կանչել կուտայ Միրոյի տղան Ռէս Գասպարն ու Պետրոսի Դաւոնն ու կ'ըսէ անոնց. — Ձեր վրայ շատ վստահութիւն ունինք, մենք իմացած ենք որ ձեր գիւղը եկած է Գէորգ Չաւուշը իր ընկերներով:

ԶՈՒԽՏԱԿ ԳԼՈՒԽ ՄԱՐԱԹՈՒԿ



Գասպարն ու Դաւոն կը պատասխանեն, որ այդպիսի անձեր չկան հոս, հիմա է որ ձեզմէ կ'իմանանք :

Հրամանատարը անուշ խօսքերով կ'ուզէ խաբել զանոնք, սակայն որեւէ արդիւնք չստանալով, ի վերջոյ կ'ըսէ իր վերջին խօսքը. — Գացէ՛ք եւ ըսէ՛ք Գէորգին, թող անձնատուր ըլլան : Մեր քարեխնամ կառավարութիւնը անոնց ներում տուած է, միայն թող գան եւ իրենց հպատակութիւնը յայտնեն եւ գէնֆերը թող յանձնեն, իսկ եթէ չգան չներկայանան, ձեր գիւղը կը վառենք եւ ձեզ բոլորդ ալ կը կոտորենք :

Գասպարն ու Պետրոսի Դաւոն, ուղիղ կ'երթան Գէորգի մօտ, եւ մանրամասն կը պատմեն հրամանատարի ըսածները : Գէորգ լաւ մը մտիկ ընելէ ետք, անոնց կ'ըսէ. «Գացէ՛ք հրամանատարին մօտ, համոզեցէ՛ք զինք եւ խօսքի բռնեցէ՛ք, թէ գիւղը մարդ չկայ, մինչեւ նոր կարգադրութիւն մը ընենք» :

Այլեւս Գէորգին համար անհնար էր կռուէն խուսափիլ. ան պիտի չափուէր թշնամի զօրքերուն հետ եւ ցոյց պիտի տար իր հնարքը՝ զարմացնելով աշխարհը, եւ կամ իբրեւ վերջին օր, պիտի մեռնէր իր Ֆետայիներուն հետ :

Այդ օր իր հետ էին 30-ի չափ ամենէն ընտիր մարտիկները. — Սպաղանաց Գալէն, Շէնիկի Մանուկը, Չոլոն եւ Ղազարը, Աւրանայ Արամը, Չաթոն, Մօրուք Կարոն, Մշեցի Եղոն, Ասատուրն ու Ախոն, Պօղէն ու Մոսոն, Մոկունցի Ղազարը եւ իր ընկերները, բոլորն ալ տասնեակ կռիւններ տեսած, մարմինները վէրքերով ծածկուած, իսկ հոգիները պողպատի պէս :

Այսպիսիներու հետ մեռնիլ՝ յաղթել կը նշանակէ : Ղարսի գիւղացիք ալ, իրենց առաջնորդ Յակոբի հետ, քաջ կռուողներ էին, որոնք կը միանան Գէորգին :

Գէորգ շուտով կը կանչէ գիւղին առաջնորդները եւ անոնց կը յայտնէ, որ «եթէ այսօր չկռուինք, բոլորս ալ տունով տեղով պիտի մեռնինք, փճանանք. եթէ կռուինք բոլորս ալ պիտի ազատինք : Մենք կը պահուինք տուներու մէջ, գիւղին երիտասարդները թող չերեւան Ֆետայիներուն կողմերը, թող մնան իրենց տուներուն մէջ, մնացածները հանգիստ թող ընեն, եւ առօրեայ գործերով զբաղին, իբրեւ թէ գիւղին մէջ Ֆետայի չկայ : Առաջնորդները թող առաջ անցնին եւ երթան գիւղը պաշարող զօրքերուն մօտ եւ ըսեն, թէ Ֆետայիները եկան, բայց անցան դացին, թող զօրքերը խուզարկեն գիւղը : Եթէ գտնեն մեզ, այն ատեն ես ձեզի կ'ըսեմ թէ ի՞նչ պէտք է ընէք» :

Ան Ֆետայիները կը բաժնէ վեց տան մէջ, իսկ գիւղի երիտասարդութիւնն ալ իրենց տուները ձգելով, կը պատուիրէ, որ կրակ չբանան որեւէ պարագայի տակ, մինչեւ որ ինք հրամայէ :

Բանակի հրամանատարը իր խումբով կը յառաջանայ դէպի գիւղը : Երեւելիներէն խումբ մը՝ աղ ու հաց առած, ուղիղ կը մօտենան հրամանատարին, իմաց տալու, որ գիւղը ոչ մէկ Ֆետայի կայ : Անոնք կ'ըսեն. — «Ճիշդ է, երկու օր առաջ Գէորգ Չաւուշ եկաւ, բայց

անցաւ զնաց, եթէ կ'ուզէք մտէք զիւզը եւ խուզարկեցէք, եթէ ոեւէ մէկը գտնէք, մենք մեզ կը յանձնենք ձեզի իբրեւ պատանդ, յօժար կամքով սպաննուելու...» :

Գասպարը դառնալով հրամանատարին, կ'ըսէ. — Ինչո՞ւ ճիշդը պիտի չխօսինք. քանի որ դուք կ'ուզէք մեր զիւզը պաշտպանել. մենք ձեր վրայ շատ վստահութիւն ունինք: Հրամանատարը գրեթէ հաւատալով Գասպարին պիտի վերադառնար, երբ Բաղըրխան Աֆէտիի եղբայրը Մայադին կ'ըսէ. — «Ի՞նչ մտիկ կ'ընես այս հայերուն, կը խաբենիք: Գէորգ Զաւուշը գիւղն է: Հրաման տուր յարձակիմք եւ բռնենք զինք: Մուշէն ելած ժամանակ, Մայադին կ'երթայ եղբօրը մօտ եւ կ'ըսէ. — Այս անգամ պիտի երթամ եւ Գէորգ Զաւուշը իմ ձեռքովս պիտի բռնեմ ու բերեմ: Բաղըրխան կ'ըսէ. — «Յղո՛ւլ, մի՛ երթար» :

Բանակի հրամանատարը կ'ենթարկուի Մայադինին եւ կը հրամայէ երկու վաշտ զինուորներու հետ զիւզ մտնել՝ խուզարկելու: Մայադին առիւծ կտրած բարձր ձայնով կ'ըսէ. — «Խոզեր, դուք սուտ կը խօսիք, հիմա երբ զիւզը խուզարկենք, կը տեսնէք թէ Գէորգ հո՞ն է թէ ոչ»: Գասպարը եւ Պետրոսի Գաւոն իրենց առջեւ առած կը մըտնեն զիւզ, ճամբու վրայ գտնուող զիւզացիներուն կը հարցնեն, թէ զիւզի մէջ Ֆետայիներ կա՞ն. զիւզացիները կը պատասխանեն, որ զիւզին մէջ այդպիսի կասկածելի Ֆետայիներ չկան:

Մենք զիւզը պիտի խուզարկենք ըսելով, հրամանատարը կը մտնէ զիւզ իր զինուորներով. հապճեպով կը խուզարկէ տուները եւ ոչ ոք կը գտնեն: Այսպէսով, այլեւս վստահ, առաջնորդներն իրենց հետ առած՝ կ'որոշեն զիւզ մնալ՝ դարձեալ խուզարկելու պատրուակով կանանց ձեռք տալու եւ ուրիշ օգուտներ քաղելու նպատակով:

Նոր վաշտ մը եւս զիւզ կը մտնէ, դարձեալ կը սկսի խուզարկել: Բայց այս անգամ անոնք կ'ուղղուին դէպի Բաւայ Մարգարի տունը, ուր պահուած էր Գէորգ՝ վեց ընկերներով: Երբ Բաւայ Մարգարի տունը կը շրջապատեն եւ դուռը կը զարնեն, ուզելով տունը խուզարկել, ան կ'ըսէ, թէ ոչ մէկը կայ կրնաք խուզարկել:

Սպաններէն մէկը հայհոյելով կ'ըսէ, «կորսուեցէք այս տեղէն շուներ», եւ անմիջապէս հրամանատարը իր մարդոցմով կը մտնեն Բաւայ Մարգարի տունը, խուզարկելու համար: Սարերու Ասլան Գէորգ Զաւուշը կը մնայ պաշարուած տան մէջ, պաղարիւն՝ որ թըշնամին իր գտնուած տեղը հասնի ապա կրակէ: Հրամանատարը կասկածելով, որ Գէորգ հոն է կը հրամայէ կրակ բանալ, նախ դռնէն ապա երդիքէն: Գէորգ կը տեսնէ, որ արդէն շատ մօտ են իրեն, կուտայ կրակելու առաջին ազդանշանը, որուն կը յաջորդեն միւսները: Գէորգի եւ Գալէի գտնուած տուները, որոնք պաշարուած էին արդէն, սկսած էին երկու կողմէ համազարկներու: Փռչկայ Յովոյի տան մէջ գտնուող Ֆետայիները դուրս կ'ելլեն իրենց տեղերէն եւ առաջին իսկ զնդակով Բաւայ Մարգարի տան տանիքի վրայ կը սպաննեն Մայա-



ԶՈԼՕ

(Յարութիւն Աբրահամեան) 1878—1937(*)

(*) Տես «Յեղափոխական Ալպում»ի 5-րդ հատոր, էջ 333:

զինը: Հրամանատարը այս տեսնելով կը սկսի փախուստի: Փախուստի ատեն կը հանդիպին Պետրոսի Դաւոյին, որուն կ'ըսեն.— «Կ'ըսես թէ մեր գիւղը մէկը չկայ. հապա ասոնք ի՞նչ են»: Ապա կը սպաննեն զինք:

Գէորդ այս լսելով այն կողմը կը դառնայ եւ կ'ըսէ փախչող թշնամիին.— շնե՛ր, զանմեզ ժողովուրդ կը ջարդէ՞ք, Գէորդ ես եմ. թէ որ փախիք՝ ձեր թագաւորի հացը ձեզի հարամ ըլլայ»: Քանի մը հոգի սպաննելէ ետք, կ'երթայ եւ կը համբուրէ նահատակ Պետրոսի ճակատը: Կռիւը աւելի կը սաստկանայ: Գիւղի չորս կողմէն ոտքի կ'ելլեն Ղարսի տղաքը եւ թշնամիին կրակի մէջ կ'առնեն, հոս էր, որ Շէնիկցի Չոլոն, Ղազարն ու Մանուկը եւ մի քանիներ հրաշքներ կը գործեն: Անոնք անսպասելիօրէն դուրս կը ցատկեն տունէ մը, որուն տանիքին վրայ եւ դրան առջեւ կային բազմաթիւ սպաներ, որոնք նոր ծրագիր կը կազմէին, կը յարձակին անոնց վրայ: Ֆետայիները եւ գիւղի երիտասարդութիւնը արդէն լեցուած էին փողոցներու մէջ եւ տանիքներու վրայ: Անոնք ժամանակ չեն տար, որ թշնամիին սթափի: Փողոցներուն նեղ անցքերը փակուած էին անոնց առջեւ. եւ ամէն կողմէ կրակ կը տեղար անդադար:

Թշնամիի մէկ մասը խուճապահար կը փախչի դէպի Բոստանի բլուրը՝ դիրք բռնելու համար. բայց Ֆետայիներու զնդակները գերանդիի պէս կը հնձեն փախչող զօրքը:

Հրացանի ձայնը լսելով՝ «Ի գէն հայեր ի սուր եւ ի հրացան» երգելով Միրոյի տունը գտնուող խումբը դուրս ցատկելով դիրք կը բռնէ տանիքին վրայ: Չորս տասնեակ գիւղի բոլորտիքը դիրքեր բռնած կը կրակէին թշնամիի վրայ: Տեղացի երիտասարդները իրենց զէնքերը թաքստոցներէն հանելով կատաղի կերպով կը կռուին: Առաջին տասը վայրկեանին քառասուն թիւրք զինուորներ եւ սպաներ կը սպաննուին: Ամէն կողմէ կրակ կը տեղային: Սպայութիւնն ու զօրքը կը կոտորուէին անխնայօրէն: Մնացեալ զօրքերը կը դիտէին գիւղը, կը լսէին աղմուկ, իրարանցում եւ ժխոր, բայց տակաւին վերահասու չէին դարձեր պատահածին: Այդ դիտող զօրքին գրեթէ բոլոր մեծաւորները գիւղին մէջ էին եւ հետեւաբար չէին կրնար հրաման տալ, նոյնիսկ այդ մասին մտածել, որովհետեւ անոնք կը սպաննուէին եւ կը կոտորուէին հայ Ֆետայիներու կողմէ: Գլուխը կորսնցուցած զօրքերը գիւղէն խուճապահար կը փախէին: Ամբողջ գիւղը ոտքի վրայ էր, նոյնիսկ կիները տուններէն դուրս ելած՝ կռուին կը մասնակցէին:

Հիւսնի բէկը կ'անցնի Գէորդի դիմաց: Ան մեծ ինքնավստահութեամբ եկած էր, որ ինք պիտի սպաննէ Գէորդը: Իր ձեռքն է Աղբիւր Սերոբի հրացանը, զոր ամէն տեղ հպարտութեամբ ցոյց կու տար եւ կը խօսէր իր հերոսութիւններու մասին: Գէորդ տեսնելով, որ թշնամիին կը մօտենայ իրեն, կը համբերէ որպէսզի ան աւելի առաջանայ, բայց անհամբեր Գալէն, որ կը դտնուէր Գէորդէն աւելի բարձր դիրքի մը վրայ, շեշտակի մէկ հարուածով գետին կը տապալէ

Հիւսնի բէկը : Գէորդ կը տեսնէ պատահածը , դիրքէն ելլելով կ'երթայ Հիւսնի մօտ եւ դաշոյնի քանի մը հարուածով կը սպաննէ զայն եւ մոսին հրացանը առած կը վերադառնայ իր դիրքը :

Սիւլէյման աղան տեսնելով Հիւսնի սպանութիւնը , կրակ կտրած կը յարձակի հայդուկներու վրայ . հաղիւ մօտեցած , Ֆետայիներու զնգակներու տարափին տակ կը վիրաւորուի եւ ձիէն վար կ'իջնայ , իսկ միւս ընկերները այս տեսնելով փախուստի կը դիմեն . . .

«Մօրուք Կարոն վրայ կը հասնի , — կ'ըսէ Յարութիւն Սարգսեան , — կ'ուզէ դաշոյնով սպաննել զայն , սակայն հազարապետը իր հուժկու ձեռքերով կը բռնէ Կարոյի ձեռքերը , եւ դժուարութեան կը մատնէ զայն . սուրհանդակուհի Ջըրէն իսկոյն կը հասնի իրենց մօտ , զինուորական սուրը կողքին , կը հանէ պատեանէն եւ մի քանի հարուածներ կու տայ Սիւլէյման հազարապետին , որը թոյլցած կը ստիպուի Կարոյին ձեռքերը ձգել . ու այն ժամանակ Կարոն , անոր հաշիւը կը մաքրէ , ապա անոր դաշոյնը(*) եւ սուրը առնելով , իր վրայ կը կապէ մինչեւ սահմանադրութիւն» :

Այս դէպքը հաղիւ 15 բոպէ կը տեւէ . զարսեցիները խլեր էին 100ի չափ հրացան , փողոցներու մէջ պառկեցուցած էին 24 սպայ եւ ոստիկանական բարձր պաշտօնեաներ եւ 60-ի չափ ալ պարզ զինուոր : Սպաննուած էր նաեւ զօրքին փողահարը , որուն շեփորը փչելու փորձ կ'ընէին Ֆետայիները , թիւրք զօրքին կեղծ հրամաններ տալով :

Կէս ժամ ետք՝ գիւղը մաքրուած էր . տանիքները , դռներուն սեմերը , փողոցները եւ տուններուն պատերը կարմիր ներկուած էին :

Ղարս գիւղը պաշարող զօրքը նոր խելքի կու գայ , բայց արդէն ուշ էր . կը ստիպուին խուճապի դիմել , քանի որ իրենց հրամանատարները չկային :

Քանի մը ժամ ետք , թշնամին կրկին կը մօտենայ գիւղին՝ աւելի մեծ թիւով եւ կ'ուզէ զայն սեղմել ամէն կողմերէ : Գիւղացիներն ու Ֆետայիները յաղթանակով արբեցած՝ երգով ու խաղով կ'ընդունին անոնց յարձակումները : Այլեւս դժուար չէր ետ մղել թշնամին , քանի որ գիւղացիները զինուած էին թրքական զօրքերու զէնքերով : Կ'ըլլան քանի մը ապարդիւն յարձակումներ ալ : Գալէն եւ Չաթոն , Չոլոն ու Մանուկը կը խոյանան թշնամիներուն վրայ : Աւրանայ Արամը հրաշքներ կը գործէ : Այլեւս ոչ ոք չի լսեր Գէորդի հրամանները եւ Մուկունցի խոհուն Ղազարի խրատը՝ հանդիստ մնալու : Ֆետայիները վրէժ կը լուծէին թշնամիի արիւնով , այդ օրը բախտը իրենց հետ էր :

Կռուի ամենատաք եւ վտանգաւոր դիրքը Գէորդ Չաւուչինն էր : Գիւղի տղաները տեսած էին , որ խոտի դէզերու ետեւը կարգ մը սպա-

(*) Մօրուք Կարոն յիշեալ դաշոյնը (հետագային) Երեւանի մէջ արծաթապատել կու տայ : Իսկ 1929-ին Ռուբէնի կարգադրութեամբ տոպրս գրողը յիշեալ դաշոյնը կը փոխադրէ Փարիզ Հ. Յ. Դ. Թանգարանը Ընկ. Գերասիմ Բալայեանին :

ներ օգնական հրամանատարի հետ դիրք բռնած անդադար կը կրակէին Գէորգի դիրքին վրայ: Եղոն, Միրոյեան Գասպար աղայի տղան, փորի վրայ սողոսկելով կը բարձրանայ տանիքը, ուր Գէորգը դիրք բռնած կը կրակէր, եւ կ'ըսէ. — Չաւուշ ուշադրութիւն դարձուր, խոտի դէզի վրան, ըտոնք մըզի լազաթ չըն ի տայ»:

Գէորգը այս ուր կը լսէ, կը սկսի հայհոյել քրտերէն «մընա պոզի պաւէ», սղամարդու պէս դուրս ելէք եւ կոուեցէք, ոչ թէ կնիկ մարդու պէս պառկիք խոտի դէզերու ետեւը», եւ մոտին հրացան ունեցողներուն կը հրամայէ դէզերը ծակծկել. մոտինի քանի մը համազարկերէն ետք, հոս պահուած այս գարշելի հրէշ սպան արջի պէս դռուալով գետին կը գլորուի:

«Գէորգը այդ գազանի իյնալը ուր տեսաւ, — կ'ըսէ Մեսրոպ, — ուրախ եւ ոգեւորուած ըսաւ. — «ով ուր երթայ այդ հրէշի սուրը եւ հրացանը բերէ, հերոսի պատուին կ'արժանանայ»:

«Մեր մէջէն Չարուհի անունով երիտասարդ եւ աշխոյժ աղջիկ մը ըսաւ. — «Գէորգ ես կ'երթամ» եւ անմիջապէս փորի վրայ սողոսկելով գնդակների տարափների տակ հասաւ անոր դիակի քով, անիկա դեռ չէր մեռած, Չարուհին վայրկենական անոր սուրը եւ հրացանը վրայէն առաւ, սուրի ծայրովը անոր աչքերը փորելէն յետոյ, վերադարձաւ եւ յանձնեց Գէորգին: Գէորգը ըսաւ, — «Չարուհի՛, քոյրիկ, հըպայ «զկալան» յորի չբերեցիր»: Չարուհին չսպասեց, որ Գէորգը խօսքը վերջացնէր, պարտականութիւնը կէս ձգած քաջի մը պէս, կրկին փորի վրայ սողոսկելով հասաւ հոն, սուրի պատեանը եւ վրայի հեռադիտակը առնելով բերեց եւ յանձնեց Գէորգին: Գէորգը համբուրեց Չարուհիի ճակատը եւ ըսաւ. — «դուն այսօրուայ մեր հերոսուհին ես եւ մեր յաղթանակի թագուհին, կամօքն Աստուծոյ մեր այսօրուայ կռիւը շատ յաջող դուրս կու գայ»:

«Կռիւը գնալով սկսեց տաքնալ, թշնամու գնդակները գտանիքներ կը հերկէին, փոշին բարձրացնելով օդին մէջ, մեր մոտինների գնդակները վրնկվրնկալով կը ծակծկէին թշնամու դիրքերը, քիւրտ աշիրէթների «սալալաթ»ը ականջնիս խլացուցած էր, որոնք իրենց դիրքերից ելած կը պոռային — «Չան Ֆիտաներ «որայ ուայէ» (յանձնըւեցէք), ապա թէ ոչ գձրը բոլորի ականջները կը կտրենք ու գձրգի կտոր կտոր կ'էնինք»:

«Թիւրք ասկեարները միւս կողմէն կը պոռային — «ճանֆիտալար քէսլիմ օլուսուֆ, ձրը բոլորի համար ըմթամպուլից ներում կը բերենք, իսկ եթէ յամառիք եւ կոուիք, բոլորիդ կը կոտորենք»:

Գալէն, որ Գէորգի քով պառկած եւ պաղարիւն կերպով մտիկ կ'ընէր նման բացազանչութիւններին եւ երբեմն-երբեմն ալ կը կրակէր թշնամու դիրքերի վրան, գլուխը մի քիչ բարձրացնելով սկսեց քրտերէն հայհոյել, — «մըդ դըւէ փեխամպարէ...» եւ կրակեց, քիւրտ մը որ գերեզմանաքարից գլուխը վեր բարձրացուց, դլտորուելով վար ինկաւ ու սատկեցաւ:

Գիւղի երիտասարդներից մէկը, փորի վրայ սողալով գնաց, որ

քիւրտի հրացանը բերէր, ասկեարների գնդակների տեղատարափի տակ վար ընկաւ:

Գէորգը տանիքի վրայ պառկած քիչ մը կը հանգստանար, ինծի ըսաւ, — «վազէ՛ դիրքէ դիրք եւ տղաներին ըսէ, որ փամփուշտները խնայեն եւ պարապ տեղը չկրակեն, մենք դեռ շատ ժամանակ ունինք կռուելու»: Ես հեւքրտման այդ վտանգաւոր պաշտօնը կատարեցի դիրքէ դիրք վազելով եւ տղաներին ազդարարելէ յետոյ վերադարձայ Գէորգի քով:

«Կռուի ամենատաք վայրկեաններին մեր կտրիճ Եղոն, անխոհեմօրէն բարձրացաւ տանիքի մը կտուրը, եւ ասպարէզ կարդաց քիւրտերին եւ թիւրքերին, ըսելով քրտերէն — «վախկոտներ, յորի՞ իք մըտի ըտ փլերի տակ, դուրս ելէք, որ կռուինք, տեսնենք ով զվիր մամը կը լացնէ»:

Եղոյի յանդուզն քայլը զայրացուց թիւրք ասկեարներին, այնպէս որ սպաներից մէկը հրամայեց պռոռզանճիին, որ «հիւճում»ի (յարձակման) փողը հնչէ: Երկվայրկեանի մէջ տասնեակ մը գնդակներ Ե-

ԳԵՈՐԳ ԶԱԻՈՒՇԻ ԱՆՈՒՆՈՎ ԿՈԶՈՒԱԾ ԼԵՌԸ



դոյի ոտքից մէկ երկու մատնաչափ հեռու տանիքները կը ծակծկէին, բայց մեր կտրիճ Եղոն բնաւ կարեւորութիւն չտուաւ դնդակների տարափին, ջերմեռանդօրէն կանչեց «Եա Մշոյ Սուլթան Սըբ կարապետ, ինծի օգնական ու պահապան էղնիս» ու կրակեց, «անչեղ նշանառութիւն»։ Գնդակը պոռոզանի մէջից անցնելով, պոռոզանձիի բերանից մտաւ ու ծոծրակից դուրս եկաւ, եւ պոռոզանձին յաւիտենապէս լըռեց։ Եղոն խանդավառուած այդ նշանառութիւնից, ակնթարթի պէս ցատկեց պոռոզանձիի վրան, զպոռոզանը եւ զհրացանը առնելով անփնաս ետ վերադարձաւ։

Կռիւր սաստիկ էր եւ օրը երկար, գարնանային պայծառ եւ արեւոտ եղանակը սկսեց փոխուիլ, երկինքը մըթըռկեց, թուխ ամպերը սկսեցին բարձրանալ երկնակամարը, մեր հրացանների ճարձատիւնների հետ ամպերն ալ ողբերուած կարծես, սկսեցին գոռգոռալ, կայծակների եւ դօրաւոր քամիի հետ տեղատարափ անձրեւ մը սկսեց, պահ մը հրացանաձողութիւնը դադրեցաւ, կարծես թէ երկու կողմերը՝ իրենց ապագայ ընելիքների մասին կարգադրութիւնների մէջ էին»։

Ղարսի կռուին Ղասըմ բէկի ծառաները՝ Հիւսէյն, Հըսէն եւ Մստոն, որոնք Գէորգի մօտ մնացած էին, չտեսնուած հերոսութիւն ցոյց կու տան։

Այդ օրը ղարսեցիք շատ մեծ քաջութիւն ցոյց կու տան։ Իրիցու Յակոբը տուն չէր, բայց իր եղբայրները Յոնէն ու Եղիշէն, Բաւայ Մարգարի տղան Սմբատը, Մկրէ Մարտոն, Փռչկայ Յոյօ տղան Կնոն, հովիւ Օհանի տղաքները՝ Պօղոսն ու Դաւոն, Տօնէ Աւիկն ու Իբրոն, Միրօ Գասպարի տղայ Եղիշէն, Կեալհօ Կիրակոսի տղայ Գասպարը, Պետրոսի Դաւոյի եղբայրը Սարգիսը, Սրգոյի տունէն Գրիգոր, Մելիք, զպաի Սահակի աղջիկ Զարէն ու ուրիշներ իրենց կեանքը վտանգի տակ դնելով կ'օգնեն Գէորգին։ Անոնցմէ կը սպաննուի միայն Մելիքը, որ քաջ տղայ մըն էր։ Ան կ'իջնէ կալերը, որ սպաննուած զինուորներու զէնքերը հաւաքելով բերէ եւ յանձնէ Գէորգին, որ կ'ըսէ, — «տղայ մի երթար, հիմա ես քեզի հրացան կը շատցնեմ»։ Բայց կրակոտ Մելիքը չէր կրնար այլեւս մնալ, կ'երթայ, կը վերցնէ քանի մը հրացան, բայց, ափսո՛ս, կը զարնուի։

Երեկոյեան մօտ, երբ անձրեւն ալ կը մաղուի, զօրքը՝ յուսահատ, կը քաշուի, Գէորգ կը հրահանգէ իր ընկերներուն, որ հաւաքուին Բաւայ Մարգարի կայր։ Նոյն ժամուն Ղասըմ բէկը իր ձիաւոր խումբով կը յարձակի Գէորգի վրայ եւ իր խրպոտ ձայնով կ'ըսէ, — «Գէորգ Զաւուշ, դու իմ ձեռքէս ո՞ւր պիտի ազատուիս»։ Գէորգ կը պատասխանէ կտրուկ ձայնով մը — «Ղասըմ բէկ, դուն քու զլխուդ ճարը մտածէ»։ Գէորգ Զաւուշ ու Ղասըմ կը հասկնան զիրար. — Մառնկայ կողմի թիկունքը բաց է։ Գէորգ ոյժ կու տայ Առնիստի եւ Ուշտամի կողմերուն։ Այն օրը Ղասըմի ձիաւոր խումբէն եօթը հոգի կը մեռնին։

Երբ կը մթնէ, զարսեցի Յակոբի եւ տէրտէրի առաջնորդութեամբ, Ղասըմի ծառաները եւ գիւղացիները առնելով, Գէորգի հրամանով, կ'անցնին դէպի քիւրտերու բանակած կողմը, Ղասըմի կողէն անցնելով կը յառաջանան դէպի Խըւնէր գիւղը: Մնացած մասը գիւղացիներով միասին կը հաւաքուին Բաւայ Մարգարի կայր: Հոն Չաւուշ կ'ընէ քանի մը խօսք գիւղացիներու եւ Ֆետայիներու քաջագործութիւններու մասին եւ գիշերուան կարգախօսը որոշելէ ետք, խումբը ճամբայ կ'ելլէ դէպի Առնիստ, Ուշտամ, Դրմեր, Արքավանք, Արտոնք եւ դէպի Յրօնք:

Երբ թրքական զօրքը առաւօտեան գիւղ կը մտնէ, հոն կը գտնէ միայն ծերունազարդ Փռչկայ Յովոն եւ Գարոյի Պօղոսի աղջիկը, որ կոյր էր: Գիւղը պարպուած էր, իրենք կրկին պարտուած էին:

Այս կռուին միակ զոհերը կ'ըլլան Դաւոն, Մելիքը եւ վերոյիշեալ աղջիկը: Թիւրքերու սպանեալներուն թիւը շուրջ 70 հոգի կ'ըլլայ:

Երբ գիւղացիներն ու Ֆետայիները կը յաջողին անվտանգ ճեղքել թշնամիի շղթան, Գէորգ Չաւուշն ու Եղոն, որոնք նահանջի թիկունքը կը պահպանէին, մութին ու անձրեւին հեռեւանքով կը կորսընցնեն իրենց ընկերները: Գէորգ եւ Եղօ կը ջանան Առնիստէն անցնիլ Դրմերտ: Այդ երկու գիւղերուն միջեւ կայ առու մը, որուն ջուրը կը հաւաքուի Դրմերտի մօտ փոսի մը մէջ, որ Գուրգուռի կը կոչուի: Երկուքն ալ կ'իյնան այդ փոսին մէջ: Գէորգ, որ ունէր հրացան մը եւ երեք կարդ փամփուշտ, կը յաջողի ինքզինք ազատել տիղմէն: Իսկ Եղօ, որ ունէր երկու հրացան եւ չորս կարդ փամփուշտ, կը մխրճուի տիղմին մէջ եւ կը մնայ ջուրին տակ: Գէորգ «Եղօ՛, Եղօ» կը կանչէ, սակայն պատասխան չստանալով, հազիւ կը գտնէ Դրմերի ճամբան եւ գիւղ կը հասնի, ուր տղոց կ'ըսէ. — Եղոն խեղդուեր է Գուրգուռի մէջ, գացէք դիակը բերէք: Օղսկայ Տօնէն իր հետ կ'առնէ դրմերցի հինգ երիտասարդներ եւ կ'երթայ Գուրգուռ: Մէջքին պարան մը կապելով, կ'իջնէ ջուրին տակ, ուր կը գտնէ Եղոյին դիակը, երկար չարչարանքներէ ետք: Տուած աղղանշանին վրայ, տղաքը կը քաշեն պարանը, զինք եւ Եղոյին դիակը դուրս բերելով: Նոյն գիշերը գաղտնի կերպով կը թաղեն Եղոն:

Տարօնի ժողովուրդը այս հերոսային ճակատամարտի մասին հիւսեց հետեւեալ երգը. —

Սարսափն ահաւոր, սոսկումն ահագին,
Կրկին պաշարեց գահը սուլթանին,
Ամբողջ թիւրքութիւնը եղաւ ահաբեկ
Կորուստ տուին շատ աղա ու բէկ:

Հագար ինը հարիւր հինգ թուականին
Ապրիլ ամսոյն քսան եւ հինգին,
Ամբողջ թիւրքութիւնը վայրագ մռլեցին,
Մշոյ Ղարս գիւղը կրկին պաշարին:

Ո՞ւր է վեհ Գէորգ առիւծն ահաւոր,
 Իր անպարտելի խմբովը բոլոր,
 Զօրքը գիւղը խուժեց՝ խենթ անսուոր,
 Կարծելով գիրեմն ուժեղ գօրաւոր:

Հագարապետ՝ մեծ փառք, պատիւ ու պարծանք,
 Առնելու համար գործեց արշաւանք,
 Քումսեր Հիւսէին բէկ գագան այլանդակ,
 Գնդապետ՝ Եաւուր ոսոյս դժնդակ:

Ռուֆաթ բէկ՝ հպարտ Մահմուտ Մհատին,
 Ազնիւ Մարգարի տան շուրջը պատեցին,
 Ո՞ւր է վրէժ խնդիր Սերոբ փաշային,
 Կատակի առնելով՝ նրանք կ'առէին:

Սասնոյ սէգ առիւծ ի ժամ տագնապին,
 Կը խորհէր ան ահ սիկարը ձեռին,
 Երբ որ սաստկացաւ տարափն գնդակին,
 Կոչեց ընկերաց՝ ի ձայն հրացանին:

Դէհ ելէք ընկերք ելէք միաբան,
 Այս օրն է ժամը վրէժխնդրութեան,
 Այս օր պիտ հիւսեմք պսակը յաղթութեան,
 Մեր անունը անմահ թողեմք յաւիտեան:

Վրէժ կոչեցին ընկերք միասին,
 Զորս կողմերից շուտ դուրս վազեցին,
 Կատակ առնողները գետինը փռեցին,
 Սերոբի մոսին Հիւսնուց վերցրին:

Մէկ կողմէ Գալէն, Թարփաթոզ եւ Պօղէն,
 Զօրքի մէջ ընկած անխնայ կը ֆաղեն,
 Միւս կողմէ՝ Մուրատ, Մկրտն եւ Մոստն,
 Շղթան պատռելով, նամբան կը հարթեն:

Մէկ խօսքով գիշերուայ մութը կոխած էր,
 Ռազմագէտ Սարհատ(*) նամբան ընկած էր,
 Հարիւր ֆսան դիակ գետինը փռած էր,
 Ազրիւր Սերոբի վրէժը լուծած էր:

*Ղարսի կռիւր սարսեցուց շրջանի բոլոր գիւղերը իսկ Փետա-
 յիներու անունը մինչեւ երկինք բարձրացաւ: Թիւրքերը ու քիւրտերը
 սկսան մեծ համակրութիւն տածել անոնց քաջութեան եւ ճարտիկու-
 թեան համար: Նոյնիսկ սկսան Գէորգի մասին երգեր հիւսել եւ իր
 քաջագործութիւնները պատմել՝ առասպելներու նման: Նոյնիսկ*

(*) Գէորգի կեղծանունը:

թիւրք սպաներէն ու պաշտօնեաներէն ոմանք, բաւական նկատելի թիւով սկսան համալիրիլ Ֆետայիներուն, որոնք արդարութեան համար կը կռուէին անձնազոհութեամբ:

Սումբը երեք օր Դրմեր գիւղը մնալէ ետք, Գէորգի որոշումով կ'անցնի Յունան գիւղը, խորհրդակցական ժողովի մը համար:

«Մեր ժողովատեղին գեղէն դուրս մարազի մը մէջ էր. — կը դրէ Մեսրոպ, — ձէթէ ճրագի պլպլացող լոյսին տակ, բոլորս ծալապատիկ նստեցանք խոտի խուրձերի վրայ, եւ կը սպասէինք ժողովի բացուելուն:

«Գէորգը ժողովը բաց յայտարարելով, խիստ յուզուած եւ արտասուած թոր աչքերով, խօսեցաւ հետեւեալը. —

«Ընկերներ, ամբողջ հողիովս կը սգամ եւ կ'ողբամ մեր ընկեր Եղոյի անդառնալի կորուստը. կորուստ մը որ անդարմանելի է. երբեք կեանքիս մէջ պիտի չմոռնամ իմ աչքիս լոյս Եղոն. եթէ անիկա թշնամու գնդակով դացած ըլլար, այնքան պիտի չցաւէի, իսկ ինչալ եւ ջուրի մէջ խեղդուիլ իմ ներկայութեան, մեծ վիշտ մըն է ինձ համար: Բայց ի՞նչ կրնանք ընել. այդ է մեր սեւ ճակատագիրը. Թո՛ղ Եղոյի յիշատակը անմոռաց մնայ մեր եւ Տարօնի պատմութեան մէջ, եւ բոլորս էլ պէտք է քալենք դէպի առաջ, որ Եղոյի եւ իր նմանների վրէժը կրնանք լուծել մեր նամարդ թշնամիներից: Թո՛ղ անոր թափած արիւնէն վրէժի ծաղիկներ բուսնին Տարօնի աշխարհին մէջ: Փառք եւ յարգանք իր յիշատակին»:

«Գէորգը, այդ խօսքերից յետոյ, իր լացը չէր կրնար կտրել. պահ մը լռութիւն տիրեց այդ խորհրդաւոր մարագին մէջ, մինչեւ որ Գալէն հանդարտեցուց Գէորգին՝ ըսելով. «Հընէ Աստուած գթու պապու տուն աւրէ, հերիք է յիլաս, ես գինէնք որ քո սիրտը քարի կը նմանի. պլէ ըն խըտէր ժուրիս է, որ չըս կրնայ կտրի գթու լացը»:

Գէորգը քիչ մը ուսեր խըտուցուց, աչքերը թաշկինակով սրբելէն յետոյ, շարունակեց.

«Ընկերներ, մեր անցեալ օրուայ կռիւր մեծ յաղթանակ մըն էր մեզ համար. թէեւ չէի ուզեր նման բան մը պատահէր ըս գարնանոցով, սակայն մեր կամքից անկախ պատահեցաւ, եւ ուրախ եմ ըսելու որ մենք կրցանք ցոյց տալ յեղափոխականի մը արժանավայել արիութիւն եւ վճռականութիւն: Կը շնորհաւորեմ զբոլորդ ձեր քաջութեան համար, որ մինչեւ վերջի նահանջի վայրկեանը պահեցիք այնպիսի խիզախ կեցուածք մը, որ մեր Տարօնի Յեղափոխական պատմութեան մէջ եղակի եւ անմոռանալի է:

«Այսուհետեւ մենք չպիտի կրնանք խմբովին շրջիլ գիւղերը: Կառավարութիւնը իր ամօթալի պարտութիւնից կատաղած, հետապնդումները աւելի կը սաստկացնէ: Ռազմամթերքի զգալի պակասը աւելի կը դժուարացնէ մեր գործունէութիւնները: Մենք պէտք է բաժնուինք երկու կամ երեք հողից բաղկացեալ խմբակների եւ ցրուիլ գանազան շրջանները: Եւ աշխատելու ենք, առանց միջոցների



Սեմալցի ֆետայիներէն մաս մը իրենց ընտանիքի եւ երեխաներու հետ

առջեւ կանգ առնելու, հարկ եղած ռազմամթերթը ձեռք բերել: Մենք մեր սուրհանդակներ ղրկեցինք Վան մի քանի օր առաջ. կը հաւատամ, որ այս դէպքից յետոյ Վանի կեդրոնական կոմիտէն քիչ մը բարեխղճութիւն կ'ունենայ մեզի բաւականաչափ ռազմամթերթ ղրկելու»:

«Գէորգի այս խօսքերէն յետոյ տղաների մէջ կրկին ու կրկին անհանգստութեան նշաններ սկսեցին երեւիլ: Խասգեղու փինաչի Յարէթը, որի հրացանի մէջ կռուի ժամանակ փամփուշտը ուռած էր եւ դարձած էր անդործածելի, ոտքի կանգնեցաւ եւ հերսոտ-հերսոտ խօսեցաւ հետեւեալը.—

Գէորգ, դուն մըր մեծն իս ու մըր երկու աչքի լուսն իս. աչս քանի ժողովների մէջ Վանի ցաւոտ խնդրոյ մասին կը խօսինք, առանց դործնական բան մը ընելու. ես զընտոնք լաւ կը ճանչնամ: Ես ու իմ պապ Վանի մէջ փինաչութիւն ըրած ինք երկար տարիներ. ընտոնք մըր նման չըն մտածի ազգի ազատութեան համար. ընտոնք պատեհ առիթից օգտուելով՝ Յեղափոխութիւնը ի շահ իրենց կը դործածեն. մէկ սուրհանդակ չէ, հազար սուրհանդակ ղրկէք, ընտոնք մըզի մէկ կոտրած Ֆրչանք չըն իտայ. ըդ յորի՞ մենք պարապ աշխատանք կը թափինք. ըդ յորի՞ ջուր կը պընտըցունք զմըզի պարապ յոյսերով կը խաբինք. դու հըմալ կը խօսիս, կարծես թէ մենք ընտոցմէ ողորմութիւն կը խնդրենք. մըր կուսակցութիւնը միզի՝ «Տարօնայ» հա-

մար զրկած է, ըդ յորի՞ ընտոնք պահած են իրենց քով ու մըզի չըն իտայ: Ընտոնք՝ նր՛ կը վըխենան ու նր՛ կ'ամչնան. հըմալ կակուղ լեզուով մենք ընտոնց չպէտք է խօսինք. ես կ'առաջարկեմ, որ քսան հոգիով պատրաստուինք երթալու Վան. ժըխօ մենք առանց զէնքի ու Ֆշանքի բան մը չընք կրնայ էնի. եթէ Աստուած մի արասցէ անգամ մ'ալ կուռի բռնուինք, բոլորս կը կոտորուինք. աւելի լաւ է երթալ Վան ու անոնցմէ զոռով առնել ու բերել. իսկ մենք ելեր ինք պատուելի լեզուով ընտոնց հետ կը խօսինք. հըմալ յեղափոխութիւն չեղնի ու չեղնի:

Ըտ յորի՞, երկու անգամ եղաւ, որ մըր Տարօնացիներն զմըր գեղեր, զմըր տներ այրել կու տանք, մըր կնիկ ու ճըժեր կ'եղնին էրէրուն, զմըր տաւար ու զոչխար քրտերը կը թալնին ու կը տանին, ու մենք կրկին ու կրկին հայ ազգի ազատութեան սիրոյ համար, ամէն դժուարութիւն յանձն կ'առնինք. ի՞նչ կ'եղնի Ղարսայ խեղճ ժողովըրդեան վիճակը. Աստուած հասնի ընտոնց:

Ըտ յորի՞ վանեցիները ըտ խըտէր զէնք ու զրահ որ պահեր են իրենց քով, իրենք էլ մըզի պէս չըն կուռի, որ մեր բեռն ալ մի քիչ թեթեւանայ:

— Գէորգ, ըտ յորի դու մոռցա՞ր, յորի՞ զողորդ չըս ըսի. դու լէ գինաս, Աստուած լէ գինայ, մենք էլ գինանք. անցեալ տարի որ Վան գնացինք քընի մը ընկերներով կովկաս երթալու համար, ու կարգ մը պատճառներով չուզեցինք երթալ, ու քընի շաբաթ Վան մնացինք: Ո՛ր գիւղ որ կ'երթայինք, մինչեւ որ ամէն մէկիս համար հինգ զուրուչ չառնէին, զմըզի իրենց տուն չըն պահէ. հըպա իմա՞լ է Տարօնցին, ուր որ երթանք, քընի հոգի որ եղնինք, տարօնցի զմըզի գըրկաբաց կ'ընդունէ. ոչ թէ դրամ կ'ուզէ զմըզի հիւրասիրելու համար, այլ պատիւ կը զգայ, որ մենք գըտ տուն յարգած ինք եւ յոնի ինք իջի. ընտոնքլէ իրենց ունեցածով ու չունեցածով, զմըզի կը յարգեն ու կը հիւրասիրեն, բուճ կու տան, արախչի կու տան, չարուխ կու տան, հագուստ ու կապուստ կու տան, դրամ կու տան, շաբաթներով իրենց տուն կը պահին, ու երբ այդ գիւղից մեկնինք ուրիշ գիւղ մը երթալու համար, զկարմրուկ հաւեր լօշերի մէջ փաթթած, գաթա, հալվայի հետ մըզի կու տան որ ճանապարհին անօթի չը մնանք, թէեւ, զըտ բաներ ըսելը աղէկ բան չէ. պլէ, երբ կը յիշեմ, մըր Վան երթալը եւ վերադառնալը, սիրտս կը ցաւի: Միկայ, մենք ելեր ինք ընտոնցմէ հրացան ու փամփուշտ կ'ակնկալինք. Աստուած լէ երկնքից իջնայ, մըզի կարեւորութիւն չըն իտայ:

Մեր անգուղական Գալէն, որ անշարժ նստած, զիւր չըպուխը կը քաշէր, եւ երբեմն-երբեմն զգլուխը կը տըռտոցընէր, քիչ մը ժխտուելով նստեց եւ պաղարիւն կերպով խօսեցաւ.

«Ո՛րա՛, Աստուած լէ հախ է, ինչ որ Յարէթը ըսաւ, յըմմէն լէ ողորդ է. պլէ, ի՞նչ կրնանք ընել. միկայ ելնենք, քսան ընկերներով

երթանք Վան, զէնք բերելու համար. եթէ ընտոնք մըղի կարեւորութիւն չտուեցին, մենք ի՞նչ կրնանք ընել: Մենք չպէտք է իրարու դէմ ելնենք որ թշնամին ուրախանայ. իրենց մուր իրենց երես. թըղ ընտոնք ամըչնան. մենք որ ազատութիւն կ'ուզինք, պէտք է արիւն թափինք, քընի որ մեր նպատակին չընք հասեր ի:

Համբարձում. — Գալէ', իս գինամ ընծի ո՞ւրէ, կը ցաւի: Անցեալ տարի, իս եւ Գէորգ որ Վանն էինք, գեղի խմբապետը զմըղի տարաւ տուն մը, երկու օրուայ համար. տանտիկինը դուռը բացաւ եւ ըսաւ. «Խնամ Խայիօ, մինչեւ որ տաս դուրուչ չտաս, զըտոնք իմ տուն չըմ թողնի»: Խմբապետը ըսաւ. «Դատէ', Գէորգն է որ կիզայ ձըր տուն՝ իր մէկ ընկերով»:

Դատէն. — Գէորգ Մէորգ չըմ ճանչնայ. իս զիմ տաս դուրուչ կը ճանչնամ:

Խմբապետ Հայրոյի քով դրամ չկար. Գէորգ տաս դուրուչ տըլաւ դատէին. մէկ գիշեր հոն մնացինք. ոչ ես եւ ոչ Գէորգ պատառ մը հաց չկրցանք ուտել, այնքան որ յուզուած էինք. ու միեւնոյն գիշեր որոշեցինք վերադառնալ Սասուն:

Եթէ կը մեռնինք Տարօնի մէջ մեռնինք աւելի լաւ է քան թէ Վան մնալ եւ տառապիլ: Ես զըտ բաներ տեսած եմ, շատ աղէկ գիւնամ, պլէ, միկայ ելնենք ի՞նչ ընինք վանեցիներին:

Գալէն — Համբօ լաօ, քո ըսածները յըմմէն լէ ողորդ ին: Եկէք զՎան մոռնանք, որոշինք երկու հոգի զըկել Ռուսաստանի Ղարս. մենք այնտեղից կրնանք աւելի շուտ եւ աւելի շատ ռազմամթերք բերել, քան թէ Վանէն: Մըր կորիւնը ժըխօ Խնուսի կողմերն է ու կազմակերպական գործերով կը պարապի. երբ մեր տղաներ հոն երթան, կորիւնը կը կարգադրէ եւ կը զըկէ Ղարս:

Ղարսայ ծանրախոհ Յակոն, որ լուրջ ուշադրութեամբ մտիկ կ'ընէր եղած խօսակցութիւնները, ծնկների վրայ պպզեցաւ եւ խօսեցաւ հետեւեալը. —

Ընկերներ, մեր Գալէնը շատ լաւ խօսեցաւ. իմ խելքին լէ պառկեցաւ իր ըսածները, եւ առաջարկը: Պլէ, մենք պէտք է գինանք, որ հիմա գարուն է, գիշերները շատ կարճ են, ցեխ ու ճլճիխ է, այնպէս որ Ղարսէն Սասուն գալու համար ութ-տաս օր ժամանակ կ'առնէ, ինչ որ շատ երկար եւ վտանգաւոր ճամբորդութիւն է. եթէ աչնան երկար գիշերները ըլլար, ես ալ համաձայն էի:

Պլէ, «հարկ կը պըտլէ գօրէնք», զըտ բաներ լէ նկատի ունենալով, ես լէ համաձայն եմ որ սուրհանդակներ զըկենք Ռուսաստանի Ղարս, եթէ Վանից բան մը չեղաւ, ինչ որ չըմ հաւատայ, գոնէ Ղարսից կ'ըլլայ: Մենք աշխատելու ինք մեր հետքը կորսնցնել զուրի աչուն. մինչեւ ըն ատեն Սասուլած մեծ է, իր ողորմութիւն շատ է:

Խասգեղու Տոնճօ Մոսոն կըթնեցաւ իր թրքական մաուզէր հրացանի վրայ, եւ հեկեկուն ձայնով ըսաւ.

— Ընկերներ, «կչուինք զմըր եզ, կանչինք զմըր գեղ». եթէ մենք



Խնուսի դաշտը — դիմացը՝ Աղ-տաղ

այս ուղիքների հարցը շուտով չլուծենք, մենք ինքնաբերաբար լուծուած կ'ըլլանք: Քանի որ փամփուշտի հարցը մեծ դժուարութիւնների մէջ կը դնէ զմեզ, ես կ'առաջարկեմ որ մեր խումբը կրճատենք, մեր ընկերների կէսը զինաթափ ընենք, եւ զրկենք զանազան շրջաններ՝ պատասպարուելու համար եւ փամփուշտները բաժնենք անոնց վրայ որ զինուած կը մնան, մինչեւ որ կրնանք բաւականաչափ փամփուշտ ձեռք բերել. այն ատեն կը կանչենք մեր զինաթափ ընկերներին եւ իրենց կը յանձնենք իրենց զէնքերը՝ հարկ եղած փամփուշտներով:

«Ես Տարօնցիները շատ լաւ կը ճանչնամ. երբ Տարօնցիները տեսնեն եւ լսեն որ խումբը բաժանուած եւ հեռացած են անծանօթ ուղղութեամբ, տեսակ մը յուսալքում կը յառաջանայ իրենց մէջ. մենք յաճախակիօրէն պէտք է շրջանները պտտինք, քարոզենք եւ յուսադրենք ժողովրդեան, որ անոնք ալ սրտանց եւ հոգիով աշխատին մեր յեղափոխական գործին համար. առանց անոնց աջակցութեան, մենք չենք կրնար օգտակար գործեր կատարել:

Մոսոյի ըրած առաջարկը շատ գործնական էր, սակայն տղաների մէջ տեսակ մը շփոթ եւ իրարանցում առաջացաւ. ոեւէ մէկը իր զէնքը տալու պատրաստութիւն չէր յայտներ. նման որոշում մը շատ վատ անդրադարձումներ կրնար ունենալ տղաների վրայ: Եթէ տարօնցիները լսելու ըլլային որ այսինչ տղան զինաթափ եղած է, առանց պատճառները նկատի ունենալու, կը կորսնցնէին իրենց հեղինակութիւնը յաշս ժողովրդեան:

Գէորգը իր պայծառատեսութեամբ նկատեց տղաների մէջ եղած խուլ անհանգստութիւնը. ակնթարթի պէս ծնկների վրայ պազե-

ցաւ եւ ըսաւ. — Ընկերներ, որքան որ Մոսոյի առաջարկը գործնական է, սակայն ես չեմ բաժնէր, որովհետեւ վատ հետեւանքներ կրնայ ունենալ: Որոշենք խումբը բաժնել մի քանի ընկերների եւ զրկել զանազան ուղղութեամբ իրենց զէնքերով միասին, եւ խստիւ պատուիրել որ անոնք աշխատին իրենց հետքը կորցնել մինչեւ նոր կարգադրութիւն. ես հաւատացած եմ որ երկու կամ երեք ամիսէն, մենք հարկ եղած ռազմամթերքը կը ստանանք կամ վանէն եւ կամ Ռուսաստանի Ղարսէն: Որոշենք Մեսրոպին զրկել Խնուս մեր ընկեր Կորիւնի քով. ես հաւատացած եմ, որ իր առաքելութիւնը կը կատարէ վայել կերպով: Լիազօրելու ենք Կորիւնին եւ Մեսրոպին՝ «Խնուսի, Պուլանըխի եւ Մալազկերտի» կազմակերպական գործին զարկ տալու, եւ միեւնոյն ժամանակ կապ հաստատելու «Ղարսի եւ Սասունի» զինափոխադրութեան համար: Ես հաւատացած եմ, որ երկուքը ձեռք-ձեռքի տալով՝ կրնան մեր ակնկալածէն աւելի արագ գործեր կատարել եւ մեզի կարճ ժամանակուայ մէջ ռազմամթերք հասցնել»:

Աստուրը որ ոտքի վրայ կանգնած էր շարունակ, քիչ մը ժրխժրելով ըսաւ. «Ուրա՛, Աստուած լէ հախ է. Մեսրոպը շատ յարմար է ըտ գործի համար ժրխօ, Մեսրոպը անցեալ տարի, Անակրատի Յակոյի ձերբակալուելէն յետոյ վեց ամիս մնաց Խնուս, Պուլանըխ, Մալազկերտ՝ կազմակերպական գործերով եւ լաւ գործ կատարեց. ես լէ համաձայն եմ որ Մեսրոպին զրկենք»:

Մեր անզուգական «կազնի կոճղ» Գալէն զիր չիպուխը իր կօշիկների վրայ քիչ մը թրխկթրխկցնելէն յետոյ ըսաւ. «Ես լէ համաձայն եմ. Պլէ Մեսրոպից հարցնենք, տեսնենք թէ ինչ կ'ըսէ»:

Մոսոն — «Իրմէ հարցնելու պէտք չունինք. եթէ մենք որոշենք եւ զրկենք Կորիւնի քով, անիկա պարտականութիւնից խուսափելու համար երբեք առարկութիւն չ'ըներ»:

Գէորգը — «Ընկերներ, խնդիրը լաւ մը պարզուեցաւ. այո՛, ես ալ համոզուած եմ որ Մեսրոպը մեր որոշման հակառակ չի գործեր. բայց մեր կազմակերպական օրէնքն է որ առանց ընկերի մը կամքն առնելու, մենք անոր հարկ եղած պարտականութիւններ չենք յանձներ. հետեւաբար ես կը փափաքէի Մեսրոպին ալ լսել, որ ըստ այնմ կարգադրութիւններ ըլլան»:

Ես ոտքի կանգնեցայ եւ ըսի.

«Եղած որոշումները եւ թելադրութիւնները ամբողջ սրտովս կ'ընդունիմ եւ կը ջանամ ամբողջ էութեամբս կատարել զանոնք: Ես նոյնիսկ այս երեկոյեան պատրաստ եմ մեկնելու, եթէ յարմար կը գտնէք»:

Գէորգը տեղէն ելնելով՝ ձեռքը ուսիս վրայ դրաւ, ճակատս համբուրեց եւ ըսաւ. «Մեսրոպ, այսօր երեկոյեան կը մեկնիս, Աստուած քեզ հետ: Համբուրէ Կորիւնի ճակատը իմ կողմից եւ բոլոր ընկերներին բարեւէ»:

Ես խոնարհարար իր ձեռքը թօթուեցի՝ ըսելով. «Այդ մասին անհոգ եղիր»:

Այս ժողովէն ետք Ֆետայիները կը բաժնուին խմբակներու եւ կը ցրուին լեռներու մէջ, անառիկ վայրեր: 1904-ի ձմեռը Ֆետայիները կ'անցընեն ձիւներու մէջ փորուած թաքստոցներու մէջ, մէկական թաղիքով, իրարու պատմելով առակներ եւ կատակներ ընելով:

Ղարսի կռիւէն ետք թիւրք կառավարութիւնը սկսաւ կասկածիլ Ղասըմ բէկի վրայ, որ ան իր խոստումը չէր յարգած, Գէորգը ողջ կամ սպաննուած պէտք է յանձնէր կառավարութեան, բայց օրերը եղան շաբաթներ ու ամիսներ: Կառավարութիւնը երկար պրպտումներէ եւ ուսումնասիրութենէ ետք կ'իմանայ, որ Գէորգ եւ Ղասըմ հանգիպում մը ունեցած են: Շուտով կը հրամայեն քանի մը վաշտ զինուորներով երթալ Խըլներ գիւղը եւ ձերբակալել Ղասըմ բէկը: Վերջինը լուր ստանալուն պէս, ընտանեօք ու իր զոլամներով գիւղը լքելով կը բարձրանայ սարը: Խստիւ կը պատուիրէ իր զոլամներուն, որ չըլլայ թէ գնդակները թիւրք զինուորներուն վրայ արձակեն, այլ օդին մէջ կրակեն:

Թրքական զօրքերը աջ եւ ձախ կողմերէ կը յառաջանան դէպի Ղասըմի կողմը, մինչ այդ հայդուկ Մոսոն, որ Գէորգի կողմէ կը մնար Ղասըմ բէկի մօտ իբր բարեկամ, տրուած հրահանգը անտեսելով կը սկսի շեշտակի հարուածներով թշնամի զինուորներէն մէկիկ



(ՏԱԼՈՒՈՐԻԿ) — Փուրիս թաղին մէջ արտ հերկած պահուն

մէկիկ հնձել եւ առաջխաղացքը կասեցնել, այսպիսով Ղասըմ բէկի ընտանիքը դերի մնալէ կ'ազատի: Հայդուկ Մոսոյի մղած յամառ կռիւը եւ արտակարգ քաջութիւնը ակնբախ աչքի կ'իյնան եւ կ'արժանանան բոլորի հիացմունքին ու դովասանքներուն: Սակայն Ղասըմ բէկը ներքնապէս դժգոհ էր, որովհետեւ սպաննուած թիւրք զինուորներու պատճառաւ իր եւ կառավարութեան միջեւ թշնամական խոր վէճ կը բացուէր:

Ղասըմ կը մնայ երկու կրակի միջեւ, կը թշնամանայ թիւրք կառավարութեան հետ. եթէ այդպէս շարունակուի, չի կրնար այլեւս ապրիլ, պէտք է մտածել ուրիշ միտք մը, որ կրնայ իր ինքնութիւնը պահել. ան շփման մէջ էր Պետրիսան բէկի հետ, որուն միջոցաւ կրկին շփում կ'ունենայ կառավարութեան հետ, եւ խօսք կու տայ ամէն միջոցաւ ձեռք ձգել Գէորգը, նաեւ անոնք ալ խօսք կու տան, որ իրեն պիտի շնորհուի 500 ոսկիի նուէր եւ պաշտօնի բարձրացում: Ղասըմ բէկը բաւական զէնք կը ստանայ կառավարութենէն եւ իր զինուորները լաւ մը զինելով միշտ իր մօտ կը ձգէ, այն մտածումով, որ օր մը կրկին Գէորգ իր մօտ կու գայ եւ անոնց միջոցաւ կրնայ ձերբակալել զայն:

Քանի մը շարաթներ անցնելէ ետք, երբ Գէորգը չի տեսնուիր, ան իր կողմէ մարդիկ կ'ուղարկէ որ իր մօտ գայ, կարեւոր գործի մը համար: Գէորգը քանի մը անգամներ եղած է Ղասըմի մօտ եւ իրենց խօսակցութիւնը եղած է միշտ հայ-քիւրտ յարաբերութիւններու մասին: Այս խօսակցութիւններու ընթացքին ներկայ եղած է նաեւ Ղասըմ բէկի կինը Փարիշան խանումը, որ իր կարծիքը տուած էր եւ քաջալերած Գէորգի այս ծրագիրը: Այդ խօսակցութիւններու ընթացքին Փարիշան խանումը եղբայր կը կոչէ Գէորգ Չաւուշը, որ իր կարգին քոյր կ'անուանէ զինք:

Գէորգ Չաւուշ անշուշտ անտեղեակ էր Ղասըմի դաւադրութեան եւ իր հետ առած Գալէն, Մանուկը, Չոլոն, Ախոն, Ղազարը եւ ուրիշներ, ձիերու վրայ նստած կ'ուղղուին դէպի Խըւներ գիւղը, որ շատ մօտ էր Ղարսի: Գէորգ կ'ուզէ քիչ մը հանգստանալ եւ ապա շարունակել իր ճամբան: Նոյն ժամերուն զուգընթաց երկու սուրհանդակներ կու գան, մէկը Ղասըմ բէկի կողմէ, որ զինք կը սպասէ Խըւներ գիւղը կարեւոր գործի մը համար, իսկ երկրորդը ուղարկուած էր Ղասըմի կնոջ՝ Փարիշան խանումէն, որ կ'իմացնէ Ղասըմի եւ Պետրիսան բէկի միջեւ եղած խօսակցութիւնը եւ դաւադրութիւնը, զգուշացնելով Գէորգը, որ գիւղ չերթայ: Լաւ մը մտիկ ընելէ ետք, Գէորգ սուրհանդակները ետ կ'ուղարկէ Խըւներ գիւղը:

Սուրհանդակները ուղարկելէ ետք, չորս ընկերներով իրենց ձիերը նստած, կ'ուղղուին քրտական Խըւներ գիւղը, Գէորգ ուղիղ կ'անցնի Ղասըմ բէկի քէօշկը եւ դուռը կը զարնէ. հարիւրաւոր զինուած զոլամներ կային քէօշկի չորս կողմը:

Ղասըմ բէկը երբ կը տեսնէ Գէորգը իր ընկերներով, ապշած եւ



ԳԷՈՐԳ ԶԱԻՈՒՇ

Ղարմացած կը նայի Գէորգին, թէ ան ի՛նչ աստիճան յանդուզն ու անխոհեմ քայլ առած է: Վախէն թէ ուրախութենէն կ'ըսէ ինքնիրեն. «որսը իր ոտքով, ձեռքով ինկաւ թակարդը»: Ինքնավստահ եւ ուրախ տրամադրութեամբ, ան կրնար հարկ եղած հրահանգները տալ ղոլամներուն:

Գէորգ Զաւուշ կը բարձրանայ երկրորդ յարկը, կը մտնէ ընդունարան, Գալէն կը կենայ մուտքի մէջ, իսկ Մոսոն եւ Տիգրանը

միջանցքի մէջ : Անոնց դէմ կան զոլամները . բոլորն ալ հայեացքները իրարու վրայ սեւեռած էին , կարծես թէ զիրար պիտի բզկտէին : Ղասրմի անհամբեր ու անհանգիստ շարժումները կասկած կ'առաջացնէին Գէորգին մէջ , Տիգրանը իր կարգին աչքերով կը հասկցնէ , թէ դաւադրութիւն մը կայ :

«Գէորգ դառնալով Ղասրմ բէկին , երեսին պոռալով կ'ըսէ . — «Ղասրմ , Ղասր'մ , խայիւն . . . աչքերդ լայն բաց , դիմացդ կայնողը Գէորգն է . . . » : Ատրճանակը քաշելով կը կրակէ առաստաղին . Ղասրմ ահ ու դողի մէջ կ'իյնայ , ատրճանակի ձայնէն Փարիշան խանումը շուտով ներս կը մտնէ , կը նայի , Գէորգի ձեռքը ատրճանակ կայ , եւ կ'ուզէ սպաննել իր ամուսինը . — «Գէորգ , Գէորգ , ի՞նչ կայ , ի՞նչ է պատահել . . . չէ՛ որ մենք քոյր եւ եղբայր ենք» : Գէորգ կը պատասխանէ Փարիշան խանումէն . — «այո՛ , ես քու եղբայրդ եմ , բայց քու ամուսինդ խային , դաւադիր է , ան նոյնիսկ իր տան մէջ յետին նպատակի վրայ է , իր ընկերներու հանդէպ» :

Ղասրմ բէկի զինուած զոլամները կը սպասեն անոր հրահանհին , սպաննելու կամ ձերբակալելու նպատակով Գէորգը , որ դառնալով զոլամներուն , կարծես ինքն էր անոնց հրամանատարը , կը հրահանգէ որ կարգով շարուին եւ անոնց առջեւէն բազէի նման կ'անցնի , շեշտակի նայելով անոնց աչքերուն : Ղոլամներուն մէկ մասը կը սկսի դողդղալ : Դառնալով անոնց , Գէորգ կ'ըսէ քրտերէն լեզուով . — «Գաղտնիքը այս է , քաջեր , ծեր հրամանատար Ղասրմը կ'ուզէ ձեր անմեղ ձեռքերով զիս սպաննել , ով որ կը յանդգնի , թող մէյտան դայ , ես եկած էի պատժելու Ղասրմը , բայց թող զուրպան ըլլայ իմ քրոջ Փարիշան խանումին» : Այս խօսքերէն ետք իր ընկերներով ձիերը կը նստի ու կը հեռանայ գիւղէն :

Ղասրմի զոլամները ապշահար կը դիտէին այն հերոսը , որ կրցած էր հոգեբանական տեսակէտով զիրենք վախի մէջ թողուլ , իսկ Փարիշան խանումը որ յայտնի ցեղապետի աղջիկ էր եւ ազդեցիկ սրտնեղած կը հրամայէ զոլամներուն , որ հեռանան այնտեղէն :

Ղասրմ բէկը գլուխը կախ վիճակի մէջ կը հեռանայ գիւղէն :

Քանի մը ժամ ետք , Ղասրմ բէկը մեծաւորներով , տէր հօր , մոլլային եւ ուրիշներու հետ կը հասնի Ղարս գիւղը Գէորգի մօտ , ներողութիւն կը խնդրէ ու կը յորդորեն , որ այդ սուտ լուրերու չհաւատայ , այլ նախկին բարեկամներն են : Գէորգ համոզուած կը ձեւացնէ ինքզինք եւ միջադէպը փակուած կը համարեն :

Ղասրմը , այդ վտանգաւոր մարդը (խօսքը Գէորգի մասին է) մէջտեղէն վերցնելու եւ ծուղակ նետելու նպատակով , իր որոշումին յամառ կառչած՝ փոխյարարերութեան կապը չէր խզած եւ բանակցութիւնները վերսկսելու տրամադրութիւն ցոյց կու տար :

Գէորգ իր հերթին , հայ եւ քիւրտ մերձեցումը իրականացնելու նպատակով , ամէն ջանք կը թափէ Ղասրմ բէկը նուաճելու , իր ազդեցութեան տակ առնելու համար : Հակառակ ընկերներու ընդդիմու-

Թեան ու խնդրանքներուն, երկրորդ անգամ ըլլալով Գէորգ կրկին կը մեկնի Խըւներ գիւղը Ղասըմ բէկի տունը: Հոն կը բանակցին եւ կը յանդին որոշ համաձայնութեան, իրարու հետ գործակցելու:

ԱԼՎԱՌԻՆՋԻ ԿՌԻՒԸ

Գէորգ Չաւուշ իր ընկերներու հետ կ'անցնի Մառնիկայ սարը հանդստանալու համար: Ֆետայիները այլեւս յանդուզն դարձած՝ առաջուան պէս իրենց լեռնային վայրերը ծածուկ չէին պահեր ոչ ոքէ: Այնտեղ եկած էին շատերը հայ գիւղերէն, հրահանգներ առնելու համար: Չանազան գործերով ոմանք կու գան ու կ'երթան: Այնտեղ եկած են նաեւ քիւրտեր, քիւրտ թօռուններ իրենց զոլամներով, Գէորգի տեսութեան: Հոն են զանազան բէկեր, ոմանք քծնելու, ուրիշներ Գէորգի սիրտն առնելու համար: Մառնիկայ լեռը ուխտատեղի է դարձեր, մեծ տիւախանէ, ուր կը խօսին, կը վիճին, որոշումներ կու տան: Ծառերու տակ կը մորթուին ոչխարներ, բազմաթիւ հիւրերը պատուասիրելու համար: Հայ ու քիւրտ, Ֆետայի եւ աշխր պարեր կը պարեն անտառին մէջ, կարծես Մառնիկայ լեռան բնակիչները տէրն ու տիրականը ըլլային Սասունի եւ Տարօնի աշխարհին:

Գէորգ Չաւուշի այս մօտեցման եւ վարուելակերպին նպատակն էր սիրաշահիլ քիւրտերը, միաժամանակ անոնց մէջ ատելութիւն սերմանելով թիւրք կառավարութեան հանդէպ: Ղարսի կռուին յաջողութիւնը, քիւրտ բէկերու անաբեկումն ու ժողովուրդին ազատումը անոնց լուծէն, անդուսպ ու անխոհեմ դարձուցած էին անվեհեր Գէորգը:

Բազմաթիւ քիւրտ բէկեր կը փնտռեն Գէորգի բարեկամութիւնը, գինք իրենց մօտ կը հրաւիրեն, ընծաներով կու գան իր մօտ, միշտ ստիպելով, որ անպայման իրենց լեռները երթայ այցելութեան եւ քանի մը շաբաթ մնայ:

Այս բոլոր անցուդարձերուն մէջ թերահաւատ եւ կասկածոտ է ծերունի Ֆետային՝ Սպաղանաց Մակարը, որ քիւրտերու հետ Գէորգի այս յարաբերութիւնները լաւ աչքով չէր դիտեր եւ վատ հետեւանքներ կը նախատեսէր: Մակայն Գէորգի վրայ ազդելու միջոց եւ հնարաւորութիւն չունէր: Ֆետայիներուն կը թելադրէր մտիկ չընել Գէորգը, դէպի կորուստ չերթալ, ամէն դնով արդելք ըլլալ քիւրտերու հրաւերներուն:

Բայց Գէորգ կը յամառի, քիւրտերու հետ ճամբայ կ'իյնայ դաշտ իջնելու եւ անկից ալ դէպի Խըւներ, Ղասըմի մօտ: Ան մինակ կ'երթայ. բայց, յետոյ, ընկերները կը տեսնեն վտանգը այդ յամառ ընթացքին: Կը հետեւին անոր տասը հոգի, իր ամենամօտիկներն ու

կտրիճները. — Կամօ Չաթոն, Խասգիւղցի Մոսոն, Մառնիկցի Պօղէն, Թարթափոզ Սարգիսը, Աւրանցի Մուրատը, Մոկունցի Իսոն, Բերդակցի Մարտոն, Լեւոնը եւ Ալվառինջի Աստուրը, Գոմսայ Մարգարը եւ Մոսոն : Մնացածները Մակարի առաջնորդութեամբ կը մնան յետը, շուարած՝ իրենց ընկիւղին մասին :

Գէորգ շատ առաջ չ'երթար, ան կանգ կ'առնէ Մառնիկայ լերան ստորոտը, ուր քանի մը օր մնալէ ետք կ'ուզէր անցնիլ Ալվառինջ հայկական գիւղը, ուր հաստատուած էր Խիանցի քիւրտ աշիրէթապետ Մահմուտ աղան : Գէորգի նպատակն էր անոր հետ եւս բանակցիլ հայքրտական փոխ յարաբերութիւններու մասին :

Սպաղանաց Մակարը, Մօրուք կարոն, Փեթարցի Մանուկը, Չօլոն եւ ուրիշներ կը համոզեն, որ Գէորգ այս քայլը չառնէ եւ հաւատք չընծայէ ոչ մէկուն : Մակայն Գէորգ անդրդուելի կը մնայ :

1905-ի Սեպտեմբերի վերջին օրերուն Գէորգ կէս գիշերին իր զինակիցներով կը հասնի Ալվառինջ գիւղը եւ ուղղակի կ'երթայ Մահմուտ բէկի տունը, ուր Մահմուտ բէկը շատ սիրով կը հիւրասիրէ Գէորգը եւ ինքզինք կը ներկայացնէ իրեն կողմնակից, ու խումբը կը հրաւիրէ իրենց տունը : Նախապէս ան իր մօտ ունէր պատրաստ թոյն, առիթէն օգտուելով, գինիի մէջ դնելով թոյնը կը հիւրասիրէ, նոյն ժամուն ալ լուր կ'ուղարկէ Մուշ, Հաճի Ֆերոյի (որուն տրամադրութեան տակ էին իր օգնական Արէֆը եւ Տուրսունը) յայտնելով թէ այդ ժամուն իրեն հիւր է Գէորգ Չաւուշը :

Գիւղի ընկերները, քանի մը ժամ ետք հայդուկները կ'առաջնորդեն ուրիշ վայր մը, հանգստանալու նպատակով : Գէորգ կ'ուզէ դուրս ելլել գիւղէն, բայց ինքզինք յոգնած կը զգայ եւ կը մնայ գիւղը մարազի մը մէջ պահուած, առանց գիւղացիներու գիտութեան . թոյնը բաւական մը ազդած էր Փետայիներուն բայց Գէորգը աւելի քիչ խրմած ըլլալով, շատ չէր ազդած անոր, կը զգար որ բան մը պատահած է իրեն, սակայն չէր անդրադառնար պատճառին :

Թրքական զօրքը կը մօտենայ գիւղին, կը պաշարէ մատնանշուած կէտերը, առաւօտեան արշալոյսին՝ փողերը կը հնչեցնեն եւ ամէն կողմ խուզարկելով կը սկսին հետզհետէ մերձենալ ցոյց տրուած կէտերուն :

Հոկտեմբեր 1-ի արշալոյսին Մառնիկայ լերան հետ կը պաշարուի նաեւ Ալվառինջ գիւղը չորս վաշտ զօրքերով : Գիւղացիները ապահով էին, որ Գէորգ հեռացած էր իր ընկերներով : Իրօք ալ խիստ խուզարկութիւնը արդիւնք չի տար, թշնամին չի կրնար անոնց հետքն իսկ գտնել :

Մահմուտ աղա, զօրքին կը հրահանգէ, որ կրկին խուզարկեն գիւղը :

«Մառնիկայ լերան վրայ գտնուած ամբողջ թշնամի ոյժը կը շրջապատէ Ալվառինջ գիւղը, ուր ամէն կէտ եւ տուն նորէն ու նորէն խուզարկութեան կ'ենթարկուի : Կը ծեծեն մարդիկ եւ չարչարանքի



ՄՕՐՈՒՔ ԿԱՐՕ ԵՆ ՉՈՂՕ

կ'ենթարկեն, որ Ֆետայիներու տեղը ցոյց տան: Խոտերը կը քանդեն եւ անոնց տակը կը խուզարկեն, գետինը կը փորեն, հորերու մէջ, ամէնուրեք կը փնտռեն, եւ վերջապէս կը մտնեն այն մարազը, ուր թարփաթող Սարգիսը իր եօթը ընկերներով յարդին մէջ պահուրտած էր: Ֆետայիները կռիւ բանալով՝ կը ջանան դուրս ելլել մարազէն: Երբ կռիւը կը սկսի, Գէորգն ալ դուրս ելած էր թաքստոցէն, չորս ընկերներով: Բախումը տեղի կ'ունենայ փողոցին մէջ: Այդ միջոցին՝ մարազը կ'այրի եւ յարդը կը բռնկի, տանիքին վրայէն, ուր բարձրացեր էին Ֆետայիները՝ ծուխ ու մուխի մէջ կը կռուին խռնուած թըշնամիին դէմ: Անհնար էր երկար դիմադրել, այնքա՛ն իրարու խռնուած էին զօրքերն ու Ֆետայիները, որ միայն սուրերով, ատրճանակով եւ ատամներով կը կռուէին Ֆետայիները: Ահա թարփաթող Սարգիսը գօտեմարտի է բռնուած միւլազըմի մը հետ, որ պաշտպան զօրքի սուրինին ապաւինած է, բայց թարփաթող Սարգիսը զայն գրկած կը նետուի բոցավառ մարազին մէջ, ուր երկուքն ալ կը վառին կրակին մէջ: Այս իրարանցումը երկար չի տեւեր, մէկը միւսին ետեւէն կ'իյնան Ֆետայիները գրկախառն» (*):

(*) Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը Յիշատակները» Գ. հատոր, էջ 370:

Գէորգը կը տեսնէ մարագներու բարձրացող բոցերը, կը լսէ հրացանի ձայները, կը կրակէ դէպի մարագներու ուղղութեամբ, թշնամիին կողմը: Խուճաբ մը զինուած թիւրք զինուորներ կ'առաջանան Գէորգի կողմ, ճամբու վրայ երբ հայ գիւղացի մը կը տեսնէ զօրքերու առաջացումը դէպի Գէորգի դիրքերու կողմը, կը սկսի կրակել անոնց վրայ, բայց դժբախտաբար երկար չի դիմանար ու կ'իյնայ կռուի պատնէշին վրայ: Գէորգ կ'անցնի ուրիշ փողոց մը... գիւղը մթութեան մէջ էր, աղմուկ, լաց ու կոծ, սպանութիւն ու թալան էր... Գէորգի զինակից Աստուրը նոյն օրը կը նահատակուի: Աստուրի կիներ՝ Վառոն տեսնելով Գէորգը, կը տանի իրենց տունը, որ գիւղի ծայրն էր, այնտեղ ալ կը սպասէին իր միւս ընկերները: Այդ տունը քիւրտի մըն էր, որ հայէ մը աւելի կը պաշտէր Գէորգը: Քիւրտը աթարներու տակ կը ծածկէ Գէորգը եւ իբրեւ քիւրտ՝ զօրքերուն հետ համարձակօրէն Ֆետայիներուն կը հայհոյէ:

Զօրքերով լեցուած է ամբողջ գիւղը, տուն, տանիք, փողոց, դաշտ, չորս կողմէ կրակ կը ստանային գիւղացիները, որոնց մէկ մասը կը ստիպուի կերպով մը անցնիլ առուններու մէջէն: Ֆետայիներէն Մարգարն ու ու Մոսոն սպաննուած զօրքերու գլխարկները (Ֆէսեր) եւ հագուստները հագած՝ կ'անցնին գերեզմանոցի մօտէն դէպի դաշտ:

Ֆետայի Պօղէն, — որ ութը վէրք ստացած էր եւ որուն կողքին կը գտնուէին քանի մը դիակներ, ինչպէս նաեւ Գէորգի պայուսակը, կնիքը և նամակներ, — թշնամիներու կողմէ Գէորգ Չաւուշը կը կարծուի եւ զօրքը շունչ կը քաշէ հաւատալով թէ սպաննած են Գէորգ Չաւուշը: Կիրքերը կը հանդարտին եւ չնայելով որ թշնամին շատ աւելի կորուստ տուած էր, ուրախ զուարթ կը վերցնեն Պօղէի դիակը իբրեւ Գէորգինը եւ առօք փառօք կը տանին Մուշ, իրենց ետեւ ձգելով միացող գիւղը եւ հարիւրէ աւելի դիակներ, որոնց մեծ մասը կին եւ երախաներ էին:

Վառոն եւ քիւրտը իրենց մահը արհամարհելով, կ'անցնին խումբի գլուխը եւ զանոնք անվտանգ կը հասցնեն Մառնիկի սարը, Մակարի մօտ:

Ալվառինջի կռուին Ֆետայիներէն կը սպաննուին թարփաթող Սարգիսը, Կելիեկուզանի Չաթոն, Բերդակցի Մարտոն, Խասգիւղցի Մոսոն, Գոմսեցի Լեւոնը, Աւրանցի Մուրատը եւ Իսրոն, Մառնիկցի Պօղէն եւ Ալվառինջի Աստուրը:

Մինչ այդ թրքական զօրքը ուրախ ու զուարթ կ'երթար դէպի Մուշ, տանելով իր հետ, Գէորգի մահուան լուրը, որպէս թէ մարգի մէջ այրած էինք զինք ու իր ընկերները:

Երկրորդ օրը երբ Գէորգ կ'իմանայ իր զինակիցներու մահացանկը, ինքզինք գրեթէ կը կորսնցնէ, այլեւս նախկինը չէր, անձնատուր կ'ըլլայ հոգեկան ծանր ապրումներու, միշտ լուռ է, մենութեան

մէջ կը մնայ: Ընկերները կ'աշխատին զինք մխիթարել, ըսելով. «Այն օր որ մենք ուխտ ըրինք եւ լեռ բարձրացանք, ամէն օր, ամէն ժամ մահը մեր աչքին առաջն է: Բայց չէին կրնար համոզել Գէորգը: Յաճախ առանձնութեան մէջ կը մնար եւ երախայի մը նման կու լար, կը հեծկլտար: Ծերունի Մակար սիրտ կու տար եւ կը մխիթարէր զայն:

Ալվառինջի կռուէն ետք, Մուշի միւթեսարիքը եւ Սալիհ փաշան Պոլիս հեռագրած էին Գէորգի մահուան լուրը, նաեւ իմացուցած էին, թէ Ֆետայիները արմատախիլ ըրած են Սասունի եւ Մշոյ դաւառներուն մէջ: Այս իրենց ուրախալի լուրէն ետք, Պոլսէն առանձին հրովարտակով կռիւի մասնակցող սպաներուն եւ իրենց օգնականներուն մէջ մէկ աստիճանի բարձրացում կու տան, իսկ Սալիհ փաշան բացի աստիճանի բարձրացումէն՝ կը ստանայ նաեւ պատուանշաններ:

Այդ շաբաթները Մշոյ շրջանի զինուորականներն ու երեւելիները ուրախութեան օրեր կ'անցընեն, խոստանալով նաեւ որ Գէորգի բոլոր ընկերները պիտի սպաննեն կամ ձերբակալեն: Իրենց այս ուրախ օրերուն իմացան ու անակնկալի եկան որ Գէորգը չէ մեռնողը այլ իր մէկ զինակից ընկերը, զոր Գէորգ Չաւուշը կարծած են:

Սալիհ փաշան ու իր ընկերները շատ նեղ դրութեան կը մատնուին, կը սկսին մտածել այս լուրջ խնդրի մասին: Եթէ Պոլիս իմանայ, որ Գէորգը ողջ է, թերեւս իրենք պատժուէին: Հետեւաբար կ'արգիլեն անոր անունը յիշել, բանտ կ'առաջնորդուէր ան, որ համարձակէր ըսել, թէ Գէորգ ողջ է ու կը գտնուի Գուրանի շրջանը: Սալիհ փաշան խստիւ կ'արգիլէ զօրքերուն եւ քիւրտերուն, որ որեւէ տեղ բախում չունենան Ֆետայիներու հետ:



Մշոյ «Գալէ քաղամաս»ը

Այդ օրերուն Գէորգ իր ընկերներով կը գտնուէր Սբ. Յովհաննու լեռները. երբ կ'իմանան Սալիհի տուած հրամանները, առիթէն օգտուելով, կ'ուզեն կրկին անգամ ցոյց տալ իրենց գործունէութիւնը: Կ'որոշեն քանի մը հայ դաւաճաններու հաշիւը վերջացնել, ու այդ նպատակով կ'անցնին Փեթար գիւղը եւ տեղորի կ'ենթարկեն Մուրատը, որ գործիք դարձած էր բէկերու ձեռքը: Մուրատ կը սպաննուի Փեթարցի Մանուկի, Պետիկի եւ Ախոյի ձեռքով: Նորշէնի մէջ կ'ահաբեկեն Կաթուղի վարդապետ մը, որ միւթեսարիՓին գաղտնի լրտեսն էր: Այս վարդապետը կը սպաննուի կաթուղի Սահակի ձեռքով, Գէորգ Չաւուշի ներկայութեան: Երրորդը՝ Բերդակի Ռէսն էր, որ քանի մը անգամ զօրքերուն լուր տուած էր Փետայիներու ներկայութեան մասին:

Մէկ խօսքով, Գէորգ արթուն պահակն էր իր զինակիցներով Սասունի եւ Տարօնի շրջանին:


Ալվառինջի կռիւէն ետք, մինչեւ 1906-ի դարունը, ոչ մէկ զէպք կը պատահի Սասնոյ մէջ: Նախ՝ որովհետեւ Փետայիները շատ զգոյշ էին, Սպաղանաց Մակարի խորհուրդները մտիկ կ'ընէին, երկրորդ՝ միւթեսարիՓը եւ Սալիհ փաշան հեռագրած էին արդէն Պոլիս՝ Գէորգին մահուան լուրը եւ շեշտած, թէ Փետայիները Սասնոյ եւ Մշոյ դաւառներէն արմատախիլ ըրած են:

Գէորգ Սպաղանաց Մակարի խորհուրդով քանի մը շաբաթ հանգիստ ընելու պատճառով կ'անցնի Ս. Կարապետի վանքը: Ան 1904 եւ 1905 թուականներուն՝ միակ պատասխանատու խմբապետը մնացած էր Դուրան-Բարձրաւանդակի շրջանին մէջ եւ պաշտպանը՝ Փետայական խստարարոյ աւանդութեան: Սակայն երբ կը պատահի Ալվառինջ գիւղի կռիւը, Գէորգ Չաւուշի մէջ կ'առաջանայ հոգեկան փլուզում մը, կամքի եւ վճռականութեան տկարացում կ'ունենայ, ինչպէս նաեւ կը ցրտանան ընկերներուն հետ իր կապերը: Կարծէք կ'ուզէր ինքզինք մոռնալ:

Այս ձեւով մը ինքնամեկուսացումը, տխուր հոգեվիճակը կարելի է արդիւնք համարել տարիներու անդուլ պայքարին, կռիւներուն, որոնք ազդած էին իր ջիղերուն, մանաւանդ երբ իբրեւ ղեկավար առանձին մնացած էր, ինչպէս նաեւ Փետայիներու մօտ որոշ դժգոհութիւն մը առաջացած էր իր վարած քաղաքականութեան հետեւանքով:

Այդ հոգեվիճակին իբրեւ արդիւնք, Գէորգ Չաւուշ կը սկսի յաճախ խմել եւ ինքզինք տալ ուրախութեան, զուարճութեան: Մէկ խօսքով՝ մարդկային տկարացման, թուլութեան շրջան մը, որ զինք կը մղէ իր իսկ սկզբունքներուն եւ ըմբռնումներուն հակոտնեայ քայլեր առնելու:

Երկար տարիներէ ի վեր Գէորգին սիրահարուած էր Հեղին գիւղէն Վարդանի աղջիկը՝ Եղսոն: Գէորգ զիտէր, որ Փետայիի մը համար արդիւլուած էին սէրն ու ամուսնութիւնը, իրենց կինը զէնքն էր: Նոյն-



Մշոյ Ս. Յովհաննու (Եղրդուտի) վանքը
 Կուրտրք լեռան անտառուտ կողին :

իսկ, աւելի երիտասարդ տարիքին, Աղբիւր Սերոբի Ժամանակ պա-
 խարակած էր կին ունեցող կնոջ շատ կարեւորութիւն տուող Փետա-
 յիները: Հիմա, սակայն, դէպքերը թաւալղլոր կ'ընթանան:

Գէորդի հողեկան փրուզումի այդ օրերուն, Եղսոն կ'երթայ Ս.
 Յովհաննու վանքի վանահայր Մկրտիչ վարդապետի մօտ, որ իր քե-
 ոին էր, եւ անոր կը յայտնէ, որ ինք շատ կը սիրէ Գէորդ Չաւուշը եւ
 կը փափաքի քանի մը խօսք փոխանակել անոր հետ: Վարդապետը կը
 սպառնայ, որ ան պատճառ պիտի դառնայ Սասնոյ հերոս Սարերու
 Արսլան Գէորդի Փետայական դործունէութեան: Սակայն իր քրոր-
 դիին՝ Եղսոյի պնդումներէն յուսահատ, վարդապետը նամակ մը կը
 գրէ Գէորդին եւ անկէ խորհուրդ կը հարցնէ: Գէորդ վիշտը սրաին,
 հնազանդելով Փետայական աւանդական կենցաղի հրամայականին, կը
 պատասխանէ. — Արէք՝ ինչ կ'ուզէք, ինձի ինչո՞ւ կը հարցնէք, ես
 պսակուած եմ հրացանի հետ:

Հակառակ բնազդական այս պատասխանին, Գէորդ աւելի եւս

մտածումներու մէջ կը խորասուզուի : Այլեւս նոյն Գէորգը չէր : Ո՛չ մէկու հետ կը խօսէր եւ չէր ուզեր , որ իրեն մօտենային : Կը քաշուէր ծառերուն տակ , յաճախ կու լար , կ'ուզէր ամուսնանալ բայց իր ամուսնանալով չէր կրնար առաջուան նման գործել իր զինակից ընկերներուն հետ : Ստեփան վարդապետ եւ Սպաղանաց Գալէն տեսնելով Գէորգի այդ տխուր եւ մտածկոտ վիճակը , կը մօտենան անոր եւ կը տեսնեն , թէ Գէորգի աչքերը արցունքով լեցուած են : Անոնց պնդումներուն վրայ , Գէորգ կը յայտնէ Եղսոյի կողմէ Մկրտիչ Վարդապետի ձեռքով դրուած նամակի մասին եւ կ'ըսէ . — «Ան թող մեռնի Ս . Յովհաննու Վանքի մէջ՝ իր քեռիին ձեռքով , զիս ալ թաղեցէք Ս . Կարապետի վանքին մէջ՝ ձեր ձեռքով» : Գալէն , որ երկար տարիներ եղած է Գէորգի եւ Մակարի անբաժան զինակիցը , երբ առաջին անգամ ըլլալով կը տեսնէ իր սիրելի խմբապետին աչքերէն հոսող արցունքը , պահ մը իր խմբապետի մօտ կենալէ ետք , առանց որեւէ բառ ըսելու կը վերադառնայ Սասունցի Մանուկի մօտ , զոր իր հետ տանելով , երկուքը իրենց ձիերը նստած կը մեկնին ուղղակի Ս . Յովհաննու վանքը :

Մկրտիչ Վարդապետ արդէն ստացած էր Գէորգ Զաւուչէն պատասխանը եւ կը վարանէր , առանց կարենալ ընելիքը որոշելու : Իսկ երբ կը տեսնէ երկու ձիաւոր Ֆետայիներ , կը սկսի դողալ , կարծէք Գաբրիէլ հրեշտակը եկած է զինք տանելու , մանաւանդ երբ անոնք կը մօտենան վանահօր եւ կտրուկ կերպով Եղսոն կը պահանջեն : Վարդապետը՝ արտասուքը աչքերուն , անոնց կը յանձնէ Եղսոն , որ միայն մէկ խնդրանք կը յայտնէ անխօս Գալէին եւ լռակեաց Մանուկին , սպաննուելէ առաջ տեսնել Գէորգը : Մանուկ կը մօտենայ Եղսոյին եւ ականջին կը փսփսայ . «Ես քու ախրէրն եմ , ինձմէ մի վախճար» : Երբ ձիերը նստած , երեքով դուրս կ'ելլեն վանքէն , միաբանութիւնը այն կարծիքը ունէր , որ Եղսոն կը տանին սպաննելու իբրեւ «անառակ» :

Երկրորդ զիշերը կը հասնին Ս . Կարապետի անտառը : Գէորգի տեղը հասկնալէ ետք , Եղսոյի հետ կ'երթան անոր մօտ : Գալէի լեզուն երկու օրուան մէջ առաջին անգամ ըլլալով կը բացուի : Կարծէք ինքն է Գէորգի մեծաւորը , այլայլած եւ շճած զոյգին գառնալով՝ հրաման կու տայ . — «Անմեղ արիւնի մէջ մի մտնէք , դուք այսօր պիտի պսակուիք , ես պատասխանատու եմ հայ ազգին առջեւ» :

Գալէն շուտով կ'անցնի Ս . Կարապետի վանքը , ուչ ժամուն կը մտնէ ներս՝ Ստեփան վարդապետի մօտ , զոր առնելով կու դայ Գէորգի մօտ : Գիշերը լուսնի աղօտ փայլին տակ , Ս . Կարապետի անտառին մէջ , գիւրքը ձեռքին՝ պսակման ծէսը բերանացի կը կատարէ Ստեփան վարդապետը : Կնքահայրը կ'ըլլայ Գալէն , իսկ Սասունցի Մանուկը իբրեւ հարսնեղբայր՝ կը կենայ Եղսոյի կողքին :

Այսպէս ուրեմն , այն Գէորգը , որ դէմ արտայայտուած էր Ֆետայիի ամուսնութեան , պարագաներու հարկադրանքին տակ կը պսակուի :

Ֆետայիներու համար մահացու մեղք մըն էր ամուսնութիւնը :

Այս պատճառով՝ երկարատեան ծածուկ կը պահուի Գէորգի պսակուիլը, ոչ ոք կը լսէ, բայց ուշ կամ կանուխ պիտի յայտնուէր: Որոշ ժամանակ մը ետք Գէորգ կը միանայ իր խումբին: Այդ տարին նախորդ տարուան նման շմամբ եւ ընկճուած դրութիւնը չկար ժողովուրդին մէջ, ան վհատութեան բեռը թօթափած էր: Կազմակերպուած էր, միութիւն դոյութիւն ունէր՝ ինչպէս նախապէս: 1904-ի փոթորիկէն ետք, այդ տարուան (1905) կռիւները սովորական կ'երեւէին:

1906-ի սկիզբները ոչ մէկ դէպք կը պատահի Սասունի մէջ: Փետրուարին թիւրք կառավարութիւնը կը սկսի տուրքն ու խարաքն առաջուան նման ծանրացնել ժողովուրդին վրայ, զօրքին խուզարկութիւնները կը շարունակեն աւերներ դործել, մասնակի սպանութիւններ եւ առեւանգումներ տեղի կ'ունենան, բայց մեծ բեռ մը (կալուածատէրերու, դաբիլաթերու, վաշխառուներու, բէկերու եւ աղաներու հարստահարութիւնը), որ կը սպառնար ի սպառ ճնշել եւ խեղդել ժողովուրդը, սահմանափակուած կամ մեղմացեր էր գլխաւորաբար շնորհիւ Գէորգ Չաւուչի: Այդ էր պատճառը, որ ժողովուրդը երախտագիտութեամբ կը նայէր Գէորգին եւ սուրբի մը նման կը պաշտէր զայն:

Գէորգ Չաւուչ միշտ արթուն պահակն էր իր ժողովուրդին:

Լեռներու մէջ, առանձնութեան պահերուն, կը խորասուզուի մտածումներու մէջ, ծրագիրներ կը մշակէ, որպէսզի թշնամին չկարենայ հասնիլ իր նպատակին: Իր աչքին առջեւն կը տողանցեն այն ընկերները, որոնք տարիներ շարունակ միասին կռիւ մղած են թիւրք բանակին, քիւրտ աշիրէթներուն, հարստահարիչներուն դէմ: Կարգ մը ընկերներ սպաննուած են կռիւներու ընթացքին, ինչպէս Հրայրը, ուրիշներ 1904-ի ապստամբութեան ճնշումէն ետք ստիպուած եղած են մեկնիլ արտասահման, ինչպէս Անդրանիկը:

Գէորգ օգնականի, դործակիցի պէտք ունի: Այդ իմաստով Վանի Կ. Կոմիտէին քանի մը նամակ կը գրէ, բերանացի լուր կը զրկէ, իրեն օգնական կամ ղեկավար ընկեր խնդրելով: Միշտ կը պահանջէր նաեւ զէնք եւ փամփուշտ:

Գէորգի ուղարկած նամակները օրը օրին կը հասնին Վանի Կ. Կոմիտէին:

Նոյն օրերուն Վանի մէջ տեղի կ'ունենար Ռայոնական ժողով մը: Այդ ժողովին կը մասնակցէին Արամ Մանուկեանը, Տիգրանը, Համազասպ Բաղէչցեանը, Ղեւոնդ Մելոյեանը, Թէոսը, Գէորգ Գիտակեանը, Վարդան Շահպաղը, Իշխանը, Սարգիսը, Մալխասը, Ռուբէն Տէր Մինասեանը (որ նոր եկած էր Վան եւ ստանձնած էր Լեռնապարի շրջանի ղեկավարութիւնը) եւ ուրիշներ:

Ժողովի օրակարգի հարցերէն էին Ռուբէնի եւ Իշխանի խնդիրը, ինչպէս նաեւ Գէորգ Չաւուչի պահանջները: Ժողովը Իշխանի եւ Ռուբէնի միջեւ ծաղած տարակարծութեան հարցը լուծելէ ետք,

կ'անցնին երկրորդ օրակարգին, որ «Կետան-Կեալմազ»ի հարց կ'որակուի:

Ժողովականները կը սկսին ծիծաղիլ այդ հարցին վրայ:

Արամ Մանուկեան դառնալով կ'ըսէ ընկերներուն.

— Այժմ կը հասկնաք, թէ ինչ է Կետան-Կեալմազ (զայցողը չի վերադառնար) ո՞վ է: Դառնալով Համազասպ Բաղէչցեանին, կ'ըսէ. — Կարդա՛ Գէորգ Զաւուչի ուղարկած նամակները եւ սուրհանդակի միջոցաւ եկած լուրերը:

Գէորգ Զաւուչ կը նկարագրէ Ղարսի կռիւը եւ իր ազատումը, անտանելի հալածանքները եւ ժողովուրդի ծանր կացութիւնը: Կ'ըսէ, որ կտրուած է դուրսի աշխարհէն: Եւ նամակը կը վերջացնէ մօտաւորապէս այսպէս. —

«Իմ հոգս չէ, այսօր կամ վաղը ես պիտի սպաննուիմ: Պարզ է ինձ համար, որ իմ վերջը եկած է, թէեւ, եթէ ուզեմ ամէնուն պէս լքել ժողովուրդը եւ հեռանալ, ես ալ իբր հերոս երկար, շատ երկար տարիներ կրնամ ապրիլ: Ես յուսահատ եմ ամէնքէն, բացի ձեզմէ: Իմ խնդրանքն է, որ անպայման մէկը ձեզմէ ուղարկէք այս Երկիրը: Այդ ընկերը կամ կը հասնի իմ ողջութեանը կամ չի հասնի, այո միեւնոյնն է: Ճամբեցէ՛ք մէկը, որ այս ժողովուրդին գլուխն անցնի»:


Գէորգի այս նամակը բոլոր ժողովականներու գլխուն սպառ ջուր կը լեցնէ: Ոչ ոք կը խօսի, կարծէք ժողովը մեռելատուն կը դառնայ: Ժողովականները աւելի լաւ կը հասկնան Կիտան-Կեալմազին իմաստը:

Ռայոնական ժողովը նկատի կ'առնէ Գէորգի ուղարկած նամակներու պարունակութիւնը եւ նկատի ունենալով Իշխանի եւ Ռուբէնի տարակարծութիւնները, Ռուբէնի իսկ ցանկութեամբ գինք կ'որոշեն Սասուն եւ Տարօնի ներկայացուցիչը:

Տեղին է հոս մէջբերել այդ Ռայոնական ժողովի այն անցքը, որ կը վերաբերի Սասունի եւ Ռուբէնի. —

— Նկատի ունենալով, որ Սասունի դէպքերից յետոյ դաշտի դրութիւնը վատացել է, որոշուեցաւ ընկեր Ռուբէնին ուղարկել այնտեղ, որ աշխատի խոհեմութեամբ Գէորգ Զաւուչի եւ Տատրակի հետ խորհրդակցելով, չարիքը չէզոքացնել, ժողովրդի վիճակը բարելաւել եւ պարբերաբար տեղեկութիւններ տալ մեզ՝ երկրի դրութեան, իր արածի եւ անելիքի մասին, որպէսզի տեղեակ լինենք այնտեղի իրականութեան եւ խորհիմք ապագայի մասին: Ռուբէնը իր հետ պիտի վերցնէ առայժմ 50 լիրա: Որոշուեցաւ նոյնպէս առաջին պատեհ վայրկեանին մարդ ուղարկել կազմակերպելու Սալնոյ Զորի շրջանը:

Երկրորդ երեկոյեան, Ռուբէնը կը ստանայ 50 ոսկի Արամ Մանուկեանէն եւ Իշխանի առաջնորդութեամբ իրենց հետ ունենալով Մուկացի Թուչնիկը եւ Շատախցի Ղարսիպը կ'անցնի Աղթամար, ու անկէ Տարօն:



ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ

«Գէորգ Զաւուշի կողմէ ուղարկուած Մուշաղշէնցիներն ու Վարդինիսցիները եկեր էին Ախլաթի գաւառը, զիս, — կ'ըսէ Ռուբէն, — Մշոյ շրջանը տանելու համար: Գրգուռայ լանջին վրայ կը սպասէինք վերջալոյսին, որպէսզի թողէինք Սերոբի երկիրը եւ երթայինք այդ տարօրինակ աշխարհը»:

Թիւրք կառավարութիւնը ամէն ճիգ ու ջանք կը թափէ Ֆետայիները ոչնչացնելու: Խիստ կերպով կը սլահապանէր ճամբաները, կը զգուշանային որ Վանի կողմերէն նոր Ֆետայիներ չանցնին Սասուն եւ Մուշ, որպէսզի չկարենան վերականգնել յեղափոխական գործունէութիւնները: Պիթլիսի նահանգապետը լուր կը ղրկէ, թէ Ռուբէնը կարկառի կողմէ Սուրբայ կապանով ճամբայ ելած է 40 Ֆետայիներու հետ: Պէտք էր զգուշութեամբ շարունակել ճամբան՝ մանաւանդ որ Ախլաթի մէջ խիստ խուզարկութիւններ կը կատարուէին, կառավարութիւնը ամէն տեղ Ֆետայի կը փնտռէր:

Արեւը մայր չմտած՝ խուճրը ճամբայ կ'ելլէ. զինուորներէն երկուքը քանի մը տասնեակ քայլի վրայ առաջ կ'անցնին, իսկ մնացածները ետեւէն՝ զոյգ-զոյգ դանդաղօրէն կ'իջնէին լեռնէն: Կէս գիշերին, առաջնորդները կանգ կ'առնեն, խմբովին քիչ մը հանգստանալու եւ ծխելու: Ապա Սարէ Գէօլի կողմէն կ'առաջանան դէպի դաշտը, Գոմի կողմէն: Գետինը քանի կ'երթայ ջրուտ կը դառնայ: Կը մտնեն ջուրի մէջէն եւ կ'առաջանան դէպի Եղէզնուտի կողմը: Արդէն լուսնալու մօտ է երբ Մուշաղշէն կը հասնին:

Խուճրը կը հասնի Մուշաղշէն, ուր օր մը մնալէ ետք, կը հասնի Ղարսայ Յակոն(*) նամակ մը յանձնելով Ռուբէնին, ուր անոր կը թելադրուէր զգոյշ ըլլայ եւ վստահիլ Յակոյին, անոր ցուցմունքներովը շարժելով:

Յակոն կը յայտնէ Ռուբէնին, թէ ամբողջ դաշտը ենթարկուած է խիստ խուզարկութեան: Նոյնպէս եւ լեռները: Շամբի վրայ ալ լուրջ կասկածներ կան: Ճամբաները բռնուած են եւ Աղբենիսի եւ միւս տեղերու քիւրտերուն հրաւէր եղած է խուզարկելու Շամբի ամէն կողմը: «Այսօր մնանք, ու վաղը ելլենք»: Այդ ցերեկը կը մընան գիւղ եւ երեկոյեան մութը չհասած Յակոյի եւ իր երկու ընկերներու հետ ճամբայ կ'ելլեն, մինչեւ մէջքերը կը մտնեն ջուրերու մէջ եւ կ'առաջանան եւ երբ կը հասնին խորունկ տեղ մը՝ Ռուբէնը

(*) Յակոն Ղարսցի է: Մանկութեան հասակէն՝ շփում ունեցած է յեղափոխականներու հետ եւ աշակերտած Մարգար վարժապետին: Մինչեւ 1900 մարտական խումբի անդամ եղած է, բայց, 1901-ին կ'անցնի Ովասիսի շրջանը Հրայրի առաջարկութեամբ եւ իրրեւ քաջածանօթ փրկութիւն, շփման մէջ կը մտնէ անոնց հետ: 1904-ին, կ'ընտրուի Ովասիսի շրջանի կոմիտէի անդամ: Յակոն ծանօթ էր նաեւ Կորիւն անունով, անոր շնորհիւ Խուճ, Զուխուր եւ Ովասիս շրջանին մէջ յստաջ կու գայ փրկու-հայկական ուժեղ միութիւն մը:



Ռ Ռ Ռ Բ Է Ն

(Մինաս Տէր Մինասեան(*))

Ռուբէն եղաւ այն հազուագիւտ մարտիկներէն մէկը, որ շուտով քրժուեցաւ Գէորգի փետայական խումբերուն մէջ, նոյնացաւ անոր հետ, դիմացաւ փետայական շարժաշուքեան եւ եղաւ դեկավար դէմք մը, փետայական մարտական նկարագրի կնիքը կրելով:

Իրենց թեւերուն վրայ դրած կ'անցնին գետի միւս ափը, ու կը շարունակեն իրենց ճամբան:

Ճամբու երկայնքին՝ աջ ու ձախ, կան բազմաթիւ հայ դիւղեր, Ալի Գըլբունը, Առաղ, Արքաւանք, Քրտաղոմ, Խարդոս եւ Յրօնք, ուր երեք օր կը մնան մինչեւ որ Ռուբէն Գէորգէն կը ստանայ երկտող մը, էլոյի միջոցաւ, գրուած ծխախոտի թուղթի վրայ, ուր կ'ըսէ. — «Ս. Ռ. հաւատա էլոյիմ եւ լսիր անոր: Քո՛ Սարհատ»:

Երեկոյեան ճամբայ կ'ելլէ երկու խումբով դէպի Գէորգի մօտ: Կ'անցնին Շէյխ Եուսուֆ, Շէյխերիմ դիւղերէն եւ կը հասնին որոշուած տեղը, էլոն կը կանգնեցնէ խումբը, եւ կ'ըսէ Մխիկին.

— Մխիկ, քու խումբը ետ դարձուր, այս կողմէն մեր ճամբան ապահով է:

էլոն չէր ուզեր միւս ընկերներուն ծանօթացնել Գէորգի գրտնուած վայրը: Ան Խուչոյի եւ ուրիշ երկու ընկերներու հետ կը շա-

(* Տես «Յեղափոխական Ալպում»ի 4-րդ հատոր, էջ 11:

րունակէ ճամբան, ցրօնքցիներու աչքերուն առջեւ, դէպի Յունանի կողմերը: Մթութեան մէջ կորսուելէ ետք, իրենց ուղղութիւնը կը փոխեն դէպի Ալիջանի կողմերը: Հոն չհասած, խումբ մը Ալիջանցիներ ձիաւոր Տիգրանի առաջնորդութեամբ կը դիմաւորեն Ռուբէնը, եւ իրենց ձիերը կը յանձնեն անոր: Ապա կը շարունակեն ճամբան դէպի Կառնի անկէ Փեթար դիւղը, ուր պիտի մնան իշխան Պետոյի տունը:

Շուտով իշխան Պետոյին լուր կը հասնի, թէ Գէորգ շուտով պիտի հասնի Ղըզըլաղաճ:

Սօք տանք Ռուբէնի.—

«Իեռ արեւը մայր չէր մտած, երբ մենք պատրաստուեցանք ճամբայ ելլելու: Մինչեւ հիմա, ինծի հետ էր միայն մէկ Ֆետայի՝ Արամը, այժմ, երեք Ֆետայիներ ալ միացան մեզի: Անոնք ղրկուած էին Գէորգին կողմէ, զիս փնտռելու եւ իր մօտ տանելու համար: Այդ երեք Ֆետայիներն էին քաջ զինուորներ՝ Մանուկը, Ախոն եւ Իսրոն: Մեզի կ'ուղեկցին նաեւ երկու փեթարցի երիտասարդներ՝ Կիրակոսն ու Պետիկը, բայց Կառնի մեր առաջնորդները չկան այլեւս, անոնք արդէն նախորդ գիշերը վերադարձեր էին:

Մեր փոքրիկ խումբը ճամբայ ելաւ տանիքներէն դիտող կիներու եւ մանուկներու զննող աչքերուն առջեւ: Կածաններով՝ իջանք ձորը, եւ Փեթարի ջրի ափերով, ժայռերու վրայով, դժուարանցանք լի զառիթափներով՝ մտանք անտառները: Քանի մութը թանձրացած չէր, արագ քայլերով յառաջացանք, մթնելէն յետոյ, շատ դժուար կը դառնար քայլին այդ ձորերուն մէջէն:

Հասած ենք արդէն Բրիմօք դիւղի տակ, հեռուէն կ'երեւին Գելախուլի սահմանները, ալ կը դանդաղինք, որպէսզի բոլորը քնանան ու մենք հանգիստ շարունակենք մեր ճամբան:

Այս կողմերը քիւրտեր դրած էին այդ ատեն, գրաւելով Սր. Յովհաննէսի վանքին հողերը: Մութը կոխելուն պէս յառաջ կը շարժինք, ձորը քանի կ'երթար կը լայննար, կը թեքէր դէպի աջ, եւ վերջի վերջոյ կ'անհետանար Մշոյ Դաշտի կուրծքին վրայ: Այդ կէտին վերայ էր, որ Գելախուլի եւ Քարձոր դիւղի սահմաններն իրարու կը միանան եւ Բադրանի տան Քրճական քէօշկերը կը բարձրանան հայկական հողերու վրայ: Մենք զգուշութեամբ առաջ կը սողանք ոլորմոլոր ճամբաներէ, աս ու ան կողմ ցրուած քիւրտ դիւղերու մօտերէն, անուշադիր՝ թշնամիներու շուներու հաջոցներու, երբեմն ալ քիւրտերու կանչերուն, որոնք կը դողային ու կը լռէին անմիջապէս, երեւի կասկածելով Ֆետայիներու շարժման մասին: Անոնք գիտէին, որ Ֆետայիներու ետեւէն պոռալը շատ ալ բարիք չէր խոստանար իրենց: Կը լսէինք անոնց սաստիչ ձայները շուները լռեցնելու համար: Ու յետոյ կատարեալ լռութիւն...

Վերջապէս կը հասնինք Գոմեր, որուն ստորոտէն կը յառաջանանք եւ տակաւին լոյսը չբացուած՝ Ղըզըլաղաճի պուրակին մօտ

ենք: Փոքր գետի մը ձախ եզրին վրայ ինկած է Ղըղըլաղաճ գիւղը, իսկ աջ կողմը ուր մենք կանգնած ենք, գիւղին անտառն է: Ծառերու սել խումբ մը կը նկատուի պուրակին մէջէն, դէպի ուր կ'ուղղենք մեր քայլերը: Ախոն կ'ըսէ. «Մերոնք հոն կը լինեն»: Մենք լուռ ենք ու կը յառաջանանք, բայց, ծառերու ճիւղերն ու տերեւները մեզի կպչելով՝ հաւար կը ձգեն, աղմուկ կը բարձրացնեն:

Յանկարծ, ծառերուն մէջէն «տա'ւր» (կանգնիր) կը լսուի եւ հրացանները կ'ուղղուին մեզի: Առանց պատասխանելու՝ կը չոքինք եւ հրացանները կ'ուղղենք դէպի այդ ձայնը: Մանուկին ձայնն է, որ կը լսուի առաջ. «հո'ս, ես զարկեցի, ո՞րն էք, ժամ էք»...

Պատասխանս եղաւ «ժամուոր», եւ երկու հոգի՝ Ղազարն Շէնիկի եւ Չոլոն, այդ նշանին վրայ, մեզի մօտեցան: Արդէն Ֆետայիներու աշխարհին մէջն էինք: Անոնք իսկական հին Ֆետայիներ էին, պահապան կանգնած՝ Ֆետայական խումբին: Մանուկը տրտունջով դարձաւ Չոլոյին. — Մալ աւայ, հո՞րթ թիւրքերէն «տուր» կը կանչես, քիչ էր որ անցնէր, գետին պիտի շրջէիր: Մենծ-մենծ կը բրդես, էսա ճամբայով դեղնակտուց Ֆետային բալադ կը լինի, մարարէն վկայ:

Երեւի Չոլոն բան մը պիտի ըսէր, բայց Ղազարը «հաչտ» որ կանչեց, երկուքն էլ լռեցին եւ մենք ձախ զըվըռելով՝ մտանք բարձր սօսիներուն մէջ: Կը լսուէին ձիերուն Ֆշուտոցը, քիչ մըն ալ մօտենալով՝ հասանք անտառին մէջ՝ փոքրիկ հրապարակ մը, շրջապատուած՝ բարձր սօսիներով, որոնց տակ կապուած էին ձիերը: Քանի մը քայլ անդին, գետնին վրայ կ'երեւին սելի զարնող մարդկային կերպարանքներ՝ գետնին վրայ երկարած եւ կամ ծառերուն բուներուն թիկունք տուած: Անոնք Ֆետայիներ էին, որ կը հանգստանան: Ոմանք կը քնանային, ուրիշներ կը մրափէին: Մթութեան մէջ, ոչ ոք նշմարած էր զիս, նոյնիսկ մեր առաջնորդ Ղազարն ու Չոլոն դեռ գլխի չէին եկած իմ ով ըլլալուս մասին: Սիրտս երկիւղածութեամբ լեցուած՝ կը դիտէի խորհրդաւոր անտառի այդ խորհրդաւոր ուրուականները եւ անհամբեր՝ կ'ուզէի տեսնել Գէորգ Չաւուչը: Կարծես, ինքզինքս կը զգայի մեծ վանքի մը մէջ եւ այդ պահուն խորհրդաւոր զգացումներ պատեր էին զիս: Երբ ես կարկամած կը մնայի թաղուած այդ զգացումներուն մէջ, Աւրանայ Արամը ինծի մօտենալով՝ ահանջիս շնջաց. — «Այն ծառին տակ գտնուող մարդոց մէջն է Գէորգ Չաւուչը»:

Մենք յառաջացանք կիսաքուն զինուորներու մէջէն ու մօտէն, որոնցմէ ոմանք գլուխներն բարձրացուցած պահ մը կը նայէին մեզի եւ դարձեալ կը կռթնէին իրենց արմուկներուն վրայ ննջելու համար:

Տասը քայլի վրայ մթութեան մէջէն ձայն մը կանչեց յանկարծ. — Արա'մ, էդ դո՞ւն ես, մինա՞կ ես թէ զոյդ:

Այդ Գէորգն էր, որ պողպատի ձայնով հարց կու տար Արամին: Արամը արագ յառաջացաւ ձայնին կողմը եւ գեկուցում տուաւ: Գէորգն անմիջապէս տեղէն վեր թռաւ եւ քանի մը կանգնած Ֆետայի-

ներու մէջէն անցնելով՝ ձեռքով գլուխս վար քաշելով՝ համբուրեց զիս : Յետոյ, քաշեց նստեցուց զիս կանաչ խոտին վրայ, ծառերուն տակ :

Այսպէս, առանց ձեւականութեան, ծանօթացանք իրարու, Գէորդ Զաւուշն ու ես : Մթութեան մէջ տակաւին իրարու երես չտեսած՝ հարազատ հին բարեկամներու պէս իրարու փաթթուեցանք :

Գէորդ պարզ էր եւ վերաբերութեամբ հարազատ. կարծես կը հանդիպէր իր ընտանիքի մէկ անդամին : Արդեօք զիս իր մեծ կամ փոքր եղբօր տե՞ղ դրաւ ու այդպէս վարուեցաւ ինծի հետ, չեմ գիտեր : Այնքան մտերիմ ու պարզ էին անոր ձեւերը, որ կը մոռնայի թէ առաջին անգամն էր, որ կը հանդիպէի այս անծանօթ մարդուն :

Նստած էինք կանաչի վրայ, ինծի ուղեկցող միւս զինուորները եւ Գէորդի մէկ քանի զինուորները կը մնային ոտքի վրայ, համր եւ կը դիտէին մեզ ժպտուն : Ես մոռցեր էի դանոնք, Գէորդէն տարուած բոլորովին : Գէորդն էր, որ վերջապէս ինծի յիշեցուց .

— Կեաւուր օղլի, տղաներին տաստուս տուր, որ դնան հանգըստանան :

Եւ թերեւս նկատելով շուարումս, ինք դարձաւ Փետայիններուն եւ ըսաւ .

— Տղերք ջան, գացէք մի քիչ հանդստացէք. բայց արթուն մնացէք, լուսու դէմ է արդէն :

Անոնք գացին եւ մեզմէ քանի մը քայլ անդին, ծառերուն տակ նստեցան : Անոնցմէ մին հրացանը ձեռքին՝ մեր ետեւն անցաւ եւ տասը քայլ հեռաւորութեան մը վրայ պազեցաւ. այդ մեր պահապանն էր : Միւսները հանգիստ առնել ըսելով անքուն պիտի մնային, քանի որ արշալոյսը ամենավտանդաւոր պահն էր Փետայինն համար, պէտք էր արթուն մնային եւ սպասէին արեւին, երբ հեռուները կը սկսին երելիլ եւ թշնամին անկարող կ'ըլլայ այլեւս յանկարծակիի բերել Փետայինն եւ թակարդը ձգել զայն :

Գէորդին հետ մինակ էի : Թէեւ սաստիկ քնատ եւ յոգնած՝ բայց մենք եւս, ինչպէս բոլոր Փետայինները, արթուն մնացինք արշալոյսին սպասելով ակնկառոյց : Բացի ատկէ, մեր հանդիպումն այնքան էր ազդած, որ եթէ ուղէի ալ պիտի չկրնայի քնանալ : Արմուկներնիս դետնին եւ երկարած, շունչ շունչի կը խօսակցէինք : Գէորդ շարունակ հարցումներ կ'ընէր. — Ի՞նչ կ'անեն վանի մեր տղերքը, ո՞րքան ոյժ ունին, կազմակերպութեան ձե՞ւր, նպատակնե՞րը եւ այլն :

Գէորդ կ'ըսէր. «Քու տոպրակը դատարկիր, ինչ որ այստեղի մասին է, կը տեսնես ինքզ» : Ես հաճոյքով անոր կը պատմէի դիտցածներս, մանրամասնօրէն, իսկ ան ուշադրութեամբ կը լսէր, մինչեւ որ արեւը բարձրացաւ երկնքին վրայ :

Փետային յոգնած, կը բարձրանայ լեռները, կը մտնէ անտառները եւ կամ ժայռի մը ներքեւ հանգիստ կ'առնէ : Արագ-արագ յա-



Ֆետայիները հսկումի պահուն

ուաջանալով՝ քրտինքի մէջ կ'այրի, յոգնած՝ կ'երկարի ծառերուն տակ, թաց կանաչը իր տակ: Առաւօտեան սըռը (ցուրտ քամին) կը չորացնէ ջուր կտրած իր քրտնաթոր հագուստները, եւ երկաթի նման պաղ՝ կը շարժի իր հագուստներուն մէջ: Ֆետայիին դէմքը ընդհանրապէս պղինձի գոյն կը ստանայ, առաւօտեան դէմ քիչ մը կը սեւնայ կամ կը կապուտնայ ցրտէն: Ան կ'ուզէ շարժումներ ընել, որ քիչ մը տաքնայ, բայց, արշալոյսին՝ բոլոր շարժումներն արգելուած են: Ան ահանջ պէտք է կտրի առանց ծպտուն հանելու, որպէսզի կարենայ լսել փոքր ձայներն ու շշուկները, հեռուներէն: Ինք անլսելի եւ աննշմարելի պէտք է մնայ հետապնդող թշնամիէն: Ան չի կրնար ճաշակել քաղցրիկ քունը լուսաբացին, իր կռնակը պէտք է տայ իր զինակցի կռնակին. անոնք պէտք է սեղմուին իրարու եւ իրար տաքցնեն առանց կրակի եւ ծուխի: Լոյսն ու ծուխը շատ վտանգալից են Ֆետայիին համար: Անտառներուն մէջ, փայտերու վրայ նստած՝ լուցկին ալ գըրպաննին՝ չեն կրնար կրակ շինել եւ բոլորուիլ անոր շուրջ:

Ֆետային յոգնած է եւ սոված՝ բայց, իր պայուսակին մէջ պաշար չկայ: Չորթանի կտոր մը բերանը կը նետէ եւ երկու փոր սառ

Չուր կը խմէ : Ֆետայիներու նախաճաշն այս է առտուն կանուխ, արչալոյսին :

Ահա, այս կեանքն է որ կ'անցընէին Ղըզըլաղաճի անտառին մէջ, Տարօնի տէր եւ տիրական Գէորգի կողքին : Բայց այս դժուարութիւններն այնքան սովորական էին, որ ոչ ոքի մտքէն չէր անցներ տրտորնջալ եւ ազատելու միջոց փնտռել : Կարելի⁶ էր կլիման փոխել :

Գէորգը խորհուրդ տուաւ ինծի, — թերեւս նկատելով նորեկի հանգամանքս, — որ մէջքիս պայուսակը կռնակս առնէի, եւ Շէնիկցի Մանուկին ըսաւ .

«Այ տղայ, ապաղ էստեղ տո՛ւր, դու գնա՛ պահապան, թող պարոնը իր տակը ձգէ» :

Յետոյ, իր պայուսակէն հաւի միս հանեց, լաւաշ հացի մէջ դրաւ եւ դոնեակի հետ ինծի հրամցուց : Այդ բոլորը բաւական չհամարելով՝ խոստում տուաւ, որ երբ արեւը բարձրանայ ու կռիւ չծագի, թէյ ալ պիտի խմէինք եւ խորոված ուտէինք շամփուրներու վրայ : Այդ խոստումով ոգեւորեց զիս, բայց կանխիկ հաւուն միսը եւ դոնեակը երջանկութիւն պատճառեցին ինծի . կարծես, ամէն մէկ կտորը կ'երթար եւ մարմնիս բոլոր մասերուն հաճոյք կը պատճառէր : Ով որ յոգնած չէ եղեր, պիտի չզգայ վայելքը :

Ֆետային սովորական մարդկանց պէս չէ, որ չհասկնայ ժամանակի արժէքը եւ ժամանակին մեծ մասն անցընէ աննկատ : Մանաւանդ, արչալոյսին՝ կը լսէ երկվայրկեանները : Վայրկեան առ վայրկեան՝ ան կը հետեւի աստղերու շարժման, արեւածագին, ձայներու ուղղութեան, եղանակի փոփոխման, եւ այդ բոլորը ոչ թէ սոսկ հետաքրքրութենէ մղուած, այլ անոր համար, որ անոնք կապուած են իր գոյութեան հետ : Եթէ կռիւ սկսի գիշերին՝ իր վաղուան գոյութիւնը կասկածելի պիտի ըլլայ, եթէ մըժ ըլլայ, իր բախտը կը բանի, եթէ անձրեւոտ ըլլայ կամ ցուրտ քամին փչէ, շատ պիտի տանջուի, եթէ արեւը կէսօրը կտորէ, իր վէզը ծիլ պիտի կանգնի, թշնամիին պիտի վնասէ առանց վնասուելու : Յաղթութեան յոյսովը կը լեցուի եւ համարձակ կը դառնայ, իր ձայնը կը ձգէ անտառներու եւ ձորերու մէջ եւ կ'երգէ : Այսպէս Ֆետային կեանքի ամէն մէկ վայրկեանը կ'ապրի : Ո՛չ քնած է, եւ ո՛չ ալ մոռցած բնութիւնը, այլ կ'ապրի անոր ամբողջ ձեւերուն, արտայայտութիւններուն եւ դարձուածքներուն մէջ, կը գնահատէ անոր ամէն մէկ բանը : Ֆետայիները թէեւ քիչ կեանք ունին, թիթեռնիկի նման՝ բայց ինծի կը թուի, որ այդ կարճ ժամանակի ընթացքին՝ անոնք աւելի երկար կ'ապրին, աւելի բազմակողմանի եւ խոր կերպով՝ քան միլիոնաւոր մարդիկ, իրենց 60—80 տարիներու ընթացքին, մարդիկ, որոնք չունին իրենց կեանքի վայրկեանները համրելու կարելիութիւնը, որոնք ժամանակը կ'անցընեն անուշադիր՝ իրենց օրերուն եւ տարիներուն :

Ծանր է կեանքի ամէն մէկ վայրկեանը համրել եւ կռուի սպասել, բայց քաղցր է եւ դուրեկան, մանաւանդ, կռուի վայրկեանին,

երբ ամէն մէկ վայրկեանը տարի կը դառնայ : Այդ ըլլայ դժբախտ կամ բարեբախտ վայրկեան՝ դարձեալ անմոռանալի պահ կը դառնայ Փետտայիի հողիին մէջ : Ահա , այս ապրումներուն մէջն էի , երբ լոյսը բացուեցաւ անտառներուն մէջէն , ճուռողուն թռչուններուն երգերով օծուն :

Շուրջս կը տեսնեմ Փետտայիները , որոնք խմբուած են հինգ տեղի վրայ , բաժնուած հինգ մեծ խումբերու : Մենք բոլոր խումբերուն մէջտեղն ենք : Քառակուսի անկիւններու վրայ տեղաւորուած են մօտ 75 հողի , իրարմէ հազիւ հարիւր քայլ հեռու : Քառակուսիին մէջտեղը կան տասնի չափ ձիեր , մեզմէ քիչ հեռու . անոնք թամբուած են , խուրջիները կապուած :

Փետտայիներու դիրքը շատ գրաւիչ է եւ ազդու , բոլորն ալ հասակով մարդիկ եւ 25 տարեկանէն վեր . անոնցմէ ոմանք ալեհեր են , բայց , ընդհանրապէս անոնց տարիքը կ'իյնայ 25-ի եւ 40-ի միջեւ : Բացառութիւններ են Սպաղանաց Մակարը , Գեալչօ Մանուկը , Կրպոն Իշխանձորի . ասոնց տարիքը 50-ի մօտ է : Բացառութիւն է նաեւ Փետարի Ախոն , որ 25-էն վար է , թերեւս 23—24 :

Փետտայիները դէմքով տարբեր են հասարակ գիւղացիներէն , թէեւ բոլորն ալ գրեթէ գիւղացու զաւակներ : Ո՛վ գիտէ , թերեւս Փետտայական կեանքը որոշ տիպի մարդիկ կը քաշէ միայն : Իրողութիւնն այն է , սակայն , որ առաջին ակնարկով՝ անմիջապէս կը մտածէք թէ անոնք կամ այդ երկրացի չեն եւ կամ յատուկ ընտրուածներ են ժողովրդական խաւերէն : Այս ենթադրութեան հակառակ կայ այն իրողութիւնը , որ ղեկավարները բնաւ հաշուի չեն առներ անհատին արտաքինը՝ Փետտային իրենց շարքերուն մէջ առնելու ժամանակ . պարզ է այն միայն , որ հասարակ ժողովուրդէն տարբեր արտաքինով մարդիկ հաւաքուած են Փետտայական լուծը տանելու համար : Քիւրտերը համոզուած են , որ Փետտայիները հայոց քոռուներն են , եւ իրօք ինչպէս քիւրտերու մէջ՝ իր կերպարանքով քոռուներ տարբեր է հասարակ քիւրտէն , այնպէս ալ Փետտային տարբեր է , զոնէ տարբեր կ'երեւի հասարակ հայէն : Անոնց մէջ ոչ ուռած փոքր չաղ ծերուկ , եւ ո՛չ ալ դեղնած ալուջ . բոլորն ալ ջղուտ , բարակ մէջքով եւ հասակաւոր ու լայն թիկունքով մարդիկ են : Հասակները բարձր են միջակէն , ոմանք չինարի նման երկարած : Այդ հսկաներուն մէջ ամենէն քոստան ու քնձոտը Գոմսայ Մելիքն ու բոլորին գլխաւոր Գէորգ Չաւուչը , մէկ մըն ալ ես էի արհամարհելին , իսկ միւսներին տեսքին նայելով՝ հայիլ կը մնար մարդ : Սիրտդ կը բացուի զանոնք դիտելով — գլուխնին բարձր , մէջքերնին ուղիղ եւ բարձրածիգ :

Մշոյ Փետտային ճեմելով կը քալէ , երբ կը նայի՝ կարծես վիշապի նման ձեր վրայ պիտի ցատկէ : Արագաշարժ ու ճարպիկ է իր շարժումներուն մէջ : Անոր կնճռոտ երեսը ո՛չ կարմիր ունի եւ ո՛չ ալ սպիտակ . տաքով ու պաղով թրձուած պղինձի գոյնով է ներկուած : Ոմանք փալապեխ են , մօրուսները ածիլուած : Դէմքերնին լուրջ են

եւ խոհուն, ո՛չ լացի եւ ո՛չ հրճուանքի հետք կը նշմարէք անոնց վրայ: Շատերը կարծես պողպատէ շինուած արձաններ են, քիչ մը զայրոյթ եւ քիչ մըն ալ դաժանութիւն՝ գծագրուած ծնօտներուն վրայ եւ աչքերնուն մէջ: Ծիծաղելու կամ ուրախանալու ժամանակ, այդ դիծերն անշէջ կը պահէ եւ սառն ազդեցութիւն կը թողու ձեր վրայ:


Վաղ արշալոյսին՝ գեղեցիկ են այդ խումբերը Փետայիներու: Անոնք հագած են երփներանգ շորեր, բոլորին գլուխը՝ արախչին, սասունցնակ կամ մշեցնակ հիւսուած եւ բանուած փուշիները անոր բոլորտիքը՝ քամիին հետ կը փողփղայ, եւ անոնց դէմքին աւելի դաժանութիւն եւ անվեհերութիւն կու տայ: Հագած են նաեւ գոյնզգոյն արխալուխ եւ լայն փէշերով շալվարներ ասեղնագործուած կարմիր ու դեղին նաշխերով: Ուշխուրներուն փունջերը անոնց կողքերէն կախուած են, իսկ ոտքերնին տրեխներ հագած: Մէջքերնին կապած տասը հալապի լահորի կամ Տիարպեքիրի գօտին, որուն վրայ չորս կապ կաշիէ պատրոնակալ 240 փամփուշտ մօսինի: Կողքերնուն՝ տասնոց մաուզէրը, դարձեալ մէջքերնուն՝ 140 փամփուշտները տասընհարուածեանին: Իսկ այդ բոլորին վրայ ամուր մը կը քաշէ գօտին, խենչարի գօտին, որուն կապուած է կեռ խենչարը Մըսրի կամ Դամասկոսի:

Փետային ահագողու է իր տեսքով, բայց անոր մէջքին շուրջը սեղմուած ծանրութիւնները գեղեցկութիւն կու տան անոր երկար հասակին: Աւելի կը գեղեցկացնեն Փետային անոր ուսերէն ձգուած խաչկապ բաց պատրոնակալները, երկուքը միասին 280-ի չափ պըսպղուն փամփուշտներով: Զանոնք ծածկելու համար վրան կ'առնէ մազոտ ապան՝ առանց թելերի եւ առանց կուրծքի. ապան բոլորովին ահռելի կը դարձնէ Փետային, միանգամայն գեղեցիկ, երբեմն ահարկու, ինչպէս առիւծը կը գեղեցկանայ մարդուն աչքին, որքան պճնուած կաքաւը: Փետայիներուն մէջ, իրօք, մարդ ինքզինքը կը զգայ ասլաններու մէջ, թէ՛ վտանգաւոր եւ թէ՛ սիրելի ու գեղեցիկ:

Փետային՝ ապային վրայէն կը կախէ փոքրիկ պայուսակ մը, մէջքին: Երբեմն, մէջքին, բայց, աւելի յաճախ, ձեռքին է բռնած մոսիս հրացան: Ան թուրը չի սիրեր, բայց ատոր փոխարէն, մանաւանդ լեռնականները ճոկան կը պտըտցնեն եւ իբրեւ երրորդ ոտք կը գործածեն ժայռոտ լեռներուն վրայ:

Նայինք Փետայիին պայուսակին մէջ. հոն կան անհրաժեշտ շատ մը բաներ. — մէկ կամ երկու հրացանի կօնդա, զսպանակներ եւ մէկ-երկու վիտա, մէկ վիտադարձ եւ հրացանի շորի կտորներ. շապիկ մը, վարտիկ մը, զոյգ մը գուլպայ, ձեռք մը տրեխ: Փոքրիկ տոպրակի մը մէջ լեցուած է փունտի մը չափ ատուուն (բոհրած կորեկ ալիւր), քիչ մը աղ, մէկ-երկու կտոր չորթան, քարի նման կարծր, անոր նեղ աւուր պաշարը:

Աշխարհի մէջ Փետայիին ամբողջ ունեցածն այդ է, հարստու-



Մշոյ դաշտի եւ Սասունի տարազը

Թիւնն ու կարողութիւնը, թէ՛ ներկայի եւ թէ՛ ապագայի սեւ օրերու համար: Աւելցնեմ անոր վզէն կախուած արծաթեայ շղթան, որուն ծայրը կախուած է Սարգիսով ժամացոյցը. տեղաւորուած ծոցի փոքրիկ գրպանին մէջ, փոքրիկ քեսիկ մը, ուր 5 դրուչէն 20 դրուչ գրամ ալ կրնայ ըլլալ. երբեմն, ընկերոջ մը, որդիի, մօր կամ կնոջ մազերէն փունջ մը իբրեւ նշխար, իբրեւ յիշատակ: Նաեւ նշխարքի կտոր մը, որ երբ զարնուելու ըլլայ, իբրեւ հաղորդութիւն բերանը դնէ, միւս աշխարհը առանց հաղորդութեան չերթալու համար: Չմոռնանք Փետայիին անձեռոցը, որ վզէն կը ձգէ կախ, թէեւ այդ արգիլուած է խմբապետներու կողմէն, սպիտակութեան պատճառով: Նկարագրած ըլլալու համար Փետայիներու ամբողջ արտաքինը, կ'ուզեմ աւելցնել, որ անոնք ոչինչով չեն տարբերիր տասնապետ-

ներու եւ խմբապետներու արտաքինէն : Երբեմն , այս վերջիններն աւելի համեստ են իրենց զգեստով եւ կապուածքով , յաճախ պատաստատած , քան պարզ Ֆետայիները : Տարբերութիւնը միայն այն է , որ խմբապետը յաճախ ինքը չի շալկեր իր պայուսակը : Իր մօտ գանուած թուղթերն ու իր պայուսակը կը յանձնէ շալակաւորին եւ ինքը վզէն կը կախէ հեռադիտակ մը եւ կողմնացոյց :

Տարօնի աշխարհին մէջ Ֆետայիները շարունակական շարժման մէջ են եղած սկիզբէն մինչեւ Օսմանեան Սահմանադրութիւն : Անոնք իրաւունք չունին մէկ վայրի մէջ եօթը օրէն աւելի մնալու , նայած տեղին պայմաններուն : Ասոր պատճառները երկուք էին : Առաջին՝ որ կառավարութիւնը միշտ շփոթի մէջ մնայ եւ չկարողանայ իր ուշադրութիւնը կեդրոնացնել մէկ վայրի վրայ : Այսպէսով Ֆետայիները ամէնուրեք լինելով , հնարաւորութիւն չէին տար կառավարութեան թակարդի մէջ ձգելու զիրենք , ինչպէս նաեւ յաճախակի պատահած մատնութիւնները , դիտաւորեալ թէ անմեղ , ապարդիւն կ'անցնէին : Երկրորդ պատճառը տնտեսական էր : Քանի որ Ֆետայիները պաշար չէին պատոցներ իրենց հետ , ուստի պիտի բաւականանային մէկ դիւղէն մէկ փոր հաց ուտելով : Ասկէ աւելի ծանրանալը թէ՛ անիրաւութիւն էր եւ թէ՛ գիւղին ուժերէն վեր : Ասոր համար ալ Ֆետային ըստիպուած է անվերջ ճանապարհ կտրել մէկ գիւղէն միւսը , մէկ լեռնէն միւս լեռը , մէկ դաշտէն միւս դաշտը եւ այսպէս շարունակ :

Երբ արեւը մարը մտնէ , Ֆետայիները ոտքի կ'ելլեն , ըլլալ պարզ գիշեր թէ բուք-բորան , անձրեւ կամ ձիւն ու ցուրտ եղանակ : Ան պիտի շարժի եւ իր տեղը փոխէ եւ դայլի նման կը դերագասէ մութ գիշերը : Այդ ժամանակ ան աւելի յանդուզն է եւ աւելի վտանգաւոր թշնամիին համար : Ֆետայիները կը սիրեն ձիւնոտ ու անձրեւոտ գիշերները ճամբայ կտրել :

Երբ Ֆետային ոտքի կը կանգնի ճամբայ իյնալու , կը համբուրուի մնացեալ Ֆետայիներու հետ . ամէն մէկը կը կատակէ իր բարեկամին հետ , եւ բոլորն ալ , կին ու երեխայ միասին , արտասուալից աչքերով ճամբու կը դնեն դայն , « ուղուր » ըսելով : Ֆետայիները կը պատասխանեն « չէն մնաք » եւ կը մեկնին : Ընդհանրապէս թոյլ չեն տար , որ գիւղացիները ուղեկցին իրենց : Յաճախ գիւղի խումբէն մէկ քանին պահապան կը կանգնեցնեն , որ ոչ ոք չհամարձակի տունէն դուրս գալ եւ տեսնել , թէ Ֆետային ի'նչ ուղղութեամբ կը կորսուի մութին մէջ :

Ֆետայիները , գիւղէն դուրս ելլելէ ետք , իրենք ալ չեն գիտեր , թէ ո՛ւր պիտի երթան : Անոնք կը հաւաքուին գիւղին ծայրը եւ կը սպասեն խմբապետին կարգադրութեան , որ միայն գիտէ եւ որոշած է ո՛ւր երթալու մասին : Սմբապետը կը կանչէ ճամբաները ամենէն լաւ գիտցող երկու Ֆետայի եւ անոնց ականջին կը փափսայ , թէ ուր պիտի երթան : Այս վերջինները առաջ կ'անցնին եւ խումբի առջեւէն կը յառաջանան հաւասար քայլով , նախապէս շեղելով ճամբէն գիւղի

չուրջը, որպէսզի չըլլայ թէ գիւղացիներէն ոեւէ մէկը նկատած ըլլայ խումբի գնալու ուղղութիւնը: Այս երկու վալաղ Ֆետայիներուն կը հետեւի, 50—100 քայլ հեռաւորութեան վրայ, խմբապետն իր կողքին, քիչ մը ետեւէն, ունենալով երկու հոգի: Ասոնց կը հետեւի, 10 քայլ հեռաւորութեան վրայ, խումբը: Իսկ ամենէն ետեւ կը մնան երկու հոգի, որոնք յետսապահի դերը կը կատարեն:

Ճանապարհին խօսիլը խիստ արգիլուած է, նոյնպէս ծխելը եւ հազալը: Հրացանները ծածկոց պիտի կրեն, որպէսզի չփայլին լուսնի շողին տակ եւ կամ, քարին ու պատրոնկայիներուն զարնուելով, չխկոց չհանեն: Անզգոյշ Ֆետայիին ծոծրակին մթութեան մէջ բռունցք մը կը հասնի տասնապետին կամ խմբապետին կողմէ, եւ նորէն խումբը ճամբան կը շարունակէ անձայն: Երբ առջեւի վալաղները նստին, խումբն ալ կը նստի: Պմբապետը կ'անցնի առաջ եւ, երկու առաջապահները հետը միանալով, կը ծանօթանայ խնդրին էութեան եւ ըստ այնմ հրահանգ կու տայ խումբին ընելիքի մասին: Յետոյ ոտքի կը կանգնին յառաջապահները եւ կը շարժուին, խումբն ալ կ'ելլէ եւ կը շարժուի առաջ:

Ֆետայիները լաւ քալողներ են, ժամը 5—6 քիլոմետր տեղ հանգիստ կը կտրեն: Ամէն գիշեր 25—40 քիլմ. ճամբայ պիտի երթան: Որքան հեռանան նախորդ օրուան տեղէն, այնքան լաւ: Անոնք առհասարակ կը խուսափին ճամբու վրայ ինկած գիւղերէն եւ շրջապիտ կը կազմեն, որպէսզի հետք չերեւնայ: Գետերը կամ առուները զգու-



Սասունի Գեղաշէն գիւղի աշակերտները՝
իրենց ծնողներու հետ, 1910-ին:

չութեամբ կ'անցնին, բայց շորերը չեն փոխեր, որպէսզի ժամանակ չկորսնցնեն: Պատրոնկալը պիտի չքանդուի Փետայիին վրայէն: Առ առաւելն շալվարը միայն կարելի է հանել: Վտանգաւոր է մերկանալը եւ թէկուզ քանի մը վայրկեանի համար փամփուշտներէն ու զէնքերէն բաժնուիլը: Անոնք ջուրը կ'անցնին հազուստներով, նախապէս երկու-երեք հոգի անցնելով միւս ափը, երբ դետէ մըն է, որ կ'անցնին:

Յ—Կ ժամ ճամբայ կտրելէ ետք իրաւունք կը տրուի անձայն մէյ-մէկ սիկարէթ ծխելու, պայմանով որ կրակը բռնուի մէջ պահեն կամ լոյսը ծածկող յատուկ մուշտուկներ գործածեն:

Գիշերային ճամբորդութիւնը պէտք է վերջանայ լոյսը դեռ չբացուած եւ խումբը որոշեալ տեղը հասած պէտք է ըլլայ: Երբ կը մօտենայ տեղը, խումբը ուղղակի չ'երթար հոն, այլ կը կանգնի նշանակուած վայրէն մէկ կամ կէս ժամ հեռու, որովհետեւ գուցէ հոն վտանգներ կան: Երկու հոգի կը մեկնին գիւղ խմբապետին նշանակած տունը կամ ամենավստահելի մարդու տունը: Կը բացատրեն խնդիրը եւ, գիւղի դրութեան հետ ծանօթանալէն ետք, գիւղի մէկ ընկերոջ հետ միասին կը վերադառնան, որպէսզի առաջնորդեն խումբը գիւղի Կ—Ծ ապահով տուները: Առհասարակ կ'ընտրեն ռազմական եւ այլ յարմարութիւններ ներկայացնող տները:

Գիւղը, որ կ'արթննայ, անտեղեակ է նոր հիւրերու մասին, բացի հիւրընկալներէն: Կէսօրէն ետք է, որ գիւղը կ'իմանայ Փետայիներու ներկայութեան մասին եւ վերջալոյսին է, որ կը սկսին ժողովներն ու գործերը:

Փետային գիւղ հասնելուն պէս իսկոյն չի հանգստանար, այլ ամենէն առաջ կը նստի հացի, ինչ որ տնեցիները հիւրասիրեն: Յետոյ կը քաշուի գոմի կամ մարագի մութ անկիւնը: Երբ լոյսը բացուի, անոնցմէ մէկը անքուն կը նստի պահպանութեան, իսկ միւսները հրացանները ռաքերուն միջեւ գետեղած կը քնանան փռուած թաղիքի վրայ: Խիստ արգիլուած է պատրոնկալ քանդել: Այսպէս կը քնանան փոխն ի փոխ մինչեւ կէսօրէ յետոյ:

Եթէ խումբը պիտի իջեանի ոչ թէ գիւղ, այլ լեռան կամ անտառի կամ դաշտի կըլկըլի արտերու մէջ, այն ատեն նախ իր հետքը պէտք է կորսնցնէ. քարերու վրայէն քալէ, ետեւը ոտի կոխան եղած կանաչները շտկէ եւ զգուշութեամբ մտնէ ցերեկելու վայրը, որպէսզի չըլլայ թէ իր հետքերը կռահեն: Յետապահներու վրայ է ինկած հետքերը կորսնցնելու պարտականութիւնը: Ասոնք ընդհանրապէս քարչ կու տան իրենց ետեւէն ծառի ճիւղ մը եւ կամ խուրձ մը տերեւ եւ այսպիսով կը սրբեն դետնի վրայէն խմբի ոտքի հետքերը, ինչպէս նաեւ կը շտկեն կանաչները եւ կը հասցնեն խումբը նստելու վայրը:

Ըլլայ արեւ, անձրեւ թէ ձիւն, միեւնոյնն է. Փետային անկողին չունի: Բնութեան տարերքներու հանդէպ անոր միակ պաշտպա-

նութիւնը ապրշումէ սաշախ փուշին է : Ան կը քաշէ փուշին իր վրայ , որ կը պաշտպանէ զինք արեւէն և կամ մոծակներէն ու ճանճերու խայթոցէն . իսկ ցուրտին՝ իր շունչովը կը տաքցնէ փուշին , զոր կը քաշէ մարմնին վրայ : Թէեւ թափանցիկ փուշին չի կրնար արեւէն ու ցուրտէն լաւ պաշտպանել զինք , բայց Ֆետային ունի երկաթէ դիմացկունութիւն , որով սովոր է ծիծաղիլ դժուարութեանց վրայ : Եթէ ձմեռ է եւ Տարօնի աշխարհը պատուած քանի մը մեթր ձիւնով , Ֆետային ատոր ալ ճարը գտած է : Ան կ'որոշէ , կը գտնէ քարայր մը կամ ձիւնը կը փորէ եւ այր կը շինէ , կը մտնէ մէջը ու կը ծածկէ ծակերը ձիւնի կոյտով , մէկ ծակ ալ բաց կը թողու , որպէսզի օդ եւ լոյս առնէ : Այսպէս ձմեռը կ'ապրին ձիւնի տակ եւ իրարու հետ գրգուզ կ'ընեն , որպէսզի ցուրտէն չսառին :

Երբ Ֆետային թողու իր տեղը եւ փոխադրուի , դարձեալ իր հետքերը կը կորսնցնէ : Սիկարէթի կտոր , ոսկոր , ուտելիքի կտորուանք եւն . կը ծածկէ հողով կամ ձիւնով , որպէսզի թշնամին բնաւ չիմանայ , թէ ո՛ր քարի տակ կամ ո՛ր ձիւնի մէջ հանդիստ է առած ան :

Ֆետայինները երբեք առանց պահապանի չեն մնար : Եթէ նոյնիսկ երկու հոգի ըլլան , մին պահապան կը կանգնի եւ միւսը կը նստի հանգստի կամ կը քնանայ : Պահապանները խումբէն հեռու կը կանգնին կամ կը նստին : Ըստ խումբի մեծութեան՝ անոնք քանի մը տեղ պահապան կը կանգնին , խումբէն 100—1000 քայլ հեռաւորութեան վրայ : Պահապանը բնաւ պիտի չշարժի : Ան կ'ընտրէ այնպիսի կէտ մը , ուրկէ ամէն ինչ կարող է տեսնել եւ լսել : Բոլորովին անշարժ է , յաճախ քար կը ձեւանայ եւ կամ խոտ ու ծառ , երբեմն ալ ծածկուած է տերեւներով ու շիւղերով եւ քարերու մէջ նստած : Այնպէս անշարժ է , որ յաճախ կողքէն անցնողը չ'իմանար որ պահապան կայ այնտեղ : Պահապանը իր տեսածն ու լսածը կը հաղորդէ խմբապետին , նշաններով , թռչունի կամ կենդանիի ձայներով : Խմբապետին կողքին կայ մէկ կամ երկու պահապան , որոնք կը հետեւին հեռուի պահապաններու նշաններուն :

Յաճախ խմբապետը անձամբ կամ իր պահապաններու միջոցաւ կը ստուգէ , թէ արթո՞ւն են հեռուի պահապանները : Ասոնք դադտնի կը մօտենան , եւ եթէ քնած է , հրացանի դայիչը կը կտրեն թեւէն եւ կը դողնան : Վա՛յ այդպիսի պահապանին : Ոչ միայն հրացանը կ'առնեն , այլ լաւ մը կը ծեծեն եւ կը վտարեն իրենց շարքերէն , բայց աւելի յաճախ անորոշ ժամանակով զինաթափ կ'ընեն , նայած Ֆետային անցեալին , ու ծաղրի առարկայ կը դարձնեն : «Մալաւայ , թէ որ քնոտ ես . իմա՞լ Ֆետայութիւն կ'ընես . քաք-մեռելի փրթցուկ , փշուր մը աղ լեցուր կտրած մատիդ , քունդ փախցրու , ընկերացդ արունքի տակ հորի՞ կը մտնաս» , կ'ըսեն քիչ մը բարկացած , քիչ մըն ալ հո-

դացող ընկերները եւ կը խնդրեն խմբապետէն, որ այս անգամին բաշխիչ ընէ այդ յանցանքը:

Ֆետայիին այս արտակարգ զգուշաւորութիւնը խիստ վտանգաւոր է թշնամիին համար, որ միշտ կը վախնայ, թէ յանկարծակիի կու գայ եւ յարձակումի կ'ենթարկուի: Այս պատճառով ալ թշնամին առհասարակ կը վախնայ գիշերները ման գալէ, մանաւանդ մութ գիշերները: Ասոր համար ալ քիւրտը եւ թիւրքը Ֆետայիին գուրտ (գայլ) անունը կու տան, իսկ Գէորգ Զաւուշը մկրտած էին «Ղըրէ Ղօլ» անունով:

Գիշերները Ֆետայիին իշխանութիւնն է: Հայերը առհասարակ գիշերները կը ճամբորդեն անարգել, համոզուած ըլլալով որ իրենց համար անվնաս Ֆետայիին կարող են հանդիպիլ, իսկ ոստիկան, զօրք կամ քիւրտ պիտի չհամարձակին դուրս ելլել: Բայց յաճախ Ֆետայիները, երբ նկատէին թէ անցանկալի տարրեր սկսած են գիշերները դուրս ելլել, կը նստէին ձիերը, եւ այս անգամ լուռ չեն յառաջանար, այլ քրտերէն լեզուով «պօյանօ՛ պոյանօ՛, ջան Ֆիտանօ՛» բարձր երգելով կ'անցնին ուղիդ քրտական գիւղի միջով եւ կամ այն տեղերով, ուր քիչ ոստիկան ու զօրք կայ: Երբ հակառակորդի պահապանը համարձակի հաւար փրցնել, Ֆետայիները կը գոռան ու կը հրամայեն լռել: Երբ հրամանը չկատարուի, հրացանները կը բացուին եւ յաճախ միրաւորի ոռնոցը կը լսուի հեռացող Ֆետայիներու ետեւէն, որոնք դարձեալ «պօյանօ՛, պօյանօ՛, ջան Ֆիտանօ՛» պոռալով կը կորսուին մթութեան մէջ: Քանի գնան, այնքան կ'արագացնեն իրենց քայլերը եւ երբ հասնին որոշ սահման մը, ուր հայ գիւղեր կան, ձիէն վար կ'իջնեն: Մէկ-երկու հոգի ձիերը կը տանին, իսկ խումբը հետիոտն կը շարունակէ ճամբան դէպի ապահով վայր մը:

Գիշերուան տէրն ու տիրականն են անոնք: Ինչպէս ոչխարի հօտերը կը սարսափին գայլերէն եւ կամ ասլանի ձայնէն ծակամուտ կ'ըլլան կենդանիները, այնպէս ալ գիշեր ատեն Ֆետայիներէն կը սարսափի թշնամին: Բայց կը մթննայ Ֆետայիին օրը, երբ ցերեկը կը բացուի: Ան կը թաքնուի եւ կը սպասէ որ իջնէ գիշերը, որպէսզի իր իշխանութիւնը սկսի:



Ֆետայիին ապրուստը անորոշ է ու պատահական: Ան չի գիտեր, թէ վաղը ինչ պիտի ուտէ: Կատարելապէս երկնքի թռչուններու վիճակին նման է. ինչ որ գտնէ, անով ալ կը բաւականանայ: Վաղուան համար պաշար չի տեսներ, այս պատճառով ալ օր մը սոված է, միւս օրը կուշտ, օր մը փաշա, միւս օր փոշա: Կը պատահի, որ օր մը բնաւ ուտելիք չի գտներ եւ վայրի բոյսի արմատներով կը սնանի, ուրիշ օր մըն ալ մեծահարուստներու նախանձը շարժելու աստիճան ճոխ կը կերակրուի:

Այս անբնականոն կացութիւնը հետեւանք չէ իր անսովորութեան, այլ իր անհաստատ կացութեան: Նախ չի գիտեր, թէ վաղը ուր պիտի ապաստանի, միայն վստահ է որ պիտի երթայ հոն, ուր կ'ենթադրէ թէ քիչ վտանգ կայ: Երկրորդ՝ չի գիտեր թէ վաղը ողջ պիտի մնա՞յ: Այդ հարցականը միշտ դրուած է իր առջեւ: Երրորդ՝ բեռը շատ ծանր է, չի կրնար աւելին կրել: Հացէն աւելի կարելոր է առատ փամփուշտը: Հացով չի կարող ծանրաբեռնուիլ, որովհետեւ այդ կը խանգարէ իր արագաշարժութիւնը, որ այնքան կարելոր է կռուի մէջ յաջողութեան համար: Իսկ զրատ ունենալ կամ շալակաւորներ պահել քանի մը օրուան պաշար կրելու համար անյարմար է, որովհետեւ խումբը դժուարութեանց կ'ենթարկուի թաքնուելու ատեն: Այս պատճառներով է, որ Ֆետայիները անտեսած են մատակարարման գործը եւ կը բաւականանան իրենց մէջքին կրելով երկու Ֆունտ ատուռն, որ անձեռնմխելի կը պահուի կռուի համար: Կռուի ատեն Ֆետային կը բանայ այդ թանկագին պաշարը եւ քանի մը պըտուոնց բերանը կը նետէ, որպէսզի ոյժ ստանայ իր թուլացած մարմինը:



Մշոյ
դաշտէն
Ֆետայի
մը

Այսուհանդերձ, շատ սարսափելի չէր Ֆետայիներու կացութիւնը, երբ անոնց մէջ կար ատելութիւնը դէպի մեղկութիւն եւ վայելք: Այդ զրկանքները գուարճութեան նիւթ կը դառնային եւ աւելի կը քաղցրացնէին կտոր մը կորեկի վայելքը: Իսկ երբ Ֆետայիները կ'իջեւանէին որեւէ դիւղ, երբեք սոված չէին մնար, այլ թէ՛ հայր եւ թէ՛ քիւրտը իրենց պարտականութիւնը կը նկատէին հիւրասիրել զանոնք իրենց ունեցածով: Գիւղացին կու տար անոնց ինչ որ ինք կ'ուտէր, կորեկը բրդած մածունի մէջ, թանով ապուր, սեր եւ կարագ, երբեմն ալ տապակած հաւ, վրան ալ թթու թան:

Եթէ Ֆետային լեռն է ապաստանած, մօտակայ գիւղէն պաշար կը բերեն, կամ ինքը պիտի գտնէ իր պաշարը: Երբեմն սոված արջի նման իր թաթը կը լիզէ, երբեմն խաշնարածներէն մի քանի մեծտիէով

ոչխար կը գնէ, երբեմն կ'որսայ վայրի ոչխար, կը բերէ խումբին, վաղ առաւօտեան կը մորթէ, կը կախէ ծառէն ու կը քերթէ, ծառերու չոր ճիւղերէն կեղեւը կը հանէ որպէսզի ծուխ չելլէ եւ կրակ կը շինէ, դաւար ճիւղերէն շամփուր կը պատրաստէ եւ ոչխարի մսէն շիշիկ կ'եփէ. կամ կրակի մոխիրին տակ կը թաղէ միսը եւ կը խորովէ: Եթէ աղ ալ ունի, արդէն հարսնիք է Փետայիին համար: Եթէ աղ չունի, մոխիրի աղը բաւական կը նկատէ եւ կը լափէ միսը առանց հացի: Փետային կը սիրէ արիւնոտ միսը եւ շատակեր է: 3—4 Փետայիներ մէկ անգամէն կարող են մէկ ամբողջ ոչխար ուտել. յետոյ սառը աղբիւրէն կուշտ ջուր կը խմէ ձիի նման մինչեւ քիթն ու ականջը ջուրի մէջ խորասուզուելով, եւ երջանիկ կը յենուի ծառին. ոտքերը երկարած կերածը կը մարսէ:

Թէեւ վայրենի է ապրելու այս ձեւը, բայց հրաշալի բնութեան գեղեցիկ ծոցին մէջ միանգամայն հաճելի է: Կանաչ խոտեր, գեղեցիկ ծառեր, սառն աղբիւր եւ առատ միս մոռացնել կու տան ամէն նեղութիւն: Ես այդ երջանիկ վայրկեանը անցուցի Ղըզըլաղաճի անտառին մէջ, երբ Փետայիները երկու երինջ էին մորթած եւ մեծ խարոյկի մէջ պատրաստած խորովածներ, ու ինձ կը հրամցնէին, որպէս նոր հիւրի, փայծաղ, կովի միս՝ մոխիրով ծածկուած, — արիւնը կաթ-կաթ միս՝ շամփուրի վրայ:



Պաղաղ ու հանգիստ ժամանակ տարօրինակ է Փետային: Կատարեալ երախայի նման են, կարծես մէկ ընտանիքի զաւակներ ըլլան: Ոչ մեծը կը ճանչնան, ոչ փոքրը. իրարու հետ միատեսակ կատակներ կ'ընեն, միեւնոյն ձեւերով կ'ուտեն, միեւնոյն ձեւով կ'ապրին: Երբեմն թղթախաղ կամ կարկտան կը խաղան եւ ով որ տարուի, խանչալի ծայրով կը ծակեն պուտը մինչեւ արիւնելու աստիճան. երբեմն տելալ կը բռնեն: Աւելի յաճախ ալ կռուի պատմութիւններ կ'ընեն, եւ կամ հինցած հագուստը կամ չարուխները կը կարկտեն: Շատ անգամ տասնապետը ու խմբապետն է որ զինուորին ծառայութիւն կ'ընէ: Ասիկա ոչ թէ ձեւական խոնարհութիւն է, այլ պարտականութիւն: Խմբապետը Փետայիին հայրը կամ մեծ եղբայրն է:

Այս փոխ-յարաբերութիւնը այնքան բնական ու անարուեստ է, որ ինքզինքդ կը զգաս նահապետական մեծ օճախի մը մէջ: Գործի ժամանակ սակայն դրութիւնը կը փոխուի, իսկոյն յայտնի կը դառնայ աստիճանաւորումը, տասնապետն ու խմբապետը բացարձակ տէրն են ստորադրեալներուն կամ փոքր-եղբայրներուն: Երբ կողմնակի մարդիկ հիւր կու գան Փետայիներուն եւ կամ այս վերջինները կ'իջեւանին ուրիշներու մօտ, Փետային կը դառնայ իր խմբապետի առջեւ կատարեալ հարս. չի խօսիր ոչ ոքի հետ, չի ալ նստիր, այլ

ոտքի կը կանգնի . անխօս ու հլու ճանապարհ կը դնէ հիւրերը , ճիշդ ինչպէս սովորութիւն է հայ եւ քիւրտ նահապետական օճախներու մէջ հանդէպ պապիկին : Ֆետային իրաւունք չունի միջամտելու կամ հակաճառելու խմբապետին , եթէ նոյնիսկ այս վերջինը յիմար կարգադրութիւն ընէ : Խմբապետին հրամանը սուրբ է եւ ան պիտի կատարէ անթերի իր կեանքին իսկ գնով : Եթէ չկատարէ , վա՛յ իր գըլխուն : Նա անհարազատ է եւ կ'արժանանայ դաժան պատժի :

Կը պատահի որ Ֆետայիները դատարկ բանի մը համար իրարու հետ կը կռուին : Իսկոյն կը վազեն խմբապետին մօտ եւ առանց սուտի կը պատմեն իրենց չարութիւնները : Այդ պարագային խմբապետը բարութեամբ չի վարուիր , այլ կը պատժէ խիստ կերպով : Փայտ մը կու տայ մէկուն ձեռքը , մէկ հատ ալ միւսին ձեռքը , իսկ երրորդ փայտ մըն ալ ինք կ'առնէ : Կը հրամայէ որ առաջինը 20 հարուածներ իջեցնէ դիմացինին եւ խիստ ամուր , յետոյ կը հրամայէ որ պատժուածը նոյնը ընէ իր հակառակորդին : Այսպիսով չարութիւն ընողները իրենց իսկ ձեռքերով պատիժ կը ստանան : Եթէ խմբապետը տեսնէ , որ մէկը հարուածը ամուր չ'իջեցներ , ինք իր ձեռքի փայտով կը խփէ , իսկ մնացեալ Ֆետայիները հաւաքուած չորս կողմը կը ծիծաղին ու կը հրճուին « Դէ կերէք ֆրժեր , էլ օյին զօյին չիք անի երբեք » ըսելով : Այս զաւեշտի մէջ ծեծ ուտողներն ալ կը հրճուին եւ քիչ յետոյ իրարու մօտ նստած կը դանգատին .— « Քաւուր ես տղայ , հորի՞ արմունքիս զարկիր , չուրի մկայ կը մրմռայ » :

« Ապա քօռցեր ես , չէիր դու տեսնայ , երբ որ զալբութեամբ քեզի կը զարկէի , անաստուած Գէորգ մէջքիս կը հասցուր » :

Այս ձեւով իրարու դանգատելէ յետոյ կը հաշտուին եւ ծիծաղելով կը մոռնան պատահարը , միւս Ֆետայիներն ալ կու դան եւ « անցած եղնի » ըսելով ձեռք կ'առնեն պատժուածները : Այսպիսով օրը կ'անցնի զուարճութեան մէջ :

Ֆետայիները որքան որ կը սիրեն իրենց մեծաւորը , նոյնքան եւ կը սոսկան անկէ : Անոնք գիտեն որ մեծաւորը կը սիրէ զիրենք , բայց դաժան ու անողոք է իր հրամանը չկատարողին հանդէպ : Մանաւանդ վտանգի ժամանակ խմբապետը խիստ կտրուկ է ու անողոք . ան կը սպաննէ առանց վարանման իր հրամանին անաստողը : Մայր աստիճանի բռնութիւնը եւ ծայր աստիճանի հաւասարութիւնը իրարու հետ խառնուած ներդաշնակութիւն են ստեղծած Ֆետայիներու ընտանիքին մէջ :

Դժուար է Ֆետայիի կեանքին ամբողջական պատկերը տալ , լճանաւանդ որ անոր օրերը միատեսակ չեն եւ ապրելակերպը կը փոխուի ըստ տեղի եւ եղանակի : Հետաքրքրական է անոր կեանքը մասնաւորաբար կռուի , յարձակման ու պաշտպանութեան պարագային : Իմ նպատակէս դուրս է Ֆետայիներու զինուորական արուեստի նկարագրութիւնը տալ : Բաւականանանք այս ընդհանուր ու համառօտ ընութագծերով եւ անցնինք այն Ֆետայիներուն , որոնք հաւաքուած

են Ղըզըլաղաճի անտառին մէջ Գէորգի շուրջ եւ որոնց պատահելու երջանկութիւնն ունեցայ» (*):



Առաւօտուն Գէորգ կը ծանօթացնէ Ռուբէնը իր ընկերներուն, որոնք՝ 80-է աւելի Փետայիներ հաւաքուած են իր շուրջը միաժամանակ յայտնելով, թէ զինուորական խորհրդակցական ժողով մը պիտի գումարուի Ղըզըլաղաճի մէջ, ուր օրակարգի վրայ պիտի դրուին ժողովրդական ընդհանուր խնդիրները, բայց առաւելապէս պիտի որոշուի Փետայիներու խմբապետներու հարցը: Թուենք այդ ժողովին կայացած հիմնական որոշումները:

Ա.— Նկատելով, որ կուսակցութիւնը բաւականաչափ նիւթական միջոցներ չունի եւ ժողովուրդը հին ժամանակներէն իր պարտքն է համարած կերակրել Փետայիները, որ ժողովրդի աւանդական հիւրասիրութեան դէմ է փոր մը հացը դրամով գնել՝ ինչպէս Վանի մէջ, որ անհրաժեշտ է խորացնել ժողովրդի մէջ անձնագոհութեան եւ զոհողութեան ոգին, եւ որ ցարդ Փետային նկատուած է ժողովրդեան տան հարազատ զաւակ, ուստի պէտք է, որ Փետային իր ապրուստին դրամ չծախսէ:

Ան պիտի ապրի այն տունը, ուր հիւր կը մնայ եւ այն գիւղի հաշտոյն, որու սահմաններուն մէջ իջեւանած է քանի մը օրով: Ան պիտի ուտէ այն՝ ինչ որ կը բերեն գիւղացիները եւ պիտի չապրի աւելի լաւ քան գիւղացին: Այն Փետային, որ զինք հիւրընկալող գիւղին կամ գիւղացիի տան վրայ կը բռնանայ եւ իրեն համար յատուկ կերակուր պատրաստել կու տայ եւ այսպիսով գիւղացիին դժգոհութեան պատճառ կը հանդիսանայ, Փետայի չէ, այլ աշխիա: Այսպիսիները կը պատժուին գնդակահարութեամբ, աքսորով եւ կամ զինաթափութեամբ:

Բ.— Փետայիները որեւէ ծախք պիտի չունենան: Անոնց բացառիկ ծախսը խմբապետը պիտի հողայ: Այս պատճառով, Փետայիները դրամ պիտի չունենան: Ասկէ զատ՝ Փետային չունի որեւէ սեփականութիւն, նոյնիսկ հայր ու մայր, կին ու երախայ: Ան պիտի մոռնայ ամէն ինչ եւ պիտի ճանչնայ միայն իր հրացանը, իր մեծաւորը եւ ժողովուրդը, որուն համար պիտի մեռնի:

Գ.— Փետային ստեղծուած է աղքատին համար. ուստի պիտի գերադասէ իջեւանիլ աղքատի տունը եւ կամ պիտի շարժի գիւղի խմբապետին ցուցմունքով: Ան պիտի պատուէ աղքատը՝ անոր հետ բաժնելով կըլկըլը: Փետային տանջուածի համար է, ուստի տանջանք կրելով ու զրկանքի ենթարկուելով պիտի ապացուցանէ իր Փետայութիւնը:

(*) Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը Յիշատակները», 3-րդ հատոր, էջ 427—444:

Դ.— Քանի որ ժամանակը չէ կռիւ ընելու, եւ անհրաժեշտ են ժողովրդեան հանգիստն ու յեղափոխական գործի նախապատրաստական աշխատանքները, ուստի Ֆետային պիտի մնայ դիւղի կամ լեռներու թաքստոցներու մէջ: Բայց եթէ թշնամին գտնէ զինք, այն ատեն Ֆետային պարտաւոր է կամ կռուով ազատիլ եւ կամ սպաննուիլ:

Ե.— Եթէ պատահի, որ նոյնիսկ յաջող կռիւը Ֆետային է առաջացուցած դիտմամբ եւ կամ անփութութեամբ, Ֆետային պիտի պատժուի եւ դուրս վճնտուի Երկրէն, զինաթափ եղած:

Զ.— Քանի որ Դուրան-Բարձրաւանդակի բազմաթիւ վայրերուն մէջ զօրքեր են դրուած եւ շարունակական խուզարկութեանց պատճառով անհնար է դարձած մօտ 200 փախստական պատսպարելը, կ'որոշուի Ֆետայիներու թիւը կրճատել: Կրճատումը տեղի կ'ունենայ հետեւեալ կարգով.— Նախ կը հեռացուին ծպտեալները, յետոյ նոր ու անփորձ զինուորները: Երկրի մէջ կը մնան հին Ֆետայիները, որոնք կարող են դառնալ ժողովրդական ղեկավարներ ու խմբապետներ: Մնացեալները կը զրկուին Վասպուրական, յետոյ Պարսկաստան ու Կովկաս, եթէ կամենան:

Է.— Կառավարութեան ուշադրութիւնը Սասնոյ վրայ չկեղբոնացնելու եւ կռիւներու տեղի չտալու համար, կ'որոշուի այլեւս չըրջիլ այդ լեռներու մէջ, այլ քաշուիլ Դուրանի շրջանները:

Ը.— Մնացող Ֆետայիները բաժնել խումբ խումբ՝ շրջաններու վրայ, ուր պիտի դառնան զինուորական ոյժի կորիզը, ինչպէս նաեւ ժողովրդեան գործերու օգնողը: Ասոնք պիտի գործեն տեղական կոմիտէներու տրամադրութեան տակ:

Զինուորական խորհրդաժողովը միաձայնութեամբ կ'որոշէ, որ բոլոր զինուորական եւ մարտական խնդիրները պիտի ղեկավարէ Գէորգը:

Գէորգի խօսքով, Ռուբէնի կը յանձնուին տնտեսական եւ ժողովրդական գործերը: Կ'որոշուի նաեւ, որ մնացող Ֆետայիները բոլորն ալ հագուին զինուորի հագուստներ. ինչ որ մեծապէս ձեռնտու է իրենց թէ՛ կռուի եւ թէ՛ ճամբորդութեան ժամանակ:

Գէորգ Զաւուշ ուրախ էր այս որոշումէն. անոր վրայէն թեթեւացած էր կարեւոր ծանր բեռը: Ան ստիպուած էր այդ դժոխք երկրին մէջ ոչ միայն դիմագրաւել թշնամիի հալածանքները, այլ շարունակ տանջուիլ Ֆետայիներու դազազութենէն: Այժմ կարծես պիտի մեղմանային այդ տանջանքները: Ասկէ զատ՝ Գէորգ Զաւուշը սաստիկ յոգնած էր. մանաւանդ 1904-էն ի վեր իր վրայ ծանրացած էին ո՛չ միայն զինուորական, այլ նաեւ ժողովրդական աշխատանքները:

Հրայրի սպաննուելէն ետք, Դուրան-Բարձրաւանդակի կազմակերպական աշխատանքները կը սկսին դանդաղիլ, նոյնիսկ կ'ըլլան շրջաններ, որոնք կը քայքայուին: Կորիւն կը սկսի շարունակել Հրայրի աշխատանքները բայց չի յաջողիր: Գէորգ չէր սիրեր կազմակերպական աշխատանքներով զբաղիլ, այլ կը նախընտրէր մարտական գոր-



Սեմալ գիւղի աշակերտութիւնը
իրենց գիւղի Տէր Հօր և ուսուցիչներու հետ միասին նկարուած 1907ին

ծերը, իսկ ժողովրդական կազմակերպութեան գործերուն ուշադրութիւն դարձնելու ո՛չ ժամանակ ունէր, ոչ ալ փափաք: Թէև ժողովուրդի համակրութեան և ձգտումներուն հերոսական մարմնացումն էր, բայց կը պակսէր ուժեղ կազմակերպութիւնը ու այն մեքենան, որ պիտի դարձնէր ժողովրդական բարդ գործերը: Գէորդն էր, որ ամենէն շատ կը տուժէր այս պակասէն: Գէորդ Ռուբէնէն իմանալով Վասպուրականի, Կարսի եւ միւս տեղերու կազմակերպական ձեւերը, կը սկսի կամաց կամաց գործերու մէկ մասը յանձնել Ռուբէնին, որուն կ'ըսէ ծիծաղելով. «Ինսաֆ հիչ չունի մեր կազմակերպութիւնը. թէ որ մէկին շալակով տեսաւ, բոլոր շալակներ վրան կը բառնայ, հերիֆ է բարեկամ, փշոր մը դու շալկէ բեռներս. նաֆասս քիչ առնեմ, թէ բեռան տակ ձրկըռելու լինես, ինձ շուտով կանչիր, քեզ քեօմակ կ'եղնեմ»:

«Ուղղակի տանջանք էր Դուրանի գործիչ ըլլալը, օրական 100-է աւելի խնդրադիր ու նամակներ կու գան եւ գրեթէ նոյնքան մարդիկ կ'որոնեն քեզ տեսնելու: Ասոնք կու գան Դուրան-Բարձրաւանդակի բոլոր կողմերէն, կարծես մեր 200.000 ժողովուրդը ձեռները բացած եւ աչքերը յառած վրագ է ինկած: Ամենէն դատարկ խնդիրէն մինչեւ ամենէն կենսականը քեզ կը բերեն: Մէկուն ոչխարն են թալաներ,

մէկը դատ ունի, հողը կամ ստացուածքն են գրաւեր, մէկը բանտարկեր են, մէկը ամսամիճարը կը մերժէ տալ, ուրիշ մը գեղծում է ըրած, մէկն ալ սրարգ տեսակցութեան է եկած ճառ խօսելու մտօք: Մէկը խորհուրդ կ'ուզէ, միւսը խորհուրդ կու տայ:

Այս բոլորը խիստ ջղայնացուցիչ է: Եթէ ապահով վիճակի մէջ ըլլաս, դեռ փառք Աստուծոյ. բայց փշերի վրայ ես նստած, յաճախ անօթի եւ մահուան երկիւղը գլխուդ վերեւ կախ: Զօրքը կու դայ քեզ որոնելու, սրարտական ես տեղափոխուիլ: Խնդրարկուներն ալ չես կարող աննկատ թողուլ, իւրաքանչիւրին պէտք է խաթրը առնես եւ պատասխան տաս կամ մի փոքր փուսուլա գրես:

Այս ծանր գրութենէն ելք մը գտնելու մտքով Գէորգի հետ մըտածեցինք Դուրան-Բարձրաւանդակի բոլոր կողմերէն ընդհանուր ժողով հրաւիրել եւ ընդհանուր ձեւ մը գտնել գործնականութեան համար: Այս ժողովը անհրաժեշտ էր նաեւ այն պատճառով, որ երկար ատենէ ի վեր ժողով չէր կայացած եւ շարունակական կռիւներու պատճառով շատ չըջաններու կազմակերպական մեքենան խանգարուած էր(*)»:

Կը դումարուի ժողով մը, որուն ընթացքին Գէորգ Չաւուշ, Սպաղանաց Մակար, Ֆրանք Մահակ, Աւրանայ Արամ, իրրեւ փորձառուներ որոշ բացատրութիւններ կու տան Ռուբէնի եւ զանազան հարցեր կը լուսարանեն: Բոլոր գիւղերու ներկայացուցիչներու ժողովին օրակարգը կը պատրաստուի եւ Գէորգ Չաւուշի ստորագրութեամբ նամակներով ժողովի կը հրաւիրուին գիւղերը: Կ'որոշուի ժողովը գումարել Ս. Կարապետի կողմերը: Մինչ սուրհանդակներ կը տանին նամակները, Գէորգ եւ Ռուբէն խումբով մը կ'իջնեն Դաշտի կողմերը, ուղղուելով Ս. Կարապետի վանքը:

Ռուբէն, որ այլեւս Գէորգ Չաւուշի գործակիցն է, կը գրէ. — «Հրաշալի է Գէորգի հետ զաշաղութիւն ընելը: Այս փոքրահասակ մարդը գերբնական ուժով կը լեցնէ իր ուղեկիցները, ոչ գիկտատորական ձեւեր ունի, ոչ ճառ եւ ոչ խօսք: Գուցէ «Գէորգ Չաւուշ» անունի մէջ է այդ հմայքը, բայց ոչ, այդ փոքր մարդը իր շրջապատին կը ներշնչէ հանդարտութիւն գէպի վտանգը եւ անվեհերութիւն: Անոր սեւ ու սուր փոքրիկ աչքերը ոչ վախ կ'ազդեն, ոչ ալ ուրախութիւն, այլ կարծես կ'ըսեն քեզ՝ «արհամարհէ՛»: Անոր լայն ծնօտը, բարակ պողպատէ շրթունքները կ'ըսեն քեզի՝ «լափի՛ր»: Իսկ անոր յօնքերու կիտուածքը եւ կեցուածքը կարծես թէ կ'ըսեն քեզ. «Դու ինչացո՞ւ ես, ո՛րդից դուրս եկար եւ կանգնար իմ առաջ»:

Դժուար է բացատրել Գէորգի հմայքն ու գաղտնիքը, բայց փաստն այն է, որ Ֆետային անոր կողքին ապահովութիւն ու հանգիստ կը զգայ եւ համոզուած է թէ բախտը իրեն չի դաւեր, որքան ատեն Գէորգի գլուխը սաղ է: Անոր կողքին եղողը բուն բաղձանք կը

(*) Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», Դ. հատոր, էջ 11-12:



Ս. Կարապետ ուխտի մեկնողներէն խումբ մը :

զգայ ծանր վտանգի մէջ իյնալ եւ ազատիլ փառքով. այդ համեստ մարդը կարծես փառքի աղբիւր էր եւ հաստատուն յենարան թէ՛ ներկայի եւ թէ՛ ապագայի համար : Այս էր պատճառը, որ բոլոր Փետայիներն ալ կը փափաքէին Գէորգի հետ ըլլալ : Շատերը թերեւս չսիրէին զայն, բայց չէին կարող չպաշտել եւ չյարգել : Ես ինքս ալ երջանիկ էի, որ Գէորգի հետ էի :

Նստած ձիերու վրայ՝ կ'անցնինք դաշտերու մէջէն, երբեմն լուռ, երբեմն երգերով : Յաճախ կը պատահին դիշերուան ճամբորդներ, որոնք կը դողան տերեւի նման եւ, թիւրք ըլլան թէ քիւրտ, կը համբուրեն Գէորգի ձիուն սպանդակը ու աղօթելով կը հեռանան, որ իրենց կեանքը շնորհուած է : Երբեմն ալ Գէորգ անոնց մինչեւ մէկ ոսկի նուէր կու տայ, եթէ ստուգէ, որ աղքատ ու կարօտ մարդիկ են : Այսպիսով ամէնուրեք աղքատները կը պատմեն Փետայիի ու Գէորգի անչահախնդրութեան մասին :

Մենք ուղղուած ենք դէպի Սբ. Կարապետ, ուր ժողով պիտի կայանայ եւ մեզ կը սպասեն» :

Սուրբ Կարապետի լեռներու մէջ, «Շէյխտներ» (նահատակներ) կոչուած փոքրիկ սօսիի անտառին մէջ որոշուած էր ժողովատեղին :

«Ահա՛ կու գան, — կը զրէ Ռուբէն. — Մէկիկ մէկիկ կամ հնգով ու տասով, ձիաւոր ու ոտաւոր, կու գան դիշերուան մութին կամ

արշալոյսին եւ կը բարձրանան անմարդարնակ լեռը : Եկողներու մէջ կան թէ՛ երիտասարդներ եւ թէ ծերունիներ 70 տարեկանէն անց : Բոլորն ալ մէջքերնէն կախած ունին մէկ մեծ պայուսակ , լիքը ուտելիքով , իսկ ձիաւորները ունին խուրջիներ :

Բոլորն ալ կոշտ կոպիտ դիւղացիներ են արեւահար դէմքերով , ջղուտ ու բարակ հասակով , գլուխնին զարդարուած Մուշի ու Սասունի արախչիներով : Հեռու Պուլանըխէն , Խնուսէն եկողներն ունին գլուխնին քրտական սպիտակ քոլոզ : Բոլորի մէջքին կամ վզերէն խաչաձեւ կախուած են փամփոշտակալները , իսկ ձեռքերնին կամ ուսերնին զանազան հրացաններ ,— չախմախու , մարթին , մոսին ,— դէնքերու տեսակներու կատարեալ հաւաքածոյ մը . բոլորի խանչալները միատեսակ են սակայն , կեռ-խանչալ , սառն տեսքով :

Եկողները կարծես ժողովականներ չեն , այլ Ֆետայիներու անկանոն խումբեր կամ սրբազան կռուի համար կամաւոր եկած ժողովրդական մարտիկներ : Ձիով եկողները կը կապեն իրենց ձիերը երկար պարանով ծառերուն եւ խուրջինն ու թամբը վար առնելով կուգան կը հաւաքուին անտառի փոքրիկ հրապարակին վրայ . ոտաւորներն ալ կուգան կը համախմբուին միեւնոյն տեղը , ուր մենք էինք արդէն : Փայտերով օճախ կը վառուի ու կերակուր կը պատրաստուի իրենց բերած ուտելիքներէն , անտառի սօսի ծառերը կը ծառայեն որպէս ժողովասրահի պատեր , իսկ բաց երկինքը՝ որպէս առաստաղ :

Ժողովը նշանակուած երկրորդ օրը տեղի ունեցաւ , ներկայ էին 200-է աւելի պատգամաւորներ՝ բոլոր շրջաններէն . իւրաքանչիւր գիւղէ 1-2 հոգի : Անոնց մէջ կային 4 կիներ , Յրօնքի Շուշան , Մոկունաց Լուսօ (Միրզոյեան) , Ալվառինջի Խանիկ եւ Ղարսի Ջըրէ : Ասոնք փափուկ կիներ չէին . եղած են բազմաթիւ կռիւներու մէջ եւ Ֆետայիներու չափ գործեր տարած էին : Կային նաեւ 6-7-ի չափ քահանաներ , Ֆերաջաները քշտած ու փամփոշտակալ կապած , նաեւ 10-ի չափ ուսուցիչներ :

Նոյն գիշեր Ս . Կարապետէն եկաւ Վարդան վարդապետ , Ստեփան վարդապետի եւ Մրտոյի հետ , սպիտակ ձիու վրայ նստած այդ յաղթանդամ ծերունի վարդապետը իր փառահեղ սպիտակ մօրուքով : Բոլորը ոտքի ելած կը կանգնին ու լաւ կը պատուեն զինք : Ան երբ իջաւ ձիէն . նախ համբուրեց Գէորգ Չաւուշին ճակատը ապա նստեցաւ ծառի մը տակ . քիչ մը հանգստանալէ ետք ելաւ ոտքի . աղօթք ըրաւ , օրհնեց տղոց ու մաղթեց Ֆետայիներուն գործի յաջողութիւն եւ ազգի ազատութիւն» :

Այդ ժողովը կը ղեկավարէր գրագէտ Վարդինիսի Մարտիրոսը եւ Հրայրի եղբայր Մանուկը քարտուղար էր նշանակուած :

Ապա խօսք կ'առնէ Գէորգ Չաւուշը , որ անպաճոյճ կերպով կը պատկերացնէ իրենց տառասլանքներն ու նպատակները , եւ յոյս կը յայտնէ , որ օր մը պիտի ազատուի ազգը : Յետոյ բոլորին սէր , միութիւն եւ համբերութիւն թելադրելով , կը նշկայացնէ նաեւ Ռուբէնը



Վարդան վարդապետ

Ս. Կարապետի

Վանահայր

Ժողովականներուն եւ կ'ըսէ, թէ Ռուբէնը իր տեղ նկատեն եւ այս ժողովի ու ժողովրդի ղեկավարը համարեն :

— Երկար ժամանակ մարդ կը փնտռէինք մեր գործերը տանելու համար, — կ'եզրակացնէ Գէորգ, — էս ղարիբական Բիւրոյի կողմից ճամբած են մեզի՝ գութանի լուծը քաշելու համար, վըր մեր աչաց, վըր մեր գլխին էս ղարիբական : Մի ձեռը մինակ ծափ չի կարող տալ, հիմակ երկուքով ենք պիտի դիտնաք, որ ծափ էլ տալու ենք : Դուք լաւ գիտէք, որ մինակ էի միշտ եւ բեզարած եմ, թողէք փշուր մը գլուխս տինջանայ : Չեզմէ կը խնդրեմ ասկէ յետ էսա իմ ախպօր աչքի լոյս դարձուք, բոլոր գործերը էնոր վիզ փաթթէք, կը տեսնէք «խորթ» (երիտասարդ) է եւ ուժով կ'երեւնայ. թէ որ յոգնեցաւ, ես միշտ պատրաստ եմ իմտատ հասնելու» :

Այդ ժողովի մասին գաղափար մը կազմելու համար, ստորեւ կու տանք կարգ մը կարծիքներ եւ որոշումներ .—

1. — ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Որոշումներ .—

Ա. — Կուսակցական եւ ժողովրդական կազմակերպութեան միատրն է գիւղը եւ քաղաքի մէջ՝ թաղը :

Բ. — Մարտական խումբ. իւրաքանչիւր գիւղի մէջ կը կազմակերպուի մարտական խումբ մը :

Գ. — Օժանդակ խումբ. այս խումբը կազմուած է գիւղի գեռանփորձ երիտասարդներէն, որոնք դաստիարակուելով օժանդակ խումբի մէջ եւ փորձութեանց ենթարկուելով, հետագային կրնան մտնել մարտական խումբի մէջ :

Դ. — Գիւղի ժողովուրդը. եթէ չէ կրցած մտնել Օժանդակ եւ Մարտական խումբերու մէջ, ազատ են, բայց հարուստները պարտաւոր են անձնական զէնք ունենալ :

Ե.— Գիւղի վարչութիւնը . պարտաւոր է գիւղի վարչութիւնը՝ օգնել կուսակցութեան , ո՛չ թէ պետութեան :

Զ.— Շրջանի կոմիտէ . Մարտական եւ Օժանդակ խումբերու խմբապետները շրջանի բոլոր գիւղերէն հաւաքելով կ'ընտրեն Շրջանի կոմիտէն :

Է.— Կեդրոնական կոմիտէ . մի քանի շրջաններու կոմիտէները հաւաքուելով կ'ընտրեն Կեդր . կոմիտէն , որ ղեկավարն է իրեն եմթակայ բոլոր շրջաններու կոմիտէներուն :

Ը.— Պատասխանատու Մարմին . Պատասխանատու Մարմինը կը կազմուի Դաշնակցական ներկայացուցիչներէն , որոնք իրենց կողմէ կ'ընտրեն երկու ընկեր եւ անոնց հետ կը խորհրդակցին :

Թ.— Շրջաններու բաժանում . Դուրան-Բարձրաւանդակը կը բաժնուի երկու Կեդրոնական կոմիտէութեան . ա) Տաւրոսեան լեռնաշղթայէն հարաւ Բարձրաւանդակի շրջան , եւ բ) Դուրանի շրջան :

Բարձրաւանդակի Կ . կոմիտէութիւնը կը բաժնուի հետեւեալ կոմիտէական շրջաններու . 1) Շատախներ , 2) Գեալու շրջան , 3) Տաւուրիկ , 4) Խեայնք , 5) Խուլբի , 6) Բասնք , 7) Բալակցոց , 8) Հազոյի , 9) Բոնաշէն եւ Խութի , 10) Մոտկանի եւ Գղէխի : Բարձրաւանդակի Կ . կոմիտէութեան ազդեցութեան տակ պէտք է առնել Ղարզան , Բըշերէկ , Սլիվանիկ , Տիարպեքիւր եւ Բալու շրջանները :

Դուրանի Կ . կոմիտէութիւնը կը բաժնուի հետեւեալ կոմիտէութեանց . 1) Կորոտի (Մուշ քաղաքի) կոմիտէութիւն , որուն սահմանները կը տարածուին մինչեւ քաղաքի հինգ թաղերու վրայ , այս շրջանը կը սահմանափակուի , որպէսզի գաղտնապահութիւնը չվնասուի եւ միւս շրջանները քաղաքի ազդեցութենէն ազատին , 2) Վահագնեան , Ս . Յովհաննու շրջակաները . Եփրատի եւ Մեղրազետի ձախ կողմի գիւղերը՝ մինչեւ Տաւրոս լեռնաշղթան , 3) Կռուածաղիկի կոմիտէութիւն . Մեղրազետի ձախ ափը մինչեւ Տաւրոսի շղթան , Առաքելոց վանքի շրջակայքը , 4) Ուլասիս շրջանի կոմիտէութիւն . Մեղրազետի ափ ափով մինչեւ Քոսոբ լեռնաշղթան ու մինչեւ Եփրատի ձախ ափերը , 6) Սահակեան կոմիտէութիւն . Եփրատի աջ ափը , Աշտիշատի շրջակայքը , 7) Հովիտի կոմիտէութիւն . Եփրատի աջ ափը , Ս . Կարապետի շրջակայքը , 8) Վարդոյի շրջան . Բինգէօլի հարաւի փէշերը , 9) Բիւրակնեան կոմիտէութիւն . ամբողջ Խնուս գաւառը , 10) Ապահունիքի կոմիտէութիւն . Վերին ու Ներքին Պուլանըխները , 11) Հարք կոմիտէութիւն . Մանազկերտի բոլոր գիւղերը , 12) Պուրակ կոմիտէութիւն ամբողջ Ախլաթը մինչեւ Վանայ ծովակը , 13) Սալնոյ Զորի կոմիտէութիւն . Պիթլիք քաղաքը իր շրջակայքով :

Բացի վերոյիշեալ կոմիտէութիւններէն, Դուրանի Կ. կոմիտէն եւ Պատասխանատու Մարմինը պարտին կազմակերպել հետեւեալ երեսի վրայ ձգուած գաւառները. — Կինճ, Քղի, Ճապաղջուր, Էրզրում, Բասէն, Ալաշկերտ եւ Սղերզ:

2.— Մարտական խումբեր ու ֆետայիներ. — Կ'որոշուի, որ իւրաքանչիւր կոմիտէական շրջան, բացի իր գիւղերու մարտական խումբերէն, պիտի ունենայ ամբողջ շրջանի համար մարտական խումբ մը՝ կոմիտէի տրամադրութեան տակ ու անոր մէկ անդամին հրամանատարութեան ներքեւ: Այս մարտական խումբը կը կոչուի շրջանի թուղթիկ խումբ: 2—4 կոմիտէական շրջանի համար կը նշանակուի մէկ ֆետայիներու խումբ, 10—15 հոգիէ բաղկացած, յայտնի ղեկավարի մը հրամանատարութեան տակ:


3.— Կուսակցութեան տնտեսական վիճակի կարգաւորումը:

Կ'որոշուի. —

ա.— Գիւղական մարտական խումբերու վրայ դրուած անդամավճարի ամբողջ հասոյթը պիտի ծախսուի միայն մարտական խումբի ռազմական միջոցներ հայթայթելու:

բ.— Օժանդակ խումբերու ամսավճարներ պիտի տրուին պատասխանատու մարմնին, խումբին համար զէնք զնելու եւ թուղթիկ խումբի եւ կոմիտէի ծախսերուն համար:

գ.— Գիւղացիներ ստիպուած են տարին անգամ մը կնքուած վկայականով հանգանակութեան մասնակցելու, որուն արդիւնքին 50 առ հարիւրը կը յատկացուի գիւղի դպրոցին, բանտարկեալներու եւ այլ գիւղական կարիքներու:



Արաֆս գետը Խնուսի եւ Բասէնի միջեւ

դ.— Տուգանքներն ու նուէրները ամբողջապէս կը դրուին Պ. Մ.ի տրամադրութեան տակ :

ե.— Բացարձակապէս արգելուած է վերոյիշեալ ձեւէն դուրս տուգանք եւ դրամ գանձել :

զ.— Արտասահմանէն եկած օժանդակութիւնը պիտի յատկացուի միմիայն ընդհանուր պէտքերուն եւ Ֆետայիներու ծախքերուն :

է.— Ժողովուրդը եւ խումբերը պարտաւոր են անվարձ աշխատիլ ու կերակրել Ֆետայիները :

ը.— Բոլորին կ'արգելուի դրամով աշխատիլ ու վարձք ստանալ :

4.— Քրտական հարցը.— Ֆետայիներու նպատակը պիտի ըլլայ քիւրտերուն միանալ եւ համագործակցութեամբ հասնիլ իրենց իտէալներուն :

5.— Թիւրք դապիլաթներու եւ մուհանիրներու խնդիրը :

6.— Մեր դիրքը հանդէպ կառավարութեան եւ մեր պահանջները :

7.— Միւլթագրմութեան հարց :

8.— Հոդային հարցը :

9.— Դպրոցական հարցը :

10.— Դատական հարցը :

11.— Բարձրաւանդակի շրջանէն դուրս եղած շրջաններու կազմակերպական հարց :

12.— Զինման հարց :

13.— Բանտարկեալները եւ բանտը :

14.— Կորուսի Կոմիտէն.— Կորուսի Կոմիտէն (Մուշի) ունի յատուկ պարտականութիւններ բացի ընդհանուր կոմիտէական պարտականութիւններէն : Ան ձեռք պէտք է առնէ Առաջնորդարանը ու իր ազդեցութեան տակ՝ կրօնական ու քաղաքական ժողովները : Պէտք է արտասահման դրկէ երկրի նամակները, ինչպէս նաեւ Վանի, Պոլսոյ ու Տիգրանակերտի նամակները : Ան է, որ թիւրք ժողովրդեան, զօրքին ու պաշտօնէութեան մէջ պիտի տարածէ մեր գաղափարները, ու միաժամանակ իմանայ խուզարկութեան ժամանակը, զօրքի շարժումները եւ Կորուսի Երկաթեան խումբին միջոցաւ պէտք է հաղորդէ :

Ժողովէն ետք, պատգամաւորները ըստ շրջաններու խումբ խումբ կը բաժնուին եւ իրենց առաջնորդի գլխաւորութեամբ կը մեկնին իրենց վայրերը : Իւրաքանչիւրը գիտէր իր վրայ դրուած պարտականութիւնը : Այս աշխատանքները բաժնուած էին երկու մասի.—

Գէորգ Չաւուշը կը ստանձնէ զուտ զինուորական գործերը, Խնուսի կազմակերպումը եւ քիւրտերու հետ յարաբերութեան հաստատումը : Վարչական-ժողովրդական գործերը կը ստանձնէ Ռու-



Տ Ա Տ Ր Ա Կ

(Գեղամ Տէր Կարապետեան(*))

բէնը: Գեղամ Տէր Կարապետեանին կը յանձնուին քաղաքի (Մուշ) գործերը եւ արտասահմանի հետ յարաբերութիւն պահելը: Մարմնի չորրորդ անգամն էր Վարդան Վարդապետ, որ կը ստանձնէ քրտական ու թրքական յարաբերութիւնները:

Գործիչներու եւ պատգամաւորներու մեկնումէն ետք կը մնան միայն Ֆետայիները, անտառին խորը՝ «Դըզըկնու» (գողերու վայր) կոչուած տեղը, զոր «տեսած են միայն արջերն ու Ֆետայիները» եւ ուր պիտի հանգստանային քանի մը օր:

Կ'արժէ տեսնել Ֆետայիներու հանգիստի եւ ուրախութեան ժամերը. ոմանք աղբիւրի գլուխը իրենց զգեստները կը լուան, ոմանք ծառերէն կախած «գըզըկնին» (երկու տարեկան խոյ) կը քերեն. ոմանք շամփուր կը պատրաստեն. Քեռի Մակարը կրակի մօտ պպզած՝ մոխիրով կը ծածկէ իր սիրած փայծաղը, զոր կրակի տակէն կը հանէ ու մոխրախառն կ'ուտէ: Բոլոր Ֆետայիները ունին փայտէ շամփուրներ, տաք խորովածը կը քաշեն ձեռքով ու միսը կ'ուտեն ախորժակով, ետքը Ս. Կարապետի քամուած մածուկը, վրան ալ պաղ ջուրը կը խմեն ու երջանիկ կը զգան իրենք զիրենք: Այսպէս կ'անցընէին ժա-

(*) Տես «Յեղափոխական Ալպուս»ի Ա. հատոր, էջ 85:

մանակը մինչեւ կէսօր : Գէորգ Չաւուշ նշան կու տայ ու Ալատինայ Միսաք կը սկսի իր քաղցր ձայնով երգել : Ֆետայիները կը համախմբուին Միսաքի շուրջը ու «տահա, տահա» կը պոռան : Միսաք կ'երգէ մարտական կռուի երգը, քրտերէն եւ հայերէն : Միւս կողմէ կը լսուի Փեթարցի Կիրակոսի ձայնը, որ պատասխան կու տայ Միսաքի երգերուն :

Ահա կը սկսի պարը, կովանտը, փափուրէն, ու անոր կը յաջորդէ եարխուշտան (քոչարի) : Գէորգ սիրահար էր երգի ու պարի, մանաւանդ եարխուշտայի, շուտով նշան կու տայ Լաճկանցի Արթինին, որ կը ցատկէ ստքի ու պարը կը սկսի : Ֆետայիները իրարու ձեռք կու տան, կը պարեն . իրենց դլուխն է կանգնած Գէորգը, թաշկինակը ձեռքին : Իրարու հարց-պատասխան երգեր կ'երգեն : Հետզհետէ կը տաքնայ պարը, կարծէք կռիւ ըլլայ, Ֆետայիները այնպէս կը դարնեն իրարու ձեռքերուն, որ կարծես մատներէն արիւն պիտի ժայթքէ : Բոլորն ալ արիւն քրտինքի մէջ են մտած, ու կը պարեն ժամերով : Այսպէս, բոլոր Ֆետայիները կ'ուրախանան ու երջանիկ են :

Երեք օր կը տեւէ այս ուրախութիւնը, որմէ ետք պիտի ցրուին դանազան կողմեր : Որքան ուրախ են Ֆետայիները երբ իրարու հետ կ'ըլլան . իսկ երբ պիտի բաժնուէին շատ կը տխրէին : Անոր համար է, որ ուրախութեան ժամանակ կատաղի էին, իսկ բաժանումի ատեն



Տեսարան մը ֆետայիներու կովանտ պարը պարած պահուն

Թախծոտ : Ո՞վ գիտէ , այս բաժանումը թերեւս վերջինն ըլլայ , եւ մէյ մըն ալ զիրար չտեսնեն :

Արդէն շրջանները բաժնուած էին գործիչներու վրայ , որոնք իրենց հետ առնելով փոքրաթիւ Ֆետայիներ , պիտի շրջագայէին գիւղէ գիւղ եւ հրահանգներ պիտի տային : Ղարսայ Ակոն , իր հետ ունենալով Մոսոն ու քանի մը Ֆետայիներ կ'անցնի Ովասիսի շրջանը :

Ալիջանի Տիգրանը , իր հետ ունենալով Սուլուխի Մուսէն , Սամոն , Ալիգոնանի Սոսոն , Մշեցի Ռուբէնը եւ ուրիշներ , կ'անցնի Սոխակեան շրջանը :

Ֆրանք Սահակը (Ճիւլաղ) , իր հետ ունենալով Առաղցի Տիգրանը , Գրբրոն եւ ուրիշներ , կ'անցնի Կռուածաղիկ շրջանը :

Քեռի Ղազարը , Գոմսայ Մոսոն , Մոխոն , Քաջալ Աւոն , Մշեցի Տիգրանը եւ ուրիշներ Սահակեան շրջանը :

Փեթարի Մանուկը , իր հետ ունենալով Զիարէթցի Մանուկը , Ախոն , Իսրոն եւ ուրիշներ , կ'անցնի Հովիտ ու Վահագնեան շրջանները :

Աւրանայ Արամը , իր հետ ունենալով Յունոն եւ երկու ուրիշներ , կը զրկուին ամենէն դժուար ու անկազմակերպ տեղը՝ Ապահունիքի շրջանը :

Ռուբէն պիտի անցնէր Մշոյ դաշտ եւ Բարձրաւանդակի շրջանները , իր հետ ունենալով Սպաղանաց Մակարը , Զոլոն , Շէնիկի Մանուկը եւ խումբ մը Ֆետայիներ :

Գէորգ Չաւուշ կ'անցնի Աշտիշատէն Խնուսի Արօս գիւղը , իր հետ ունենալով Մօրուք Կարոն , Գալէն , Գոմսայ Մելիքը , Շէնիկի Արթինը , Մանուկը մօտ 25 ձիաւոր , որոնցմէ 5-ը քիւրտեր էին , բոլորն ալ լաւ զինուած էին :

Գէորգ Չաւուշի երեւումը Խնուսի մէջ յառաջ կը բերէ թէ՛ երկիւղ եւ թէ՛ ուրախութիւն , թէ՛ վախ թէ՛ հետաքրքրութիւն : Վատերը կը սարսափին , իսկ համակիրներ ուխտի կու գան անոր մօտ : Գէորգ Չաւուշ կ'օգտուի այս հմայքէն ու արագ կերպով կը ձեռնարկէ իր առաջադրած խնդիրներու լուծման : Եռտով կը յաջողի Խնուսի եւ ռուսական Բասէնի միջեւ սուրհանդակային խումբերու երթեւեկը կատարել , սուրհանդակ Խնուսցի Օվանի , Ղալղաուլցի Մարտիրոսի , քիւրտ Ագոյի եւ Ֆլիթի միջոցաւ : Նոյնպէս կապ կը հաստատէր Էրզրումի հետ , ուրկէ նամակներ եւ իրեր կը ստանայ : Կովկասէն կուսակցութիւնը կը զրկէր ոչ միայն թերթեր , գիրքեր , ռազմամթերք , այլ նաեւ մարդիկ , գործի համար : Այդ ժամանակ էր , որ Խնուս Գէորգի մօտ կը հասնին Փիլոսը (Մառալը) եւ Գերենիկը , որոնք տարիի մը չափ կը գործեն Մուշի եւ Էրզրումի շրջաններուն մէջ :

«Գէորգ Չաւուշ երբ Խնուս կու գայ , իր առաջին հանդիպումները կ'ըլլան Արօս գիւղը , ու երբ կ'անցնի Քաղքիկ գիւղը , իրեն հետ արօսցի Հրաչեան , Խարաղոսպանայ Մխօ Սահակ , Քաղքիու Արրոն , Իկիթի Պօղոսը եւ Փուրթօ Ղազարը կ'որոշեն Քաղքիկ կեդրոն



ՄՕՐՈՒՔ ԿԱՐՕ
(Կարապետ Աւոյեան(*))

ունենալ, ուր, որեւէ դէպքի ատեն, զիւրաւ կրնային հասնիլ շրջակայ գիւղերէն մարտական խումբերը:

Գէորգ Քաղքիկ գիւղէն զինեալ խումբով կ'ուզէ երթալ Գոզանդուկ, երբ խումբը կը հասնի գիւղին մերձակայքը, նոյն պահուն՝ գիւղեր ատեն, գիւղէն դուրս կու գայ խրխսարտարը՝ թրքական զօրքը, որ յեղափոխականները հալածելու համար գիշերները, կը շրջի: Խրխսարտարի հրամանատարը երբ կը նկատէ դիմացէն եկողները, բարձրաձայն կը հարցնէ՝ դուք ո՞վ էք: Գէորգ ինք ալ բարձրաձայն

(*) Տես «Յեղափոխական Աւպոմ»ի Ա. հատոր, էջ 281:

նոյն հարցումը կ'ընէ : Պատասխանը կ'ըլլայ՝ ես խրիստարտարի պիւսալաշին եմ, Գէորգն ալ կը պատասխանէ՝ «ես Գէորգ Զաւուշն եմ : Կըրնա՞մ հետս երկու զինուոր առած, գալ հետդ խօսելու» : Պինպաշին կը համաձայնի : Գէորգ կը մօտենայ իր երկու զինուորներուն հետ պինպաշին, եւ իրարու հետ խօսելով առանց միջադէպի, նոյնիսկ իրարու նուէրներ տալով, կը խոստանան հանդիպումը գաղտնի պահել, եւ իրարմէ կը բաժնուին :

Ուրիշ անգամ մըն ալ, Գէորգ կ'երթայ Խնուս բերդ, կ'իջեւանի Կուլոյի Ղազարի տունը, ձորու վերին թաղը, կամ ինչպէս սովոր էին ըսել ձըրթ Մահլէ : Գէորգ տեղեկացած էր, որ պետական հարկահաւաք (Թահսիլտար) Ֆայիմ էֆենտին, տուրքերու դանձումի ժամանակ, Հայոց չափազանց նեղութիւններ կը պատճառէ : Գէորգ եւ Տէրտրոջ Տիգրանը գիշեր ատեն, կ'երթան Ֆայիմ էֆենտին տունը, դուռը կը զարնեն : էֆենտին հայ ծառան՝ Չըքէի Ֆարէն, դրան ետեւէն կը հարցնէ՝ ո՞վ էք : Տիգրանը մեղմ ձայնով կ'ըսէ Ֆարէին, եկողը Գէորգ Զաւուշն է : Կիսաբաց դռնէն, Գէորգն ալ կը հարցնէ՝ էֆենտին տո՞ւնն է, կ'ուզեմ զինք տեսնել : Ծառան կը պատասխանէ՝ այո՛, տունն է, բայց կը քնանայ : Գէորգ ծառային կ'ըսէ՝ դնա՛ զինք արթնցուր եւ ըսէ, որ Գէորգ Զաւուշը Մուշէն եկած է, յատկապէս կ'ուզէ զինք տեսնել : Ծառան երբ Ֆայիմ էֆենտին լուր կու տայ, թէ Գէորգ Զաւուշն է, ան կ'այլալլի, եւ կ'ըսէ՝ հարցուր թէ ի՞նչ կ'ուզէ : Ծառան կը յայտնէ, թէ Գէորգ Զաւուշ 400 ոսկի կ'ուզէ որպէս տուգանք, ժողովուրդէն տուրքերը հաւաքելու ատեն, անոնց տուած չարչարանքներուն եւ առած կաշառքներուն համար : Դրամը պէտք է տանի եւ այսինչ տեղը դնէ, — տեղին անունը տալով, — ու եթէ այդ տեղը չդնէ, թող լաւ գիտնայ, որ օր մը կու գայ եւ զինք կը սպաննէ : Ֆայիմ էֆ.ն խոստումը կը կատարէ առանց գաղտնիքը երեւան հանելու(*)» :

Գէորգ կը կազմակերպէ նաեւ Խնուսի (Բիւրակն) կոմիտէութիւնը Արօսի Հրաչի նախագահութեամբ : Նոյնպէս Խնուսի դիւղերուն մէջ տեղ կը պատրաստէ Սասունի եւ Մշոյ աղքատներուն համար, որոնք հարիւրներով կ'երթան Խնուս գաւառը եւ ձմեռը կը պաշտպանուին : Այդ շրջանին Գէորգի ամենամեծ օգտակարութիւնը կ'ըլլայ հայ-քրտական յարաբերութիւններու սերտացման առընչութեամբ կատարած աշխատանքը :

Վ. Իսկէնտէրեան, որ կը գործէ Դերենիկ անուամբ, (**) կը գրէ .—

«1906-ի Սեպտեմբերի 6-ի երեկոյ էր : Գէորգ Զաւուշից լուր ստացանք : Նա գտնուում էր Արօս գիւղում եւ կարգադրել էր՝ մեզ ա-

(*) «Հարֆ Խնուս» Եղիշէ Յ. Մելիքեան, էջ 267 :

(**) Երեւանցի, քեմական դպրոցի աշակերտ, ապա աշակերտական միաւթեան անդամ. 1906-ին կ'անցնի Երկիր : Մասնակցած է հայ-քաթարական կռիւներուն :

ուսմանը աշխատեց : Մենք մեր «բարխանայով» (բեռներով) մէկտեղ գիշերով ճանապարհուեցինք Արօս եւ, առանց միջադէպի, հասանք գիւղն ու իջանք այն տունը, ուր գտնուում էր Գէորգ Չաւուշը :

Երեւանում ես տեսել էի նրա հետ միասին Սասունում կռուող ընկերներին՝ Սմբատին, Կոտոյի Հաճիին, Սէյտոյին եւայլն ու պատրաստուում էի հանդիպիլ նրանց պէս բարձրահասակ, յաղթանդամ մի մարդու : Բայց շատ զարմացայ, երբ մեզ ներկայացաւ մի կարճահասակ, կլոր ու պզտիկ դէմքով եւ գեղադէմ մի հայդուկ, որի հետ իրարու գիրկ ընկած համբուրուեցինք, կարծես երկար ժամանակ իրարուց զատուած մտերիմ ընկերներ լինէինք : Համբուրուեցինք նաեւ նրա հետ գտնուող բոլոր հայդուկների հետ եւ հաղորդեցինք նրանց Կովկասի մեր բոլոր ընկերների բարեւները :

Հարցրի Ռուբէնի մասին : Պատասխանեցին թէ «ան Մշոյ դաշտն է : Կ'երթանք՝ զէն լէ կը տեսնաս» :

Ես երկար ու բարակ տնտղեցի Գէորգի մօտը գտնուած հայդուկներին, որոնք 4—5 շարք փամփշտակալների բեռան տակ նստած էին՝ մոսիները գրկած : Ամէն մէկի կրծքի վրայ սեւին էր տալիս խենչարի կոթը. ոմանց վրայ տեսնուում էր նաեւ «մաուզէր» ատրճանակ : Ամէնքն էլ հագուած էին շատ լաւ, գլխների վրայ տեսնուում էի Դաշտի կամ Սասնոյ հայ աղջկանց ձեռագործ նաշխուն «արախչին»ները, որոնց վրայ փաթաթուած էին մի տեսակ ծոպաւոր մետաքս թաշկինակներ, սեւ կամ գունաւոր, որ իրենք «փուշի» էին կոչում :

Գէորգ Չաւուշի փոքր աչքերում նկարուած էր իր ըմբոստ հողին, որ շարունակ պատրաստ էր բռնկելու եւ խոյանալու :

Նամակ գրել-կարդալ դիտցողի ցենզ ունէր նա, խօսում էր տիրապետող թոնով : Իսկոյն երեւում էր, որ շրջապատը յարգանք եւ ակնածանք ունէր իրեն հանդէպ :

Գէորգ Չաւուշի հետ մի քանի օր մնացինք Արօս :

Ինձ համար անյայտ էր, թէ ինչո՞ւ համար է Գէորգը եկել Խրնուս : Որպէս նորեկ, ինձ համար անհամեստութիւն կը լինէր հարցընել :

Գիշերը մնացինք Արօսում : Գէորգի մօտն էր գտնուում Քաղքիկ գիւղացի Միսաքը, որ յայտնի «դանգբէժ» (երգիչ) էր : Նա ի պատիւ Գէորգի եկել էր երգելու եւ երգում էր միմիայն քրտերէն, որին գերի էի դարձել : Դեռ 1900 թուականից ես սիրահարուած էի այդ երգերի վրայ : Իգդիրում Քղեցի Պօղոսն էր երգում մեզ համար : Ես այնքան էի սիրել այդ երգերը, որ մինչեւ անդամ քրտերէն չգիտնալովս մէկտեղ՝ ընդօրինակել էի Պօղոսից մէկ-երկու երգ ու անգիր արել :

Ինձ համար մինչեւ այդ օրը պատմական-գաղափարական համարուած հայդուկային դէմքերը մարմին էին առել : Ամբողջ էութեամբս ըմբոշխնում էի նրանց մօտիկութիւնը, բոլորովին մոռացած, որ ես էլ հայդուկ եմ : Սակայն, ես ո՞ւր, նրանք ո՞ւր : Ես հայ-թա-

Թարական կռիւներէ ընթացքումն էի միայն ծանօթացել հրացանի եւ նրա ձայնի հետ. ինձ եւ ինձ նմանների համար փամփիշտակալներ, հրացան, ատրճանակ եւ սուր կրելը մի արտակարգ զարդարանք էր, մինչդեռ դրանք սրանց մարմնի անդամներն էին համարուում:

Այսօր երրորդ օրն էր, որ փամփիշտակալներս, նոյնիսկ հազուատիս կոճակները առանց քանդելու անց էի կացրել: Այդ գիշերն էլ պէտք է այդ վիճակում պառկէի, եթէ Գէորգը չասէր.

— Քակեցէք փամփուշտանոցնիդ, հանդիստ սլառկեցէք, զմեզ կը պաշտպանեն տեղական զինուորներ:

Դրանով ինձ ուզում էր հասկացնել, թէ գիւղերում զինուորական կազմակերպութիւն կայ:

Առաւօտեան մութն ու լուսուն զարթնեցինք եւ զինուեցինք: Գիւղից դուրս դալով՝ մտանք գիւղի արեւմտեան կողմը գտնուող մի խոր ձոր, որը կոչուում էր «Արջաձոր»: Քսան վայրկեանի շափ քալեցուց յետոյ, բարձրացանք ձորի աջ լանջն ի վեր: Մեր առջեւը բացուեց մի խոշոր քարայր, ուր տեղաւորուեցինք ամբողջ խմբով: Նորութիւններ էին ինձ համար մարդիկ, իրենց ապրելակերպը եւ ինքը՝ Երկիրը:

Երեւանում ես լսել էի Երկաթի խումբի եղերական սլառմութիւնը, թէ ինչպէս քարայրի մէջ շրջապատուել էին. թէ ինչպէս կռուի ընթացքին մի մոլորուած գնդակ հանդիպել էր իրենց ուսմ-



Սեմալցիները, կրկրի խուրցեր (կոթը) կը չորցնեն հեռուն՝ կայր

բերին, որոնք պայթել էին եւ օդը հանել ամբողջ քարայրը: Քարայրի այդ ողբերգութիւնից հրաշքով փրկուած երկու հայդուկներին էլ վիճակուեցաւ ինձ տեսնել ու իրենց հետ բաժնել բանտային տաժանքները «101»ի կապանքներում:

Սակայն, մեր քարայրի մէջ մենք նստած էինք շատ ապահով, եւ Գէորգը ծանօթացնում էր մեզ իրենց կեանքի մանրամասնութեանց հետ:

Նախաճաշն ու ճաշը անցան շատ հետաքրքիր: Կերակուրը հայթայթում էր Արօսը:

Կէսօրից յետոյ, մեր այդ անդորրութիւնը խռովուեց երկու որսկան բարակների հաջոցներով, որոնք, ըստ երեւոյթին, մեր ժայռերի մէջ եկել էին աղուէս փնտռելու: Դրանց ետեւից բարձրացաւ մի քիւրտ «լօրիկ» (զնչու), որը եւ տեսնելով զէնքերի մէջ կորած մեր խումբը, լեղապատառ կանչեց.

— Հայ 10 10'... 1ԸՎԸՌ ՔԺԻ ՓԻՍԱՅԻՆԱ... (Տօ', այստեղը լիքն է Փետայիներով), — եւ փախաւ դէպի Խնուս-Կալա, որին ժողովուրդը մի խօսքով անուանում էր բերդ:

Թէ' Գէորգը եւ Թէ' միւս տղաքը անտարբեր ձայն տուին ամէն կողմերէն.

— Է', պարոն Դերենիկ, ոտքերնիդ խերլի է. այսօր հարսնիք մը պիտ ըլլայ, ինչալլահ:

Կարգադրուեցաւ մի քանի հոգիով բռնել ձորի միւս եզերքի ժայռերը, որպէսզի կարենանք պաշտպանել իրար: Մինչեւ իրիկուն սպասեցինք ապարդիւն: Գնչուները բերդ գնացի՞ն, կամ կառավարութեանը լուր տուի՞ն, թէ չէ, յայտնի չեղաւ: Դրա հետեւանքը այն եղաւ, որ մենք այդ գիշեր տեղափոխուեցինք Քաղքիկ:

Էնտեղ էլ հանգիստ չանցաւ օրը: Լուր բերին, թէ մի խումբ ասկեար մտած է գիւղը: Մեզնից շատերը ենթադրեցին, թէ դրանք առաջապահներն են, գունդը ետեւն է լինելու, ուստի մեր նստած տեղիցը մեզ վեր հանելով, տարան դոմբ:

Ես ուշի-ուշով հետեւում էի, որ տեսնեմ թէ ի՞նչ է լինելու դրա վերջը: Մէկ էլ տեսայ, որ տան տէրը կովը մէկ կողմ քաշեց, աղբը հեռացրեց եւ սալ քարերից մէկը բարձրացրեց: Բացուեց մի խոշոր անցք, որտեղից մենք ամէնքս էլ սողոսկելով դուրս եկանք մի փոքրիկ սենեակ:

Դա գիւղացոց թաքստոցն էր: Այդտեղ էին թաքցնում նրանք իրենց ոչխարների մէկ մասը, երբ կառավարութիւնից դալիս էին ոչխարների քանակութիւնը արձանագրելու՝ տուրք որոշելու համար, որ կոչւում էր «խամչուր»: Այս սենեակի մէջ մենք աշխարհից կտրուեցինք միանգամայն եւ չիմացանք, թէ ի՞նչ եղաւ, ինչ չեղաւ: Մէկ էլ այն տեսայ, որ մենք միեւնոյն անցքովը կրկին դուրս եկանք:

Դա գիւղի երեւելիներից՝ Սեղրակի տունն էր, որի հետ ապա-

գային եւ նորից պատահելու առիթը պիտի ունենայի ութ ամիս վերջը :

Մէկ-երկու օրից յետոյ որոշուեց Փիլոսֆին թողնել Խնուս, որպէս գործիչ, իսկ ես, խումբի հետ միասին պիտի երթայի Մուշ :

Քիւրտերը, մանաւանդ իզական սեօր, սիրահար են հմայքի-յանդղնութեան ու մանաւանդ քաջութեան : Անոնք կը տեսնեն իրենց աչքերովը, թէ Գէորդ Չաւուշ եւ մի բուռ ձիաւորներ կ'արհամարհեն կառավարութիւնը. եւ յանուն ազատութեան ասպարէզ են ինկած առանց կրօնի խտրութեան, կ'աշխատին օգուտ խեղճերու եւ կը բողոքեն զուլումի դէմ : Ուստի Գէորդ կարճ ժամանակի մէջ լայն կայեր կը հաստատէ Խնուսի քրտերու հետ եւ զինք կը շրջապատեն շատ թոռուներ, աղաներ ու համիտէիներ. ոմանք անկեղծօրէն համակրելով, ոմանք հետաքրքրութենէ մղուած տեսնելու համար, թէ ի՞նչ մարդ է սա, որ ահա 20 տարիէ ի վեր կը կռուի կառավարութեան դէմ, շարունակ հարուածներ կու տայ, բայց մինչեւ օրս ոչ ոք չէ յաջողեր դերեզման իջեցնել կամ կախաղան հանել այնպիսի առասպել հերոս մը» :

Այն շրջանին Խնուսի մէջ կանոնաւոր զօրքեր չկային. Գէորդ առիթէն օգտուելով կապ կը ստեղծէ քիւրտերու հետ, կ'արհամարհէ գայմաղամն ու իր ոստիկանները, որոնք չէին համարձակեր խոչընդոտ հանդիսանալ : Գէորդ օր ըստ օրէ կ'ուժեղացնէ իր խումբը թէ՛ հայերով եւ թէ՛ քիւրտերով : Թիւրք յրտեսներու միջոցաւ լուրը կը հասնի էրզրում, զօրք կը շարժի Գէորդը դասելու, բայց Գէորդ հին ու փորձառու հերոսը կը յաջողի հասկնալ եղելութիւնը. չէր ուզեր իր դէմ տեսնել անթիւ զօրքեր, շուտով կ'անցնի Բինկէօլ : Քանի մը օր ետք, Գէորդ կրկին կը վերադառնայ Խնուս, ինքզինք անգամ մըն ալ կը ցուցադրէ, եւ ձիուն գլուխը կ'ուղղէ դէպի Մշոյ աշխարհ եւ ապահով կը հասնի իր սիրած երկիրը :

Գէորդի կը միանայ Դերենիկ, իսկ ճամբան խումբին կը միանան նաեւ երկու ճիպրանցի քիւրտեր, որոնք Գէորդի բարեկամներն էին եւ վաղադները միանգամայն, ճամբան կ'անցնէին Սրմանց գաղթի փէշերը քերելով. կ'երթան դէպի Չարբրհօրի գետակը, որ կ'անցնի համանուն գիւղի առջեւէն : Գիւղի բնակչութիւնը կազմուած էր կովկասէն գաղթած չեչէններով, որոնք 1896-ի եւ 1903-ի վերիվայրումներու ժամանակ շատ տխուր դեր կատարած էին հայերու նրկատմամբ :

Դեռ ձորը չմտած, մութի մէջ Գէորդ կը տեսնէ սեւ զանգուած մը, որ շարունակ կ'աշխատի՝ իրենց բռնած ուղղութենէն դէպի ձախ շեղիլ : Անոնք կը նկատեն, որ իրենց դէմը երեւցողները ուղիղ չեն երթար. կասկածելով անոնց վրայ օղի մէջ քանի մը փամփուշտ կ'արձակեն եւ ձայն կու տան .

— Լօ՛, լօ՛, հուն քէ՞ն է... ագեալ հուն դօստըն. ժը դուր վա հարըն (է՛յ, դուք ո՞վ էք... Եթէ բարեկամ էք, մեզմէ հեռացէք) :



Մշոյ դաշտի հայ գիւղացիները
երկրագործական աշխատանքի ժամանակ

Գէորգ իր խումբով ստիպուած կ'ըլլայ կենալու մինչեւ անոնց հեռանալը. անկէ ետք խումբը կը մտնէ Չարբըհօրի ձորը, որ կ'առաջնորդէր դէպի Մշոյ դաշտը: Գէորգի համար ձորէն մեկնելը անյարմար է, ան կը բարձրանայ դէպի աջ եւ ազատ կերպով դաշտերու մէջէն լուսադէմին կը հասնին դաշտի առաջին գիւղը՝ Աւրան: Գէորգ նոյն գիշեր լուր կ'ուղարկէ Ռուբէնին, որ հետեւեալ գիշեր Սուլուխ գայ:

Այսպէս երկու ամիս բացակայելէ ետք, Գէորգ կը վերադառնայ՝ իրեն յանձնուած բոլոր գործերը յաջողութեամբ կատարած ու կը դիմաւորուի Մշոյ աշխարհի մարտական խումբերու կողմէ:

«Սուլուխում, — կ'ըսէ Դերենիկ, — մենք մտանք փոքրիկ լամպարով լուսաւորուած մի գետնափոր տուն, ուր աղօտ լոյսի տակ նկատելի եղան մի քանի առնական դէմքեր: Շատ հետաքրքիր էր ինձ տեսնել Ռուբէնը:

Ընկերական ջերմ համբոյրներէց ու հարցբարեւներէց յետոյ նա ինձ ծանօթացրեց ներկայ գտնուող բոլոր տղոց հետ: Անդրանիկի հեռանալուց յետոյ, դաշտ վերադարձած տղաներն էին դրանք, որոնց մէջ աւելացել էր միայն Ռուբէնը:

Յիշում եմ Սպաղանցի Մակարը, որ հին կաղնիի մի կոճղ էր

ամէն տեսակէտով: Ամէնքից յարգուած մի հին Փետայի էր նա եւ ամէնքի վրայ հայրական աչք ունէր: Ամէնից աւելի ես կապուեցայ այդ մարդու հետ, եւ շատ դէպքերում նա օգնեց ինձ:

Նրանից յետոյ աչքիս զարկաւ Գալէն, որ առաջին իսկ վայրկեանից չափազանց բարեհամբոյր, հեզ ու քաղցր յատկանիշներով զարդարուն մի Փետայի էր: Նկատելի էր, որ Գէորգի ու Ռուբէնի կողմից մի առանձին գուրգուրանքի առարկայ էր: Այդ իսկ վայրկեանին, երբ ես ժամացոյցս հանեցի եւ կ'ուզէի ժամն իմանալ, Գալէն հետաքրքրուեց իմ ժամացոյցովն:

— Պարոն Դերենիկ, այս ժամացոյցը ինձի՞ ես բերած, — ասելով սկսեց ձեռքի մէջ ժամացոյցը այս ու այն կողմ դարձնել:

Ես հասկացայ, որ Գալէն ուզում է քաղաքավարի կերպով «կազմակերպել» ժամացոյցը, ուստի դարձայ Գէորգին.

— Աս ի՞նչ է, մինչեւ օրս Գալէն առանց ժամացոյցի՞ ես թողել:

— Անիկա մեզմէ ժամացոյց չ'ուզեր: Ահա՛ զիմ ժամացոյց:

Ա՛ռ:

— Տեսնա՞ս, չ'ուզեր: Անիկա Թերենիկան ժամացոյցը կ'ուզէ, անիկա նոր է, մոտալի է:

Գէորգը հանել էր ժամացոյցն ու պարզել Գալէին, որ իր հերթին խորամանկութեամբ նայում էր Գէորգի աչքերին ու ժպտում: Ես, օգտուելով այդ հանգամանքից, Գէորգի ձեռքից ժամացոյցն առի եւ ասացի.

— Տուր մի տեսնեմ սա ի՞նչ բան է, որ Գալէն չի հաւանել:

Ժամացոյցի տակ ու դլխին մի քիչ նայելուց յետոյ, մասնազիտօրէն ասացի.

— Սա հօ մի կատարեալ անթիքա է: Վալլա-բիլլա ես հաւանեցի, Գալէ ջան, էդ քեզ, էս էլ ինձ:

— Խա վալլահ, աղէկ ժղլեցար, հախ դատաստան, Սըբ Մարափէ, — իսկոյն վրայ բերեց Սպաղանցի Մակարը եւ չարածձի նայուածքը ուղղեց Գէորգի վրայ, որով ասել ուզեց. «Եա՞»... (հապա՞):

Կռիւներից մէկի մէջ ձեռք բերուած մի յիշատակ էր այդ ժամացոյցը, որ կռուի տաք վայրկեանին, զնդակների տարափի տակ, որպէս պատերազմական աւար, ընկած զարիթի (սպայի) վրայից հանել-բերել էր Չարէն՝ սուրի հետ մէկտեղ: Այդ օրուանից այդ կինն էլ փախստական էր դարձել ու ապրում էր կազմակերպութեան հովանու տակ: Այս ձեւով, ուրեմն, Չարէի քաջագործութեան յիշատակներից մէկը հէնց առաջին օրը հասնում էր Դերենիկին: Իմ կողմից բաւական մեծ համարձակութիւն էր համարւում, երեւի, Գէորգի ձեռքից՝ հին օրերի այդ յիշատակն առնելը: Հետագայում ես պէտք է վայելէի այդ համարձակութեանս պտուղները:

Հետագայում, մեր խօսակցութիւնների ընթացքին, ես եւ Ռուբէնը պարզեցինք — ես՝ Հ. Յ. Դ. եան Արեւելեան Բիւրոյի, իսկ նա՝ տեղական ընկերների տեսակէտները: Ռոստոմ, Սիմոն եւ Համօ

(բժ. Օհանջանեան) շարունակ պնդել էին ու ինձ էլ պատուիրել, որ աշխատենք Գէորգին համոզել, որ նա մի առ ժամանակ թողնի Երկիրն ու անցնի Կովկաս: Առհասարակ տիրում էր այն կարծիքը, որ Դուրան-Բարձրաւանդակում (Տարօն-Սասունում) ժողովուրդը հանդիստ պէտք էր ձգել. վերջին անցուղարձերից քայքայուել էր հայ դիւղը: Գէորգի եւ հայդուկների ներկայութիւնն էլ առիթ էր ստեղծում նորանոր դէպքերի: Եթէ հայդուկները ընդհարումներից աշխատէին խոյս տալ, խուզարկութիւնները կը մնային որպէս տեւական պարբերական շարիք:

Իւրաքանչիւր մի խուզարկու արշաւանք միջին թուով 300 հոգուց էր լինում բաղկացած: Այդպիսի մի խումբ, երբ մանաւանդ ներշնչուած դալիս էր մարդ փնտռելու պատրուակի տակ, կարեցածի չափ կողոպտելու հայ դիւղացին, այլեւս հասկնալի կը լինէր կացութեան ողբերգութիւնը:

Պէտք էր համոզել Գէորգին՝ մի առ ժամանակ անցնելու Կովկաս: Պէտք էր, որ նա Կովկասում մի առ ժամանակ շրջանների մէջ մտնէր: Ամէնքն էլ համոզուած էին, որ այդ հանգամանքը շատ բարերար ազդեցութիւն պիտի թողնէր նրա բնաւորութեան, դազազած հոգու եւ աշխարհահայեացքի վրայ: Միւս կողմից՝ նրա եւ փախստական տղոց մէկ մասի հեռանալով, դաշտի մէջ զինուած ընդհարումների շարժառիթները կը պակսէին:

Ռուբէնը ճիշդ եւ ճիշդ նոյն առաքելութեամբ եկել էր Վանից: Այդ հողի վրայ շարունակ պայքարել էր խօսքով եւ օրինաւոր որոշումներով, սակայն, միշտ հանդիպել էր Գէորգի յամառ ընդդիմութեանը: Պատահել էր նոյնիսկ, որ համոզուել էր նա եւ մինչեւ իսկ Խնուս գնացել ու նորից յետ դարձել՝ պատճառաբանելով, թէ «ճամբան բուք-բորանի հանդիպեցան, չկարողացան անցնել»:

Գէորգը մի ճշգրիտ համոզում ունէր, որ Մշոյ Դաշտը եթէ առանց հայդուկի մնար, հայ թէ թիւրք դաւաճանական ու դաւադրական տրամադրութիւնները սանձակոծ պիտի յառաջանային: Նման պարագաների տակ ժողովուրդը իր գլուխը պիտի կորցնէր եւ կուլ գնար սեւ ոյժին: Նա կարծես չէր ուզում տեսնել, որ իրանից յետոյ Երկրում մնում էին նախ՝ Ռուբէնը, որ բաւական մեծ ժողովրդականութիւն էր ձեռք բերել համեմատաբար կարճ ժամանակամիջոցում. երկրորդ՝ Դերենիկը, որ թէեւ դեռ նոր էր եկած, բայց Ռուբէնի ընկերակցութեամբ կարող էր հետզհետէ լաւ օժանդակութիւն ցոյց տալ: Վերջապէս, Դաշտի մէջ կարող էին մնալ ժողովրդի սիրած հայդուկներից մի քանի հոգի եւս՝ կազմակերպութեան հմայքը տեղը պահելու համար: Մնում էր հայ-քրտական բարեկամութեան խնդիրը, որ Գէորգի ներկայութեան կարեւորութիւնը շեշտող ազդակներից մէկն էր նկատուած:

Աւելորդ խօսք էր նաեւ այն աւանդութիւնը, թէ «երբ քիւրտի հացը կտրես, նա քեզ խայինութիւն չի անի այլեւս»: Ամէն պարա-

գայի չէ ասուած այդ: Պէտք էր մի խոշոր խաչ դնել այդ «հայ-
քրտական» ցնորքի վրայ: Դրանից զատ՝ պէտք էր վերջ դնել, դոնէ
ժամանակաւոր կերպով, կարմիր յեղափոխութեան. ժողովուրդը
լողում էր խաւարի եւ չքաւորութեանց մէջ՝ յոգնարեկ անդամնե-
րով: Պէտք էր կամաց-կամաց հող պատրաստել խաղաղ կրթական
գործունէութեան համար:

Շատ բան կար անելիք: Ժողովուրդը, հնարաւորութեան չափ
պէտք է անդորրութեան մէջ պահուէր, որ ժամանակը դար սպիտակ
յեղափոխութեան, որից յետոյ միայն պիտի կարենար իր յաղթական
թեւերը տարածել կարմիր յեղափոխութիւնը»:

Գէորգի բացակայութեան ընթացքին, Մշոյ դաշտի եւ Սասունի
գործերը յանձնուած էին Ռուբէնին: Մանր էր իր բաժինը, մանաւանդ
որ նոր էր ու անփորձ: Բայց իր հետ ունէր հին եւ փորձառու ընկեր-
ներ, Սպաղանաց Մակարը, Մանուկը, Ախոն, Շէնիկի Չոլոն, Ղա-
զարը, Իսրոն եւ ուրիշներ, որոնք իր հետ առած կը շրջէր հայ գիւ-
ղերը: Ռուբէնի հիմնական ձգտումն էր կառավարութեան հետ կռուի
չքոնուիլ, հնարաւորութեան սահմանին մէջ: Արիւնահեղ կռիւ մղել
միայն մուհաճիրները հեռացնելու համար հայ գիւղերէն ու առաջքը
առնել ամէն գնով հայ գիւղերու ու հողերու բռնագրաւման:

Ու այսպէս իր օգնականներու հետ մօտ երկու ամիս, ան կրցաւ
գործել Սասունի եւ Տարօնի շրջանները առանց կառավարութեան ու-
շադրութեան, մինչեւ Գէորգի դալը:

Սասուն եւ Տարօնի աշխարհը կտրուած էին արտասահմանէն,
ոչ մէկ հայ որեւէ պատրուակով չէր կրնար ճամբորդել Երկրէն դուրս
կամ Երկիր մտնել: Այս դժուարութեան յաղթահարելու համար կը
մնար երթեւեկ կազմակերպել քիւրտերու աջակցութեամբ ու քրտա-
կան շրջաններով, քանի որ կառավարութիւնը դեռ չէր կասկածեր ա-
նոնց վրայ եւ գործադրած հսկողութիւնն ալ համեմատաբար թեթեւ
էր:



Խամուր լեռը

Գէորգ, Խնուս եղած միջոցին կը յաջողի ճամբայ բանալ Խնուսէն ուղղակի Կարսի նահանգը Ղարայեաղ և Ղալեաղ քրտական շրջաններու վրայով: Այս ճանապարհը կարճ էր ու կարելի էր երեք գիշերուան մէջ սահմանն ձիով հասնիլ Խնուս: Բայց այս երեք գիշերը ու երկու ցերեկը սոսկալի դժբախտութիւններ կը ներկայացնէին, պէտք էր շարունակ անցնիլ թշնամի գիւղերու մէջէն, օթեւանիլ թշնամի լեռներու մէջ: Եթէ նշմարուէր, արդէն մահը անխուսափելի էր: Այս դժուարութիւնները սակայն չափով մը կը մեղմանային, քանի որ առաջնորդները այդ շրջաններուն ծանօթ քիւրտեր էին, ասոնք գիտէին, թէ ո՛ր սարի վրայ ի՛նչ քրտական գիւղ կայ կամ ո՛ր հովիտի մէջ ո՛ր սարի քրտական աշիրէթի ոչխարը կ'արածի, ուստի կը յաջողէին առանց մեծ աղմուկի ու կռիւի ապահով Խնուս հասցնել որեւէ փոքրիկ զինատար խումբ կամ սուրհանդակ: Յաճախ ալ ստիպուած էին, երբ նշմարուէին, կռուիլ եւ սպաննելով ու սպաննուելով իրենք զիրենք նետել Խնուսի գաւառը, ուրկէ աւելի մեծ դիւրութեամբ կը շարունակէին ճամբան մինչեւ Մշոյ աշխարհը:

Այս դժուարին աշխատանքը կը կատարէին քիւրտ Ազդոն, Ճլիթը եւ քանի մը ուրիշ քիւրտեր, որոնք շահագրգռուած էին այս աշխատանքով դրամ շահելու, փառքի հասնելու նպատակով ինչպէս նաեւ Փետայի դառնարու հեռանկարով, ուստի փոխն ի փոխ մէկը կ'երթար միւսը կու գար, թէեւ միշտ իրենց կ'ընկերանային հայ սուրհանդակներ ու Փետայիներ: Այս վերջինները ընդհանրապէս խնուսցի էին. գլխաւորները՝ Օվանը, Մարտիրոսը, Տիգրանը, Միսաքը եւ Մոսոն, որոնք լաւ գիտէին քրտերէն լեզուն, վարժ էին քրտական սովորութիւններու, տոկուն էին ու ձիավարժ:

Կար նաեւ ամենէն երկար ճամբան՝ Տարօնէն Պարսկաստան, Վասպուրականի գիծով: Գիշերային ճամբորդութեամբ առնուազն 10 օրէն կը հասնէին Վան ու անկէ ալ առնուազն 5 օրէն Սալմաստ: Այս գիծը բաժնուած էր երկու հատուածի. — Տարօնէն Աղթամար կամ Լիմ ու Կտուց անապատները Դուրան-Բարձրաւանդակի Կ. Կոմիտէն էր ստանձնած, իսկ անկէ մինչեւ Պարսկաստան Ծամի Կ. Կոմիտէն (Վասպուրականի):

Ձէնքի փոխադրութեան գործը գիւրացնելու համար, կային երեք միջոցներ. — ա) Դրամի ոյժը, բ) Հմայքի ոյժը, գ) Շրջապատը համոզելու եւ յեղափոխական գաղափարներու կապելու ճիգը: Արտասահմանէն այս նպատակով դրամ չէր ստացուեր, իսկ եկած չնչին դրամն ալ հազիւ բաւարարութիւն կու տար Փետայիներու ամենակենսական կարիքներուն: Դրամական միջոցներ քիչ էին, ուստի ապարդիւն էր աշխատիլ այդ միջոցով ձեռք ձգել աշիրէթապետները, աղաները եւ հարուստները, որոնք իսկական չարիքներն էին:

Գէորգ Չաւուշ կ'որոշէ իր անձնական հմայքի ու սարսափի ոյժով ու ամենայաջող ու անվտանգ կերպով գործ կատարել: Երբեմն ալ ցերեկով կամ գիշերով յանկարծ «հիւր» կ'իջնէ սա կամ նա բէկի


ու աղայի տունը այնպիսի ձեւով որ բէկն ու ընտանիքը դիւրին որս են Գէորգի ձեռքը: Ան իր ոյժն ու սարսափը զգացնելէ ետք բարեկամօրէն կը հեռանայ ու երախտապարտ կը թողու բէկն ու աղան, որ մահէն ազատած են:

Գէորգ Զաւուշի տեսակէտն էր. — Քիւրտ ու թիւրք ժողովուրդը պարզապէս հօտ է, իսկ հովիւ են կրօնապետը, աշիրէթապետը, աղան ու բէկը: Գէորգի այս տեսակէտը լուրջ հիմունքներ ունէր: Եթէ երբեմն սարսափի, հմայքի ու դրամի միջոցով բարեկամ կը ձեւանան աշիրէթապետներ ու աղաներ, այդ դիտաւորապէս յանդուգն քայլերու շնորհիւ էր, մասնաւորապէս Գէորգ Զաւուշի անձին շնորհիւ:

Քիւրտ կիսավայրենի ժողովուրդին վրայ այսպիսի գործունէութեամբ սկսան քարոզչութիւնը, եւ քիչ ժամանակ ետք մօտ 20—25 գիւղեր կազմակերպուեցան ու դարձան հաւատարիմ բարեկամները Գէորգին: Կային գիւղեր ալ, որոնք համակիր էին անոր, թէեւ բացայայտ կերպով չէին համարձակեր իր հետ ըլլալ: Այսպէս, 1906 եւ 1907 թուականներուն թիւրք պաշտօնեաներու եւ մանաւանդ զինուորականներու մէջ նկատելի էր բեկում մը հանդէպ Ֆետայիներուն: Քիւրտ ու թիւրք այլեւս Ֆետայիները աւազակ կամ օտարի ձեռքը գործիք չէին համարեր:

1906-ի ձմեռը կ'ըլլայ սարսափելի, մանաւանդ երբ կը ձիւնէր, լեռնային ճամբաները բոլորովին կը դոցուին եւ շարաթներով գիւղէ գիւղ երթեւեկը կը կտրուի: Այս դրութեան մէջ ճամբայ ելլելը կարելի չէ, եթէ «քուռչա» բռնած չէ, դուրս ելլողը կը խրի ձիւնի մէջ ու անշարժութեան կը մատնուի: Ֆետայիները կը հաւաքուին այնպիսի գիւղ մը, որ տափարակ հողի վրայ ըլլայ, չորս կողմը բաց եւ ամէն հեռաւոր կէտ տեսնուի: Ֆետային կը մտածէ նախ, որ ոչ մէկ ձիւնոր պիտի չկարենայ արշաւել իրենց վրայ, իսկ հետեւակները պիտի ստիպուին դալ ուղիղ ճամբէն, եւ իրենց հրացաններու կարողութեան սահմանին հասնելէ ետք, դիւրին որսեր պիտի ըլլան:

Այդ ձմեռը Ֆետայիները ունեցան դժուարին պահեր, ոմանք դատապարտուեցան օրեր, շարաթներ միս մինակ պատասպարուիլ Տաւրոսի սառնամանիքներու տակ կամ ամայի քարանձաւներու մէջ, ոմանք գիւղացի ձեւացած ու միշտ մտահոգ այս կամ այն գիւղի մութ մարագին մէջ պահուեցան, ոմանք ալ այնպիսի արկածներ ունեցան, որոնք կրնան հատորներ եւ առասպելական հեքիաթներ ըլլալ: Այս կարգի արկածներ ունեցաւ Գէորգ Զաւուշ, Մշոյ աշխարհի մէջ: Ըստ Գէորգի որոշման, ծրագրուած էր որ Ֆետային ձմեռը կռուէն խուսափի, բայց կառավարութիւնը ընդհակառակն կռիւ կը փնտռէր: Անոր զօրքերը ձիւն ու բուքին ինկած են Դաշտ եւ Գէորգը կ'որոնեն: Ձիւնը թանձր է, ձին անկարող է շարժելու, որպէսզի Գէորգ կարողանայ իր հետքը կորսնցնել, երկար ճանապարհներով: Քանի մը ան-



Գրգուռ լեռը

գամ հազիւ կը յաջողի մահուընէ ազատիլ եւ զօրքի ցանցէն դուրս գալ, խիստ բուքէն օգտուելով: Գիշերուան բուքն ու բորանը թէեւ կրցան օգնել Գէորգին, բայց թշնամի էին իրենց սաստկութեամբ ու խստութեամբ: Փեթարայ Մանուկի ոտքերը կը սառին իսկ Գէորգ կը հիւանդանայ, հազիւ ինքզինք կը ձգէ Գլակայ սարերը եւ Ս. Կարապետի լեռները: Գէորգ Չաւուշ հիւանդ էր եւ որեւէ հնարաւորութիւն չունէր ապաստանելու որեւէ գիւղ, քանի որ ամէնուրեք զօրք լեցուած էր:

Քանի մը օր հիւանդ լեռներու ու ձիւներու մէջ մնալէ ետք, ուժասպառ կ'ըլլայ, եւ լուր կ'ուղարկէ Ս. Կարապետի վանք վանահայր Վարդան Վարդապետին եւ իր վիճակի մասին կ'իմացնէ, թէ անկարող է նոյնիսկ տեղէն շարժելու: Ան ալ իր կարգին կ'իմացնէ, թէ վանքը շրջապատուած է չորս կողմէ կառավարական զօրքերով, որոնք կը հսկեն գիշեր ու ցերեկ, իսկ վանքին մէջ կան 100-150 թիւրք զինուորներ, իրենց սպաներով, որոնք վանքը դարձուցած են բերդ մը, ուրկէ գիշեր ցերեկ կը հսկեն, Փետայիներ որոնելով:

«Սբ. Կարապետի վանահայրն է Վարդան Վարդապետ, որ միաժամանակ մեր մարմնի անդամն է, եւ Սասնոյ Գոմք գիւղաց Ստեփան Վարդապետ: Ասոնց է, որ կը դիմէ Գէորգ, հաց կ'ուզէ ուտելու համար, միջոց կը խնդրէ ազատելու՝ սառելու կամ սպաննուելու վտանգէն: Ստեփան Վարդապետն է, որ նամակ կը հասցնէ Գէորգին, կ'ուղարկէ տաք շորեր եւ ուտելիք, միաժամանակ կը հասկցնէ, որ Գէորգին ազատում չկայ, եթէ յանդուգն քայլ մը չընէ, որմէ թերեւս ինքը եւ վանքը կործանին, բայց «երբ սուրբը պիտի կործանի, վանքը ինչո՞ւ համար է»: Ստեփան Վարդապետ խորհուրդ կու տայ Գէորգին գողունի վանք մտնել եւ վանք մտնելու համար միջոցներ կը թելադրէ:

Գէորգի բախտը կը բանի, սաստիկ բուք է. պահակը տանիքի գլխուն հազիւ կարող է աչքերը բանալ քամիէն, ոչինչ կրնայ նկատել:

Գէորգ ինքզինք պատին տակ կը հասցնէ: Երկար կը փնտռէ պատրաստուած պարանը, հազիւ կը գտնէ, բայց ցուրտ է, ձեռքերը չեն բռներ, ոյժ ալ չունի վեր ելլելու: Պարանը կը քաշէ, կը շարժէ, ի դուր, մարդ չի պատասխաներ, ձիւնի գնդակ կը զարնէ բարձր պարիսպի պատուհանին, որ վերջապէս կը բացուի: Ստեփան Վարդապետ վերէն կը քաշէ եւ Գէորգը կը մտնէ իր մենակեաց խուցէն ներս:

Գէորգ Ս. Կարապետի մէջն է, իր մանկական օրօրանը, բայց զօրքերու մէջ, որոնք զինք բռնելու համար աշխարհը իրար կ'անցընեն: Ինչ որ ալ ըլլայ, աւելի լաւ է վանքի մէջ մեռնիլ, քան սառիլ ցուրտէն ու բուքէն:

Գէորգ մէկ ամիսէն աւելի կը մնայ վարդապետի խուցէն բացուող դերեզմանատան պահարանին մէջ, կամաց-կամաց կը կազդուրուի: Ոչ ոք գիտէր գաղտնիքը, նոյնիսկ Վարդան Վարդապետը, որ ի դուր Գէորգը կ'որոնէր հեռու տեղերը: Շաբաթներ ետք միայն, երբ Գէորգ կազդուրուած է, Վարդան Վարդապետ կը մտնէ խուցը եւ յանկարծակի երկինքէն ինկածի նման իր առջեւ կը գտնէ Գէորգ Չաւուշը: Գէորգ երկար կը մնայ, երբեմն դաւեշտական պատահարներ կը լինին: Յաճախ չարածճիւղիւններ կ'ընէ վախցնելու կամ շիշ մը գոնեակ վաստկելու համար: Այս բոլորը արժէր որ իրենք պատմէին, բայց աւա՛ղ, չկան ամէնքն ալ»:(*)

Գարնան սկիզբները Գէորգ կը թողու Ս. Կարապետի վանքը ու կ'անցնի դէպի Փեթարի կողմերը, երբ Ռուբէն եւս նոր դուրս եկած էր Մշոյ թաքստոցներէն եւ իրար կը գտնեն Փեթարի սարը՝ Տաւրոսի լանջին: Անկէ ետք կը սկսին երեւալ փոքր խումբերը հոն՝ ուր ժամադրուած էին: Բոլորն ալ ուրախ էին եւ զուարթ, իրենց քանի մը ամսուան բաժանումէ ետք կարծես հարազատներն իրարու կը միանան, բոլորն ալ իրենց հետ ունին գիւղի խումբերէն եւ կոմիտէներէն բազմաթիւ ծրարներ, զեկուցումներ, հաշիւներ, որոնք պէտք է կարգադրուին: «Այս բոլորէն կը տեսնուի, — կ'ըսէ Ռուբէն, — որ ամէնուրեք գործերը կ'ընթանան մեր գծած ուղղութեամբ եւ կան շատ մխիթարական երեւոյթներ ժողովրդական միութեան եւ կազմակերպման տեսակէտէ»:

Մակարի եւ Գէորգի միջեւ կային փոքր տարակարծութիւններ: Սպաղանաց Մակար քանի մը անգամ ընկերներուն եւ նոյնիսկ գիւղացիներուն պարզած է յեղափոխականներու վարքը, գտած էր որ պէտք չէ հետեւիլ Գէորգի օրինակին, այլ Գուրգէնի կամ Հրայրի, իսկ իրեն համար Գէորգի նման ժողովրդական հերոսները հերոսներ չէին. իրեն համար իսկական հերոսները Հրայրները, Վահանները, Տա-

(*) Ռուբէն «Հայ Յեղփ. մը յիշատակները» 4-րդ հատոր էջ 138—139:

մատեաններն էին, որոնք գործը ամբողջ ծաւալովը կ'ըմբռնէին եւ ուղղութիւն կու տային: Վիրաւորելով Գէորգը, «էշխիա» անուանած էր զինք եւ աւելցուցած, որ ինքն ալ «էշխիա» կը լինէր, եթէ Գուրգէնի հոգին չառաջնորդէր զինք: «Արդար էին ընկերներէն, — կ'ըսէ Ռուբէն, — եւ կոմիտէներէն ոմանք, որոնք կը պահանջէին վերջ տալ նման արարքներուն. ոմանք վիրաւորուած էին, ոմանք պատիւ կը պահանջէին: Կարելի չէր խնդիրը առկախ թողուլ եւ թոյլ տալ, որ վէրքը հոտի, ուստի կը մտածեմ հարցը բանալ երես առ երես:

Երբ բոլորս հաւաքուած ենք Կուռտըկի լանջին Ամրէի Գալու փէշերուն, երբ բոլոր Փետայիները ուրախ զուարթ են եւ նոյնիսկ Գէորգ ու Մակար կատակներ կ'ընեն իրարու, պատեհ առիթը կը համարեմ վէրքը բանալ: «Նստեցէք ամէնքդ, կարելոր հարց ունիմ ըսելիք», կը հրամայեմ, եւ բոլորովին անսպասելի կերպով՝ առանց նախարանի կը դառնամ Մակարին. «Ո՞վ է էշխիա մեր մէջ նստածներէն, եւ դու Աւրանում էշխիա անուանա՞ծ ես մեզմէ ոեւէ մէկը»:

Հարցս շատ փափուկ եւ վտանգաւոր էր, բոլորը սառն երկաթի դէմք առին, աչքերնին սեւեռած գետին կամ Մակարի ու Գէորգի երեսին: Գէորգը անհանգիստ շարժում մը ըրաւ եւ համրիչը արագ արագ քաշեց, Մակարը լուռ մնաց քանի մը վայրկեան, խոշոր աչքերը արիւնով լեցուած ուղղեց աչքերուս, կարծես զիս պիտի լափէր, ու համարձակօրէն ըսաւ. «Պարոն, սրտիս եկածը ասած եմ Աւրանում, Յրօնքում եւ Սուլուխում. ասած եմ թէ Գեւոն յեղափոխութեան անունը բարձր չի պահի, որ նա էշխիա է: Հարցու իրանից, հըմլա չէ՞. ես մեղաւոր եմ որ նա Գուրգիկ չէ»: Գէորգ անհանգիստ՝ քիչ կը մնայ որ պայթի. չոր հարց կու տայ. «Մակար, պիտի ասես ամէնքի առջեւ՝ իմ ի՞նչ գործ էշխիական ես տեսել. պիտ ապացուցանես, կամ քու գլուխդ, կամ իմս պիտ գնայ»:

Մակար չտաքցաւ. մտածեց, մտածեց եւ փաստը գտաւ. «Գէւորգ, Գէորգ, թէ որ կը բարկանաս, ապա ինչո՞ւ դու մեր ուխտը խախտեցիր. ինչո՞ւ դու օրէնքին հակառակ կնիկ առար ու ամուսնացար: Դու չէի՞ր մէկը, որ Սերօբի դէմ կը բողոքէիր, կ'ասէիր անոր՝ Սօսէն թողնելու ես, Փետայութիւն ճիճ ու կնիկ չի ղըբըլի (չ'ընդունիր): Հօրի՞ էխսոյին ճամբախ չես դնի իր մէրանց տունը»: Երբ հարց տուի Մակարին, թէ ա՞յդ է միակ պատճառը իր հակառակութեան, ան պատասխանեց. «Ի՞նչ պիտի լինի ուրիշ. խօմ չեղած բան չպիտի գտնեմ. եղածը միշտ դիտել եմ ու պիտի բողոքեմ»:

Որքան որ Մակարը հանգիստ էր: Գէորգ լցուած էր կատաղութեամբ. վտանգաւոր շարժումներ կ'ընէր ու խանչալի կոթը կը սեղմէր: «Այ դու խըռըֆուկ. հոգի հանեցիր, իմ կինս է էխսոն, Վարդգէսի մայրը. կ'ուզես որ անոնց մորթեմ սպաննե՞մ»:

Գէորգ փոխուած էր, ծունկի էր չոքած, խանչալը հանած, դէմքը կատարեալ վագրի նման. ուղղակի ահռելի էր: Բոլորս ալ


սմբած ենք, Մակարը շփոթուած է. «Ախօ, Ախօ, ձգուկ, ձգուկ, ատրրճանս տուր», պոռաց նստած տեղէն եւ ոտքի ելաւ, կուրծքը դէմ դրաւ Գէորգի խանչալին ու ըսաւ. «Գեւօ, հարամ դու Գեւօ, ինձ զարկ, զարկ հանդստացիր»:

Գէորգ խանչալը Մակարի կուրծքը չմխեց, ամուր նետեց խոտերու մէջ եւ հեռացաւ յուզուած: Մակար հետեւեցաւ անոր՝ «դիւահար եղար, ձգուկ իմ Գեւօ» ըսելով: Մակար իրաւունք ունէր զիջելու, մտահոգուելու: Ան գիտէր, որ եթէ Գէորգ անկարող էր ընկերասպան լինել, կարող էր երթալ եւ իր կինն ու երախան սպաննել, ինչպէս սպաննած էր իր հօրեղբայրը Սերոբ փաշայի անտաքտութեան պատճառով:

Երկու վաղեմի ընկերներ, առանձնացած իրար կը յանդիմանէին: «Անաստուած Մակար» բացազանչութիւնը կը լսուի Գէորգի բերնէն. «Վարդգէսը իմն է. էխսոն իմ նամուսն է» կը լսուի ձայնը ծերունի Մակարի: Մենք թեթեւցած ենք: Այժմ սկսած է կատակերգութիւնը: Ֆետայիները զուսպ են, խորոված կը շինեն եւ իրարու կողքին նստած Գէորգն ու Մակարը կը դիտեն: Մուկունաց Ղազարը բաժակ մը օղի կը հրամցնէ քեռի Մակարին. իսկ անդին Ֆրանք Սահակը, որը շատ կատակասէր էր, կը դառնայ Մշոյ Տիգրանին՝ «Ատա

Պուլէ Մնոյի հայ-քրտական խումբը: Ոտքի՝ ձախէն աջ (1) Ասլան: (2) Հաջի Լեւոն, միւս երեքը ֆիւրտեր են. վարի շարքը՝ ձախէն աջ (1) Բիճա Խեչօ, (2) Պուլէի Մնօ, (3) Պասեցի Զուլումաթ, (4) Մուկացի Գրիգոր:





(1) Խմբապետ Մկրտիչ Պոլոյեան, (2) Խմբ. Սեպուհ,

(3) Մոկացի Գրիգոր:

(Սասունէն վերադարձին նկարուած Սալմաստ, 1904-ի ամառը):

ձգուկ, ձգուկ, ատրճանս»: Ֆետայիները կուշտ կը խնդան, կը ժրպտայ Գէորգ, ուրախ է նաեւ Մակար, որ կը պոռայ. «Այ պոչը կտրած Փրանկ»: «Պոչդ պինդ բռնէ, այ քեռի Մակար», կը պատասխանէ Սահակ ու կ'ուզէ փախչիլ, բայց ճոկանի հարուած մը կ'ընդունի Մակարէն: Արդէն բոլորն ալ կը կատակեն, վերջը կը բռնենք պար բոլորս միասին, կ'երգենք ու շամփուր կ'ուտենք: Պարի գլուխն է քեռի Մակարը, որ «ղաղրեցայ ձգուկ» կը կանչէ. «ատրճանս» կը պատասխանեն միւսները: Խնդիրը կը փակուի, քէն ու ոխ չի մնար եւ ամէն թիւրիմացութիւնը կը փարատի»: (*)

Գէորգի աշխատանքներով, սուրհանդակային յարաբերութիւնները շատ սերտ էին Կարսի շրջանի միջոցաւ Անդրկովկասի Կ. Կոմիտէին հետ: Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոն լսելով Սասունի կռիւներու մանաւանդ Գէորգ Չաւուչի անհաւատալի կռիւներուն մասին, աւելի մօտէն սկսաւ հետեւիլ անոր գործունէութեան. իրենց ուղարկած նամակները առհասարակ կը գրէր ԲԺԻՂ Համօ Օհանջանեանը. անոնց մեծ մասը կը զրկուէր Գէորգի անունով, իսկ մնացածը Ռուբէն Տէր Մինասեանին:

Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոն իր ուղարկած վերջին նամակին

(*) Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը Յիշատակները» Դ. հատոր, էջ 141-143:

մէջ կը տեղակայցնէ, թէ Չորրորդ Ընդհանուր Ժողովը(*) պիտի դու-
մարուի 1907 թ. Փետրուար եւ Ապրիլին Վիեննայի մէջ: Նկատի ու-
նենալով Միհրանական(**) շարժումը եւ ծրագրի փոփոխման խնդի-
րը, կարեւոր կը դտնէին որ Դուրան-Բարձրաւանդակի շրջանէն զրկեն
յայտնի եւ կեղրոնական դէմքեր: Եւ իրաւունք տուած էին չորս պատ-
դամաւորներ ուղարկելու:

Գէորգ Զաւուշ, Ռուբէնի հետ համախորհուրդ կը կանչէ Կ.
Կոմիտէի ընկերները ժողովի մը՝ Փեթարի սարին վրայ եւ կ'իմացնէ
Բիւրոյի գրած նամակի մասին: Ժողովը կ'որոշէ երեք պատգամաւոր-
ներ ուղարկել ընդհանուր ժողովին: Գէորգ կ'ուղէր Ընդհանուր Ժողո-
վին մասնակցէին Գեղամ Տէր Կարապետեան (Տատրակ), Վարդան
Վարդապետը եւ Ռուբէնը: Նկատի ունենալով, որ Գեղամ եւ Վարդան
Վարդապետ, - որոնք երկար ժամանակ ժողովուրդի աչքէն պիտի հե-
ռանան, - կրնան կասկածի ենթարկուիլ, կամ իրենց վերադառնալով
պիտի ստիպուին փախստականի կեանք առնել, ինչ որ բնաւ ցանկալի
չէր, կը ստիպուին երկու հոգի ուղարկել մէկը Գէորգը իսկ միւսը
Ռուբէնը:

«Քրիստոնեայ Տարօնի համար հասել էր 1907-ի դարուներ: Գե-
տինը սեւացել էր, ճանապարհները՝ բացուել, - կ'ըսէ Մարալ:

Մասնաւոր նամակով կանչուել էր Փիլոսը, որ եկաւ ու կեղրո-
նացանք Սուրբ Կարապետի վերի փական (ազարակը), ուր Սուրբ
Սարգիս անունով մի փոքրիկ մատուռ կար:

Ամէնքս հաւաքուել էինք՝ Գէորգը, Ռուբէնը, ես, Փիլոսը,
Մակարը, Գալէն եւ ուրիշներ:

Կիրակիի առիթով խօսք եղաւ պատարագ մատուցանել, հաղորդ-
ուիլ: Ես էլ մէջ ընկայ թէ՛ «երգել դիտեմ»: Պատարագ մատուցինք,
երգեցի, ջերմեռանդօրէն հաղորդուեցի ես, ապա տղաքը, առանց
հասկանալու դրա յետին նպատակը:

Բաղլուի սրբազան ծառի վրայից կաշաղակը վար բերածս օրից
այս կողմ, առանց իմ դիտութեան, ինձ յայտարարել էին «անաստ-

(*) Այդ ժողովին մէջ որոշուեցաւ քրքահայ դատի հետ միացնել նաեւ ու-
սահայ դատը եւ ընդունուեցան ընկերվարութիւն, իբրեւ գործնական նպատակ:
Մշակուեցաւ նոր ծրագիր մը: Որոշուեցաւ մասնակցիլ Պարսկաստանի յեղափոխա-
կան շարժման, ինչպէս նաեւ համագործակցութիւն՝ Օսմանեան ընդիմադիր տար-
րերու հետ:

(**) Միհրանական շարժումի պարագլուխը Միհրանն էր, (Համբարձում Առա-
քելեան) եւ ծանօթ էր Գէորգ Զաւուշին, առանձին նամակներ կը գրէր Գէորգին եւ
գրած նամակներուն մէջ կը շեշտէր որ Բիւրոն Տանկահայութիւնը երեսի վրայ կը
բողոք եւ ընկերվարական գաղափարները խոչընդոտ կը հանդիսանան Հայկական
Հարցի լուծման: Գէորգ կը պատասխանէ թէ ինք «բոստանի տղայ» է եւ խափիք
քագրանցի ֆրտերուն կ'ըսէ, թէ Տանկահայ դատը բնաւ չի վնասուիր նախագծէն
եւ վերջապէս էջմիածինը նոյնիսկ Հայաստան է, որքան Սր. Կարապետը:



1894-ի ազատուած ընտանիքներէն մէկը
Լուսանկարը առնուած է՝ JOSIAH STRONG Ի

«TO THE MEMORY OF THE VICTIMS OF THE SASSOUN MASSACRE»
գիրքէն, էջ 120, տպուած Նիւ Եորք Մարտ 1, 1895-ին

ուած» : Ռուբէնը ժամանակին պայքարել էր դրա դէմ եւ, որպէս ապացոյց, ահա տեղի էր ունենում Սուրբ Պատարագը : Ես հաւատաւոր մարդու պէս աղօթում էի, երգում, հաղորդւում : Այս թակարդն էլ «փուստ անցաւ», մէջը չընկանք :

Բանից երեւաց, որ այդ հաւաքոյթի օրակարգի խնդիրներին մէկը իմ հաւատքն է եղել ու պատարագը : Երկրորդը՝ քիւրտ-Ֆետայական յարաբերութիւնները :

Փիլոսը այդ առթիւ բացատրում էր մեզ Հասնանցի Էմին փաշայի քրոջ որդի Կուլի բէկի եւ Սիպկոց Մամադ բէկի հետ սկսած իր յաջող յարաբերութիւնների բոլոր փուլերը եւ պնդում էր, որ պէտք է եւ ժամանակն է գործնական քայլեր առնել : Մանազկերտում, նրանց հետ խնդրի յաջող կարգադրութիւնից յետոյ, կարելի էր մի նոր գիծ ունենալ՝ Կաղզուան-Մանազկերտ-Խնուս-Մուշ :

Երրորդ խնդիրը Գէորգի Կովկաս գնալն էր :

Ժողովը յոյս ունէր, որ Գէորգը, Կովկաս գնալով, Դուրան-Բարձրաւանդակի համար պիտի կարենար կլորիկ մի դումար ապահովել, ռազմամթերքի պարբերական փոխադրութեան զարկ տալ, մի րան, որ ամբողջապէս կլանում էր Վանը :

Տրուած որոշումների գործադրութեան համար պէտք էր, որ

«Փիլոսը եւ ես զնայինք Խնուս, ցերեկով, Ս. Կարապետի կարաւանի հետ, որպէս ջորեպաններ, ջորեպանի տարազով: Այնտեղ, Գէորգի ճամբորդութեան համար պէտք է պատրաստէինք ամէն ինչ, որպէսզի Գէորգը, առանց ժամանակ կորցնելու, անցնէր Գորայներ կոչուող գծով: Գէորգի անցնելուց յետոյ, Փիլոսը պէտք է անցնէր Մանազկերտ՝ Հասնանցի Կուլի բէկի եւ Սիպկցի Մամադ բէկի հետ սկսած խնդիրը կարգադրելու եւ Կաղզուանի վրայով գիծ ստեղծելու: Ես, Փիլոսի հեռանալուց յետոյ, պիտի անցնէի Կարին՝ տեղական մարմնի տրամադրութեան տակ աշխատելու»:

Սկզբունքով ընդունուեցաւ.

«Երկիրը մի առժամանակ խաղաղ գործունէութեան մէջ պահելը»: Հետեւապէս, շրջող հայդուկների թիւը պէտք է պակսեցուէր՝ Կովկաս ղրկելով: Ուրեմն, խնդիրը ճիշդ այդ ձեւի տակ մտցնելու մտք պէտք էր սկսել մեզնից: «Առաջ եւ առաջ Կովկասից դեռ եւս նոր եկած ընկերները պէտք է հեռանային»: Նրանից յետոյ էլ Աստուած ողորմած էր. կարող էր մի դէպք պատահել եւ Գէորգի Կովկաս անցնելու խնդիրը մոռցուիլ:

Գէորգ պիտի մեկնէր Խնուս-Կարս գծով, իսկ Ռուբէն՝ Վան-Երեւան գծով: Իրենց բացակայութեան ժամանակ պիտի ղեկավարէր Փիլոսը, որ նոր եկած էր Խնուսէն: Տրուեցաւ յանձնարարական մը Անդրանիկի կամ Մուրատի անունով, թէ եթէ Գէորգ Չաւուշ կամ Ռուբէն չկրնան հասնիլ ընդհ. ժողովին անոնք ըլլան Սասունի եւ Տարօնի ներկայացուցիչները:

Նախ քան անոնց մեկնիլը, պէտք էր շրջագայէին բոլոր շրջանները եւ կարեւոր հրահանգներ տալէ ետք մեկնէին արտասահման:

Ապրիլ ամսուան վերջերն էր, Սասնոյ լանջերէն (Փեթարի կողմէ) Գէորգ եւ Ռուբէն իրենց ընտրովի Փետայիներով մօտ 80 հոգի կ'իջնեն դէպի Մշոյ դաշտի կողմերը: Արագ կը քալեն ամէնքն ալ. կը ցատկեն անդունդներու վրայէն, լուռ ու անխօս դէպի վար կ'իջնեն: Առջեւէն կ'երթան յառաջապահները, ամենէն սրատես, ամենէն քաջ. խումբը կը հասնի Քարձորի մօտ, Գէորգ Չաւուշ դառնալով կ'ըսէ Ռուբէնին. «Ինչ որ էլ ըլլայ, ձիաւոր պիտի դառնանք, մեռնիլ եւ չըտեսնել կայ Մշոյ աշխարհը, ձիաւոր դառնանք», իսկ դառնալով Մանուկի կ'ըսէ. —

«Մանուկ, առ տասնեակդ եւ մտիր Քարձոր, մենք ձեզ այստեղ կը սպասենք, Ալմանցի Ֆայաթ քիւրտ բէկի մօտ շատ ձիեր կան, հայերը նոյնպէս ունին բայց աւելի քիչ է անոնցը: Կ'ըսես — Գէորգը՝ այս բոպէիս ձիերու պէտք ունի երկու շաբթուան համար, կէս ժամէն այստեղ պէտք է ըլլաք ձիերով մէկտեղ»:

Մանուկը իր տասը ընկերներով կը մտնէ գիւղ եւ կէս ժամ վերջ ետ կը վերադառնայ ձիաւոր ընկերներու հետ: Շուտով կը հասնին քիւրտերը իրարու ետեւէ. նաեւ հայերը. ու ահա բէկն ալ կու դայ արդէն 40-էն աւելի ձիեր բերած էին: Գէորգ Չաւուշ ներողութիւն կը

խնդրէ գիշերուայ այս ժամուն նեղութիւն տալուն համար. «Ապահով ըլլաք ձեր ձիերու համար, մօտ 10 օրէն ձեզ կը վերադարձնեմ անվնաս, ձիերու վարձքը նախօրօք կու տամ», կ'ըսէ բէկին: Կը հանէ 30 ոսկի կու տայ Ֆայաթ բէկին, որը կը մերժէ ընդունիլ. «Դուք որ ձեր կեանքը կը դնէք, մենք էլ պէտք է ձեզի օգնական ըլլանք»: «Թէ որ այդպէս է, կ'ըսէ Գէորգ, 10 ոսկին աղքատներուն բաժնեցէք. թող աղօթեն որ թախթը փլի զուլում հիւքմաթին»: Յետոյ մեծ մասով կը նստին ձիերը, իսկ երիտասարդները ոտաւոր կը քալեն. ու արշալոյսին կը հասնին Սբ. Յովհաննու լերան անտառները:



ՍԱՍՈՒՆՑԻ

ՄԱՆՈՒԿ

«Շրջակայ գիւղերէն տասնով քսանով մեզ տեսութեան կու դայ — կ'ըսէ Ռուբէն իր յուշերու մէջ — անտառը ջրի ճամբայ է դարձած ու հարիւրաւոր մարդիկ եկած են, իւրաքանչիւրը գործով մը: Մէկը խուրջինը կը քանդէ եւ օղի կը հանէ, եկած է պարզ տեսութեան. միւսը խոյ մըն է բերած Ֆետայիներուն մատղելու համար, ուրիշ մը թուղթի ծրարներ կը յանձնէ: Կանայք, ջահել ու պառաւ, եկած են մեզ մօտ դատ ու դատաստանի համար: Երիտասարդներ եկած են խմբի գործերով, չափահասներ գիւղի գործերով: Ամէն մէկը

ցաւ մը, խնդիր մը ունի: Կեանքը կ'եռայ անտառին մէջ, երեկոյեան օճախները կը բոցավառին եւ խորովածի հոտը աշխարհ կը բռնէ, ձիեր կը խրխնջեն, կ'ոստոստեն. Ֆետայիները կը խօսին ժողովուրդի հետ, կը խնդան, կը բարկանան, իսկ մութը չիջած կը բռնեն կլոր պարը կամ կը խաղան «Թուր ու մառթալ»ը: Գեղեցիկ է Ֆետայիի կեանքը անտառին մէջ Տարօնի քաջ, հպարտ ու պարզ ժողովրդեան հետ:

«Բայց Տարօնի աշխարհը վտանգներով լիքն է: Ահա Մուշէն եկած են նամակներ, թուանշաններով գրուած: Տատրակն է (Գեղամ Տէր Կարապետեան), որ ըստ սովորականին կը սկսի. «Ի սէր Աստուծոյ հեռացէք, մատնուած է ձեր վայրը, զօրքը շարժուեցաւ պաշարելու ձեզ. խղճա կեանքիդ, մեր գործին ու ժողովրդեան, եւն.»: Կուտամ նամակը Գէորգին: Գէորգ կարգալէ ետք կ'ըսէ ինձ. «Ժանդոտանք, արի՛, զօրքերու գլխին մի օյին խաղանք»: «Սաղանք» կը պատասխանեմ:


«Սուրհանդակներէն կը տեղեկանանք, որ զօրքը արշալոյսին պիտի պաշարէ մեզ: Կը հրամայենք ժողովրդեան իսկոյն հեռանալ մեր մօտէն ու կը յայտնենք, որ շուտով կուիւ պիտի ունենանք: Ոմանք յուզուած՝ կ'ուզեն մեր մօտ մնալ, ոմանք ալ աչքերը արցունքով ու աղօթելով կը հեռանան: Երբ մինակ Ֆետայիներս ենք մնացած, կը սկսի արագ աշխատանք, մոխիրը, հետքերը, ամէն ինչ կը թաղենք հողի եւ տերեւներու տակ, անտառի մէջ բացուած ճամբաները կը կորսրնցնենք ծառի ճիւղերով: Մանուկը կը ճամբենք նախօրօք Ղըզըլազաճ գիւղը 20-ի չափ տիկ բերելու համար:

«Կէս գիշերը չանցած Գէորգը իր ձիու սանձը կը բռնէ եւ բոլորս կը շարուինք անոր ետեւէն մէկ մէկ: Յետոյ կ'իջնենք զառիթափով Ղըզըլազաճի գետի սէլաֆի դըճերուն վրայ (հեղեղի մանր քար, խիճ): Մեր եկած հետքը նորէն կը ծածկենք տերեւներով: Երկար ժամանակ ջրի եւ քարերու մէջէն վար կ'իջնենք գետի հոսանքով: Թշնամին պիտի չհասկնայ, թէ ո՛ր ուղղութեամբ հեռացած ենք:

«Մէկ ժամէն աւելի է կը յառաջանանք դէպի դաշտ, թէեւ դժուար ու դանդաղ է 60-է աւելի ձիերու այս քալուածքը: Մեր թըշնամին պարզ պիտի տեսնէ ձիերու հետքերը անտառը մտած, բայց անոնց ելքը պիտի չգտնէ: Պիտի կարծէ թէ անտառին մէջ ենք կամ Եղիա մարգարէին նման երկինք թռած:

«Երբ կը հասնինք այն մեծ ճամբան, որ գետը կտրելով դէպի Շէյխլան կ'ուղղուի, դուրս կու գանք գետի հունէն եւ կ'իյնանք այդ ճամբան: Կ'անցնինք Շէյխլանը, կ'արագացնենք ձիերը եւ արշալոյս չեղած կ'իջեւանինք Քիւրտմէյտան հայ գիւղը:

«Այդ փոքրիկ գիւղը իրար է անցած, խնդրէն անտեղեակ՝ ուրախ գուարթ մեզ կը դիմաւորեն, գիւղի ազան դուրս է եկած մեզ կը հրաւիրէ, իսկ ձիերուն դարման ու գարի կը հրամցնեն առանց թամբերը հանելու: Գէորգ 40-ի չափ Ֆետայիներով կ'երթայ քնանալու, ես պահակութիւն կ'ընեմ 20-ի չափ ընկերներով: Արշալոյս է, դիւ-



Սրբ. Յովհաննու վանքը Աստուածածնայ մատուռը :
Աւանդութեան համաձայն, արիւնարբու Շահ Աբբաս խնայեց միայն
այն հայերը, որոնք ապաստանեցան մատուռներու մէջ,
որոնցմէ է նաեւ այս մէկը :

դացիներուն կը պատուիրեմ, որ հանգիստ իրենց գործերուն նային,
բայց զիւղէն ոչ ոք պիտի հեռանայ մինչեւ երեկոյ :

«Արեւը իջնելուն՝ դիտակով կը տեսնեմ, որ մեր երէկուան ի-
ջեւանած վայրի մօտերը խումբերով մարդիկ կան, ձիեր կը վազեն
լեռներու վրայ, դիրքեր են բռնած պուրակի շուրջ : Շուտով կը լսենք
հրացանի ձայներ, փողեր կը փչեն : Երկու ժամ յետոյ Գէորգը հան-
դրատացած ելաւ քունէն, կը դիտենք միասին զօրքին շարժումները :
Ահա սաստիկ հրացանաձգութիւն, միթրայոզներ կ'աշխատին եռան-
դով : «էդ անաստուածները ծառերը զրմէն փճացուցին, — հանգիստ
խօսեցաւ Գէորգ, — շատուոր են շներ : Մի սխալ արինք, վախէն կը
կրակեն, կը վախնան անտառը մտնել, թէ որ մի քսան հողի անտա-
ռում թողած լինէինք, երեկոյեան աւանակներին ծոծրակէն կը հաս-
ցընէինք» : Մինչեւ կէսօր հրացանաձգութիւնը կը շարունակուի : Զօր-
քը կը կրակէր անտառին վրայ, որ լուսթեամբ կը պատասխանէր .

«Հրացանաձգութիւնը լռեց . «կ'երեւայ հասկցան, որ անտառէն
դուրս ենք եկած», ըսի Գէորգին, «էդպէս կ'երեւայ, դեռ երկու ժամ
էլ մեզի ժամանակ կայ, մինչեւ որ հասնին, զիչերն էլ կու գայ», պա-
տասխանեց ան : Բայց զիչեր չեղած ձիաւորներ երեւցան Շէյխլանի

կողմէն, անոնք հազիւ 4 քիլոմեթր հեռու են մեզմէ, հետեւակ դօրք չկայ, ան կը կրակէ անտառի վրայ, երեւի հեծելագօրքը դաշտ է ինկած ու մեզ կը փնտռէ: Երեւի մէկ ժամէն կուիւ պիտի լինի: Տանիքի գլխուն նստած Գէորգի հետ կը դիտենք ձիաւորներու շարժումները. շատ չեն անոնք, հազիւ 100 հոգի: Հետեւակէն ան կտրուած է մօտ 1-1,5 ժամով: «Արի այսօր բաց դաշտի վրայ մի օյին խաղանք սեւարաներու (հեծելագօրք) հետ», կ'ըսէ Գէորգ: Կը համաձայնիմ: «Դու վրագ քաշիր այդ ձիաւորները, ես յանկարծակի անոնց ետեւէն կ'անցնիմ», կը յարէ. կ'ընդունիմ այդ ծրագիրն ալ:

«Քիւրտմէյտան եւ Շէյխլան գիւղերը բաց դաշտի մէջ են Արածանիի ափին, իսկ Չանգոք գիւղը Տաւրոսի փէշին է գետէն բաւական հեռու եւ վերի երկու գիւղերուն հետ եռանկիւն կը կազմէ: Զիերը կը նստինք 25 հոգի եւ առաջ բաց դաշտ կ'իջնենք: Այնպէս կը շարժուինք, որ թիւրք գօրքը մեզ նկատէ, յետոյ կ'արշաւենք դէպի Չանգոք եւ ձիերու վրայէն կը կրակենք Շէյխլանէն դէպի Քիւրտմէյտան յառաջացող հեծելագօրքին վրայ: Տեսնելով մեզ, թշնամի հեծելագօրքը ճամբան կը փոխէ եւ, առանց Քիւրտմէյտան մտնելու, կ'արշաւէ մեր ետեւէն:

«Գէորգի ուղածն ալ այդ էր արդէն: Ան լուռ կը մնայ, մինչեւ որ թշնամին անցնի իր քթին տակէն: Մենք կրակելով սրարշաւ կ'երթանք դէպի Չանգոք: Երբ արդէն լերան փէշերուն մօտիկցած ենք եւ մօտ 5 քիլոմեթր հեռացած Գէորգէն, ահա Գէորգ մնացած տղաներով դուրս կու գայ գիւղէն եւ կ'անցնի թշնամիին թիկունքը: Ան կը բաժնէ այսպիսով հեծելագօրքը հետեւակէն, որը երեւի գլխի ինկած է, քանի որ ալ չի կրակեր անտառին վրայ:

«Մենք ձիերէն վար կ'իջնենք եւ ճակատ կը բռնենք դէպի մեզ արշաւող թշնամիին, Գէորգ ալ ետեւէն կը կրակէ: Թշնամին գլուխը կորսնցուցած ամէն մէկը կը սկսի փախչիլ գլուխը ազատելու համար: Մեզմէ միայն մէկ հոգի թեւէն վիրաւորուած էր, Գէորգի տղաներէն երկուքը ձիերն էին կորսնցուցած, իսկ թշնամին շատ կորուստ տուաւ, շատ դիակներ տեսանք ինկած գետին, իսկ շատ ձիեր ալ առանց հեծեալի կ'երթան կու գան»(*):

Փետայիները վիրաւոր տղաքը եւ կորսնցուցած ձիերը առնելով, հանգիստ կերպով կ'երթան դէպի Շէյխլան, անկից անցնելու ջուրի միւս ափը: Տիկերը կ'ուռեցնեն, ձիերու սանձը բերաններէն կը հանեն եւ կը մտնեն Արածանիի մէջ: Բոլորը ապահով կ'անցնին, բայց թրջուած: Ապահունիքի կողմէն հիւսիսէն հարաւ իջնելով կը թեքին Սուլուխի մօտէն ուղիղ կը մտնեն Ողանի բերդը:

«Գիշեր է, հանդարտ ու լուռ, — կ'ըսէ Ռուբէն: Զիերն են, որ Ֆոշտացնելով կ'արածին մեր շուրջ: Գետի միւս ափը թշնամին է, որ երբեմն աղմուկ կը հանէ: Կը հանգստանանք եւ կը կազդուրուինք:

(*) Ռուբէն «Հայ Յեղփ. մը յիշատակները» Գ. հատոր էջ 150-2:




Տալուրիկի «էգիտան» թաղի մէջ առտուն կանուխ իւղ կը հանեն, հեռուն՝ նախկին թրփական գորանոցի փլատակները, ուր ապաստանած են հայ ընտանիքներ:

Գալէն հաստ չիբուխով կը ծխէ եւ լուռթիւնը խղելով կ'ըսէ մեզի. «Բաս է (բաւական է), հուտա մի նստինք, առաւօտ ձէգին Փոթոնա կ'եղնի, անցնինք Մուրատ դետ, մէջքերս տանք Սասնոյ սարերին»: Գալէի հաշիւը ճիշդ էր, եթէ յաջողէինք աննկատելի անցնիլ Թշնամիին մէջէն: «Չէ», պատասխանեց Գէորգ, եւ կանչեց Աւրանայ Ներսոն ու Գոմսայ Քաշալ Աւետիսը եւ հարցուց. «Կուրաւայ զօրքը Սուլախայ կամուրջ գիշերը քանի՞ մարդով կը պահէ»: «Քիչ, երբեմն 10, երբեմն 2, խոր գիշերներին յաճախ կամուրջը բաց է», պատասխանեցին: «Թէ որ էդպէս է, հրամայեց Գէորգ, ձիերը նստէք, կամուրջը անցնինք եւ բաց դաշտ ընկնինք, քանի Թշնամին չէ խաբար հասցրած կուրաւայ զօրքին»:

Գէորգը կը հրամայէ ձիերը նստիլ եւ ուղիղ անցնիլ դէպի Սուլուխի կամուրջը, ուր երկու ժամէն արդէն կը հասնին: Կ'իջնեն ձիերէն, 10 հոգի կ'անցնի դէպի կամուրջը, սողալով դէպի գետի ափը կը հասնին կամուրջի աջ գլուխը, իսկ միւս մասը ձախ գլուխը: Շէնիկի ու Փեթարի Մանուկներն ու Ախոն անձայն կը ցատկեն այն փոսին վրայ, ուր թիւրք պահակները նստած էին, անակնկալի բերելով զինուորները, շուտով անոնց ձեռքերէն կ'առնեն զէնքերը ու կը հրամայեն

լուռ մնալ: Մանուկն ու Ախոն կը հասկնան այդ պահակներէն, որ մէկ ժամ ետք անոնք պիտի փոխուին: Ախոն կը կապէ անոնց ձեռքերը եւ կը տանի ու կը դըրէ Արածանիի ալիքներուն մէջ: Խումբը անվտանգ կ'անցնի կամուրջէն եւ կը հասնի Յունան գիւղը, ուր երկու մասի կը բաժնուի: Ռուբէն իր հետ կ'առնէ 20 հոգի ու կ'անցնի Սասնոյ լանջերը՝ Տերգեվանքի լեռը, իսկ Գէորգ Չաւուշ կ'անցնի Քրդագոմ՝ շրջելու համար Սոխակեան եւ Ուլասիս շրջանները, Նեմրութի ու Գրգուռի ստորոտները:

Գէորգի այս դործունէութիւնը աւելի կը դայրացնէ կառավարութիւնը: Հայ թէ թիւրք ժողովուրդը իմացած էր Գէորգի կատարած խաղը: Կառավարութիւնը կ'որոշէ պաշարել Սուրբ Կարապետի ամբողջ շրջանը եւ Եփրատ գետի եռանկեան մէջ բռնել Փետայիները: Գէորգ երբ կ'իմանայ, թէ զօրքը կեդրոնացած է Սր. Կարապետի շրջանը, շուտով իր ձիաւորներով կ'իջնէ Դաշտի կողմերը. կ'այցելէ հայ ու քիւրտ գիւղերը: Ի վերջոյ երբ կառավարութիւնը կը հասկնայ, թէ Գէորգ դաշտի կողմերն է, հոն եւս զօրք կ'ուղարկէ, եւ կ'ուզէ երկու կողմէ շղթայի մէջ առնել Գէորգը: Դրմերտ գիւղի մէջ Գէորգ կը հասկնայ, որ թիւրք զօրքը երկու կողմէ կ'ուզէ սեղմել զինք, եւ հեծելագօրք ճամբայ ելած է դէպի Դրմերտ: Երեկոյեան Գէորգ Չաւուշ դաշտ կ'ելլէ իր ձիաւորներով, դաշտին մէջ կը նկատէ Օրկնոցի կողմէ դուրս եկած հեծելագօրքը. զօրքն ալ կը նշմարէ, թէ մարդիկ կան գիւղը, Գէորգ եթէ ուզէր կրնար փախչիլ թշնամիին ձեռքէն, սակայն, ընդհակառակն գիշերով կը յարձակի անոնց վրայ տասնոց ատրճա-



Ս. Կարապետի ուխտաւոր կարախաղացը



Մշոյ Ս. Կարապետի վանքը քանդուած՝ 1915-ին

նակներով եւ ճամբայ բանալով կ'անցնի դէպի Յրօնք գիւղը, ապա ճամբան կը շեղէ եւ կ'անցնի Մառնիկի անտառին կողմը :

Թրքական զօրքը շուարած շարաթ մը կ'որոնէ անոր հետքը, դաշտ ու ձոր, գիւղ ու անտառ իրենց փնտռտուքները ապարդիւն կ'անցնին եւ կը ստիպուին իրենց տեղերը վերադառնալ :

Մինչեւ այդ օրերը հայ մայրերը իրենց երախաներուն կը սաստիկն յաճախ ըսելով .— «Սպասէ, հիմա քիւրտը կու դայ, քեզ քիւրտին պիտի տամ» : Երախաները սարսափեցնելու համար՝ այդքան բաւական էր :

Երբ Գէորգ Չաւուշի անունը կայծակի արագութեամբ կը տարածուի բովանդակ Սասունի եւ Տարօնի աշխարհը՝ լեղապատառ ընելով թիւրքն ու քիւրտը, այլեւս իր անունը միայն բաւական էր մղոններով հեռու քիւրտի ու թիւրքի երախաները սարսափեցնելու : Այս անգամ անոնց մայրերը կ'ըսեն երախաներուն «ձայնդ կտրէ, Գէորգ կու դայ» . սովորութիւն մը, որ մնաց երկար ժամանակ :

Աներեւոյթ ոյժ մըն էր, կամ եթէ կ'ուզէք, ժողովուրդի կոչումով, գերբնական էակ մը՝ որ անթիւ անգամ կռուի մէջ մտաւ : Շատ անգամ իր դամբանականը կարգացին բայց մեռած Գէորգը յարութիւն կ'առնէր երկրի այն մասին վրայ, ուր թիւրքը եւ քիւրտը զինուած՝ կը յարձակէին անգէն Հայու ինչքի, պատուի եւ կեանքի վրայ : Անկրցաւ իշխել ու սարսուռ ազդել, հայ դաւաճան եւ թիւրք շարադործները անխնայ եւ անխտիր պատժեց, շատ անգամ վայրագ բռնութեան ալիքը իր հունին մէջ խեղդեց, ամէն վտանգ աչք առաւ, կուրծք տը-

լաւ թուրին ու գնդակին, մէկ սկզբունք ընտրելով՝ զոհուիլ ճնշուած ու տառապած հայ ժողովուրդի բարիքին համար: Թշնամին երկիւղէն սարսափահար՝ դայն աներեւոյթ ողի մը նկատեց, գերբնական ոյժ, կամ աստուածային զօրութեամբ զրահապատ համարեց: Հազար ու մէկ քաջագործութեան շարքին շատ մըն ալ առասպելներ հիւսեցին անոր անուան շուրջ:

Հազիւ Գէորգ կրցած էր քանի մը օր հանդիստ ընել Մառնիկի անտառին մէջ, լուր կ'ուղարկէ Ռուբէնին, որ պէտք է Աշտիշատ (Դերէկ) գայ զինք տեսնելու՝ միասին արտասահման անցնելու մասին խորհրդակցելու համար: Բայց այս խնդիրը պէտք էր շատ դադանի ըլլայ:

«Գէորգ ինձի լուր զրկեց, — կ'ըսէ Ռուբէն, — որ մէկտեղուինք նորէն. ան ժամադրաւայր նշանակած էր Աշտիշատը (Դերէկ): Գէորգ կը յայտնէ նաեւ, որ մեկնելու ժամանակ էր: Մեր հանդիպումը պէտք է դադանի մնար, որպէսզի կառավարութիւնը չիմանար մեր ուղղութիւնը, իսկ հայ ժողովուրդն ալ չգիտնար, թէ մենք բացակայած ենք երկրէն:

«Տարօնի աշխարհէն գնալու համար նախ պէտք էր, որ ձիաւոր չըլլայինք, յետոյ անհրաժեշտ էր, որ քիչուոր ըլլայինք, որպէսզի մեր մեկնումը դադանի պահուէր: Ուստի մեզ հետ եղած Ֆետայիները թողուցինք լեռը՝ մեծերուն բացատրելով ամիսներու մեր բացակայութեան հաւանականութիւնը: Խեղճ Մակարը համրիչը արագ արագ կը քաշէր եւ շրթունքները կը կծէր բաժանման վայրկեանին չլալու համար: «Զգուկ, Մարաթուկ քեզ հետ», ըսաւ եւ աչքերը լեցուեցան: Բոլորին հետ համբուրուեցանք: Աւելի դիւրին էր եղբօրմէ բաժնուիլ, քան այդպիսի առիւծ ընկերներէ:

«Ես վերցուցի երկու ընկեր եւ ճամբայ ինկայ դէպի Յրօնք դիւղ, Ֆրանկ Սահակ մեր առաջնորդն էր: Ես յոգնեցայ ճամբան եւ խեղճ Սահակը երկար տեղ զիս ուսին տարաւ: Վերջապէս հասանք դիւղ, բաժնուեցանք Ֆրանկ Սահակէն (Ճիւլաղ) եւ ընկերներէն, անոնք պիտի վերադառնային Կռուածաղիկի շրջանը: Մնացի մինակ Յրօնքի մէջ, յոգնած էի, կարծես հիւանդ կը զգայի, մէջքս սաստիկ կը ցաւէր. անհրաժեշտ էր, որ ժամանակ մը հանգստանայի: Պատըսպարուեցայ Մանուշակի տունը, թոնրան վրայ քրտնցուցին զիս, շիշ մը օղի խմցուցին եւ պառկեցուցին:

«Գէորգ նոյնպէս ոտաւոր կը դառնայ եւ քանի մը ընկերներով կը հասնի Սուլուխ: Ան ինձի յայտնեց, որ Սուլուխէն կը մեկնի Դերէկ, ուր պիտի գան Խնուսէն եկող սուրհանդակները: Ես ալ կը շտապեմ Մայիս Տին հասնիլ Դերէկ: Այնտեղ կը տեսնուինք, վերջին անգամ կը խօսինք եւ իր մօտ եղած Վանի սուրհանդակ Ղարսայ Յակոյին եւ քիւրտ Հասանոյին առնելով պիտի վերադառնամ Վան:

«Այդ օրը Յրօնք են եկած Առվարինջի յայտնի Ֆետայի Սէյտօ Պօղոսը, Մշեցի Ռուբէնը, Յրօնքցի լաւ կռուողներ Էլոն, Խուչոն եւ




ՍԷՅՏՈ ՊՕՂՈՍ

Մխիկը : Կը վերցնեմ այդ հինգ կտրիճները եւ հետիտն ճամբայ կ'իյնանք դէպի Սուլուխ : Արշալոյսին կը հասնինք Սուլուխ, մեծ զարմանքով կը տեսնեմ, որ Գէորգ չէ մեկնած այդ դիւղէն դէպի Դերէկ : Ինծի դուր չեկաւ, որ Գէորգ երկու օր մնացեր էր այդ վտանգաւոր դիւղին մէջ եւ այսօր ցերեկն ալ պարտաւորուած պիտի մնայինք : Գէորգ զիս հանգստացուց . «Դու բան չես դիտէ, Խնուսի սուրհանդակները վաղը պիտի հասնին Դերէկ, երբ նախապէս մենք հոն լինէինք, պիտի վտանգուէին թէ՛ անոնք եւ թէ՛ մենք, հանգիստ դուքնէ, հէչ բանըմ էլ չկայ» :


Սուլուխ հայաբնակ գիւղը մօտ 100—120 տուն ունէր : Այնտեղ ծնած են շատ մը Ֆետայիներ , մէկը միւսէն աւելի կտրիճ : Սուլուխցիները անուս էին , բայց աստուածավախ , տարօրինակօրէն քաջ ու արկածախնդիր : Կամուրջին գլխուն վրայ նստած այս գիւղը սարսափ էր թիւրքի , քիւրտի եւ ոստիկաններու համար : Այս գիւղը էրզրում—Մուշ միակ խճուղիին վրայ կը գտնուի , այնպէս որ բոլոր ճամբաները կու գան կը միանան Սուլուխի կամուրջին : Այս պատճառաւ ալ այս փոքրիկ գիւղը միշտ լեցուած է ճամբորդներով , պաշտօնեաներով , զօրքերով , ոստիկաններով եւ լրտեսներով :

Սուլուխի մէջ ոչ մէկ կանաչութիւն կայ չոր եւ տափարակ գաշտի մէջ էր : Մուշէն , խճուղին մէկուկէս ժամէն կը հասնի Սուլուխ ու կամուրջը անցնելով կ'երթայ էրզրում : Գիւղէն 300 քայլ հեռուն է հինաւուրց կամուրջը , որ ունի բազմաթիւ կամարակապ աչքեր : Մուրատ գետը բաւական լայն է , այնքան որ մէկ ամիէն միւսը կարելի է մարդ տեսնել , բայց կարելի չէ ճանչնալ : Մուրատ գետը երբ դարնան բարձրանայ , գրեթէ անհնարին է լողալով անցնիլ : Միւս ամիին կուրաւուն գիւղն է , իսկ նոյն ամիին՝ Ախջանը , ուր միշտ թիւրք զօրքեր կը գտնուին :

Այդ առաւօտ կանուխ Գէորգ տունէն դուրս կ'ելլէ գիւղի փողոցները շրջելու , ինչ որ անսովոր էր , գիւղացիները զինք տեսնելով շատ կ'ուրախանան , յանկարծ իր դէմ կ'ելլէ գիւղի թիւրք աղաներէն



Առափելոց վանքի ուխտագնացութեան տեսարանը



Առաքելոց վանի, ուխտաւորները վանի մէջ :

մէկը , որ տեսնելով Գէորգին ամբողջ մարմնով կը սկսի դողալ եւ լեզուն կը բռնուի : Այս տեսնելով Գէորգ կը մօտենայ անոր կը հանդարտեցնէ զայն , ըսելով . «Կեանքիդ վտանգ չկայ , պայմանով որ իսկոյն ձեռք նստիս ու հեռանաս այս դիւղէն» : Աղան հեռանալէն ետք , Գէորգ կ'երթայ իր ընկերներու մօտ , ուր նստած կը խօսէին . Ռուբէն այն օր երազ մը տեսած էր ու դառնալով կը պատմէ Գէորգին . — «Երազիս մէջ տեսայ , որ Առաքելոց վանքն եմ , ուխտաւորներ այնքան եկած էին , որ վանքի բակը , շրջակայքը , սար ու ձոր մարդոցմով էին լեցուած : Գէորգ հագած էր եպիսկոպոսական շուրջառ , գլխուն թաղ՝ մարդարտէ ակերով զարդարուած , բոլորի աչքերը սեւեռուած էին անոր , հիանալի էր : Ես ինձ նայեցայ եւ տեսայ որ ես ալ հագած եմ եպիսկոպոսական հանգուստ ու զարդարուած : Նայեցայ Գէորգին եւ տեսայ , որ անոր մարմինը կը նօսրանայ շուրջառի տակ , ձեռքերը կը մշուշանային ու թափանցիկ կը դառնային , ի վերջոյ շուրջառը մնաց , Գէորգը աներեւոյթ էր դարձած , իսկ մենք բոլորս ալ այդ տեսարանը կը դիտէինք սարսափահար ու երկիւղած :

«Քրտնած ու վախեցած արթնցայ : Գէորգ ծիծաղելոյ ու ըսաւ . «Վրադ բաց է մնացել , երազ ես տեսել , ի՛նչ տարօրինակ մարդ ես , կարծես դպրոց իսկ չես տեսել , թէ որ երազիդ վախէն պաղ քրտինք

ես մտե՛յ, գնա՛ լողացիր» : Կատակի տուինք, լողանայու խորհուրդը ինձ հաճելի թուեցաւ, գոմի մէկ ծայրին դաշտը գրին, թոնիրը տաք ջուր պատրաստեցին ու Շէնիկի Ղազարը զիս լողացուց, գլուխս օճառով էր, աչքերս չէի կրնար բանալ, յանկարծ Գէորգ կուտ մը պաղ ջուր լեցուց վրաս, սարսուացի եւ վեր թռայ, բայց գլորուեցայ ցեխի մէջ, Փետայիները բոլորը սկսան քահ քահ ծիծաղիլ Գէորգի շարաճճիութեան վրայ, ես ալ կատաղած տաք ջուրը խլեցի՝ ու լեցուցի Գէորգի վրայ, դարձեալ ծիծաղ ու քրքիջ, ոչ ոքի մտքէն իսկ չէր անցնէր, սր մեր այս կատակը վերջինը պիտի ըլլար» :

Կէսօրէ առաջ, երբ Փետայիները հաւաքուած են սփռոցի շուրջ, իրենց նախաճաշը ընելու եւ գիւղացիք իրենց կողմէ պաւ:րաստած, կծու կլուլիկ թթուն եւ խորոված միս կը հրամցնէին Փետայիներուն, ուրախ ու զուարթ կը խօսէին, ներս կը մտնէ Սուլուխի Մեսրոպը, դոյնը նետած, եւ կ'ըսէ. — «Զօրքեր են գալիս», կը գրէ Ռուբէն, — «Շա՞տ են, թէ քիչ», հարցուց Գէորգ : «Խփերայ դաշտ զրմէն սեւցած է» : Դիտակը առաւ եւ դուրս ելաւ Գէորգ, տանիքի ծայրէն երկար նայեցաւ եւ մտազբաղ վերադարձաւ : Խորտիկները կը պաղին սփռոցի վրայ, ոչ ոք ախորժակ ունի ուտելու, միայն Գայէն է, որ հանդիստ ու դանդաղ կ'ուտէ կը կշտանայ, յետոյ անվրդով շխուտը կը վառէ առանց տեղէն շարժելու :

«Բոլորս կը նայինք Գէորգի գէմքին, որ մռայլ է ու դաժան. «Կոխ որ լինի, խիտ պիտի լինի, ձի պիտի նստել եւ անմիջապէս կամուրջէն անցնելով պիտի հեռանալ» : Գէորգի հրամանը ի կատար ածելու համար անմիջապէս կամուրջի գլուխը դիրք բռնելու կ'ուղարկեմ Ղարսայ Յակոն, Սուլուխայ Սաղոն, քիւրտ Հասանոն եւ քանի մը գիւղական զինուորներ : Դժուար էր գացողներու պարտականութիւնը, անոնք պիտի անցնէին բաց դաշտով, երկու կողմէն յառաջացող թշնամիին մէջէն, մեզմէ մօտ 1500 մեթր հեռու, եւ ծանր կռիւ պիտի մղէին կամուրջը խլելու համար : Հրամայեցի. «Որ մեռնիք, կամուրջի վրան պիտի նահատակուիք եւ ձեր տեղիցը բնաւ չպիտի փախչիք» : Յանդուզն Սաղոն պատասխանի փոխարէն երեսը խաչակնքեց, իսկ Ղարսայ Յակոն համբուրուեցաւ եւ շտապեց դէպի կամուրջ իր ընկերներով :

«Սէյտօ Պօղոսը եւ Սուլուխայ Մեսրոպը այս ժամանակամիջոցին ստուգեցին, որ գիւղին մէջ հազիւ 12 ձիեր կային, ուրեմն մեզմէ միայն մէկ մասը կրնայ ձի նստիլ ու հեռանալ, իսկ միւս մասը պիտի մնայ թշնամիին ձեռքը : Մեսրոպը խորհուրդ կու տար գլխաւոր Փետայիներուն ձի նստիլ ու հեռանալ, իսկ միւսները թողուլ գիւղացիներու հետ միասին եւ անոնց բախտակից դարձնել, իսկ հին Փետայի Պօղոսը կ'ըսէր. «Ես գիւղը պիտի մնամ, կռիւ է թող լինի, էլ ինչո՞ւ թողնեմ գիւղն ու մաս մը ընկերներս թշնամու ձեռքին» : Սէյտոն իրաւացի էր, մանաւանդ որ կամուրջի աջ գլխուն վրայ կ'երեւան արդէն Կուրալուէն եկած զօրքերը, որոնք չեն փորձեր անցնիլ կամուրջը,



Սահմանակից ֆիւրտեր թիւրք զօրքերուն կը միանան՝
Գէորգի դէմ կռուելու :

որուն ձախ գլուխը բռնած են Սաղոն ու Յակոն իրենց փոքրաթիւ ընկերներով :

«Կռիւր անխուսափելի է : Կը նայինք տանիքներէն՝ զօրքը շատ շատ է , կը յառաջանան իրար ետեւէ վաշտ-վաշտ չորս կարգով շարուած , բոլորն ալ կու գան խճուղիի ճամբով : Հարց կու տանք մենք մեզի , թէ որ այս բազմութիւնը , առնուազն երեք գնդէ բաղկացած , կռիւի կու գայ , ինչո՞ւ միայն հետեւակազօրքէ է բաղկացած , ինչո՞ւ հեծելազօրքը միասին չէ , որպէսզի բռնէ մեր ճամբաները : Այս մտածումը ենթադրել կու տայ մեզի , թէ ճամբորդ զօրք է այս , որ Մուշէն էրզրում կ'երթայ : Բայց կասկածը կուտէ մեզ , եթէ ճամբորդ զօրք է , ինչո՞ւ անոր առջեւէն կամ ետեւէն չի յառաջանար գնդերու դոյքի փոխադրող մասը , ինչո՞ւ կամուրջի աջ կողմը զօրքերը սպասողական վիճակի մէջ են :

«Այս տարակուսանքով մտահոյուած՝ կը պատուիրենք գիւղացիներուն հանդիստ մնալ , գիւղէն շփախչիլ , կին ու երախայ թող տունները փակուին : Կռուողներուն կը պատուիրենք բաժնուիլ նշանակուած դիրքերու վրայ , բնաւ դիրքերէն գլուխ չհանել ու չկրակել քանի զօրքը խճուղիէն դուրս չէ եկած եւ առանց գիւղ մտնելու կ'ուղղուի դէպի կամուրջ : Երբ Գէորգի դիրքէն նշան տրուի , այն ատեն

համազարկ բանալ թշնամիի խիտ շարքերուն վրայ: Ով որ մասնակի կրակ բանայ, պիտի սպաննուի տեղն ու տեղը:

«Այս պատուէրով երեք զլխաւոր դիրքերու կը բաժնուինք, առանց հաշուելու կամուրջի գլուխի դիրքը, ուր պիտի մնան Սաղոն, Յակոն, Հասանոն եւ Սուլուխի մեր մարտական խումբէն խմբակ մը: Մնացած երեք դիրքերը իրարու հետ կը կազմեն եռանկիւն մը, գլուխը գիւղէն դուրս ինկած խարապայ (աւերակ) մըն էր, որը դաշտի մէջ ըլլալով, գիւղի ծայրին, միայն 50 քայլ հեռու էր խճուղիէն, միւս դիրքը ձախ ինկած մօտ 70 քայլ հեռաւորութեամբ Քիւչիւք տան տանիքն էր, որ կ'իշխէր դաշտի կողմէն եկողներու վրայ, իսկ երրորդը առաջին խարապայի դիրքէն դէպի աջ ինկող կիսաշէն եկեղեցիին պատերն էին, որ կ'իշխէր խճուղիի վրայ եւ կ'ապահովէր կամուրջի մեր դիրքին թիկունքը:

«Այս եռանկեան մէջ կը փակուէր գիւղը, իսկ հիմքը կը կազմէր վարարած Եփրատը: Գիւղի մէջ կը մնար փոքր խումբ մը, որ պիտի շարժուէր Գէորգի ցուցմունքով չնախատեսուած կամ բաց մնացած տեղերը լեցնելու, տեսակ մը պահեստի ոյժ: Ինծի բաժին ինկաւ եռանկեան գլուխ խարապան, հետո էին Սէյսո Պօղոսը, Ալիզոնանի Մուքոն, Յրօնքի էլոն ու Մխիկը, սուլուխցիներէն Սամոն՝ 6-7 ընկերներով: Մեր դիրքը թէեւ գիւղէն կտրուած փոս մըն է միայն խոտով ծածկուած, բայց առաջը հարթ է եւ մոսիներ կարող է ուղղակի հնձել: Գէորգի հետն է ամենէն քաջ Փետային՝ Գալէն, Տիգրանը, Սուլխայ ճարպիկ Մոսիկը, Ալիջանայ Տիգրանը եւ տեղական կրօնողներէն տասնեակ մը Մեսրոպի եւ Քիւչիւքի առաջնորդութեամբ: Եկեղեցւոյ դիրքը կը բռնէ հին Փետայիներէն Շէնիկայ Ղազարը, աւոր հետ են Գալէի նման պաղարիւն մշեցի Ռուբէն, անխօս Գըբրօ եւ տասնեակ մը տեղացիներ:

«Մեր ամբողջ կռուողներու թիւը 80-էն աւելի էր, ամէն տեսակի հրացանները միասին հաշուած: Այդ 80-էն 20-ը անկանոն բերդան կամ այնպիսի էին եւ պատուիրած էինք անոնց կրակել միայն նեղ պարագային, որպէսզի ծուխ չելլէ եւ մեր դիրքերը չմատնուին, ասոր դէմ ունէինք մօտ 20 տասնոց ատրճանակ մատուցէր, որոնք զընդացիբի դերը կրնային կատարել: Ունէինք մէկ օրուան փամփուշտ, բացի մեր վրայի փամփուշտներէն Սուլուխի մէջ ունէինք փոքր պահեստ մը մօտ 8000 փամփուշտներով: Ահա այս ոյժով ու այդ կարգադրութեամբ պիտի դիմադրէինք մեր վրայ արշաւող թշնամիին:

«Կռուի ընթացքին ամենածանր վայրկեանը առանց հրացան պայթեցնելու սպասելն է: Կը դիտենք մեր վրայ յարձակող անտառը, որ խիտ շարքերով կը շարժի, արեւի լոյսը կը փայլեցնէ սպաներու թուրերը եւ զօրքերու սուրիները: Տարօրինակ զգացում մը կը պատէ մեզ, որու անունը ո՛չ վախ է, ոչ սարսափ, զգացում մը՝ խառնուրդ անհամբերութեան, սպասումի, վախի ու խիզախութեան: Մեր զի-

նուորներէն քիչերը միայն, Գալէի, Սէյսո Պօղոսի նման, անտարբեր կրնան մնալ:

«Կը տեսնեմ՝ Ղազար ու Տիգրան հրացանները գլուխներուն պտտցնելով կռիւ կը կարգան, իսկ Մուքօ ու Մխիկ ինձ կը յորդորեն. «Հօրի՞ ենք նստել, հուջում պիտի անել»: «Նստեցէք հանգիստ, հուջում պիտի անենք», կը յարէ ծիծաղը դէմքին Սէյսո Պօղոսը: Բայց զօրքերը կու ան ու կու դան, անոնց մէկ վաշտի ծայրը արդէն հասած է մեր դիրքէն 50 քայլ հեռու, մենք կը տեսնենք զինուորի ու սպայի քիթն ու ունիւր, անոնց ոտքերու ձայնը կ'արձագանգէ մեր ականջներուն մէջ: Սէյսոն մատովը ցոյց կու տայ հեռուն, որտեղէն ձիաւորները սրարշաւ կ'ուղղուին դէպի Սբ. Գէորգի կողմը. (Սուլուխի ձախ կողմը) ու Գէորգի դիրքին դիմացի գերեզմանոցը: Արդէն պարզ է, որ ճամբորդ զօրք չէ աս, այլ խորամանկօրէն զօրասիւնով մօտեցած է դիւղին, կռիւը կարճատեւ դարձնելու:



Շէնիկի

ՂԱԶԱՐ

«Տասնոցներն լեցուցած կը սպասենք, կը պայթի Գէորգի տասնոցը, որը նշան է համազարկի: Կարծես լեռ մըն է կը դլտորի կուրծքիդ վրայէն, կրակը բացուած է, բոլորս համազարկ կը բանանք զօրքի խիտ շարքերուն վրայ: Ինչպէս գերանդին հասկերը կը հնձէ, այդպէս ալ թիւրք զօրասիւններու շարքերէն ոմանք կը փռուին, ոմանք ճամբէն կ'ելլենք ոմանք շուարած ինչ ընելին չեն գիտեր, իսկ մեծ մասը ետ ետ կը քաշուի: Մենք արիւնխում ենք ու գինովի նման, կը գոռանք, կը հայհոյենք անընդհատ կը կրակենք, կը ջանանք հնձել մեր դիմացի մսէ անտառը: Քանի մը ըրպէ շուարումը կը շարունակուի, յետոյ փողերը կը հնչեն ու զօրքը ետ քաշուելով 1000 քայլի վրայ կը փռուի դաշտի մէջ: Մեր խարապայի դիրքին առջեւ գտնուող երեք չորս տասնեակը չի կրնար ըստ փողի՝ նահանջել, ուստի կը մնայ պառկած: Պէտք է հատ-հատ նշան բռնել ու խփել այդ մարդիկը: Դժուարը այն էր, որ ատոնք շատ մօտ էին, եւ ուստի անհրաժեշտ էր մեզի համար

դիրքէն դուրս ելլել ու նշան բռնել, ասկէ դատ ողջը մեռածէն դժուար էր զանազանել, ոմանք մեռած ձեւանալով յանկարծ ոտքի կը կանդնէին ու կը կրակէին մեր վրայ: Ասոնցմէ ոմանք սողոսկեցան ու մտան պատերու տակ, իսկ մեծ մասը մնաց պառկած: Կէս ժամի շափ տեւեց այս կռիւը, մեզմէ ոչ ոք վնասուած չէր, իսկ թշնամին թողուցած էր 90—100 դիակներ: Այժմ ան փորձ կ'ընէր 1000 քայլ հեռուէն ինքզինքը կարգի բերել ու նորէն յարձակիլ:

Որքան որ ճնշիչ է կռուի նախերգանքը, այնքան ալ թեթեւ ու բերկրալի է կռուի արդիւնքը տեսնելը, զինուորը ցնծութենէն կը թռչկոտի, չի ծիծաղիր, այլ վազրի նման աւելի արիւնոուշտ կը դառնայ: Ահա այս ցնծութիւնն է, որ կը վայելենք մեր դիրքերու տակ թաւալող դիակները դիտելով: Ժամը 11 է, լուռ է, ահարկու լուրժիւն: Կը տեսնենք՝ թշնամին կը բաժնուի երեք մասերու, մէկ մասը կը յառաջանայ խճուղիի երկու կողմերու փոսերուն միջով, մէկ մասը կ'ուղղուի աջ եւ բաց դաշտի մէջ շղթայ կը կազմէ, երրորդ մասը այս երկուքի մէջտեղ աւելի խիտ շարքերով ու դանդաղ կը յառաջանայ:

«Փողերը կը հնչեն, բոլորն ալ կը սկսին կրակել մեր վրայ, Սոդոմ—Գոմոր, ոմանք կը վազեն, ոմանք կը քալեն, ոմանք կը պառկին ու նորէն կ'ելլեն եւ կրակելով առաջ կը վազեն: Տարօրինակ ձայներ կը լսենք, բոցավառ օճախի վրայ աղի ճարճատումներ կամ սուլոցի



Սասուն — Գիւղաշէն գիւղէն դէպի Ծովասար



Խոււր մը «պաշի-պօգոււֆ»
լեռնային թիւրֆ գիւնուորներ :

նման վնկոցներ : Հաճելի չեն այս ձայները , բայց մարդ կը վարժուի
երբ նեղն իյնայ :

«Մենք ալ հանգիստ չենք , նոյնիսկ Սէյտոն մեքենայ է դարձած
եւ բոլորս ալ արագ-արագ հրացանները կը պարպենք դէպի թշնամին :
Հատ-հատ նշան կը բռնենք ու կը խփենք , մին կը պոռայ՝ գլխարկին
դարկ , միւսը՝ աջ կողմը , եւայլն , մին կը հայհոյէ , միւսը սիրտ կու
տայ , եւ այս բարեխոնական խառնակութեան մէջ ամէն մէկ ճիչ , ա-
մէն մէկ խօսք յստակ կ'ըմբռնուի : Գիտակցութիւնը , սրատեսու-
թիւնը , լսողութիւնը եւ նոյնիսկ հոտառութիւնը գերագոյն աստի-
ճանի կը հասնին :

«Հակառակ մեր լարուածութեան ու տենդագին ջանքերուն՝
կարծես թէ անկարող դարձած ենք , թշնամին կու գայ ու կու գայ ,
ահա լեցուած է գերեզմանոցը , ահա միւս կողմէն հասած է մեր դիր-
քերուն առջեւ : Կը տեսնենք , որ գերեզմանոցէն , Գէորգի դիրքէն հա-
զիւ 100 քայլ հեռու , դուրս կ'ելլեն ու կը վազեն դէպի գիւղը , բայց
այդ կողմ նայելու հնարք չունինք : Մեզմէ 50 քայլ հեռու լեցուած է
գօրքը եւ կը լսենք անոնց ձայները՝ «հա պապամ , հա պապամ , տէ



ՍԷՅՏՈ ՊՕՂՈՍ

վուրըն, տէ վուրըն» : Ահա փոսերէն դուրս կը ցատկեն ու կը վազեն դէպի մեզ : Հրացանները մէկ կողմ դրած ենք ու կը դործեն տասնոցները, յարձակողները նորէն ետ կ'ընկրկին, մէկ մասը սակայն մեր աջ թեւը կը մտնէ ու գիւղի մարազներն ու տանիքները դիրք կը բռնէ, ասոնք կ'իյնան մեր եւ եկեղեցւոյ դիրքին միջեւ, ուրկէ Շէնիկի Ղազար կը լծէ զանոնք ու մեր թիկունքը կ'ապահովէ :

«Կարծես մեր դէմը եւ աջ կողմը անվտանգ է դարձած, կը նայինք ձախ ու դէպի ետեւ, այնտեղէն հրացանները մեր վրայ կ'ուղղուին, կը կանչենք Գէորգ օգնութեան, պատասխանի փոխարէն կը լսենք՝ «թեսլիմ, թեսլիմ» : Գերեզմանոցէն արշաւողները բռնած են Գէորգի դիրքը : Կորսուած ենք կարծես, շրջապատուած խարապայի մէջ, բայց յոյս ունինք, թէ Գէորգ դիրքը փոխած է եւ շուտով կու

դայ մեր թիկունքը մաքրելու : Այս յոյսով շրջան կը կազմենք ու կատարար կը կռուինք : «Էլօ, կ'ըսեմ Յրօնքի էլոյին, մենք պիտի յաղթենք թէ որ Գէորգի դիրքը ետ առնուի, Գէորգին ասա թող հիւշում անի, թէ որ Գէորգ մեռած է, դու հիւշում արա եւ մեր թիկունքը մաքրէ թշնամուց» : «Հա վալլահ», կ'ըսէ այդ առիւծը : Հրացան ու տասնոց կը դարձնենք դէպի էլոյի դնալիք ճամբան : Էլօ կատուի թռիչքով ինքզինք կը ձգէ թշնամիին ոտքերուն տակ, պատերու տակ, թըշնամիին համար դժուար էր վերէն վար խփել, հրաշք պիտի ըլլար եթէ էլոն կարողանար ողջ հասնել դիւղին մէջտեղ, ուր հաւաքուած էին մեր ընկերները եւ դիւղացիները : «Էլոն էլ դնաց», մորմօքաց Մուքոն, բայց ան կը սխալէր, էլոն ազգրէն թեթեւ վէրք մը առնելով հասած էր դիւղամէջ :

«Մեր վրայ կը կրակեն չորս կողմէ ոչ թէ հեռուէն, այլ մի քանի քայլի վրայ : «Չարկէ'ք, շուտ դարկէ'ք, մօ դիրք մտան», կ'ըսէր սառնարին Սէյտոն, եւ իրօք քիչ մնար պատի կողքէն թշնամի ձեռք մը բռնէր Մխիկի հրացանի փողը, իսկ պատի վրայէն քանի մը գլուխ պաշլըղաւորներ հրացանները կը կախեն մեր վրայ, տասնոցները կ'ուղղենք վեր եւ շաւուշ մը ճակտէն վիրաւոր կ'իյնայ մեր մէջ, անոր դիակը գրաւած էր մեր դիրքը : Ողջ մնացողները չեն յանդգնիր իջնել դիրքի մէջ : Պատի միւս կողմէն կը հայհոյեն, «թեսլիմ» կը պոռան, մենք ալ կը փոխադարձենք : Մեր վերջն է կարծես» :

Կոիւր բռուն էր ու անխնայ բոլոր դիրքերուն վրայ : Հազիւ հարիւրեակ մը հայ անձնագոհեր կը դիմադրեն թուրք կանոնաւոր բանակին եւ անոր միացած քիւրտ խուժանին, որոնց թիւը շուրջ 5000 է : Պաշարած են Սուլուիւր, կը կրակեն անդադար, կը մօտենան դիրքերուն, կ'իյնան դիաթաւալ : Հակառակ իրենց թուական անհամեմատելի առաւելութեան, թշնամին կը կռուի սարսափով կլանուած, որովհետեւ հայ Փետայիի առասպելական քաջութիւնն ու յանդգնութիւնը վաղուց տպաւորած է զիրենք. կը վախնան սրայթուցիկներու դորձածութենէն եւ իրենց շարքերու նօսրացումէն :

Հայ քաջերը իրենց դիրքերէն զիրար խրախուսելով անվախ կը կռուին, կը խիզախեն, որովհետեւ ազգային ու մարդկային ազատութեան դադափարական կ'առաջնորդէ զիրենք :

Իր դիրքին մէջ, հազիւ երեսուն եօթ տարեկան հերոսը՝ Գէորգ Չաւուշ անվեհեր կը մարտնչի, խրախուսելով ընկերները, որոնք հերոսական ճգնաժամային պայքար կը մղեն :



Թրքական յարձակումը ղեկավարողն է Քէօսա Պինպաշին, որուն կառավարութիւնը հրահանգած է անմիջապէս մեկնիլ Սուլուիս, բռնելու եւ պատժելու ապստամբ կեաւուրները :

Քէօսա Պինպաշին մէկն էր այն փորձուած ու ճարպիկ զինուոր-



ՌՈՒԲԷՆ ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆ

Նկարուած 1914-ին, Էրզրում

րականներէն, որոնք զիտէին ըմբռնել կայսրութեան լրջութիւնը: Ան մասնակցած էր ռուս եւ թիւրք պատերազմին, ուր ի յայտ բերած էր իր զինուորական կարողութիւնը եւ յաջողութիւններ արձանագրած: Ահա այդ հին փորձառու զայլն էր, որ պաշտօն ստանձնած էր երթալու Սուլուխ, ապստամբները զինաթափելու եւ պատժելու Գէորգ

Չաւուշը : Սակայն , այդ քաջարի զինուորականը պահ մը կը վարանի . արդեօք անկարողութեան վա՞խը զինք կը կաշկանդէր , թէ՛ բարեկամներու վրայ յարձակելու վատ արարքը կը կեցնէր զինք : Պինպաշին Գէորգի եւ Ռուբէնի բարեկամն էր եւ յաճախ դադտնի տեսակցութիւններ ունեցած էր անոնց հետ :

Արդարեւ , Քէօսա Պինպաշին , որ չերքէզ էր ազգութեամբ , հանդիպումներ ունեցած էր Ռուբէնի եւ Գէորգ Չաւուշի հետ , ունեցած էին տեսակէտներու եւ դադափարներու փոխանակում : Հակառակ որոշ չափով դադափարական համաձայնութեան սակայն , Քէօսա Պինպաշին , որ ասպարէզով զինուորական էր եւ իբրեւ այդպիսին հնազանդ զինուորական կարգուսարքին եւ կառավարութեան հրահանգներուն , տեսակցութիւններէն մէկուն ընթացքին կ'ըսէ . — «Մեր տեսակցութիւնը , բարեկամական յարաբերութիւնը պաշտօնական բնոյթ չի կրեր , այլ անհատական է . սակայն , իբրեւ պետական մարդ , պարտականութեանս մէջ պիտի չթերանամ , անողոք պիտի ըլլամ . . . » : «Ուրիշ բան չէի սպասեր , նոյնը՝ իմ կողմէս» կը պատասխանէ Գէորգ : Քէօսա Պինպաշին շատ սիրուած էր նաեւ Մուշի ժողովուրդէն :

Հնազանդելով զինուորականի իր կոչումին եւ պետական հրահանգին , Քէօսա Պինպաշին կը ստանձնէ Սուլուխի կռուին ղեկավար



Մշոյ Սուրբ Մարինէ քաղէն փողոց մը ,
 հեռուն Տարնսեան լեռնաշղթայէն մաս մը



Սեմալ գիւղի մէջ, խումբ մը Սեմալցիներ եւ Անտոֆցիներ

րութիւնը եւ կանոնաւոր վաշտով մը Մուշէն կը մեկնի դէպի Արածանիի ափը, խորտակելու համար Փետայական դիմադրութիւնը Սուլուխի մէջ:

Կանոնաւոր վաշտին կը հետեւի անկանոն խուժանը, կողոպտելու բնադրէն մղուած: «Սուլուխը մոխրակոյտի վերածել, անոր փլատակներուն տակ ծածկել անհաւատներու դիակները», ա՛յս է խառնիճաղանճ խուժանին կարգախօսը:

Փորձառու զինուորական Քէօսա Պինպաչին, նախքան Մուշէն մեկնելը առաջին հերթին կը հրահանգէ Խաչխալտաղ գիւղի պահակագունդին, որ երթայ եւ դիրք բռնէ կամուրջին մօտ, Սուլուխի թիկունքը, փակելու համար Փետայիներու նահանջի ճամբան:

**

Կռիւր աստիճանաբար ուժեղ թափ կ'առնէ, երկուստեք իրարու վրայ կրակ կը թափեն. թշնամի զօրքը քանի մը տեղերէ շատ կը մօտենայ դիրքերուն, սակայն հայդուկներու տասնոց ատրճանակներու կատաղի դիմադրութեան հանդիպելով, զոհեր տալով կը նահանջեն: Յանդուզն զինուորական չերքէզ Քէօսա Պինպաչին ձիու վրայ, սուրը մերկացուցած կ'առաջնորդէ նոր յարձակողական մը:

Յարձակումը ուժգին է մանաւանդ Գէորգի դիրքին վրայ, որ պէտք է դիմակալէ նաեւ գերեզմանոցի կողմէն եղած յարձակումը:

Երբ Քէօսէ Պինպաշին յարձակողական կ'առաջնորդէ, կացութիւնը կը դառնայ վտանգաւոր, սակայն այդ պահուն Ալիզոնանցի (Ծուռ) Մքոն դիրքէն բարձրանալով նշան կը բռնէ ու ձիէն վար կը գլորէ Քէօսէ Պինպաշին, որուն ձին՝ առանց տիրոջ գլուխը կը դարձընէ ու սրարշաւ կը հեռանայ:

Թշնամին իր ամբողջ ճիգը կը թափէ գրաւելու գիւղը: Գալէն ուր դիրք բռնած էր տանիքի վրայ թշնամիի տեղատարափ փամփուշտներէն մէկը մահացու կը վիրաւորէ Գալէն՝ աչքէն: Այդ տեսնելով, Գէորգ ընկերներուն կ'ըսէ. «Դուք Գալէն վարը իջեցուցէք ես իր տեղ կը կռուիմ»: Կռուի ամենատաք ժամանակ Գէորգի հրացանը կը խանդարուի եւ երբ կ'ուզէր նայիլ իր հրացանին, գնդակ մը իր ձախ ծունկի տակէն անցնելով աջ թիկունքի տակ կը մխրճուի: Պահ մը մնալէ ետք կը նայի իր չորս կողմը ու դառնալով իր ընկերներուն կ'ըսէ. «Ես կ'իջնեմ Գալէի մօտ, դուք դիրքը ամուր պահեցէ՛ք»: Առանձին հազիւ կը յաջողի իջնել վար ու անցնիլ այն սենեակը, ուր կիսամեռ Գալէի կողքին կը նստի: Հազիւ կէս ժամ անցած էր, թշնամին կըրցած էր գրաւել նաեւ իրենց դիրքը, Գէորգի ընկերները այս տեսնելով, շուտով կ'անցնին փողոցի միւս կողմը եւ բարձրանալով տանիքի մը վրայ դիրք կը բռնեն թշնամիին դէմ:

Թշնամին գրաւած էր Գէորգի դիրքը, որ վարը նստած մահամերձ Գալէի կողքին, առանց լուր ունենալու իր դիրքի գրաւումէն:

Այն անձնագոհ երիտասարդ Փետային, որ խիզախումներու օրինակն իսկ էր, այժմ շարժելու անկարող կը լսէր հրացանաձողութիւնը, ու վէրքէն աւելի սրտի ցաւը աւելի կը տանջէ զինք:

Ռուբէնի հրահանգով էլոն կը շարժի վերագրաւելու Քիւլիւքի տան դիրքը, զոր գրաւած էր թիւրք զօրքը, առանց դիտարկելու, որ Գէորգ Չաւուշ վիրաւոր վիճակով կը մնար վարը՝ տան մէջ:

«Բայց ահա հրաշք է կը կատարուի, կը գրէ Ռուբէն, — կը լսուի էլոյի ձայնը. Գրբոն ու Տիգրան մեզ կը կանչեն, թշնամիին մէջ իրարանցում է. մեր պատի տակի ասկեարներու ձայնը լռած է. բան մը կը կատարուի անպատճառ: Ա՛յո, եղածը էլոյի հիւջումն է. յարձակում կայ Քիւլիւքի տունը (Գէորգի դիրքը) ետ առնելու. մենք ալ մեր դիրքէն կ'ուժեղացնենք կրակը: Թշնամին կը քաշուի դաշտ արտերու խոտերուն մէջ սողոսկելով ու հասնելով գերեզմանոց: «Վալլահ, փորձանքից ազատուանք, բայց Գէորգ մեռած է» շնջաց Պօղոս: Ան փորձառու էր, գիտէր որ Գէորգ առանց մեռնելու չէր յանձներ Քիւլիւքի տան դիրքը»:

«Քիւլիւքի տանիքի տակն էր վիրաւոր Գէորգ Չաւուշը, երեւի կ'ուրախանար, որ մերոնք գրաւած են դիրքը, բայց ոյժ չունէր դաշտ, ոչ ալ էլոն ու ընկերները ժամանակ ունէին տեսնելու իր հալը: Կռուի տաք ժամանակը աստուածներ մոռանալը ներելի է գուցէ»:



Շենիկ գիւղի աշակերտներէն մաս մը

Սուլուխի կռուի հրացանաձողութեան ձայները կը հասնին մինչեւ Աշտիշատ (Դերէկ) գիւղը, ուր կը դռնուէին Աւրանայ Արամը եւ Քեռի Ղազարը, իրենց քանի մը ընկերներով, որոնք կը դուռնակեն, թէ Սուլուխի դէմ կռիւ կայ: Իրենց հետ առած ընկերները կ'իջնեն Աւրան գիւղը, որուն տեղական մարտական խումբն ալ առնելով, կը մօտենան Սուլուխի, եւ երբ կ'ուղեն անցնիլ Կամուրջը, կը տեսնեն, որ թշնամին շորս կողմէ պաշարած է կամուրջը. արգիլելով ոեւէ մէկուն անցքը:


Խումբը կռուի կը բռնուի թշնամիի դէմ. անակնկալի գալով. իրենք զէնքերը կը դարձնեն դէպի կամուրջ: Մօտ մէկուկէս ժամ կռուելէ ետք, չկրնալով կամուրջը անցնիլ, կը ստիպուին վերադառնալ: Այս կռուին կամուրջի ձախ գլխուն վրայ կը զարնուի աննման Յակոն: Խումբը սակայն յաջողած էր թշնամին անշարժութեան մատնել:

«Ինչ որ ալ ըլլար, — կը գրէ Ռուբէն, — գրութիւնը փրկուած էր. մեր գիրքերը մեր ձեռքն էին եւ թշնամու երկրորդ թափը կտարած: Բայց այս վիճակը երկար չէր կրնար տեւել: Կէսօրի մօտ նորէն փողերը կը հնչեն. կը սկսի սաստիկ հրացանաձողութիւն, ալ փոշի ու փոթորիկ է, աղմուկ ու ժխոր. գնդակներէն շունչ իսկ առնել հնարաւոր չէ: Մէյտոն ձեռքէն վիրաւորուած է, Մխիկ ալ, ես կատաղած կը

պահանջեմ շուտ շուտ կրակել քանի մեռած չեն. ինձ ալ կը հասնի
 դնդակէն իմ բաժինս, կ'իյնամ դետին, կարծելով թէ մեռած եմ, բայց
 կը շարժուիմ արիւնոտած, ու կը շարունակենք կոիւր, եթէ ոչ գերի
 պիտի իյնանք: Ալ վախ դոյութիւն չունի մեզի համար, կը կանգնինք
 դնդակներու տարափին տակ ու կը կռուինք, եւ զարմանալի է, որ այդ
 տարափէն ոչ մէկը մեզի չի հանդիպիր: Քիւշիւքի տունը դարձեալ կը
 գրաւուի թշնամիին կողմէ եւ մենք կը մնանք պաշարուած:

*
 **

«Ժամը կ'անցնի. մեր դիրքերուն մէջ եռանդ կայ: Սբ. Գէորգի
 կողմէ 2-300 ձիաւորները կը նստին ձիերը եւ սրարշաւ կը քալեն մեր
 վրայ, հետեւակը չի միանար անոնց: Գնդակները կ'ուղղենք հեծելա-
 դօրքին. սիրուն է երբ ձիերը կը գլորուին. 15 վայրկեան չի տեւեր
 այդ արշաւը. դիւղի տակը չհասած ետ կը դառնան: Արեւը մարը
 մտնելու վրայ է. հանդիստ կոխ է. հեռու խտերու տակ կ'երեւան
 սեւ շարաններ, թնդանօթներն են որ կ'ուղղեն մեզ: Հարց կու տան
 ինձ. «Էդ ի՞նչ նոր պայա կու դայ մեր վրայ»: սիրտ տալու համար կը
 պատասխանեմ. «Ինչ էլ որ լինի, ուշ են մնացել, մի ժամ որ կռուինք
 մութը կը կոխէ ու դուրս կը թռնենք»: «Թուիի կոխ կ'ուղենք», կը
 կանչեն տղերք. վերջալոյսի հետ կը դուռան թնդանօթները. «Հա բա-



Մուշ քաղաքի շուկան, ուրկէ յաճախ կ'անցնէր Գէորգ

բամ, հա օղլում» . կը լսուին ձայներ : Մենք չենք դիմանար եւ միայն գետի ափի փողոցը մեր ձեռքը կը մնայ, զինուոր եւ ժողովուրդ տասնեակ մը տուներու մէջ ապաւինած ենք : Ելք չկայ կարծես, բայց ելքը մութն է . թնդանօթները կը լռեն, որո՞ւ վրայ կրակեն, մենք ու զօրքը դրկից ենք դարձած : Սուլուխցիները Ալիջանի Տիգրանի եւ մշեցի Ռուբէնի առաջնորդութեամբ ծուռ ու մուռ փողոցով կը սողոսկին զօրքի կռնակը, կը կրակեն ու երկու փողոց կը դատարկեն . քիչ մը շունչ կ'առնենք ու կը մտածենք դուրս ելլելու միջոցներու մասին :

«Նախքան դուրս ելլելու փորձ ընելը, մեր առաջ դրուած է ծանրակշիռ հարց մը . Գէորգի եւ Գալէի դիակներու ազատումը, մանաւանդ որ մեզմէ ոչ ոք չի տէր թէ անոնք մեռած են թէ ոչ : Անոնք Քիւչիւքի տան մէջ են, որուն տանիքը, եւ փողոցները զօրքով են բռնուած : Մեզմէ ոմանք անհնար կը գտնեն յարձակիլ Քիւչիւքի տան վրայ եւ ազատել մերինները, բայց ի՞նչ հաշիւ կարող է ըլլալ, երբ Տարօնի առիւծները ինկած են հոն վերաւոր կամ մահացած : Ծեռայիններ եւ գիւղացիներ քոմ ենք եղած (*) նեղ փողոցի մը մէջ : Երկու խօսքով կ'ըսեմ . «Մենք պիտի փրկենք Գէորգի եւ Գալէի դիակները եւ կամ աւելնանք անոնց վրայ . հակառակ դէպքում օլուղ շօլուղով զբմէնդ էլ գետ պիտի թափուինք» : Ամէնքը միաբերան «հիւջում» կը կանչեն . առջեւէն գնացողն է Շէնիկի Ղազարը, հարայ-հրոցով . եւ ամէնքս միակամ կ'իյնանք զօրքին վրայ՝ տանիքէն, փողոցէն, ամէն կողմէ : Մթութեան մէջ շիտթ կ'իյնայ զօրքին մէջ : Կը դրաւուի քանի մը փողոց եւ Քիւչիւքի տունը, որտեղէն Գէորգն ու Գալէն շարկելով կը փոխադրենք գետափի փողոցը : Թշնամին կարծելով որ մենք այդ փողոցով դէպի գերեզմանոց պիտի փախչինք, փողերը հնչեցուց եւ զօրքը սկսաւ կեդրոնացնել գերեզմանոցի շուրջ : Պէտք է օգտուիլ թշնամիին այս սխալ հաշիւէն :

«Այս նպատակով բոլոր գիւղացիները մեծով փոքրով կը հաւաքենք գետափի տուներուն մէջ, բոլոր դիրքերը դատարկուած են կռուողներէ, բացի կամուրջի գլխի եւ Քիւչիւքի դիրքերէն : Կը կանչեմ Ալիջանի Տիգրանը եւ կ'ըսեմ . «Դուն պիտի փրկես բոլորը կամ թէ պիտի զոհուիս բոլորիս համար, մենք պիտի գնանք գետի ափով, դու պիտի մնաս հինգ հոգիով Քիւչիւքի տանիք ժամի մը չափ, անկէ յետոյ ինչ ճամբով կ'ուզես հոգիդ ազատէ» : «Լսում եմ», պատասխանեց Տիգրանը անայլայլ : Համբուրուեցանք . ան գնաց իր գործին գլուխ, կը մնար մեզ գիւղէն դուրս ելլելը :

«Գէորգի եւ Գալէի մէջտեղ նստած է Շէնիկի Ղազարը՝ սգաւոր, Սէյտօ Պօղոսը յենուած է պատին : Երբ կը մօտիկնամ անոր, Սէյտոն կ'ըսէ . «Գալէն պրծել է, Գէորգը դեռ ողջ է» : «Ելէք, պիտի երթանք», կը հրամայեմ բոլորին : Բոլորը կը կանգնին բացի Գալէէն եւ Գէորգէն : «Գէորգը կապէք ձիու մէջքին վրան, իսկ Գալէին Եփրատը նե-

(*) Համախոս :



ՍՊԱՂԱՆԱՅ ԳԱԼԷ

տէք» . ծանր է այս պատգամը , բայց անհրաժեշտ էր շտապել : Ղազար բռնեց իր ամենահին ընկերոջ ձեռքերը , լաւ մը համբուրեց արիւնոտ երեսը , չլացաւ . Գրբոն ալ բռնեց Գալէի ոտքերը եւ ծանր սրտով նետեցին Եփրատի մէջ :

«Գէորգը կապեցին ձիուն վրայ , ան իր ցաւերէն նուազած՝ ձայներ կը հանէ , ինչ որ բան կ'ուզէ ըսել , բայց չի հասկցուիր , ժա-

մանակ չկայ, շտապելու է: Յառաջապահ կը դառնայ Շէնիկի Ղազարը՝ 10 հոգիով, անոր կը հետեւիմ ես 20 հոգիով, իմ ետեւն է Սէյ-տօ Պօղոսը վիրաւոր Գէորգի հետ կ'ընկերանան անոր Մշեցի Ռուբէնն ու Տիգրանը. իսկ ասոնց ետեւէն գիւղի ամբողջ ազգաբնակչութիւնը, ամբողջ գիւղը մօտ 120 տնուոր, բացի 8—10 պառաւ կիներէ եւ 1—2 հիւանդներէ: Ժողովուրդին ետեւէն գինուած կու գան Մխիկ, Էլօ, Մոսիկ եւ ընկերները՝ մօտ 40 հոգի: Պատուէր է տրուած՝ հրացաններէն փամփուշտները հանել, հրացանները լեցնել երբ հրաման տրուի, ով որ առանց հրամանի կրակէ, պիտի մահանայ, թշնամին որքան ալ խփէ, պիտի չպատասխանել, ինկողը պիտի իյնայ ողջ մնացողը պիտի հետեւի առանց իրարմէ կտրուելու, պարանի նման: Ոչ մէկ աղմուկ ու ձայն:

«Այս պատուէրով Ղազար առաջ կ'իյնայ, ան պիտի առաջնորդէ գետի ափով, գետին եւ թշնամիին միջով: Թէ որ հասնինք կամուրջ, հոն մեր դիրքն է, ուր դեռ կռիւը կը շարունակուի: Թէ որ կտրենք 2000 քայլ, թշնամիին մէջէն անցած կ'ըլլանք: Սաստիկ հրացանաձգութիւն է գիւղին մէջ, կամուրջին վրայ, մութ է, դժուար է իրար տեսնել, թշնամին կը կրակէ անընդհատ, բայց զնդակները ուղղուած են դէպի գիւղամէջ, Քիւչիւկի տան կողմը: Կ'անցնինք զօրքին մէջէն, ան մեր վրայ չէ որ կը կրակէ, երեւի կը կարծէ թէ զօրք ենք: Առաջապահը եւ մենք կ'անցնինք ապահով: Երբ հերթը կը հասնի ժողովուրդին, զօրքը կը կասկածի եւ հարց կու տայ. «Քի՞մսըն, քի՞մսըն». պատասխան չկայ, քայլերը կ'արագանան: Արդէն վերջապահն է, որ հասած է զօրքին առաջ, ան չի շարժիր, այլ կը նստի գետին եզերք. «Քի՞մսըն» հարցումին Մխիկ կը պատասխանէ. «Քո՞ն էք, վախկոտներ, զարկէք դէպի գիւղամէջ, հոն են Փետայիք»: Երբ վերջապահը կը մօտենայ, նախ դաշոյնով կռիւ կը սկսի, յետոյ տասնոցներով: Գնդակներ կ'ուղղուին մեր վրայ եւս, Գէորգին ձին կը տապալի գետին, Մշեցի Ռուբէն արագ կերպով կ'արձակէ Գէորգը ձիու վրայէն ու կը շալկէ, ձին կը գլորի գետին մէջ:

«Հասած ենք կամուրջին գլուխը, մեր ընկերներուն կը հասկըցնենք, թէ մենք ենք, բայց անհնար է անցնիլ կամուրջը, քանի որ միւս կողմը զօրքն է եւ կռիւ կայ, կամուրջի մեր դիրքը եւ Աւրանայ Արամի տղերքը կը կրակեն զօրքին վրայ: Փորձ չենք ըներ կամուրջը անցնելու, այլ կ'ուղղուինք Ծօսէի վրայով դէպի գետի ափը ու կը հասնինք Երկրորդ շղթային: Ղազարը զնդակներուն չի պատասխաններ, մենք ալ լուռ կ'երթանք: Երկրորդ շղթան ալ անցած ենք: Կը նստինք, վիրաւոր եւ ժողովուրդը կ'անցնին մեր մօտով դէպի Ղազարաթաղ, զինեալներս փամփուշտները կը լեցնենք եւ կը սպասենք յետսապահ խմբին, ան ալ կու գայ եւ կը շարժինք: Կամուրջի գլխին թողած ենք Յակոյի դիակը, աճապարանքի մէջ չկրցինք գետը նետել, միայն վերցուցինք հրացանն ու փամփուշտները:

«Թշնամիին շղթան կտրած անցած ենք, զօրքը եւ Սուլուխը մօտ



Շենիկ գիւղի աշակերտութիւնը իրենց ծնողներու հետ

մէկ քիւրմեթը հեռու են մեզմէ : Կը կանգնինք բոլորս , տեսնենք ո՛վ է ողջ մնացած եւ ի՛նչ պէտք է ընել : ՍՈՒՆՈՒՍԻ մէջ տակաւին սաստիկ կուր է , կը նշանակէ թշնամին մեզ այդտեղ կը կարծէ , բայց գէշը այն է , որ Ալիջանի Տիգրանը եւ ընկերները վտանգի մէջ են , անոնք ազատեցին մեզ իրենց անձնազոհութեամբ , արդեօք իրենք ալ պիտի յաջողի՞ն ազատիլ :

«Կը մօտենամ Գէորգին վիճակը հասկնալու . Մշեցի Ռուբէն կը հասկցնէ ինծի , որ դեռ ողջ է եւ կը հասկնայ ամէն ինչ . սիրտ տալու համար ըսի Ռուբէնին . «Վէրքը թեթեւ է , մէկ շաբաթէն պիտի լաւանայ» : Դարձայ Գէորգին . «Գիտե՞ս դու , Գէորգ , ազատուած ենք» : Անընդհատ կը համբուրէի զինք : Ան գլխի ընկաւ , նուազած ձայնով կրցաւ ըսել . «Դո՞ւ ես , լմնցած է , ջանտկի մը համար խումբ մի վրտանգէ , անցէք գնացէք . Եղսոն եւ Վարդգէս քեզի ամանաթ . . . » : Ժամանակը թանկ էր , պէտք էր շտապել . Գէորգին կամքին հակառակ շալկեցինք զինք եւ առաջ շարժուեցինք :

«Կը հասնինք Ղաշղալթաղ գիւղի տակը , որտեղ եղէգնուտ է . գիւղացիներուն կը հրամայեմ ցրուիլ . ով ուր կ'ուզէ թող երթայ ազատի : Միայն զինեալներ կը պահեմ մօտս : Բոլորն ալ ցրուեցան , կիներ եւ երախաներ Ղաշղալթաղ գիւղը գացին , իսկ տղամարդիկ լու-

ղալով գետը կ'անցնէին : Մենք մնացած ենք միայն 22 հոգի կիսամեռ Գէորգի հետ միասին :

«Կը մտածենք մեր ընելիքի մասին . բայց թէ կրակէն ազատած ծովն ենք ինկած : Մեղրազետը կը միանայ Եփրատին Ղաչղալթաղի մօտերքը կազմելով եռանկիւն մը . մէկ կողմը Սուլուխն է , ուր զօրքն է . միւս կողմերը այդ երկու յորդած գետերն են : Մենք ինկած ենք այդ եռանկեան մէջ : Գետը կարելի է անցնիլ միայն լաւ լողալ դիտնալով . իսկ մեզմէ 5-6 հոգի միայն լողալ գիտեն . հապա՞ Գէորգը , որ դեռ կը շնչէ : Կ'որոշենք Գէորգը թողուլ եղէգնուտներու մէջ , պահապան դնելով Սուլուխի Սաղոն , Զրոռն(*) եւ Մեսրոպը . իսկ մենք պիտի մտնենք Ղաչղալթաղ դիւղ , քալակներ եւ տիկեր պիտի դտնենք եւ վերադառնալով ամէնքս միասին պիտի անցնինք Մուրատի աջ ափը :

«Կը հասնինք Ղաչղալթաղ . կը դտնենք միայն վեց տիկ՝ մէկ քալակ կազմելու չափ , այդ հազիւ բաւէր միայն Գէորգն ու ընկերանցընելու : Ուստի յուսահատ՝ մեր ծրագիրը կը փոխենք : Կը պատուիրենք Ղաչղալթաղի Գէորգին՝ երթալ Գէորգ Զաւուչին մօտ , վերցընել զայն ու պահապանները եւ քալակով դետը անցնիլ . իսկ մենք կը բաժնուինք երկու խումբի . մէկ մասը Սէյտոն կը վերցնէ եւ ետ կը դառնայ դէպի թշնամիին դիժը , աննկատ կը կտրէ կ'անցնի խճուղին եւ կ'ուղղուի Բերդակ . իսկ միւս մասը ես կը վերցնեմ , վեց հոգի լողորդ եւ երեք ալ ինձ նման ողորմելիներ , եւ կը նետուինք ջուրի մէջ :

Նախքան ընկերներուն հեռանալը , Գէորգ իր մօտ կը կանչէ իր անբաժան ընկերները եւ համբուրելով իւրաքանչիւրը , հետեւեալը կ'ըսէ .— «Ո՛վ հայրենիքի հարազատ զաւակներ , իմ մահը թող չվհատեցնէ ամէնիդ , որ այժմ կը ծորայ կարմիր արիւնը , մօտս եկէք համբուրեցէք զայն , եւ դուք ձեր կեանքի ասպարէզին վրայ , յեղափոխական շրջանի մէջ , աւելի նախընտրեցէք այս վերքը , քան թէ ստրկութիւնը մի այլանդակ ցեղի : Այս վերքը սուրբ է , որովհետեւ հայրենիքի ազատութեան համար դնուեցաւ ան :

«Զեր հայրենիքը ձեզ կը կարօտի , իմ պաշտելի ընկերներ , դուք էք անոր ջահերը , դուք էք երկրի պաշտպան զինուորները : Տարածեցէք Սուրբ Գործը եւ հայ տառապանքը՝ թող վայրկեան մ'իսկ ձեր առջեւէն չկորսուի : Թող՝ հայ յեղափոխութիւնը , Սասունէն , Տարօնէն , Վասպուրականէն , Զէյթունէն , Կովկասէն թող Եւրոպայէն Ամերիկա , հնչէ ամէն հայու ազանջին , եւ թո՛ղ ամէն անոնք , որոնք ինքնագիտակցութիւն ունին , թող անիծեն վաղեմի ստրկութիւնը եւ թող միանան միեւնոյն դրօշին տակ՝ այս արիւնլուայ հայրենիքը իր հին փառքերուն հասցնելու : Ահա այդ է ձեր ամէնուդ կեանքի նշանաբանը , հետեւեցէք անոր , եւ պիտի տեսնէք ձեզ լծաթափ ձեր մահ-

(*) Սուլուխի Սերոբի եղբօր որդին է :



Սեմալ գիւղը կալիւն մէջ

ուան վայրկեանին, որովհետեւ լիապէս կատարեցիք հայրենիքի պատուէրը» :

Արտասուալից ընկերները կրկին անգամ կը խոնարհին այդ յեղափոխական պատկերին առջեւ, եւ կը հեռանան անոր փրկութեան աշխատելու յոյսով :

Ֆետայական կեանքի ամենատխուր, ամենադաժան դրուագներէն մէկն է, որ կը ներկայացնէ այս պահը : Տարիներու գործակից ընկերներ ահամայ կը լքեն իրենց պարզ ու ղեկավար ընկերը, առանց կարենալ անմիջական դարման մը գտնելու : Գէորգը՝ վիրաւոր ու լքուած : Ֆետայական կեանքի պարտադրանքը՝ գետ նետել մեռեալ ընկերը, լքել կամ նոյնիսկ սպաննել վիրաւորը : Ոչ միայն կրանիթեայ կամք այլ մանաւանդ կրանիթեայ սիրտ կ'ուզէ մէկը, կարենալ դիմադրելու համար նման պարագաներու : Եւ Ֆետային ունէ'ր այդ, ունէր կամայ թէ ահամայ, գիտութեամբ թէ անգիտութեամբ :

Գէորգի մօտ գտնուող պահակ ընկերները երկար ժամանակ կը սպասեն, որպէսզի իրենց օգնականներ հասնին, սակայն տեսնելով, որ եկող չկայ, ստիպուած կ'ըլլան Մեսրոպը դիւղ դրկել՝ քալակ բերելու : Նոյն ժամուն Սաղօ եւ Չրոօ, տեսնելով որ թրքական զօրքը կը շարժի դէպի Ղաշղալթաղ, թաքստոցը կը փոխեն, Գէորգը կը ծածկեն ճիւղերով ու խոտերով իսկ իրենք կը մտնեն աւելի խորը՝ եղէգ-

նուաներու մէջ : Մենքուս կը վերադառնայ շուտով , բայց իր ընկերները չի գտներ եւ յուսահատ կրկին գիւղ կ'երթայ :

Բախտի խաղը : Եթէ առ ի զգուշութիւն եւ Գէորդը փրկելու մտահողութեամբ թաքստոցը փոխած չըլլային , հաւանաբար կարելի ըլլար փրկել այդ անդուզական հերոսը՝ Սարերու Ասլանը , դայն փոխադրելով գետին միւս ափը եւ դարմանելով :

Առաւօտ կանուխ , կարծէք արիւնստ առաւօտ մը ըլլար : Արշալոյսը վախճիւնով կը բացուէր . եւ երկիրը կարծես արիւն կը հոտէր :

Թրքական բանակը աւելի կազմակերպուած , աւելի կրկնապատկած իր ոյժերը , կը մօտենայ Սուլուխ գիւղին , կրկին չհամարձակելով գիւղ մտնել , այլ կը պաշարեն ու կը սկսին կրակել : Բայց երբ կը տեսնեն , որ գիւղէն ոչ ոք կը պատասխանէ . ոյժ առած կը մտնեն գիւղը եւ իրենց վայրագ բնազդին ազատ ընթացք տալով , կը սկսին աւերակի վերածել այդ հարուստ գիւղը :

Այդ օրը գիւղին մէջ կը սպաննեն Չարթօ Կարոյեանը (25 տարեկան) , Բարսեղ Յովսէփեանը , Առաքել Գասպարեանը (48 տարեկան) Մկրտիչ Տօնոյեանը (26 տ .) եւ Մշեցի Աւօ Չուստեանը (45 տ .) : Կը բռնարարեն Յովսէփի կիներ՝ Կուլոն , Օհանի կիներ՝ Զրմոն , երկուքն ալ մանկահասակ կիներ եւ Նադոյի կիներ՝ Վարդէն , որ պառաւ էր : Գիւղէն սարսափահար փախուստի ատեն Արածանիի մէջ ջրամոյն կը խեղդուին Սարգիսի 2 տարեկան աղջիկը , Մուրատի մէկ ամսեայ աղջիկը , մշեցի Աւոյի մէկուկէս տարեկան աղջիկը՝ Հակոն , Սրգոյի 2 տարեկան տղան , Մկրոյին հնգամեայ աղջիկը՝ Շուշան եւ Պետոյի եօթնամեայ տղան :

Աւազակարարոյ թիւրքն ու քիւրտը իրենց աւերները դործելէ ետք , կ'անցնին գետի կողմը եւ կը գտնեն երկու դիակներ , այն զոյգ ազնիւ յեղափոխական երիտասարդներու մարմինները՝ որոնցմէ մէկը դէպքէն ետք ընկերներու կողմէ գետ նետուած էր , թշնամիին ձեռք չիյնալու համար : Գայէն ու Յակոն :

Իբրեւ յաղթական , եւ արբշիւ այդ խողխողումէն փոսի մը մէջ կը գետեղեն իրենց հարիւրաւոր դիակները , եւ միայն հազարապետին ու երկու զինուորներու դիակներ կառքին մէջ դնելով կը վերադառնան :

Զօրքը հազիւ հեռացած էր Սուլուխէն , Քրտագոմէն քիւրտ գիւղացի մը կու դայ դէպի Սուլուխ գիւղ :


Մահաբոյր անդորրութիւն մը պատած է խոպան դաշտը : Քիւրտ ճամբորդը , որ կ'անցնի քրտնած , կը կենայ , կը նայի , նորէն կը շարունակէ քալել . բայց անհանգիստ կ'երեւի : Յուսահատական ճիչ մը , օրհասական աղաղակ մը վերստին կը խոռովէ զինքը : Ճամբորդը կ'ուղղուի ձայնին կողմը :

Կը տեսնէ վիրաւոր մը՝ պառկած հոն , բուրումնաւէտ ծաղիկներու եւ կանաչ դալարիներու վրայ , եւ բոյսերու մէջ փաթթուած ,




ՌՌԻԲԷՆ

ՍՈՒՆՈՒԻ ԳԻՒՂԻ ՔԱՐՏԷՍԸ



ԳԵՈՐԳԻ ՎԵՐՋԻՆ ԿՌԻԻԸ



★ Թրքական զորքերու կեդրոնները:

→ — Թրքական եւ քրտական ուժերու յառաջխաղացքը՝ Սուլուխ գիւղի վրայ: Կուրաւուրի եւ Խնուարի ուժերը կը կռուին Սուլուխի կամուրջի վրայ Սողոյի եւ Յակոյի դէմ, իսկ միւս մասը կը յառաջանայ դէպի Գէորգ Չաւուշի գիւղքին կողմը. աւելին՝ Աղճանի բոլոր ուժերը կը կռուին Գէորգի դէմ:

Մշոյ կողմէն եկած զորքերու մէկ մասը Ռուբէնի, միւս մասը Ղազարի, իսկ մնացած մասը գերեզմանատան կողմէ կը կռուին Ռուբէնի դէմ:

→ — Խումբը կ'անցնի Եղեգնուտի կողմը, եւ Գէորգի խնդրանքով ընկերներ զինք կը ձգեն ու կ'անցնին մօտակայ Ղաչղալթա գիւղը, հոնկէ տիկեր բերելու եւ զինք գետեն միւս ափը անցընելու համար:

Սուլուխ գիւղի չորս կողմը դաշտ է, բացի հիւսիսային կողմէն, ուր Մուրաս գետը կայ: Անհնար էր, որ Գէորգի եւ Ռուբէնի խումբը օր ցերեկով կարենար անցնիլ ուրիշ կողմ. հետեւաբար թշնամին չորս կողմէ պաշարած էր Սուլուխը, իսկ խումբի ընկերները շատ մեծ յոյս ունէին միայն Գէորգի վրայ, որ եթէ ան կռուի թշնամին չէր կրնար գիւղը մանել, եթէ իր զինակիցները կանուխէն Գէորգի վերաւորուիլը լսէին թերեւս յուսահատէին եւ ոյժ չունենային կռուելու եւ բոլորը սպաննուէին:

ՍՈՒՂՈՒԽ ԳԻՒՂԸ ՃԱՄԲՈՒ ՎՐԱՅ Է:

արիւնոտ ու դեղնած դէմք մը, որ հազիւ կը շնչէր. կը մօտենայ անոր վախով եւ երկիւղալից դիրքով մը :

Գէորգ աչքերը կը բանայ կը նայի շորս կողմը, կը լսէ ոտքերու ձայն մը, եւ ուշի ուշով կը նայի իրեն մօտեցող անձին, կարծելով, որ իր ընկերները եկած էին զինք տանելու, զէնքը մէկ կողմ կը նետէ, բայց երբ քիւրտը կը մօտենայ, կը հասկնայ, որ թշնամի է. կ'ուզէ քանի մը փամփուշտ պարպել, կը մօտենայ զէնքին, կ'առնէ եւ քանի մը անգամ կը պարպէ, բայց զէնքը կրակ չ'առնէր, որովհետեւ անձրեւէն թրջած էր : Այս անգամ աւելի կը յուսահատի, կը դառնայ դէպի լուսնեակին եւ, անոր կ'ուզող հետեւեալ խօսքերը.—

«Դո՛ւ, ո՛վ լուսնեակ, դու որ ներկայ ես եղեր հայկական այդ ահաւոր կոտորածներուն, դո՛ւ որ տեսած ես ամէն անցուղարձերը. թարգմանն եղիր իմ վիրաւոր սրտիս եւ տար վերջին բարեւս իմ անձնագոհ ընկերներուս» :

Քիւրտը աւելի կը մօտենայ Գէորգին, որ բոյսերու մէջ փաթթուած էր արիւնոտ ու դեղնած դէմքով. տեսաւ որ հազիւ կը շնչէր.

— Քիչ մը ջո՛ւր. յանուն Աստուծոյ :

Քիւրտը կը վերադառնայ, գլխարկը ջուրով կը լեցնէ ու նորէն կու գայ, ջուրը կու տայ մահամերձին, որ կը խմէ գրեթէ ազահարար ու ծանր անքոցով գլուխը կը թեքէ :

Քիւրտը դառնալով Գէորգին կ'ըսէ :

— Արեւուդ մատա՛ղ, խորդօ, ով ես դուն, ինչո՞ւ վիրաւորուած ես :

— Ես... Գէ... որդ... Չա... ւուշ... կը լսէ : Հեծեծանք մը, վերջին հառաչ մը, ու հերոսական շրթները իսպառ կը լռեն :

Մահերուն դժնեգո՛յնը : Երեսունըթամեայ անզուգական Ֆետային իր վերջին շունչը կը փչէ և աչքերը յաւիտենապէս կը փակէ առանց հարազատի մը ներկայութեան, առանց ազգակցի մը ներկայութեան : Իր ժողովուրդին ազատութեան համար կեանքը մաշեցուցած, զէնք գրկած ու լեռները բարձրացած գաղափարական անձնագոհութեան տիպարն իսկ հանդիսացող այս հերոսը կը մեռնի քրտերէն արտասանելով վերջին բառերը : Հոգեկան ի՞նչ տառապանք, ապրեցաւ այդ պահուն արդեօք, անկարելի է բառերով արտայայտել :

Քիւրտը լսած էր Գէորգին անունը, թէ ան ինչպէ՛ս ահ ու սարսափի մատնած էր Սասունի եւ Տարօնի շրջանը. ու այժմ վիրաւոր ինկած էր այս դաշտին մէջ, առանց ընկերակիցի : Կը խոնարհի Գէորգի դիակին առջեւ. ապշահար՝ կը վերցնէ անոր քարացած գլուխը, կը դրկէ, կը համբուրէ ու մանուկի մը պէս կը սկսի լալ : Կու լայ, ինչպէս պիտի լար իր հարազատ եղբօր, կամ իր դաւկին վրայ : Ով կրնայ հասկնալ մահուան դաղտնիքը, ուր թշնամի սրտերն անգամ կը ձուլուին :

— «Ճամբորդ, գնա՛, պատմէ՛» :

Ու ճամբորդը երբ կը ձգէ Գէորգի դիակը, ու կը շարունակէ

ճամբան, հասած դիւղը կը պատմէ այս հերոսական ու միանգամայն եղերական դրուագը այնպիսի սրտառուչ բառերով, այնպիսի առասպելական խանդավառութեամբ, որ քարերն անդամ լաց կ'ըլլան:

*
**

Կէսօրէ ետք թիւրք զօրքերը կը ձերբակալեն հայ կին մը, որ վախէն պահուած էր եղէգնուաներու մէջ. անկէ կ'իմանան Գէորգի թաքստոցի մասին. անմիջապէս կը խուզարկեն եղէգնուտը եւ կը դռտնեն Սողոյի, Չըռոյի եւ Գէորգի դիակները: Գէորգ յենուած է եղեր խուրճ մը եղէգի վրայ, մէկ ասիին մէջ պինդ բռնած հողեվարքի ատեն պոկած եղէգները:

Թիւրք կառավարութիւնը եւ զօրքը չեն անարգեր Գէորգ Չաւուչի դիակը, ընդհակառակն, պաշտօն տրուեցաւ քոմիսէր Մեհմէտ էֆենտիին (որ բռնի խլամայած հայ մըն էր), որ Գէորգի մարմինը փոխադրէ Մուշ: Այդ առաքինի ու պատուական հայը, հողիին կսկիծն ու

ՄՇՈՅ ԱԻԵՐԱԿ ԳԻՒՂԵՐԷՆ ՄԷԿՐ՝ ՄԵՂՐԱՓԵՏԻ ԱՓԻՆ



խոսվքը զսպած, կը կատարէ իր պարտականութիւնը, կը դնէ Գէորգի դիակը սայլի մը վրայ ու կը տանի Մուշ քաղաքը:

Կառավարական շէնքին ներսն ու դուրսը արտակարգ իրարանցում կը տիրէ. ծովածաւալ բազմութիւն մը, զօրքը, պաշտօնական շրջանակները եւ ժողովուրդը պատկառանքով կու դան տեսնելու բռնակալութեան սարսափը եղող Գէորգ Չաւուշի դիակը, սակայն հայերը՝ սգաւոր ու լուռ, կձկուած են իրենց տուներուն մէջ: Սպանման մասին արձանագրութիւն կը կազմեն, կը լողցնեն դիակը եւ կը յանձնեն առաջնորդարանին, որը լաւ կերպով եւ մեծ սուղով կը թաղէ Մշոյ Կողութաղի գերեզմանատունը, Գուրգէնի, Տիգրանի, Ռուբէնի եւ ուրիշներու մօտ: Գէորգի մարմինը բախտաւոր եղաւ, որովհետեւ թշնամին իսկ պատուի եւ յարգանքի արժանացուց զայն:

Սուլուխի կռուին, բացի Գէորգ Չաւուշէն, Գալէէն եւ Յակոբէն, ունեցանք մահացած 18 կռուող զիւղացիներ, իսկ ժողովուրդէն 23 հոգի: Այս կռուին մասնակցեցան 17 Ֆետայիներ, որոնցմէ 3 սպան-

ՍՈՒԼՈՒՆԻ ԳԻՒՂԸ



նուած են, իսկ 11 վիրաւոր, 4 հողի անվնաս, որոնցմէ մէկն էր քիւրա
Հասանոն, որ Փետայիի նման կռուեցաւ մինչեւ վերջ:

Իսկ թշնամիի կորուստը մեծ էր: Սպաննուած էր փաշա մը՝
Քէօսա Պինպաշին, երկու հարիւրապետ, 5 սպայ, մէկ բժիշկ, մէկ
սասիկանապետ, իսկ զինուորներէն մօտ 200 հողի:

*
**

Գէորդ Չաւուշ իր վիրաւոր եւ յուսահատական վիճակին մէջ,
կարծէք նախզգալով վախճանը, իր տէկնով՝ Եղսոյի և զաւկին՝ Վարդ-
պէտի հողատարութիւնը կը վստահի Ռուբէնի: Ռուբէն այդ պաշտօնը
կը կատարէ իր կեանքի թոյլատրած չափով: Անոնց հանդէպ հողածու
կը գտնուի նաեւ Սպաղանաց Մակարը:

Ատեն մը ետք, Եղսոն զաւկին հետ կը մեկնի Վան, ուր Արամ
Մանուկեան զիրենք կը պահէ: Որոշ ատեն ետք, Արամ յարմար կը

ՍՈՒՆԻՍԻ ԿԱՄՈՒՐՁԸ



դատէ գիրենք ուղարկել Պարսկաստան : Ճամբան Գէորգի զաւակը՝ Վարդգէսը կը մտի, կը հիւանդանայ եւ կը մեռնի Թաղէսս Առաքեալի վանքին մէջ : Վարդան Շահպաղ Եղսոն կ'ոռոզարկէ Կովկաս, ուր Բիրոյի խնամքին կը յանձնուի : Կարճ ժամանակ մը կը մնայ Ռուբէն Փաշայի ծնողքին տունը :

Օսմանեան սահմանադրութեան հռչակումէն ետք (1908), Եղսոն կը վերադառնայ հայրենի գիւղը՝ Հեղին, անցնելով Պոլսէն, Երուսաղէմէն եւ Հալէպէն : Հեղին կը մնայ մինչեւ 1915, երբ կռիւններու, նահանջի ատեն այլեւս կը կորսուի իր հետքը :



*
**

Իբրեւ վերջաբան հոս կը մէջբերենք «Իրօշակ»-ի Յունիս—Յուլիս (թիւ 6—7) 1907-ին թիւին արձագանգը՝ Գէորգ Չաւուշի մահուան.—

Միշտ ժողովուրդի մէջ, միշտ ժողովուրդին կապուած, — այդ էր անոր յեղափոխական տենչը, յատկանիչ անոր զործելակերպի, անսպառ աղբիւրը այն մարտական համարձակութեան, որով ան ապրեցաւ, փայլեցաւ ու վերջին բոպէին... այրուեց:

Սասունի, Տարօնի ու Տալուորիկի տանջանքը իր աչքով չափեց, ականջով լսեց իր երկրի վշտոտ աղաղակը, եւ այդ վիշտն ու տանջանքը անոր հերոսութեան հնոցն եղաւ, ոգեւորիչ հրեշտակը այն արիւնոտ ձեռնարկներու, ուր ան շողքեր արձակեց իբրեւ զինուոր եւ խմբապետ, իբրեւ վրիժառու եւ յեղափոխող:

Երբեք թիկունք չդարձուց, երբեք ձեռք չառաւ տարազրի ցուպը: Աչքերը Ֆրո Փրո քարին յառած՝ ան մնաց մեծ՝ իր հաւատով, անյողդողդ՝ իր կամքով, անընկճելի՝ իր սրով...

Հերոս՝ թշնամու զխմաց, հերոս մնաց եւ մահուան հանդէպ: Զգուշութեան կոչերին անտարբեր, ան սիրած ժողովուրդին կտակեց ոգեւորութեան վերջին շեշտը, — արհամարհանք դէպի մահը, — խորհրդաւոր ոյժը սքանչելի մեծագործութեան:

Ռազմիկ-ընկերները արտասուքով լուացին հերոսմարտիկի դիակը, հեռաւորները՝ անոր խնկելի յիշատակը — արժանի սքանչացման եւ անհուն կսկիծի...

ԳԷՈՐԳ ԶԱԻՈՒՇԻ ԱՐՁԱՆԻՆ ԴԻՄԱՑ



Հայրենիք այցելութեանս ընթացքին, առիթ ունեցայ այցելելու Թալինի շրջանի սասունցիներու գիւղերը, որոնք շրջապատուած են

բլուրներով եւ ժայռերով : Տեսարանը պահ մը զիս տարաւ դէպի անցեալի պատմութիւնը , մինչեւ համաշխարհային առաջին պատերազմը , երբ սասունցի ժողովուրդը մէկ սիրտ մէկ հոգի եղած՝ կռուեցաւ մինչեւ իր վերջին շունչը :

Թշնամին կ'ուզէր բնաջնջել սասունցիները , գանոնք համարելով անգիջող յեղափոխականներ :

Անօրի ու բռայիկ՝ անոնք լեռներու եւ ձորերու մէջ կռուեցան Բշնամիին դէմ , պատրաստ՝ հայրենիքի ազատութեան համար գոհելու իրենց կեանքը :

Պատերազմէն ետք , սասունցի ժողովուրդի բեկորները ստիպուած ձգեցին իրենց ծննդավայրը ու անցան արեւելեան Հայաստան :

Անոնք ուզեցին լեռներու վրայ հաստատել իրենց օճախը , որպէսզի նահանի իրենց երկրին եւ այս նպատակին ծառայող յարմարագոյն վայրը նկատեցին Արագածի շրջանը :

Սասունցիները մինչեւ օրս կը պահեն իրենց սովորութիւնները , կենդանի կը պահեն անցեալի դէպքերն ու դէմքերը , ինչպէս Անդրանիկի , Հրայրի , Գէորգ Չաւուշի , Սպադանաց Մակարի , Գալէի , Գուրգէնի , Վահանի , Սերոբ Ազրիւրի եւ ուրիշներու կապուած սխրագործութիւնները :

Սասունէն ազատուած ժողովուրդի գաւակները կ'ապրին իրենց ծնողներուն ապրումներով : Անցեալին , Սասնոյ լեռներու եւ ձորերու մէջ պատնէշներ կը կանգնէին եւ նահատակուած հերոսներուն շիրիմը կորուստէ փրկելու համար քարակոյտ մը կը բարձրացնէին , մինչ այսօր , նոյն այդ սասունցիներու թռոնները ոչ թէ քարակոյտով կ'ուզեն յաւերժացնել հերոսը , այլ՝ արձաններով :

Ուջան գիւղի հրապարակին վրայ կը տեսնենք Սասնայ հերոս Զօր . Անդրանիկի կիսանդրին , հաստատուած՝ ժայռակոյտի մը վրայ : Իսկ անդին , Աշնակ գիւղին մէջ , Գէորգ Չաւուշի հարազատները պատրաստած են «Գէորգ Չաւուշի տուն-թանգարան»ը , որուն նակտին վրայ գետեղուած է ազգային հերոս Գէորգ Չաւուշի յուշարձանը :

Անդրանիկը , Գէորգը , սասունցի նոր սերունդը զիս պահ մը դէպի անցեալ եւ Սասնոյ լեռները տանելէ ետք , վերադարձուցին ներկային : Ներկայ մը , որ սիրտս հպարտութեամբ կը լեցնէ : Մեր հերոսները ոչ միայն ժողովուրդին սրտին ու մտքին մէջ են , այլեւ բուն իսկ մայր հայրենիքի մէջ , եւ իրենց խիզախ կեցուածքով՝ կ'իշխեն իւրաքանչիւր հայու սրտին :

Անոնք անցան ազատագրութեան արիւննալի նահապարհէն եւ իրենց արիւնը հայրենիք մը ընծայեց մեզի : Հայութիւնը այդ արիւնը չէ մոռցած :

ԳԷՈՐԳ ԶԱՆՈՂԻ ՆՈՒՐՈՒԱԾ ԵՐԳԵՐ

Գէորգ Զաւուշի եւ մասնաւորաբար Սուլուխի կողմի մասին յօրինուած են հայերէն եւ թէ քրտերէն բաղմաթիւ երգեր, զորս կու տանք այս էջերուն վրայ:

ՍՈՒԼՈՒԽ ԳԻՒՂԻ ԿՈՒՒԻ ԵՐԳԸ

Սոսկումն ահաւոր պատեց Մշոյ դաշտ,
Նորէն հառաչեց հէ՛ք Սուլթան անհաշտ
Սարսափը մեծ էր, վայսցաւ օսմանցին,
Ղումանտար կանչեց Քէօսա Պինպաշին,
— Հասիր բանակով ապստամբ Սուլուխ,
Սկսի կրակ, բարձրանայ վեր մուխ:

Ազատ որդիներ Գէորգ եւ Ռուբէն
Ի՞նչ միջոց պէտք է որ ի գործ դնեն.
Ուզեցին քաշուիլ ի սէր գիւղացուց
Պինպաշին կռուոյ փողը հնչեցուց.
Տասնեակ գատուելով տղերք դիրք առին,
Աստուած կանչելով կրակ բաց արին:

Կռուեցէ՛ք, տղերք, Գէորգ կը ձայնէր,
Տախցաւ հրացան, վառեց գնդակներ:
Ի մէջ մեծ յուզման քաջ փետաներին,
Աւեր էր հրացան Գէորգ Զաւուշին,
Երբ ինք անտարբեր հրացան կը քննէր,
Գնդակի կայծ մը ձախ կողմ կը մտնէր:

Զարնուէր էր Գէորգ, սարերի ասլան,
Իր գէնֆին նայեց, մէկ ալ իր արեան
Ուղղեց մոսինը իր նպատակին,
Ոռնաց, վար ինկաւ Քէօսա Պինպաշին.
Երբ ինկած տեղից ուզեց վեր կայնիլ,
Հասաւ Մֆոյից գնդակ մահաբեր:

Տանիքն ընկողմած Գէորգ կը դիտէր,
Զարկէ՛ք, անխնայ, տղերք, կը ձայնէն.
Թող մեր հրացանի որոտման ձայնէն
Սարսափի Սուլթան երլտըզի գահէն:
Դէ՛հ, կռուիմք, տղերք, միևնչեւ շունչ վերջին,
Արժանի լինենք փառաց պսակին:

Տանկաց բանակը կոտրած սգաւոր,
 Գարձաւ դէպի Մուշ սաննագ սեւաւոր,
 Կորուստը մեծ էր, յաղթանակ շքեղ,
 Վերանայ լինի քամբախտ Սուլույս գեղ:
 Ղարսեցի Յակոբ, Գալէն Սպաղանցի,
 Երկու կտրիճներ նահատակուեցին:

Արեւն որ անցաւ Իննակեան սարէն,
 Մարտադուլ կանչեց ռազմագէտ Ռուբէն:
 Սարհատ սիրականն հետերնիդ տարէք,
 Կանաչ դաշտի մէջ գեղջն պառկեցուցէք,
 Եւ արտասուախառըն փետայիճներ,
 Համբուրել գացին Գէորգ Զաւուշին:

Լուսին բարձրացաւ դէպ երկնից կամար
 Մշոյ դաշտ տրտում տխուր կ'երեւար,
 Է՛, մնաս բարեա՛ւ, հառաչեց Սարհատ,
 Ա՛խ, չտեսայ գեեգ վայրկեան մը ազատ,
 Փչեց վերջին շունչ, ըսաւ լուսնակին,
 Սիրոյ ողջոյն տար Անդրանիկ պետին:

Մեռնիմ քեզ լուսնակ գոհար պատուական
 Անտո՛ք, Ֆրքֆրքար, Տարօն սիրական,
 Քեզ պիտ գան պատմեն հայ հերոսներէն,
 Երբ որ գաս անցնիս Մշոյ սարերէն:
 Սաչփի-Դուրանի պառկած քաջերէն,
 Վրէժխնդրութեան չայներ կը հնչեն:

ԳԷՈՐԳ ԶԱԻՈՒՇԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հազար ինն հարիւր եօթը թուականին,
 Զփնաղ Մայիսի քսան եւ եօթին
 Տօն է բազմաշխատ՝ մահուան Գէորգին,
 Սասնոյ հարազատ մեծանուն քաջին:

Որ գրկած հողը հայրենի երկրին,
 Մօտ քսան տարի ծառայեց ազգին,
 Կռուեցաւ անվերջ հետը տուշմանին,
 Միշտ յաղթեց մէկով անոնց հազարին:

Վերջին կռիւ մ'ալ կը սպասէր քաջին,
Պըսակելու զինք փառաց երկնային,
Եւ ահա զօրքը պաշարեց Սուլուխ,
Եռաց կռիւ մ'ալ ինչպէս հրաքուխ:

Յառաջ արշաւեց Քէօսա Պինպաշին
Կանչեց՝ փետայի'ք, մահն է ձեր քաժին.
Որոտաց Գէորգ. Անիրա՛ւ տուշման,
Եկուր թանկ կեանքդ ծախելով շատ աժան:

Հարուածը խօսէին շատ հեռու չեղաւ,
Իսկոյն Պինպաշին ձիէն վար ինկաւ.
Երբ ինկած տեղից ուզեց վեր կանգնել,
Հասաւ Մֆոյից գնդակ մահաբեր:

Վրէ՛ժ, ընկերներ, դիմենք դէպի մահ,
Պարոն Ռուբէնը մոնչեց անահ,
Ա՛լ չվախենանք թշնամու ոյսից,
Ազատ մեռնիլը քաղցր է ամէնից:

Քաջի մօտինը գոռաց երեք ժամ,
Երկինք ու երկիր թնդաց մի անգամ,
Խիստ իրաքանցում եղաւ զօրաց մէջ,
Փոռուող դիականց չկար թիւ ու վերջ:

Թնդաց սրտերը տասնեակ քաջերուն,
Կռուեցան անվերջ մինչեւ իրիկուն,
Իսկ երբ գիշերեց՝ Գէորգը շալկած,
Գիւղէն դուրս ելան եւ գացին տրտմած:

Համբան աղաչեց քաջն մահամբրձ,
Հանգիստ ձգէք զիս, մի ընէք շնչահեղձ,
Դրէք զիս այստեղ, ծածկէք խոտերով,
Գացէք, ընկերներ՝, դուք գացէք բարով:

Վերջին բարեւներս տարէք հայ ազգին,
Վերջին համբոյրներս՝ որդիս Վարդգէսին:
Լացին ընկերներ, մօտեցան կարգով,
Համբուրեցին զինք ու անցան խմբով:

Նայեց բուրբտիք, ա՛լ չկար ընկեր,
Ընկած կռուի դաշտ տառապէր անտէր,

Համբուրեց հողը քաղցր հայրենեաց,
Փակեց աչքերը ներքեւն աստեղաց:

Հանգիստ, փրկութիւն իր սուրբ ոսկերաց,
Պատուաւոր, յարգի անունդ անմոռաց,
Հայն ալ միշտ պիտի տօնէ դարէ դար,
Ազնիւ Գեորգի տօնը անդադար:

ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍԿ. ԽԱՐԱԽԱՆԵԱՆ
(Մ շ ո յ Առաջնորդ)

ՄԱՅԻՍ ԱՄՍՈՒ ՄԷՋ

Մայիս ամսու մէջ,
Վարդն էր՝ նոր թացուեց,
Յանկարծ Սուլուխը
Չորս կողմից մթնեց:

Ամպեր գոռացին,
Շանթեր արձակուեց,
Դրախտի քամքան
Արեամբ ողողուեց:

Հայոց քաջեր
Զատիկ էր
Դարձեալ մի հերոս
Ինկաւ նահատակ:

Այն քաջ հերոսը
Սարհատն(*) էր աւա՛ղ
Որ մղեց ուժգին
Կռիւներ անյաղթ:

Փչեց շունչ վերջին,
Ասաց լուսնակին,
Սիրոյ համբոյր տար
Որդւոյս վարդգէսին:

(*) Գեորգ Զաւուշ:

ԳԷՈՐԳԻ ՄԱՀՈՒԱՆ ԵՐԳԸ

Տասն եւ եօթը տարի վսեմ սուրբ գործիչ,
 Ծառայեց հարազատ Գէորգ Չաւուշը,
 Նեղութեան դիմացող, երկաթեայ մարմին
 Անգլիացի պողպատ Գէորգ Չաւուշը:

Հագար ինը հարիւր ճիշդ եօթ քուին,
 Ուղիղ Մայիս ամսոյն քսան եւ եօթին,
 Մշոյ Սուլուիս գիւղում կոիւր վերջին,
 Ըրաւ դիւցազն՝ Սարհատ Գէորգ Չաւուշը:

Յանկարծ վրայ տուաւ քշնամին վառաբար,
 Պաշարեց հերոսին զօրով անհամար,
 Եօթը ժամ դէմ դրեց, կռուեցաւ քաջաբար,
 Անրիծ ու անարատ Գէորգ Չաւուշը:

Մէկ հագարապետ եւ հարիւր զինուոր,
 Տապալուեցան ինկան քաւազլոր,
 Յիշեալ կռուին ինքն ալ ինկաւ վիրաւոր
 Ժիր ու անհամեմատ Գէորգ Չաւուշը:

Ընկերները քաջ հերոսին դիակը,
 Վիրաւորուած՝ առան իրենց շալակը,
 Պատռեցին քշնամու զօրաց բանակը,
 Ազատեցին քաջահատ Գէորգ Չաւուշը:

Թէեւ բաժէն կարնահասակ էր նա,
 Բայց արժէքը ոսկու նմանակ,
 Թողուց բարի անուն անմահ յիշատակ,
 Ժրաջան բազմաշխատ Գէորգ Չաւուշը:

Սորտարայ, Տիրան վարժապետ

ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՑԱՆԿ

Ա.

ԱՆԴՐԱՆԻԿ.— էջ, 76 - 97 - 98 - 99 - 104 - 115 - 116 -117 - 118 -
 119 - 120 - 123 - 124 - 128 - 129 - 130 132 - 136 137 - 138 -
 140 - 141 - 142 - 149 - 150 - 151 - 152 - 153 - 154 - 155 -
 168 - 172 - 173 - 175 - 176 - 177 - 184 - 189 - 193 - 202 -
 205 - 206 - 208 - 209 - 211 - 213 - 217 - 221 - 223 - 225 -
 227 - 228 - 229 - 230 - 231 - 236 - 237 - 239 - 240 - 241 -
 248 - 358 - 358 :

ԱՐԱԲՕ.— էջ, 19 - 20 - 21 - 22 - 23 - 24 - 26 - 27 - 28 - 114 - 136 :

ԱՐԹԻՆ.— էջ, 124 - 150 - 193 - 204 - 337 :

ԱՐԹԻՆ (Ուոուզի).— էջ, 116 - 129 - 202

ԱՍՏՈՒՐ.— էջ, 158 - 160 - 227 - 300 :

ԱԻԵՏՆՍ.— էջ, 65 - 85 - 86 - 202 - 204 - 243 :

ԱՂԲԻԻՐ ՍԵՐՈՒՐ.— էջ, 76 - 93 - 97 - 98 - 104 - 105 - 106 - 107 -
 110 - 111 - 112 - 116 - 118 - 146 - 147 - 165 - 353 :

ԱԻԵՏԻՍ (Մաշատի).— էջ, 185 - 190 - 248 :

ԱԳԱՄ.— էջ, 17 - 18 - 53 - 58 - 60 - 65 - 80 :

ԱԲՐՕ.— էջ, 77 - 78 - 92 - 93 - 94 :

ԱԼԱՅ ՊԵԿ.— էջ, 101 - 102 - 108 - 118 - 159 - 163 - 229 :

ԱԻՕ ԳԱՍՊԱՐԵԱՆ.— էջ, 79 - 104 - 105 - 241 :

ԱՐԱՄ ԱՐԱՄԵԱՆ.— էջ, 74 - 75 - 76 - 93 - 94 :

ԱՊՏԻԻԼ ԷԱՄԻՏ.— էջ, 58 - 179 :

ԱՐԱՄ (Արամայ).— էջ, 225 - 228 - 253 - 277 - 281 - 298 - 311 -
 329 - 338 - 382 :

ԱԼԻ ՊԵԿ.— էջ, 231 - 234 - 237 :

ԱԽՕ (Փեքարցի).— էջ, 259 - 263 - 264 - 277 - 294 - 302 - 315 -
 338 - 348 - 363 - 364 :

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ.— էջ, 305 - 306 :

Բ.

ԲԱՐՍԵՂ.— էջ, 138 - 140 - 144 - 188 - 226 :

Գ.

ԳԱԼԷ .— էջ , 124 - 126 - 127 - 164 - 212 - 225 - 252 - 269 - 271 - 274 -
277 - 278 - 280 - 281 - 282 - 286 - 289 - 290 - 292 - 294 -
295 - 304 - 338 - 346 - 356 - 363 - 372 - 373 - 381 - 384 :

ԳԱԲՐԻԷԼ ՔԱՀԱՆԱՅ .— էջ , 38 - 40 - 44 - 49 - 53 - 188 :

ԳՈՒՐԳԷՆ .— էջ , 97 - 98 - 99 - 100 - 101 - 102 - 111 - 112 - 122 -
124 - 147 - 165 - 352 - 353 : u

ԳԱՍՊԱՐ .— էջ , 64 - 65 : un

ԳՆԷԼ ՎԱՐԴԱՊԵՏ — 198 - 216 :

ԳՐԻԳՈՐ (Մոկացի) .— էջ , 209 - 214 :

ԳԵՂԱՄ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ (Տառքակ) .— էջ , 112 - 168 - 186 - 193 -
221 - 336 - 356 - 360 :

Դ.

ԴԵՐԵՆԻԿ (Վ. Իսկէմտէրեան) .— էջ , 338 - 340 - 343 - 345 - 346 -
347 :

ԴԱԻՕ ԾՈՒՌ .— էջ , 178 - 240 :

Ե.

ԵՍԹԵՐ .— էջ , 127 - 128 :

ԵԱՀՈՒՏԻ ԲԱՐՍԵՂ տես Բարսեղ :

ԵՂՕ .— էջ , 188 - 248 - 269 - 277 :

ԵՂՍՈՅ .— էջ , 302 - 304 - 353 - 354 :

Զ.

ԶՈՒԼՈՒՄԱԹ .— էջ , 188 - 214 - 234 :

ԶԷՔԻ ՓԱՇԱ .— էջ , 33 - 60 - 62 - 63 :

Է.

ԷԼՕ ՅՐՕՆՔՑԻ .— էջ , 372 - 381 :

Թ.

ԹՈՐԳՈՄ .— էջ , 185 - 188 - 189 - 190 - 192 :

ԹԱԼԻՊ ԷՖԷՆՏԻ .— էջ , 96 - 97 - 101 :

ԹԵՖԻՔ ՓԱՇԱ .— էջ , 68 - 185 :

Ի.

ԻՍՐՕ ԿՈՐԻԻՆ.— Էջ, 103 - 140 - 149 - 158 - 168 - 184 - 188 - 189 -
204 - 213 - 220 - 221 - 225 - 227 - 290 - 292 - 348 :
ԻՇԽԱՆ (Վաֆի) .— Էջ, 190 - 240 - 241 - 243 - 305 :

Լ.

ԼՈՐԻՍ ՊՈԼՈՅԵԱՆ.— Էջ, 218 - 219 :
ԼԵԻՈՆ (Ալիգոնսցի) .— Էջ, 20 - 23 - 24 - 26 - 28 :

Խ.

ԽԱԼԻԼ ՓԱՇԱ (Պշարէ) .— Էջ, 107 - 118 - 119 - 120 - 159 :

Կ.

ԿՈՏՈՅԻ ՀԱՃԻ.— Էջ, 76 - 112 - 118 - 122 - 124 - 133 - 136 - 137 -
140 - 145 - 154 - 156 - 184 - 189 - 203 - 209 - 212 - 225 -
228 - 230 - 245 - 246 - 248 - 257 - 264 - 265 - 327 - 341 :
ԿԱՅՆԱԿ ԱՌԱՔԵԼ.— Էջ, 185 - 188 - 190 - 241 :
ԿԻՐԱԿՈՍ (Փեթարցի) .— Էջ, 259 - 337 :

Հ.

ՀՐԱՅՐ.— Էջ, 29 - 30 - 31 - 37 - 38 - 56 - 75 - 92 - 93 - 97 - 99 -
101 - 102 - 103 - 104 - 106 - 112 - 123 - 124 - 165 - 166 -
168 - 169 - 171 - 172 - 173 - 174 - 175 - 176 - 177 - 188 -
189 - 193 - 203 - 204 - 207 - 208 - 212 - 327 - 352 :
ՀԱՃԻ ՅԱԿՈՒ.— տես Կոտոյի Հաֆի :

Ղ.

ՂԱԶԱՐ (Շեմիկցի) .— Էջ, 117 - 168 - 202 - 204 252 - 253 - 277 -
280 - 294 - 311 - 348 - 370 - 372 - 373 - 376 - 384 :
ՂԱԶԱՐ (Կելիեկուգանցի) .— Էջ, 150 - 338 :
ՂԱԶԱՐ (Մոկաց) .— Էջ, 225 - 277 - 281 - 354 :
ՂԱՍԸՄ ՊԵԿ.— Էջ, 265 - 269 - 270 - 271 - 272 - 273 - 274 - 275 -
276 - 284 - 285 - 293 - 294 - 296 - 297 :

Մ .

ՄՈՒՐԱՏ ՊՈՅԱՃԵԱՆ .— էջ , 25 - 26 - 30 - 34 - 35 - 36 - 37 - 38 -
39 - 41 - 43 - 53 - 56 - 59 - 60 - 61 - 63 - 64 - 65 - 66 -
67 - 79 - 81 - 147 :

ՄԱՐԳԱՐ ՎԱՐԺԱՊԵՏ .— էջ , 34 - 76 :

ՄԿՐՏԻԶ (Կարմեմու) .— էջ , 76 - 112 - 171 :

ՄՃՕ ՊՈԼԷՅԱՆ .— էջ , 76 - 112 - 118 - 122 - 124 - 225 - 230 :

ՄՈՍԻԿ (Խասգիւղացի) .— էջ , 234 - 253 - 261 - 263 - 274 - 298 -
300 :

ՄԽՕ ՇԱՀԷՆ .— էջ , 20 - 27 - 28 :

ՄՈՒՐԱՏ ՊԵՏՐՈՍԵԱՆ .— էջ , 140 - 153 - 158 - 188 - 213 :

ՄԵԼԻՔ (Գոմսայ) .— էջ , 315 - 338 :

ՄՈՒՐԱՏ (Սերաստացի) .— էջ , 185 - 193 - 203 - 207 - 209 - 213 -
214 - 217 - 225 - 227 - 239 - 240 - 241 - 243 - 358 :

ՄԱԿԱՐ (Սպարաբնաց) .— էջ , 104 - 118 - 119 - 129 - 188 - 197 -
198 - 200 - 203 - 209 - 212 - 252 - 297 - 298 - 302 - 329 -
338 - 345 - 346 - 348 - 353 - 354 - 355 - 356 - 366 :

ՄՈՍԷ ԳՐԳՕ .— էջ , 31 - 54 - 56 - 57 - 58 - 62 :

ՄԱՆՈՒԿ (Շեմիկցի) .— էջ , 117 - 202 - 204 - 225 - 277 - 280 - 281 -
314 - 338 :

ՄԱՆՈՒԿ (Բեաթիպ) .— էջ , 202 - 204 - 209 :

ՄՈՐՈՒՔ ԿԱՐՕ .— էջ , 168 - 212 - 225 - 252 - 253 - 277 - 281 - 298 -
304 - 338 :

ՄԱՆՈՒԿ (Փեթարցի) .— էջ , 168 - 218 - 259 - 260 - 264 - 294 -
298 - 302 - 304 - 338 - 348 - 351 - 358 - 360 - 363 - 364 :

ՄՈՒՐԱՏ (Վարդեմիսցի) .— էջ , 182 - 183 - 248 :

ՄԿՐՕ .— էջ , 261 - 262 - 263 - 272 :

ՄՈՍԻ .— էջ , 248 - 253 - 265 - 269 - 274 - 338 - 348 :

ՄԿՐՏԻԶ ՎԱՐԳԱՊԵՏ .— էջ , 303 - 304 :

ՄՔՕ (Ալիզոմացի) .— էջ , 372 - 373 - 381 :

Յ .

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԳԱՊԵՏ ՄՈՒՐԱՏԵԱՆ .— էջ , 18 - 130 - 134 - 135 -
142 - 143 - 145 - 157 - 176 :

ՅԱԿԷ .— էջ , 20 - 124 - 125 :

ՅԱԿՈՒ (Ղարսեցի) .— էջ , 272 - 273 - 290 - 308 - 366 - 370 - 371 -
372 :

Շ.

Շեփհեթ .— էջ , 68 - 126 - 127 - 128 :

Չ.

ՉՈՂՕ .— էջ , 117 - 168 - 202 - 225 - 252 - 253 - 277 - 280 - 281 -
294 - 298 - 311 - 338 - 348 :

Ջ.

ՋՆՏՕ .— էջ , 182 - 183 - 269 - 271 - 273 - 274 :

Պ.

ՊՈԶԷ .— էջ , 158 - 160 - 300 :
ՊԷՀՐԻԿԵԱՆ .— էջ , 145 - 146 - 148 :

Ռ.

ՌԷՍ ԳՐԳՕ .— էջ , 26 - 27 - 38 - 39 - 40 - 59 - 60 :
ՌՈՍՏՈՄ .— էջ , 92 - 346 :
ՌՈՒԲԷՆ (ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆ) .— էջ 305 - 306 - 308 - 309 - 310 - 326 -
327 - 328 - 329 - 330 - 331 - 332 - 338 - 341 - 345 -
346 - 347 - 348 - 352 - 353 - 355 - 356 - 357 - 358 - 359 -
362 - 364 - 366 - 369 - 370 - 379 - 381 - 382 :
ՌՈՒԲԷՆ (ՄՇԵԳԻ) .— էջ , 338 - 366 - 372 - 384 :

Ս.

ՍՄԲԱՏ ԶՕՐ .— էջ , 123 - 124 - 126 - 198 - 201 - 209 - 217 - 225 -
226 - 227 - 228 - 229 - 231 - 234 - 235 - 237 - 241 - 341 :
ՍԷՅՏՕ ՊՕՂՈՍ .— էջ , 26 - 140 - 148 - 158 - 159 - 160 - 193 - 197 -
341 - 366 - 370 - 372 - 373 - 375 - 377 - 382 - 384 :
ՍՏԵՓԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ .— էջ , 49 - 304 - 331 - 351 - 352 :
ՍՈՂՕ .— էջ , 26 - 36 - 182 - 183 - 338 - 370 - 371 - 372 :
ՍՊԱՂԱՆԱՅ ՄԱԿԱՐ .— ՏԵՍ Մաղար :
ՍՕՍԷ .— էջ , 109 - 110 - 353 :
ՍԵՊՈՒՀ ԶՕՐ .— էջ , 189 - 196 - 202 - 204 - 214 - 231 - 234 - 237 -
243 :

ՍԱՀԱԿ (Ֆրանսի) .— էջ, 171 - 329 - 338 - 354 - 366 :

ՍԱՐԳԻՍ ԹԱՐՓԱԹՈՋ .— էջ, 140 - 252 - 253 - 298 - 299 - 300 :

ՍԱԼԻՀ ՓԱՇԱ .— էջ, 301 - 302 :

Վ.

ՎԱՐԳԱՆ .— էջ, 26 - 99 - 148 - 158 - 160 :

ՎԱՐԳԱՆ ՎԱՐԳԱՊԵՏ .— էջ, 76 - 94 - 96 - 112 - 168 - 171 - 176 -
216 - 224 - 331 - 336 - 351 - 352 - 356 :

ՎԱՐԳԱՆ ՇԱՀՊԱՋ .— էջ, 177 - 178 - 307 :

ՎԱՂԱՐՇԱԿ .— էջ, 76 - 112 - 133 - 144 - 145 - 156 - 158 - 160 :

ՎԱՐԳԳԵՍ .— էջ, 165 - 174 - 177 - 179 - 190 - 240 :

ՎԱՀԱՆ ՏՈՂՐԱՄԱՃԵԱՆ .— էջ, 168 - 171 - 172 - 179 - 189 - 190 -
211 - 213 - 216 - 352 :

ՎԱՐԳԳԵՍ, ԳԷՈՐԳԻ ՈՐԴԻՆ .— էջ, 354 :

Տ.

ՏԱՄԱՏԵԱՆ ՄԻՀՐԱՆ .— էջ, 25 - 26 - 29 - 30 - 33 - 34 - 35 - 36 -
37 - 52 - 71 - 88 - 94 - 105 - 147 :

ՏԷՐ ՊՕՂՈՍ .— էջ, 40 - 41 - 66 :

ՏԷՐ ԳԱԲՐԻԷԼ .— էջ, 29 - 47 - 48 :

ՏԷՐ ՔԱՋԻ ԱԴԱՄ .— էջ, 30 - 31 - 53 - 59 - 60 :

ՏԻԳՐԱՆ (Մշեցի) .— էջ, 101 - 262 - 338 - 348 - 354 - 372 - 381 :

ՏՈՆՃՕ ՄՈՍՈՆ .— էջ, 267 - 268 - 272 - 290 - 291 - 292 - 293 -
294 - 395 :

Փ.

ՓԻԼՈՍ .— էջ, 338 - 344 - 356 - 357 - 358 :

ՓԱՐԻՇԱՆ ԽԱՆՈՒՄ .— էջ, 294 - 296 :

Ք.

ՔՈԼՈՍ ՅՈՎՀԱՆՆԷՍ .— էջ, 26 - 29 - 38 - 60 :

ՔԵՌԻ (Արշակ Էրզնկացի) .— էջ, 185 - 190 - 214 - 215 :

ՔԷՕՍԱ ՊԻՆՊԱՇԻ .— էջ, 204 - 207 - 377 - 379 - 380 - 381 :

Ա Ղ Բ Ի Ի Ր Ն Ե Ր

ԱԶԳԱԿ — օրաթերթ	ՊԵՂՐՈՒՔ
ԱՆԴՐԱՆԻԿ — Ասաքելոց վանքի կոնիւք	1924 Պոսքըն
ԱՐԵՒԵԼՔ — օրաթերթ	Հալէպ
ԳԷՈՐԳ. ՉԱՒՈՒՇ — (Ինքնակենսագրութիւն)	1907 Ժընև
ԳԼԱԿ ՏԱՐՕՆՅԻ — Ապստամբ Սասուն	1903 Ժընև
ԴՐՕՇԱԿ — Օրդան Հ. Յ. Դաշնակցութեան ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ	Ժընև, Փարիզ 1907 Բիւ 4—5
ԼՈՐԻՍ ՊՈԼՈՅԵԱՆ — անտիպ յուշեր	
Կ. ՍԱՍՈՒՆԻ — Գէորգ Չաւուշ	1937 Փարիզ
Կ. ՍԱՍՈՒՆԻ — Պատմութիւն Տարօնի Աշխարհի	1956 ՊԵՂՐՈՒՔ
Կ. ՍԱՍՈՒՆԻ — Հրայրի դերը Հայ ազատագրական շարժման մէջ	1964 ՊԵՂՐՈՒՔ
ԿՈՄՍ — Իմ Յուշերը	1950 Պոսքըն
Կ. ԹԱՌՈՅԵԱՆ — Ժողովրդական շարժումները Սասունում Հին ՅՈՒՇԵՐ	1966 Երեւան
ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆ — Հ. Յ. Դ. Պատմութիւն	1932 Փարիզ
ՄԽՅ — Շահէն (Սէֆէրեան)	1903 Պոսքըն
ՄԿՐՏԻՉ ԵՐԻՑԱՆՅ — Չօր. Սմբատի յուշերը	Փարիզ
ՅԱՌԱՋ — օրաթերթ	Փարիզ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԳԻՍԵԱՆ	Թեհրան
ՊԵՏՐՈՍ Յ. ՏԵՓՈՅԵԱՆ — Միհրան Տամատեան	1956 ՊԵՂՐՈՒՔ
ՌՈՒԲԷՆ — Հայ Յեղափոխականի մը յիշատակները	1952 Լոս Անճելոս
ՍԱՍՈՒՆ — Մուշի կոնիւքերը	1904 Ժընև
ՍԵՊՈՒՀ — Դրուաղներ Սասունի կոնիւքերէն	1910 Պալիս
ՍԻՐՎԱՐԴ — Մեծն Մուրաա	1955 Փրավիտէնս
Ս. Դ. Հ. Կ. — Պատմութիւնը	1962 ՊԵՂՐՈՒՔ
ՏԱՐՕՆ-ՍԱՍՈՒՆ — Մուրաա Պեարսուան, կազմեց՝ Ա. Արշակունի	1928 Հալէպ
ՏԱՐՕՆԻ ԱՐՅԻՒ — ամսագիր, զանազան թիւեր	
ՏԱՐԱԶ	1895 Թիֆլիս

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

	ՀԱՏՈՐ	Լ. Ո.	ԳԻՆ	ՏՈՂԱՐ
Յեղափոխական Ալպոմ 1 (սպասած)		10. կազմ. 12	— 5. կազմ. 6	
Յեղափոխական Ալպոմ 2 (սակաւաթիւ.)		10. կազմ. 12	— 5. կազմ. 6	
»	» 3	»	»	
»	» 4	»	»	
»	» 5	»	»	
»	» 6	»	»	
»	» 7	»	»	
»	» 8	»	»	

Զօր.— Ն Շ Դ Ե Հ

Կեանքն ու գործունէութիւնը, նշխարներ, վկայութիւններ
Գին՝ 15 Լ. Ո., Արտասահման՝ 5 Տոլար

ՀՐԱՏԱՐԱԿԵԼԻ

1 — **ԶՕՐ. ԵՆԴՐԵՆԻԿ**

2 — Հայասանի Խորհրդայնացումը

3 — Ինչու կազմակերպուեցաւ Մոսկոյ Չորու արտասանքները

4 — Տերութիւն

ՀԱՍՅԷ

AVO — A. TOUMAYAN
B. P. 80179 — Tél. 266492
Bourdj Hamoud — LIBAN

Մեր խօսքը

Գէորգ Չաւուշի հատորը կարդալէ ետք, վստահ ենք որ պիտի ուզէք նախ գիտնալ Գէորգի ընկերներու եւ զինակիցներու կեանքն ու գործունէութիւնը: Ատոր համար պէտք է կարդալ «Յեղափոխական Ալպոմ»ը որ ցարդ լոյս ընծայած է ութը հատորներ . իններորդ հատորը՝ տպագրութեան սկսած:

«Յեղափոխական Ալպոմ»ը միակ հրատարակութիւնն է որ մեզի կը ծանօթացնէ անցեալի հայ գրչի եւ սուրի հերոսներու կեանքն ու գործունէութիւնը, տալով նաեւ անտիպ նկարներ: «Յեղափոխական Ալպոմ»ի 12 թիւը կ'արժէ 12 լ. ո. , արտասահման՝ 5 տոլար:

«Յեղափոխական Ալպոմ»ը 10-րդ հատորէն ըսկըսեալ պիտի հրատարակուի հատորով եւ կազմուած:

Իւրաքանչիւր հայ տուն ոչ միայն պէտք է ունենայ «Յեղափոխական Ալպոմի»ի հատորները, այլ նաեւ օրինակ մըն ալ պէտք է նուիրէ իր բարեկամին ու ծանօթին:

30





